ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ


1950



Վեցիւ Հատորով

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ—1979

Վեցտիպ Իսահակյան

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԴ

6176 Ա 6,2005



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ—1979

Ար I
Ի 75

70202 (541)
Ի ——————— 79 ՀՏ
705 (01) 79

Տեքստը պատրաստեցին
ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆ
ԱՐՄԻԿ ԻՆՃԻԿՅԱՆ

Անվանացանկ-բառարանը՝
ԱՐՄԻԿ ԻՆՃԻԿՅԱՆԻ

Խմբագրական կոլեգիա՝
Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ
Վ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ս. Բ. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Հատորի խմբագիր՝
Վ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Նամակներ



1. ԱՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1889, դեկտեմբերի 3, Էջմիածին

Սիրելի եղբայր Արամ
ջան և ջան,

Ունեմ շատ սիրով և կարոտով բարև քեզ և բոլոր տանեցվոց:

Սիրելի Արամ, ես ձեր նամակը ստանալուց հետո մի նամակ գրեցի քեզ իբր պատասխան և սպասում էի քեզանից փոխադարձը, սակայն չստացա և այդ պատճառով էլ ահա երկրորդն եմ գրում և խնդրում եմ պատասխան (իսկ հասցես կարծեմ ձեզ հայտնի է): Խնդրեմ ներողամիտ եղեք, որ երկար ժամանակներով ձեզ նամակ չեմ գրում, որովհետև ժամանակ չկա. ճիշտ եմ ասում՝ ժամանակ չկա. մեր միակ պարապ օրերն են տոն օրերը, իսկ այդ օրերում այնքան եկեղեցի և գյուղ ենք գնում, որ ժամանակը վերջանում է, մինչև անգամ պարապել չենք կարող:

Խնդրեմ ներեք ինձ այս իմ անկապ և կցկտուր նամակի բովանդակության վերա, որովհետև շատ շտապ էի, պատարագ պիտի երթայինք:

Ձեր եղբայր՝ **Ավետիք:**

Ծանդիմ մի երկար, շատ երկար նամակ կգրեմ:

Ի ճեմարան
յԷջմիածին.
1889 թ., 3-ն դեկտեմբերի:

2. ԱՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1890, փետրվարի 11, Էջմիածին

Սիրասուն եղբայրդ, Արա՛մ ջան,

Շատ բարև քեզ և ձերայիններիդ՝ ամուն*, մայրիկիդ**, Բագրատիդ, Հայկիդ, Երվանդիդ, Փեփրոնիայիդ, Մարիամիդ, և Ծերունիդ. շնորհավորում եմ նույնպես և՛ ձեր բարեկենդանը, և՛ մեծ պասը, և՛ ամու տոնախմբությունը: Այո՛, ստացա քո նամակը, և ի՞նչ... Ինչե՞ր իմացա, բոլորովին հակառակ իմ կարծյաց. ես սպասում էի նոր-նոր տեղեկություններ մեր քաղաքից, և այո՛, արդարև, ստացա նոր-նոր անբավականություններ քեզանից՝ իմ հոգուս ամենամտերիմ առարկայից... Ամո՛թ մեզ և մեր կոչումիդ: Այո՛, 10000000000... անգամ այո. դու տեղիք ունեիր նեղանալու, սակայն ոչ առանց քննելու պատճառը. բայց և այնպես հուսամ, զի ներողամիտ <կ>լինես դեպի ինձ՝ քո հոգևոր և մարմնավոր ընկերիդ: Արա՛մ, իմ եզակի մտերիմ, իմ անգնահատելի սիրելի, ո՛չ թե միայն լոկ արտաքին ծեսերով, այսինքն՝ մի չնչին պատկերով կարող եմ հայտնել դեպի քեզ ունեցած իմ անկեղծ, հավերժական, սուրբ և եղբայրական ու ընկերական սերս, սերս, այո՛, որ բխում է մի սիրալիր և սիրող սրտից, մի սեր, մի սիրտ, որին ո՛չ մի զորեղ տարր չի կարող բաժանել մեզանից. մեր մեջ վաղուց էր տեղի ունեցած մի սեր, մի սոսկաձև շաղկապված սեր, որը հաճախ մեր պատանեկան դյուրագրգռությունից մերժվում էր, սակայն ոչ հարատև, այլ րոպեական, բայց այժմ մենք կապված ենք աներևույթաբար, դյուցազնական հաստատուն սիրով, որի խարիսխը հայր Արամազդից է շնորհված մեզ, այն սերը, որ կա <իմ> մեջ, գոնյա ես համոզված եմ, այն նազելի դիցուհվո՝ Աստղիկից է պարգևված, որի միացուցիչ կապը՝ զոդը հայր Հեփեստոսից է զոդված, ուրեմն, մի այսպիսի դյուցազնական սերը կարող է հասցնել մեզ մեր բախտավորության և մեր վսեմ

---

* Սիմոն Հորեղբայրը

** Սիմոն Հորեղբոր կինը

իդեալի գագաթնակետին: Արա՜մ, ես անզոր եմ, ես չեմ կարող միանգամայն ճարտարությամբ թափել իմ սրտի խորշերից սիրո բոլոր զգացմունքները. ես Աթենասից չունեմ ճարտարության ընծայած ձիրք. իմ գրիչը, թեև անսանձ և ազատ, բայց մուսայից պարգևված կամ դյութված չէ, որով ես քեզ գրավեմ, այլ ես ունեմ մի սիրտ, մի զգայուն սիրտ, որ վառ է սիրո անշեջ կայծերով, և իմ սիրտը նմանվում է Մասիսին, որ արտաքուստ, իբրև մի ալեզարդ ծերունի, խաղաղ և մեղմ կանգնած <է>, բայց երբ մի բանից բորբոքվում է, դուրս է տալիս այս ծպտյալ ծերուկը յուր ծոցից, սրտից յուր զգացմունքները, բայց ոչ բոլոր, այլ մի մասը, և նորա խորքերում դեռ ծխում են մնացորդները. նույնպես և ես կամ սիրտս՝ հանդարտ արտաքուստ, բայց վրդով ներքուստ, ես էլ դրդված մի անախորժ բանից, դուրս եմ տալիս իմ սրտի խորքերից իմ զգացմունքներս, բայց ոչ բոլորը, այլ մի մասը, և մնացածը ծխում է իմ սրտում. Արա՜մ, դու ի՞նչ ես ուզում մեկից, որ սիրում է քեզ յուր բոլոր հոգով, կանացի սիրուց առավել, ինչպես յուր անձը, և՝

«Ո՜հ, Արա՜մ, Արա՜մ,
Անկեղծ և սուրբ սեր՝
Այս է նշանաբան մեր»:

Կարծես մի ակամա ազդումից դուրս է ցայտում իմ բերանից այս գողտրիկ, փոքրիկ, բայց վսեմ միտք և գաղափար պարունակող այս տողերը, այս խոսքերը պիտի դրոշմած լինեն մեր լալն ճակատի վրա ոսկյա տառերով, և կարող եմ ասել, որ այս է իմ «սրտի միակ թարգմանը», իմ հոգու «միակ թարգմանը»:

Կարծեմ, Արա՜մ, բավական է այսքան սիրո վերա խոսելս, այժմ դառնամ այլ նյութերի: Մեզ արձակեցին ամսույս 3-ին. ներկայացում չունեցանք, բայց պարահանդեսներ և հանդեսներ՝ ոչ սակավ, իսկ ես մերթ գյուղումն եմ անցկացնում ժամանակս, մերթ ճեմարանում: Արա՜մ ջան, խնդրեմ ինձ տեղեկություններ տաս մեր քաղաքի կյանքից, հետո Համազասպից՝ մի մոռացյալ եղբորից. վա՜յ ինձ, ես պարծանքով եմ խոստովանում իմ մեղքս և ինձ մեղավոր եմ գտնում այն բանում, որ նամակ չեմ գրում նրան, բայց մասամբ էլ ես

մեղավոր չեմ. ծանոթություն չունեմ նրա վերա, և նույնպես եթե, գիտես հարկավ, մի քանի ծանոթություններ հորեղբրրանց Մարտինից և յուրայիններից և ուրիշներից:

Իսկ ինչ կվերաբերի մեր գալոց քեֆի ծրագրի մասին, հետո կխոսեմ:

Մնամ քո ցանկալի նամակին սպասող, քեզ սիրող և զանազան «ողջ» վերջավորված ածականներով, եղբայր՝

Ավետիք Իսահակյան:

Շուտով գրե նամակդ և երկար:

Ձեմարանում
1890, 11 փետրվարի:

3. ԱՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<18>90 թ. 6-ն մայիսի, Ս. Էջմիածնում

Անմոռանալի Արա՛մ.

Ընդունիր իմ անձկալի բարևս և հաղորդիր՛ բոլորին, բոլորին, որոնք սիրում են քեզ և ինձ՝ սրտով անմեկիններիս:

Սիրեցյալդ իմ Արամ, իմ այսքան երկար ժամանակ նամակ չգրելուս պատճառը ո՛չ այլ ինչն էր, եթե ոչ ժամանակի աղությունը. աղությունն եմ ասում, որովհետև արդեն սկսվել են մեր հարցաքննությունները. սույն ամսույս 4-ին հանրահաշվից—ալգեպրայից քննվանք և բավականին հաջող անցավ. մենք մայիսի 26-ին քննություններից կպրծնինք և, շատ կարելի է, հունիսի 2-ին ճանապարհ ընկնինք դեպի հայրենիք: Այո՛, ստացել եմ քո ուղարկած վերջին երկու նամակները (Չոբանյանից), բայց, եղբա՛յր, մի՞թե կարելի է այդպես, այդպես անզգույշ լինել... Քո ամենավերջին նամակը, որ ուղարկել էիր Չոբանյանի հետ, բոլորովին բաց և, հարկավ, մի քանի անգամ կարդացած, հասավ ինձ, անզգուշության արգասիք <է>: «Ամեն վնաս մի խրատ է»,— ասել են, թո՛ղ այս ևս լինելով մեզ մի խրատ, գնա, խառնվի պատանեկան անհեռատես արարքների հետ...

Արամ ջան, երբ ես կարդացի Մարտիրոսի հետ ուղարկած նամակդ՝ հասնելով այն կետին, որտեղ գուժում էիր վաղամեռիկ Վարիգոյի մահը և, կարծես, մի թունավոր նետ կարևեր խոցոտեց սիրտս, խոցոտեց, ոչ թե իբրև բարեկամուհու համար, այլ որպես մի կենդանի և վաղաթառամ վարդի, ճիշտ որ «ՆԷ» վարդ էր և վարդից շատ չապրեցավ, այո՛, «ՆԷ» մեռավ, բայց թողեց մի խանդաղատելի նախադասություն մեր ծարավի սրտում՝ «Կտորմ կփնթփնթա», որով մենք անմահացնում ենք «ՆԷրա» սուրբ հիշատակը մեր սրտում...

...Արամ, ինձ շատ վրդովեցրեց քո երկդիմի խոսքերը, բայց ինչո՞ւ, ի՞նչ կարիք կա, մինչդեռ բոլորիս պսակողը օվկիանի մեջ, կարծես, ակամայիցս գոչեց՝ «Ունայնություն ովկիանի մեջ, կարծես, ակամայիցս գոչեց՝ «Ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ունայնություն», և մենք՝ հասարակ մահկանացուքս, ինչո՞ւ պետք է վհատվինք... Երբե՛ք, երբե՛ք և բյուր երբեք. մենք ծն<վ>ել ենք, որպես մի հասարակ քաղաքացի անհատ և կաշխատենք մեռնել, որպես մի ազգօգուտ անդամ. թերևս վերջ տամ վայրախոսությանս. տաղտկալի է...

Ողջ լեր — ցտեսություն...
Մնամ քեզ սիրող, քո եղբայր և ընկեր՝
Ավետիք Իսահակյան:

Ապրիլի 23-ին եկավ Մայր Աթոռը Իտալիայի արքայորդին և փառավոր ընդունելություն ունեցավ, նույնպես և այցելեց Ճեմարան:

Սրա մասին տանը կխոսեմ, հայրենի հարկի տակ:

Ավետիք:

Արամ ջան, ես էլ լավ գիտեմ, որ դու էլ ժամանակ չունիս նամակիս պատասխանելու, ուստի այլևս չեմ սպասե քո նամակին, մի քիչ էլ համբիրենք և ահա ի՛նչ՝ միմյանց մոտաներևակայելի և անասելի րոպե...

Ավետիք Իսահակյան:

4. ՄԿՐՏԻՉ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<18>90 թ. 1-ն սեպտեմբերի, ս. Էջմիածնում

Սիրելի՛ եղբայր.

Օգոստոսի 31-ին ողջ և անվնաս հասանք Վաղարշապատ, շնորհիվ Աստուծո:

Աղեքսանդրապոլից դուրս եկած առաջին գիշերը անցկացրինք Ղփչաղում՝ հայր սուրբի մոտ, իսկ մյուս գիշեր՝ Մուղնիում:

Շատ բարև բոլորին:

Ամսույս 5-ին կսկսվին մեր դասերը և մի քանի օրից հետո կարձակեն ս. մյուռոնի համար:

Հակոբ Չորաճյանը շուտով կգա, նրանք էլ բարև ուղին տանեցվոց:

Շուտով նամակիս պատասխանը գրեցեք և Ալեքսան աղբոր հասցեն, որպեսզի նրան էլ նամակ գրեմ:

Յ'գրություն:

Մնամ Ձեր փոքր եղբայր՝
Ավետիք Իսահակյան:

5. ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

<1893>, մարտի 28, Էջմիածին

Սիրելի՛ քույրիկ.

Ի՞նչ գրեմ — արցունք, տանջանք, վիշտ, հեծծանք... Թառամեցան ծաղիկները, հանգան կայծերը, ձմեռն եկավ. բուքբորան, մառախուղ, մռայլ, անապատ, անապա՛տ առանց օազիսի. ու՞ր է երկինքը, աստղերը, ծիածանը, արշալույսը. ո՞ւր է, ո՞ւր է անդրանիկ սերը, սերը պղատոնակա՛ն, մաքո՛ւր, աննարա՛տ, կուսակա՛ն... Ո՞ւր է, ո՞ւր...

Ես լալիս եմ, ես տանջվում.

Я вновь один, и вновь кругом
Всё та же ночь и мрак унылый,
И я в раздумье роковом

Стою над свежею могилой:
Чего мне ждать, к чему мне жить,
К чему бороться и трудиться:
Мне больше некого любить,
Мне больше некому молиться!..

Այո՛, քույրի՛կ, այո՛, ես էլ ո՛չ ոքին չեմ սիրում, ո՛չ ոքի համար էլ չեմ աղոթում...

Սակայն, ով գիտե, կարո՞ղ էի երևակայել, որ այն, այն ծաղիկը,— որի բուրմունքից արբեցած ես ապրում էի,— թառամում է. ո՛չ, ո՛չ, չէի կարող. միթե կարո՞ղ էի, միթե կարո՞ղ էի չսիրել «Նորան»:

Երբ ես հուսահատ, երբ ես մոայլ, երբ ես հիասթափված դիմում էի դեպի կորուստ, ո՞վ ինձ ձեռք տվեց, ո՞վ ինձ մխիթարեց, ո՞վ ինձ քաջալերեց, ո՞վ ինձ հույսեր խոստացավ. «Նա՛», «Նա՛»:

Երբ ես հոգնած կյանքից, երբ ես զզված գոյության անմիտ կռվից, երբ ես մեոցրել էի հավատս թե դեպի մարդը և աշխարհը, ո՞վ ինձ նոր աշխարհ տվեց, ո՞վ ինձ իդեալներ տվեց, ո՞վ երկինքն ու երկիրը սրտումս իջեցրեց. «Նա՛», «Նա՛»...

Երբ կյանքը իմ աչքում դատարկություն էր, խաղալիք էր, երբ աշխարհը կրքերի և զվարճությունների օրորոց էր, երբ աշխարհը ճահիճ էր, մարդիկ՝ գորտեր, ո՞վ ինձ ոգևորեց գիտության անվամբ. «Նա՛», «Նա՛»...

«Նա», «Նա», «Նա»՝ իմ փրկիչս էր...

Օ՛, «Նա» այժմ, «Նա» այժմ տանջվում է, դեռ արև չտեսած գոլորշիանում է...

Օ՛, «Նորա» օրերը, երկնային օրերը համրած են:

Ձմեռն եկավ՝ «Նա» ծածկվում է, «Նա» թաքչում է...

Եվ ես օրհնում եմ «Նորան»...

Բայց ես, ես ի՞նչ անեմ. ես ապրել եմ ուզում, ապրե՛լ. ապրել, ինչո՞ւ՝ չգիտեմ...

Ես չեմ ուզում այսպես կորչել, ոչնչանալ. ապրել եմ ուզում հանուն գիտության, գիտության, միա՛յն գիտության համար ապրել, և իմ կյանքը գիտության համար նվիրել. ես գիտության, անմա՛հ գիտության զինվոր եմ ուզում լինել...

Այսուհետև սիրո ո՛չ շող ու ցող, ո՛չ բույր ու թույր...

Խաբուսիկ աշխարհ, խորամանկ դիմակ...

Ա՜խ, եթե ես կարողանայի աղոթել աստծուն, հավատալ աստծուն՝ երջանիկ կլինեի...

Եվ մի՞թե կա երջանկություն աշխարհի մեջ. ո՛չ, ո՛չ, ևս ինքնախաբեություն, ինքնամոռացություն, եսականություն է... Ա՜խ, ես թշվառ եմ, ես ապերջանիկ. չկարեկցեք ինձ վերա. ես փոքրոգի չեմ, ես հաղթված չեմ կյանքի կռվից: Չկարեկցե՛ք:

Իմ վիշտը, իմ վերքը, իմ երգը թո՛ղ ձեզ չգրավե, թո՛ղ ձեզանից ևս արցունք չքամե... Մի՞թե ձեր վարդերը կարող են պսակ լինել ինձ. չեմ կամենում... չե՛մ, չե՛մ...

Իմ արցունքները կարող են ինձ համար բուսցնել «նորա» ևվիրական շիրմից փշեր և մամուռ, և այդ ինձ բավական է որպես պսակ, որպես հաղթանակ...

Դո՛ւք ուրախացեք, դո՛ւք ապրեցեք, դո՛ւք ապասեցեք դարձյալ. կյանքը դեռ ժպիտ տալիս է ձեզ համար, իսկ ինձ՝ ո՛չ...

«Նա» ձեզ համար մեռնում է, բայց ինձ համար՝ ո՛չ. «ևա» միշտ կենդանի կմնա և՛ իմ սրտում, իմ երգերում, և՛ իմ աղոթքներում՝ ավելի մաքո՛ւր, ավելի սո՛ւրբ... իսկ գաղտնի տանջանքով ավելի շուտ կհասնեմ կյանքի ևպատակին՝ գերեզմանին, քան թե դուք... և հավիտյան «ևա» սիրում և օրհնում է ինձ և ես՝ «նորան»:

Ավետիք

6. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<1893>, 18 մայիսի, Աղեքսանդրապոլ

Հարգելի վարժապետ.

Չգիտեմ ինչո՞ւ, բայց երկար ժամանակ է ոտանավորներիս տեղ չեք տվել «Տարազում»:

Իմ մեջ մի՞թե չկա բանաստեղծություն և իմ ոտանավորները սո՞ւկ ոտանավորներ են — անգույն, անգեղարվեստ և անկրակ. գոնե իմ ինքնահանահաչությունը ինձ այդքան ան-

բովանդակ չի կարծում... և միևչև անգամ խրախուսում է... իսկ Ձեր մոռացությունը ոչնչությունս երեսովս է տալիս և վիրավորում է ինքնասիրությունս:

Թույլ տվեցեք ասել այն, ինչ որ զգում եմ և մտածում.— անցյալները Դուք իրար հետևից — անընդհատ տպագրեցիք պ. Ա. Ծատուրյանի ոտանավորները, իսկ վերջերս պ. Հ. Կոստանյանինը. ախր չէ՞ որ այդ, իմ կարծիքով, թերթի համար միապաղաղություն է. ընթերցողները ծանոթ լինելով ծանոթ բանաստեղծների մոտիվների հետ, տաղտկությամբ են կարդում համարյա կրկնությունները,— և այս եզրերից այն է եզրակացվում, որ ավտորիտետ ասած բանը հանդուգն է, և այդպիսով նոր ծլող ուժերը խոնարհվում են նրա առաջ՝ կորցնելով իրենց անհատականությունը... Իհարկե, հարցը ուրիշ տեսակ կձևակերպվի, եթե լինի անսահման ընտրություն և անալիզ. իսկ այդ մենք չունենք...

Ձեզ ուղարկել եմ շատ ոտանավորներ.— անցյալ անգամները ուղարկել էի «Իսպահանական արաբների սիրո երգերից — երեք երգ», բայց չտպվեց. այժմ ուղարկում եմ մի քանի հատ (6) «Տարազի» համար: «Մայիս» ոտանավորս «Տարազի» համար կորցրել է իր սեզոնը — ավելի պատշաճ է «Աղբյուրի» համար:

Սրանց հետ ուղարկում եմ «Արգինայի լույսի» մասին գրածս:— «Նոր-Դարի» № 78<ում> գրած էր այդ երևույթի վրա և նրան աստվածացրած. մարդ կատաղում է, երբ ամեն մի բան տպվում է այդ թերթում և մնում անբողոք:— Խընդրում եմ «Տարազի» մոտիկ համարում տպեք «Լույսի» մասին գրածս. աղեքսանդրապոլցիք և շրջակա ավանները լույսի մասին սպասում են մի միտք հանգստացնող բան:

Սիրելի վարժապետ, եթե հետաքրքրվում եք իմ դրությամբ, կարճ ասեմ.— գարունս ես գյուղերում պարապում էի գործնական գյուղատնտեսությամբ: Արտասահմանի անցագիր չէին տալիս. այժմ երաշխավորների միջոցով տալիս են, և ես մոտ ժամանակներս կուղևորվեմ:

Ընդունեցեք համակրանքս:

Ձեր աշակերտ՝

Իսահակյան Ավետիք

7. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<18>93 թ., 30 հոկտեմ<բերի>, Լայպցիգ

Սիրելի վարժապետ.

Վերջապես որոշեցի այս երկու սեմեստրը գոնե անցկացնել այստեղ, իսկ մյուսներն — այդ ժամանակը ինձնից լավ կտնօրինեն:

Երկար տատանմունքից հետո — երևի ներքին ձայնիս ուժով—ընտրեցի իբրև մասնագիտություն նոր գրականությունը և դրան լրացուցիչ գիտություններից, նույնպես լսում եմ (որը հիմա դեռ քիչ եմ հասկանում) արևելյան ազգերի դիցաբանությունն ու բանաստեղծությունը. լսում եմ և գեղարվեստի պատմությունը — ծագումը, զարգացումը Հընդկաստանում, Հունաստանում, և այլն:

Առանձնապես ուշք եմ դարձնում մի լեկցիայի վրա — Նիբելունգների, Ռոլանդի, Դյուրինի և այլն — ժողովրդական բանահյուսության վրա: Այսքան:

Թե արդարև անհրաժեշտ ընտրություն եմ արել՝ ես գոնե կասկածում եմ. ուղիղ է, որ ես գրում եմ, բայց արդյոք պահանջ զգում եմ գրելու, **կամ իրավամբ** գրում եմ — ես այս չգիտեմ, և այս պատճառով ես ինձ չեմ հավատում և չեմ ոգևորվում...

Գուցե մի քիչ ժամանակ անցնի՝ ավելի կազմակերպվեմ, ամրանամ, բնավորոշվիմ և ինձ ճանաչած՝ բնական ուղիով ընթանամ...

— Աղեքսանդրապոլից մի օրիորդ — Ջապել Բաբայան — ուզում է «Աղբյուր-Տարազին» աշխատակցել: Օրիորդը իր կուրսը վերջացրել է Թիֆլիսի գիմնազիոնում — այժմ Աղեքսանդրապոլում ապրում է: Նա ինձ գրել է, որ հայտնեմ Ձեզ — Ձեր հավանության նկատմամբ. նա թարգմանած, պատրաստ ունի հետևյալները — «Օտիլա կամ անձնազոհ մոր վեպը» և «Շարլոտ դ'Կորդե». այս երկուսն էլ կան «Вестник иностранной литературы», և ուրիշները՝ «Թոռնիկ» («Нива»-ից), «Ագապիա» բուլղարական կյանքից: Օրիորդը ուզում է, որ Դուք բնագիրները կարդաք, հավանեք նյութը, և հայտնեք, որ ինքը ուղարկե իր թարգմա-

նությունները: Թարգմանությունների լեզուն հաջող է: Խընդրում եմ հայտնեցեք ինձ, որ ես գրեմ նորան՝ ուղարկելու գրածները. լավ կանեք, որ գոնե մեկն ու մեկը տպագրեք, որով ոգևորած կլինինք հայ աղջիկներին գրականական աշխատանքների մեջ. այդ, իհարկե, Դուք ինձնից հազար անգամ ավելի լավ եք հասկանում:

Վերջապես խնդրում եմ, որ մի կերպ տնօրինեք և հայտնեք ինձ, որ ես էլ օրիորդին հաղորդեմ:

Այստեղ կան մոտ 16 ուսանող — հները բոլորը վարդապետող, խրատող և փիլիսոփայող մարդիկ են — այսինքն «ի նոցանէ» («Նոր-դարական») են: Մեր մեջ չկան այն ընկերական կապերը, ինչպես Ռուսաստանի ուսանողների մեջ — մենք միմյանց մոտ ձևանում ենք, կեղծում ենք, ամենաբարդ քաղաքավարությամբ վարվում — մեր մեջ ամեն ինչ պաշտոնական է... «Հայկական ճեմարան — ակադեմիական» մեծանուն ընկերությունը յուր սենյակը մեզ միայն գարեջուր խմելու համար է հատկացրել... Ցավալի երևույթ է...

Առայժմ ուղարկում եմ այս **5** ոտանավորները. մի քիչ ժամանակից հետո կուղարկեմ ավելի շատ թվով:

Ընդունեցեք բարև և հարգանքս:

Ձեր աշակերտ՝ Ավ. Իսահակյան

Սպասում եմ Ձեր պատասխանին.
«Տարազները» ստացվում են այստեղ, բացի 34 համարից:

Հասցե՝ Германия
Leipzig, West-Strasse,
№ 27, IV. Av. Iss.

8. ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

<18>93 թ., 20 նոյեմբերի, Լայպցիգ

Սիրելի վարժապետ.

Ստացել եմ պատկերները — ընկերների կողմից հայտնում եմ իմ ընկերներիս և իմ շնորհակալությունը. ծախումները կամաց-կամաց վաճառվում են (1 մարկ) — բոլորը ծախվելուց հետո կուղարկեմ փողերը՝ իմ փող-պարտք վերցրած փողերի հետ:

17

Սպասում եմ անհամբեր Ձեզնից մի նամակի — այժմ էլ ավելացնում եմ այս—այստեղի ուսանողներից մի-երկուսը (Բաբայան, Սարգսյան) թարգմանած ունեն գերմաներենից Բեորնսոնի «Նորապսակները», «Միակնություն ու բազմակնություն» և այլն պիեսները. ուզում են «Տարազին» ուղարկել, բայց պայմանով, որովհետև խեղճերը ձյութապես բավական սուղ են—ինձ ասացին, որ գրեմ Ձեզ—Ձեր համաձայնությունը և պայմանները իմանալու: Պետք է ասել, որ հաջող է թարգմանությունը և համեմատված է ռուսաց թարգմանության հետ: Բեորնսոնի գրվածները մի թարմություն է — ինձ այդպես է թվում — ընկած աշխարհի վրա. Քրիստոնեության չորցած ծերը ածում են — մի խոսքով «Տարազի» համար, իբրև ժամանակակից հարց — շա՛տ հարմար է:

Նույնպես պատասխանեցեք, խնդրում եմ — այն օրիորդի (Զ. Բաբայան) նկատմամբ, որը և ուզում է աշխատակցել:

Իմ լսած մի քանի դասախոսությունները ժողովրդական վիպասանության վրա, դյուցազներգության վրա՝ իմ մեջ շատ մտքեր զարթեցրին — այժմ պրոֆեսորի առաջնորդությամբ և ընտրությամբ կարդում ենք ազգերի դյուցազնական գրականությունից — Ջենդավեստից, Շահ-Նամեից, Ղուրանից, Հին-կտակարանից, Հոմերոսից, Վիրհգիլիոսից, Ռոլանդից, Սիդից, Նիբելունգներից, Կուդրունից, Իլյա Մուրոմեցից, և այլն... Այդ բոլորի վրա — մանավանդ այդ մասնագիտության վրա ես այժմ կատարյալ սիրահարված եմ: Ասում են՝ հայերը դյուցազներգություն չունեն.— այդ ասողները իմ աչքում երևում են՝ հայ ժողովրդին և պատմությանը անծանոթ մարդիկ... Մի՞թե մեր Հայկն ու Արամը, Արան ու Տիգրանը, Վահագն ու Շարան, Արամազդն ու Շիդհարը, Դավիթն ու Մհերը... նույնպիսի ազգային դյուցազներ — ազգի բովանդակություններ չեն, ինչպես Ռոստոմը, Սիգֆրիդը, Հերակլը, և այլն: Այժմ դրականապես վճռել եմ գլխավորապես շատ պարապել այդ գրականությամբ. գուցե կարողանամ մեր ժողովրդի մութ-մութ խորշերից դուրս հանել պատմական Հային, իսկական Հային...

Կարդում եմ Ուլանդի բալլադաները — սիրտս խփում է ուժգի՛ն. երևակայությունս լարվում է — թռնում եմ Մանսիի

ու Տորոսի գրկերում մեր մեռած-մոռացած դյուցազներին հարություն տալու...

Բայց իզուր է անցնում այդ էնտուզիազմը, որովհետև նյութ չունիմ — ո՞վ է ծանոթ հայ գյուղացուն, ո՞վ ունի հայ-գեղջուկի մասին լիակատար-բազմակողմանի գրվածքներ: Թո՛ղ մեր գրականությունն էլ ունենա Գրիմի կամ Буслаев-ի գրքերը — այն ժամանակ մենք Ուլանդ ու Պուշկին էլ կունենանք...

Երբ ես հայրենիք էի, մեր ամեն բանը — գրականություն, թատրոն, գեղարվեստ, լրագիր խոշորացույցով էի տեսնում, իսկ հիմա այստեղ — մեր ամեն բանը՝ տղայական խաղալիք է թվում ինձ, — և հանկարծ 4000 տարի կյանք ունեցող ազգը դուրս է գալիս անհայր, անմայր, անտուն, անհայրենիք, անանցյալ — ինչո՞ւ, որովհետև մենք ժողովրդի մեջ, նրա հետ, նրանով չենք ապրում...

Այստեղ է **Լևոն Սեդրոսյանը** և մի ուրիշ պոլսեցի (Շամդանճյան). եկել եմ ուսանելու. այս շատ լավ երևույթ է. պոլսեցիք միշտ Փարիզ են գնում աղա դուրս գալու համար: Ուղարկում եմ մի քանի ոտանավորներ էլ. մի առ ժամանակից հետո կուղարկեմ Նիբելունգներից հատվածներ և ինքնուրույն բալլադներ:

Սպասում եմ Ձեր նամակին:

Ընդունեցեք

մնամ՝ Ձեր աշակերտ՝ **Ավ. Իսահակյան:**

9. ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ

1894, հունիսի 1 (13), Լայպցիգ

Մեծապատիվ խմբագիր.

Համակրելով «Մուրճ» ամսագիրը՝ ես ջերմ ցանկություն ունիմ աշխատակցելու նրան. այդ պատճառով այժմ ուղարկում եմ մի քանի ոտանավորներ և խնդրում եմ տեղ տաք «Մուրճ»-ում՝ պատշաճ կրիտիկայից հետո. այդ Ձեր կամքն է: Մի քիչ հետո կուղարկեմ ուրիշ ոտանավորներ՝ ինքնու-

րույն և թարգմանական, և եվրոպական նոր վիպասանների նովելաներից ու միճատյուրներից: Սեմեստրի վերջին, հայրենիք վերադառնալուս ժամանակ այդտեղ կհանձնեմ Ձեզ իմ մասնագիտությունից (էտնոլոգիա, էտնոգրաֆիա) փոքրիկ հոդվածներ. հույս ունիմ, որ կկարողանամ միշտ աշխատակցել թե՛ հայրենիքում և թե՛ արտասահմանում եղած ժամանակներս:

Ընդունեցեք հարգանքս,
Ձեր՝ **Իսահակյան Ավետիք:**

10. ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ

1895, սեպտեմբերի 17, Ալեքսանդրապոլ

Մեծարգո պ. խմբագիր.

Ուղարկում եմ «Մուրճին» տպագրելու հետևյալ հատվածները. սրանք իրենց ոգով ամենաթարմն են գրականության մեջ. այստեղ կա այժմյան սիմվոլիստների հետ միասին և՛ Նիցշեի ասույթությունը և՛ Հեյնեի թալկությունը՝ ներկայիս նուրբ կուլտուրայի մարդու սիրտը: Այս բոլորը նշանավոր կտորներ են, հանճարեղ Նիցշեի տողերը անմահ են, և մեր գրականության մեջ նույնիսկ դժբախտ Հենիի* անունը օտար: Հեյնեն միշտ երևում էր մեր գրականության մեջ նուրբ, սալոնական — մանուշակի ու շաղերի բույրիչ. այժմ նա երևում է ներվոզ էպիկուրիստ, հոգնած, զզված — բուդդիստ: Նրա այս գլխավոր կողմը միշտ մոռացվում է:

Հ. Շլաֆ և Պ. Շերբարդ — երկու ջահել գերմանական տաղանդներ՝ սիմվոլիստ ու նիցշեական՝ խորը ու մռայլ, այնքան էլ պայծառ ու ուրախ. նրանց կտորները մեծ անուն ունին հանած Գերմանիայի այժմյան գրականության մեջ:

Հուսով եմ, որ կտպագրեք. խոստանում եմ ուղարկել ուրիշները:

Մնամ հարգանքով՝
Ավետիք Իսահակյան

---

* Իսահակյանը իր նամակներում և օրագրերում հանճար բառի փոխարեն հաճախ օգտագործել է հենի (գերմ. Genie—գենի):

11. ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

1897, օգոստոսի 5, Արգինա

Հարգելի պարոն նախագահ.

Ձեր ընկերության 1896 թ. Գ Տեղեկագրում կարդացի, որ հարգելի մասնաժողովը իր նոր ծրագրի գործադրության համար ի նկատի է ունեցել մի խումբ մարդկանց, որոնց մեջ կար և՛ իմ անունը, և որ այդ մարդկանց դիմում է եղել ընկերությանդ կողմից՝ հանձն առնել որոշ առաջարկներ ի կատար ածելու,— բայց ինձ ո՛չ մի դիմում չէ եղած, երևի այն պատճառով, որ ես 1896—1897 թթ. բանտարկված էի:

Հիմա, եթե հարմար է դասում հարգելի մասնաժողովդ ինձ այդ պարոնների շարքում,— ես պատրաստ եմ բոլոր ուժերովս աջակցել ծրագրի գործադրությանը:

Գալով իմ ուժերիս — ես կարող եմ մարդաբանական և ազգագրական հետազոտումներ անել մեր ազգի և երկրի նկատմամբ. ունիմ պատրաստի մի քանի փոքրիկ ինքնուրույն գրվածքներ, (մեր ընտանեկան-տնտեսական կյանքից և աշխարհագրական տեսակետներից), որոնցից մի քանիսը ես տվել էի Լայպցիգի իմ ուսուցչապետ F. Ratzel-ին, որը քաղվածորեն հրապարակել է իր «Völkerkunde» եռահատոր գրքի վերջին տպագրության մեջ: Ունիմ և՛ ժողովածուներ հայկական ժողովրդական բանահյուսությունից: Իսկ թարգմանել կարող եմ գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներից: Հենց այժմս էլ պատրաստ ունիմ Թ. Կարլեյլի կենսագրությունը՝ թարգմանորեն կազմած նրա գրվածքներից ու կենսագրություններից. ունիմ և Ֆր. Նիցշեի կենսագրությունը, Իբսենից՝ «Հետա Գաբլեր», Հաուպտմանից՝ «Միայնակ մարդիկ» սքանչելի դրամաները: Իսկ եթե կուզեք, կարող եմ թարգմանել Ֆր. Նիցշեի «Also sprach Zarathustra» այս բանաստեղծական-միստիկական գոհարը: Այս «Also sprach Zarathustra» գիրքը շատ հետաքրքիր է յուր տարօրինակ հանճարեղությամբ: Ես առանձնապես չեմ պարապել թարգմանությամբ, այլ իմ մասնագիտության ուսումնասիրությամբ — իսկ ազատ ժամերս ինքնուրույն գեղարվեստական

գրություններով՝ ոտանավորներ, պատկերներ և մինչատուր-էտյուդներ...

Այժմ խնդրում եմ Ձեզ, պ. Նախագահ, հայտնել ինձ Ձեր որոշումը՝ ի՞նչ նյութեր կան վճռած, բայց դեռ չկատարված, գուցե կարողանամ արդարացնել Ձեր տածած վստահությունը դեպի ինձ:

Ընդունեցեք հարգանքս՝

Ավետիք Իսահակյան

Հասցես՝ Александрополь,
Генеральская ул.
Авет. Исаакян.

12. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

<1898>

... Բոլոր հոգով պիտի կենտրոնանամ այն մեծ նյութի, գործի վրա, որ անունը <«Յոթ օր ապատում, յոթ գիշեր անապատում»> եմ դրել, որտեղ պիտի մտցնեմ բոլոր իմ հիմարություններն ու ոչ-հիմարությունները... Շա՜տ-շատերի մոտ եմ կարդացել այդ գրվածքի կոնսպեկտն ու մշակված կտորները, և բոլորն էլ գովել են... Մենակ այդ պիտի գրեմ և վերջ տամ գրելուս և գոհ կլինեմ, որ մեռնիմ...

(Հեղափոխական էպոսիս թեման շա՜տ հետաքրքիր է):

Այժմ խնդրում եմ, որ պ. Արասխանյանցին դիմեք, որ ինձ տեղ տա «Մուրճ»-ում և այս տետրիցս տպագրեցեք «Մուրճ»-ում, հենց մոտ համարներից <մեկում>: Շատ եմ ուզում «Մուրճ»-ում գրել, իբրև լուրջ օրգանում, ուստի խընդրում եմ, որ ինձ էլ* տեղ տաք:

Իմ ոտանավորները խստությամբ քննելիս բացատրեք մի քանի տողով լիրիզմի նշանակությունը, ապա անցեք ոտանավորներին: Քննադատելիս աչքի անցրեք և՛ տետրում գրածներս... Մի փոքր երկար կանգ առեք ժողովրդական մոտիվների վրա: Դիտեցեք և՛ այն, որ իմ հանգերը այսպես

---

* [այդ անմահների դա <սում>]

կոչված «ճոխ» տեսակիցն եմ — օրինակ լիքն եմ այսպիսի <1 անընթ.> «մրմունջ-տրտունջ, շողա-ցողա, դողա-լողա»... Հենց ժողովրդական տարրը...

Եթե կարող եք՝ ջախջախեք իմ մեջ այս ինքնահավան կարծիքը. <...>

13. ԱՐՇԱԿ ՉՈՐԱՆՅԱՆԻՆ

<18>99 թ., 9-ն ապրիլի, Աղեքսանդրապոլ

Մեծապատիվ պ. Արշակ Չորանյան.

Ես Օդեսայումն եմ եղել, երբ Դուք նամակ էիք գրած եղել ինձ՝ «Մուրճի» հասցեով: Երբ ես վերադարձա Թիֆլիս, այս տարի հունվարին, պ. Արասխանյանցը ինձ ասաց Ձեր նամակի մասին, որը դժբախտաբար կորել է, կամ կորցրել է. մի խոսքով ինձ չէ հասել. ցավում եմ, որ չեմ ստացել, որ ինձ շա՛տ է հետաքրքրում: Թեև մասամբ ենթադրում եմ նամակի իմաստը — եթե Ձեր ցանկությունն է ինձ աշխատակից ունենալ «Անահիտի» համար — ես պատրաստ եմ ուժերիս ներածի չափ նպաստել Ձեր համակրելի գործին. կտամ արձակ և չափածո ինքնուրույն գրվածքներ, զանազան հոդվածներ, և թարգմանություններ գերմաներեն և ռուսերեն լեզուներից:

Կզարմանաք, որ մինչև այժմ Ձեզ նամակ չէի գրել. (հունվարից —ապրիլ). պատճառը հիվանդությունս էր և դրությանս անորոշությունը. առողջությունս այժմ լավ է, բայց դրությունս դարձյալ անորոշ—մի բան, որ շատ է խանգարում կենտրոնանալ-պարապել:

Ո՞ւր պիտի գնամ, ի՞նչ պիտի անեմ — ահա՛ ինձ զբաղեցնող այս անձնական հարցը, որ իհարկե, շա՛տ բնական է: Մի քանի տարի առաջ ես Եվրոպայումն էի, հետո վերադարձա հայրենիք — Կովկաս, ուր ձերբակալվեցի հայկական դատի առթիվ (ռուսաց կառավարությունից). մի տարի բանտարկվելուց հետո, ուղարկեցին ինձ աքսոր — ամբողջ երեք տարի է, որ ես անկախ չէի, կառավարության օրենքի տակ,

հսկողության տակ, կապված-կաշկանդված. այժմ նոր եմ ազատվել և եկել եմ տուն, և զարթնել է այն հարցը՝ ու՞ր գնալ, ի՞նչ անել: Այս շա՜տ է տանջում ինձ, և ո՛չ մի վճիռ դեռ չեմ կայացրել իմ նկատմամբ. իսկ այնքա՜ն եմ տանջվել, այնքա՜ն ժամանակ եմ կորցրել՝ և որը պետք է նորից վերականգնել, կորուստը փրկել, ուղղվել... Բայց ինչպե՜ս... Արդյո՞ք ինձար ունիմ — լոկ միջոց տնտեսական, նորից գնալու Եվրոպա՝ շարունակելու ուսումս, քանի դեռ երիտասարդ եմ. իսկ եթե չկարողացա գնալ, ի՞նչ անեմ այստեղ — Կովկասում, ուր ո՛չ մի կյանք, հոգեկան շահեր չկան...

Հայ ժողովրդի մեջ, վերջին դժբախտ անցքերի շնորհիվ, տիրում է մի դառն հիասթափումն դեպի գրականությունը, մամուլը, միտքը, հասարակական կյանքը. այժմ ամենքը, թե՛ ինտելիգենտը, և թե՛ ժողովուրդը միայն իրենց տնտեսական շահերովն են կլանված և ընտանիքի մեջ ամփոփված: Գրողի, մտածողի համար այստեղ օդ չկա... Իսկ մեր հայ գրողնե՜րը... խեղճե՜րը... հացի խնդիր, դառն կարիք, ժողովրդի անտարբերությունը, կառավարության ճնշումներ, հալածանք... Ուղիղն ասած՝ ուժ չկա ապրելու...

Ի՞նչ անել այստեղ.— Հայ դպրոցները փակ, գրադարան-ընթերցարանները փակ. գրականությունը ճնշված՝ ինչո՞վ ոգևորվել.— ժողովրդո՞վ. ժողովուրդը ծաղրում է ազգությունը» և շա՜տ ստոր մակերևույթի վրա է նրա հոգու աշխարհը... Այս բոլորին կան նպաստող, սիստեմատիկ հանգամանքներ-պայմաններ. հասկանալի են, որ արվեստական և բարձրից նյութած որոշ քաղաքական գործունեության պտուղ:

Ի՞նչ անել այստեղ... այս հարցը ինձ բոլորովին չլատում է, և ես հիմա շա՜տ հուսահատված եմ և կորած թե՛ ինձ, և թե՛ ուրիշների համար...

Երևի Դուք կպատասխանեք «ի՞նչ անելուն»՝ «գրել-գրեցեք»... Բայց հոգի չկա գրելու, խանդ, պաֆոս — ոչի՛նչ չկա... Իսկ տեղական միջավա՞յրը... Օ, Դուք չեք կարող երևակայել այստեղ...

Ահա՛ դրանք են պատճառները, որ ես միևնույն այժմ անտարբեր եմ գտնվել Ձեր թերթին. սա շա՜տ դատապարտելի

է իմ կողմից, բայց ի՞նչ անեմ. ուղիղ ասած՝ կարեկցության արժանի եմ դարձել. դիմում եմ այստեղի հարուստներին բաժանորդ գրվել մեր թերթերին, լրագրներին՝ ծաղրում են լրբբաբար... այդքան անտարբեր են. դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ «Մուրճը» մեր ողջ քաղաքում միայն 2 բաժանորդ ունի. 2 հա՜տ միայն, իսկ «Անահիտը»՝ երևի միայն քաղաքի կլուբը (ակումբը). և գիտե՞ք, մեր քաղաքը Կովկասի ամենաբազմամարդ հայաբնակ քաղաքն է՝ զո՜ւտ հայերով, 30 000 բնակիչ, շրջապատված 200 հայ բազմամարդ գյուղերով, և այդքան խիտ ազգաբնակության մեջ հազիվ մի տասը ինտելիգենտ-կրթված անհատներ գըտնըվին. մեր երիտասարդությունը, հին ուսուցիչները — բոլորը այժմ Բաքու քաղաքումն են, հավթի աշխարհում, ուր շա՜հ ունեն...

Երկար եղավ համակս, և Ձեզ, երևի, ձանձրալի, մանավանդ որ անծանոթներ ենք, բայց ոչ՝ վաղուց ծանոթներ ենք, և ահա թե ինչո՜ւ կամա-ակամա սիրտս բացեցի Ձեր առաջ, բարեկամս: Է՜յ, դառն են մեր հայրենիքի պայմանները. օրհասի մեջն ենք, և հազիվ կարող ենք օդ շնչել. երանի՜ Ձեզ, որ ապրում եք մտքի աշխարհում, լուսավոր մարդկանց մեջ, և Միցկևիչի նման երազում եք հարազատ ժողովրդի վերածնությունը. երանի՜ Ձեզ, որ ընդունակ եք զգալու, խորհելու, և տանջվելու... Ես այստեղ անպատճառ կքարանամ և կլինեմ ամբոխի հարազատ որդին — քարե-զանգ, քարե-զանգ, որ ձայն չունի, համր է, մեռած, և չի կարող ղողանջել վեհություն ու գաղափար...

Ընդունեցեք խորին հարգանքս,

Ձեզ համակրող

Ավետիք Իսահակյանց.

Հ. Գ. Սպասում եմ Ձեր նամակին. մոտս չունեմ իմ հրատարակած գրքից՝ «Երգեր ու վերքեր», որ ղրկեմ. հետո կուղարկեմ անպատճառ: «Անահիտի» չորրորդ համարը չէ ստացվել մեզանում, երևի ցենզուրան է գրավել: Խնդրում եմ շու-

տով պատասխանեք ձամակիս՝ ի՛նչ որ ուզեցել էիք ասել կորած ձամակով և ի՛նչ որ հիմա կուզեք:

Ձեր **Ավ. Խաճակյանց.**

Հասցես՝—Кавказ, город Александрополь (Эриванская губерния). Аветик Исаакян, Генеральская улица.

14. <ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ>

<1899>, **Սարիղամիշ**

Այսօր ստացա Ձեր ձամակը, որով հիշեցնում եք իմ պարտքը. ես հաստատապես չգիտեի, թե որքան եմ պարտք (արդյոք) ընկերությանդ, քանի որ իմ Կովկաս վերադառնալուց հետո ուսանող Մկր. Շարաբանդյանը վճարել է իմ պարտքը. բայց երևի իմ ընկերը միայն մի մասն էր կարողացել: Բայց իմ պարտականությունն էր իմանալ այդ բոլորը հաստատապես, սակայն ես Գերմանիայից վերադառնալու օրից ընկա այնպիսի պարտքերի մեջ, որ ես ապրում էի ուրիշի հաշվով. հետո ես մի ամբողջ տարի բանտարկվել եմ, որի շրջանում, պարզ է, որ ես ինքս էի կարոտ դրսի օգնության. նրանից հետո էլ ես մի տարով աքսորված եմ եղել Օդեսայում, ուր ես հազիվ կարող էի ապրել՝ այդ հսկայական քաղաքում, ուր չկան ծանոթներ և հարմար գործեր: Բայց հենց Օդեսայից գրեցի Հայդելբերգ, ուսանող՝ որքան հիշում եմ՝ Հախումյանին, որ գրե իմ պարտքի քանակը, որ վճարեմ. այն ժամանակ իմ ընկերներից ինձ օգնել էին փողով, ես կարող էի վճարել, բայց պատասխան չստացա, իսկ փողերը ծախսեցի: Այժմ ես շա՜տ չնչին ռոճիկով աշխատում եմ Սարիղամիշ՝ այս զինվորական քաղաքում, գյուղում որպես հաշվապահ մի աղի մոտ, և հազիվ եմ ապրում, հետևապես ես չեմ կարող վճարել պարտքս, գոնե այս տարի, և ուրիշներից էլ չեմ կարող պարտք վերցնել, քանի որ չունեմ այստեղ ծանոթներ: Դրությունս այս է, և խնդրեմ մըտնեք իմ դրության մեջ, որ ձեր վճիռները կյանքից կտրված վճիռներ չլինեն:

Հիմա, ներվի ինձ, մի քանի խոսք ասել Ձեր վճռի մասին: Ձեր վճիռը միանգամայն անտակտ մի քայլ է. նախ որ՝ այն պարոնները, որոնք պարտք են ընկերությանը՝ և՛ հարուստ են, <և՛ ունեն> գործ ու չեն տալիս՝ դրանք կտրված են իրենց հին անցյալից, հայկական կյանքից և իդեալներից. նրանց մեջ մեռած է խիղճը դեպի օտար երկրում ապրող աղքատ ուսանող-ընկերները. նրանց համար ամոթ էլ չկա, իսկ լրագրությունը ինքըստինքյան այնքան մի ընկած բան է, որ նրան կարդացող էլ չկա: Իսկ այն մարդկանց համար, որոնցից եմ և ես, որոնց համար և՛ խիղճ կա, և՛ ամոթ, և՛ իդեալ, բայց աղքատ են և կյանքում անհաջող ու ճնշված,— նրանց համար դառն է իր<ենց> ուսանող ընկերների սենատորական-պետական վճիռները: Ուղիղն եմ ասում ես. ես արհամարհում եմ լրագրությունը և համարում եմ փըսխանք (Նիցշեի խոսքով ասած) և նրա մեջ գրողներին՝ իրենց սրտի կեղտը փսխողներ, և լրագրությունը ինձ չի կարող անպատվել, որովհետև ես իմ հոգում ինձ չեմ զգում անպատվված. փող չունեմ, հնար չունեմ, չեմ կարող վճարել, իսկ փող չունենալը հասարակական այսպիսի կազմության մեջ՝ պատիվ է բերում անհատին: Լրագրությունը ինձ ի՞նչ կարող է վիրավորել, քանի որ ինձ ճանաչողները գիտեն, որ ես մի աղքատ ուսումնածարավ երիտասարդ էի, հոգով ավելի բարձր, քան նրանք, որոնք հրամայում են ինձ, վճիռներ հանում, և արտասահմանները չափչփում,— որ ես այդ փողը գործադրում եմ իմ հոգու ազնվացման, և որ ես մենակ եմ տոկոսը հատուցանելու:

Ես սովորաբար լրագիր չեմ կարդում, և արհամարհում եմ նրա միջի գրածները, հետևապես ձեր գրածն էլ կարհամարհեմ: Լրագրում միշտ հայտարարվում է նվիրատուների, գազան Մանթաշյանների մասին, կլինեն գովեստներ, իսկ ինձ պես (Ձեր կարծիքով) փող ուտող, կեղտոտ, ստոր մարդկանց վրա պիտի ցեխ քցել: Երևում է, դուք, հարգելի ուսանող ընկերներ, հառաջադիմում եք Բիսմարկի հայրենիքում, դուք ևս դառնում եք պատժի, օրենքի ներկայացուցիչներ:

Պատժեցեք, դատեցեք, բայց չէ՞ որ մեր հոգումն էլ այն-

պիսի վրեժ կծնի, որը զգալ<ու> դուք ընդունակ չեք, դուք՝ բախտավոր մարդիկ:

Իսկ այն տողերը, որ գրում եք, թե «ավելի խիստ միջոցի կդիմեք» — դա ավելի քան անմիտ խոսք <է>. այդ ցույց է տալիս, որ դուք դեռ անփորձ եք շա՜տ, և չգիտեք՝ ի՛նչ մարդկանց հետ գործ ունեք:

Կարճ՝ եթե կհամբերեք մինչև պարտքս վճարելը՝ լավ, եթե չէ՝ դիմեք ուսանողներին. Շանթին՝ Մյունխեն, Լևոն Աթաբեգյանին՝ Ցյուրիխ, Միք. Հովհաննիսյանին՝ Ժընև, կամ «Մուրճ»-ին, «Տարազ»-ին, և իմ անունով ուզեք իմ պարտքը՝ նրանք կհատուցանեն: Իսկ եթե չեք ուզում այդ և չեք համբերում մինչև իմ վճարելը, ի՛նչ կուզեք արեք՝ համաձայն եմ:

Ավետիք Իսահակյան

15. ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ

1900, փետրվարի 2, Բաքու

Մեծապատիվ պ. խմբագիր, հարգելի բարեկա՛մ,

Խնդրում եմ ներեք, որ մինչև այժմ ոչ մի տող չեմ գրած Ձեզ, դրությունս շա՜տ անորոշ էր. այժմ էլ է անորոշ. բայց լռել էլ չէ կարելի: Առայժմ ուղարկում եմ այս երեք ուսուցավորները «Մուրճ»-ի համար, որոնցից վերջինը իր ձեռվ, իր տեսակի նոր երևույթ է, այդպեսը մի հատ ունեմ միայն գրքույկիս մեջ: Ընդունեցեք խորին հարգանքս:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

16. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1900, հոկտեմբերի 21, Ցյուրիխ

Սիրելի Հովհաննես,

Եվրոպա հասնելուցս մի քանի օր հետո ես քեզ մի բաց նամակ գրեցի — տանդ հասցեով, որ այն ժամանակ հիշում

էի թիվը, տունը,— բայց պատասխան չստացա. Դերենիկին մի քանի նամակ ևս գրել եմ, նույնպես պատասխան չունիմ:

Հիմա խնդրում եմ, որ նամակս ստանալուն պես, ինձի պատասխանես:

Ինչպե՞ս է քեֆդ, ի՞նչ ես անում. ի՞նչ է անում Շանթը. ո՞ւր է Դերենիկը. (Աղբալյանին նամակ գրել եմ Մոսկվա). ի՞նչ հալի մեջ է Վերնատունը: Ո՞նց է ընտանիքդ, բալեքըդ... Մինչև այժմ մի բան չհրատարակեցիր — «Դեպի ան-հունը», «Սինամ թագավորը»: Ե՞րբ է հրատարակվելու «Մուրճը». իսկ «Տարազը» ի՞նչ է անում:

Թե իմ մասին կհարցնես,— քեֆս վատ է, տրամադրությունս միշտ մռայլ. հույս, ոգևորություն, եռանդ-բան՝ չկան մեջս,— բայց քաշե-քաշ ապրում եմ, քաշե-քաշ պարապում: Եղբայր, գերմարդիկ չենք, որ այսքան հարվածներ, տանջանքներ ուտելուց հետո՝ էլի զվարթ, աշխույժ լինենք... Բաներս բո՞շ է...

Ղ. Աղայանը, կարծեմ, հիմա Բաքվումն է, իսկ Դերենիկը ինչո՞ւ է ապրում:

Սիրելի՛ս, գրի՛ր, գրի՛ր, տեսնենք ի՛նչ դուրս կուգա. ուզում եմ «Աղբյուր-Տարազին» բան ղրկել, բայց հավաս չկա. ծերացա՞նք, դեռ չապրած... Կարո՞ղ ես ինձ հայտնել, թե Ե. Թոփչյանը Թիֆլիզո՞ւմն է հիմա, ի՞նչ է անում: Արշակ Ղազարյանի մասին կարո՞ղ ես գրել. ի սեր աստծու, ում նամակ եմ գրում՝ պատասխանում չեն. խո չե՞ն խռովել ինձնից. բայց խռովելու ի՞նչ տեղիք կա արդյոք. ախր ինչո՞ւ Դերենիկը չի գրում ինձ...

Էլ ի՞նչ գրեմ,— գրելու շա՞տ բան կա, բայց նամակագրությանն թելը պիտի պահել, որ մարդ սկսի բացվել, և գրե՛լ, գրե՛լ:

Սպասում եմ նամակիս պատասխանին:

Մնամ հարգանքներով,
քո՝ Ավետիք Իսահակյան
Բարևներ բոլորին:

Հասցես՝—Zürich (Швейцария)
Sonnesstrasse, № 4 IV,
Avetik Isahakian.

17. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

2 դեկտեմ.<բերի>, 1900 Յյուրիխ

Ուրախ եմ, որ քեզ նամակ եմ գրում. դու կարող ես նույնիսկ չկարդալ էլ նամակս, բայց որ գրում եմ — հոգեպես հանգստանում եմ, օր. Ջավահի՛ր:

Քեզ տարօրինակ կթվա այս, գուցե և (ավելի լավ է պարզ խոսել) կարծես, որ ես սիրահարված եմ քեզ, բայց դժբախտաբար այդպես բան, այդպես զգացմունք չկա սրտումս դեպի քեզ. եթե լիներ՝ ուրախ կլինեի և լի կապրեի: Դու ինձ թվում ես միայն քրոջ պես, և շա՛տ վաղուց ծանոթ: Ների՛ր, որ այսպիսի հարցերի մեջ մտա, բայց դիտմամբ արեցի, որ քեզ հայտնի լինի, թե ինչո՛ւ եմ աշխատում քեզ հետ նամակագրություն ունենալ:

Այստեղ ես շա՛տ մենակ եմ. Աթաբեգյանը, որին շա՛տ էի սիրում, հիմա ինձ օտար է թվում. գիտես, Ջավահի՛ր, ամբողջ վեց տարի իրար չէինք կարգին տեսել, և այդ ժամանակում մեր ճանապարհները իրարուց շա՛տ են հեռացել. նա հիմա դրական, որոշ, կյանքը հասկացած մարդ է դառել. յուր ստացած գիտության հետ էլ բուրժուական հակումներ է ձեռք բերել — երազում է լա՛վ ապրել, հողեր գնել, ապահովվել... Իսկ ե՞ս.— իմ ճանապարհս ուրիշ է. ես ուզում եմ թափառել, ես սիրում եմ լեռներն ու աշուղի թառը, չոբանի շվին. ես երազում եմ բոլորովին տարբեր բաներ, տարբեր աշխարհներ... Եվ այժմ մեր հոգին իրարուց շա՛տ խորթացել է. նա ընտանի սագ է, ես՝ վայրի... Նա սիրում է քաղաք, տուն, տեղ, ես սիրում եմ թռնել, անապատներ, սարե՛ր... Ահա թե ինչո՛ւ եմ մենակ. չնայելով, որ միշտ իրար մոտ ենք լինում, բայց է՛լ հոգեկան աշխարհի մասին խոսք չկա.— լավ ծանոթներ ենք այժմ, միայն: Քո մասին նրան բան չեմ ասել, և լավ չեմ էլ հիշում, թե դու ի՛նչ ես ասել:

Չմոռանամ ասել, որ Արսենը նոր ինձ նամակ էր գրել, և հայտնել էր, որ նրան նամակ չես գրում. գրիր, լա՛վ տղա է Արսենը. դեռ լա՛վ է, ո՛վ գիտե, գուցե նա էլ փոխվի... Բոլորս էլ երևի փոխվելու ենք՝ դեպի վատը, անշուշտ: Ցանձ-

րացել եմ Եվրոպայից, ու շատ եմ կարոտցել մեր կողմերին, մորս, քրոջս, հարսներիս, երեխաներս, մանավանդ մեր սազանդարներին և գյուղացոց. չնայելով, որ հիմա լավ եմ պարապում, բայց այդ չի ոգևորում ինձ. թե ինչո՞ւ եկա Եվրոպա՝ այդ նպատակը այնքան ուժեղ չէ, որքան այն, որ ձիով մի գյուղից անցնեի, և վրես շները հաչեին, ու մի դրոնից էլ մի սառը ջուր խնդրեի, և հայ աղջիկը ինձ ջուր տար: Մտածում եմ, որ մայիսին վերադառնամ. ես չեմ կարող Եվրոպա մնալ. հոգիս դուրս է գալիս. ես ո՛չ գիտնական եմ լինելու (ինչպես հայ ուսանողներից ոչ ոք), ո՛չ էլ ապագայի հացի համար եմ մտածում. ի՛նչ ուզում է լինի, ես հայ ժողովրդից հեռու չեմ կարող ապրել:

Երազումս միշտ թառի ձեներ եմ լսում, և շա՛տ ուրախանում եմ, երբ գիշեր է գալիս. քնել ու հայրենիքի կարմիր, սիրուն երազները տեսնել...

Քեֆդ ո՞նց է. ֆրանսերեն հիմա երևի լավ սովորեցիր: Հա՛, ինչպե՞ս է Տ. Հորտանսի (Հոնանի կնոջ) առողջությունը. միշտ հիշում եմ նրան. ա՛խ, ի՛նչ լավ կին է: Երեկ երեկո ռուս ուսանողների երեկույթն էր, գնացել էի. շատ գոհ եմ. սամովարի թեյ խմեցի, մալորուսների պարերը տեսա, Վոլգայի երգերը լսեցի: Այսօր գերմաներեն մի լավ ոտանավոր կարդացի. թարգմանեմ, տես, որքա՛ն ճիշտ է արտահայտում մարդուս սիրտը. հեղինակն է նոր բանաստեղծ K. Busse:

— Այս լեռներից հեռո՛ւ այն կողմ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում.
Ա՛խ, մարդկանց հետ ես էլ գնացի,
Ու հետ դարձա՝ աչերս արցունք:
Այս լեռներից հեռո՛ւ, հեռո՛ւ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում...

Վա՛յ ինձ, ո՞վ գիտե, գուցե ես էլ եմ երազում, որ այս-տեղից հեռո՛ւ, հեռո՛ւ, մեր սարերում բախտն է ապրում. և գնամ ու արցունքոտ աչքերով... հետ դառնամ... ո՞ւր... Շատ լավ ոտանավոր է, մանավանդ բնագիրը հրաշալի է. ռուսաց առածին՝ «там лучше, где нас нет»— շատ նման է:

Բարևիր Լուսոյին, Ղազարին, և Վարդանյանին. (դա լա՛վ տղա է, մաքուր է, բայց տիրացու է. նոր է հասկանում աշխարհի խերն ու շարը. դրա համար շա՜տ է խոսում,— ոչինչ):

Բարևներ՝ **Ավետիք**

18. ՋԱՎԱԽԻՐ ՆԵՍԻՍՅԱՆԻՆ

1901, մարտի 11, Վիեննա

Գիշերը ժամը 3-ին եմ գրում. այս գիշեր էլ չեմ կարող քնել. մինչև այժմ արթուն էի և «Ավետարան» էի կարդում, Հիսուսի հետ էի խոսում. հոգնեցի, վեր կացա, շորերս հագա և հիմա էլ քեզ հետ եմ խոսում, դո՜ւստր Հիսուսի... Օ՜, երևի պիտի զարմանաս, որ ես կրոնական եմ դարձել. ո՜չ, սիրելիս, ես անհավատ եմ, չեմ ճանաչում աստված, և այդպես էլ կմնամ միշտ. բայց Հիսուս իմ հոգումս միշտ կմնա որպես հիվանդների և վշտացյալների սրտանց ցավակից.— «Եկե՜ք ինձ մոտ ամենայն վշտացյալներ և բեռնավորներ, և ես կհանգստացնեմ Ձեզ»:— Ո՜չ ոք այդպես անկեղծ չի կանչում թշվառին. միայն նա է, և ես հետևում եմ նրա սուրբ ձայնին. ո՜ւմ ձայնը առավել վեհ է, քան նրանը... Ո՜չ մի ուրիշի... Նա ինքը տանջվող մարդ էր և հարգում էր տանջանքը... Գիտությունը ասում է, որ տանջվող մարդիկ վերջը միստիկ են դառնում, մթնում է նրանց ուղեղը... Թո՜ղ ասե. բայց իմ ուղեղս վառված է հազար ու մի արևներով, և այդ է պատճառը, որ այրվում եմ ես... Ես պիտի գնամ իմ ճանապարհով՝ բեռնավորված համաշխարհային վշտի ծանրությամբ. ա՜յդ բաժին ընկավ ինձ: «Մի վիշտը հազար ուրախություն արժե» — ասում է Դանթեն. և ես կտանեմ իմ վիշտը,— ես չեմ փոխի այն՝ ամբոխի հրճվանքի և տոփանքի հետ. թող երբեք իմ դեմքիս վրա ժպիտ չծաղկի, և հույսը թո՜ղ չծագե իմ հոգում. սիրո ծիածան, վարդեր պետք չեն ինձ... Աշխարհի մոայլը տվեք ինձ, և վարդերի փշերը. ես կփաթաթվեմ մոայլով և կպսակվեմ փշերով... ու կգնամ իմ

ճանապարհով — տանջվողնե՛ր, հուսահատնե՛ր, զարկվածնե՛ր շատ կան, և ես նրանց մոտ կգնամ, մի բարի խոսք, մի կաթիլ ջուր տալու համար...

Ո՞վ է բախտավոր աշխարհում.— այս դժվար հարցին մի մեծ մարդ պատասխանել է այսպես. «Նա՛ է բախտավորը, ով լա՛վ ստամոքս ունի և վա՛տ սիրտ...»:

Ես չեմ ուզում այդ բախտավորությունը. թշվառությունը ավիրական է, և թշվառ լինել, կնշանակե ավելի բախտավոր լինել...

Իմ թանկագին Ջավահի՛ր, ես տանջում եմ քեզ անշուշտ. ես այս գիտեմ, որովհետև, եթե գիտենամ, որ դու անտարբեր ես դեպի իմ տանջանքները, իհարկե որ ոչ մի տող նույնիսկ՝ չեմ գրի. բայց ես չեմ ուզում քու սերը դեպի ինձ <ի> չարը գործածել: «Աղբյուրի շատ բխելը կտրվելու նշան է» — ես էլ որ սիրտս բանամ, վերջացնեմ,— այլևս քեզ հետ գործ չեմ ունենա. մեր ճանապարհները կհեռանան,— ես դեպի՛ անապատը, դու — դեպի կյանքը:

Վստահ կարող եմ ասել, որ ես ինձ չեմ սպանի. սրանից ծանր տանջանքներ թեկուզ պատահին,— ես պիտի տանեմ: Ես խոսք ունեմ ասելու մարդկանց. սրտիս դժոխային հնոցներից դուրս եկած, բովված խոսք, որ ծա՛նր, ծա՛նր երկաթի պես պիտի ընկնի մարդկանց խղճի մեջ. մարգարեական կոչումն եմ զգում մեջս. կայսերներից և առյուծներից չեմ վախենում. իմաստության օձը սրտումս՝ ես կգալարվեմ մարդկանց շարքերի մեջ. կխայթեմ չարիքի գարշապարը,— և ի վարձ այդ ամենի, կախաղանի վրա բա՛րձր և վե՛հ կճոճամ, որ ոտքերիս տակ ամբոխը խռնվի, սողա՛, դողա՛...

Եվ ես կհեռանամ կյանքից, կյանքի վայելքներից. պետք չեն դրանք. ամեն մի վայելքը հազարավոր զոհերի տանջանքով է լինում. ես չեմ ամուսնանա. բացի այն, որ չեմ ուզում, այլև վրաս բարոյական պարտք կա չամուսնանալու. ես ծնունդ եմ ջղային հորս, իսկ իմ որդին ժառանգապես ավելի ջղային պիտի լինի. ես անիծում եմ հորս. բայց որքա՛ն պիտի անիծե իմ որդին ինձ, ինձ, որ իմ հորիցս ավելի կրթված ու զարգացած եմ համարվում, անշուշտ: Եվ ես պիտի մնամ մենակ,— մենակ երկրի մեջ, բայց բյուրավոր թշվառների հետ միասին,— ուրիշ կերպ չեմ կարող հաշտ-

վել կյանքի հետ. կյանքը ինձ շպրտում է դեն, ես նրա խորթ որդին եմ, բայց կոչումն եմ զգում մեջս, մարգարեի կոչում. և խոսք ունիմ ասելու.— պիտի ապրեմ, պիտի չմեռնեմ:

Ուզում էի երկար նամակ գրել, մեծ թուղթ վերցրի, բայց հոգնում եմ. երևի պիտի քնեմ մի քիչ. առավոտ պիտի գնամ բժշկի մոտ. միջոցներ ձեռք կառնեմ ոչ միայն Վենետիկ գնալու, այլև մինչև արևելք, Պաղեստին ճամփորդելու. պիտի Հիսուսի մահ եկած վայրերը շրջեմ, պիտի Հորդանանի ջուրը խմեմ և Երուսաղեմի դաշտերի շուշանը հոտոտեմ...

Վերջացնում եմ նամակս.— խնդրում եմ ներողություն, որ քեզ հոգնեցնում եմ. երևի մի քիչ նախանձում եմ քու առողջությանդ վրա, որ չեմ ուզում քու հանգստությունը. ո՞վ գիտե—մարդու հոգին առհասարակ շա՞տ եսական է...

Ընդունիր կարոտալի բարևներս, իմ անգին քուրիկս,—

քու Ավետիք:

«1901» 11 մարտի, Վիեննա

19. ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

1901, հունիսի 6, Վենեցիա

Անմոռաց Ջավահի՛ր,

Նամակներիդ մի քանի կետերին ի պատասխան գրում եմ.—

Արդեն Վենեցիա ինձ ամեն մի ժամ մնալը բանտի պես տաժանելի է. և՛ շոգ է, և՛ չափազանց մոռայլ եմ, և՛ էլ չեմ լողանում (ջուրը տաք է, վատ է ներգործում ջղերիս վերա),— բայց փողի եմ սպասում ու չեմ ստանում. ստացած օրը հենց դուրս կգամ:

Եթե չհասա ամսավերջին՝ դու գնա՛, բալամ, դու ճամփեդ գնա՛. կամ եթե շոգից չես վախենում՝ Վենեցիայով արի (Ժընևից մինչև այստեղ III կլաս 36 ֆր. այստեղից Վիեննա 25 ֆր.: Իսկ Ժընևից Վիեննա III կլ. 38 ֆր., տարեմ տարբերությունը 20—25 ֆր. այստեղով գալաս. բայց Աստված ոչ աներ ես մինչև ամսվա վերջը մնամ. շոգուց կխեղդիմ):

Իմ դրությունը այժմ, քան երբևիցե, անորոշ է, կրիտիկական և հուսահատ. ես նկատում եմ, որ կատարյալ հերոս եմ — դիմանալու, համբերելու, տանջվելու մեջ. ո՛չ թե քաջություն և ազնվություն. ստրկի պես տանում եմ կյանքի շղթաները, բեռը:

Իսկի չգիտեմ ի՞նչ եմ անելու. ամբողջ բախտս կախված է հիվանդությանս ընթացքից. եթե լավի նշաններ նկատեցի մի քանի ամսվա ընթացքում, սրտիս ուրախությունից կրկնակի կլավանամ... Թև կառնեմ ու կթռնեմ. ի՞նչ էլ որ լինի ձմեռը կլինեմ մոտդ, Ժղնև, ո՛ւր որ լինես, իսկ եթե դրությունս մնա նույնը կամ դեպի ավելի վատը դարձավ, այն ժամանակ միշտ մնաս բարև. էլ ո՛չ մի նամակ, էլ ո՛չ մի բարև. գլուխս, հիմար, գիժ, անիծած գլուխս պիտի առնեմ ու անհետ-անդարձ կամ կորիմ երկրի երեսեն, կամ պիտի առանձնանամ մի անկյուն, մի վանք, մի կղզի (Սևան) և ձվիրվեմ փիլիսոփայության և մետաֆիզիկայի, որ մոռանամ ինձ, կյանքը, ընկերների, հեղափոխություն, հայրենիք, ազգ...

Ուրիշ ելք չունեմ,— հոգիս է հիվանդ, հոգեկան հիվանդ եմ, հիպոխանդրիկ-մելանխոլիկ-ներվաստենիկ. այս տեսակի հիվանդների մեծ մասը կամ խելագարվում են կամ ինքնասպան լինում, և երևի իմը դեռ այդ աստիճան չէ հասել:

Ամբողջ սրտով ատում եմ ինձ, մեր ընտանիքին, մի շարք ընկերների, մի ահագին քանակության հեղափոխականների, հայոց ազգի մեծամասնությանը և մարդկությանը. սիրում եմ մոայլ ժայռերը իր<ենց> թունավոր օձերով, ձյունապատ լեռները իր<ենց> կուսական մաքրությամբ, ծովերը՝ իրենց մրրիկներով, անապատները՝ իրենց վայրի փշերով ու ծակող ծաղիկներով և կղզիները՝ իրենց լռությամբ:

Այժմ ես վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շա՜տ տանջվես. ինչքա՜ն կուզես ինձ սիրիր, ազատ ես, բայց սեր, սիրահարություն մտքեդ հեռո՛ւ պահիր: Քու վերջին նամակներից ես վախենում եմ, և ինձ դատապարտում եմ, որ այդպես մոտեցա քեզ, նամակներ գրեցինք իրար: Հանցանք է ինձ համար ամուսնությունը և անազնը-

վությունն աղջկա խաբելը, այլանդակ սերունդ թողնելը. օ՜հ, ինչքա՜ն կցանկանայի որդիներ ունենալ, առո՜ղջ, առո՜ղջ, բայց ես ի՜նչ եմ,— ոչի՜նչ, ոչի՜նչ. անիծված լինեն ինձ ծնողները, իրենց հաճույքի համար ես եմ տառապում.— զայրացած եմ հորս գերեզմանի դեմ և մորս նույնիսկ չեմ ուզում տեսնել. երազումս տեսնում եմ և հետը չեմ խոսում... Բայց որ մայրս վաղը մյուս օր մեռնի՝ ես ցավից, վշտից եթե չխելագարվեմ, հիվանդությունս կրկնակի պիտի աճի. դրությունս անհուն, անհուն հուսահատական է. ժամերով մտածում եմ ու ելք չեմ գտնում, ինձ չեմ հասկանում, և ուղեղս քորքոքվում է, պայթելու դրության հասնում. և մոլորվում եմ... աչքերս սառել, մնացել են երեսիս վրա՝ դիակի աչքերի պես, երբեմն ծերունու պես, մահապարտի պես՝ մահս այնքան մոտիկ եմ զգում, որ դագաղի, գերեզմանոցի մոտից անցնել վախենում եմ. մեռնել որ պատահում եմ, սարսափում եմ. թվում է ինձ, որ ես եմ մեջը, կամ վաղը ինձ են տանելու:

Դու ճամփեդ գնա՛, և հետ մի՛ նայիր. իմ անունը իսպառ մոռցիր, և մեռած համարիր. ու խնդրում, աղաչում եմ քեզ, հազար անգամ աղաչում եմ՝ ինձ է՛լ նամակ մի՛ գրիր. ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ. իզուր պիտի տանջվիս. գնա՛ կյանք մտիր, ուրախացի՛ր, վարդեր քաղե, սիրի՛ր, համբույր տուր, համբույր առ, հուսավառ աչքերով նայիր ապագայիդ վերա. թող մեռելները հանգչին իրենց քարերի տակ, և տանջվողների սրտերը օրեցօր ջարդվին. աշխարհի պատմությունն է այդպես. մարդիկ հրճվում, պարում են մեռելների գերեզմանների վերա. դու հանգուցյալ եղբորդ ո՞ր ինձնից շատ չէիր սիրում, բայց ո՞նց մոռացար նրան, և նրանից հետո որքա՜ն ուրախ, լիակուրծք ծիծաղում էիր. Երթա՛ս բարև, երթա՛ս բարև, ուր որ լինես՝ արևդ կանաչ լինի. երբեք չտխրիս. արցունքի կարոտ մնաս. միշտ առողջ լինիս և խաղաղ քնիս. փորձանքից ազատ մնաս. չխաբվիս և չխաբես. մաքուր սիրես, մաքուր սիրվիս. բայց ամենից առաջ ինձ մոռացիր... Նույնիսկ լավ կլինի, որ էլ չպատահինք իրար. շուտ գնա. և Վենեցիայով մի՛ արի. քեզ շա՜տ եմ ուզում տեսնել, բայց և

շա՛տ եմ վախենում. օ՛ֆ, ինչե՛ր եմ գրում. դու ուրտեղի՛ց ինձ պատահեցար. օ՛ֆ, կորի գնա՛, գնա՛, հեռացիր, աչքիցս գնա. էլ դու չկաս ինձ համար.

Ա.<Վետիք>

<Հ. Գ.> Նամակ չգրես, առանց բանալու հետ կուղարկեմ:

20. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1901, սեպտեմբերի 12, Ղազարապատ

Սիրելի Օհանես.

Քու գնալուց հետո ես էլ եկա գյուղ և մինչև օրս այստեղ եմ. մի քանի օրից հետո կերթամ քաղաք, հետո Էլի գյուղ, հետո քաղաք և դեպի Թիֆլիս:

Աղբալից նամակ չստացա, չգիտեմ ինչո՞ւ, ձո էդտեղից չէ՞ հեռացել:

Դերենիկից խաբար չունի՞ս. ի՞նչ է, դեռ չէ՞ եկել այդտեղ: Իսկ Շանթից ի՞նչ ունես գրելու: Ես որ գամ, տեսնենք Վերնատան հալը ի՞նչ է լինելու. երևի առանց դրան մեր օրը սև կանցնի:

Ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց «Վտակը». ձո չէ՞ ցամաքել. ձենը, քչքչոցը հասավ, բայց ինքը չկա. երևի մի լուրջ բան պատահած կլինի հետը. վախենում եմ, որ արգելեն ծախել, թե չէ մինչև օրս վերջացած կլիներ. խնդրում եմ, այս մասին ինձ մի հաստատ բան գրիր:

Մեկ էլ աչք պտըտցու՝ գուցե ինձ համար մի երկու դասեր գտնես՝ հայերեն, պատմություն, գերմաներեն, և այլն, որ գամ Թիֆլիս, քաղցած չմնամ:

Կոստանյանից խաբար չունիմ քեզ տալու. ես նրանից ավելի շուտ եմ բաժանվել, քան թե դու:

Ի՞նչ հալի են մեր պատկերները. ի՞նչ են խոսում դեսդեն, գրական աշխարհում:

Էլ ի՞նչ գրեմ, բարևներ մերոնցից, համբույրներ,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

Անպատճառ նամակիս պատասխանես, գոնե «Վտակի» մասին:

21. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1901>, նոյեմբերի 29, Բաքու

Սիրելի Հովհաննես.

Ես սեպտեմբերի 20-ից այստեղ եմ.— Թիֆլիզ մի երկու ժամ մնացի: Միտք ունեի միայն մի երկու օր Բաքվում մնալ, բայց երկար մնացի: Մի քանի օրից հետո կգամ. գրածդ նամակը այստեղ ստացա: Դերենիկին էլ վաղը-մյուս օրը կճանապարհենք Մոսկվա:

«Վտակից» որոշված է ինձ 50 ռ., բայց իզն ու թոզը չի երևա. ումի՞ց պիտի ստանալ. եթե Սրինգից է կախված, **պոժալուստա**, նրան ասա իմ կողմից:

Վարդազարյանը այստեղ աչքիս ընկավ: Գրական նորություններ չկան.— փող կա գիրք տպելու, բայց գիրք չկա, ոտանավորներս կտպեմ երևի մեր Աղեքպոլում:

Համբույրներով՝ **Ավետիք**

22. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1901, դեկտեմբերի 3, Ալեքսանդրապոլ

Սիրելի Օհանեես.

Նստել ենք ես ու Հովհաննեսը գիշերը ժամը 11-ին, թեյ ենք խմում և քեզ հիշում ու Անիի օրերը մտաբերում: Ես մի երկու օրից հետո կշարունակեմ ուղիս:

Համբույրներ, քո՝ **Ավետիք**:

23. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1902>, հունվարի 18, Էջմիածին

Սիրելի Հովհաննես.

Եղա Կարս, Կաղզվան, Կողբ, և հիմա այստեղ եմ. լավ անցավ ճամփորդությունս. նյութեր ժողվեցի. մի քանի լա՛վ, շա՛տ լավ բաներ կան մեջերը: Փետրվարին կլինեմ Թիֆ-

լիզ: Ո՞նց ես, պարապմունքներդ ո՞նց են գնում, երեկույթներդ նույնպես: Գիտե՞ս, որ Դերենիկը իրեն լավ է զգում, պիանո էլ է սկսել սովորել:

Ե՞րբ պիտի սկսես տպել պոեմաներդ. գավառները շարունակ հարցնում էին. ես էլ ասում եմ՝ գարնանը կտպե. աշխատի՛ր: Կարդացի՞ր Հ<արություն> Թումանյանի գրածը «Լումայում». նրա ամենալավ գրվածքն է: Կարդացի՞ր Վեսելովսկու հոդվածը «Русская мысль» XI <ում> հայ պոեզիայի մասին՝ Լեոնցի, Ծատուրյանի, Մոռոյանի մասին. ըշտե աշխարհիս գործերը այդպես են:

Համբույրներով՝ քո Ավետիք Իսահակյան

24. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1902>, 30 մարտի, Աղեքսոլ

Սիրելի Օհաննես.

Եկա տուն, և մի երկու օրից հետո փոշմանեցի, որ եկա. տեղս՝ ցուրտ, ցեխ, տնից դուրս չեմ կարող գալ. և եթե լավ լինի օրը՝ ո՞ւր պիտի գնամ. շրջան չկա, ընկերներ չկան. կարդում ես, կարդում, ձանձրանում, հետո մոլորվում, թե ի՞նչ անեմ:

Գնում ես այս ու այնտեղ և լսում ես սրտաճմլիկ բաներ— աղքատություն, սարսափելի աղքատությունը համատարած է. և պիտի իմանաս, թե ի՛նչ կնշանակե մեր քաղաքի կամ մեր գավառի աղքատությունը. սև, չոր, ցամաք հացի են կապված՝ և դա էլ չկա. գյուղերում սովից ինքնասպանության դեպքեր են եղած... տավարը քաղցից մեռնում է, խոտ ու դարմանը վերջացել է, բայց դեռ գարունը չէ եկել. դաշտը ձյունի տակ դեռ թաղված. եկած օրից տրամադրությունս սաստիկ վատացավ, օրը հազար տխուր լուրեր եմ լսում, պատմություններ, և սիրտս կոտրված՝ ոչինչ չեմ կարող անել... բայց Թիֆլիզ վերադառնալ էլ չեմ ուզում. մի խոս-

քով՝ մրից ելա, մրջուրն ընկա. համբերեմ, տեսնեմ, կարելի է հաշտվեմ կամաց-կամաց ու մի քիչ բան շինեմ:

Դուրս է գալիս, որ մեզ համար ոչ մի լավ տեղ գոյություն չունի. հիմա ես զգում եմ, որ ինձ արտասահմանում միայն լավ կարող եմ զգալ. մի խոսքով տրամադրությունս լավ չէ. սպասում եմ, գարունը գա, գուցե քեֆս էլ լավանա:

Շատ կուրախանամ, որ նամակ գրես, նորություններդ գրես: Բարևներ մերոնցից, բարևներ տիկ. Օլյային, Շանթին, Լեոյին, Ավետիսին և երեխաներին:

Համբույրներով, քո՝ **Ավետիք:**

25. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1902, հուլիսի 21

[<Նամակի սկիզբը պակասում է>

[<...> «Սասունցի Դավթիդ» մասին.— նորից կարդացի.— միակ պակասությունը նրանում է, որ բնության նկարագրեր չկան, որոնք քեզ շատ կհաջողվեին՝ իբրև էպիկի, բայց որ Սասունը չես տեսել, ի՞նչ նկարագրես. իսկ այն ևս ճշմարիտ է, որ ամբողջ պոեմը, կարծես, լրջորեն, խորը մտածած չես գրել, հավատարիմ ես մնացել նախկին որոշումիդ — մանուկների համար. բայց ավելի լուրջ և ծանրախոհ կարելի էր գրել, ինչպես Ֆիրդուսու Շահնամեն, Յորդանի Նիբելունգը և Հերդերի Սիդը, որտեղ, բացի բուն գյութից կա և անհատական ստեղծագործություն. քոնը ուղղակի՝ գյութի ոտանավոր, մի փոքր մշակած վերածումն է:

Ինձ ամենից շատ գրավում են ժողովրդական ոճերն ու դարձվածքները, որոնցով չափազանց հարուստ է, և մանավանդ էպիկական պատմելու ձևդ — հանգիստ, վեհորեն հանգիստ, և հումորը. հույս ունեմ, որ Խանդութի սերը հաջող դուրս կբերես, բայց նախօրոք զգում եմ Մհերի անհաջողությունը,— Մհերը կիսատ, ջարդված հերոս է, լիքը հակասություններով, երևի պետք է նորանոր վարիանտների գտնել՝ լրացնելու այդ պակասը. ժողովուրդը Դավթին է սիրել ու սիրում, ու նրան հարստացրել է<...>

Մեծ սպասելիք ունեմ Սիևամ թագավորիցդ, քանի որ նրա մեջ կա քո անձնական ստեղծագործությունդ, կա սիմբոլ և գեղեցիկ պատկերներ, անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն՝ կարդալու համար «Անուշը»... Բայց ինչ էլ որ լինին քո պոեմներդ՝ մեր գրականության մեջ դարաշրջան են կազմելու: Ապրիր և ստեղծագործիր — ահա քո ուղին. մեզ թող կովի դաշտը, ինչ կուզե թող լինի.— «Թող կործանվի աշխարհը, և ես կընկնիմ նրա ավերակների տակ». սա Հորացիոս բանաստեղծի խոսքերն են, որ իմ վերջին տրամադրության լոզունգն է, ձշանաբանը:

Համբույրներով՝ **Ավետիք**

21 հուլիսի

26. ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

<1902> օգոստոսի 8, Ղալարապատ

Մեծապատիվ պ. Լ. Սարգսյան.

Ուղարկում եմ այս երկու ոտանավորները, առաջինը անպայման լավն է, իսկ երկրորդը... կա, էլի. շաքլոն ձև է, որ ամեն մի իրեն պոետ համարող ուզում է ենթարկվել մետամորֆոզների. իբրև շաքլոն, ինձ թվում է, որ... կա՛, էլի:

Ցանկալի է, որ «Մուրճ»-ի № 8 <ում> տպվեին: <...> խոստացել եմ ավելի շատ նյութեր. մյուս անգամին **անպատճառ** կղրկեմ. էլ սուտ չկա. զգում եմ, որ շատ եմ խոստանում և սուտ եմ դուրս գալիս:

Ողջույններով՝ **Ավ. Իսահակյան:**

27. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1902>, հոկտեմբերի 4, Բաքու

Սիրելի Հովհաննես.

Շատ ուրախացա, որ տեղդ իմացա. Թիֆլիզից անցնելին ասացին, որ էդտեղ ես, բայց առողջությանդ մասին՝ բացա-

սական. ես միայն մի օր մնացի Թիֆլիզ. եկա այստեղ, գնացի Շուշի, և միշտ մտածում էի վերադ, քեզ անձամբ ճանաչողներին միշտ հարցնում էի. հիմա որ լա՛վ ես, ավելի՛ լավ:

Ես առայժմ մնում եմ այստեղ դասերով. պիտի մի փոքր պարապվեմ, նոր բաներ ունեմ, նստեմ գրեմ. մտադիր եմ ուսանավորներդ ժողովածու տալ. բայց ի՞նչ տալ...

Իճարկե գիտես Մոսկվայի տղոց ձեռնարկը. բան է, էլի, եթե մեզ չխայտառակեն ռուս-քննադատության առաջ. յաման աստվա՛ծ:

Սիրելիս, դուն ի՞նչ ես անում. «Անուշդ» ո՞ւր մնաց. շարունակ նրա մասին եմ երազում. ձմեռը, որ կարդացիր՝ համը բերանս մնաց. շո՛ւտ արա, տպի՛ր, տեսնենք, լիուլի վայելենք:

Իսկ ժողովածո՞ւդ, սրբագրված... Ո՞ւր մնաց:

Ի՞նչ է անում Աղայանը. առողջությունը ո՞նց է. Դերենիկից լուր ունե՞ս. օգոստոսին մի երկու-երեք օր մոտս էր. շա՛տ էր խեղճ ու ընկճված. ճամակ գրել եմ, բայց պատասխան չկա:

Նիկոլը իրեն Պետերբուրգ է գցել. Քիլոն Քիլոնիդեսը, կես-կուշտ, կես-սոված՝ կապրի:

Շանթը, ասում են, վերադարձել է. ե՞րբ է բեմը կամ բիրժեն շանթելու. սպասում եմ նրա երևալուն օրե-օր:

Գրիր քու մասին, մանրամասն. երեխաներիդ, քեֆիդ. ի՞նչ ես գրել. ո՞նց եղավ... սե՛րդ...

Ծիտովը նշանվել է:

Համբույրներով, քո՝ Ավո

Հասցե. Балаханы, контора Каспийского товарищества, Торг. Нахапетянц,

հանձնել Ավոյին:

28. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1902, դեկտեմբերի 11*, Բաքու

Սիրելի Օհաննես.

Նամակդ ստացել եմ, բայց ոչ թե ծուլանում էի պատասխանել, այլ դրությունս վատ է՝ անորոշ, և չգիտեմ ի՞նչ գրեմ. մինչև ե՞րբ պիտի հոգիներս բերաններս առած քաշ գանք մեր կեդրոնական, նվիրական, մեր հոգու իսկական պահանջներից հեռո՞ւ. ծերանում ենք՝ ոչինչ չարած: Մոսկվայում տպվում է մեր բանաստեղծությունների թարգմանաբար ժողովածուն. տեսնենք ի՞նչ է լինելու. ես հույս չունիմ, որ հաջող բան դուրս գա. կոլորիտը, ինքնուրույնությունը չի կարող պահպանված լինել՝ մանավանդ երկուսիս գրվածքների: Գրի՛ր առողջությանդ մասին, և՝ մինչև ե՞րբ ես մնալու այդտեղ. երևի ես կգամ Թիֆլիզ. սկսինք մեր ոտանավորների ժողովածուն տպել, և անցնել լուրջ բաների. մեր վրա հույսեր կան դրված, բայց մենք մի քանի ծուտի-պուտի բաներով խաբում ենք ընդդկանց:

Համբուրներով, քո՝ **Ավո:**

29. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1903>, նոյեմ<բերի> 30, Էջմիածին

Սիրելի Օհաննես.

Տեսա Հայրիկին և քո կողմից համբուրեցի նրա ա<ուրք> աջը և ողջագուրվեցի. նա էլ քեֆդ հարցրեց: Ես մի քանի օրից կլինեմ այդտեղ:

Բարևներով, քո՝ **Ավո**

30. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1904, հունվարի 8, Վլադիկավկազ

Սիրելի Օհաննեսիկ բարևներ և բոլորին՝ վերնատանցանցներին: Գիրքդ բոլորը ծայրեծայր կարդացի. կարծիքներս հետո կհայտնեմ:

Քո՝ **Ավո**

---

* Ժամանակը որոշված է փոստակնիքով:

31. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1904, փետրվարի 17, Նոր Նախիջևան

Բարևներ ու համբույրներ սիրելի Օհաննեսին:

Դերենիկի «Կյանքի տեսիլը» երևի լավ բան է դուրս գալու, տեսնենք:

Քո՝ Ավո

32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1904>, փետրվարի 23, Նոր Նախիջևան

Սիրելի Օհաննես.

Ստացա բաց նամակդ. բալա՛մ, չեմ հիշում, թե նախընթաց նամակներումս ի՛նչ եմ գրել.— դու գրում ես, թե՝ «Շատ կուզենայի տեսնել. մի բան այնպե՛ս է տանջում, ենթադրածդ սխալ կլինի. կուզենայի խոսել...»: Սիրելիս, չեմ հասկանում այդ բառերը. ի՛նչ ես ուզում ասել. ի՛նչ տանջանք, ի՛նչ ենթադրություն, ինչո՛ւ մասին է. զանազան բաներ եմ մտածում, բայց բոլորովին գլխի չեմ ընկնում. գրում ես՝ «շատ եմ անհանգիստ, չեմ կարողանում պարապել»...

Ախր, ինչո՛ւ, է, ի սեր աստծո. մի շուտով գրի՛ր, տեսնեմ բանի էությունը...

Ես դեռ մարտի 3—5 այստեղ կլինեմ. դու գրիր, կհասնի, եթե այստեղ էլ չլինեմ, ինձ կհասցնեն. հետևյալ հասցեով գրիր. 2-ая Георгиевская, № 3, А. Исаакяну, Нахичевань н/Д.

Այստեղ գործերս լավ են գնում. հետո կանցնեմ Մոսկվա, ապա դեպի Կովկաս:

Ես էլ չեմ կարող պարապել, բայց այլ պատճառներից՝ զբաղված եմ՝ ժամերս թռչում են ուրիշ բաներով: Այստեղ սկսվել է հայկական կյանքով ու գրականությամբ հետաքրքրվիլը <...> մեզ շատ չեն ճանաչում, իսկ Դերենիկին ու Շանթին՝ համարյա չեն ճանաչում. Մատուրյանը մեզնից խալֆա է՝ հոչակված...

Ինչո՞ւ էդ <...> Լեոն էլ քեզնից վազ չի եկել. ի՞նչ է ուզում ասել այդ մարդը. պետք է դրան իրեն տեղը ցույց տալ. «Վերնատունը» պիտի սկսե այսուհետև շա՜տ եռանդուն գործել, և հասարակության մեջ իրեն մասին վկայել. մի հանդես հրատարակենք կամ այլ բան, մեր գեղարվեստական սկզբունքները պարզենք. մեր գրույան ցույց տանք, թե չէ բոլորովին դրանք մեզ հող ու մոխրի հետ կհավասարեցնեն:

Նիկոլից նամակ ունեմ. էն էլ աստվածապաշտ է դառել. միստիկ, և ինչ-որ նախանձամության կամքի երգողը. երևում է — Вл. Соловьев-ի, ռուս այդ կրոնական-բարոյական փիլիսոփայի խիստ ազդեցության ներքո է: «Բանբերի» մեջ իմ մասին բան է գրել՝ մի-երկու տող...

Ուրիշ ի՜նչ գրեմ.— աչքերս վերջերս ցավում են. այժմ էլ. ուզում եմ նամակս վերջացնել:

Գլուխդ կախիր, գրիր «Հազարան բլբուլդ». ես էլ կգամ, և պիտի այս տարի նստեմ էպոսիս համար: Դերենիկի պոեմը*, հույս ունեմ, որ լավն է լինելու՝ գոնե մտքի կողմից, բայց տեխնիկական կողմը թույլ է. ինչ որ դուր է եկել ինձ նրա պոեմից՝ այդ «Հիմալայ» անունն է՝ գնում ենք Հիմալա՜յ...

Կովկասում շա՜տ նորություններ կան, երևի, բայց շատ քիչ եմ լսում: Բաքվա ռումբը՝ խեղճ հայ ժողովրդի մեջ պայթեցնել՝ ինձ շատ է զայրացրել, և նզովելով նզովում եմ այդ իշու ձագ, անմիտ հերոստրատներին...

Սպասում եմ նամակիդ. համբույրներ բոլորիդ և բարևներ,

քո՝ **Ավ**

33. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1904, մայիսի 10, Մոսկվա

Սիրելի Օհանես.

Այսօր Նիկոլից նամակ ստացա, որ գրում է, թե Թիֆլիզում ասելիս են եղել, որ ես սպանված եմ.— տեսնում ես, որ

* «Կյանքի տեսիլը»

շա՛տ սուտ լուր է. արդեն Բաքվից ու այդտեղից և ուրիշ տեղերից ինձ հասել են այդ անհամ լուրերը. չգիտեմ՝ պատճառն ի՞նչ է...

Ես ամսուս 16—17-ին անպատճառ Մոսկվայից դուրս կելնեմ. մի քանի օր կմնամ Բաքու, հունիսի սկզբներին կլինեմ այդտեղ:

Այս տարի եկ մեր կողմերը:

Համբույրներ քեզ և Դերենիկին:

Բարևներով, քո՝ **Ավետիք**

34. ԵՎԳԻՆԵ <ԹԹՐՅԱՆԻՆ>

<1904>, օգոստոսի 15, Ալեքսանդրապոլ

Բարձրացանք Արագածի հավիտենական ձյունափառ լեռնագագաթը և իջանք նորից դաշտը — ժողովրդի մեջ, հազարավորների մեջ, ուր մարդը չնչին է ու բանա՛լ, իսկ այն ալմաստե բարձունքում մարդը մենակ էր, հզոր, առանձին, արքայական...

Սրանից մի 12 օր առաջ հինգ ընկերներով Աղեքսանդրապոլից առավոտյան՝ ճստած լավ ձիերի վերա՝ ճանապարհ ընկանք դեպի սարը. երեկոյան հասանք լեռնալանջում մի գյուղի և գիշերեցինք մի ընկեր-գյուղացու մոտ. մյուս օրը այդ գյուղացու և ուրիշների հետ ճանապարհ ընկանք. ձիով և ոտքով. շա՛տ դժվար էր ճանապարհը՝ սար ու ձոր, քար ու ժայռ, բայց չափազանց գեղեցի՛կ էր. լեռնագագաթից փչում էր քաղցր քամին, առվակների ու աղբյուրների քչքչոցը, թռչունների ձայնը, կապույտ երկինքը և անկարչական պեյզաժներ, լճեր, բա՛րձր, մո՛ւթ ժայռեր... Ահա ճանապարհը...

Երգելով, ձիերը քշելով (հարմար տեղերում), լճերի մեջ լողանալով գնում էինք. երեկոյան հասանք լեռան գագաթի անմիջապես տակը, ուր ձիով չի կարելի մի քայլ անել նույնիսկ. պետք է ասել, որ Արագածը, չնայելով որ Արարատից-Մասիսից ցածր է (Արարատը 5 վերստ բարձրություն,

իսկ Արագածը 3 և կես վերստ), բայց նրանից ավելի լայնանիստ տարածված, անագին լանջերով, փեշերով... Երեկոյան գիշերեցինք քուրդ հովիվների վրանում, և առավոտյան կանուխ, ոտքով, սկսեցինք բարձրանալ գագաթը... Սարսափելի դժվար էր՝ ձյո՛ւն ու քա՛ր, քա՛ր ու մեծ ժայռեր, թեք. շնչասպառ էինք լինում. բայց քանի բարձրանում էինք, տեսարանները ավելի վսեմանում էին, հորիզոնները ընդարձակվում. երկիրը ավելի ցածրանում, շրջակա սարերը մանրանում, և հեռվից մեծ սարեր երևում... Անա՛ և գագաթը. բա՛րձր, սո՛ւր, ազա՛տ, վե՛հ և միստիկական-փիլիսոփայական... Կեսօրին լեռան գլխումն էինք. հրացանի որոտմունքով ողջունեցինք մեր վերելքը. արծիվները շփոթված պտույտ գործեցին մեր գլխ<ավերևը>, միայն երկինքը և արևը մնացին լո՛ւռ, անտարբե՛ր և ազա՛տ... Փչում էր ազա՛տ քամին այդ բարձունքում և գնում դեպի Հիմալայ կամ ավելի հեռու՝ գալով ավելի հեռո՛ւ տեղերից... Ես հեռացա մի ժայռի վերա և դիտում եմ շուրջս. դիտակով նայում եմ... Անա՛ հեռվում Կովկասյան լեռնաշղթան, Էլբրուս, Կազբեկ. անա՛ Սև ծովը՝ մշուշի նման. անա՛ անթիվ մանր սարեր, ձորեր, գետեր, լճեր. անա՛ Արարատը. անա Տաճկա-Հայաստանի լեռները... և շա՛տ, շա՛տ հրաշալիքներ... Նայում ես, նայում ես և չես հագենում... Սկսում ես ընկնել մտածմունքների մեջ... Մտքերի ծով, մտքերի լեռնագագաթներ... Ի՞նչ է մարդը, ի՞նչ է նրա հոգին, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ է մեռնում. որքան լավ է ապրել, ու բարձունքում երազել և հավերժ մտածել... Բայց մահ կա, բայց մարդը այս չնչին ավազից, որ այս ժայռի վերա է, ավելի կարճ կյանք ունի. այս ձյունից ավելի շո՛ւտ է հալչում... Եվ տխրում ես. հիշում ես սիրած մարդկանց. անա՛ ընկերներդ՝ մեռած, սպանված, բանտում՝ երևում են աչքիդ ու գնում, անա մայրդ, սիրածդ աղջիկը՝ գնացին... և դու մնում ես լեռան գլխին մենակ, լեռան պես բարձր, մենակ և փայլուն... Մի րոպե սիրտդ թռչում է արծվի պես, և ուխտում ես՝ լինել մի՛շտ ազատ, բա՛րձր, ազո՛ր, սո՛ւրբ, մենակ և քաջ. ձգտել կատարելության, իդեալի և մեռնել աղամանդյա բարձունքում, երկնքին մոտ, Աստծու ձեռքերի վերա...

Մնացինք մի-երեք ժամ լեռան գլխին, հանգստացանք, մի քիչ հաց կերանք, կոնյակ խմեցինք. մրսում էինք. ձյուն ու սառույց ծծեցինք և սկսեցինք իջնել. արդեն ամպերը կամաց-կամաց ուղտերի ու վիշապների քարավանի պես գալիս են, դիզվում սարի վերա. մենք դեռ կեսը չէինք իջել, երբ ահա հազարավոր բոմբերի նման պայթեցին ամպերը և ահագին կայծակե թուրը շողշողաց. ամբողջ լեռը թնդում էր ու մոայլ գագաթները կորել էին ավելի մոայլ ամպերի տակ. երբեմն միայն կայծակի լույսով երևում են գագաթները՝ որ<ոնց> վերա թափվում են կայծակները. (Արագածը ունի 4 մեծ գագաթներ, որոնց մեջ կա մի լիճ՝ հին հրաբխային կրատերի բերան. մենք բարձրացանք միայն մեկի գագաթը). մենք վախ ենք զգում. բայց ես կարծես թե ուզում էի կայծակնահար լինել, և կայծակով զարնված սրտով մեռնել այս ամայի, վեհ բարձունքում... Իջնում ենք. ահա ամպերը եկան և մեզ ծածկեցին. իրար հազիվ ենք տեսնում. ամպերի մեջն ենք՝ հին աստվածների պես... Կես ժամից հետո ամպերն անցան. մենք իջանք ներքև, ձիերը նստանք, և երեկոյան դարձյալ քրդերի մոտն էինք. մյուս օրերը շրջեցինք հայ գյուղերը, և երեկ հասանք քաղաք:

Առայժմ այսքան, թանկագին Եվգինե. վաղը գնում եմ մեր գյուղ, և խնդրում եմ ինձ շուտով գրեք, ձեր առողջության, ձեր տրամադրության մասին:

Կարոտալի բարևներով, Ձեր **Ավետիք**

Հասցես. Ст. Агин (Эрив. Ж. Д.)
(Закавказье, Эриванс. губ.) Ав. Исаакян.

Սա մեր գյուղի ստանցիան է. մնալու եմ մեր գյուղում հանգստանալու և պարապելու:

35. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904, հոկտեմբերի 8, Թիֆլիս

Չէի սպասում, որ պոստ-կարտերի համար առանձին շնորհակալական նամակ կգրես,— երևում է, որ քաղաքավարի ես, Աննա Բերոյան: Բայց ի՞նչ մի մեծ բան են պոստ-կարտերը, որ գրում ես, թե էլ մի ուղարկիր, քեզ էլ չի մնա.

ամենից առաջ ես ալբոմ չեմ պահում, այլ պոստ-կարտեր առնում եմ ընկերներիս ու բարեկամներիս գրելու համար, և եթե մեկը հավաքում է, ինչո՞ւ չուղարկել նրան, չուրախացնել. մարդ պետք է աշխատե ուրիշին պետք գա, ուրիշին ուրախություն պատճառե, ինչքան որ կարող է. իհարկե պոստ-կարտերը չնչին բան են և դրա պատճառած ուրախությունը նույնպես չնչին. բայց խոսքս ճշմարտություն է:

Դու գրում ես, Անիկ, թե երբեք մոտդ չամաչեցի, որ ռուսերեն չգիտեի. դա ի՞նչ ամաչելու բան է. դու հայ-աղջիկ ես և պարտական ես մայրենի լեզուդ լավ գիտենալ, այնինչ ինձ գրած նամակիդ մեջ շա՜տ տառասխալներ կային. այնպես որ չեմ ների քեզ. դու պիտի աշխատես լավ հայերեն գիտենալ. ազատ ժամերիդ վեր առ հայերեն գրքերից արտագրություններ արա. կամ շարադրություններ գրիր և տուր ինձ կամ Օհանեսե քեռուն՝ ուղղե. ա՛յ, դրա համար ես կուզենայի, որ դու ամաչես:

Երևում է, որ դու ծույլ չես, բայց օրերդ շատ անօգուտ ես անցնում. նստում եք Կատյուշի հետ և շարունակ ծիծաղում եք ու ծիծաղում. այդպես չի կարելի,— մանավանդ որ հայոց դրությունը այնքան լուրջ է, որ պահանջում է, որ մարդ առհասարակ մտածե, պարապի և մեր թշվառությունները ու ստրկությունը աչքի առաջ ունենալով՝ տխրի ու օգնության ելքի մասին մտածե, ով ինչով կարող է:

Ես՝ իհարկե, չեմ ուզում քեզ խրատներ տալ, բայց կուզենայի ամեն հայ այդպես լիներ. մանավանդ ջահելները, որ նոր պիտի ապրին, որոնց վերա է ծերերի աչքը:

Հետո՝ դու գրում ես, որ նամակս մտերմական դուրս եկավ. մեղա՛ աստծու, հո՛ մեղք չգործեցիր. ի՞նչ կար որ... ընդհակառակը մարդ պիտի անկեղծ ու միշտ անկեղծ լինի. ինչ որ զգում ես՝ ասա, ինչ որ ուզում ես՝ արա. մի ասիր՝ թե չի կարելի այս բանն ասել, այն չասել. ինչ որ սրտումդ է, թող նա էլ լինի լեզվիդ վերա ու գրչիդ ծայրին. հայերս, մանավանդ հայ-աղջիկները շա՜տ խորամանկ են. կեղծում են, ձևացնում են ու պաշտոնական հիմար լեզու բանեցնում. դա անազնիվ բան է, և մեր մեծերը մեզ փչացրել են իրենց քարոզներով՝ թե ծանր եղի՛ր, քեզ պահի՛ր. քիչ խոսի՛ր, թեթև մի լինի՛ր. շատ մի խնդա՛. լավ նստի՛ր և այլն:

Մի բան էլ — փոխանակ գնալու այս մորքուրի կամ հորքուրի տունը և ժամանակ կորցնելու, լավ կլինի, որ մուզիկ սորվես. դաշնամուրի վրա նվագես. տիկին Աստղիկը քավական գիտե. մուզիկան մարդու սիրտը շա՜տ է կրթում ու ազնվացնում և մաքրում և գեղեցիկ երազներով լցնում, որը և մեծ մխիթարանք է այս տգեղ կյանքում. խորհուրդ եմ տալիս դասեր վերցնես կամ Աստղիկից կամ մի լավ գիտցողից. թե չէ ի՞նչ նպատակ ունի — քնել-ելնել, ուտել-խմել և միշտ այդպես... ձանձրալի է...

Գրում ես, որ ներողություն, որ ինձ ձանձրացնում ես նամակովդ. շա՜տ սխալ ես. շա՜տ ուրախացա, որ նամակդ ստացա. ինչպես ամեն մարդու սիրտ, իմ սիրտն էլ ուրախանում է նամակներ ստանալուս. այնպես որ երբ բարեհաճես՝ կարող ես գրել:

Ես ապրում եմ Ավոյի հյուրանոցում և դեռ մի շաբաթ կմնամ այստեղ. հետո կգամ Գյումրի: Է՜հ, հերիք է. քունս տանում է, ժամի համարյա 1-ն է. բարի գիշեր, Անահիկ:

Բարևներով՝ Ավետիք

Ներողություն, որ քեզ հետ «դուք»-ով չեմ խոսում, դու ինձ համար միշտ նույն փոքր Անահիկն ես:

8-ն հոկտեմբերի 1904
Թիֆլիս

36. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904, հոկտեմբերի 15, Թիֆլիս

Նամակիդ երևում է, որ վշտացել ես, Անահիկ, իսկ ես երբեք չեմ ուզեցել քեզ դառնություն պատճառել. որովհետև ես չեմ կարող ընդունել, որ դու ծույլ ես, կամ դատարկամիտ, դատարկասիրտ, ընդհակառակը՝ ես հավատացած եմ, որ դու ոսկե սրտի տեր ես, և քո տարիքիդ ու կրթությանդ համաձայն՝ շա՜տ զարգացած, քան գիմնազիաներում դաշ եկող աղջիկներ. նրանք մենակ դասեր են ուզում սովորել, այնինչ քո հոգիդ ուզում է, ծարավում է լույսի, գիտության:

Այդ նամակիս մի՛ ուշք դարձրու, բայց նորից խնդրում

եմ թե հայերեն լավ սովորիր և միևնույն ժամանակ պարապիր ռուսերեն ընթերցանությամբ: Ես երբեք այն կարծիքի չեմ, թե դու հայրենասեր չես և չես մտածում մեր դժոխային դրության վերա. և նույնիսկ չեմ էլ ուզում, որ այդ քընքուշ տարիքիդ ծանրաբեռնվիս հոգեմաշ վշտերով.— դու շա՜տ խելոք ես նկատում, որ ուժ, ուրախություն պետք է ամբարել, հավաքել կյանքի վշտերին, հարվածներին դիմադրելու համար. այո՛, պետք է կենսուրախ լինել, պայծա՛ռ՝ գարնան պես թա՛րմ ու զվա՛րթ. իհարկե կգան ցո՛ւրտ ու դա՛ռն օրեր՝ երբ մարդու դեմքին ժպիտ չի գալ ու սիրտը կճմլվի... այդպիսի օրերի համար պետք է զինված լինել, որ հոգու առույգությամբ կովել, չհաղթվել և միշտ՝ արևի պես փայլո՛ւն ու ջե՛րմ, առաջ գնալ կյանքի մեջ և մարդկանց, թշվառներին սիրտ տալ, ջերմություն տալ. բայց դու գրում ես շատ տխուր զգացմունքների մասին, որ քո դալար-կանաչ սիրտդ հիմա կրծում են ու մաշում. ես խորին ցավ զգացի՝ այդ տողերդ կարդալով. մի՞թե քեզ պես մի մաքո՛ւր, բյուրե՛ղ հոգին, որ ոչ ոքին դեռ չէ վիրավորել, և դեռ աշխարհի փշերը չէ քաղել՝ այդքան վիշտ ու թախիծ ունի, որ մահ է ուզում անգամ. ես անիծում եմ ինձ, որ քո վերքերին դիպա. ես իրավունք չունեի. բայց, Աննիկ ջան, ինչո՞ւ, ի՛նչ կա. քո կյանքը, գարունը, արև-օրերդ դեռ առջևդ են. ինչո՞ւ այդպես մոայլ ես նայում աշխարհի վերա. ես չեմ կասկածում, որ վիշտ ունիս, որ այդ տարիքումն էլ դառնություն կա. ես ինքս այդ հասակում ինքնասպանության մասին էի մտածում, բայց իզուր, իզուր, որովհետև ես համոզվեցի, որ այն օրերը դեռ ավելի ճշխուն էին ու սրբազան, քան հիմա, բայց հիմա երբեք այնքան չեմ տանջվում. փորձվեցի, համոզվեցի, որ պիտի դիմանալ, տանել և երբե՛ք գլուխը չկորցնել. չէ՞ որ կան և լա՛վ օրեր, ընկերնե՛ր, գո՛րծ, իդեալներ... ինչո՞ւ փոքրոգի լինել, հուսահատվել, և դու, զուր ես քո վշտերը ավելի մոայլ գույներով թանձրացնում, մի փոքր թեթև նայիր, երգի՛ր, հուսադրվի՛ր. և այդ ամենը կանցնի, կանցնի, այնպես ինչպես մշուշը ցնդվում է երկրի վրայից, երբ արևը ծագում է, իսկ քո արևը լինի թո՛ղ քո իդեալները—բարի լինել, ազնիվ, սիրող սրտի տեր, քնքուշ մարդասեր:

Ես համոզված եմ, որ այսուհետև էլ այդպիսի բաներ չես

մտածե. չէ՞, Էլ չես մտածելու. իսկ երբ կհուսահատվիս՝ ինձ գրիր, ուր որ Էլ լինեմ, ես քեզ միխթարանք և օգնություն կհասցնեմ. ես շա՜տ տանջված ու տառապած հոգի եմ, և փորձված ու հաղթող դուրս եկած, և միշտ պատրաստ եմ քեզ պետքական լինել, ինչպես և բոլոր մարդկանց՝ դա է իմ միակ սերս ու իղձս, պետքական լինել մարդկանց, ավելի ու ավելի պետքական, նույնիսկ հացից, ջրից, օդից ու լույսից ավելի պետքական. բայց ինարկե ուժ չունիմ. բայց ինչքան Էլ որ ունենամ — պատրաստ եմ անձնվիրաբար:

Ես կուզեի երկարորեն գրել ու խոսել, բայց աչքերս ցավում են այս երկու օրս՝ գիշերները ուշ էի քնում ու պարապում էի՝ գրգռվել էին. բայց դու գրի՛ր երկար և մի կարծի՛ր թե զահլես տանում ես. ես առանձնապես շատ եմ սիրում ջահել հոգիների հետ հաղորդակցություն ունենալ. նրանք իմ վերա միշտ թարմացուցիչ են ազդում. Շուշեցի մի օրիորդ՝ Զոզա Միրզոյան անունով, այս երկու տարի է ինձ համակ է գրում. ես Էլ իրեն. նա հիմա 14 տարեկան է. նրանից նամակ ստացած օրս ես միշտ ուրախանում եմ. անմե՛ղ-անմե՛ղ գրում է՝ մանավանդ դեռ 12—13 տարեկան ժամանակը:

Ես դեռ մի 10 օր, գուցե ավելի մնամ. շա՜տ եմ ուզում մեր քաղաքը լինել և հատկապես գեղը՝ մի փոքր պարապել. բայց գործերս դեռ չեն վերջացել, որ գամ. այստեղից ձանձրացել եմ:

Քեզ համար մի շա՜տ լավ գիրք եմ գնել. բայց ի՛նչ գրքեր կուզես՝ գրիր, բերեմ հետս, դու խոստացել ես ինձ հետ անկեղծ լինել: Սպասում եմ նամակիդ:

Բարևներով՝ **Ավետիք**

15 հոկտեմբերի, գիշեր
Թիֆլիս

87. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904, հոկտեմբերի 18, Թիֆլիս

Ուղարկում եմ Հովհ. Թումանյանի բանաստեղծությունները քեզ նվեր և խնդրում եմ ընդունես. ես շա՜տ սիրում եմ այս բանաստեղծին և մենք շա՜տ սրտանց ընկերներ ենք

իրար հետ. ես էլ կուզեմ, որ դու էլ նրան կարդաս, հասկանաս և սիրես նրան. և հավատալու հույս ունեմ, որ քու հոգին ընդունակ է բանաստեղծությունը զգալու:

Ավետիք

(Այսօր իմ ծննդյան տարեդարձն է, կարող ես շնորհավորել — ոտք եմ դնում 30 տարիի մեջ՝ ծերացա՜. անցա՜վ ջահելությունս...)

Սպասում եմ վերջին համակիս պատասխանին, բարևներ Աննիկին:

38. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904, նոյեմբերի 2, Թիֆլիզ

Այս քու երրորդ համակիդ պատասխանը չէ, նա այս րոպեիս մոտս չէ, որի կետերին կարողանամ պատասխանել. հիմա կուզենայի քեզ մի քանի խոսք ասել. այդտեղ չկարողացա հետդ խոսել, որովհետև Ձեր տանը ես ինձ ճնշված էի զգում և մայրիկդ շարունակ կասկածանքով էր վերաբերվում ինձ, մի բան, որ ինձ շա՜տ վրդովեց...

Թանկագին Աննի՜կ, ես չեմ ուզում ասել ա՛յն, ինչ որ գուցե դու չգիտես կամ շատ քիչ գիտես,— դա ա՛յն է, որ ձերոնք ինձ չեն սիրում և այն նրա համար, որ ե՛ս աստվածային, տիեզերական սիրով սիրել եմ, պաշտել եմ ձերոնցից մեկին, որի համար այնքան եմ տանջվել ու լացել, որ դեռ արցունքս չի չորացել սրտիս մեջ, և տանջանքից աչքերս չեն փայլել երիտասարդական կրակով. ես այնքան եմ տանջվել, որ ուրիշը իմ փոխարեն արդեն ինքնասպան կլիներ... ես չմեռա ֆիզիկապես, բայց կորցրի շա՜տ չքնաղ բաներ — աշխույժս, ժամանակս, բանաստեղծական տաղանդս... Եվ ես միայն հիմա եմ մի փոքր կազդուրված շնորհիվ այն վե՜հ, սրբազա՜ն գործի, որի մեջն եմ, որի համար աշխատում եմ ու ապրում — հայրենիքի սո՜ւրբ գործը... այո՜, Ձերոնք ինձ չեն սիրում և ամեն միջոց գործ կդնեն մեր մեջ

աճող մտերմությունը թուլացավորելու. նրանք ինձ չեն հասկանում և չեն կարող հասկանալ. նրանք չգիտեն, որ ես շա՛տ բա՛րձր, վե՛հ ու մաքո՛ւր տրամադրությունների տեր մարդ եմ, նրանք չեն ուզում տեսնել, որ ժողովուրդը ինձ սիրում է, որ ես հասարակ, գծուծ, ամբոխամիտ հոգի չեմ... և թո՛ղ չգիտենան. ես թևեր ունեմ, ես կսավառնեմ դեպի արևը և արև կդառնամ այս ստո՛ր ու անազնի՛վ աշխարհի համար...

Ա՛խ, ես ինչո՞ւ եմ գրում այս.— ես չեմ ուզում քեզ վշտացնել. դու մեղավոր չես, որ Ձերոնք իմ լուսեղեն սիրտս տրորեցին իրենց ոտների տակ... ես գրում եմ, որովհետև ես խորապես զգացի, որ դու լուրջ հոգի ունես, տանջվում ես, ըմբոստ ես, չես ենթարկվում շրջապատի ճահիճի օրենքներին, որ դու բանաստեղծական տրամադրություն ունիս, որ քո հոգին բանաստեղծ է, որ քու պտտում ապրում է ու բուրում ու շողշողում մի ալիրական պոեզիա... Բա՛ց, Անձի՛կ ջան, քու երկնային սիրտը իմ տանջված հոգու առաջ. ես սրբության պես կմոտենամ քու հոգու տաճարին, կերկրպագեմ և կյա՛նքս, կյա՛նքս չեմ խնայի քեզ — լինիս դո՛ւ պայծա՛ռ, արշալո՛ւյս, մաքո՛ւր, խո՛րհ ու վեհ՛՝ այդպե՛ս լինիս դու...

Հավատա դու ինձ... և եթե ես դիվական չարությամբ քեզ կործանեմ՝ զոհվի՛ր, մի՛ հավատա՝ հավատալով որ ես քեզ միայն բարին, միայն գեղեցիկն, միայն լուսավորը կցանկանամ և կբերեմ: Թող աշխարհ չարախոսե իմ դեմ, քարկոծե ինձ. դու հավատա ինձ և մեռիր իմ հոգու թևերի վերա:

Այդտեղ ես համարյա չէի խոսում հետդ. բայց ես ըմբռնեցի, որ գործ ունեմ մի լուրջ հոգու հետ. ես քեզ երեխա էի կարծում, բայց հիմա զգում եմ, որ դու խորը և երազուն մարդ ես, որ դու այս աշխարհից չես, որ քու աչքերի մեջ երկնքի լույսից կա, որ դու ճառագայթ ես — ես ներողություն եմ խնդրում իմ Անձիկից, որ ես լրջորեն չեմ վարվել իրեն հետ:

Նամակս գրում եմ շատ կցկտուր՝ հոգնած եմ և գլուխս ցավում է. մյուս անգամ երկարորեն կգրեմ. և նամակներիս մեջ նյութ կառնեմ զանազան հարցեր՝ հոգեբանական, փիլիսոփայական, գրական, հասարակական. ես մտածում եմ

թե ինչո՞վ կարող եմ քեզ օգտակար լինել. դու գրիր քո մըտքի տարակոյսները. հարցեր տուր. բայ հոգուդ առաջաստները. ցույց տուր երկինքդ, և ինչպես վայել է քեզ պես մի չփչացած հոգուն՝ եղիր միայն աննկեղծ, աննկեղծ ու միշտ աննկեղծ՝ ի սեր քու մաքրությանը: Դու ակամայից ինձ մի փոքր վիրավորեցիր, որ չէիր ուզում բերած գրքերը վերցնել, մի՞թե դու չզգացիր, որ այդպես կվարվիմ միայն ոչ բարեկամի, հեռու մարդու հետ... ախր ինչո՞վ կարող եմ ես քեզ պետքական լինել. այնինչ ես մտածում եմ, որ դու ունենաս լավ գրքեր և միշտ հանճարեղ ու բանաստեղծական հոգիների հետ գործ ունենաս, հաղորդվիս: Ոչ, դու պետք է ընդունես իմ բերած գրքերը և այսուհետև, դու ինձ՝ իբրև շատ մտերիմ ընկեր-քույր-հոգի, գրես թե ի՞նչ գրքեր կուզես, և միշտ գրքեր կղրկեմ ուրախությամբ՝ որ պետք եմ գալիս քեզ. դա ինձ մեծ բերկրանք է:

Ես պիտի խնդրեմ քեզնից մի բան — ես գուշակեցի, որ դու բանաստեղծություններ ես գրում. խնդրում եմ ղրկիր առ այժմ ինձ մի քանիսը՝ քու կարծիքով լավերը. եթե հարմար լինի՝ մի փոքր ուղղելուց հետո՝ տամ «Մուրճին» տպելու, չմերժես. Աննիկ. հա՛, դու չտվեցիր հիշատակարանդ կարդալու, բայց հետո, երբ գերազանցորեն մտերմանանք. հա՞:

Երբ այդտեղ գամ՝ քեզ կսովորեցնեմ բանաստեղծության արվեստի օրենքների հետ. ի՞նչ բան է չափը, հանգը, տեսակները և այլն:

Անհամբեր սպասում եմ նամակիդ.

Բարևներ Աննիկին.

Քու՝ Ավետիք

2 նոյեմբերի, 1904.
Թիֆլիս

Նամակս գրում եմ Հովհ. Թումանյանի տանից, այդ պատճառով նամակդ մոտս չէ:

Հասցես.. Ов. Туманян, Бебутовская 50. Тифлис.

89. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1904, նոյեմբերի 9, Թիֆլիս

Ուշ գիշեր է. ես միայն այժմ ժամանակ ունիմ խոսելու քեզ հետ. երեկ և ևախընթաց ծիր ուզում էի գրել, բայց մենակ չէի և ազատ ժամ չկար. հիմա գրում եմ Օհանեսի տանից (մենք Թումանյանին միշտ այդպես ենք կոչում). այսօր մեր խումբը, որի անունն է Վերնատուն, որոնք են՝ Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Լ. Շանթ, Դ. Դեմիրճյան և ես, մեր գրական սերտ խմբակը հավաքվել էր ճաշի... երեկոյան նրանք հեռացան. մնացի ես և սրտիս գեղեցիկ ուրախությամբ սկսում եմ խոսել քեզ հետ, թանկագին Աննիկ:

Արդյոք ի՞նչն է ստիպել քեզ՝ չարախնդաց Միֆեստոֆը (գրում եմ քու լեզվով), որ դու դիմում ես ինձ այսպիսի մի հարցով — «Ո՞վ ես դու. իմ պահապան հրեշտակը, թե կործանող սատանան» — «Ո՞վ եմ ես»... և այսպիսի երկբայական, սկեպտիկ, դեմոնական հարցեր. իմ սիրտը լցնում է քո տատանմունքը և՛ ուրախությամբ, և՛ թախիծով. ուրախանում եմ, որ դու խելոք ես, հասուն ես. և կուլ չես գնում, բայց տխուր եմ, որ հավատդ մեռել է արդեն դեպի մարդը և հոգուդ պայծառությունը ամպոտել. իսկ ես ինչպե՞ս կուզենայի, որ դու լինեիր ջինջ ու լազուր երկինք՝ իմ հոգու, իմ մոայլ ծովի վերա փռված փայլուն, պայծառ երկինք: Դու հարցնում ես՝ վիշտը սրտիդ մեջ անուցանելով, թե վճռիր իմ տատանմունքս... ես միայն այս կասեմ քեզ և այս միայն մի անգամ կասեմ և ամբողջ կյանքիս մեջ միայն մի անգամ կասեմ քեզ:— «Ես սիրում եմ քեզ, Աննիկ, Աննիկ ջան, իմ շա՜տ սիրելի Աննիկ...»:

Եվ այս իմ հոգու խորքից քեզ խոստովանելուց հետո՝ այսուհետև քեզ ամեն ինչ պարզ պետք է լինի... ասա՛, ի՞նչ կարող է անել սիրող սիրտը, ինչի՞ առաջ կանգ կառնի սիրող սիրտը. ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար. ես քառասուն գլխանի դևին կսպանեմ քեզ համար. ես անմահության խնձորը կբերեմ քեզ համար. ես արևը, աստղերը, ամբողջ աշխարհը կնվիրեմ քեզ. ես իմ կյանքս, իմ կյանքս կտամ քեզ. ուրիշ ի՞նչ ես ուզում, մի՞թե այսուհետև կարող ես դու տատանվել, կասկածել դեպի ինձ:

Դու դեն շպրտիր քու թանկագին գլխից այն վատ մըտքերը՝ թե ես ամաուություն եմ գտնում քեզ քու քրոջ հետ. աստված չանե, որ դու նրան նման լինիս. նա չար է,<...> նա անսիրտ է, իմ սպրած հոգին զգաց քու մեջ մի երկնային հոգու ներկայությունը. մի չքնաղ մաքրություն. ես կարոտ եմ այդ հրեշտակային գուրգուրանքին և անմեղության. ես լալ եմ ուզում քու մաքուր ձեռների վերա, ես որոնել եմ միշտ մի ոսկեղեն, մի լուսեղեն ասուպի, որ անցներ իմ հոգու երկընքով՝ և անցավ ու այն դու էիր. անցար ու ընկար հոգուս խորքում. արդյոք դու պիտի ինձ համար ճառագայթ դառնաս ոգևորության ու սիրո, թե վերք ու վիշտ. միևնույնն է. ես օրհնում եմ քեզ. քու հանդիպումը. և եթե դու ինձ փշրես, ինչպես փշրեց նա, եթե իմ երջանկության կիսափշուր բաժակը ամբողջովին ջարդես, ես չեմ անիծի քեզ, և սիրելով՝ կմեռնեմ: Այսուհետև ուզում եմ, որ դու ինձ հավատաս այնպես, ինչպես հավատացյալը հավատում է աստծուն. ես միշտ ազնիվ, միշտ աստվածային կմնամ դեպի քեզ և ոչինչ չեմ ուզում քեզանից. եղի՛ր աստծու ազատ թռչունի պես՝ շինի՛ր քու բույնը՝ ուր ուզում ես, և ում հետ ուզում ես. ես սրտիս խորքից կնպաստեմ քու երջանկության շենքը շինելուն:

Եվ այս ամենից հետո դո՛ւ, իմ հպարտությունս, մի՞թե կարող ես կասկածել. ո՛չ և միշտ ո՛չ. դու հավատացի՛ր ինձ. և քու կյանքի նավն ու ղեկը հանձնիր ինձ. ես գերասքանչ ճիգերով կաշխատեմ, կղեկավարեմ քու փխրուն, քու նազելի նավը կյանքի կատաղի ծովի մեջ, ալիքների դեմ. կուրծքս պատնեշ կկանգնեցնեմ փոթորկի առաջ՝ և քեզ կհասցնեմ լույսի, գեղեցկության, վեհության ափերը...

Ես այլևս չեմ խոսի այս զգացմունքի մասին. ես երբեք չէի էլ խոսի, եթե քու տատանմունքը չլիներ. քու կասկածը, քու վախը, ես շա՛տ լավ գիտեմ աշխարհը, մարդիկ, լիրբ օրենքներն ու ծովածավալ անմաքրությունը կյանքի. և գիտեմ որքա՞ն անպաշտպան ու խեղճ ու միամիտ են աղջիկները մարդագայլերի առաջ. և քու վախը հասկանալի է ինձ. բայց դու շատ բախտավոր ես, իմ սիրելի Անհիկ, որ ինձ հանդիպեցիր, ես քանի ողջ եմ — ոչ ոք չպիտի կարողանա և ոչ ոք իրավունք չպիտի ունենա քու սիրտը կոտրելու, քեզ վիրավորելու. իմ գերագույն հաճույքը պիտի լինի քու կյան-

քի ճամփեն դարձնել պայծա՛ռ, գեղեցի՛կ ու երջանկալի՛. արյունով կներկեմ իմ քայլերս ու ձեռներս՝ ով որ խոչընդոտ կանգնի քու երջանկությանս առաջ. ապրիր այսուհետև՝ հեռված իմ գրանիտե սրտի վերա, երգի՛ր երկնքի ու ջահելության երգերից. պարիր ամենաբուռն ոգևորությամբ, քաղիր ամենաշքեղ ծաղիկները, երազի՛ր ամենաչքնաղ երազները. սիրի՛ր երկինքը, մարդիկ, աշխարհը և ամենից շատ սիրիր ինձ...

Բարի գիշեր և կարոտով բարևներ իմ սիրելի, իմ թանկագին, իմ պայծառ Անահիկին.

միշտ քեզ անձնվեր քո և քո **Ավետիք**

9 նոյեմբ. 1904.
Թիֆլիս

40. ԱՆՆԱ ՓԱՏԱԿՅԱՆԻՆ

Անահիկին*

Մարդկանց արցունքներն
Թափվում են անվե՛րջ,
Ե՛վ անապատում
Թե՛ ծովերի մեջ.
Ե՛վ ժպիտների,
Համբույրների տակ
Ե՛վ դարբասներում,
Թե՛ խրճիթներում.
Թափվում են անհա՛նգստ,
Անտե՛ս, անբանա՛կ,
Թափվում են լռի՛կ,
Անձայն, անհատնում.
Եվ այդ ամենը կաթի՛լ ու կաթի՛լ
Ամեն կողմերից հավաքվում, գալիս
Թափվում են անվերջ մոռալ սրտիս մեջ...

***

Դու ջի՛նջ և հե՛զ մի թիթեռ ես,
Ե՛վ նուրբ, և՛ սուրբ թևերով.

* Գրված է մի նկար-բացիկի (բռնանկար) վրա. հասցե և փոստակնիքի դրոշմներ չկան. հավանաբար ուղարկված է ծրարով։

Սիրտդ վճիտ՝ թովում ես
Գե՛շ, գա՛րշ մարդկանց վրայով.

Դո՛ւ, որ մաքուր մի թիթեռ ես,
Ա՜խ, մեր կյանքի ճահճի մեջ
Պիտի ընկնես, պիտի ձեխվես...

. . . . . .

Շարունակությունը տե՛ս Ա. Իսահակյանի «Բանաստեղծությունների» 62 երեսում կամ — կյանքի մեջ՝ ապագայում... Խնդրեմ չվիրավորվես. էսօր ես շա՜տ եմ վիրավորված...

Ավետիք

1904 թ. 20 նոյեմբ. Կաքու:

41. ՀԱՅՐԱԶԱՏՆԵՐԻՆ

1904, նոյեմբերի 28 Ախալցխա

Սիրելի՛ք, ես հիմա Ախալցխայումն եմ, և մի քանի օրից հետո կլինիմ Թիֆլիզ, գուցե անցնեմ դեպի Բաքու: Ողջ և առողջ եմ:

Համբույրներով,
ձեր՝ **Ավետիք**

Հ. Գ. Հովհաննեսի և Ափինյանի մոտի գրքերը հավաքեցեք:

42. ԱՆՆԱ ՄԱՏՍԱԿՅԱՆԻՆ

1904, նոյեմբերի 29, Բորժոմ

Իմ մեղա՛կ, հողմակո՛ծ, իմ ցրտաշունչ, իմ թափառական ճամփից կարոտագի՛ն բարևներ հեռավո՛ր Անիկիկն:

Ավ. Իսահակյան

43. ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

<1904>

Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս:

Ինչո՞ւ եմ գրում, ի՞նչ է ստիպում ինձ գրել. — սիրել — ես քեզ չեմ սիրում, ատել — ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել. հավիտյան ապրել, և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել [անզոր եմ քեզ], ամբողջ էությունս բարի է... և որ ամենաողբալին է՝ ես դեռ քու ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում եմ և պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ դառնում:

Դու մի՛ որոնիր այս տողերի մեջ որոշ միտք, որոշ իմաստ. ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահը քեզ էլ ո՛չ մի տող գրելու չեմ, և աչերիդ նայելու չեմ, Աստվա՛ծ է վկա. վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ քեզ, հայհոյեմ,— հայհոյեմ քու բոլոր սրբությունները, որովհետև դու իմ սրբությունները պղծեցիր, որովհետև իմ ամենաանվիրական սերս շան պես դուրս վռնդեցիր, որովհետև դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանորեն:

Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել — գիտե՛մ, գիտե՛մ. բայց այդ քեզ իրավունք չէր տալիս, ինձ՝ երբ ես քու ոտքերի տակ տիեզերական հզոր սիրուցս ստորացած ընկած էի,— ծաղրելու, արհամարհելու, դուրս շպրտելու. չէ՛ որ, Շուշիկ ջան, ես մարդ էի. չէ՛ որ, կային օրեր, որ դու ինձ գոնե հարգում էիր, «թանկագին» և «ջան» խոսքերով խաղում էիր հետս... և այդ բոլորից հետո դու ինձ ոտաց փակ տվիր. խփեցիր ջահել սրտիս մեջ դաշույններ՝ չհանե-

ցիր ձրաձց, թողիր սրտիս մեջ — մնացին, ժանգոտված, և արյունովս իմ քայլափոխերս ծածկեցին, բայց դու մնացիր դեպի ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ...

Եթե ամենակատաղի թշնամուս սիրեի, իմ, դեպի քեզ մրրկող սիրուս մի չնչին մասով, թշնամիս ինձ կգրկեր, կգուրգուրեր և կմխիթարեր... Իսկ դու — դու գիտեիր իմ դժոխային տանջանքներս, բայց մուտ չեկար, մի անուշ խոսք չասիր... Ես քեզնից է՛լ սեր չէի ուզում. քեզ տիրել չէի ուզում, բայց քու մեջ մարդ տեսնել կուզեի, և որ՝ դու իմ մեջ մարդ տեսնեիր...

Դու ասում էիր ինձ, որ այն ժամանակ ջահել էիր և ուրիշները ներշնչում էին քեզ... Բայց, բայց... չէ՛ որ ջահելները ունեն գթառատ սիրտ. բայց մի՞թե դու ջահել էիր. դու հասած էիր՝ և այն էլ շա՜տ զզվելի կերպով, որ առաջին պատահող ամուսնու գիրկն ընկար...

Այո՛, մենք հետո բարեկամացանք, գուցե դու հետո ինձ սիրեցիր, բայց այդ օրվանից ես քեզ սկսեցի ատել և հայհոյել. դու հետո ինձ սիրում էիր ո՛չ մաքուր կերպով, այլ ֆիզիկապես... Ես զզվում էի քեզնից. բայց և անդիմադրելի կերպով սիրում էի. ա՜խ, ամբողջ 13 տարի դու ճստել ես ու բռնել իմ ողջ, ողջ ուղեղը, հոգին և սրբապղծել իմ ողջ երկինքը... Դու ինձ արնաքամ արիր, գուցե ակամա, դու սպանեցիր իմ տաղանդը, դու ինձ մղեցիր ամենաճաձանչ, դառն հուսահատության, երբ ես ամբողջապես թաթախված ինքնասպանության ծանր մտքերով, հանկարծ սթափվեցի — ինձ դուրս կանչեց ժողովուրդը, հեղափոխությունը, իմ ջախջախված գենին—ես տեսա իմ աչքում բոլոր իլյուզիաները ցրված, վարագույրները բացված և քեզ՝ որպես ամենավատ կինը բոլոր կանանցից... և քեզ հայհոյեցի աշխարհքի ամենաճաձանչ հայհոյանքով, որ իմ կյանքում մի անգամ եմ ասել, և այն էլ քեզ, իմ հոգուն, իմ իդեալին. այժմ մազերս փետանում են և ամաչում եմ, և սոսկում եմ այդ հայհոյանքից... Եվ այն օրից, երբ գրեցի...

Շուշիկ, ատելի, սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարվել. ես պիտի քեզ անպատվեի, վայի գցեի, որ կարողանայի ազատվել այդ հրեշային սիրուց, որ ինձ ծծեց,

կամ սպանեի ինձ. սպանել չուզեցա, որովհետև բնությունը իմ մեջ շա՜տ է կյանք և կյանքի ուժ ու սեր դրել, բայց հայհոյել կարողացա. իհարկե, ավելի լավ էր մեռնեի, քան հասնեի այն օրին, որ իմ դարեր, դարեր պաշտած երազը սրբապղծեի, ոտաց տակ տայի... Բայց այս բոլորի միայնակ մեղավորը դու ես:

Այժմ ի՜նչ եմ ուզում ասել ես.— խոսքս հետ չեմ առնում, բայց այդ հայհոյանքով էլ չբժշկվեցի ես. դու մի սոսկալիթախտ վերք բացիր հոգուս մեջ, լայնաբերան, լայնաբերան. դու որդ դարձար իմ վերքի մեջ, և ոչ մի երկրային ու երկընային դեղով դա չի բժշկվի... Այժմ դառնաս իմ կինը — ես իսկույն կփախնեմ քեզնից. դառնաս հին Շուշիկը՝ ես կսպանեմ ինձ՝ չտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց...

Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրի՛ր քու երեխաների համար. ինձ մի՛ անիծիր. իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ. աղաչում եմ քեզ. ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի՛ նայիր. ազնիվ խոսք տուր այդպես վարվելու. ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար. հոգիս խոստում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կմտաբերես ինձ. պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծու անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չի <հնազանդվում>. չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի. քու հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես օտար, չճանաչված Աստված եմ այդտեղ:

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ...
ԵՍ ԷԼ ԿՎԱՐՎԵՄ ՔԵԶ ՀԵՏ ԱՅԴՊԵՍ:
ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱ՛Ր, ՄԵՌԱ՛Ր...
ԱՐՏԱՍՎԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ
ԵՎ ՃԱՄՓԱ ԸՆԿՆՈՒՄ
ՆՈՐ ԱՍՏՎԱԾ ԳՏՆԵԼՈՒ...

Ավետիք:

44. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1905, հունվարի 5, Ալեքսանդրապոլ

Սիրելի Օհանեես.

Շնորհավոր նոր տարիդ, և ծնունդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ո՞նց է քեֆդ. այստեղ գալուս չկարողացա գալ մնաս բարևի. մի քանի օրից հետո կգնամ գյուղ: Ի՞նչ կա, ի՞նչ չկա — տրամադրությունս վատ չէ, բայց լավ էլ չէ:

Քո՝ Ավետիք

Գրիր այս հասցեով՝ Ст. Агин (Э. Ж. Д.) А. Исаакян.

Տեսնո՞ւմ ես ի՞նչ սիրուն տղա է Շ. Ռուսթավելին*:

45. Ա.ՆԵՆԻ ՄԱՏՑԱԿՅԱՆԻՆ

1905, հունվարի 17, գիշերը

Այն բոլորը, ինչ երեկ ծագեց մեր մեջ, դա բխում է նրանից, որ մենք ապրում ենք զսպված դրության մեջ. և հնարավորություն չունենք իրար առաջ մեր հոգիները բանալու. իմ հոգին ձգտում է քեզ, ինչպես արտուտն է ձգտում դեպի արևը.— բայց դու հեռու ես ինձնից, ամպերի տակ ես. ես ուզում եմ ասել, շատ բան, ասել և լսել քեզնից, բայց միջոց չկա. քու ճամակներդ որոշ բան չեն ասում — հոգուս պահանջները չեն լրացնում. անսասան հավատ չեն ներշնչում իմ մեջ դեպի քեզ — քանի որ դու դեռ նույնիսկ «դուք»-ով ես խոսում ու գրում ինձ. քանի որ գրածդ ճամակները ինձ չես տալիս. և առհասարակ այն տպավորությունը ունիմ, որ ես քեզ համար ամենամոտիկ մարդը չեմ, այնինչ՝ ես կուզեի, որ դու իմ հոգում ապրեիր, որպես մի շքեղ և սուրբ երազ. և ես էլ քու հոգում ապրեի, որպես մի սուրբ ու շքեղ երազ. իրար այնպես սիրեինք, որ մեռնեինք ուրախությամբ իրար համար.— բայց դու-դու գրում ես ճամակներիդ մեջ, որ դեռ ինձ չես ճանաչում... և ուրիշ անհավատ խոսքեր,

* Բացիկը՝ Շ. Ռուսթավելու նկարով:

որոնք արյունոտում են սիրտս: Եվ ասա, խնդրեմ, թանկագին Անհիկ, մի՞թե կվիրավորվեն մեկից այնպես շուտ և այնպես շուտ վճիռ կարձակեն, ինչպես երեկոյան՝ գրածիդ մեջ. «Թողնենք իրար, եթե ուզում ես թողնե՛նք». այդպես շուտ վիրավորվել ու հեռանալ այն մեկից, որին անմահ սիրում ես, անքակտելի հավատում ես — տեսնում եմ, որ քու վերաբերմունքը դեպի ինձ ջղերիդ վերա է հիմնված և այսօրէգուց կարող ես ինձ երեսի վերա գցել ու հեռանալ. ես սիրտ չունեմ դիմանալու. և կարծում եմ, որ քեզ համար էլ դա դուրեկան չի լինի...

Եվ դու այնքան հպարտ ես, որ մի օրից մի օր վստահորեն և վճռողականորեն չասացիր ինձ, որ քեզ ինչ էլ որ լինի՝ թեկուզ աշխարհ քանդվի՝ սիրում եմ և սիրում. և այդ սիրո համար գոհ կբերեմ և՛ երրորդություն, և՛ քույրեր, և՛ նույնիսկ մայր... Բայց չէ՞ որ ես քեզ այդպես եմ սիրում՝ պատրաստակամ՝ զոհաբերելու ամեն ինչ և կյանքս նույնիսկ... Բայց դու կարո՞ղ ես այդպես վարվել, նույն տեսակ պատասխանել իմ սիրուն. դու լավ գիտցիր, որ սիրո գինը ուրիշ ոչինչ է, ո՛չ հարստություն, ո՛չ համբավ, ո՛չ ընտանիք ու ծնողներ, այլ միայն սեր.— սիրո գինը սերն է. սիրով միայն սեր կառնեն...

Հազար անգամ քեզ ասել եմ, որ քեզ սիրում եմ և շա՜տ ու մեծ սիրում, բայց դու խրատներ ես տալիս ինձ. իսկույն նեղանում ես, խռովում ես, և քիչ է մնում, որ ոտաց տակ տաս սեր և ամեն մի բարձր զգացմունք...

Ես գիտեմ, որ դու ջղային ես — շա՜տ նուրբ ու հիվանդ ջղերով. գիտեմ, որ երեկ ես անզգուշաբար խաղացի ջղերիդ հետ.— բայց դու էլ դատարկ բանից անագին բան ես շինում, կարծես թե իրար չենք ճանաչում, իզուր սիրտ ես կոտրում...

Եվ եթե վիրավորվեցիր, խնդրում եմ, անպատճառ ներես. մի՞թե ես ընդունակ եմ քեզ տանջելու, իմ գերագույն ցանկությունս է—քեզ սիրել, գուրգուրել և ուրախություն պատճառել, որքան կարելի է շատ...

Քո՝ **Ավետիք**

Իմացած եղիր, որ Արիստակեսին, Գեղամին և Շուշիկին նամակներ եմ գրել, որ չխանգարեն մեզ. և նույնիսկ նպաստեն մեր բարեկամության հարատևությանը՝ որքան կարող են իրենք:

Քո՝ **Ավետիք**

46. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հունվարի 19—20

Երեկվա օրը ես այնքան տանջվեցի, որ հոգիս քամվեց. խորապես զգում եմ, որ քեզ շա՛տ և շատ սիրում եմ. և այս սիրուց շատ եմ վախենում — վախենում եմ, որ վերջնականապես չջարդվի սիրտս և նորա հետ հույսերս ու մնացած երազներս. այնպես ջարդվի, որ դիակ դառնամ և չկարողանամ մի բան անել. և դրա պատճառը քու տարօրինակ վարմունքն է ինձ հետ — ինչո՞ւ ես լուռ, ի՛նչ ես ուզում ասել. այդ ի՛նչ անհավոր լռություն է քու հոգում, ես վախենում եմ. ինձ թվում է, որ դու մի րոպեի մեջ կարող ես փշրել սիրտս և գնալ քեզ արդար համարելով. անցյալ օրվա լռությունդ — ամենասոսկալի բանն է լռությունը. դա ծովի հատակ է, դա անդունդի խորություն է. միգուցե կուզես հեռանալ ինձանից — ես այդ խստությունը չեմ կարող տանել. բայց մնալ ինձ հոգեկից, մտերիմ մի՛թե կարող ես. դու ինձ կարոտից կմաշես. դու պահանջում ես՝ որ ես մեռցնեմ իմ մեջ սեր, կարոտ, երազանք... ա՛խ, ինչե՞ր ես ասում. երբ պիտի քեզ հետ երկա՛ր-երկար դարեր խոսեմ. տեսնեմ հոգուդ հորիզոնները, զգամ քեզ... ես այնպես լա՛լ եմ ուզում, և դու երեկ ինձ լացացրիր... սիրտս վիրավոր աղավնու պես թպչտում է՝ դու վախեցրիր ինձ... իսկ ամբողջ օրը բոլորովին չերևացիր. ախր ինչո՞ւ այդպես ես վարվում, դու չգիտես, որ քեզ անսահման սիրում եմ, որ յուրաքանչյուր խոսքդ ազդում է հոգուս վրա, և ամեն մի ամենաչնչին սառնությունը ինձ հուսահատեցնում...

Անհիկ ջան, հավատա, որ ես կաշի չունեմ և ջղերիս բե-

րանը բաց է. մի՛ դիպչիր նույնիսկ ամենամեղմ շնչով. շա՜տ դառնապես եմ զգում և շատ զուլում տուժում եմ:

Դու կարող ես ինձ ոգևորել, հույս ներշնչել, եռանդ — և ես շատ պետքական մարդ կդառնամ, իսկ եթե ինձ թողնես... ես շա՜տ պիտի քաշքշվիմ ու գլուխս կորցնեմ և գուցե հավիտյան կորցնեմ...

Չգիտեմ ինչ եմ գրում. բայց սրտիցս արյուն է գնում և սիրտս մարում է. Ինչո՞ւ ամենաուժեղ կերպով չհավատանք իրար. ինչո՞ւ հավատի անսահման, կապույտ, անամպ ու ջինջ երկինքը չլինի մեր մեջ...

Է՛հ, վերջացնեմ նամակս. զգում եմ, որ սիրտս չեմ կարող բանալ, արտահայտել. ճնար լինի դնեի այս նամակի մեջ և ղրկեի քեզ. և տեսնեիր, և լայիր, և հավատայիր, և սիրեիր... Զգում եմ, որ քեզանից չեմ կարող զրկվել...

Վերք կա իմ մեջ, խո՛ր, լայնաբերա՛ն, լայնաբերա՛ն, և Էլի չի գոցվում նա, և Էլի արյունս ծորում է, թափվում է. դու չես տեսնում դա, չես զգում... բայց կարող ես, և չես ուզում նա բուժել. գուրգուրել ինձ...

Քո՝ **Ավետիք**

19 հունվարի

Անհիկ ջան, երեկ էլ քեզ չտեսա՝ ինչքան կուզեի տեսնել, երևում է, որ դու խույս ես տալիս ինձանից. չեմ կարող հավատալ այդ անգութ մտքին. Անհիկ, ի սեր աստծու — լավ մտածիր...

Հիմա Երևան եմ գնում. մի 4—5 օր կուշանամ, բայց վերադարձիս աշխատիր ինձ տեսնել. աղաչում եմ:

Քո՝ **Ավետիք**

20 հունվարի

47. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

1905, փետրվարի 4, Պետերբուրգ

Ստացա ձեր նամակը, հարգելի պ. Արիստակես, թեև ավելորդ էր այլևս պատասխանել, բայց մինչև չպատասխանեք՝ հոգեպես չէի կարող ինձ հանգիստ զգալ. Ձեր նամակի

տոնը, հակառակ իմ սպասածիՙ կոմպլեկտ վիրավորական էր, և ես անիծում եմ ինձ, որ դեռ մարդկանց հավատում եմ և բանաստեղծացնում. գուցե դուք բոլորովին չեք ցանկացել ինձ վիրավորել, գուցե իմ ջղերի բերաններն են բաց, սակայն գուցե և ուզեցել եք վիրավորել... Բայց ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով, ինչո՞վ արժանացա այդ խայտոցին, ես էլ ուշադրության չեմ առել իմ փակագծի մեջ ասածը՝ որ դուք հակատրամադիր եք դեպի ինձ, բայց և նա իմ կյանքի մեջ կմնա միշտ փակագծի մեջ — դուք լավ գիտեք Ձեր հոգու խորքում, որ կար մի ժամանակ, որ դուք չէիք ցանկանում բարևել ինձ նույնիսկ... իմ հոտառությունը ավելի սուր է, քան բերնաբդյան շներինը... Բայց այդ չէ խանգարել ինձ չկուրանալու և ես Ձեզ հարգել եմ միշտ — և այդ հարգանքն էր պատճառը, որ ինձ ստիպեց Ձեր առաջ իմ սրտից մի մասը, բանալու. և դուք, փոխանակ հարգելու այն մարդուն, որը հավատում է ձեզ և սիրտ է բաց անում — դուք ամենևսառնորեն կասկածում եք նրա անկեղծությանը: Ի՞նչ դուալիզմ նկատեցիք իմ մեջ, կամ մի՞թե հանցանք է, որ մարդ ամբողջ չէ, նույնիսկ լավ, որ ամբողջ չէ, որոշ չէ, սահմանագծված չէ. բայց ի՞նչ դուալիզմ. խնդիրը անկեղծության մասին է. ամեն բան կարող եք (դիցուք թե) ասել իմ նկատմամբ, բայց իմ անկեղծության մասին իմ բոլոր ընկերները կվկայեն, և եթե ես պակաս անկեղծ լինեի՝ դուք ավելի հարգանքով կվերաբերվեիք դեպի ինձ և խնդիրս ոտաց տակ չէիք տա... Բայց դուք կասկածում եք այդ հարցում և գրում եք, որ ես այս ու այն կողմն եմ ընկնում, ավելորդ բաներ եմ ասում և պարզ չեմ գրում ցանկություններս և նպատակը... և ուրիշ խրատներ, և հաշիվ եք ուզում ինձնից...

Ես կյանքիս մեջ հազար սխալ գործած կլինեմ և թող սա լինի հազար ու մի երրորդը, որ Ձեզ դիմեցի, հավատացի և սիրտ բաց արի:

— Ես սիրո՞ւմ եմ Անինկին — ավելի, քան նրան կսիրեր քառասուն եղբայր. բայց իմ սերը այս աշխարհից չէ, նրա մեջ փիզիոլոգիա չկա և իմ հոգին ձգտում է դեպի նրա հոգին՝ ինչպես արտուտը դեպի արևը՝ գիտենալով, որ արևին չեմ հասնի և հասնելուս կայրվիմ ու իմ մահը կլինի, ո՞վ է Անինկը ինձ համար — նա իմ ստեղծագործությունն է, իմ

հոգեկան աշխարհի, իմ երազների ամենաբանաստեղծական սֆինքսը, որը իրոք գոյություն չունի, և ես խնդրում էի Ձեզ, որ դուք ներշնչեիք Ձեր շրջանին, որ կոպիտ ձեռներով չցնդեին իմ երազը:

Իմ սերը չի ձգտում տիրելու — և այս գիտեմ, որ դա հասկանալի չէ Ձեր ռեալ զգացողությանը, բայց իմ բանաստեղծական լոգիկայի մեջ Ձեր աշխարհի ամեն կարգ ու կանոն թարս են դրված. ուրեմն այստեղ վերջնական որոշ նպատակի և որոշ ցանկությունների հարց չկա, որը դուք կուզեիք. իմ նպատակը — հավիտենական սիրո մեջն է, որ ապրում է իմ բոլոր ատոմների մեջ, որից ինձ ոչ ոք չի կարող զրկել, որը ոչ մի դեֆինիցիոնի չի ենթարկվում, նա կապրի իմ գերեզմանից հետո էլ դեռ — իմ անմահ ատոմների հետ. իմ սերը մի միստիկ-մուզիկալ-մետաֆիզիկական խելագարություն է, որին հասկանալու համար առնվազն ինձ չափ պետք է խելագար լինել՝ անորոշ, աննն, քաոսային՝ եթե ուզում եք, բայց խնդրում եմ հասկացեք ինձ՝ պահելով ի սեր աստծո Ձեր աշխարհի տրիվիալ-բանալ խելոքությունը...

Եվ հետևապես իմ հոգեբանությունը չի կարող ինժեներական-տեխնիկական պլաններ կազմել Անինկին տիրապետելու համար. իմ պլանները բանաստեղծական են, և ուրեմն Ձերոնց համար անվնաս: Ձերոնք կարող են իրեն՝ Անինկին երջանկացնելու բարի ծրագիրները գլուխ բերելու, ես չեմ խանգարի, ես կհեռանամ. նրա հոգին, նրա լավագույն տարրը իմն է, ինձ հետ է, և իմ ամբողջ կամքն է — նրան տեսնել երջանիկ, ինչպես նրա քույրերն են. և ես ինձ ամբողջապես զոհաբերում եմ նրան.— ազնիվ խոսք: Իսկ այն խնդրում, որ միջամտեիք, որ Անինկին չճնշեին — դա իմ ինքնիշխանական չէ, լավ գիտեք, իսկ Ձեր վիրավորական բառը — միջնորդ. (որ Անինկը կարող էր առանց միջնորդի գրել, թվում է, որ Ձեզ համար անարգանք էր իմ տողերը կարդալ) դա նույնիսկ ինձ համար շատ է ռեալ — նա ամաչում էր և որ ես նրա ամենամոտ մարդն եմ այս մոմենտիս (ուզենա՛ն-չուզենա՛ն՝ արդյոք մորալի օրենքները խախտվա՞ծ են). և Ձեր վերաբերմունքը ինձ ապշեցրեց — ուրեմն ես ստում էի, որ Անինկին ինքնասպան հուսահատության

են մղել, որ նրան ճնշում են ամեն ֆրոնտով, որ նույնիսկ պ. Կուտանյանը իր հնադարյան և հեղինակավոր ձայնն է բարձրացրել. և մի՞թե հասկանալի չէ Անիկի Ձեզ դիմելը, քանի որ նա հավատում էր (և ես էլ բաժանում <եմ այդ> հավատը) Ձեր բարեսրտությանը և կարեկցությանը. դա վիրավորվելու չափ հասկանալի է: Իսկ Ձեր օդան Ձեր զոքանչի ազատամտության նկատմամբ—դա արդեն ազգակցական տեսակետ է և мещанская мораль... Բայց դա Ձեր գործն է.—միայն ավելորդ չէ ասել, որ եթե իմ փոխարեն Անիկի մոտ նստեր մի բուրժուայի լակոտ կամ մի ինժեներ... խնդիրը այսպիսի ընթացք չէր ընդունի:

Ես վերջացնում եմ նամակս — նորից կրկնում եմ, որ խնայեցեք իմ ջղերը. ես շա՜տ եմ հիվանդ, և Ձեր շրջանը թող չզայրացնե ինձ, ես մարդ եմ հանգիստ դեպս և հանգիստ դեպս ոչ ցածր Ձեր բոլոր շրջանից, գուցե և շատերի համար և բարձր. Եվ կարող է պատահել, որ սարերի արծիվը մեկ-մեկ ավելի ցածր թռչի գիշակեր ագահ ագռավից, բայց չէ՞ որ ագռավը երբեք չի կարող սարերի արծվից բարձր կամ հավասար թռնի...

Եվ Բիսմարկի պես բռունցքը ասել է՝ որ «զայրացած կամ հուսահատված մարդը իրավունք ունի ուրիշի կյանքի վերա»... Դուք ի նկատի առեք, որ Ձեր զոքանչի շրջանը ջախջախել է իմ լավագույն տարիներս և երազներս, քերթել են իմ կաշին և ջղերիս բերանները բաց թողել... Եվ եթե ես վրեժի մարդ չեմ — այդ թույլ չի տալիս նրանց վարվել ինձ հետ ինչպես և առաջ — անվե՛րջ, անվե՛րջ զայրացնել: Եվ Ձեզ պես մարդիկ—<թող> մնամ աշխարհի դելիկատության, բարեկամության սահմանների մեջ:

Ներեցեք՝ ընդարձակ և շուտով պատասխանելուս. ամբողջ սրտով և հազար անգամ ներողություն եմ խնդրում, եթե այսպես կամ այնպես դուք վիրավորված լինեք իմ նամակից. Թող նույնիսկ վերջացած լինի մեր մեջ ամեն մի հարաբերություն, բայց իմ մեջ դեպի Ձեզ կա միշտ հարգանքի և բարեկամության զգացմունք:

Հարգանքներով՝ **Ավ. Խահակյան**

4 փետրվարի. 1905
Ալեքսանդրապոլ

48. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, փետրվարի 29, Թիֆլիս

Սիրելի Անիկ. գտնվում եմ նույն սենյակում և նույն գրասեղանի առաջ, Թումանյանի տանը, և ուզում եմ քեզ գրել, խոսել ձետդ, բայց զգում եմ, որ այն նախկին հավատով լի, առողջ զգացմունքը չի տաքացնում սիրտս դեպի քեզ, ինչպես այն ժամանակ:

Աստված թող դատե այն չար մարդկանց, որոնք ընկան մեր սրտերի միջև և խավար ու ցուրտ տարածեցին մեր մեջ. բայց այլևս չեմ կարող համբերել ես. այսուհետև ով որ վրստահանա մի դառն խոսք ասելու մեր մասին, ով որ իրավունք համարե մեզ իրարուց բաժանելու — ես կվարվեմ իմ ամեն չարությամբ ու կատաղությամբ, չպետք է թողնել մարդկանց, որոնք վատ են ու չար, ու նախանձոտ, ղեկավարելու մեր սիրտը, և Ձերոնք այդպիսի մարդիկ են: Որքան էլ որ քեզ սիրեմ և քու խաթրը պահեմ. բայց չեմ կարող ներել Ձերոնց, մանավանդ Տերտերյանին. այդ ի՞նչ վարմունք էր, որ նա ցույց տվեց. ես չեմ կարող իմ զայրույթս ու զզվանքս <չ>միացնել դեպի նա, և ինչ գնով էլ որ լինի՝ ես պիտի նրան գրեմ, այնպե՛ս գրեմ, որ ինքը իրենից զզվի ու ամաչե. բայց ինչո՞ւ եմ գրում այս քեզ — չգիտեմ, եղի՛ր ներողամիտ:

Անցյալ անգամվա խոսակցության միջոցին դու մի քանի խոսքեր ասիր, որ ինձ համար անսպասելի էին. չէի կարող հավատալ, որ այդպիսի տգեղ մտքեր կան քու գլխում. բայց դա քու հոգուց չէ. այլ քու շրջանի մտքերն է:

Ա՛խ, երբ պիտի լինի, որ մենք միառժամանակ ազատ, բոլորովին ազատ լինենք, իրար հետ. և խոսենք, լավ հասկանանք իրար. իհարկե, ինձ հեշտ է հասկանալը. որովհետև ես ասում եմ զգացածս, բայց դու՝ լուռ ու համր ես, և ծածկամիտ, մի բան, որ ինձ շատ է վիրավորում, ախր ես քեզ էն գլխից խնդրեցի, որ ինձ հետ միանգամայն անկեղծ լինես. բայց դու մանավանդ դեպի ինձ դեռ ծածուկ ես ու գաղտնապահ և սակավախոս. դու ինձ սիրում ես — ես չեմ կասկածում դրա մեջ, ասենք, որ և հավատում ես. բայց

ինչո՞ւ, ինչո՞ւ սիրտդ չես բանում իմ սրտի առաջ. մի՞թե չգիտես, որ քու սրտից բխածը գետին չի թափվի, այլ ուղղակի իմ սրտի մեջ. մեր սրտերը՝ երկու իրար հետ կապվող ծովերի պես պիտի լինին՝ իրար հետ միշտ խառնված ու հաղորդված. ի՞նչ է սերը և բարեկամությունը. դրան պատասխանում է Սոկրատես փիլիսոփան «մի հոգի երկու մարմնի մեջ»; Ուրեմն ես ու դու մի հոգի ու մի սիրտ պիտի լինենք. հասկացար:

Ես շուտով կդառնամ. մի կարևոր գործի համար եկա Թիֆլիզ. տուն գալուց համարյա անմիջապես հետո կգնամ մեր գեղը — մի փոքր պարապելու. այնպես որ աշխատիր ինձ տեսնել. ինձ գրած բոլոր նամակներդ հետդ կբերես. և մի քանի կտոր գիրք-բաներ կամ՝ կտանես, կկարդաս:

Հուսով եմ, որ այդպես կվարվիս, որովհետև մինչև Զատիկ էլ չենք պատահելու. գրածդ նամակները կամաց-կամաց կկարդամ և կմխիթարվեմ. Ա՜խ, ի՞նչ կլինի հիշատակարանդ տաս. դա հո ինձ շա՜տ կուրախացնի և այնպես կզգամ, թե քեզ հետ եմ, մոտս ես, ինձնից բաժան չես. թե չէ առանց քեզ՝ կարոտից շա՜տ կտանջվեմ. հոգուդ մեռնիմ, Աննիկ ջան, Հիշատակարանդ ու նամակներդ անպատճառ բերես:

Բարևներով՝
Քո՝ Ավետիք

29 փետրվ.
Թիֆլիս

49. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 5, Ալեքսանդրապոլ

Արդեն վերջին նամակդ շատ վիրավորական էր, դու թույլ էիր տվել ինձ մեղադրելու և ձերոնց սրբացնելու. այդ ես տարա, բայց ինչո՞վ բացատրել քու լռությունը, նույնիսկ հասարակ քաղաքավարությունը պահանջում էր հարգել մարդուն և նամակին պատասխանել՝ բայց դու՝ ինչ-որ ոչ

գեղեցիկ նպատակներով, անպատասխան ես թողնում այն մարդուն, որին հավատացնում ես, թե սիրում ես...

Անհիկ, ես սիրտ չունեմ, ինձ հետ մի՛ խաղա. արդեն մեր միջև եղած սերը թունավորված է. դու ամբողջ վեց ամիս ինձ տանջել ես՝ ձերոնց խոսքը ամեն բանից գերադասելով. դու լավ գիտես, որ ձերոնք ինձ չեն սիրում, և ես էլ նրանց. բայց ես չեմ մեղադրում քո մորը, քույրերին, փեսաներին ու քեռիներին և այդ տեսակ ապրանքներին, որոնցից ես շատ բարձր եմ, այլ մեղադրում եմ քեզ, որ մեր երկար ու բարակ բացատրություններից հետո դու չգնահատեցիր ինձ. ես խորապես վիրավորված եմ քեզնից և ինչ էլ որ լինի,— խզում եմ մեր մեջ եղած ամեն մի կապ.— դու ընդունակ չես բարձր ընկերակցության, և այն աղջիկը, որ ինձ չի հասկանում ու հավատում, վերջ ի վերջո արժանի է իմ արհամարհանքին:

Դու արդեն չափազանց մեղավոր ես, որ երկդիմի դիրք ես բռնել. ես պահանջում եմ — ի սեր ինձ զոհիր ձերոնց. և դու դրան ընդունակ չես. այլևս ո՛չ մի բացատրություն հարկավոր չէ. և այլևս ո՛չ մի նամակ մի՛ գրիր, հարկավոր չէ: Անիծում եմ ինձ, որ նորից ձեր դուռը եկա և արյունվելով՝ ետ եմ դառնում: Ներողություն, որ քեզ վշտացրի. մնաս բարև:

Ա. Խաչակյան

5 ապրիլի
Ալեքսանդրապոլ

50. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 7, Ալեքսանդրապոլ

Երեկվա գրած նամակներս շատ խիստ էին, և այսօր խիղճս չարաչար տանջվում է, և եթե վաղը Երևան գնալու չլինեի՝ կգայի Թիֆլիզ.— Բայց դու մտիր իմ դրության մեջ, Անհիկ, անշուշտ դու ինձ սիրում ես, բայց շա՜տ, զոհաբերության աստիճանի չես սիրում. իսկ ես այդպիսի սեր եմ պահանջում, որովհետև այդպիսի սեր ունիմ դեպի քեզ. և սիրո գինը սերն է. իսկ դու պոլիտիկա ես բանեցնում. մի

բան, որ իմ հոգում չկա. ինձ բոլորովին դուր չի գալիս, ես աղաչում եմ, որ դու լինես ինձի պես — պարզ, կովարար, անհամբեր, զայրացկոտ և ոչ խորամանկ, ես պահանջում եմ, որ եթե ինձ սիրում ես,— ոտքդ ամուր խփիր բոլորի առաջ — մոր, քրոջ, փեսայի և քեռու, և ասա, որ սիրում եմ, որ ձեր գործը չէ խառնվել իմ սրտի մեջ. իմ մոտ իմ սիրածի մասին ոչ մի խոսք՝ ոչ լավ, ոչ վատ. բայց դու այդ չես անում և թույլ ես տալիս, որ նրանք գցեն ինձ իրենց սրմբակների ու թաթերի տակ ու տրորեն և դու ինձ չպաշտպանես և թույլ չտաս ինքս ինձ պաշտպանելու. խոստովանվիր՝ մի՞թե քու խաթեր համար ես չեմ լռել մինչև այժմ, որ չեմ պատասխանել Տերտերյանին, Տեր-Միրաքյանին, մեծ քեռուդ և մյուս տիրացուներին, որոնք ամեն կերպ աշխատում են քո հավատը թուլացնել դեպի ինձ. չէ՞ որ ես այնպիսի անզուսպ և մրրրկալից հոգի եմ, որ բոլորին ջարդ ու փշուր կանեմ և չեմ թողնի նույնիսկ ստվերիս վերա մրրթմրրթան. և եթե նրանք քաջ են ու անվախ՝ թող դուրս գան և երեսիս ասեն իմ պակասությունները, բայց նրանք այնքան ստոր են, որ գաղտնի, չորս պատերի մեջ են կովում իմ հասցեով. ես արհամարհում եմ այդ խավար մարդկանց, բայց ես քեզ չեմ ներում, որ դու բացարձակ չես դնում հարցը և նրանց լռեցնում. եթե ես քո սերն եմ, քո իդեալը՝ թող այդ պարզ լինի աշխարհի և աստծու առաջ, և դու ասա, որոշ և հրամայողական, և բոլորը կլռեն. բայց դու ես տեղիք տալիս, որ նրանք հանդգնում են ոտնձգություններ անել մեր սիրո մեջ, մեր սիրո դեմ: Ես չեմ համակրում այն բոլոր խորամանկ միջոցները, որ դու ես գործ դնում, որ ապրելով քրոջ մոտ, ինձ չես ուզում համսկ գրել, որ լսելով մորդ՝ արգելում ես ինձ՝ Թիֆլիզ գալուս քեզ տեսնել. և ինձ մահացու մեղք գործող ես համարում, որ ձերոնց չեմ սիրում, և ստիպում ես ինձ հարգել ինձ հալածողներին. և առհասարակ, որ դու նրանց հնազանդվում ես՝ այնինչ դու պիտի հնազանդվես միայն քո սիրուն և իմ սիրուն. և քանի որ դու չես վարվում վերջին տեսակով, ուրեմն քո մեջ սերը զորեղ չէ. միահեծան, անխորտակելի չէ և ո՞ւր մնաց, որ աստվածային լինի. իսկ ես ուզում եմ տիեզերական, անհուն

սեր, որ ամբողջ տիեզերքի և միլիոնավոր մարդկանց մեջ միայն ինձ վերա հենվեր, ինձ հավատար և ապրեր ու մեռներ հանուն ինձ, և քանի որ դրա համար ուժ չունիս, դու չես կարող իմ երկինքը տեսնել և իմ հոգում սավառնել, և եթե ես խզում եմ իմ կապերը քեզ հետ՝ իրավունք ունիմ և տրամաբանական եմ վարվում, թեև դա անգթություն է իմ կողմից և ո՛չ քնքշություն, բայց անպայման՝ անկեղծություն և ազնվություն. որ եթե հիմա պիտի լաս, բայց հետո շնորհակալ կլինես:

Այժմ ես քու առաջ այս ու միակ ելքն եմ դնում — եթե դու ինձ սիրում ես, եթե ես քեզ համար անգին եմ և անփոխարինելի և քու իդեալն եմ, եթե ես քեզ համար բարձր եմ և՛ մորից, և՛ քույրերից, և՛ փեսաներից, այն ժամանակ դու հայտնիր ձերոնց այդ — քո սերը, և այն ժամանակ դու կլինես իմ հոգու թագավորությանը թագուհին. իմ հպարտությունը, իմ կյանքի գեղեցկությունը, և՛ սրբությունը, և՛ պոեզիան, և՛ արևը. այն ժամանակ ես քեզ համար կլինեմ քո պահապան հրեշտակը. քո անձնվեր, քո անձնազոհ ոգին՝ միշտ հավատարիմ, միշտ անդավաճան և միշտ աստվածային. սա ոչ թե պայման եմ դնում, այլ պահանջ՝ իմ սիրո պահանջը. սիրո գինը սերն է. և իմ սերը այդպիսի գին է պահանջում. ընդունակ ես այդ գինը տալու — մենք ընկերներ կմնանք ամենալավ մտքով հասկացած՝ (ամուսնության մասին ոչ մի խոսք) ո՛ւր էլ որ լինինք, ինչ էլ որ լինինք, բայց եթե այդպիսի խորություն չունիս, այն ժամանակ ես ոչ մի ցանկություն չունիմ քեզ հետ կոմեդիա խաղալու. դատարկ նամակներ գրելու. և թույլ, հասարակ, սովորական կապերով կապվելու. ես կարող եմ սիրելու՝ մահից զորեղ սիրով, և եթե չեմ գտնում այդպիսի մի սիրտ,— ես իմ սերս վերքի պես կպահեմ հոգումս և կընկնեմ թափառելու, մի՛ թող ինձ թափառելու, սիրիր ինձ աստվածներին վայել սիրով, պահիր ինձ քո հոգում, իմ լավ Անձիկ, և մղիր ինձ դեպի ճշմարտություն, դեպի բարձունքները, դեպի կատարելություն:

Սպասում եմ դրական պատասխանիդ, եթե բացասա-

կաև, մերժողական ես պատասխանելու՝ մի՛ պատասխանիր, լռությունը ավելի լավ է, քան անզգացմունք, անսեր տողեր...

Ա.վետիք

7 ապրիլի, 1905
Ալեքսանդրապոլ

51. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 14, Ալեքսանդրապոլ

Ես միայն երեկ երեկոյան դարձա Երևանից, Էջմիածնից և ստացա քո նամակը. ցավում եմ խորապես, որ վշտացրել եմ քեզ, բայց և ուրախ եմ, որ դրանով շատ բան կպարզվի մեր մեջ. առհասարակ. ես կովով, զոռով եմ քու բերնից խոստովանքներ լսել. ասա՛, սիրելիս, ասա՛, իմ հոգուս հոգի, ասա՛ ինձ, ինչ որ գգում ես, թող լեզուդ-սիրտդ միայն բաց լինի իմ առաջ. ուրիշների մոտ կեղծիր, ստիր, բայց իմ առաջ եղիր ծով՝ բացարձակ. աշխարհում ես եմ քեզ հարկավոր, ուրիշ մարդիկ դատարկ բաներ են. ամենից առաջ ես, հետո՝ ուրիշները:

Ես վաղը երեկո կգամ Թիֆլիզ. այնպես որ շաբաթ օրը կլինեմ այդտեղ. ո՞ւր քեզ տեսնեմ. եկ Дворцовая ул., այդ տեղերը, դումայի մոտերը, Սակաձեի կաֆեի մոտերը, թե չէ կուգամ քեզ մոտ, այդտեղ կպարզվինք, կբացատրվինք, և Քրիստոսի հարության հետ հարություն կառնի և մեր սերը. ես հավատում եմ դրան:

Քո՝ Ավետիք

14 ապրիլի, 1905
Ալեքսանդրապոլ

52. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, մայիսի 7, Ախալցխա

Անհիկ ջան, երազի պես են թվում ինձ մեր Թիֆլիզում անցկացրած օրերը — բայց ծանր և ճնշող երազ. մտքիցս չի հեռանում քու խիստ հայացքը, կախած ուսքերդ ու երկա-

րացրած քիթդ — ինչ-որ հարցական ձշաձի էին ձնման. և ես չէի հասկանում քեզ, և հիմա էլ չեմ հասկանում. իսկապես ի՞նչ կուզես ասել. այն, ինչ որ ասում ես — շա՜տ եմ անորոշ, մշուշային և փոփոխական. հոգիս շա՜տ էր վրդովված և վիրավորված դեպի քեզ, որ դու չէիր բացվում ու փովում ու փայլում և շառաչում ծովի պես իմ հոգու ւսռաջ՝ ինչպես արևի առաջ. դու վախենում ես ինձնից. դու քաշվում ես ինձնից, մի ինչ-որ անգիտակից կասկած կա մեջդ դեպի ինձ. մի անհավատ զգացմունք.— այս այնպես էր ինձ վըրդովում, որ ես ուզում էի այսպես կամ այնպես վերջացնել մեր մեջ այս անորոշությունը. կամ իրար մոտ, կամ հավիտյան բաժան. և ես դրա համար շա՜տ տեղիքներ տվեցի քեզ. առաջարկեցի քանի-քանի անգամ ձշանվել. դու և՛ ընդունեցիր, և՛ մերժեցիր. բայց վերջը մերժեցիր. և ես աշխատում էի գոեհկություններ անել — ծաղրել սեր, բարեկամություն, սիրտ, զգացմունք, որ դու երես դարձնեիր ինձնից, ինձ աչքիցդ գցեիր. հիասթափվեիր ինձնից, որ բաժանման դեպքում վիշտ, վերք չմնար սրտումդ... Չգիտեմ, դա հաջողվեց ինձ, թե ոչ...

Բայց ես էլ չեմ կարող քեզ հետ այդպես վարվել. գոհիկ վարվել. այդ դիմակը ինձ չի սազում. և պետք է լինեմ ինչպես որ կամ. և ի՞նչ լինում է, ի՞նչ պիտի դուրս գա, թո՜ղ լինի, թո՜ղ դուրս գա. վայ թե շատ վնասվինք. կրակի հետ չի կարելի խաղալ...

Ուղիղն ասած՝ իմ հոգու խորքում ես դեպի քեզ մի շա՜տ քնքուշ, մի շա՜տ մանկական ու կապույտ՝ երկնագույն զգացմունք ունեմ՝ միշտ, մշտավառ և կուզեի այդ տևեր՝ առանց փոխվելու. կուզեի քեզ սիրել՝ առանց տիրապետելու, առանց այս աշխարհի մասից ունենալու. պարզ ասած՝ կուզեի քեզ միշտ սիրել՝ և չամուսնանալ հետդ, բայց և զգում եմ, որ սա անխղճություն կլինի իմ կողմից. մարդիկ ուրիշ կերպ կբացատրեն և կյանքում կտուժես՝ իմ պատճառով, չարաչար. ես ինքս չգիտեմ՝ ինչ եմ անելու. թողնում եմ քո վճռին. արա՝ ոնց որ ուզում ես — մեղքը քու վիզդ — կուզես կամուսնանանք, կուզես՝ չէ. կուզես բաժանվինք... ես կարող եմ ժամանակով վերքերս բժշկել. բայց դո՜ւ... շատ եմ վա-

խեղում... լավ խորհիր. աստված է վկա, ես քեզ խաբելու ոչ մի միտք չունեմ. քեզ սիրում եմ և կուզեմ քեզ լավ և բախտավոր տեսնել:

Նամակս վերջացնում եմ. շատ ուշ գիշեր է և շատ հոգնած եմ. դեռևս մի քանի օր կմնամ այստեղ. բայց գնալու եմ Աբաստումանի. հուսով եմ, որ վերադարձիս քեզ Թիֆլիզ կտեսնեմ՝ ավելի որոշ. հանգիստ, ուրախ և մեղմ.— շատ ես խիստ ու չոր, շատ ես փիլիսոփայություն անում, շատ ես գլխիդ զոռ տալիս. և չես լսում սրտիդ ձայնին, որ ավելի խելոք է և առողջ՝ քան զանազան երևակայական վեպերով տանջված ուղեղդ. սա չեմ գրում քեզ վիրավորելու համար, այլ սրտանց ցավում եմ. դու դեռ պիտի բժշկվիս. դու առաջ պիտի մի լավ բժշկվիս ջղերովդ, հոգովդ և ֆիզիկապես. քիչ կարդաս, շատ ուտես, շատ շրջես. հանգիստ քնես. լողանաս և ուրախ անցկացնես:

Բարի գիշեր. համբուրում եմ սիրելի Աննիկիս ձեռքերը:

Քո՝ **Ավետիք**

7 մայիսի, 1905
Ախալցխա

58. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, մայիսի 15, Ախալցխա

Ամենասիրելի Աննիկ ջան,

Եթե գիտենայի, թե երկար մնալու եմ այստեղ՝ հասցե կըտայի ու կգրեիր. այնպես լա՞վ կարոտցել եմ քեզ. մի երկու օրից հետո կվերադառնամ: Իսկ ասիգի՛ն, իմ պայծա՛ռ Աննիկ ջան, իմ ընկե՛ր, իմ մաքուր սե՛ր — ասա, ի՛նչ որ կուզես՝ ես կատարեմ քեզ համար. ամենադժվարին բաները, անկարելի բաները. մեռնել քու երազների համար. դու իմ շքե՛ղ, իմ զուլա՛լ երազ... Եղիր միշտ այդպես լա՛վ, այդպես մաքուր, այդպես կուսական. թող ոչ ոքի շունչը չդիպչի քեզ,

ոչ ոքի ձեռքը չհասնի քեզ — և իմ, և իմ, դու երկինք եղիր իմ հոգու համար՝ ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քու կապույտ, քու լազուր, քու ջինջ հոգում: Սիրիր ինձ, քու աննման Ալեքսիքին:

15 մայիս. 05 թ.
Ախալցխա

54. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հունիսի 25, Ալեքսանդրապոլ

Սիրելի Աննիկ ջան, այսօր որոշել էի գալ այդտեղ, թե՛ գործ կար և թե՛ քեզ տեսնելու. բայց եղան հանգամանքներ, որ արգելք հանդիսացան. սակայն անպատճառ գալու եմ մյուս շաբթու՝ ինչ էլ որ լինի. շատ կարոտել եմ քեզ. մտածում եմ, եթե մենք իրար սիրում ենք, ինչո՞ւ հեռու մնանք իրարից, կարոտով մնանք, տանջվինք, ինչո՞ւ ավելի պայծառ, երջանիկ, զվարթ չապրել՝ երբ կարելի է. հավատա, հոգիս, որ այստեղ լինիս, ես ավելի եռանդով կգործեմ, իսկ հիմա մտածում եմ, ոնց անեմ, որ քովդ մի կերպ ինձ գցեմ... Հետո դու ի՞նչ ժլատ ես նամակներ գրելու մեջ. ինչ կլինի, որ ամեն օր, գոնե օր մեջ գրես. նամակներով մարդու հոգին հանգստանում է, թե չէ շարունակ այն եմ մտածում, որ դու կամ հիվանդ ես, կամ շատ տխուր... Իմ տրամադրությունս շատ վատ է, ո՛չ գրել եմ կարողանում, ո՛չ կարդալ. ամբողջ օրը ոտքի վրա չլվում եմ դես, չլվում եմ դեմ. երբ պիտի գա աշունը, որ հոգիս ազատեմ այստեղից՝ գնամ արտասահման կամ մի խաղաղ վանք. սիրտս հանգստություն է ուզում, արտասվել է ուզում, տխուր երգեր, և նույնիսկ մեռնել եմ ուզում: Ա՛խ, Աննիկ ջան, լինեի մոտդ, գըրկեի քեզ, լայի, համբուրեի և մեռնեի...

Քո՝ Ալեքսիք

25 հունիս, 1905
Ալեքսանդրապոլ

55. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հոկտեմբեր 14, Ալեքսանդրապոլ

Սիրելի Աննիկ, քանի օր է՝ ուզում էի նամակ գրել, բայց չէր հաջողվում. շաբաթ երեկո երեկույթ կար. մնացինք մինչև լույս, կիրակի և երկուշաբթի մինչև լույս՝ հարսանիք, իսկ այս երկու օրս էլ՝ քնհատ... Հիմա ուշ գիշերին նամակ եմ գրում, և հոգնած եմ, և քունս տանում է: Հոգնած եմ, և հոգով հոգնած. այս հարսանիքը ինձ մտածելու շատ նյութ տվեց և շատ տխուր եզրակացության հասա — ամուսնությունը շատ ստոր, շատ խայտառակ, հիմար, ամբոխամիտ բան է. երանի այն սրտերին, որ կարող են մաքուր սիրել, և միշտ այդպես սիրել. սերը, որ մղում է դեպի ամուսնություն՝ դա վատ, անասնական սեր է. այն սերն է բարի ու վեհ, երբ մարդուն թռցնում է դեպի երկինք, ազնվացնում, կրթում է մարդու հոգին. ավելի լավ է հանգչի սերը դրսեվում, ինքն իրեն, քան թե ամուսնության մեջ. դու շատ խելոք ես մտածում, որ չես ուզում ամուսնանալ, բայց այս էլ է պարզ՝ որ չես կարող չամուսնանալ. դու այնքան բուռն ես սիրում, որ կամա-ակամա պիտի ընկնես ամուսնության թակարդը: Կարո՞ղ ես դու ինձ պահել բարձրության վրա և կուսական հեռավորության վրա — չթողնել, որ ընկնեմ, ընտանիքի մարդ չդառնամ, որ բացի իրեն բնից ուրիշ բանի մասին չի մտածում, որ ձեղանում է և եսական դառնում. կարո՞ղ ես հոգիս միշտ թարմ ու սավառնող պահել. թե՞ պիտի կապես-կաշկանդես և փշրես թևերս. ա՜խ, սիրիր ինձ, բայց մի՛ տիրիր. անհագ որոնիր մի վեհ ընկերի, սիրիր, բայց սիրուն մի՛ լինիր գերի. սիրիր, բայց և թո՛ղ և նորից գնա... Երանի նրան, ով ձգտում է դեպի աստղերը. երանի նրան, ով սիրում է և չի հասնում, ով միշտ թափառում է ու չի գտնում... Աննիկ ջան, հոգի ջան, ես տեսնում եմ, որ հոգիս շատ է վիրավորված, և որ քեզ նույնպես շատ մեծ վիշտ պետք է պատճառե. մեր սերը թող լինի ոչ այս աշխարհից. հողեղեն չլինի. սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռո՛ւ, իրար սրտի մեջ...

Մի՛ աշխատիր ինձ տիրել. մեռցրու այդ նյութեղեն սերը, հոգով սիրիր, մտքով սիրիր... երազով սիրիր: Բայց հենց որ նյութով սիրես — կորած է ամեն ինչ, այլևս չի մնա քո Ավետիքը. կդառնամ աչքումդ մի հասարակ մարդ. և ոչ կատես, ոչ կսիրես... Սիրիր ինձ, և հանուն այդ լավ սիրո թող ես թռնեմ, թափառեմ, առանձնանամ, մտածեմ, լամ, հոգի դառնամ... խեղճ, իմ խեղճ Անհիկ, կարծում եմ, որ չես կարող տանել այս — դու ուզում ես ինձ միշտ մոտդ ունենալ. չէ որ գրեցի քեզ. իրարուց հեռու, իրար սրտի մեջ... Միշտ երազ, միշտ իդեալ, միշտ երկինք լինենք իրար համար. հեռավո՛ր, բարձր, լազուր, մաքուր... թող կորչի ամուսնությունը, ամուսնական ճահիճ-մահիճը... Մենք ծրնված ենք ավելի բարձր բաների համար. զգվում եմ ամուսնությունից, գիտակցաբար այդպիսի քայլ երբեք չեմ անելու...

Ա՛խ, հոգի ջան, չգիտեմ հիմա ի՛նչ ես զգալու, երևի կանիծես, որ հարսանիք գնացի, ով գիտե, գուցե ժամանակով տրամադրությունս փոխվի, բայց այս օրերս՝ շատ եմ վատ. լալ եմ ուզում, անապատ գնալ, վանք քաշվել, ճգնել ու լա՛լ, և լա՛լ...

Շարունակությունը գրում եմ առավոտյան.— ի՛նչ ես անում, ո՛նց ես անցկացնում օրերդ. իմ գնալուց հետո քեֆդ ո՛նց է. ես դեռ անորոշ ժամանակով այստեղ եմ. գուցե գնամ Ախալքալաք. դեռ հայտնի չէ. այստեղ էլ մարդու կարիք կա, այնտեղ էլ, չգիտենք ո՛ւր հասնենք: Հարսանիքում ես և Հովհ. Տեր-Մարտիրոսյանը միասին կանգնած էինք. մայրիկդ եկավ նրան բարևեց, բայց ինձ չբարևեց. նույնպես վարվեց և Սանդուխտը... Վերաս շա՛տ վատ ազդեց՝ եթե դու չլինեիր՝ կապտակեի նրանց... Նրանք թող պատիվ համարեն, որ ձեռքս բռնում եմ... Սպասում եմ նամակիդ:

Քո՝ **Ավետիք**

14 հուլիս, 1905
Այեքսանդրապոլ

56. ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, օգոստոսի 4, Ախալքալաք

Սիրելի Աննիկ, ես ընկատում եմ, որ դու ինձ թարս ես հասկանում, և չգիտեմ ինչպես վարվեմ քեզ հետ. աշխատում եմ ամեն կերպ լավ, անկեղծ և սիրով վերաբերվել քեզ հետ... Բայց դու, դու, որ հիվանդ ես ջղերովդ և կասկածամիտ, և չգիտեմ ինչ, ուրիշ տեսակ ես մեկնում. ինչպես հասկանալ քեզ, ինչպես վարվել քեզ հետ. սիրու՞մ ես ինձ.— սիրում ես, լա՛վ գիտեմ, և այդ սերը պիտի քեզ բերե կամ ինձ մոտ — իմ գիրկը, մենք պիտի ամուսնանանք, կամ պիտի հեռացնե քեզ ինձնից՝ հոգիդ այրելով դառն վշտերով. ընտրիր երկուսից մեկը. իսկ ես տեսնում եմ, որ ոչ մեկը չես կարող ընտրել. ուրեմն ես ի՞նչ անեմ... Եվ ես քեզ բարիք և հանգստություն կամենալով՝ առաջարկում եմ ինձ մոռանալ. ինձ մոռացիր, որովհետև դու չես կարող կապվել ինձ հետ. ամուսնանալ դու ոչ կարող ես, ոչ էլ ուզում ես. իսկ ընկերական, մտերմական սեր, որը և՛ ես եմ ուզում, և՛ դու՝ դա չես կարող դու շարունակել՝ շնորհիվ քո ընտանեկան՝ քեզ շրջապատող պայմանների. դու ուզում ես միշտ մոտս լինել. ես քեզնից անբաժան լինեմ. չգնամ հեռու կամ արտասահման. դա ի՞նչ կնշանակե. դա կնշանակե՝ ուզում ես իմս լինես՝ հոգով և մարմնով, որոշիր, վճռիր. և վերջացած կլինեն թե՛ քո տանջանքները և թե՛ իմ. ուրիշ կերպ, ոչ մի կերպ. ես ազատ մարդ եմ. ես պիտի թռչեմ, պիտի գնամ. աշխարհից աշխարհ. իսկ քո հոգին պիտի դուրս գա, ուրիշ բան է, եթե դու ազատ և զորեղ կամք ունենայիր և ջղերով առողջ լինեիր... Այս խնդրի մասին մտածիր լուրջ և երկար:

Քեզ հեռագիր խփեցի, որովհետև տեսա, որ նամակներիս չես պատասխանում, վախեցա, թե հիվանդ ես, այնինչ դու վիրավորված ես երևում. վիրավորված ես իմ նամակներից. իմ առաջարկներից. ա՜խ, Աննիկ ջան, ես ոնց անեմ. սկզբում դու էիր ասում, թե՝ ընկերներ լինենք, ընկերներ մնանք հավիտյան. և ես ասում էի՝ թե չի կարելի, հիմա նույնը ես եմ ասում — ընկերներ լինենք, դու վիրավորվում

ես... Ուրեմն՝ վճռիր, նշանվինք, և վերջանա այս ձանձրալի դրությունը:

Ես ատում եմ ամուսնությունը, բայց քեզ հետ տանելի կլինի. և մանավանդ որ դու ինձ շատ ես սիրում. և որ ես չեմ ցանկանա ուրիշի սիրտը փշրել. օ, ի՞նչ պիտի լինի քո հոգեկան հալը՝ երբ որ ինձ ասես, իրավունք տաս, թե գնա, ում կուզես առ, և ես էլ գնամ մի ուրիշին առնեմ, մի՞թե դու չես խելագարվի...

Ես դեռ մի 15—20 օր կմնամ այս կողմերը, հետո կդառնամ տուն. դու ինձ մի որոշ, մի մեծ նամակ գրիր՝ տեսնենք ի՞նչ ես մտածում. տրամադրությունդ ոնց է. դու ի՞նչ ես ուզում, ի՞նչ չես ուզում, գրիր տեսնենք. նամակս գրում եմ՝ շատ հիմար, շատ հոգնած տրամադրությամբ, հոգնել եմ այստեղից. գլուխս ուռել է աղմուկներից և գործերից. բայց հեռանալ չեմ կարող. մի քանի օր առաջ մի դեպք պատահեց, քիչ մնաց սպանվեի՝ ինձ հետ և մի ուրիշ ընկեր. շրջապատվեցինք ավազակներով և սկսեցինք իրար վրա հրացան արձակել. նրանք շատ-շատ էին, իսկ մենք՝ երկուսս, բայց մեր դիրքը լավն էր, բարձր, բայց հանկարծ հասան մեր ընկերներից վեց հոգի՝ զինված, և փախան ավազակները, մի ավազակ ծանր վիրավորվեց և մնաց. բռնեցինք նրան. երեկ մեռավ նա: Իմ ձին՝ տակս, գնդակով սպանվեց... Էլ բան չի պատահի, հիմա, որ դուրս գամ սարերը՝ շատվոր կլինենք.

Համբույրներով և բարևներով՝

Քո՝ **Ավետիք**

4 օգոստոսի, 05 թ.
Ախալքալաք

57. ԱՆՆԱ ՄԱՏՍԿՅԱՆԻՆ

<1905>

Սարսափելի ծանրացած սրտով գրում եմ այս տողերը և Աստված է վկա, որ էլ չեմ գրելու. կասեմ, կարտահայտեմ, ինչ որ կա սրտիս մեջ դեպի քեզ և [եթե ուզում ես] — կբաժանվենք:

Ո՞վ եմ ես.— ես վեհափառ սարերի արծիվ եմ, ես կայծակ եմ մռայլ ամպերի մեջ, ես առյուծ եմ անապատի մեջ, և փոթորիկ ծովերի վրա. իմ հոգին՝ տիեզերքի չափ մեծ՝ ամբողջապես բանաստեղծություն է. ես բանաստեղծ եմ. ժամանակի և ժողովրդի հոգու տերը ես եմ. ամեն ինչ կմեռնի՝ հարստություն, գանձ և գահ, բայց ես [կմնամ] անմահ եմ և որքան էլ իմ [ներկա] պայմանները ծանր լինեն, ես գրանիտի պես կմնամ և ցույց կտամ իմ մարգարեական-բանաստեղծական անմահ հոգին. արևի պես կայրվիմ ու լույս կտամ, ջերմություն կտամ. ես հավատում եմ իմ ուժերին, և ամբողջ հայ ժողովուրդը հավատում է ինձ. ո՞վ չէ ինձ հավատում: Ձեր շրջանը, որը իմ ստվերը չարժե. ո՞վ չէ ինձ հավատում — մայրդ՝ մի հին կին, որ իր շեմքից հեռու չի տեսնում, որ խորապես <վիրավորում> է, որ ինձ Շուշիկի ժամանակ վռնդել ես ու ծաղրել, իսկ հիմա կանգնում եմ աշտարակի պես. Տեր-Միրաքյան Հովհաննեսը — մի խեղճ մարդ, Կ. Կոստանյանը՝ մի մքլած, փթած տիրացու, որոնք իրենց երևակայում են, որոնց ժողովուրդը չի ճանաչում... Կ. Կոստանյանը — ինչպե՞ս կարող է նա հաշտ նայել իմ գոյությանը,— ես, որ նրա աչքում՝ նրա ասելով միայն չոբան կարող էի լինել, այժմ նա մնաց միայն [վանքի փղշրանքների <...>] վարդապետների աչքում համարում ունեցող, իսկ ես դառա մի մարդ, որին գիտեն, որով պարծենում են [և դու ինձ չես ճանաչում]. և ես իմ բարձունքից իջել եմ քու մոտ, քեզ հետ համեստորեն ընկեր եմ դառել. համբերում եմ քու երեխայական մտքերին, պատասխանում եմ քու հարցերին... և դու այնպես ես վարվում ինձ հետ, կարծես մի հասարակ մարդ լինեմ, մի ուսանող լինեմ, որոնց հազարի կյանքը՝ իմ մի օրը չարժե. այնինչ դու պետք է անսահման ուրախ լինեիր, ամենաերջանիկ մարդը [աշխարհքի վրա] բոլոր մարդկանց մեջ, որ ինձ գտար,— դու պիտի գլուխդ բարձր բռնած—հպարտորեն շրջեիր մարդկանց մեջ, որ ինձ պես ընկեր ու սեր ունես. դու բոլորի առաջ՝ մրրիկների ու մարդերի առաջ պիտի պաշտպաներիր ինձ ու մեռներիր ինձ համար... և ինձ տեսնելով, արևի պետքը չպիտի զգայիր դու, և ինձ կորցնելով՝ աշխարհը կորցրած պիտի զգայիր քեզ... Բայց այս ամենից ոչինչ չկա, դու նազ ես

ւանում, լարում ես քու հիմար կապրիզները... որովհետև, որովհետև դու ինձ չես սիրում, և չես կարող սիրել. իսկական սիրո համար քու սիրտը շա՜տ է մանր ու երեխայական, ծով չի տեղավորվի այնտեղ. և մի մոր, կամ մի սադայելի <!> հիմար խոսքը կարող է դատարկել սիրտդ սիրուց... Մենք հարմար չենք իրար. դու շուրջդ նայիր, և շա՜տ կգտնես քեզ հարմարներ — ամեն տարի [հարյուրավոր] տասնյակ ուսանողներ ամաոը կուգան. որին բռնես՝ գոհ կլինես. ես քու երևակայած հերոսը չեմ, և ինձ պատիվ կբերե այդ, որ քեզ պես մի երեխա<յական>, փոփոխամիտ սրտի իդեալը չեմ... Ավելի լավ...

Դու չար սիրտ ունես — Ծուշիկի պես. նա ինձ անսահմանորեն տանջեց, բայց տարիներ հետո ներողություն խնդրեց ու զղջաց, բայց այն ժամանակ ես երես դարձրի նրանից՝ հայհոյելով նրա ներքին էությունը. ես խաղալիք չէի նրա ձեռքում. ես մարդ էի՝ ուժեղ և բարձր, իսկ նրա ամուսինը... Չարժե հիշել նրանց մասին, և հիմա էլ դու ճիշտ և ճիշտ նույն խաղն ես խաղում ինձ հետ. ի՞նչ է, շա՜տ ստորացա քեզ մոտ, որ խոստովանեցի, թե սիրում եմ. չէ՜ որ միայն զորեղ սերը լեզու ունի, և սրտից թռնում է դուրս՝ ինչքան էլ ուզենաս ծածկել, և փոխանակ իմ ծովածավալ սերը պաշտելու և երկրպագելու ինձ, դու ջղայնիր խաղ ես դարձնում մեր զգացմունքները, մի օր այսպես ես ասում, մի ուրիշ օր՝ այնպես. երբեմն մի ժամում մի քանի տեսակ. ես ժամանակ և համբերություն չունեմ այս սրտի խաղը տանելու. իմ ժամանակը թանկ է, կյանքս օգտակար, և ինձ հարկավոր է հոգեկան, սրտի հանգստություն և մխիթարություն, իսկ դու՝ կատվի պես, որքան փիսո-փիսո եմ անում, դու այնքան ավելի ջղայնիս ես դառնում ու անհնա ճանկոտում իմ սիրտը... Որքա՞ն համբերեմ. ինձ թվում է, որ իմ սիրելով դու երես առար, և հիմա ինձ բանի տեղ չես դնում. իմ սերը, իմ երազները... Այդ քու հասկացողությունից բարձր է և անմատչելի. քու մեջ իմ սիրո ոչ միայն մի հազարերորդը, այլև ստվերը չկա. դու չգիտես սիրել մարդու. քու սերը սուր է ու թույն է. դու կարող ես միայն մարդու ցավ ու վիշտ պատճառել, այնինչ սիրո հոգեբանությունը այն է, որ սիրածին որքան կարելի է շատ երջանկություն,

գուրգուրանք ու գորով ցույց տա<լ>. քու մեջ ոչ մի քնքշություն չկա... և ինչպե՞ս իմ կույր բախտն է, չար աստղս և դաժան ճակատագիրս, որ մի անգամ ճակատս պատռվեց ձեր անմարդասեր տան շեմքին, և տարիներ հետո, աշխարհներ անցնելուց հետո, հարյուրավոր խելացի և գեղեցիկ, և զարգացած աղջիկներ տեսնելուց հետո, նորից եկա և ճակատս խփեցի ձեր նզովված դռանը. մի՞թե որոշված է, որ ձեր տունը պիտի լինի իմ կորստյան պատճառը, իմ գերեզմանը. ո՛չ, ո՛չ. Ավետիքը չպիտի մեռնի. նրա կյանքը նպատակ ունի. նրա ամեն մի օրը մի ամբողջ կյանք է և բովանդակություն, և թո՛ղ տանջվի նա ու տառապի, վերջը կհաղթանակե:

Ինչո՞ւ եմ գրում այս տողերը քեզ. ո՞վ ես դու, ինձ ի՞նչ կարող ես տալ. ինձ թվում էր, թե դու իմ իդեալը՝ կնոջ, մի քնքուշ ընկերի իդեալը կարող ես լինել... Բայց մի՞թե այդպես <է>. այդ դու լավ գիտես, որ բացի ինձ տանջելուց, ուրիշ ոչինչ չես անում. քեզ մի 5—6 նամակ եմ գրել, և ամենքի մեջ ասել, խոստովանել իմ սերը, իմ հաստատակամությունը, իմ անձնվիրությունը, իսկ դու այդ բոլորը համարում ես եղած-չեղած, և լսում ես ձեր շրջանին. ոչխարներ և անբարոյական մարդիկ են ձերոնք. ես արհամարհում եմ նրանց, և եթե դու լսում ես նրանց՝ արհամարհում եմ և՛ քեզ. գնա՛, հեռացիր ինձնից. քեզ համար այլևս Ավետիք չկա. դու չես կարող ապրել նրա երկնքում, դու երկրի ծնունդ ես. նա չի կարող ապրել քու հոգում՝ դա հասարակ կնոջ մի խորամանկ և կապրիզնի դժոխք է. չես կարող հասնել Ավետիքին, չես արժանի նրա սիրուն.— նա քեզ համար կյանք էր զոհում, իսկ դո՞ւ — ո՞վ ես դու... Դու արժանի չես նրա սուրբ հոգում ապրելու. քու տեղը մի վաճառականի, կամ մի ինժեների զզվելի [սիրտն է] գիրկն է... Քեզ համար այլևս Ավետիք չկա. շա՛տ քշա՛, քշա՛ արիր, և նա թռավ վայրենի արծվի պես և հեռացավ, ցնդվեց չքնաղ և գերերկրային [երազը] ցնորքը և դու մնացիր մորդ գրկում, բարեկամներիդ մեջ, որոնց մեջ ամեն բան կա, բացի սեր և ազնվություն... Անցավ ոսկի արևը. եկավ գիշերը, և չկա երազդ, չկա Ավետիքը. նա վեհափառ սարերի արծիվ է. նա կայծակ <է> մռայլ ամպերի մեջ... նա բանաստեղծ է, ստեղ-

ծագործող է. ահա՛ նա փշրեց իր կուրծքը, խրեց մատները, հանեց քո սերը իր սրտի միջից, և շպրտեց շան ու գիլու առաջ. ահա՛ նա ազատ է հիմա՝ ինչպես ալիքը ծովում, բարձր է նա, ինչպես Հիմալայի լեռնագագաթը. նրա ճանապարհը սխալմամբ եկավ քեզ մոտ. նա սխալմամբ բախեց քու դուռը, քու սիրտը. շա՛տ լացեց և տառապեց, բայց չմեռավ — ահա նա թռնում է հոգու և մտքի, և գեղեցկության, և ստեղծագործության, և աստվածության ադամանդային, երկնահուպ լեռնագագաթները:

Դու մեռար նրա համար. արդյոք ինչպե՞ս պիտի հարություն առնես. արդյոք կարո՞ղ ես հարություն առնել. արդյոք ուզո՞ւմ է նա, որ հարություն առնես<...>

Ավետիք

58. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

4 օգոստ<ոսի>, 1906, Ղազարապատ գյուղ

Մեծապատիվ պարոն պրոֆեսոր,

Ձեզ խոստացել էի, կարծեմ Մխիթար Անեցին, բայց դուրս եկավ, որ այդ չունեմ, այլ՝ Սամուել Անեցին. համենայն դեպս, գուցե հարկավոր լինի:

Ուղարկում եմ և՛ Աբրահամ կաթողիկոսը:

Ընդունեցեք հարգանքներս և ողջույններս՝

Ավետ. Իսահակյան

59. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Թիֆլիզ, 23 հոկտմբերի, 1906

Թյուրիմացությունների տեղիք չտալու համար հայտնում ենք, որ մենք աշխատակից չենք պ. Գր. Բալասանյանի խմբագրած թերթին, այնինչ հարգելի խմբագիրը, չգիտենք

ի՞նչ իրավունքով, առանց մեզնից համաձայնություն առնելու, իր նոր լույս տեսած «Զարկ» թերթի առաջին համարում տպագրել է մեր մի հին ոտանավորը՝ առանց հիշատակելու գոնե՝ ո՛րտեղից է վերցրել:

Ա.վ. Իսահակյանց

60. ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ

Հարգելի կոլեգա
տ. Շուշանիկ,

11 հոկտ<եմբերի>, 1907, Թիֆլիս

Թերթիս խմբագրությունը իմ միջոցով խնդրում է Ձեզ, որ աշխատակցեք թերթին՝ ոտանավորներով և արձակներով, և որոշ հոնորարով, որը ստանում ենք և մենք. հուսով <եմ>, որ չեք ծուլանա և նյութ կուղարկեք: Ավելորդ չի լինի ասել, որ Ձեր նկարը ստանալուց հետո մի նամակ գրեցի, որը, անշուշտ, ստացած կլինիք.

Բարևներով և հարգանքներով Ձեր՝ Ա.վ. Իսահակյան

61. ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկ. Շուշանիկ,

11 դեկտեմբերի, 1907, Թիֆլիս

Ինձ թվում էր, որ գրքույկդ ստանալուց հետո անմիջապես պատասխանել էի Ձեզ, բայց երևում է, որ մոռացել եմ. շատ շնորհակալ եմ, որ իսկույն ուղարկել էիք. ես գրախոսություն չեմ արել, հուսալով, որ մի ուրիշը անի, որից մի բան սովորեք, թե չէ իմ կարծիքը կարող եմ և գրել Ձեզ: Շուտով գրող կլինի: Ոտանավորներդ հերթով տպվում են. «Էտապը», որ ամենալավն է, հրաշալի բան է, պահում եմ

ծողովածուի համար, որ հունվարին պիտի լույս տեսնի, իսկ «Պրոլետարիատի երգը» վտանգավոր է հիմա տպելը: Ուղարկեցեք նոր բաներ:

Հարգանքներ և բարևներ, Ձեր՝

Ավ. Իսահակյան

62. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1908>*, 13 ապրիլի, Ալեքսանդրապոլ

Սիրելի Գարեգին,

Շնորհավոր Զատիկդ:

Տնաշե՛ն, կես ամիս է «Գեղարվեստը» լույս է տեսել, երեսը չտեսանք. անշո՛րթք, չէի՞ր կարող ղրկել մի օրինակ. խնդրում եմ իսկույն ղրկես, թե չէ շա՛տ կնեղանամ-սպասում եմ:

Քո՝ **Ավ. Իսահակյան**

63. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1908>, ապրիլի 21, Ալեքսանդրապոլ

Սիրելի Օհանես,

Շնորհավոր Զատիկդ. լսեցի, որ տեղ ես գնալու. թե գնում ես՝ բարի ճանապարհ, թե մնում ես՝ մնացի՛ր խաղաղությամբ:

Ուզում էի մոտ օրերս Թիֆլիզ գալ Լեոյի տոնին ներկա լինելու, բայց որ հետաձգած է՝ ուստի վաղը-մյուս օրը մեկնում եմ Էջմիածին, գնում եմ Դվին պեղումները տեսնելու, և Այրարատի սրբազան դաշտի սոսիների փթթումը տեսնելու:

Լեոյի տոնին կհասնիմ այդտեղ. հետո որոշենք՝ մարշ-

* Ըստ փոստակնիքի

րուտ կազմենք թափառելու՝ գնանք Լոռի, Սևան, Ալագյազ, Անի, Մրեն:

Բարևներ տիկին Օլյային, տերտերին, Մուշեղին, Աշխենին, Նվարդին և մյուսներին:

Համբույրներով՝ քո **Ավետիք:**

Բարևիր Լեոյին, Լևոնին—Շանթին:

64. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1908, 20 հունիսի, Ղազարապատ

Սիրելի Օհաննես,

Վաղուց է՝ ուզում էի քեզ գրել, բայց քանի որ դու չես պատասխանում, իմ ձեռքն էլ թուլանում է:

Սա գրում եմ, իմանալու համար, թե ո՞ւր պիտի գնաս ամառս, և ձերոնք ո՞ւր գնացին: Մուշեղն ու Աշխենը խոստացան ինձ գրել Դսեղից, որ գամ ինձ հյուր՝ տանեմ Անի: Նունիկը, Արտիկը և Համլիկը — այսքանը բավական է, բայց նրանցից էլ նամակ չունեմ:

Ես արդեն տասը օր է գյուղումն եմ. սուսուփուս, պոչս քաշած պարապում եմ-կարդում եմ, քան թե գրում. տրամադրությունս, ինչպես միշտ, հիմա էլ վատ է. անհրավ հեղեղն էլ թե շատ վնասեց մեր քաղաքին և թե տրամադրությանս վրա վատ ազդեց, թեև դա ցույց չեմ տալիս:

Տեսնում եմ, որ եթե այս գյուղական անկյունն էլ չունենայի՝ մի գազազած գազան պիտի դառնայի, գոնե այստեղ ամեն բանից հեռու—լրագրություն, հայկական հիմար իրականություն, դաշնակցական ընկերներ, և այլն, և այլն՝ նրանցից հեռու ապրում ես քո բոժոժի մեջ և տեսնում ես, թե շուրջդ որքան դատարկ է, կեղծիք է, և մարդ, իսկապես, մենակ է...

Ուզեցա ես էլ ձայնակցել քո առաջարկած գրական ֆոնդին, բայց այս օրերս այնպես եմ ատում հայություն, հայ ժողովուրդ, հայկական ապագա,— որ սիրտս խառնում է դրանց մասին մտածելը: Ես ապրում եմ հիմա բացառապես

անցյալով (ոչ թե իմ անմիտ անցյալով), այլ հին ազգերի՝ История Ассирии, Индии, Халдеи Мидии — շա՜տ եմ խոբատուզվել Զորաստրի և Բուդդայի վարդապետության և կյանքի մեջ:

Էլ ի՞նչ գրեմ. արդյոք բան-ման եղավ գրական ֆոնդի հարցերի շուրջը:

Շանթը տեղ հասա՞վ:

Աղբալը ո՞նց է զգում իրեն պաշտոնում:

Դերենիկից նամակ կա՞:

Ինչպե՞ս է Աղայանի քեֆը. այդ ի՞նչ Քյոռ-օղլի է լույս բերել:

Գիրքդ տպվեց-վերջացա՞վ Բաքվում:

Ո՞նց է Լեոյի քեֆը. վերջապես որքա՞ն հավաքվեց. Ալեքսանդրապոլը անպատճառ մի բան կանե — ներկայացում, դես-դեն. միայն հեղեղը խանգարեց. մեկ էլ ձեռնարկողները շա՜տ ծույլ, փնթի մարդիկ էին—երևակայիր Խըզմալյանի պես համր ու հիմար մարդը:

Ավետիսը գնա՞ց արտասահման... և այլն հարցեր, որոնց մեծ մասը երևի քեզ էլ չի հետաքրքրում, համենայն դեպս՝ կարող ես՝ պատասխանիր, այսինքն՝ եթե ուզում ես:

Վերջացնում եմ. բարի գիշեր:

Համբույրներ և բարևներ՝

քո՝ **Ավետիք.**

Բարևիր՝ ձերոնց, եթե այդտեղ են. Աղայանին, Լեոյին, Ավետիսին, Նիկոլին և այլն:

Հասցեն Ст. Агин (Э.Ж.Д.),
А. Исаакян.

65. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1910, մարտի 22, Պապարապատ

Սիրելի Վիկտորիա,

Չնայելով, որ մոտ 15 օր է, որ հեռացել եմ Ձեզանից և ոչ մի տող չեմ գրել, բայց այդ չի նշանակում, թե Ձեզ մոռացել եմ.— առհասարակ վերջերս այնքան հաճախ էի լինում Ձեզ մոտ, որ մի ուժեղ պահանջ է եղել իմ մեջ Ձեզ մոտ լինելը.

և հիմա միշտ հիշում եմ Ձեզ և Ձեր ներկայությանը մի տեսակ կարոտ զգում. գյուղում, ուր դուրսը ցուրտ է, ցեխ և անհրապույր՝ ամբողջ օրը փակված սենյակումս՝ կարդում եմ, գրում եմ և հիշում, մտածում մոտիկներիս մասին, որոնց մեջ գտնվում եք և՛ Դուք, և իմ հոգում վերջին տեղը չեք բռնում. ո՞վ գիտե, եթե Դուք տղամարդ լինեիք, մենք շա՜տ մտերիմներ կլինեինք. ավելի ազատ կլինեինք դեպի իրար. և հիմա ի՞նչը պետք է արգելե մեզ, որ մենք իրար մոտ զգանք:

Տիկին Վիկտորիա, խնդրում եմ ինձ Ձեզ մտերիմ ճանաչեք և միշտ հույս ունենաք ինձ վրա ամեն մի նեղ դեպքում. երդվում եմ, որ ես Ձեզանից ոչինչ չեմ խնայում, պատրաստ եմ միշտ հասնել Ձեզ:

Հիմա, խնդրում եմ, եթե ուզում եք, գրեցեք. շա՜տ ուզում եմ իմանալ Ձեր դրության մասին. ի՞նչ եք անում. Աշոն գնա՞ց, թե դեռ վայելում է Ձեր մտերմությունը, կամ Ձեր հարկի քաղցրությունը, որին նա այնպես բուռն ցանկանում էր:

Ես դեռ կմնամ էլի մի երկու շաբաթ. գրություններ ունեմ, դեռ չեմ վերջացրել. երբ գամ, անպատճառ կմկրտենք Կոտիկին. տեսե՛ք, Ձեր խոստումը չմոռանաք. քավորը ես եմ:

Եթե հիմա գարուն լիներ, կհրավիրեի Ձեզ գյուղ, բայց վատ օրեր են, մնա գարնանը:

Սկսել եմ մի նոր մեծ պոեմա. առհասարակ լավ պարապում եմ. վառում եմ օջախս և նստում ու աշխատում. լավ բան է սիրած աշխատանքը...

Եթե Աշոն այդտեղ է, կբարևեք:

Ընդունեցեք ջերմ բարևներս:

Մնամ հարգանքներով,

Ձեր՝ **Ավետ. Իսահակյան**

Անհամբեր սպասում եմ Ձեր նամակին:

1910 թիվ, 22 մարտի.
Ղապարապատ

Հասցե. Ст. Агин (Э.Ж.Д.),
Аветику Исаакяну.

66. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1910, ապրիլի 5 Ղալաթաղաւա

Ներողություն, սիրելի տիկ. Վիկտորիա, որ չկարողացա Ձեզ իսկույն նամակ գրել. մինչև այսօր հազիվ խելքս գլուխս հավաքեցի. ախր, շա՜տ անակընկալների հանդիպեցա, անսպասելի հորիզոնների. ի՞նչ պետք է լինի իմ բախտի վերջը, ո՞ւր պիտի տանի ինձ, ո՞ւմ մոտ պիտի տանի ինձ — ես չգիտեմ. մարդը անզոր է իրեն համար բախտ ստեղծելու. ուրիշների, հազարավորների կամքերն են մեզ ղեկավարում, որքան էլ մեծ մարդ լինիս:

Այս րոպեիս կարդում էի Մետերլինկը. տեսնք, ի՞նչ է ասում նա — կարծես ինձ համար.

— «Ամենքին ղեկավարում է բախտը (судьба). մի՞թե հնարավոր է իրեն կամքով կին ընտրել. մեզ շրջապատում են հանգամանքներն ու պատահմունքները. բոլորը նրանք են վճռում, ցանց են հյուսում մեր շուրջը, և մեզ որսում. իսկ երբ գերի ենք ընկնում, տեսնում ենք մեր ծանր վիճակը, բայց ուշ է արդեն — ելք չկա»...

Այս սոսկալի տողերը ինձ համար են գրված, բայց ես ոո հիմար ճանճերից չեմ, որ չկարողանամ դուրս պրծնել ցանցից. հավատացնում եմ Ձեզ, որ ուշ թե շուտ ես հաղթանակ կտանեմ:

Դուք չգիտեք, թե ի՞նչ հաճույքով եմ Ձեզ գրում. արդյոք ի՞նչ եք անում հիմա. օ, ի՞նչ լավ էր, երբ գնում էինք Արփաչայ: Ա՜խ, Դուք չգիտեք, թե երբ գյուղ եկա, առաջին օրը ի՞նչ ծանր էր, և տխուր. հետո մի փոքր հանգստացա, և սկսեցի պարապել. բայց հենց որ ուզում էի նամակ գրել Ձեզ՝ գլուխս ու սիրտս տակնուվրա էր լինում՝ այնքան բան ուզում էի գրել, այնքան բան, որ մտքերս խճճվում էին, և բան դուրս չէր գալիս: Ինձ թվում է, որ ես շատ մոտ եմ Ձեզ, բայց Դուք շատ հեռու եք փախչում ինձնից. կարծես մի մըշտական երազի մեջ լինեմ. երբեմն ինձ թվում է, որ Ձեր մոտն եմ, Ձեր սենյակում, նայում եմ շուրջս և — չկաք:

Այսօր լավ պարապեցի — այսինքն շա՜տ գրեցի և քիչ

կարդացի. հիմա այնպես հոգնած եմ, թեև ժամը 10-ն <է> գիշերվա, որ բացի նամակ գրելուց՝ այն էլ միայն Ձեզ՝ ոչինչ չի ուզում հոգիս:

Իմ պատվական ընտանիքին դեռ չեմ պատասխանել — վերջին նամակին. տրամադրություն չկա. խեղճ աղջիկ, և հիմար աղջիկ. ինչպես կործանեց իրեն, բայց սիրելի տ<իկին> Վիկտորիա, Աստված է վկա, որ ես բոլորովին մեղավոր չէի. և նա այդ էլ հիմա չպետք է հասկանա և ավելի պիտի խորտակե իրեն — ի՛նչ ուզում է թող լինի. կյանքը կոիվ է — և գոյության համար, նույնպես և սիրո, և բախտի:

Շատ ուզում եմ գալ. ձանձրանում եմ գյուղում, թեև շատ զբաղված եմ, թե իմ գրական գործերով և թե մեր ջրաղացով, որ հեղեղը վերջերս բավական վնասել է՝ շինել եմ տալիս:

Մեծ պասի վերջին շաբաթը կլինեմ այդտեղ, և բախտ կունենամ Ձեզ մոտ լինելու:

Հույս ունեմ, որ իսկույն կպատասխանեք, լավ գիտենալով, թե Ձեր նամակները ինձ որքան մեծ ուրախություն կպատճառեն:

Եթե նամակիցս դժգոհ մնացիք, խնդրում եմ, ներեք ինձ: Ընդունեցեք բարևներս՝

Ձեր Ա.վ. Իսահակյան

5-ն ապրիլ, <19>10:
Ղափան
Խո չե՞ք մոռացել հասցես՝
Ст. Агин (Э.Ж.Д.), Ав. Ис.

67. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

1910, ապրիլի 20, Ղափան

Սիրելի ընկեր,
Աղեքսանդր Ծատուրյան.

Սրտի խորին ուրախությամբ իմացա, որ տոնվելու է Ձեր 25-ամյա գրական հոբելյանը: Ես ուրախ եմ ոչ թե այն պատ-

ճառով, որ գիտակից հասարակությունը գալիս է գնահատելու և երախտահատույց լինելու, այլ այն պատճառով, որ Դուք 25 տարվա մարտիրոսական, դժվարին ճանապարհ եք կըտրել, անցել, և Ձեր անունի վրա ստվեր չկա, և պայծառ հայացքով կարող եք ու դեռ ուժ ունիք առաջ քայլելու։

Ո՛չ ոք չի կարող այնպես խորագին զգալ այն հայտնի և անհայտ տանջանքները, որ Դուք ապրել եք 25 տարվա մեջ, բայց եթե միայն Ձեր գրչի ընկերները. հայկական վայրենի հասարակության մեջ այդ մի պրոմեթեական դարավոր տառապանք է, մի իսկական հերոսություն, որ ընկած է Ձեր և Ձեր ընկերների զգայուն ուսերին։ Եվ այսօր ես, Ձեր կրտսեր եղբայրը, գալիս եմ գլուխ խոնարհելու Ձեր առաջ, և ոչ միայն նրա առաջ, ինչ որ Դուք արել եք և ստեղծել, այլ այն մեծության առաջ, որ չարտահայտվեց և չասվեց, որը կար Ձեր հոգում, և որը խեղդվեց մեր անհրապույր միջավայրում։

Իմ ավագ ընկե՛ր, իմ սիրելի ընկե՛ր, և Դուք մի՛ հավատացեք այն ծափերին և ճառերին, որոնք վաղը որոտալու են ի պատիվ Ձեր. իմ խորին համոզմունքով հայ գրական խոսքը միշտ արհամարհված է և հայ ստեղծագործ միտքը միշտ ծաղրված հենց այդ մարդկանց կողմից, որոնք վաղը կուշտ որկորով պիտի շրջապատեն Ձեզ, մյուս օրը Ձեզ նորից արհամարհելու և ծաղրելու համար։

Դուք մի՛ հավատացեք մեր անգրագետ ինտելիգենցիային, մեր այլասերված ուսանողության և մեր գիշակեր բուրժուազիային. նրանք, որոնք օվսաննա են տալու Ձեզ, հավատացնում եմ Ձեզ, որ չեն էլ կարդացել Ձեր ստեղծագործությունները։

Դուք հավատացեք Ձեր ապագային՝ ոչ այն շաբլոնական ապագային, որ իբրև թե պսակելու է Ձեզ, այլ մայրենի խոսքի ապագային, այն մեծ գաղափարին, թե ամեն ինչ կանցնի, կմնա Ոգին միայն ստեղծագործության, կմնա մայրենի խոսքը միայն, որի մեջ կապրի Ձեր շունչը, Ձեր ստեղծագործական վեհ տառապանքը, Ձեր իսկական սերը։

Ուրիշ ոչինչ չունիմ Ձեզ ասելու և շնորհավորելու. ցանկանում եմ Ձեզ ուժ և կորով և վեհանձնություն առաջ գնալու՝

բարձր պահելով հայ գրողի պատիվը, որը իրապես հայ ժողովրդի պատիվն է:

Ընդունեցեք ջերմ և սրտանց համբույրներս, իմ թանկագին ընկե՛ր.

Մնամ Ձեր
կրտսեր եղբայր՝
Ավետիք Իսահակյան:

20-ն ապրիլի 1910 թ.,
Ղապարապատ գյուղ:

68. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1910>, մայիսի 2, Ղապարապատ

Սիրելի Վիկտորիա.

Երկար սպասեցի նամակիդ, բայց չեկավ, և չի էլ գալու, չգիտեմ պատճառը. ի՛նչ էլ որ լինի պատճառը՝ համենայն դեպս ես շա՛տ տխրեցի և վշտացա և այդպես էլ սպասում եմ, չնայելով իմ բոլոր լավ և դրական կողմերին, կամ թե իմ հանգամանքներին՝ ես անբախտ մարդ դուրս եկա, սակայն պիտի գիտենաք, որ քաջ եմ և միևնույն ժամանակ շա՛տ բարի և խղճմտանքի տեր...

Հիմա դառնանք Ձեր լռությանը. առաջին միտքը գլխումս էն է, որ Դուք ինձ նույն զգացմունքով եք վերաբերվում, և տակտով եք շարժվում, մինչև պարզվելը. եթե այդպես է — ապրե՛ք. եթե իմ վարմունքից, թուլությունից դժգոհ եք՝ վա՛յ ինձ. արշալույսի սկզբին, կոկոնի մեջ կմեռցնեք իմ զգացմունքը... Բայց ես համբերանք ունեմ, և ինչ էլ որ լինի, ուշ թե շուտ, ես կապացուցեմ, որ Ձեզ եմ սիրում անկեղծ և տաք. եթե Դուք ինձ չթողնեք, առայժմ ինձ թվում է, և հավատացած եմ, որ ես Ձեզ չեմ թողնի (իբրև փորձված մարդ գրում եմ — առայժմ, ո՞վ գիտե — հետո)... Սիրելի՛ս, շա՛տ հոգնած եմ, ամբողջ օրը պարապում եմ. օրական 14 ժամ

սեղանիս առաջև եմ — գրում եմ, գրում եմ, գրում եմ, իսկի չեմ կարդում. սկսել եմ մի մեծ վեպ, որ հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչև այժմ այդպես բան չեմ գրել, և ոչ մի մարդ չէ գրել. չասես՝ պարծենկոտ Ավետիք.— ո՛չ — ճիշտն եմ ասում. «Աբուլ-Մաճարին» նրա մի գլուխը չարժե... Մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ...

Սիրելիս, գրի՛ր, գրի՛ր... Ես մոտ օրերս պիտի գամ մի երկու օրով բան առնելու՝ չայ, շաքար, սուրճ, և այլն, և այլն. ես որ մնացի մինչև հիմա՝ չկարծեք, թե նրա համար չէի գալ, այլ՝ վեպս չէի կարող թողնել: Շա՛տ ջղային եմ, քուն չունեմ. գրում եմ շա՛տ տենդոտ, հազիվ զսպում եմ ձեռքս, որ չվազե...

Գրում եմ մայիսի 2-ին. հիշեք ապրիլի 2-ը. անմահական գիշեր էր ինձ համար: Մի ամիս է անցել, ինձ թվում է, որ մի տարի է անցել, և մի տարի է Ձեզ չեմ տեսել, և որ մի գանձ եմ գտել, որ... չգիտեմ ո՛ւմն է լինելու... Առաջին նամակս, ապրիլի 21-ին, գրել էի բնակարանիդ հասցեով:

Եթե վիրավորվում ես նամակիցս և նամակներիցս՝ ներողություն եմ խնդրում. ես մտածելով չեմ գրում նամակներըս, այլ գրիչս գնում է անզուսպ...

Բարևներով,
Ձեր՝ **Ավ. Իսահակյան**

2 ապրիլի*

69. ՎԻԿՏՈՐԻԱ ՅԱՐՈՎՅԱՆԻՆ

1910**, մայիսի 21, Ղափաբապատ

Սիրելի Վիկտորիա.

Ներողություն, որ մինչև այսօր նամակ չեմ գրել Ձեզ. տրամադրությունս վատ չէր, բայց ի՞նչ գրեի. չափած-ձևած

---

* Հավանաբար, մայիսի 2-ի փոխարեն գրել է ապրիլի 2-ը՝ ի հուշ վերը հիշված օրվա:

** Ժամանակը որոշվում է փոստակնիքով, որ պարզ երևում է ծրարի վրա՝ 21. 5. 10:

բաներ գրելու սովորություն չունեմ, իսկ արտահայտվել — Դուք չեք ուզում. լռենք այդ մասին:

Գրեմ ինձնից. կյանքս անցնում է ամբողջապես աշխատանքի մեջ. օրը 15 ժամ սեղանիս առաջ եմ և գրում եմ, իսկի մի տող էլ չեմ կարդում. վեպս լավ առաջ է գնում. երևում է, որ 500 երեսի կհասնի. չեմ ուզում մեծ լինի, բայց հնար չկա. մեծ պլանով եմ սկսել, թեև նկատում եմ, որ ոչ մի ձանձրալի տեղ չկա. ամեն երեսն էլ կարդացվում է հետաքրքրությամբ:

Էլ ուրիշ ի՞նչ գրեմ. դրանից դուրս՝ ես լինում եմ կամ ճաշելիս կամ քնելիս. երազներս Ձեզ հետաքրքիր չեն, որ պատմեմ. մի երկու անգամ տեսել եմ Ձեզ երազումս... Դա էլ բան է: Տեսնում եք, որ ռոմանտիկ եմ, դեռ չեմ ծերացել:

Ինչու՞ չեք գալիս. միշտ սպասում եմ. ես մյուս շաբթու նորից գալու եմ:

Առայժմ մնաք բարև:

Համբույրներով՝ Ձեր **Ավ. Իսահակյան**

21 մայիսի
Ղապարապատ

70. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1910, հունիսի 11, Ալեքսանդրապոլ

Հարգելի տիկ. Վիկտորիա.

Ես երրորդ օրն է, որ Ալեքսանդրապոլումն եմ, նշանածիս հետ մերոնք եկել են Թիֆլիզից. և եկանք տեսնելու մորս և քրոջս: Ձեր նամակը երեկ ստացա գյուղից, և հիմի գրում եմ: Ստիպենդիայիդ մասին գրել եմ Բաքու երկու տեղ. մեկը գրում է ճանապարհից, որ՝ նամակդ ստացա և 2 ամսով գնում եմ արտասահման, վերադարձից հետո կաշխատեմ: Իսկ մյուսից պատասխան չունեմ: Այս երկու օրս նամակ եմ գրելու Պետերբուրգ եկեղեցական խորհրդին, որի մեջ ունեմ ընկեր մարդիկ. չգիտեմ՝ այն, ում որ գրելու եմ հիմա Պետերբո՞ւրգ է, թե մի ուրիշ տեղ: Համենայն դեպս հոգում եմ. բայց ես չէի ցանկալ այդ հույսերով ապրեիք և

հանկարծ անպաշտոն մնայիք, թեև այդ մասին էլ կխոգանք. բանն այն է, որ իմ գլուխս խառն է, և տրամադրությունս չի գալիս եռանդուն կպչել գործի. հույս ունեմ, որ ներող կլինեք:

Սանիկս, երևի, կլավանա, եթե այդտեղի շոգերը չհեղեղեն Ձեզ և նրան: Ես ամսիս 15-ին գյուղ կգնամ. շուտով նամակ գրեցեք Ձեր հալից:

Հետո, ասում են, որ մեր գործերը հոկտեմբերին պետք է վճռվին, դատն է. խնդրեմ այդ մասին տեղեկացեք, գուցե Լևոնի գործերից մի բան իմանաք:

Եվ հետո՝ ի՞նչ վերակենդանանալու և խորտակվելու մասին եք խոսում. ամոթ չէ՞, որ Ձեզ նման ուժեղ մարդը խորտակվի և իլյուզիաներ ստեղծե. հիշո՞ւմ եք, որ Դուք ինձ ասում էիք, թե՝ «Ամոթ չէ՞, որ Դուք տխուր լինեք»:

Մի խոսքով: Ձեր տեղը շա՜տ զգալի է ինձ համար. հավատացեք, որ Ձեր փողոցով դեռ չեմ անցել. սա եթե չհավատաք, իրավունք ունեք, որովհետև իմ կողմից շա՜տ է երեխայական:

Ե՞րբ եք գալու... Գալով ինձ՝ իմ մխիթարությունը էլի մնում է «Ուստա Կարոն», որ հաջող կերպով հառաջ է գնում. տեսնենք ի՞նչ դուրս կգա:

Բարևներով և հարգանքներով,
Ձեր՝ **Ավետ. Իսահակյան**

11 հունիսի, 1910,
Ալեքսանդրապոլ

71. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1910, հոկտեմբերի 1, Թիֆլիս

Սիրելի Վիկտորիա.

Նամակդ ստացա, սակայն, ներողություն, որ մինչև այսօր քեզ նամակ չէի գրում. ամեն օր պատրաստվում էի գրել, և տրամադրություն չունենալով՝ հետաձգում էի:

Գնացի Նովոչերկասկ, և եկա շատ խորտակված. տեսա

բանտերում ընկերների, բարեկամների, ավելի քան 100 մարդ, և երբ նրանցից բաժանվեցի, ինձ թվաց թե հուղարկավորությունից եմ հետ դառնում, նրանց թաղել եմ և հետ եմ դառնում...

Իմ գործը նույնն է, գուցե մի քիչ էլ ավելի վատացավ, մի-երկու փոքրիկ փաստեր առաջս դրեցին, նոր մեղադրանքներ, գրոշանոց, որ քննիչի աչքում մեծ արժեք ունի, երևի, որ քաշ տվեցին ինձ մինչև այնտեղ: Առհասարակ բոլոր տեղերի բանտարկյալներին հավաքում են այնտեղ, առայժմ Ռոստովի բանտը, ուր քննիչը վերջնականորեն պիտի հարցաքննե, իսկ դատը հավանականաբար՝ լինելու է գալող փետրվարին-մարտին:

Ես առայժմ մնում եմ այստեղ, փաստաբաններ վարձելու, պաշտպանությունը կազմակերպելու համար. իսկ դեպի Ձեր կողմերը կգամ մի շաբաթ, մի 10 օր հետո. մնացածը այդտեղ կասեմ:

Ձեր Լևոնի տրամադրությունը լավ է, առողջ է և հիմա Ռոստովումն է, ուր բանտի պայմանները ավելի լավ են, քան Թիֆլիզի:

Համբույրներ սանիկիս, իսկ իմ և Սոֆիկի կողմից կարոտալի բարևներ քեզ և թանկագին բժիշկին. խորին կերպով զգում եմ, որ իմ լավ ընկերները այդտեղ եմ թողել — հանձինս քեզ, բժիշկին, Հով. Բուդաղյանին...

Այստեղ օրերս լավ չեն անցնում. պարապ եմ, չեմ կարող «Ուստա Կարոն» գրել, ամփոփել. ամբողջ օրը թափառում եմ, և սրա-նրա մոտ քաշ գալիս. միայն գիշերներն եմ տուն գալիս. կարծես, հավասարակշռությունս կորցրել եմ...

Սիրտս լցվում է հույսով, որ նորից գալու եմ այդտեղ, թեկուզ մի կարճ ժամանակով, որովհետև դառնալու եմ, և ձմեռը ստիպված եմ Թիֆլիզում անցնելու:

Կարոտալի բարևներով՝

Ավետիք

1 հոկտեմբ. 1910,
Թիֆլիս

72. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<19>10, հոկտեմբերի 8, Թիֆլիս

Սիրելի սաներս.

Ստացանք ազիզ Համակդ. ցավում ենք, որ սաՀիկս հիվանդ է եղել. զգում եմ, թե ինչքան տանջված կլինեիր: Ափսոս որ չենք կարող բժիշկի տոնին գալ: Սոֆիկը հաճախակի հիվանդանում է... Իմ գալս առայժմ հետաձգվում է:

Բարևներ Սոֆիկից քեզ՝ կարոտալի բարևներ բոլորիդ:

Ավետիք

73. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1910, դեկտեմբերի 31, Թիֆլիս

Սիրելի Վիկտորիա.

Ներողություն, որ ուշ եմ գրում. երկուշաբթի օրվանից զբաղված ենք շա՜տ սաստիկ կերպով. առավոտյան ժամը 10-ից մինչև ժամը 4-ը, և ապա երեկոյան ժամը 7-ից մինչև 11-ը լինում ենք դատական պալատում <...>

Իմ գործը հասարակներից է, գուցե ամենաչնչիններից. փաստեր չկան, բացի մի կտոր մնտուկ թերթից, որի համար երևի մի քիչ տուժեմ, բայց դեռ վաղօրոք է կարծիք կազմելը:

Թեթև է և՛ Լևոնի գործը. նա կամ կարդարանա կամ քիչ կպատժվի:

Լևոն Սարգսյանի մասին ասածը բոլորովին սուտ է. գործի մեջ ուրիշի մասին է խոսքը:

Մերոնք՝ իմ երեխի պատճառով՝ թողել են նախկին բնակարանը, որ ուներ մեծ սենյակներ, ընկել են երեք փոքր սենյակներից բաղկացած մի բնակարան, որը միայն շատ տաք է, և երեխան չի մրսում. կարծես՝ լավ երեխա է. շա՜տ առողջ և հանգիստ երեխա է. իսկի չի լալիս. լավ ուտում է, լավ քնում, և ժպտում ու գղգղում:

Գրիր նամակ. ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում, ինչպե՞ս է տրամադրությունդ. որ գործի ընթերցանությունից ազատվեմ, երկարորեն կգրեմ. առայժմ այսքանը. շնորհավորում եմ նոր տարիդ. ընդունիր բարևներս:

Քո՝ **Ավետիք**

1910 թիվ, 31 դեկտեմբերի,
Թիֆլիս

Հասցես՝ Тифлис,
Михайловский проспект.
№ 36, кв. 4. А. Ис.

74. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, հունվարի 13, Թիֆլիս

Սիրելի Վիկտորիա.

Զարմանում եմ, թե ինչո՞ւ չես պատասխանում նամակիս. ախր ես դեկտեմբերի 31-ին նամակ գրեցի քեզ և բժշկին՝ շնորհավորելով նորտարիներդ. արդյո՞ք բոյկոտ եք արել, ի՞նչ է. սպասելով նամակներիդ՝ աչքս ջուր դառավ. ի՞նչ խաբար է:

Մեկ-մեկ էլ մտածում եմ, թե միգուցե մի դժբախտություն է պատահել, կամ հիվանդություն, կամ ո՞վ գիտե — ի՞նչ. հազար ու մեկ բան եմ մտածում: Գրի՛ր, սիրելիս, ինչո՞ւ չես պատասխանում:

Սրանով խնդրում եմ քեզ, որ նամակս ստանալուդ պես՝ իսկույն պատասխանես. նորից կրկնում եմ, որ շատ անհանգիստ եմ: Անաստվա՛ծ, գոնե նամակներ էլ <է> գրե. իսկի չե՞ս մտնում իմ տրամադրության մեջ. այնպես տխուր եմ, որ, ասես թե՝ սրտիս մեջ շուն կօնևա: Վերջ ի վերջո ես շա՛տ անբախտ մարդ դուրս եկա. հոգուս մեջ շա՛տ երգեր ու հույսեր կային, որոնք ուղղակի խորտակվեցին. հոգիս լուռ լալիս, հեկեկում է իմ վերա. է՛խ, ի՞նչ ասեմ. շա՛տ դժբախտ եմ, շա՛տ. ուղղակի հոգով մենակ եմ... Խնդրում

եմ, ինձ շուտով նամակ գրես — ինձ համար ամենամեծ միխիթարանքը — քո նամակն է...

Համբույրներ Կոտիկին:
Բարևներով, քո՝ **Ավետիք**

13 հունվարի, Թիֆլիս
Հասցես. Тифлис,
Михайловский просп. д. № 31, кв. 4.
Ав. Ис.

75. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911, հունվարի 31, Թիֆլիս

Սիրելի Վիկտորիա.

Ստացել եմ փոստ-կարտդ, և ցավում եմ, որ այդպիսի վատ տրամադրության մեջ ես. սակայն ես էլ շա՜տ վատ հալի եմ — ոգեպես, ոգեպես, և ոգեպես շա՜տ տխուր, և ընկճված... Նամակներդ ինձ վրա սփոփիչ են ազդում, և խիստ կարոտցել եմ քեզ, քո ներկայությանը. իմ այս ներկա անարև կյանքում դու հեռվում փայլող և ինձ ջերմացնող մի հեռավոր, հեռավոր ոյս ես, աստղ ես...

Երեկ գնացի Լևոն Աբովյանի կնոջ մոտ՝ իմանալու, թե արդյոք գտնված է залог և կամ՝ չէ՞ իջեցրած փողի քանակը, քանի որ չունենալու պատճառով շարունակ զիջում են, 15 000-ը շինում եմ, 3000, և կամ 5000-ը՝ 2000:

Սակայն ես դիմել եմ մի-երկու տեղ գրավական գտնելու համար, և ինձ դրական ոյսեր են տվել. հավատացած եմ, որ կհաջողվի, եթե միայն կարելի է հիմա առհասարակ, հավատալ մարդկանց խոսքերին:

Ես էլ՝ փետրվարի 10—12-ին գալու եմ Ալեքսանդրապոլ՝ մի քիչ գործ ունեմ. ոյս ունեմ, որ տրամադրությունդ լավ կլինի մինչ այդ, և մի քիչ լավ ժամեր բախտ կունենանք անցկացնելու մեր սիրելի բժիշկի հետ: Համբույրներ Կոտիկին, բարևներ քեզ և բժիշկին:

Քո՝ **Ավ. Իսահակյան**

31 հունվարի 1911,
Թիֆլիս:

76. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911, փետրվարի 8, Թիֆլիս

Վաղուց է, որ քեզնից նամակ չունեմ, ի՞նչ է պատահել. մի՞թե տրամադրությունդ էլի վատ է, թե մի որևէ ինձ անհայտ պատճառով վիրավորված ես ինձնից: Լևոնի համար գտնված է 1000 ռուբլին, իսկ հարսդ ուզում է, որ ձերոնց միջոցով լինի. այդ 1000-ը այսօր հատկացրեցինք ուրիշի, բայց եթե հարկավոր եղավ՝ նորից կա: Ես չկարողացա ամսիս 10-ին գալ, հետաձգվեց անորոշ ժամանակով. շատ լավ կանես բարեկենդանին գաս. մեր բնակարանը նորից փոխեցինք: Գրիր այս հասցեով՝ Нерсесянская, № 2:

Բարևներով, քո՝ **Ավետիք**

Բարեկենդանիներին եկ դասերից հետո. էն տղից մի՛ վախեցիր. հասցես, նոր. Нерсесянская, № 2, д. Тумановой, Ав. Ис.

77. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911, ապրիլի 8, Թիֆլիս

Ուղիղ երեք ամիս է, քեզնից ոչ մի տեղեկություն չունիմ. չգիտեմ ինչպե՞ս է առողջությունդ անգամ. տնաշենի աղջիկ, հո Զաքարեի պապանձումը չէ՞ եկել լեզվիդ. ի՞նչ է պատահել. մի՞թե այնքան երջանիկ ես, որ ուրիշներին մոռանում ես, <կամ> թե՝ մի՞թե այնքան դժբախտ ես, որ էլի ուրիշներին մոռանում ես. ես գիտեմ, որ ոչ մեկն ես, և ոչ մյուսը, հետևապես՝ պետք է որ մեզ (ինձ) մեկ-մեկ միտքդ բերես, ոչ իբրև այս կամ այն ինչի՝ այլ իբրև բարեկամի, որին հարկը ստիպում է՝ գոնե մի տողով քաղաքավարի պատասխանել բազմաթիվ նամակներին նրա:

Բայց հանգաքը մի կողմ թողնենք, լուրջ խոսենք, սիրելի՛ս, աչքիս լո՛ւյսը, ի՞նչ է պատահել, որ քո թանկագին գոյության մասին մի տեղեկություն չես տալիս. հազար ու մի վատ մտքեր են հոգիս պաշարում և թունավորում կյանքիս մեշչանական ընթացքը:

Շա՛տ և շա՛տ կփափագեի, որ այս տողերիս գայիր Թիֆլիզ, և հատկապես մեզ մոտ, կամ ո՛ւր որ ուզում ես, միայն թե գաս. շա՛տ կարոտցել եմ, և սիրտս շա՛տ է լցվել. շա՛տ բան ունիմ ասելու. եթե չես կարող գալ, գոնե մի նամակ գրիր. ինձ թվում է, որ դու խռոված կամ գուցե վիրավորված ես ինձնից:

Համբուրում եմ ձեռքերդ,
քո՝ **Ավետիք**

Հասցես. Тифлис,
Нерсесянская, № 2, Ав. Ис.

78. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, հունիսի 5, Թիֆլիզ

Սիրելի Վիկտորիա.

Վաղուց է քեզ նամակ չեմ գրել. քո գրած նամակը ինչ-ինչ պատճառներով ձեռքս չընկավ... չարժե այդ մասին խոսել. այնքան խելք ունես, որ կհասկանաս:

Մերոնք հիմա Ղարաքիլիսայումն են. ես մնացել եմ մենակ, որովհետև մեր մեղադրական գործի քննության կոպիան տվել են, դրանով ենք զբաղված. կարդում ենք՝ 6000 երեսանոց բան է. շուտով կտան և մեղադրական ակտը. ապա կսկսվի դատը... Պատրաստվում ենք այդ ճակատամարտին հաղթող դուրս գալու հույսով: Շատ կուզենայի Ալեքսանդրապոլ լինել, բայց առայժմ հնարավորություն չունեմ գալու — գործի պատճառով կաշկանդված եմ:

Ձեր Լևոնին տեսա, եղել էր քեզ մոտ. ասաց, որ ուզում ես Թիֆլիզ գալ, պաշտոն ես ուզում. լա՛վ, կաշխատեմ, կիմանամ, ո՛ւրտեղ բաց պաշտոն <կա>. բարեկամներիս կմիջնորդեմ. սակայն շատ բան չեմ կարող անել, որովհետև համ զբաղված եմ, համ տրամադրությունս չափազանց խարխափ է. շոգը մի կողմից, էս անտեր դատն էլ մյուս կողմից՝ հոգի չեն թողնում մարդու մեջ...

Լևոնը այժմ զինվորականի մունդիր է հագել...

Վերջ ի վերջո քեֆդ ո՞նց է. ուրա՞խ ես, թե՞ տխուր. ինչպե՞ս է սանիկս, բժիշկը. ամառը ո՞ւր ես գնալու... Անցյալ տարի հազար անգամ բախտավոր էի, քան այս տարի. գոնե հերու «Ուստա Կարոն» էի գրում. այս տարի — ոչինչ:

Եթե նամակ գրելու լինես — գրիր «Հորիզոնի» հասցեով, հանձնել Ավ. Իս-ին... Ես թողել եմ բնակարանս և ապրում եմ ուրիշի մոտ:

— Տղամա՛րդ կաց:

Բարևներով, քո՝ **Ավետիք:**
Համբուրներ Կոտիկին:

79. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, հուլիսի 25, Կարին

Սիրելի Վիկտորիա.

Արդեն մի շաբաթ է, որ Կարինումն ենք. լավ օրեր անցկացրինք, բայց հոգեպես ես միշտ տխուր եմ եղել. թվում է, որ այս ճամփեն շա՜տ է երկար, և վերադարձը ո՜ւշ է լինելու:

Այսօր ճանապարհվում ենք դեպի Տրապիզոն, վեց օրվա անծայր ճամփա է. նրանից հետո էլ ծովով երեք օր, և կհասնենք Կ. Պոլիս: Ճանապարհից կգրեմ, իսկ մանրամասը՝ Կ. Պոլսից: Ամեն օր նայում եմ «Մեծ արջին», և թվում է, որ քո հայացքն էլ է հառած այնտեղ—ա՛յ այս աստղին...

Առայժմ սրտագին համբուրներ քեզ և բժիշկին,
մնամ քո՝ **Ավետիք**

80. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, օգոստոսի 3, Տրապիզոն

Կարոտալի բարևներ Տրապիզոնի ծովափից. մի քանի օրից կմեկնեմ Կ. Պոլիս. անընդհատ կգրեմ:

Քո՝ **Ավետիք**

81. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911, օգոստոսի 11>, Տրապիզոն

Ամենասիրելի Վիկտորիա ջա՛ն.

Այսօր 10<երորդ> օրն է Տրապիզոն եմ, և վաղը օսմանյան նոր շոգենավով մեկնում եմ Կ. Պոլիս: Էրզրումից մինչև այստեղ 7 օրվա մի գեղեցիկ ճամփորդություն արինք, հսկա լեռների միջով, և ձմտառների միջով, Եփրատի և Ճորոխի ափերով. ժամանակին կգրեմ այդ ճամփորդությունը և կուղարկեմ Կովկաս տպվելու:

Տրապիզոնը մի սիրուն քաղաք է, ծովի ափին, նոճիների քաղաք, փարթամ, և սիրուն. օրերով ծովափն ենք անցկացնում, իսկ երեկոները, երբ աստղերը վառվում են երկընքի և ծովի վրա, ես խոսում եմ քեզ հետ, և ինձ թվում է, որ այլևս քեզ չեմ տեսնելու, անդա՛րձ, անդա՛րձ գնում եմ...

Սրտի ցավով զգում եմ, որ հեռացանք իրարուց, և տեսնում եմ, որ այդ զգացմունքը կոծում է ինձ, թևերս կոտրում, և ամեն անգամ ինձ ու ինձ երգում եմ.

Ծիրնի ծառ եղնեի,
Ճամփիդ բուսնեի,
Էնքան չմեռնեի,
Մեկ էլ տեսնեի...

Ա՜խ, եթե այնքան, որքան ես քեզ եմ կարոտնում, նույնքան էլ դու ինձ կարոտնայի՜ր...

Նամակս վերջացնում եմ. թե՛ գրելու տեղն է անհարմար — շրջապատված եմ ընկերներով, և թե գրիչս է վատ, չի գրվում:

Խնդրում եմ նամակս ստանալուդ պես պատասխանի՛ր. ո՞ւր պիտի գնաս, ի՞նչ պիտի անես, հալդ ինչպե՞ս է. ես դեռ Պոլիս մնալու եմ, հետո գուցե տեղավորվեմ Վիեննայում: Պոլսից կգրեմ միշտ նամակներ, երկար և շո՛ւտշո՛ւտ. միայն դու քեզնից շարունակ տեղեկություններ հա-

ղորդի՛ր. եթե ինձ մոռանաս, հալա վատ կլինի. առայժմ կարոտով համբուրում եմ քեզ և Կոտիկին, նույնպես բժիշկին:

Քո՝ Ավետիք

Հասցե՝ Турция,
Constantinople.
Librairie Ardzive
Rue Marpoudjdjilar, № 22.

Հանձնել Հայկ Գուսանյանին:

82. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911, սեպտեմբերի 11, Կ. Պոլիս

Վիկտորիա ջան, հավերժական սիրելի Վիկտորիա ջա՛ն. եթե իմանաս, թե որքան ուրախացա նամակդ ստանալով. երևակայի՛ր առաջին նամակն է, որ ստանում եմ հայրենիքիցս. դեռ մեր տնից և կնոջիցս մի տող չեմ ստացել. ի՛նչ շուտ մոռացան... Միակ խոցը մայրս է և երեխաս, թե չէ մյուսները... ասել հարկավոր չէ:

Նամակդ ամեն օր կարդում եմ. արդարև, ես ինչքա՛ն եմ քեզ սիրում, և քանի հեռանում եմ, այնքան խորն եմ սիրում. ա՛խ, շա՛տ եմ սիրում քեզ, և մենք հեռու ենք իրարուց. թեև դու ինձ այնքան չես սիրում, ինչքան ես քեզ. միայն այս իմացիր, որ քեզ հետ ամենավատ պայմաններումն էլ բախտավոր կլինեմ. դու իմ սիրելիս, վաղուց, վաղուցվա սիրելիս, շա՛տ սիրելիս:

Ես օգոստոսի 14-ից արդեն Կ. Պոլսումն եմ. սա մի հսկա քաղաք է, Վոսփորի, Ոսկեղջյուրի և Մարմարա ծովի շուրջը փռված, 20 վերստի վրա. խառն, լաբիրինթ քաղաք է. ազգերի խառնարան. ունի 1 500 000 բնակիչ. թուրք, հույն, հայ, ֆրանսիացի, իտալացի, հրեա, սպանացի, գերմանացի, անգլիացի, սլավոններ, ունգարներ, Աֆրիկայից արաբներ, քրդեր, և շա՛տ, շա՛տ ազգեր. ուղղակի կոսմոպոլիս. ամեն լեզու կա, և ամեն ազգի դրամ, կոստյում, ամեն ազգի հիմնարկություններ, եկեղեցիներ, դպրոցներ, բանկեր, փոստեր: Բազմակողմանի կյանք կա, և շա՛տ մեծ, շքեղ, շռայլ կյանք:

Գտնվելով երկու աշխարհների՝ Եվրոպայի և Ասիայի միացման տեղում՝ դարերից ի վեր եղել է երկու մայր ցամաքների ժամադրավայրը. ունի չտեսնված բնության գեղեցկություն և դիրք, բայց ներքուստ այնքան էլ սիրուն չէ. մարմարե բյուրավոր պալատների մոտ անշուք խրճիթներ, կայսերական պալատների մոտ — աղբակույտեր, ամենավերջին մոդայի մոտ՝ ցնցոտիներ, ավտոմոբիլների մոտ՝ գոմշի սայլեր: Ապրուստը թանկ է. շոայլ կյանք կա. ամիսը 100 ռուբլի հազիվ ծայրը ծայրին կհասցնեն մի չոր գլուխի համար. նույնիսկ թանկ է Բեռլինից ու Փարիզից: Մտադիր եմ ճանապարհորդելու դեպի Փոքր Ասիա՝ Բեյրութ, Սիրիա, Բաղդադ, Պաղեստին, Դամասկոս, Կիլիկիա և Հայաստան. դրա համար հարկավոր է մի 6 ամիս և 1500 ռուբլի. սպասում եմ, որ հայ պատգամավորները և մինիստրները գան և այդ հարցը դնենք և փող ու հրահանգներ վերցնեմ ու գնամ. եթե չհաջողվեց, Պոլիս չեմ մնա, կանցնեմ արտասահման՝ Ցյուրիխ, Լոզան, Ժընև. այնտեղ թե ապրուստը թանկ չէ, և թե համալսարան կա. այստեղ կուլտուրական քաղաք չէ, այլ վայելքի, պոռնկության. աննման կանայք կան, և համարյա ո՛չ մի կարգին թատրոն-օպերա կամ գրադարան-ընթերցարան. մարդիկ ընկած են փող աշխատելու և կոպիտ վայելքի ետևից. բարոյապես ընկած են, կեղծավոր, շահասեր և անհյուրընկալ. խոստումներ կանեն և ոչ մի գործ: Եթե հաջողվեց քո այստեղ գալդ — կմնամ քեզ համար. եթե ոչ՝ ինձ այստեղ կապելու բան չկա. պաշտոն չկա ինձ համար այստեղ. ուսուցչությունը լավ չի վարձատրվում. տեսուչը ստանում է այստեղ ամիսը 80 ռուբլի՝ մի քանի դասերով. ես քեզ համար հարցրի մի երկու տեղ. տալիս են միայն 40—50 ռուբլի. կանայք քիչ են վարձատրվում. վարժուհիներ կան, որ կստանան 10 ռ., 20 ռ., դպրոցները քոսոտ բաներ են, լավ դպրոցները անգլիական-ամերիկական են. հայերինը չնչին բաներ են: Տրապիզոնից և Սամսոնից հրավիրեցին ինձ տեսուչ ամսական 100 ռուբլով, բայց իմ գործը չէ տեսուչ լինել. ես գրող եմ, և գրող էլ կմնամ, թեկուզ սոված մեռնեմ. միայն մի զիջում ունեմ—քեզ համար. եթե դու՝ հաջողվի գաս, քեզ համար ամեն պաշտոն կվերցնեմ, որ միասին լինենք, ապա թե ոչ՝ կերթամ, կերթամ, և կսպասեմ,

մինչև աշխարհքը փոխվի, և կարողանամ քեզ նորից գտնել, որ այնպես՝ ինձ մորթելով, թողի, հեռացա. անիծյալ լինի կյանքը, աշխարհը, մարդիկ: Վերջացնում եմ նամակս. հաճախ կգրեմ. կարոտս կառնեմ գրելուց: Ջերմաջերմ համբույրներ, կարոտալի համբույրներ քեզ, Կոտիկին և բժիշկին:

Մնամ միշտ քո՝ **Ավետիք**

83. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, սեպտեմբերի 19, Կ. Պոլիս

Սրանից մի շաբաթ առաջ, սիրելիս Վիկտորիա, ստացած նամակիդ պատասխանը ղրկեցի մի երկար նամակով, սակայն իտալական փոստով ղրկեցի, և հիմա որ թուրք-իտալական պատերազմ է ծագել, չգիտեմ նամակս տեղ կհասնի թե ոչ:

Իմ հավերժական սիրելիս, այս նամակս ստանալուդ պես գրիր, թե ի՞նչ եղավ դրությունդ. դրանից է կախված և իմ դրությունը: Կ. Պոլիսը չնայելով իր գեղեցկություններին բայց դուրըս չեկավ, չհավանեցի. կուլտուրապես ցած և պոռնիկ քաղաք է, մտավոր-հոգեկան-գեղարվեստական կյանք չկա. կա միայն շռայլություն, փողի մեծ տենչ, վաճառականություն և պոռնկություն. եվրոպական բուրժուաների փողերը այստեղ են հոսում, և միայն մսեղեն վայելք. գրականությամբ և գիտությամբ պարապողների համար անհարմար, անպետք միջավայր է:

Ես որոշել եմ Պոլիս չապրել. հիմա ծրագրել եմ մի 6 ամսով ճամփորդության դեպի Կիլիկիա, Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս, իսկ հետո ապրել Շվեյցարիայում. եթե հաջողվեց քեզ այստեղ գալ՝ ես կմնամ, որովհետև քեզ հետ դժոխքումն էլ կմնամ — այնքա՜ն, այնքա՜ն սիրում են քեզ, շա՜տ եմ սիրում, իմացած եղիր:

Ես կարող էի այստեղ քեզ համար ուսուցչության տեղ գտնել, սակայն չուզեցա, որովհետև շա՜տ չնչին վարձատրություն են տալիս, ամսական 40—50 ռուբլի՝ 20—30 դասով. ուսուցչությունը շա՜տ արհամարհված է այս անիծյալ

աշխարհում. կրկնում եմ. այստեղ փող են շահում միայն վաճառական-բանկիրները և պոռնիկները. էլ չեմ ասում պետական մարդիկ:

Կինս նամակներիս չի պատասխանում. մինչև հիմա ոչ մի նամակ չեմ ստացել, երևի բաժանվելու տրամադրություն ունի. բայց երեխաս հոգիս կհանե. նրա կարոտը, նրա մասին ունեցած հոգսը միշտ կրծում է սիրտս. ի՜նչ սոսկալի բան է երեխա ունենալը և թողնելը այսպես՝ աչքից հեռու: Ես գիտեմ, որ երեխիս պահող-խնամող շատ կան, ողջ լինին քույր-եղբայրներս, բայց թո՜ղ լինի՝ ես էլի տանջվում եմ: Սակայն ես հիմա այս օտարության մեջ մի հատկություն եմ ձեռք բերել — երկար չմտածել տխուր բաների մասին, այլ աշխատել ժամանակ չկորցնել՝ պարապել, գրել, կարդալ, աշխարհ տեսնել, հույս ունենալով, որ եթե ողջ մնացի՝ վերջ ի վերջո կարժանանանք հայրենիք գալու և սիրելի, մտերիմ դեմքերը տեսնելու. առայժմ ես, ինձ թվում է, որ մի իջևանումն եմ ապրում:

Ջերմ բարևներս բժշկին, իսկ քեզ և Կոտիկին կարոտալի համբույրներս:

Քո՝ **Ավետիք**

84. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1911>, 12 նոյեմ<բերի>, Կ. Պոլիս

Սիրելի Գարեգին.

Ինչպե՞ս է քեֆդ, ո՞նց է. թե իմը կհարցնես, հայր սուրբից* կիմանաս. առայժմ քաշ եմ գալիս, տեսնենք ի՜նչ է լինելու. Պոլիսը սպասածիցս վատ գտա. ամեն կերպ Թիֆլիզը բարձր է այստեղից, թե՛ իր մտայնությամբ և թե ի՛ր հայությամբ:

Դուն ի՜նչ կընես. «Գեղարվեստը» լույս չտեսա՞վ. լսեցի, որ Ամերիկա կուզեիր գնալ, ինչպե՞ս եղավ, որ չգնացիր:

* Գրիգոր վարդ. Պալաքյան

Հայր սուրբը կուզե կնոջս տեսնել. խնդրում եմ այդ մասին հոգս տար. կամ մեզ մոտ առաջնորդիր, կամ քեզ մոտ. չգիտեմ ո՛ր են ապրում մերոնք. առաջ որոշ տեղ էին, հիմա չգիտեմ ո՛ւր են տեղափոխված: Վատ չէր լինի, որ մեկ-մեկ նամակ գրես ինձ այդտեղի հայկական կյանքի անց ու դարձեն, ընկերների, գրագետների շրջանից, և այլն:

Այստեղ համարյա թե գրական շրջան ասած բանդ չկա. ամեն մարդ մենակ է:

Առայժմ այսքանս. հայր սուրբը մեկնելու է, ես շտապում եմ:

Կարոտալի բարևներս բոլորիդ, և բոլոր հարցնողաց:

Համբույրներով քո՝ **Ավետիք:**

Հասցես Gran Rue Pera
Kutchuk Parmak Kapou, № 93
V. Dikranian Cu,

85. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1911, նոյեմբերի 24, Կ. Պոլիս

Շա՛տ սիրելի Վիկտորիա, ամսիս 9-ին ստացա քու թանկագին նամակդ. ասել չի ուզե, որ չափազանց ուրախացա. միայն ափսոս, որ սանիկս հիվանդ է, և դու էլ անգործ ես. զգում եմ, խորն զգում եմ, որ տրամադրությունդ լավ չպիտի լինի. բայց մարդ պիտի գիտակցաբար թե անգիտակցաբար մի քիչ էլ երազներով ապրի, մինչև որ երազները ձև ու կյանք ստանան:

Դու գրում ես, թե՝ ինձ ավելի ուժեղ էիր կարծում, քան այն, որ եմ իրոք. սակայն, հոգիս, չէ՞ որ ես շատ զգայուն մարդ եմ. սիրտս խոցվում է, երբ մտածում եմ, թե տարիներ պիտի հեռու մնամ հարազատներից, և ո՞վ գիտե ի՞նչ կլինի, ո՞վ ողջ մնա, ո՞վ մեռնի — միայն այդ, թե չէ ուրիշ հոգս չունիմ. վերջ ի վերջո Պոլիսը ապրելու քաղաք է. հազվագյուտ գեղեցկություններ հետ թեև ունի զզվելի կողմեր, բայց առավելությունները անուրանալի են. ամենից առաջ

աքանչելի բնական գեղեցկություններ. կախարդական Բոսֆորը, զմրուխտյա կղզիներ. մինչև այսօր ձյուն չէ եկել. վառարանները չենք վառում, տաք, արևոտ օրեր և լուսնակ գիշերներ ենք վայելում. ծովափերը մշտադալար, ծաղիկներով փողոցները լի. աճագին փունջը ծաղիկների՝ հիմա կարելի է 20 կոպեկի գնել: Քաղաքը աներևակայելի կենդանության մեջ է. հսկա քաղաք՝ 1.500.000 բնակիչ. տարբեր ազգություններ, խենթացուցիչ գեղեցկուհիներ. Եվրոպայից միշտ գալիս են նշանավոր արտիստներ: Ունի անթիվ ամենաշքեղ պալատներ, դղյակներ, ապարանքներ, մարմարյա ու ոսկե: Նավերի անձայն անտառ է շուրջդ, լեզուների Բաբելոն, քաղաքական անակնկալների խառնարան, հրաբուխի կրատեր: Ամենասիրուն կանանց հետ մրցում են արաբական ձիերը. սակայն այս բոլորի հետ միաժամանակ, մտավոր քիչ կյանք կա. չկա կարգին բիբլիոտեկա, համալսարան, և այլն:

Օրերս վատ չեն անցնում. երբեմն նույնիսկ լավ են անցնում. օրեցօր ծանոթներս շատանում են, շրջանս ընդլայնում. ընկերներ՝ տեղական և Կովկասից շա՜տ ունեմ, նույնիսկ լավ ընկերներ: Տնտեսապես թեև ապահով չեմ, բայց լավ եմ ապրում մինչև հիմա. ո՛չ մի բանից զուրկ չեմ, թատրոն-օպերա միշտ հաճախում եմ. այստեղ առհասարակ մարդիկ լավ են հագնվում, և ես հետ մնացողներից չեմ. օրիորդներ ու տիկիններ հետաքրքրվում են, բայց և այնպես այդ բոլորը ոչինչ. սիրտս տեղը չէ, կարո՜տ ունեմ, մե՜ծ կարոտ. ինձ թվում է, որ ես ավելի լավ պայմանների արժանի մարդ էի, քան որ ինձ վիճակվեց... Վերջապե՜ս:

Մոտ օրերս գնում եմ անպատճառ մոտակա մի գյուղաքաղաք, ուր կա հայկական մի նշանավոր գիտական վանք. մի ամիս կամ գուցե 2 ամիս պիտի մնամ և վերջնականապես «Ուստա Կարոս» ավարտեմ. այստեղ, Պոլսում, չի կարելի մեծ աշխատանքներ անել. ջղային-նեվրոզ միջավայր է — մանր-մունր բաներ կարելի է միայն գրել, իսկ մեծ գործի համար հարկավոր է անդորր վայր և անխանգար զբաղմունք-պարապմունք:

«Ուստա Կարոն» վերջացնելուց հետո կամ պիտի գնամ արտասահման՝ Վիեննա, մի տարով համալսարանում լսելու,

կամ արևելք՝ ուղևորության. երկուսից մեկն ու մեկը անպատճառ: Ուղևորությունս որոշված է, և կախված է ինձնից, գնա՞լ, թե՞ չգնալ. իսկ ես ուզում եմ գոնե մի տարով Եվրոպա լինեմ, մի փոքր փիլիսոփայությամբ պարապեմ, քանի դեռ երիտասարդ եմ, կարող եմ, եռանդ ունիմ աշխատելու և յուրացնելու, թե չէ ուղևորությունը միշտ կարելի է. երկիրները տեղերից չեն փախչում, և ես դեռ շա՜տ ժամանակ ունեմ այստեղները քաշ գալու:

«Ուստա Կարոն», ինչպես երևում է, շա՜տ լավ բան է դուրս գալու. այս 4 ամիսը, ճանապարհին և այստեղ, բավական մշակեցի և խորհեցի:

Ձեռքիս տակ գրելիք շա՜տ բաներ ունեմ, իսկ հոգումս՝ շա՜տ նյութ:

Սիրելի բժիշկը զուր է ինձնից գանգատվում, որովհետև նրան 2 նամակ եմ գրել, երևի չի ստացել, որ անհնար է. ստացած կլինի, թեև երբեմն կորչում են նամակները:

Արդյոք ի՞նչ եղավ քու այստեղ գալդ. ի՞նչ պատասխանեց ընկերուհիդ, թե ծանոթդ: Բոլոր սրտով կուզեի այստեղ լինեիր. այն ժամանակ Պոլիսը ինձ համար դրախտ կլիներ:

Քու ծանոթ Գրիգորիս վարդապետ Պալաքյանը եկավ Էջմիածին կաթողիկոսական ընտրության համար. հաջողեցրու, նրան տես: Նրա ձեռքից բան կուգա այստեղ պաշտոն գտնելու:

Ապահարգան ստանալդ ինձ և՛ ուրախացրեց, և՛ տխրեցրեց, բայց ավելի տխրեցրեց: Սրտանց ցանկանում եմ, սակայն, քեզ բախտավորություն և ամեն լավ բան, ինչ որ դու կցանկանաս:

Մեր աստղը միշտ տեսնում եմ և միշտ խոսում եմ հետը — քեզ հետ: Շա՜տ խոստումներ է նա ինձ անում, շա՜տ երազներ է հյուսում ինձ համար, սակայն, եթե իմ երազներիս մի չնչին մասը կատարվեր, ես հիմա Աստծու չափ երջանիկ կլինեի. բայց նորից քաղցր է հավատալ երազներին և հեքիաթներին. դրանց գիտուց զուրկ մարդը աղքատ է և մուրացկան. պետք է հարբել երազների և հեքիաթների գինիով...

Իսկ դու ինձ համար ամենաշքեղ երազն ես ու հեքիաթը. և՛ կաս, և՛ չկաս. մոտիկ ես ինձ, շա՜տ ես մոտիկ, բայց և

չափազանց շա՛տ ես հեռու՝ մեր աստղի պես հեռո՛ւ, հեռո՛ւ...

Խնդրում եմ շո՛ւտ և շա՛տ գրես: Բոլոր ընկերներին հաղորդիր բարևներս. համբույրներս բժիշկին, սաևիկիս և քեզ:

Միշտ քո, միշտ քեզ սիրող՝ **Ավետիք.**

86. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1911>, Ցոլիս

<...> Հոգիս, բժիշկին էլ ասա, որ ինձ համակ գրե. ի՛նչ եք անում, ո՛ւր եք... Եթե այսպես շուտ ինձ մոռացաք, տարիներ հետո անունս իսկի չպիտի հիշեք նույնիսկ:

Աչքից հեռու — սրտից հեռու:

Իսկ ես Ձեզ միշտ հիշում եմ և անչափ, անչափ կարոտում:

Նամակս կարճ եմ գրում, որովհետև հույսս կտրել եմ պատասխան ստանալուց՝ այսքանն էլ ներիք է ձեզ պես դավաճանների համար:

Ավետիք

Հասցես Constantinople

87. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1912, ապրիլի 10, Վիեննա

Տիկին Վիկտորիա.

Վերջապես բախտ ունեցա Ձեզ համակ գրելու. օրը մի քանիսը ուղարկում եմ բարեկամներին՝ հիշեցնելու, որ ինձ չմոռանան. ուրեմն Դուք էլ ինձ չմոռանաք:

Բարևներով և հարգանքներով՝ **Ա.վ. Իսահակյան**

88. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1912, ապրիլի 24, Պրինկիպո (Պոլիս)

Իմ շա՛տ սիրելի, իմ հոգի, իմ հոգուս հոգի, անգին Վիկտորիա, անհունորեն երջանիկ եմ զգում այս վայրկյանին, որ քեզ հետ եմ խոսում — գոնե գրով: Ստացա թանկագին նամակդ, և պատանու պես ուրախությունից վեր-վեր թռա. ի՛նչ է այդ. ես 40 տարեկանիս եմ մոտենում (36—37 տարեկան եմ) և այնպիսի երազական ժամեր եմ ապրում քո շնորհիվ, ասես թե 18 տարեկան տղա եմ, որ նոր եմ գրիչս թաթախում «Երգեր ու վերքեր» գրելու:

Ա՛խ, հազար անգամ ա՛խ, որ հեռացա Կովկասից. այս ի՛նչ դաժան ճակատագիր էր, որ վիճակվեց ինձ. և մինչև ե՛րբ պիտի օտար երկնքի տակ թափառեմ, ուր միակ հարազատը գլխիս վերև Մեծ-արջն է, որ տարի բոլոր այս մըշտագարուն երկրում շողում է գլխիս վերև և միշտ քո նվիրական անունը հիշեցնում ականջիս մեջ... Ձմեռս մի-երկու ամսով Պոլսից հետու ապրեցա Իզմիթ քաղաքում (ուր գնացել էի առանձին աշխատելու և համարյա վերջացրի «Ուստա Կարոն»). հենց լուսամուտիցս միշտ երևում էր գիշերը մինչև շատ ուշ՝ ժամը 3-ը՝ այդ արջը, որի անունը որքան որ անբանաստեղծական է, իսկ հուշերը լիքը հոգեկան կախարդանքով...

Շա՛տ զգացմունքներ կան մեջս՝ սեր դեպի ծերունի մայրս, դեպի երեխաս, դեպի մանկությունս, դեպի հայրենի դաշտերը, և դեպի շա՛տ բաներ, բայց զգացմունքս դեպի քեզ լցնում է հոգիս մշտնջենական հույսով, և մի գեղեցիկ, մխիթարիչ գուրգուրանքով. մի՞թե կարող էր պատահել, որ տարիներ՝ ես համարյա անտարբեր անցնեի մոտովդ, և հանկարծ այսպիսի լուրջ հակում տածեի դեպի քեզ — զարմանալի է, իրավ, և ճակատագրական է, և նույնիսկ դժբախտ: Ո՞վ է հաշտում ինձ, ի՛նչ ճակատագիր է իշխում ինձ վրա, ի՞նչ պետք է լինի իմ վերջը... Շա՛տ եմ տանջվում, և երբեմն շա՛տ անհույս եմ տանջվում. իսկ վատն էլ այն է, որ ես միայնակ եմ տանջվում, օտա՛ր, պանդո՛ւխտ իմ վշտի հետ: Ա՛խ, մի՞թե ես այնքան հիմար էի, որ անգիտակից

կերպով խաղացի իմ սրտի հետ, իմ բախտի.— ո՞վ գիտե, գուցե հիմար էի. կամ գուցե շատ միամիտ, բայց շա՜տ պատըժվեցի. հիմարության համար այդչափ չպիտի տանջվի մարդ, բայց ես շա՜տ եմ տանջվում... Մխիթարությունս միայն պարապմունքս է, և ապագայի հույսերը...

Ընդհատում եմ այս տխուր տողերը... Ես կպատմեմ իմ կյանքից, գիտեմ, որ հետաքրքրվում ես: Սիրելիս, ես ապրում եմ մարտի վերջերից Մարմարյա ծովում, իշխանաց հին պատմական կղզիներից մեկի վրա — Պրինկիպո կղզին: Պոլսից ժամ ու կես հեռու է այս կղզին, որ ուղղակի զըմրուխտ է ծովի մեջ. սա ամենասիրուն կղզին է ծովում, արիստոկրատների, պրինցների, դեսպանների, իշխանների աքանչելի ապարանքներով լի. խաղաղ, անդորր, և շողշողուն, ալիքները միշտ գուրգուրում են կղզու չորս կողմը. կղզին ծածկված է մայրի անտառով, և հազար ու մի տեսակ ծաղիկներով, վարդերով, թզենի, դափնի, և այլն, և այլն: Իմ տունը գտնվում է կղզու վերև, բլրի գլխին, անտառի ափին. մեկ լուսամուտս անտառի վրա է բացվում, մեկելը՝ ծովի: Պանսիոներ եմ մեկի մոտ. ունեմ փոքրիկ սենյակ, գրասեղան, դիվան... Ամբողջ օրը կարդում եմ, գրում, և ծովափին ու անտառում թափառում: Ընկերներ կան, ինձ պես տարագիր. Պոլիսը քաղաքական թվածների <?> կենտրոնավայրն է հիմա. իմ ընկերներն են՝ մի ռուսական հրեա, շատ նշանավոր անձ, մեծ գիտությամբ և անցյալով. հասարակագետ է, և թղթակից եվրոպական լրագրերի. մի վրացի, մի հայ, մի թուրք, մի ֆրանսիացի... Միշտ միասին ենք լինում. խոսում ենք ամեն լեզվով, սակայն տիրող լեզուն ռուսերենն է. բոլորը գիտեն, բացի ֆրանսիացուց: Նավարկում ենք, դոմինո ենք խաղում, և շաբաթը մի անգամ Պոլիս ենք գնում, քաշ գալու... Ես մի քանի ընտանիքներ ունեմ ծանոթ, տեղական բուրժուա հայեր, որ կղզումն են ապրում, երբեմն լինում եմ մոտերը: Պոլսի բուրժուաների լակոտները՝ հայ, թուրք, հույն՝ իրենց մետրեսները — սիրուհիները այստեղ են պահում, և ամեն քայլափոխի տեսնում ենք զարմանալի գեղեցկուհիներ — ֆրանսուհի, իտալուհի, հույնուհի, իսպանուհի և չերքեզ-թրքուհի. երբեմն նրանց հետևից ենք ընկնում մեր մակույկներով ծովի մեջ. սակայն այստեղ վտանգավոր

եմ սիրային արկածները — արևելյան խանդոտ մարդիկ են:

Պարապմունքս — հոդվածներ եմ գրում թերթերի համար, պատկերներ, պատմվածքներ, թարգմանություններ: Դրամ հայթայթում եմ միայն գրելով. ո՛չ մի տեղից, իհարկե, փող չեմ ստանում. երեխա և կին ունեմ, ինձ ի՛նչ կհասնի: Սակայն այս աշխատանքից այնքան էլ գոհ չեմ, որովհետև համարյա փողի համար եմ գրում. գրիչս վաճառում եմ. առաջ ես գրում էի իմ հոգու համար, իսկ հիմա հացի համար. բայց և այնպես ազատ ժամեր եմ գտնում և՛ իսկական գեղարվեստի համար: Գրել եմ մի քանի հատ շատ լավ պատմվածքներ և ոտանավորներ. գրել եմ և մի լավ հեքիաթ, որը հիմա առանձին արտատպվում է՝ քեզ կուղարկեմ. անունն է «Աղա-Նազար»: Աշխատում եմ և մի երկու ուրիշ լավ նյութերի վրա: «Ուստա Կարոն» վերջացած է, բայց մի 2—3 ամսվա աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեմ, հղկեմ, կոկեմ. երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեմ, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի: Թարգմանում եմ Համսունի «Պանը» և «Վիկտորիա» վեպերը, Թիֆլիզի հրատարակչական ընկերության հանձնարարությամբ. բավական փող կստանամ և մի քանի ամիս ազատ կլինեմ: Հավանական է, որ գնամ ամառը մի-երկու ամսով Հայաստան ճամփորդելու և նյութեր հավաքելու. դրա համար միջոց կա, բայց վախենում եմ ավազակների հարձակումներից: Չգիտեմ աշունքվանից ո՞ւր եմ լինելու. արդյոք նորից Պոլի՞ս, թե՞ Եվրոպա, թե՞ Էրզերում՝ թերթի խմբագիր (ինձ դիմած են): Եթե կարողացա Եվրոպա գնալ, կինս էլ կուգա անշուշտ, իսկ եթե ոչ՝ կինս Պոլիս կամ Կարին չի գա. եթե ոչ Պոլիս, Կարին որ (Էրզերում) անպատճառ չի գա:

Ասում են, թե 1913 թվին ներումն կլինի, և կարող կլինինք վերադառնալ. օ՛, եթե եղավ, ի՛նչ լավ կլինի. սակայն չեմ հուսա: Հա՛, շնորհավորում եմ ձեր Լևոնի ազատվելը. ո՞վ գիտե, գուցե ես էլ կազատվեի... Բայց եղածը եղած է:

Սիրելիս, ինչո՞ւ ես կարծում, թե բժիշկին ինձ համար են խուզարկել. կառավարությունը հաստատ գիտեր, որ ես հե-

ռացել եմ, և սխալ է, թե իմ գրքերը գրավում են. ես դեռ մեղադրված չեմ դատարանով, իսկ առանց դատարանի որոշման այդպես բան չի կարող լինել, չէ որ իմ գրքերը ցենզուրով թույլ տված են. դուք թյուրիմացության մեջ եք, և ձեզ այդպես ասողները օրենքից տեղեկություն չունին: Եվ հետաքրքիր է՝ ե՞րբ է եղել այդ խուզարկությունը:

Մոտերս ստացա «Գարուն» ալմանախը № 3. ամբողջական քննադատական. այնտեղ կա և իմ մասին՝ «Դիմագծեր»-ի մեջ. Թումանյան և ես: Կա և Խ. Աբովյանի մասին՝ «Հանճարեղ սիրտ», ձեռք բեր և կարդա:

Գրի՛ր քո կյանքից. ի՞նչ ես անում, ինչպե՞ս ես կառավարվում. արդյոք մորդ հետ միասի՞ն ես ապրում. ի՞նչ է անում բժիշկը. ես կարծում էի, թե նա Ալեքսանդրապոլից հեռացած կլինի. շա՛տ էր դժգոհ. իսկ ինչպե՞ս է սանիկս. արդեն բավական մեծացած կլինի. զարմանում եմ, որ կհիշե ինձ. խեղճը ինձ «պապա» է ասում, չգիտենալով, որ իմ երեխաս էլ իրեն պես անհայր է մնացել. աստված տա, որ ես այնպիսի դրության հասնեմ, որ երկուսին էլ իսկական հոր պես անխտիր աշխատեմ՝ մարդ դառնամ. հին ժամանակ սանիկներին կրթում էին քավորները. կրթության հոգսը կնքահոր վրա էր — նա էլ է հայր. կնքահայր՝ քրիստոնեական — հոգեկան հայր:

Վերջացնում եմ նամակս. գիշերը ժամը 11-ից անց է. թեթև քամի կա. անտառը ղողանջում է, իսկ ծովը շառաչում. բանում եմ լուսամուտս. տեսնում եմ աստղը... արդյոք այդ րոպեին դու ի՞նչ ես անում... Կարոտով համբուրում եմ ձեռներդ, և քեզ, և գլուխդ, և սանիկիս:

Միշտ քո՝ **Ավետիք**

89. <ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ>

<1912>

Պրինկիպո կղզու գունատիպ լուսանկար-բացիկի վրա (անթվակիր, առանց հասցեի, հավանորեն դրված 1912 թ. ապրիլի 24-ի նամակի ծրարում).

Իմ տունս դրանից մի քիչ վերև է. այդ ծովափի նոճիների մի շարք է — դեմի ափը ուրիշ կողի է՝ Հալկի անունով: Թեև Պոլսից $1^1/_2$ ժ. ճամփով հեռու ենք, բայց Պոլսի թաղ է կոչվում. անտեր Պոլիսը 20 վերստի վրա է փռված. ամբողջ Բոսֆորի, Ռսկեղջյուրի և Մարմարայի ափերին ու կղզիների մեջ: Ա. կարգով նավը՝ գնալ և գալ՝ արժե 50 կոպեկ, կարծեմ թանկ չէ: Բ. և Գ. գնալ անկարելի է լինում. ուղղակի շենց է. այնքան երթևեկություն կա ափերի, կղզիների և քաղաքի միջև:

Մի այլ բացիկի վրա՝ Կ. Պոլսի մի տեսարանով (գունատիպ լուսանկար. նույնպես առանց հասցեի, հավանորեն ուղարկված վերը հիշված (1912, ապր. 24) ճամակի հետ.

Սա Բոսֆորի այն տեղն է, որտեղից երևում է Այա-Սոֆիան: Երեք մզկիթ է երևում. միջինը՝ մեծ, դեղին գույնով—դա է Այա-Սոֆիան (սուրբ Սոֆիան). իսկապես գեղարվեստական մի հրաշք. արտաքինը — ոչինչ. հրաշքը ներսն է. շենքը IV դարուց է, իհարկե, գիտես: Գեղեցիկ, շա՜տ գեղեցիկ է Պոլիսը, բայց ափսո՜ս որ անպիտան ձեռքերի մեջն է գտնվում: Այսպիսի սքանչելի դիրքով քաղաք չեմ տեսած և չկա աշխարհքի վրա, բայց մարմարների վրա շներ են ապրում:

Չկա մորալ, չկա պատիվ, չկա ճշմարտություն, այլ միայն և միայն—ոսկի, հաճույք, խարդախություն, կեղծիք, և զզվելի տեսակի պոռնկություն: Պոլիսը, սկսած բյուզանդական կայսրներից—հսկա պոռնկանոց է:

90. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1912>, մայիսի 8, Կ. Պոլիս

Սիրելի Օհաննես,

Շնորհավորում եմ ազատվելդ, և համբուրում եմ ճակատդ, ցանկանալով քեզ առողջություն և սրտիդ գեորա լավ օրեր:

Նամակաբերս՝ պ. Ոսկան Մարտիկյան, թուրքական հայոնի պաշտոնյա է (պետական քննիչ), լավ հայ և հասարակական ազնիվ գործիչ. հիմա գնում է Թուրքիա՝ հայկական նահանգները քննություն կատարելու:

Մի քանի օր մնալու է Թիֆլիզ. խնդրում եմ ծանոթացնես շրջանիդ հետ, սիրելի Լեոյի, Շիրվանզադեի և ուրիշների հետ. Դուք ևս մոտիկ ծանոթացեք հետը. հետաքրքիր մարդ է: Խնդրեմ նույնպես մեկը տաք հետը՝ քաղաքը շրջելու:

Անցնելու է Երևան, Էջմիածին. խորհուրդներ և հանձնարարություններ կտաք:

Խնդրեմ ցույց տվեք պարոնին հայկական հասարակական հիմնարկությունները, դպրոց, թատրոն, Բարեգործական ընկերություն:

Հուսով եմ, որ չեք զլանա:

Համբուրներով և բարևներով բոլորիդ,

քո՝ **Ավետիք**

Օհանյանս ջան, գնացեք Օրթաճալա և մի լավ քեֆ արեք:

91. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳՈ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ

1912, մայիսի 8, Պրինկիպո

Ստացա ապրիլի 15-ի թվակիր Ձեր գրությունը, որով Մասնաժողովդ հանձնարարում է ինձ թարգմանել Կ. Համսունի «Պանը», տպագրական թերթին 26 ռուբլի վարձատրությամբ. Երեկ ստացա «Պանի» գերմաներենը — Maria von Barch-ի թարգմանությամբ, որը «Պանի» միակ իրավատեր թարգմանիչն է Գերմանիայում, հրատարակչ. Albert Zaugen, München թերևս հարկավոր գա Ձեզ այս՝ համեմատելու համար:

Շուտով կձեռնարկեմ թարգմանությունը. հույս ունեմ, ոյ նկատի կունենաք ինձ հաջորդ թարգմանական ձեռնարկ ների մեջ:

Ընդունեցեք հարգանքներս՝
Ս.վ. Իսահակյան

92. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1912, մայիսի 28, Կ. Պոլիս

Սիրելի Օհաննես.

Սրանից մի 10 օր առաջ քեզ մի ապահովված նամակ էի գրել «Հորիզոնի» հասցեով: Սոֆիկը գրել էր, որ գնամ Վիեննա, ես կգամ, ամեն բան վերջացած է.— ես պատրաստվում էի գնալ, երբ նամակ ստացա, թե՝ Օհաննեսը ասում է, որ սպասեմ, տեսնենք ի՛նչ կլինի:

Ես բնավ հույս չունեմ, թե հաջողվի արտասահման գնալը. ես հավատ չունեմ իմ աստղին և իմ բարեկամների վրա, չնեղանաս, եթե ասեմ, թե չեմ հավատում և ընկերներին, տա Աստված, որ սխալ լինեմ:

Խեղճը — Սոֆիկը, մեռավ սրան-նրան դիմելով և խեղճին խաբեցին խոստումներով՝ է՛լ Մեսրոպ եպիսկոպոս, է՛լ Հով. Ամիրխանյան և ուրիշներ. սակայն այդ խոստումները վերջը ինձ քաղցի դուռը բերին. ես մտադիր եմ գնալ հայկական գավառները վարժապետության, ուրիշ ճնար չունեմ — դիմեմ սրան-նրան փող ուզելու—եթե դիմեմ էլ չեն տա, իսկ քաղցած մնալ էլ չի կարելի. ուսուցչության գոնե ամսական 40 կամ 50 ո. կտան, մի կերպ կապրիմ, թեև գավառը վտանգավոր է, բայց ճարս ի՞նչ:

Այս նամակը գրում եմ քեզ՝ քար սեղմելով սրտիս վրա, գրում եմ և հազիվ թե հույս ունիմ դրական խոսքի վրա, որովհետև դրա համար ես բավական փորձված եմ. սակայն իմացած եղիր բառացի իմաստով, որ քաղցած եմ... գրում եմ, որ հետո չասեք, թե ինչո՞ւ չգրեց. չգիտեիք...

Այստեղ բոլորովին մենակ եմ և ընկերներ չունեմ. դաշնակցական խմբակից հեռացած եմ և համարյա բոլոր կապերս

խզել եմ. մնում է, որ հրապարակավ հայտնեմ և փեշերս թափ տամ դաշնակցական կոչված սրիկաներից...

Ես չունեմ ո՛չ Սիսրոնյանի երեսը և ո՛չ էլ նրա բարեկամները. <...> Ես ի՞նչ եմ որ... Եթե ես արժեք ունենայի ժողովրդի կամ ընկերների աչքին, այս դրության չէի մնալ. ոգոված լինի հայ կյանքն ու նրա գրականությունը և նրա ամեն ինչը... ծծեցին հյութերս և ձգեցին փողոց:

Ես ոչ ոքին չեմ կարող խնդրել, եթե կարող ես մի բան անել, արա, եթե ոչ — Աստված հետդ: Աստված քեզ էլ բարի տա, բոլոր մարդկանց էլ:

«Մշակը», լսել եմ, որ արտատպել է ամերիկական մի հնչակյան թերթից մի նամակ, ուր ինձ մեղադրում են բանագողության մեջ (հիշտ քո հարցը Դրամբյանի հետ). ես պահանջել եմ, որ գրածս լեգենդան Բուդդհայի կյանքից կողքկողքի տպեն Լագըրլըֆի լեգենդայի հետ համեմատելու համար. կուղարկեմ թերթի մեջ տպած իմ նամակն ու երկու լեգենդները (դեռ չէ հրատարակված, սպասում եմ այսօր-էգուց) և խնդրում եմ «Հորիզոնի» մեջ հարց բարձրացնեք անաչառորեն, համեմատեք երկուսիս գրած լեգենդները: Այնքան հիմար են մարդիկ և չարամիտ, որ կարծում են, թե միայն մի մարդ կարող է օգտվել համաշխարհային լեգենդներից, և «Մշակն» էլ այնքան լիրբ է, որ առիթ բաց չի թողնում ինձ հարվածելու. նույնիսկ կարող եք իմ և Լագըրլըֆի գրածները միասին տպել «Հորիզոնում» և հարցը դնել հրապարակավ «Մշակի» դեմ: Ս. Լագըրլըֆի լեգենդան տպված կա Универсальная библиотека (изд. «Польза», Антика, Москва).
275 թվի մեջ «Легенда о гнезде» (լեգենդա բնի մասին) գրածն է, իսկ իմը կուղարկեմ. ականջի ետև մի՛ ձգիր. կամ տուր տղերքը անեն: Ես մեծ աղմուկ եմ հանել այստեղ դրա շուրջը: Սարսափելի մարդիկ են այս հնչակյանները, սակայն անիծած և՛ դաշնակցականների հերը:

Սպասում եմ նամակիդ:

Համբույրներով բոլորիդ,

քո՝ **Ավետիք:**

Ես չեմ կարող իմ անունով դուրս գալ Կովկասի թերթերի մեջ. ձեր պարտքն է հանդես գալ, հանուն գրականության պաշտպանել մի գրողի դատը, որը անպաշտպան է: Ձեր համար էլ լավ է մի անգամ ևս բռնել այդ լրբերի — «Մշակի»— օձիքը:

Հ. Գ. Սոֆիկը գրել էր, թե Մոսկվա որոշել են իբրև թե ինձ ամսական 25 ռ. տալու, սակայն դրա մասին ինձ ոչ միայն բան չեն գրել, այլև աշխատում են որոշած հոնորարիս գինը կրճատել, նվազեցնել:

Առհասարակ վերջերս ապրուստիս բոլոր միջոցները ցամաքեցին. թերթերը չեն վճարում, կամ ամիսը մի անգամ կարող են տեղ տալ՝ դրամ չունենալու պատճառով:

Թարգմանության համար միայն մի բան կա ձեռքս՝ Հրատարակչականի (Թիֆլիզի) հանձնարարած «Պան» վեպը, որը ավանս չի տալիս: Ինչո՞վ ապրել: Թուրքիա միայն ձրի կարելի է գրել. ամեն օր երեսիցս կախ են ընկնում ձրի բան խնդրելու:

Ավ. Իս.

93. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1912>, հունիսի 4, Կ. Պոլիս

Սիրելի Օհանես.

Այս երրորդ նամակն է, որ դրկում եմ քեզ: Այսօր կնոջիցս նամակ ստացա, որ դու գրել ես նրան Հ. Մելիքյանի պատասխանը. իմ բոլոր հոռետեսությունը ի կատար է ածվում. դու մեղադրում ես ինձ, որ ընկերներին չեմ գրում դրությանս մասին և չեմ դիմում հարուստներին:— Դու թեև խելոք մարդ ես, սակայն ես էլ հիմար չեմ... Հարուստների մոտ միջնորդ պիտի ունենալ մի քանի կոպեկ ստանալու համար, իսկ միջնորդներ ընկերները կարող են լինել, որոնցից ես զուրկ եմ. հույս քո վերա է. ինձ հուսազուրկ չանես, դու և քո Աստվածը. թե չէ ես Ս. Հարությունյանի պես գծուծներին լավ եմ ճանաչում: Հ. Մելիքյանի վրա հույս չունիմ, պոռոտախոս է, և խեղճ կնոջս իզուր է ջենտլմենի հույսերով կերակրել:

Սակայն ես անպատճառ գնալու եմ արտասահման, թեկուզ քաղցած մեռնեմ. գոնե «Հորիզոնի» մեջ ինձ տեղ տվեք, ապահովեցեք մի որոշ գումարով:

Ես Ահարոնյանից և մյուսներիցդ ի՞նչ պակաս գրող եմ, որ քաղցած մնամ. մեղավո՞ր եմ, որ ձեզ նման հարուստ բարեկամներ չունեմ. իսկ ո՞ւր է մնում գրչի ընկերակցությունը... Կյանքում ճիշտ որ ամեն բան սուտ է. չարչի գրչական եղբայրներ:

Համբույրներով՝ **Ավ. Իսահակյան**

Սիա հասցե՝
Librairie populaire „Ardzive",
Marpoudjilar, 22
Constantinople,

Հանձնել ՀԱՅԿ ԳՈՒՍԱՆՅԱՆԻՆ

94. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

1912, հուլիսի 4, Կ. Պոլիս

Մեծարգո պարոններ.

Կարդալով «Հանրային Մատենադարանի» հայտարարությունը, միտք ծագեց իմ մեջ առաջարկելու Ձեզ Անատոլ Ֆրանսի վերջին գործը՝ «Աստվածները ծարավի են». իրավամբ մի հոյակապ գործ, որ մեծ աղմուկ և հիացմունք պատճառեց Եվրոպայում: Այդ երկի թարգմանության համար թույլ եմ տալիս ինձ ներկայացնելու թուրքահայ հայտնի վիպագիր և ստիլիստ պ. Ռուբեն Զարդարյանին, որի գրվածքները, օրինակ՝«Ցայգալույսը» ծանոթ կլինի Ձեզ:

Այդ թարգմանությունը, եթե որոշեք, իհարկե, լինելու է թուրքահայ բարբառով, որով և մեծ ընդունելություն կունենա թուրքիո հայերի մեջ: Խնդրում եմ այս մասին մի որոշում կայացնեք և հայտնեք պ. Ռուբեն Զարդարյանին:

Ես վաղը մեկնում եմ Վիեննա, և այնտեղից պատիվ կունենամ Ձեզ հաղորդելու, թե ինչով կարող եմ մասնակցել Ձեր այդ շա՜տ օգտակար ձեռնարկին: Ավելորդ չի լինի

հայտնելու նույնպես, որ Ձեր ինձ հանձնարարած գործը՝ «Պահի» թարգմանությունը վերջանալու վրա է. կուղարկեմ Վիեննայից:

Ընդունեցեք հարգանքներս և բարևներս:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան:**

Զարդարյանի հասցեն՝
R. Zartarian
Rue Feridie, № 66, Pera,
Constantinople.

95. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

<1912>, հուլիսի 16 (29), Վիեննա

Սիրելի Վիկտորիա.

Արդեն մի շաբաթ է, որ Վիեննա եմ, և կմնամ առայժմ. Պոլսից հոգնեցի, և շա՜տ խառն էր դրությունը. զբաղվել չէր կարելի: Վիեննան հրաշալի է, և արդեն սկսել եմ պարապմունքս. սքանչելի սենյակ ունեմ, սակայն այս 2 միլիոն բնակիչ ունեցող ծով-քաղաքում միայնակ եմ. հայեր՝ միայն վարդապետներն են: Պոլսից գրածս նամակին պատասխան չստացա: Մոտ օրերս երկար նամակ կգրեմ: Առողջությունս լավ է, տրամադրությունս՝ վատ չէ:

Համբուրներս Պարետին <1 անընթ.> և բժիշկին:

քո՝ **Ավետիք**

96. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՐԳՈ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

1912, օգոստոսի 3(16), Վիեննա

Հուլիսի 10-ից լինելով Վիեննա, Ձեր հուլիսի 4-ի թվակիր նամակը (№ 275) միայն այսօր ստացա Կ. Պոլսից: Սրանով պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ «Պանը» թարգ-

մանել եմ արդեն, բայց դեռ չեմ սրբագրել և արտագրել: Այդ հապաղման պատճառներն էին՝ Պոլսից մեկնումիս անորոշ օրերը, և ապա Վիեննա, ուր բացառապես, մի ամսով, նպիտի զբաղվեի մի քանի պատմական-ազգագրական նյութերով: Մի 10—12 օրից հետո կմեկնիմ Զվիցերիա՝ բնակվելու, և անմիջապես «Պանը» կարտագրեմ և կուղարկեմ բնագրի հետ. ամենաուշը կլինի սեպտեմբերի վերջը, այնպես որ կարող եք հայտարարել. երաշխավորում եմ թարգմանության համար:

Շնորհակալությամբ ընդունում եմ Ձեր առաջարկը աշխատակցելու «Հառն. Մատենադարանիդ» հնար եղածին չափ, որովհետև ամեն կողմերից հանձնարարություններ ունեմ աշխատակցության — այդ էլ պատճառ եղավ Զվիցերիա բնակվելու՝ հանգիստ և անվրդով աշխատելու համար: Ընդունեցեք հարգանքներս,

Ձերդ՝
Ավ. Իսահակյան

97. ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

1912, սեպտեմբերի 4, Ցյուրիխ

Մեծարգո պարոններ.

Ուղարկում եմ այս գրությունը «Հառն. Մատենադարանի» համար. հաջորդ անգամին, եթե ժամանակ ունեցա, կուղարկեմ ընդարձակ մի բան:

Առայժմ, եթե ինձ գրելու լինեք, գրեցեք հետևյալ հասցեով. Zürich, poste Restante, Bayazidian.

Անշուշտ կղրկեք «Հառն. Մատենադարանից», ինձ:

Խորին հարգանքներով՝
Ավ. Իսահակյան

98. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1913, ապրիլի 23, Ժընև

Սիրելի Գարեգին.

Նամակդ ստացել եմ, շա՛տ վաղուց է, սակայն օրեցօր էի ձգում պատասխանը. մեկ էլ որ տրամադրություն չունեի. քեֆս շա՛տ կոտրված է. e fin.

Քո քեֆդ լավ կլինի, անշո՛ւշտ. ազա՛տ շրջում ես սիրուն քաղաքները, ընտանեկան հոգս չունիս. քո հոգսն էլ երևի «Գեղարվեստն» է, որի համար էլ երևի քունդ կտրել ես:

«Ուստա Կարոն»-ն... համարյա անմշակ ընկած է պորտֆելիս մեջ, և չեմ ձեռք զարկում մշակելու. ո՛ւմ համար, ինչո՛ւ համար գրեմ.— հայ հասարակության համար, որը կարիք չի զգում գրականության. փառքի համար — այդ ինձ երբեք չի հետաքրքրել. ուրեմն գրել խմբագիրների համար.— դրա համար էլ այնքան հիմար չեմ:

Հիմա դառնանք քեզ, սիրելի՛ս, հին ընկերս, համշահրիս. գրում ես, որ «Գեղարվեստին» նյութ տամ. ամեն մի խմբագրի տենչանքն է այդ, իր ձեռնարկը շքեղ դուրս բերել, բայց գրողին — ի՛նչ. չէ՞ որ գրողը ավելի իրավունք ունի, քան խմբագիրը. և եթե դու այնքան միջոց ունիս, որ Եվրոպան ոտաց տակ ես տալիս, մի՞թե այնքան փափկանկատություն չունիս (չեմ կարծում), որ մի գրողի դիմել — հանուն ինչ որ պատվի ու փառքի,— որ նստի աշխատի օդ կուլ տալով:

Իմացած եղիր, որ այլևս ոչ մի տող չեմ տա ձրի. այդ ավելի քան վիրավորական է. օրինակ «Հորիզոնում» նստած են անգրագետ մարդիկ և ամսական 100 ռուբլի են ստանում և դիմում են մեզ՝ փախստականներիս, համարյա ձրի աշխատել հանուն ժողովրդի. խնդրեմ մեզ դասեր չտան:

Եվ եթե դու ուզում ես ինձնից նյութ, ուղարկիր ավանս. ինչքան ուզում ես, և նրա համեմատ կստանաս. «Գեղարվեստիդ» ընդարձակ երեսը հազիվ 2 ռուբլիով լցվի. այդ հաշվով ավանս ուղարկիր, և ես էլ կուղարկեմ ուզածդ նյութը:

Մենք ողջ և առողջ ենք. երեխաս լավ է, մեծանում է. կինս էլ լավ է. մի կերպ քաշ ենք գալիս. ոչինչ չեմ անում, միայն ֆրանսերեն եմ սովորում:

Բարևիր, խնդրեմ, հայր Երեմյանին, և ներողություն խնդրիր, որ նրա գիրքը ստացել եմ, բայց բան չեմ գրել. տրամադրություն չունեի: Դու ինչպե՞ս ես, ինչպե՞ս են գնում գործերդ. մայրիկիդ առողջությունը ինչպե՞ս է, եղբայրներդ ո՞ւր են, Պարույրից ի՞նչ դուրս եկավ. կարծեմ—կարիերիստ:

Համբույրներով՝ քո **Ավետիք**

Հասցես. Genêve
«Դրոշակի» խմբագրություն՝
Avedis Bayazid
Շնորհավոր Զատիկդ

99. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

1913, ապրիլի 30, Ժընև

Շատ սիրելի բանաստեղծ
Հովհաննես Հովհաննիսյանին

Այս հանդիսավոր օրը, որ հայ հասարակության գիտակից մասը գալիս է Քո վաղաժամ ճերմակած գլուխը պսակելու,— ես հեռվից հեռու գլուխ եմ խոնարհում ուսուցչիս և ընկերիս առաջ՝ հայտնելով այն խորին սերն ու հարգանքը, որ անթառամ ունեցել եմ սրտիս մեջ՝ սկսած այն օրից, երբ Քեզ տեսա առաջին անգամները:

Առաջին անգամ ես Քեզ տեսա, երբ պատանի էի և աշակերտեցի Քեզ Գևորգյան ճեմարանում: Այն ժամանակ դու պայծառ երիտասարդ էիր՝ բանաստեղծական ցողով ու շաղով վառ, այն ժամանակ ես առաջին անգամ խմեցի բանաստեղծության նոր, իսկական աղբյուրից, որովհետև դու ինքդ էիր ոսկեղեն աղբյուրը, որ կարկաչում էիր հայոց հին և նոր երգերի սահմանագծում: Զանձրացնելու չափ շատ է ասված, որ հայ գրողը նահատակ է. սակայն նահատակ է ո՛չ միայն տնտեսապես, այլև այն, որ նա չի կարդացվում, անհայտ ու մոռացված է մնում և նույնիսկ արհամարհված, որովհետև հայ մասսան ցավալիորեն տգետ է, իսկ գլուխը

օտարացած, այլասերված: Եվ ուրեմն որքան մեծ սեր պետք է ունենալ դեպի մայրենի խոսքը, որ երեսուն տարի շարունակ բարբառել է անապատի մեջ:

Եվ քո կերտվածները, քանակով քիչ, իսկ որակով սքանչելի և անգնահատելի, իբրև իսկական գոհարներ, կշողան ու գերագույն հրճվանքով կլցնեն ընտիր հոգիները այնքան ժամանակ, որքան ժամանակ Արագը կուգա լափին տալով, և Ալագյազ բարձր սարին ձյուն կկիտվի կատարին, և հայ խոսքը կհնչե Ազատ Մասիսն ի վեր...

Հոգով ու սրտով մասնակցում եմ Քո տոնին, բոլորի հետ միասին բարձրացնում եմ գավաթը և ջերմ-ջերմ համբուրելով Քեզ, իմ շատ սիրելի ուսուցիչ և ընկեր, մաղթում եմ առողջություն, ուրախություն և երկար կյանք:

Միշտ քո՝ **Ավետիք Իսահակյան**

100. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1913, մայիսի 30, Կոլոնիա

Սիրելի Գարեգին.

Վաղուց է ստացել եմ ուղարկածդ 40 ֆր. գլուխս շա՜տ խառն էր, և պատասխանը օրեցօր էի ձգում. պատճառն էլ խառնվելու այն էր, որ ընկել էի գյուղերը, ամառանոց էի փնտրում. վերջապես գտանք և տեղավորվեցինք. նոր եմ տեղափոխվել ու սարքվել. երկուշաբթի օրվանից սկսում եմ պարապմունքներս:

Նամակիդ կետերին չեմ պատասխանում, որովհետև երկար ու բարակ բան կլինի. մոխիր ցանենք դրանց վրա. թո՛ղ մնա:

«Ուստա Կարոն» երկուշաբթի օրվանից սկսում եմ ամբողջը նորից գրել, մշակել. և չգիտեմ — քեզ երբ հարկավոր կլինի, որ մի գլուխ, մի լավ գլուխ հասցնեմ. ուզում ես շուտով գրիր, հենց ամենից առաջ այդ գլուխը պատրաստեմ: Շատ ծանր աշխատանք է այդ «Ուստա Կարոն». 500 երես նորից գրել, անթիվ նյութերս նորից քրքրել, տող-տող սրբագրել, ուղղել, հղկել, մշակել:

Ես վերջերս այնքան մտքին եմ հասել, որ քիչ գործ տալ, բայց անթերի գործ տալ. այդ առթիվ «Աբու-Մահարին» խիստ մշակման ու կրճատման եմ ենթարկել. նույնը և բոլոր մյուս գրվածքները. նույնիսկ ուղեգրություններս: Կլասիկ բան պետք է գրել. թե չէ ներկա գրականությունը միայն շաքսուժ է:

Հետո գիրք — քանի երես կարող եմ ինձ տալ. դա շա՜տ կարևոր է. ըստ այնմ պիտի վարվիմ. մատթիմում և սինիմում չափը — երեսների:

Ես առայժմ լավ եմ. տրամադրությունս լավ չէ, բայց ուժերս հավաքում եմ՝ չընկճվելու համար:

Դու մինչև ե՞րբ ես մնալու, և ապա ո՞ւր ես գնալու:

Ի՞նչ նորություններ ունիս. ինչպե՞ս ես գնում գործերդ. «Գեղարվեստի» գործն ի՞նչ վիճակի է. լավ նյութեր ունի՞ս, ո՞վ կան գրողներից՝ հին գրողներից՝ Թումանյան, Վ. Տերյան, Դ. Դեմիրճյան կան թե ոչ:

Լուսանկարս էիր ուզել — մոտս չկա. իսկ նկարվել, առայժմ տրամադիր չեմ:

Բարևներ տիկնոջդ ու իմ կողմից.

Քո՝ **Ավետիք**

Հասցե. France.
Collongen sous Salive
(Haute Savoie)
Avedis Bayazid
30 մայիսի
Կոլլոնժ

101. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913>, հունիսի 23, Կոլլոնժ

Սիրելի Գարեգին.

Մի քանի օր առաջ ուղարկեցի մի գլուխ «Ուստա Կարոյից»: Ավելի հարմարը չկարողացա ընտրել, որովհետև մյուսները՝ մի քանիսը երկար էին, մի քանիսը՝ կապված ուրիշների հետ, մի քանիսն էլ՝ անհամապատասխան ճ. Երեմյանի պահանջներին: Իսկ այս գլուխը ինքնամփոփ մի բան է,

մյուսների հետ կապ չունեմ, մի տրոշ քան է ինքնին, և կարծում եմ լավն էլ է: Մի ճաշակ կտա վեպիս, որ աստված գիտե երբ պատրաստ կլինի, քանի որ հանգամանքներս չեն ներում ամբողջապես դրան նվիրվել:

Ողանավորներ ներկայումս չունեմ ձեռքիս տակ. մի քանի հատ կային, ուղարկեցի «Նոր-Հառաջին», «Հայրենիքին», «Ազատամարտին»:

Գրիր, թե ստացա՞ր, և ի՞նչ կարծիք ես հայտնում: Ինչպե՞ս են գործերդ. ե՞րբ ես գալու մեր կողմերը: Մենք ողջ և առողջ ենք, քաշքշվում ենք. բարևներ ճ. Երեմյանին և ծանոթ հայր-սուրբերին:

Համբույրներով քո՝ **Ավետիք**

102. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

1913, հունիսի 25, Կոլոնիա

Սիրելիք, վաղուց է ստացել էի նամակներդ, բայց սպասում էի և՛ փողի գալուն, որ մի անգամից պատասխանեի. երեկ ստացա թե՛ Մկրտչից և թե՛ Գինովաբեից փողը. շնորհակալություններս:

Ամենից առաջ մենք շատ լավ ենք, մանավանդ Վիգենը, որ արդեն կատարյալ մարդ է գարձել, խելքով. առյուծ է, բայց շատ չարն է. ֆրանսերեն հասկանում և խոսում է. շատ անգամ նրան չենք հասկանում, մեզնից լավ է խոսում, որովհետև ամբողջ օրը ֆրանսիացի երեխաների հետ է: Հաճախ հիշում է Ապլային, Աքային, Գինովաբեին, Միռակին և Կոլյային. մյուսներին մոռացել է. ձեզ էլ, որ հիշում է՝ ձեր տնեցն է անում, բայց որ պատկերները ցույց ենք տալիս — անունները տալիս է համարյա բոլորի:

Չգիտեմ ձեր ականջին էլ հասել է, թե ոչ, բայց ինձ շարունակ գրում են պատասանմանի ընկերները, թե Պետերբուրգում լսել խոսում են, որ մեր գործը պետք է վերջացնեն և մեզ բոլորիս պիտի ներեն. հավանական է թվում, բայց իմ հավատս չի գալիս. տեսնենք ի՛նչ դուրս կգա. այսքան խոսքերի տակը երևի մի բան կա: Գրի-

խավորը ողջ մնալն է. ողջ մնանք, իրար կտեսնենք, ամեն բան լավ կլինի:

Հա՛, Վիգիի պատկերն էիք ուզել. անպատճառ կնկարենք և կուղարկենք:

Արսեն քեռուն նամակ գրեցի անցյալները. 30 ռուբ. ուղարկել էր, բայց նամակ չէր ուղարկել, որ իմանայինք, թե որտեղի՞ց էր:

Վիգիի ամսական 15, <ո.> ստացել ենք մինչև հունիսի վերջը, լրիվ: Առայժմ մի 2 ամսվա փող ունենք:

Թարգմանության 10 գիրքը ծախել պետք չէ, մի 2 օրինակ պահեցեք, մյուսները ցրեք երեխաների մեջ. լավ գիրք է, թող կարդան:

Կարոտագին համբույրներս և բարևներս Ապլային, Աքային, իրիցկնկան, Փեփրոնին և բոլորիդ:

Ավետիք

103. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

1913, հուլիսի 11, Կոլոնիժ

Հարգելի պարոններ.

Շնորհակալությամբ ստացել եմ «Պանի» հոնորարը լրիվ, սակայն գոնե մի նամակ չգրեցիք թարգմանության մասին:

Գրել էի նույնպես, որ նոր թարգմանական գործեր հանձնարարեք ինձ թարգմանելու. դրան էլ չպատասխանեցիք. չգիտեմ, ի՞նչ անեմ, որ հարկ համարեք պատասխանելու: Անշուշտ կարող էիք մի երկու տող գրել:

Ուրիշ բան չեմ կարող ենթադրել,— միայն ծուլություն:

Սրանով առաջարկում եմ հարգելի ընկերությանդ հետևյալը.— Բյուրգերի՝ «Բարոն Մյունհհաուզենի արկածները», գերմաներենից. համաշխարհային հռչակ ունի, իբրև հանճարեղ գործ փոքրերի և մեծերի համար. կլինի մոտ 200 երես:

Անդերսենի հեքիաթները ամբողջ գերմաներենից, նույնպես կլինի մոտ 6—700 երես:

Սերվանտեսի. «Դոն-Քիշոտ Լամանշեցի» ֆրանսերենից. մոտ 8—900 երես:

Այս երեք գործերն էլ մշտական արժեք կունենան հայ գրականության մեջ, Հ. Հ. Ընկերությանը, խոսք չկա, որ պատիվ կբերեն:

Եթե սրանցից մեկնումեկի վրա գոնե առայժմ համաձայնություն կարողանաք կայացնել, խնդրում եմ, ինձ անմիջապես հայտնեք, որ ձեռնարկեմ գործին: Պայմանների մասին էլ, հարկավ, կգրեք, սակայն այդ երկրորդականն է:

Եթե վերջին երկուսը կախված է նյութական, համեմատաբար մեծ գումարի հետ, առաջինը, «Մյունխհաուզենը», ընկերության սովորական գրքերի շարքիցն է:

Հարգանքներով և բարևներով,
Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

104. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913>, հուլիսի 15, Կոլոնիա 11, Կոլոնիա

Սիրելի Գարեգին, նամակդ ստացել եմ. ես դեռ սեպտեմբերի վերջը այս գյուղում կլինեմ. այնպես որ գալու լինիս, կհայտնես վաղօրոք:

«Աբու-Մահարին» ուզել էիր, սակայն, մոտս համարյա ոչ մի օրինակ չկա, միայն մի հատ ունիմ, նա էլ ձեռքիս տակն է, սրբագրում եմ. եթե հայր սուրբը ուզում է թարգմանել, Պոլսից իմ անունով թող մի հատ բերել տա «Արծիվ» գրավաճառից. իսկ եթե ուզում է սպասել՝ ես բերել տամ, սակայն, իմ զաղիես գնում է այդ գրավաճառին նամակ գրել. խոով եմ հետները. ինչպես բոլոր տեղի գրավաճառները, նույնպես այնտեղիներն էլ շատ վատ մարդիկ են: Մի՞թե վանքի գրադարանը չունի. կարծեմ հայր Երեմյանը պիտի ունենա: Բարևներ և համբույրներ:

Քո՝ **Ավետիք**

105. ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1913, հուլիսի 29, Կոլոնիա

Սիրելի Միսակ.

Ստացել ենք իր ժամանակին նամակդ, և «Պահը». երևի հիմա գյուղ գնացած կլինեք. Մկրտչից վաղուց է նամակ չունեմ, քեռանց Արսենին՝ վարդապետին նամակ էի գրել, բայց պատասխան չունեցա, նորից գրեցի. այն պարոններից փող չեմ ստանում, դրությունս ահորոշ է, գոնե եթե մեռնեմ, գըլխիս ճարը կտեսնեմ, ընտանիքս կթողնեմ Ժընևի, ես կերթամ Թուրքիա կամ Եգիպտոս վարժապետության. տեսնենք ի՞նչ կլինի:

Արձակ գրվածքներս փոփոխել եմ, կրճատել և լեզուն հղկել, իսկ Պոլսում տպվածները անկարելի է, որ գտնեք, իսկ որ ես արտագրեմ, ղրկեմ,— շա՜տ ժամանակ կպահի:

Դերենիկի գիրքը բերել տվի. ինձ էլ է թվում որ «Կյանքի տեսիլի» ա վարիանտը ավելի գեղարվեստական էր, թեև ձգձգված և շա՜տ անհնգնուրույն տեղեր. սա էլ առաջինի պես, փիլիսոփայական իմաստը բյուրեղի պես պարզ չէ. «Լենկթեմուրը» հաջող եմ գտնում, բայց շա՜տ մշակված լինելով չորացել, սխեմատիկ է դարձել. տեղ-տեղ էլ տղայական. ոտանավորներից ինձ դուր եկավ «Անուրջը» (վերջին ոտանավորը) և «Հավերժության ձեռքը»,— այս վերջինը թեև Վերլենի նշանավոր բանաստեղծության ուղղակի պարոդիան է: Բայց և այնպես Դերենիկը պզտիկ գրող չէ: Ջուր ես գտնում, թե Տերյանը հնացել է, նա նոր ձևերի, նոր տրամադրությունների երգիչն է, և այդպես էլ կմնա:

Վերջերս առհասարակ քիչ եմ գրում. հա՜մ տրամադրությունս է վատ, հա՜մ էլ ֆրանսերենը բավական ժամանակ է խլում. մեկ-մեկ էլ «Ուստա Կարոյով» եմ զբաղվում: Երբեմն էլ սրբագրում եմ հին ու նոր գրվածքներս, ոտանավորներս, պոեմները. «Մասրսա Մանուկի» վրա էլ եմ կանգ առնում, սակայն փոխելու եմ հերոսը. (Մանուկ Հայաստանը սխոլաստիկ է թվում): Կամ ժողովուրդն եմ դնելու տեղը կամ ազատված Մհերը: Դեռ վերջնականապես լավ չեմ մտածել, բայց հավանական է, որ Մհերն ընդունեմ: «Ուստա Կարոյի»

վերջի մասին էլ շատ եմ տատանվում. տեսնենք ի՞նչ կլինի: Բանաստեղծություններդ հրատարակելուս մեծ ուշք դարձրու ոտանավորի տեխնիկայի կողմից, մենք բոլոր հին գրողներս շատ անուշադիր ենք եղել, միայն Տերյանն է բացառությունը, որն ավելի մշակած է հանդես բերում իր գրվածքները, քան որ մենք էինք: Հետո աշխատիր, արձակ գրվածքիդ պես գրաբար քիչ բառեր գործածելուց. որքան կարելի է պարզ, նաիվ:

Մենք ողջ և առողջ ենք. Վիգենը օր-օրի վրա մեծանում է և սարսափելի կատաղում. ամբողջ օրը դուրսն է, դրացիների երեխաների հետ. հաց ուտելու է տուն գալիս, եկած ժամանակն էլ ամեն բան տակն ու վրա է անում: Գրիր, թե Գինովաբեի Նատոյից ի՞նչ լուրեր կան. ես հարցուփորձ արի, ոչ մի տեղեկություն: Ուղարկում ենք առայժմ մեր այս նկարները, հետո կուղարկենք լավը:

Ջերմ բարևներ և համբույրներս Ապրայիս, Աքայիի, Գինովաբեին, գյուղը, մեծին ու պստիկին, տերտերացը իրիցկնկան, Գևորգին և ընկերներիդ. ասա՛ ընկերներիդ, որ մեծ հույսեր չկապեն վրաս, մի հող ու մոխիր դարձած ազգի կորած, մոլորած, կիսակուշտ-կիսաքաղցած բանաստեղծից մեծ բան սպասելը երազանք է. ինչ որ լինում է, այդ էլ մեծ բան է: Շուտով պատասխանիր, մենք մինչև հոկտեմբեր այս գեղումն ենք լինելու:

Համբույրներով քո՝ **Ավետիք:**

Մեր հասցեն՝ Франция. Collonges Sous
Solevie (Houte-Savaie)

106. ԳԻՆՈՎԱԲԵ ՋԱՐԻՖՅԱՆԻՆ

<1913>, հուլիսի 29

Սիրելի Գինովաբե.

Վաղուց է նամակ չունեմ քեզնից. ե՞րբ ես գալու.— նորից կրկնում եմ, որ շա՛տ բան չբերես՝ իզուր բեռ չանես. 10 ֆ. պահիր, մի քիչ փշատ. (երեխայի համար), մի քիչ չայ, թյութուն:

Հագուստը ավելորդ էր, բայց արդեն ուշ է, երևի պատրաստ է:

Եթե III կարգով գաս — կնստի Բաքվից այստեղ կարծեմ 25 ռ. — նայիր տես, մենակ ընկերի հետ ասի, որ չնեղվես:

Գարուշին նորից ասա, որ եթե ուզում է բժշկություն սովորել՝ լատիներեն սովորի, իսկ եթե մանկավարժություն կամ ուրիշ գիտություններ՝ հարկավոր չէ:

Պետերբուրգ չարժե գնալ՝ կհիվանդանաս. հարմար տեղը — Ժընևն է, կամ Շվեյցարիայի մի ուրիշ քաղաք:

Մի տաս օր առաջ այստեղ էր Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանյանը. ասաց, որ աշնանը կհաջողեցնենք բոլորիդ ներումը, իսկ եթե ոչ՝ քոնը անպատճառ կհաջողեցնեմ. առայժմ սա գաղտնիք պահեք, չտարածվի. թող փաստը կատարվի, հետո իմանան:

Ինչպե՞ս եք բոլորդ, ո՞ղջ և առո՞ղջ. Ապլաս ինչպե՞ս է. Վիգին բոլորիդ մոռացել է, միայն Ապլային է հիշում. միշտ ասում է. «Պապայի մաման, ապան էսպես է անում»,— և բռնոթի քաշելու ձևն է անում:

Մենք ողջ և առողջ ենք. անհամբեր սպասում ենք քո գալուդ, որ ձմեռը իրար հետ անցնենք, ապա միասին տուն դառնանք: Աստված առողջություն տա, այդ էլ կլինի:

Ջերմ համբույրներ և բարևներ բոլորիդ:

Ձեր՝ **Ավետիք**

107. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

<1913>, օգոստոսի 12, Կոլլոնժ

Սիրելիք.

Միասին գրած նամակս ստացած կլինեք. մենք ողջ և առողջ ենք. անցած օրը Մկրտչից նամակ ստացա, քեֆը տեղը չէր. իր դատի մասին էր գրում. վերջապես չհասկացա՝ այդ ի՞նչ դատ էր. գրում է, որ Շյորագյալում բերքը լավ չէր. սաստիկ ցավալի է. իմ խե՛ղճ, իմ աղքա՛տ հայրենիք,

ե՛րբ պիտի մի կուշտ փորով հաց ուտես, միայն ցամաք հաց...

Գրեցեք բոլորիդ մասին, փոքրերի ուսումնարանների-դասերի մասին. Միսակը ո՞ւր գնաց, Կոլեն ի՞նչ պիտի անե:

Գյուղը, մեծ շկաֆում, Սոֆիկը Թիֆլիզից բերել և դրել է այնտեղ հետևյալ գիրքը՝ կարմիր կազմած, ոսկեզօծ՝ «ПриключенаяМюнхгаузена».— խնդրում եմ այդ գիրքը հանեք, պատրաստի պահեք, երբ ուզեմ, ուղարկեցեք, որովհետև շատ հավանական է, որ այս տարի դա հանձնեն ինձ թարգմանելու: Առայժմ թո՛ղ մնա, միայն՝ քանի փոքրերը գյուղն են, այդ գիրքը գտեք:

Իսկ այս նամակը խնդրեմ հանձնեք փաստաբան պ. Հովակ Բուդաղյանին, անպատճառ:

Ապլայիս ասեք, որ եթե մինչև գարուն մեզ չներեցին, գարնանը իրար՝ կամ Տրապիզոն կտեսնենք, կամ Սարիղամիշի մոտ, թո՛ղ միամիտ լինի: Սակայն հույս կա, որ գործը ներեն:

Համբույրներ Ապլայիս և բոլորիդ:

Ձեր՝ **Ավետիք**

Ինձ հայտնեցեք, չմոռանաք, որ նամակը հանձնել եք Բուդաղյանին:

Հասցե—Франция, Collonges sous Salève (Haute-Savoie), A. Bayazid.

108. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913>, օգոստոսի 12, Կոլոնժ

Սիրելի Գարեգին.

Նամակդ այսօր ստացա, և երեկոյան պատասխանում եմ, քանի որ՝ եթե ուշացնում եմ՝ ուշանում է:

Ամենից առաջ գալուդ մասին. այստեղ գյուղում, թեև պանդոկ կա, բայց դրան իսկի կարիք չունիս. մոտս ես մնալու. հարմարություն ունինք. Խատիայանը կնոջ հետ երեք օր մնացին. դրա մասին մի՛ հոգար. կգաս Ժընևն, ճանապար-

ինց կգրես, թե երբ ես գալու, իսկ Ժընեն կգաս «Յորշակի» խմբագրություն. Շամպել, Avenue Beausejour № 3. կայարանից հենց կարող ես հասնել № 12 թիվ տրամվայ. կասես մինչև Կարուժ՝ Կոլոնժ գնալու համար. և այնտեղ էլ կվերցնես Կոլոնժ բերող տրամվայը, որ մի հատ է՝ թիվ չունի. ամեն 40 րոպեն մի անգամ գնում-գալիս է: Սակայն դու վաղօրոք ինձ գրիր, որ Ժընեն պատահիներ խմբագրությունը:

Հ. Կ. Տեր-Սահակյանին հայտնիր՝ ներողություն խնդրելով իմ կողմից, որ ես չկարողացա դրկել «Աբու Լալա Մահարին»: Այդ անպիտանները փող են պարտք, գրում եմ, գրում եմ՝ չեն էլ պատասխանում, գրքեր եմ ուզում — չեն էլ ղրկում. պղտեցի հայը մարդ չէ: Կարծեմ հայր Ս. Երեմյանը կհաստատե ասելիքս:

Ջերմ բարևներս Ն. Ադոնցին. սակայն նրանից բարև չէիր գրել. նույնպես Եղոջիցս բարևներ նրան:

Մի բան — այդ որ ասում ես, թե ամսական 50 ռ., սակայն որքա՞ն ժամանակով, գլխավորը դա է, որ կարող է նրան խրտնեցնել. ինձ որ թողնես, եթե նա խոստանա գտնել ինձ համար գոնե մի 300 ռուբլի, այնպես որ 6—5 ամիս կապրեցնեմ, առանց ուրիշ բաների վրա ժամանակ կորցնելու, միայն պարապեմ գրություններս մշակելու — կվերջացնեմ «Ուստա Կարոն» և մի երկու ուրիշ բաներ — այնուհետև դրությունս կբարվոքվի, գրքերս իրար ետևից կհասնին և կապրեցնեն ինձ: Արի կլինի նրան այդ միտքը հասկացրու՝ այդ գումարը ձեռք ձգելու ինձ համար — մեծ բան չէ՝ տեսնում ես. եթե խորհուրդ կուտաս՝ ես գրեմ իրեն: Զայրույթս գալիս է, որ մի հայ գրող 300 ռ. չի կարող գտնել, որ լրացնե իր գրվածքները. ուրիշները 1000-ներ են գտնում. այս ուղղությամբ խոսիր նրա հետ, և իսկույն ինձ գրիր, որ ես էլ իրան գրեմ: Ուղղակի հարցրու՝ ինչքա՞ն կարող է գտնել, պարզելով կարիքս ու նպատակս. թեկուզ պարտք՝ երբ գիրքըս տպվի, վճարեմ: Գուցե ավելի կգտնի, սակայն ավելին չեմ ուզում — միայն և միայն 300 ռ. — դա ինձ համար Ռոտշիլդի կարողությունից մեծ գումար է դարձել այժմ, և հնարավոր անհասանելի երազական...

Սպասում եմ նամակիդ և «Գեղարվեստին». իսկ այստեղից ո՞ւր պիտի գնաս. եթե Կովկաս դառնալու լինես, գուցե

մի բան շինես ինձ համար — գոնե Բաքու՝ հնից Կոստանյան Գեղամի միջոցով. Լ. Բաբայանը հասցես էր ուզե՞լ, թե ի՞նչ — չհասկացա. համենայն դեպս տուր նրա հասցեն՝ կարծեմ Հրատարակչական Ընկերության անդամ է: Ոչինչ չեմ ուզում քեզնից, որ Վենետիկից բերես. ի՞նչ կա որ. թերևս Հ. Ղազիկյանի թարգմանություններից՝ Օսիաեը, Լեոպարտին. (Հոմերի «Իլիականը», և Վիրգիլիոսի «Էնեականը» ունիմ.) կարծեմ ուրիշ բաներ էլ ունի թարգմանած՝ մի երկու բան բեր կարդանք, տեսնենք ինչպե՞ս է թարգմանել:

Բարևներով և համբույրներով,
քո՝ **Ավետիք**

Հասցես նույնն է—
Collonges s/salève (Haute-Savoie)

109. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913>, օգոստոսի 30, Կոլոնժ

Սիրելի Գարեգին.

Մոռացել էի նամակիդ պատասխանելը. ասենք՝ բան էլ չունեի գրելու. միայն սպասում եմ օր-ավուր «Գեղարվեստին», որ չեկավ ու չեկավ: Երևի հետդ կբերես: Գրում ես, թե «Էլի գրքեր ես ուզում».— իսկապես որ զզվել եմ գրքերից, բայց էնպես՝ գրեցի, կարող ես չբերել էլ, ուրիշ ի՞նչ կա որ:

Ադոնցին բաց նամակ գրեցի. արդյոք ստացա՞վ, և դեռ այդտե՞ղ է: Դե՞հ, գիտես էլի, շտապիր շուտ գալ: Կովկասից ո՛չ նամակ, ո՛չ լուր ունեմ, գալող էլ չեղավ վերջերս. օր Մ. Բաբայանն էր այստեղ, գնաց, նորից գալու է: Բարևներ Ադոնցին և ծանոթ հայր-սուրբերին. լավ կանես, որ Հռոմ էլ գնաս, քանի ոտքդ էդ տեղերն է ընկել:

Համբույրներ, քո՝
Ավետիք

110. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

<1913>

Սիրելիք.

Ստացա Միսակի նամակը. մի 20 օր առաջ նամակ էի գրել, և մեջն էլ մի նամակ իրավաբան Բուդաղյանին հասցնելու. երևի ստացած կլինեք և հասցրած:

Հիմա այս նամակը գրում եմ մի բանի մասին, որ վաղուց է ուզում էի գրել, օրեցօր էի ձգում. բանն այս է: Ես վզիս վրա մի երեք հատ գորտնուկի պես մսեր ունեի, որոնք շատ տգեղ կերպով երևում էին և երբեմն էլ գրգռում և ցավում. գնացի բժշկի մոտ և կտրել տվի. երեք թե չորս գորտնուկս կես ժամվա մեջ կտրեց, չիմացա, թե ինչպես. բայց բժիշկը մի բան ասեց, որ դուք էլ կատարեցեք.— թե այդ մսերից է շատ անգամ ծագում ռաք կամ սարկոմա գեշ վերքերը, որոնք անբուժելի են և մահացնող (հիշեցեք մեր Ուստա Մակարին). չպետք է ո՛չ մի գորտնուկ, ավելորդ միս պահել: Սոֆիկն էլ ուներ, նա էլ կտրեց. հիմա բոլորովին ազատ ենք, իսկի տեղն էլ չի նկատվում: Օպերացիան հասարակ բան է, ցավ չկա. երբեմն էլ դաղում են լապիսով. տևում է քառորդ ժամ կամ կես. այստեղ ձրի են կտրում:

Հիմա հիշում եմ, որ Գինովաբեռ վզի վրա ունի. թող իսկույն Թիֆլիզ գնալիս անցնի բժ. Տիգ. Տեր-Գևորգբեկյանի կամ Թադեոս Տիգրանյանի մոտ, նրանք սիրով կանեն. խաղալիք է, կամ թե չէ, նրանց հարցնե և մի խիրուրգի մոտ գնա, կամ Արամյանի հիվանդանոցում կամ ուր <...>

<...> Ուրիշ ինչպե՞ս եք, Ապլաս ինչպե՞ս է. բոլորը, մեծով, պստիկով. մենք լավ ենք. Վիգենն արդեն մեծ տղա է դարձել. խելոք և չար, միաժամանակ. ազատ խոսում է ֆրանսերեն: Մենք մինչև սեպտեմբերի վերջը գյուղումն ենք, փողը ղրկելուս (3 ամսական), ղրկեցեք նույն հասցեով:

Բարևներ ինձնից և մերոնցից:

Ձեր՝ Ավետիք

Հասցե. Франция, Collonges.
Sous Salève La combe (Haute-Savoie)
Avedis Bayazid.

111. ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

1913, սեպտեմբերի 15, Կոլոնիա

Սիրելիք.

Մի քանի օր առաջ ստացա Միսակի կողմից ղրկված 100 ռուբլին: Մենք ողջ և առողջ ենք. Վիգենը մի երկու օր քեֆ չուներ վերջերս, հիմա լավ է. այս տարի բոլորովին չէր հիվանդացել. սա էլ մի թեթև բան էր, անցավ: Մենք դեռ սեպտեմբերի վերջը գյուղում կլինենք, ետո կիջնենք քաղաք: Բարևներ և համբույրներ Ապլային և ամենքիդ: Այսօր Ահարոնյանի կինը — Անուշը — ճամփա ընկավ դեպի Կովկաս:

Համբույրներով՝ ձեր **Ավետիք**

112. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913*>, հոկտեմբերի 5, Կոլոնիա

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և «Բաժանորդագիր», որ դեռ չեմ հանձնել:

Երեխաս հիմա լավ է. մենք արդեն քաղաքում տուն վարձեցինք և ամսուս 10-ին կտեղափոխվինք. հարմար տուն գտանք:

Շուտով նամակ կգրեմ պ. Ն. Ադոնցին:

Դու էլ ինձ նամակ գրելիս հետևյալ հասցեով գրիր, որ կգտնես նամակիս երեսի վրա: Փարիզը լավ ուսումնասիրիր, մանավանդ ներքին կյանքը — caffe-ները, պարասրահները, իհարկե, և՛ մուզեները: Նշանավոր բան, լուր ստացած կլինես, ինձ գրիր:

Համբույրներով և բարևներով,

քո՝ **Ավետիք**

Մշտական հասցես, որ կարող ես տալ ուզողներին.—

Genève,
Chemin de la Ruseraie 54.
Avedis Bayazid.

* Ըստ փոստակնիքի

113. ԳԱՐԵԳԻՆ ՀԵՎՈՆՅԱՆԻՆ

<1913>*, նոյեմբերի 30, Ժընև

Գարեգին ջան, նամակդ ստացա և իսկույն գրում եմ. երկար չեմ գրում, որ փոստին հասցնեմ, բան էլ չունեմ. քեֆս էլ լավ չէ. մի փոքր մրսել էի: Ամենից առաջ ասեմ, որ Ադոնցից ստացա 200 ռուբլի. (530 ֆրանկ), ապա մոտ օրերս Գրիգոր Չալխուշյանից ինքնաբերաբար 100 ռ.՝ «Մի խումբ Ձեզ հարգողներից ողջույն և այս փոքր գումարը» — ուրիշ ոչինչ: Ո՞վ է ասել, ո՞վ է հասցես տվել, չգիտեմ: Երևի Սիմոնի մաճը մարդկանց հիշեցրել է և մեր անունը՝ տարագիրներիս...

Գալով Երվանդի մասին՝ բան չունեմ ասելու, մեր քաղաքացի է. շնորհակալ եմ նույնիսկ, որ ասել ես. նա շա՞տ է հարուստ, եթե ուզենա... դեմ չեմ լինի. ամեն բուրժուա էլ նրա պես է. փափկանկատություն պետք չէ, բայց որպես parvenu դժվար թե այդպիսի քայլ անի. սակայն, գուցե մեջը խոսի հայրենակցական զգացմունքը և փառասիրությունը: Ազգական ենք ու չենք, բայց լավ ծանոթներ ենք եղել: Հարմար կհամարես՝ նորից գրիր: Մոսկվայից ինձ անպատճառ նամակ գրիր և Տերյանի ու Մակինցյանի հասցեները:

Նազարբեկը տվեց 10-ի չափ ոտանավորներ, կորկեմ՝ երբ տեղ հասնես: Բաժնեգինը դեռ չեմ ստացել. փող չունի խեղճ մարդը, բայց կստանամ հարկավ: Դե՞հ, դու էլ շտապիր, գնա տուն, շա՞տ թափառեցիր, ներիք է: Ազնիվ եղիր հաճախակի ինձ հիշելու, և մի-մի բաց նամակ գոնե գրելու: Երանի՛, որ Կովկասը պիտի տեսնես: Բարևներ մերերից:

Ջերմ համբույրներով,

քո՝ **Ավետիք**

Թվում է, որ լավ կլինի այդտեղից Երվանդին գրես, ինչ որ ասել ես կնոջը:

---

* Ըստ փոստակնիքի

114. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1913, դեկտեմբերի 23, Փարիզ

Սիրելի Վիկտորիա,

Նամակդ ստացա և մյուս օրը մեկնեցի Փարիզ մի 15 օրով, ծննդյան տոները անցկացնելու այս հմայաշխարհային գժանոցում. թեև եղել էի առաջ Փարիզ, բայց այս անգամ ավելի գրավիոզ տպավորություն թողեց. ամբողջ քաղաքը եռում է ու զեռում, պարում ու ճախրում.. վերևը—աերոպլանները, ներքևը—օտոներ ու բազմութիւն: Գլուխս հանգստանա, ընդարձակ համակ կգրեմ. առայժմ այսքանս.. երևի ստացար ղրկածս շոկոլադները Կոտիկի համար:

Ջերմ՝ բարևներ-համբույրներ Կոտիկին և քեզ:

Քո՝ **Սվետիք**

115. ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ

1913, դեկտեմբերի 31, Փարիզ

Սիրելի Վիկտորիա.

Այսօր վերջանում է մեր, եվրոպացիներիս տարին. ամբողջ Փարիզը հրեղեն ծով է դարձել, ասեղ ձգելու տեղ չկա: Պարզկա, աստղավառ երեկո է. դուրսը—աղմուկ ու ծիծաղ. մի րոպե քաշվել եմ հուշելս համակներ գրելու, ապա ընկերներով գնալու ենք Cabare՝ Նոր-տարին դիմավորելու:

Հոգիս, այս երրորդ տարին է, որ մեր երկրից դուրս եմ ընդունում Նոր-տարին՝ Կ. Պոլիս, Ժընև, Փարիզ. ո՛վ գիտե մյուս տարին, երբ ողջ մնացի, ո՛ւր եմ լինելու — Բեռլին, Վիեննա, թե Լոնդոն. այսուհետև թափառական եմ. ի՛նչ լինելու է, թող լինի:

Գրում ես, որ Գինոն հայտնել է իմ վերադարձի մասին, սակայն զուր հույսեր. ո՛չ մի վերադարձ. կամ ոսկորներս կբերեն Ալագյազի տակ թաղելու, կամ կվերադառնամ ծերացած.. ինձ համար այդ միանգամայն պարզ է. միայն մի վիշտ ունեմ՝ այն, որ ոչ թե Կովկասն ու հայությունն եմ կա-

րոտցել ու չեմ տեսնելու, այլ՝ մորս, քույրերիս, եղբայրներիս, մի-երկու ընկերի և **քեզ.** արդյո՞ք նույն կարոտն ունիս դու դեպի ինձ. երջանիկ կլինեի, թե այդ հաստատ գիտակցությունն ունենայի:

Գիշեր է, ժամը 3-ը, վերադարձել եմ տուն հոգնած, ջարդված, ներվերս գրգռված, բայց քունս չի տանում. Փարիզում քնել անկարելի է. այս 4 միլիոնանոց քաղաքը հազար փոթորիկների տակ հուզված, կատաղած օվկիան է. ամեն լեզու, ամեն ազգ. ի՞նչ են ուզում, ինչո՞ւ են թափվել այս զարմանալի փողոցները անգլիական լորդն ու հնդկական ռաջին, ռուս կնյազն ու բրազիլացի միլիոնատերը, իտալացի բոսյակը և ամերիկացի միլիարդերը, և ես ... Ո՞ւր ենք վազում, ի՞նչ ենք որոնում այս ծովածավալ ամբոխի մեջ. շուրջս փրփրած գինու ծով է, ասես. պար, կանկան, tango, անզուսպ, բոցեղեն կիրք, 1000000 կանայք՝ շքեղ, քնքուշ և գայթակղիչ աչքերով. 1000 աչք հրապուրում է քեզ իր գիրկը — մի րոպեի, մի ժամի, մի գիշերի համար, որպեսզի մյուս օրը քեզ չճանաչե... Ակրոբատներ, ցիրկ, մուզիկ, օռնոց, խաղ, ծափ, ծիծաղ, գոհար ու ցնցոտի իրար կողք-կողքի, իրար վրա — ահա՛ Փարիզը... Եղել եմ Բեռլին, Վիեննա, Բուդապեշտ, Հռոմ, Միլան, Պոլիս, Մոսկվա, Պետերբուրգ, և այլն... դրանք միատեղ հավաքես՝ Փարիզի աղմուկը չի ստացվի...

Գրում եմ անկապ, ինչ որ միտքս է գալիս:— Դեռ մի 10 օր էլ մնալու եմ, ապա նորից Ժընևն, այն գեղեցիկ լեմանի ափերի քաղաքը, խաղաղ, մաքուր. երեխաս և գրասեղանս. գրում եմ ու կարդում. կարդում եմ ու գրում. և համբերանքս ծով է. թեև սիրո կողմից դժբախտ եմ, բայց տրամադրությունս չեմ փչացնում, և ես գիտեմ, որ ինձ պես մարդը արժանի է, որ ապրի, և պիտի ապրի: Ընկերներս ինձ մոռացել են. եղան ընկերներ, որ նույնիսկ նախանձից, չկամությունից վնասեցին ինձ. եղան նեղ և աղքատ օրեր, բայց հաղթեցի, և հիմա հաստատ է ոտքերիս տակի հողը. իմ գրիչը ինձ հավիտյան կպահե. չեմ կորչի Եվրոպայի միլիոնավոր մարդկանց մեջ. անվախ քայլում եմ առաջ. թող գան տարիները և գնան՝ ես կանգնած եմ գրանիտի վրա և ձեռ-

քըս՝ իմ անխորտակելի սուրը-գրիչս: Որոշել եմ տեղափոխվել Բեռլին, այս՝ նորագույն կուլտուրայի լուրջ քաղաքը. բայց Բեռլին հաստատվելով՝ շարունակ պիտի լինեմ Փարիզ ու Հռոմ, Վիեննա և Լոնդոն: Ի՜նչ լավ կլիներ՝ հետս լինեիր,— սիրած կնոջ հետ այս հեքիաթի քաղաքներում, հրաշքների երկրներում:

Գրում ես, թե իմ մասին տեղեկություններ էիր հարցնում Գինոյից և Արսենից. Գինոյից կարող ես, բայց Արսեն-մարսեն՝ թո՜ղ. այդ տիրացուները ինձ չեն կարող հասկանալ, և նրանց հետ գործ չունիմ, նրանք էլ ինձ հետ.— ես Կովկաս միայն մի երկու ընկեր ունիմ, որոնց հետ սրտաբաց եմ. մյուսներից իմ մասին՝ ո՜չ մի խոսք, և ո՜չ էլ ասուլս տուր նրանց մոտ: Նախանձից բամբասում են, թե ես այստեղ, Եվրոպա՝ պարապ քաշ եմ գալիս՝ կանանց հետ քեֆեր անելով. հայի նախանձը սահման չի ճանաչում. ի՞նչ են ուզում ինձնից. նրանց հացը չեմ ուտում, և նրանց համբուրած կինը չեմ պաչում. Կովկասի հացն ու համբույրը թողնում եմ իրանց. թո՜ղ ինձ հանգիստ թողնեն. ես այլևս հայրենիք չեմ ճանաչում. ես աշխարհի-տիեզերքի բնակիչ եմ: Հասկացա՞ք: Առայժմ այսքան. Ժընևից կգրեմ: Համբույրներ կարոտով ու հազարով քեզ ու տղայիդ:

Քո՝ **Ավետիք**

Գրիր այս հասցեով.
Швейцария, Genève
Bean Sejour, № 3
Avedis Bayazid.

116. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

1913, դեկտեմբեր, Փարիզ

Սիրելիք, այս քանի օր է, որ Փարիզ եմ. եկել եմ մի 15 օրով: Ամբողջ մի տարի է Ժընևն էի, առանց դուրս գնալու. ուղղակի հոգնել էի:

Ինչո՞ւ նամակներ չեք գրում, ինչպե՞ս է առողջությունը. շո՛ւտ-շո՛ւտ գրեցեք:

Բարևներ և համբույրներ
բոլորիդ, ձեր՝ **Ավետիք**

117. Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ

<1913>

"<...> Ձեր գրքերը ստանալուց անմիջապես հետո Փարիզ մեկնեցի մի 15 օրվա համար. թեև այնտեղ էլ հետս վերցրել էի Ձեր «Պատկերներ»* ժողովածուն կարդալու համար, և բոլորը կարդացի: Շա՜տ սիրուն էջեր կան այնտեղ, իսկական բանաստեղծություններ, քնարական կտորներ, ոմանք փոքրիկ պատկերներ են,— համեմայն դեպս մեր գրականության համար նորույթներ են:

Սքանչելի լեզու կա, և ոչ մի ավելորդաբանություն. գնահատելի է և գրելաձևի «նահիվ» կողմը: Կրոնական աքեմի տակ բանաստեղծական սիրտ կա թաքնված, որ ուզենա-չուզենա պիտի արտահայտվի:

Ավետիք Իսահակյան

118. ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻՆ

1914, հունվարի 14, Ժընև

Հարգելի և սիրելի բարեկամս, օր. Մարգարիտ.

Մեծ ցավով իմացա պատվական հայրիկիդ մահը. գնաց տիեզերքի հետ ձուլվելու 70—80-ական թվականների հայ կյանքի գործիչներից մի պայծառ դեմք ևս, որի սիրտը մնաց

---

* «Պատկերներ» (Արձակ քնար, 1909—1913), Հ. Ս. Երեմյանի, Ս. Ղազար, Վենետիկ, 1913. «Գրագետ հայեր» հատորների հեղինակը, որ «Պատկերներ» գրքով հանդես է եկել որպես բանաստեղծ:

միշտ անդավաճան դեպի հայ աշխարհն ու ղեզոն, հայկական շաներն ու չարն ու բարին:

Հայրիկիդ առաքը Թիֆլիզում այն սիրավառ օջախն էր եղել երկար ժամանակ, ուր հայ իշխն ու կրակ մտավորականները առաջին անգամ ճաշակել են գուրգուրանք, արվեստի ճաշակ և հոգեկան ջերմություն:

Շա՜տ էր սիրում այդ մանկական հոգով, միշտ թարմ ու աշխույժ, պատկառելի հայրիկդ մայրենի հողը, և հատկապես մեր ծննդավայր Ալեքսանդրապոլը.— «Շուտ-շուտ եմ գալիս Գյումրի,— ասում էր ինձ հանգուցյալը.— հողը քաշում է. կուզեմ էստեղ մեռնել ու թաղվել»... Խե՛ղճ, օտարության մեջ փակեց աչքերը՝ կարոտ մայր-հողին:

Շա՜տ եմ ցավում, որ Փարիզ եղած ժամանակս չեկա տեսնելու վերջին անգամ. ո՜ւմ մտքից կարող էր անցնել, թե այդքան առույգ մարդը... շա՜տ անսպասելի էր...

Խորին ցավակցություն հայտնում եմ, խնդրեմ, սքանչելի մայրիկիդ, Ձեր քույրերին, և Ձեզ ի սրտե մաղթում եմ միխթարություն և պիտություն տանելու աշխարհիս մեջ ամենաթանկագին անձի — ծնող հոր — կորուստը:

Թո՛ղ բոլորիս սրտում միշտ անմոռաց ապրի այդ ճըշմարիտ հայ մարդու անբիծ հիշատակը:

Մնամ Ձեզ սգակից՝
Ավետիք Իսահակյան

14 հունվարի 1914 թ.,
Ժընև

119. ՍԻՄՍՆԹՈՅԻՆ

<1914>, ապրիլի 21, Բեռլին

Սիրելի Սիմսնթո.

Վաղուց է, կուզեի քեզ երկարորեն գրել, բայց գլուխս շատ զբաղած էր և օրեօր կգցեի. անշուշտ, վիրավորված չես լինիր, թեև իրավունք ունիս:

Շա՜տ զբաղված եմ, սիրելիս.— հազիվ բնակարան վար-

ձեցի, կաճավորել, ընկնել այս ու այն կողմ, և խմբագրական գործերը.— ուղղակի հոգնած եմ:

Ամենից առաջ, խնդրում եմ, քանի այդտեղ ես, մի բաւնաստեղծություն ուղարկիր, ոչ այս համարի համար, այլ երկրորդ համարի, որ լույս պիտի տեսնի հունիսին: Առաջին թվի համար չէ, քանի որ գերմաներեն առաջին թվի մեջ թարգմանորեն դնելու ենք քո «Հայրենի աղբյուրը»: Ուրեմն, ժամանակ ունիս գրելու:

բ. Խնդրում եմ անհապաղ ուղարկես օր. Մանինիկի հասցեն. մեկ, որ պիտի նյութ խնդրեմ նրանից, երկրորդ, որ քանի Բեռլին եմ, ոչ մի լուր չունեմ. նամակ գրեմ, քեֆն հարցնեմ:

գ. Ուղարկիր նույնպես Ռ. Սևակի հասցեն (Ռ. Չիլինգարյան, Լոզան, դոկտոր), նյութ եմ խնդրելու, նույնպես:

Դուն ի՞նչ վիճակի մեջ ես. սկսեցի՞ր Սիմեոնի մասին գրելիքդ գրել. իսկ Մանինիկի հետ ինչ հոգեկան աստիճանի վրա ես. նամակներ կգրե՞, հա՞շտ եք, ի՞նչ կա. ինչպե՞ս է նրա առողջությունը. դուն ե՞րբ ես Փարիզ գնալու, կամ ե՞րբ ես Պոլիս գնալու:

Տնտեսական վիճակդ ինչպե՞ս է:

Լիպարիտը հազիվ մի քանի օրինակ է ծախել «Սուրբ Մեսրոբէն». կաշխատեմ ես էլ ծախել:

Ուրիշ ինչպե՞ս է անցնում ժամանակդ: Երևի հիմա այդտեղ կատարյալ գարուն է, և շրջելու-մանգալու կերթաք միշտ. ես դեռ քաղաքից ոտքս դուրս չեմ դրել, և նույնիսկ քաղաքը չեմ տեսել. իմ գործը չէր բնավ պաշտոն, գործ ստանձնելը, բայց անգործ մնալ էլ չի լինիր. երեխա ունեմ, միջոցներ շա՜տ են հարկավոր:

Խնդրում եմ շուտով պատասխանես. Գարոյի, Նեվրուզի մասին. ի՞նչ կըսեն. հաճա՞խ կլինիս տիկ. Թումանևի մոտ. ի՞նչ կըսեն տ. Անտոնը:

Երեխաս անուններ տալի՞ս է, թե՞ մոռացել է:

Ջերմ բարևներս հաղորդիր տ. Անտոնին, տիկ. Թումանեվին, Գարոյին, Նեվրուզին և ուրիշներին:

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

<Հ. Գ.> Պարզ գրիր Մանինիկի և Սևակի հասցեները: Իմ հասցեն գիտես, կամ կնոջս մոտից վերցրու:

120. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

<1914>, ապրիլի 26, Բեռլին

Սիրելիք.

Ես արդեն երկու ամիս է, որ Բեռլին եմ. արդեն տեղավորվել եմ. երեք սենյակից, խոհանոցով, վաճառով մի բնակարան եմ վարձել, Սոֆին մի 10 օրից հետո կգա Ժընևից:

Գրել եմ, որ Գիևովաբեն գա մեզ մոտ. Բեռլինը Ռուսաստանից հեռու չէ, և ճամփու ծախսը մեծ բան չէ. մնացածը ոչինչ — բնակարան ունենք, գլխավորը դա է. մի կտոր հաց էլ ունենք, որ մեզ հետ կարող է ուտել. թող գա Եվրոպան տեսնի: Էլի կգրեմ դրա մասին:

Բեռլինից ձեզ ամսակ էի գրել, բայց պատասխան չունեցա. երևի չեք ստացել:

Մի 15 օր այստեղ էր Նիկոլա Փադեիչ Տիգրանյանը, պ. Գեդեոն Զառայանի հետ, որը կպատմե ձեզ իմ մասին:

Ողջ և առողջ եմ, միայն ձեր բոլորիդ և հայրենիքի կարոտն եմ քաշում: Հո՛ւյս Աստված՝ շուտով իրար կտեսնենք:

Կարոտալի համբույրներս Ապլայիս, Աքայիս, Փեփրոնիհ, իրիցկնկան, տերտերիհ, եղբայրներիս, բոլոր երեխաներիհ և բարեկամներիհ:

Ձեր՝ **Ավետիք**

Հասցե.
Berlin, Wilmersdorf
Nassauische Strasse, № 32, g. III
Awedik Issahakian.

121. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1914, մայիսի 3, Բեռլին

Սիրելի Գարեգին.

Այս երկու ամիս է, որ Բեռլին եմ. ամսակդ այստեղ ընտացա, և օրեցօր ձգձգելով պատասխանելը մինչև օրս քաշեց:

Այստեղ եմ ապրելու. արդեն մի տարով բնակարան եմ վարձել. այստեղ եկել եմ մի գործով, այսինքն հայ-գերմանական ընկերության գործերը վարելու և հրատարակվելիք ամսագիրը խմբագրելու. մի փոքր ռոճիկ ունեմ, որ թեև քիչ է աշխատանքիս գնահատման համար, բայց էլի չեղած տեղից լավ է: <...>

Շնորհակալ եմ, որ մտածել ես իմ մասին և հոգս քաշել, բայց ես վաղօրոք գիտեի այդ շներին և դրա համար էլ ինձ ծանր էի պահում. թքած դրանց օգնության վրա: Լոնդոնից ոչ մի նամակ չունիմ, և հարկավոր էլ չէ. գյադեն երբեք մարդ չի դառնա: Խորապես վիրավորված եմ, որ Բագրատ Սերոբյանի պես թուլային ասել ես ինձ համար: Լռենք այդ մարդուկների մասին:

Ոչինչ, մի օր էլ մեր փողոցում տոն կլինի:

Գրում ես «Գեղարվեստին» նյութ ուղարկելու մասին, սիրելիս. առայժմ բան <տալ> չեմ կարող, զբաղված եմ իմ պաշտոնիս գործերով. դեռ ազատ ժամանակ բնավ չունեմ. երբեմն էլ դասագրքի համար նյութեր եմ գրում, որ հասցնեմ ամառը՝ մայիսից տպել տալու:

Կինս և երեխաս դեռ չեն եկել. Ժընևն են, մի քանի օրից հետո կգան:

Դառնանք քեզ. դու ի՞նչ ես անում, ներկայումս ի՞նչ գործի վրա ես. զբաղմունք ունե՞ս, թե միայն «Գեղարվեստով» ես տարված. լսեցի, որ ուղևորությունդ ես գրում. լավ միտք է. աջողությո՛ւն: Կարծեմ, դեռ «Գեղարվեստը» հրապարակ չես հանել. գոնե ձեռ-ձուռ չեմ լսում. դժբախտաբար հայ թերթերին չեմ կարող հետևել:

Շատ ազնիվ տղա կհամարեմ քեզ, եթե մեկ-մեկ գրես այդտեղի գրական և հասարակական կյանքից, անց ու դարձից:

Մի պստիկ խնդիրք ունեմ. բարի լինես ինձ ուղարկելու Տիրայր վարդապետի թարգմանած Բայրոնի «Մանֆրեդից» մի օրինակ. շատ հարկավոր է այստեղի մի լավ բարեկամիս համար, որին ես խոստացա տալ. նա թարգմանում է բնագրից «Մանֆրեդը», ուզում է աչքի առաջ ունենալ — խնդրեմ

ականջի ետև չձգես: Կամ ասա «Գիր» ընկերության գրասենութին, ուղարկեն իմ հաշվին — անպատճառ:

Նազարբեկը (ինձ գրել է, որ) քեզ տոնետներ է ղրկել մի ամիս ու կես առաջ, բայց պատասխան չունի, ստացե՞լ ես, թե ոչ. դրա մասին էլ, խնդրեմ, ինձ գրիր:

Եվրոպա գալող բարեկամներին հասցես տուր, գան տեսնեն ինձ, այսինքն՝ պատահինք. Կովկասին կարոտցել եմ, բայց ոչ մարդկանց. սակայն Կովկասի հողն ու ջուրը չի կարող գալ Բեռլին, գոնե այդ շները կգան, կարոտներս կառնենք:

Բարևներ մայրիկիդ և ձերոնց, համբույրներով,
քո՝ **Ավետիք**

Հասցես՝
Berlin, Wilmersdorf.
Nassauische Str. 32, g. III
Awedik Issahakian.

122. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

1914, մայիսի 31, Բեռլին

Սիրելի Աղեքսանդր Ծատուրյան, Մոսկվա.

Թերևս հայտնի է Ձեզ, որ հայկական հարցի վերազարթումի օրից Բեռլինում հիմնվեց մի հայկական կոմիտե, որ, շնորհիվ Գերմանիայում ունեցած իր նշանավոր անձանց կապերի, կարող եղավ գերման դիվանագիտության հակառակությունը՝ ռուսական հայանպաստ ձեռնարկների դեմ՝ այնքան մեղմել, որ վերջ ի վերջո հաջողվեց ոեֆորմների շուրջը համաձայնություն ստեղծել Հայաստանով շահագրգռված այդ երկու պետությունների միջև:

Այժմ այդ կոմիտեն մեր ազգի շահերը Գերմանիայում ավելի լավ պաշտպանելու ամենանպատակահարմար միջոցը համարեց Հայ-գերմանական ընկերությունը, որն ունենալով հայ և գերման անդամներ, կարող պիտի լինի գերման հասարակության ամենալայն խավերը մոտեցնել և հետաքրքրել մեր ազգի վիճակով: Ընկերությանս նպատակների հետ հաճեցեք ծանոթանալ ներփակ հրավերովս, որին իրենց ստո-

րագրություններն են տվել շատ ականավոր անուններ, և այդպիսով մեծ հույս ունենք գործի հաջողությանը:

Ընկերությանս ձեռնարկներից մեկն է հրատարակել նաև մի օրգան հայերեն և գերմաներեն բաժիններով՝ երկու ազգերը իրար ծանոթացնելու համար:

Ավելորդ չլինի ասելը, որ թե ընկերությունս և թե թերթը կուսակցականապես և քաղաքականապես չեզոք հողի վրա են կանգնած, և Բեռլինի ոուս դեսպանի հաճությունը ընդունած:

Հայա-գերման ընկերության կողմից պատիվ ունիմ խընդրելու Ձեզ, սիրելի բարեկամ, որ բարեհաճեք Ձեր շրջանում մեր գործին համակիրներ գտնել՝ անդամագրելով նրանց:

Հավատացած լինելով, որ չեք զլանա մեզ աջակցության գալու,

մնամ խորին հարգանքներով,
ի դիմաց Հայկ. Կոմիտեի՝
Ավետիք Իսահակյան

123. ԳԻՆՈՎԱԲԵ ՋԱՐԻՖՅԱՆԻՆ

<1914>, հունիսի 4, Բեռլին

Սիրելի Գինովաբե.

Կարծեմ շա՜տ վաղուց է, չեմ գրել. նամակներդ բոլորը ստացել եմ. ստացել եմ և՛ 30 ռ.:

Մենք առայժմ լավ ենք. տեսնենք հետո ի՞նչ է լինելու. գլխավորը առողջությունն է, որ դեռ վրաներս է: Ինչպե՞ս անցավ Գարուշի քննությունները. հուսով եմ — լավ:

«Գիր» ընկերության հաշիվը չենք ստացել, ո՛չ ես, ո՛չ Սոֆին. ո՛չ էլ ցուցակը: Շուտով երկար նամակ կգրեմ, առայժմ այսքան, համբուրներ Ապլայինն և բոլորին. գալուդ մասին լուրջ մտածիր, և քանի շուտ գաս, այնքան լավ:

Ձեր՝ **Ավետիք**

Հասցեն՝
Aw. Issahakian
Berlin, Wilmersdorf,
Nassauische Strasse 32. III.

124. ԳԻՆՈՎԱԲԵ ՉԱՐԻՖՅԱՆԻՆ

1914, հուլիսի 15, Բեռլին

Սիրելի Գինովաբե.

Երկու նամակդ էլ ստացել եմ. ամենից առաջ Գարուշի մասին. իմ խորհուրդս այս է, որ Գարուշը այդտեղ մի տարի ևս մնա և լատիներեն սովորի ու քննություն տա և վկայական առնե. բժշկություն սովորելու համար ամեն տեղ լատիներեն լեզուն հարկավոր է. եթե Եվրոպա սովորի՝ հիմա լատիներեն սկզբում չեն պահանջում. բայց Ռուսաստան քննություն տալիս պետք է. ավելի լավ է՝ քանի ջահել է, այդ հարցը վերջացնե: Բեռլին խորհուրդ չեմ տա սովորելու. մեծ, անհագին, անբարոյական և թանկ քաղաք է. մենք շատ չենք մնա այստեղ, մինչև գարուն, ապա նորից կերթանք Ժընևն. այնտեղ շատ հարմար է սովորելու համար. էժան, համեստ, լավ քաղաք է: Եթե ես մինչև գարուն ներվեցի, կվերադառնամ Կովկաս, իսկ Սոֆիին երեխի հետ կթողնեմ Ժընևն, Գարուշը նրանց հետ կապրի, եթե չներվեցի, ես էլ Ժընևն կմնամ, մի ատ ժամանակ կերթամ Հայաստան ճամփորդելու, նորից կդառնամ Ժընևն. սակայն իմ ներումը մի քանի ամսվա հարց է. եթե ես այս ձմեռ խնդիր տված լինեի (Պապաջանյանի ուղարկած խնդիրը դեռ չեմ ստորագրել), հիմա ներումն ստացած կլինեի. մնաց աշնանը: Ուրեմն Գարուշը մնա և լատիներեն անպատճառ սովորի:

Իզուր ես երեխայի համար հագուստ կարել տվել, ավելորդ ծախս էր, և դժվար թե այստեղ հագնի. մնում է Ժընևվում հագնի: Հետդ իզուր շատ բեռ մի՛ վերցրու. մի բարձ, մի ադյալ, մի երկու սավան, և այլն. պահիր մի փութ մի՛ բեր, այլ մի 10—15 գրվանքա, այդքան էլ բրինձ, մի փունտ չայ կամ մի քիչ ավելի. մի փունտ էլ թյութուն. պետք կգա. ուրիշ բան պետք չէ: Ճանապարհը Բաքվից ուղիղ գիծ կա դեպի Բեռլին՝ Կալիշ (Калыш) սահմանագլուխ քաղաքն վրայով. (II) երկրորդ կըլասը պլացկարտով մոտ 50 ռուբլի. ընկերով արի, թեկուզ մի փոքր ուշանաս, մենակ շատ կնեղվիս. անցագիրը կես տարով կվերցնես. սահմանն անցնելիս կհետագրես դուրս գալը, որ կայարան գանք. Բեռլին

կիջնես Զօլօգիշեր գարտեն — Zoologischer Garten կայարանը, որ մեզ շատ մոտ է: Առայժմ այսքան:

Մենք շատ լավ ենք, սպասում ենք, որ շուտ գաս. գուցե պատահի, որ միասին վերադառնանք մինչև գարուն. կվերադառնանք Պոլսի վրայով: Մոտ օրերս Բեռլին է գալու Պապաջանյանը. գործս կկարգադրեմ. մեկ որ ներումի ճամփեն բռնել են, այդպես էլ պիտի վերջացնեն. արդեն փախըստականներից 5 հոգի ներվեցին. մեզ էլ կներեն, ոչ մի կասկած չկա. վերջերս լավ եղավ. Աստված առողջություն և ողջություն տա, շուտով իրար տեսի կարժանանանք: Ամեն բան հայկական հարցի աջող լուծումից էր կախված. քանի որ ռուսները իրանք են Հայկական հարցը հիմա ջերմ կերպով պաշտպանում, կնշանակե էլ մեր դեմ հակառակելու տեղիք չունին:

Շատ շնորհակալ եմ, որ բոլոր բարեկամների մասին տեղեկություններ ես տվել. ես ոչ ոքի չեմ մոռացել, միայն հնարավորություն չունեմ ամենքին նամակ գրելու:

Ջերմ, կարոտով համբուրներս ու բարևներս Ապլայիս, Ալեքսան աղբոքը, Ռուբեն աղբորը, Սաթենիկ հարսնանուշին, Փեփրոնին, Օլիկին, Կոլյային, Գեղամին, Ազատին, Գարուշին, գյոտղացոց, ուստա Վարդան (1 անընթ., Տեփոյին և բոլոր հարցնողաց:

Քաղաք էլ բարևիր տերտերանց, հորեղբրանց և բոլոր բարեկամներին.

Համբուրներով քո՝ **Ավետիք**

Berlin, Wilmersdorf,
Nassauische Strasse, № 32, III
G. H. Awedik Issahakian.

125. ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

1915, մարտի 28, Բեռլին

Սիրելիք.

Ես Ժընևից հունվարի 7-ին նամակ եմ գրել ձեզ, բայց ոչ մի պատասխան չունեմ. ինչո՞ւ չեք գրում, ի՞նչ է պատահել:

Ես մի ամսով Ժընև էի գնացել, հիմա նորից այստեղ եմ,

և անորոշ ժամանակ էլ կմնամ. չգիտեմ վերադարձի ի՞նչ իրավունք ունեմ. եպիսկոպոսի դարդակ խոսքով չի կարելի կառավարվել. պետք է գրավոր թուղթ ստանալ. աշխատեցեք գրավոր կերպով իմ վերադարձի իրավունքը ձեռք բերել:

Ես ողջ և առողջ եմ. ամեն րոպե կարող եմ այստեղից հեռանալ, բայց սպասում եմ որոշ պատասխանի ձեզնից, որ ճանապարհ ընկնեմ:

Շա՜տ և շա՜տ մտածում եմ Միսակի մասին. ո՞ւր է նա հիմա. ողջ-առո՞ղջ է, կովի դաշտո՞ւմն է, թե՞ դեռ ոչ. եթե գերի ընկած լինի, ես այստեղ նրան վարդի պես կպահեմ. շուտով տեղեկություն նրա մասին: Արդյոք Կոլյային հո զինվոր չեն տարել. կարծեմ, թե դեռ հասակը չէ եկել: Միսակը լավ կլինի, որ թուրքերի դեմ գնա կռիվ. տեղերին և կլիմային ճանոթ է, նույնպես լեզվին ու ժողովրդին:

Ուրիշ բան չունեմ գրելու. տա՛ Աստված այս սարսափելի ժամանակներն անցնին, նորից ազգերը խաղաղվին, և իրար բախտ ունենանք տեսնելու:

Հազար համբույրներ ապլպիս և բոլորիդ,

Ձեր՝ Ա.վետիք Իսահակյան

Նամակը ինձ ուղարկելիս կգրեք հետևյալ հասցեով.

Швеция, Стокгольм, Stockholm
Hotel Continental, Comite Russe
m-r V. V. Nekludoff.

Եվ կխնդրեք, որ ուղարկե ինձ այս հասցեով.
Berlin, Wilmersdorf, Nassauische Str. № 10
bei Josephy A. Issahakian

126. ՀԱՐՈՒՉՍՏՆԵՐԻՆ

1915, սեպտեմբերի 1, Ժընև

Սիրելիք, մի քանի օր է, որ ես նորից Ժընև եմ. շուտով մանրամասն նամակ կգրեմ. մենք բոլորս ողջ և առողջ ենք. գալով հայրենիք վերադառնալուն, պետք է նայել հանգամանքներին. մինչև հիմա անպիտանները մի ընդհանուր ներման թուղթ չկարողացան ձեռք բերել. շուտով այդ խնդիրը

կկարգադրեմ ձեր ղրկած հեռագրի համաձայն. եթե ձեզ կարոտցած չլինեի՝ դժվար թե այդ օրով — խնդիր տալով — համաձայնեի ոտք դնել այդ տեղերը: Ամեն տեղ և ամեն մարդ, բարեկամ թե թշնամի, խմում է հայի արյունը:

Ես մնալու եմ այստեղ մինչև դրությանս պարզվիլը: Շուտով կգրեմ: Ամենաջերմ համբույրներ Ապլայիս, եղբայրներիս, քույրերիս, հարսներին և երեխաներին:

Ձեր՝ **Ավետիք**

A. Issahakian
Genève, Croix de Roson.

127. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1916>, ապրիլի 2, Ժընև

Սիրելի Գարեգին ջան.

Շատ ուրախացա նամակդ ստանալով. այս աճավոր, սարսափելի պատերազմի ընթացքում համարյա ո՛չ մի ընկերից նամակ չեմ ստացել. ուղղակի վայրենի դարումն ենք ապրում. ևզովված, հազար անգամ ևզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց. օ՜, ի՜նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ. այս ի՜նչ արյունոտ խելագարություն է.— սպանություն, սպանություն, արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն. Հայաստան այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան. ե՞րբ պիտի նույն օրին ընկնի գազան Գերմանիան, որ մարդկությունը ազատվի մարդակեր Վիլհելմից, Հոհենցոլերների տան ձեռքից, սրիկա, բորենի Կրոնպրինցից...

Կասկած չկա, որ դաշնակից պետությունները պիտի հաղթեն և Գերմանիան արյունլվա, պատառ-պատառ պիտի ընկնի Ռուսիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ոտքերի տակ և մենք էլ, հայերս, դժբախտ Բելգիայի, Սերբիայի հետ պիտի նոր կյանք ստանանք:

Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ հայոց լեռներում. նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել և ազգեր ազատել — Հունաստան, Ռումանիա, Սերբիա, և երախտամոռ Բոլգարիա. այսօր հերթը հայերիս հասավ: Արդարությունը դաշ-

նակից պետությունների կողմն է և իրավունքի աստվածը նրանց հետ:

Սիրելիս, ես ուզում եմ գալ, բայց մի-երկու հանգամանք դեռ խանգարում են. նախ և առաջ այս մոտ մի տարի է ես հիվանդ եմ — երիկամունքների հիվանդություն,— բժշկվեցա, բայց դեռ պրոֆեսորս թույլ չի տալիս՝ հեռանամ, ուզում է, որ միաժամանակ նրա ձեռքի տակը մնամ, որ լավ բժշկե: Երկրորդ՝ դեռ անցագիր չեմ ստացել և երրորդ՝ գալու համար շա՛տ փող պետք է. ճանապարհները սաստիկ երկար են ու թանկ. իսկ փող—չկա:

«Աբու Լալա Մահարին» թույլ եմ տալիս, որ հրատարակես. ես չէի համաձայնել, որովհետև կարծում էի, թե շուտ կգամ և սրբագրված կհրատարակեմ. բայց քանի որ դեռ կուշանամ, ուրեմն դու օգտվիր բարեհաջող հանգամանքից և տպիր. առայժմ սրբագրությունը թողնում եմ. անհապաղ սկսիր տպագրել՝ վաղօրոք գրաքննիչից համաձայնություն առ. վերջին կտորը (Օմար Խայամ) բաց թող, չտպես: Գիրքը մոտս չկա, որ մի երկու սխալներ կան՝ ցույց տամ. գրում եմ ըստ հիշողության, հետևյալները.—

Գրված է.— «Ի՞նչ օրենքը», պետք է լինի. «Ի՞նչ է օրենքը». «զուլալ» բառը փոխիր՝ «վճիտ, պայծառ» բառերով: «Բարեկամները... մոծակների պես». մոծակ բառը փոխիր՝ գրաբար ասվում է, կարծեմ, «մժրուկ թե մժեղ» — նայիր բառարանում. «...Մժրուկների պես»:

VI սուրահում.— «մոռանում մարդուն» — պիտի լինի «մոռանամ մարդուն» — և վերջապես նույն VI գլխում՝ «կանգ առավ հոգնած» փոխիր՝ «ծուռը առավ հոգնած»: — Պայմանների մասին ի՞նչ խոսեմ. մեր նման ընկերների մեջ խոսել պետք չէ:

Իմացած լինիս, որ ես «Հորիզոնից» հեռացած եմ. ես և Վարանդյան, Ահարոնյան, Թումանյան... անհաշտելի տարրեր ենք. նրանց ձեռքից որ գա, հոգիս կհանեն. բայց դեռ կտեսնենք. օրը կգա:

Ասա, որ Վ. Տերյանը, Մակինցյանը ինձ համար գրեն, և մեկն ու մեկդ ուղարկեք ինձ լույս տեսնելիք ռուսերեն թարգմանությունների գիրքը՝ հայ բանաստեղծների:

Ցավը այն է, որ «Հորիզոնից» խզվելով՝ ուրիշ թերթ ինձ պաշտպան չունիմ. «Մշակը» ևս թշնամի է: Բայց ի՜նչ ցավ — ո՜չ մի, իսկապես:

Սիրելիս, լավ չեմ կարող պարապել. տրամադրություն չա՜տ և շա՜տ վատ է. խակ ձեռագրերս բոլորը գտնվում են այն երկրում, ուր էի պատերազմը սկսվելիս. չկարողացա դուրս բերել. պահ տվի. չգիտեմ, ի՜նչ է լինելու. «Ուստա Կարոս» էլ այնտեղ է:

Դու ի՜նչ ես անում. ձերոնք ո՜նց են. մայրիկդ, եղբայրներդ. ուրիշ ընկերները ո՜նց են. հիշող կա՞ ինձ, թե՞ մոռացել են. մերոնցից ուշ-ուշ եմ նամակ առնում, Մկրտչից— բնավ. ասա, որ գրե ինձ: Ո՜ւտ-շո՜ւտ գրիր, բարեկամներդ, ծանոթների մասին. ո՜ւր է տիկ. Վիկտորիան. եթե այդտեղ է, բարևիր անպատճառ. թող նա էլ գրե. բարևիր և օր. Արմեն. Տիգրանյանին: Ջերմ բարևներս մայրիկիդ և եղբայրքույրերիդ:

Մենք լավ ենք. երեխաս մեծացել է. խելոք տղա է դարձել, բայց շատ չար, աշխույժ և ջղային: Բարևում են քեզ. տղաս հիշում է քեզ:

Ջերմ համբույրներով, քո՝ **Ա.Վետիք Իսահակյան**

Իսկույն գրիր: Սրա հետ ուղարկում եմ այս պոեմաս և երկու ոտանավոր «Գեղարվեստիդ» համար:

128. ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ

1916, ապրիլի 6, Ժընև

Իմ սիրելիներս, այսօր 5 օր է, որ լսել եմ մեր ազիզ, անմոռանալի, մեր անգին Միսակի մասը. այսօր հարմար եմ ինձ համարում այս տողերը գրելու. վերջապես եղավ, ինչոր տարի ու կես ես սիրտ ու հոգով բանում էի լուրերը. մեր ցեղի անգին ծաղիկը, մեր տան աստղը այլևս չկա. այսպիսի մեծ կորուստ, այսպիսի մեծ ցավ ես դեռ չէի ունեցել. ես լինեի իմ ազիզ բալիկի փոխարեն. ինչպե՜ս մոռանալ այն գեղեցիկ, հրեշտակի պես երեխային. ա՜խ, ա՜խ, անկարելի է մոռանալ. օր չտեսավ, օր չտեսավ. չգիտեմ

[illegible] մխիթարեմ աղբեռնու Աբգին, դժբախտ մորը. արցունքներս, որ օր ու գիշեր թափում եմ, խառնում եմ Աբգոյի և բոլորիդ արցունքների հետ. միակ մխիթարությունը այն է, որ հետոի պես ընկավ մեծ գաղափարի համար, հայրենիքի համար. սուրբ նահատակ, անմահ դարձավ. հայ ազգը հավիտյան կհիշե իր ազնիվ, իր սիրուն զավակին, որ իր տեղահանդը և դարար կյանքը զոհ բերեց. հավիտյան համբուրելի կմնա նրա սուրբ գերեզմանը և լուսով ու վարդերով միշտ կպսակվի նրա աճումը: Մխիթարվի՛ր, իմ թանկագին Աբգո, որ այդպիսի զոհար եա ծնել, և հիշիր, որ քեզ հետ շա՛տ ու շատ ընտանիներ կան... Ամեն օր հազարավոր մայրեր արյուն-արցունք են թափում. միլիոնավոր ազգակոր մայրեր կան այս ընդարձակ աշխարհի վրա, որոնք անիծում են գազան Վիլհելմ կայսրին և զգվելի գերմանական ազգը, որ երկիրը արյան ծով ու գերեզման դարձրեց: Շուտով կգա արդար դատաստանը. ռուսների, ֆրանսիացիների և անգլիացիների անձնազոհ բանակները կջախջախեն գերմանական վիշապի գլուխը և մեր բոլորի վրեժը կհանեն:

Իմ հոգուս հատոր Միսակի համար հոգեհանգիստ կատարեցեք իմ կողմից. լավ պահեցեք նրա ձեռագիրները. մխիթարեցեք Աբգոյիս, լավ նայեցեք Աբասիս և խրատեցեք Օլիկին, որ ուղղվի, չխմե, բժշկվի: Հոգեհանգիստ կատարեցեք և՛ Գևորգ աղբորս գերեզմանի վրա, որ այդպիսի ընտիր, սուրբ որդի ունեցավ:

Իսկույն ինձ գրեցեք, թե ինչպե՛ս ընկավ, ե՞րբ, մանրամասնությունները. որտե՞ղ է նրա գերեզմանը. ո՞ւր է թաղված. վերջին օրերը, վերջին խոսքերը. բոլորը, բոլորը. եթե Էրզրում է թաղված, այնպես արեք, որ գերեզմանը չկորչի: Իսկ նրա բոլոր տետրակները, նամակները, թղթերը լավ պահեցեք, որ գամ և հրատարակեմ:

Սոֆիկի արցունքները և համբույրները իր թանկագին Աբգոյին:

Ընդունեցեք իմ արցունքներս ու համբույրներս՝ Ապլայիս, Աբգոյիս, Վերգինին, Աբասիս, Գինովաբեին, իրիցկընկաս, Փեփրոնին, Ռուբենին, Մկրտիչ աղբորս, Ալեքսան աղբորս և հարսներին, երեխաներին:

Ձեր՝ վշտահար **Ավետիք**

Սիրելի Ռուբեն ախպեր. խնամի՛ր ավելի մեծ սիրով Աքայիս և Աբասիս: Ես կարծում եմ, որ լավ կանես, որ Կոլյային ղրկես մոտս՝ թե՛ սովորի և թե՛ բժշկվի. այստեղ լավ բժիշկներ կան, միայն եթե այդտեղ ապահով ես, որ լավ կբժշկվի՝ մի՛ ղրկիր. լա՛վ մտածիր. շատ ծախս պետք չէ, մեզ հետ կապրի. ես դեռ ստիպված եմ մի առ ժամանակ մնալու. անցագիր դեռ չեմ ստացել, ու դեռ հիվանդ եմ մի քիչ էլ: Վաղուց ստացած կլինեք նամակս Ձեր նամակներին պատասխան. նույնպես այն, որ ստացել ենք իր ժամանակին փողը (450 թե 460 ֆր.): Շուտով նորից կգրեմ:

Գրեցեք Ապլայիս, Աքայիս և բոլորիդ առողջության մասին: Խե՛ղճ Աքա, վախենամ չկարողանա այդ մեծ վշտին դիմանալ. դժվար է. Աստված հասնի. ամեն կերպ մխիթարեցեք... Ուրեմն ես Միսակիս էլ չեմ տեսնելու... սարսափելի է...

Ձեր՝ **Ավետիք**

129. ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

<1916>, հունիսի 29, Ժընև—Ռոզոն

Սիրելիք.

Ստացա սիրելի Գիևովաբեի նամակը, շա՛տ ուշացած. սրտի անհուն ցավով իմացա անմոռանալի, անգին Միսակիս կորուստը. ինձ թվում է, որ այսուհետև ինձ համար էլ մխիթարություն, ուրախություն չկա. Միսակիս հետ ամեն բան մեռավ ինձ համար. հիմա միայն մի ցանկություն ունեմ՝ օր-առաջ տուն դառնալ, տեսնել ազիզ Միսակի գերեզմանը, գրկել և այնքան լալ ու լալ, մինչև սիրտս հովանա. է՛հ, վերջապես: Դառնանք գործին. իմ վերադառնալը մի-երկու պատճառով քաշքշվում է. անցագիր դեռ չունիմ. Ֆրանսայից և Անգլիայից անցնելը շա՛տ դժվարությունների հետ է կապված, իսկ ծովն էլ բավական վտանգավոր է. միևնույն ժամանակ պրոֆեսոր բժիշկս ինձ խորհուրդ է տվել մի առ ժամանակ սպասել, հսկել ինձ, որ եթե հիվանդությունս կրկնվելու նշաններ ցագեմ, իսկույն առաջս առնի, չթողնի

զարգանալու. անորոշ սպասում եմ, գուցե և հանկարծ աշնանը պատերազմը վերջանա. իսկ ճանապարհածախս միայն մեկի համար 1000 ֆրանկ է հարկավոր, իսկ երեքիս համար՝ անհագին գումար: Գրել եմ մի-երկու տեղ, որ փող ուղարկեն ճամփու համար՝ դեռ պատասխան չկա. մի խոսքով՝ անորոշ վիճակ է: Առողջությունս հիմա լավ է: Վիգենը՝ նույնպես: Մյուս անգամին որոշ կգրեմ գալուս մասին:

Ասացեք և բարևեցեք Ռաշմանյանին, որ Ար. Չիլինկարյանից, Երևանից, փող չենք ստացել. հարցնեն, իմանա՝ ե՞րբ է ուղարկել, ի՞նչ հասցեով, որտեղի՞ց, ո՞ր բանկի միջոցով. իսկ եթե չէ ուղարկել, բարի լինի ուղարկե, որ մեծ կարիք ունենք. այստեղ ամեն բան, ինչպես ամեն տեղ, սաստիկ թանկացել է. անիծյալ իդիոտ, լիրբ Վիլհելմ կայսրը աշխարհը քանդեց:

Համբույրներ Ապլայիս, Աքայիս... Թո՛ղ քաջ մնա Աքան և մխիթարվի այն համաշխարհային սարսափելի սուգով, որ ծածկել է միլիոնավոր մայրերի սրտերը. Միասկս և նրա հերոս ընկերները ընկան աշխարհի փրկության համար...

Բոլորիդ սիրելի իրիցկնկան, Գինովաբեին, հարսխանումին համբույրներ. Ալեքսան աղբորը, Ռուբենին, Մկրտիչ աղբորը, տերտերին, երեխաներին, բոլորին: Տերտերանց Գևորգին, Կոլյային, Գարուշին, Գեղամին, Աքասին ասեք, որ ինձ նամակ գրեն:

Օլիկին ասեք, որ անվերջ հետևի բժշկության. ականջի հետև չձգե, դիմե կարգին բժշկի:

Մեծ սփոփանք է, որ Միասկս այդպես հերոսաբար է ընկել, և վայրկենաբար, ու չի տանջվել, և թաղվել է հայրենի հողում. գոնե միշտ կերթանք ու կխոսենք հետը... Ամեն անգամ նրան այցի գնալիս ծաղիկներ տարեք և՛ իմ կողմից, և բարևեցեք ու համբուրեցեք նրան. առայժմ քար մի՛ ձգեք վերան մինչև ես գամ...

Նորից կգրեմ. համբույրներ բոլորիդ:

Ձեր՝ Ավետիք

130. ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

1916, հուլիսի 19, Ժընև

Մեծարգո բարեկամ
պ. Տիգ. Հովհաննիսյան,

Ապրիլի 21-ին ստացել էի «Հայ գրասերներիդ» ընկերության՝ Ձեր միջոցով ուղարկած 360 ֆր. ֆրանս. կամ 320 ֆր. շեյցար.— գումարը. իր ժամանակին գրեցի Ձեզ՝ շնորհակալություններովս հանդերձ՝ ստացած լինելու համար, սակայն վերջերս այդ նամակը ետ եկավ Լոնդոնից, չգիտեմ ինչո՞ւ: Նորից եմ գրում:

Ամենից առաջ ջերմ շնորհակալություններս Ձեզ և հարգելի անդամներին (ընկերության) դեպի ինձ ունեցած հետաքրքրության համար:

Թեև գումարը ուղարկված է եղել որոշ նպատակով՝ հայրենիք վերադառնալու համար, սակայն հանգամանքները այնպես էին դասավորված, որ անկարող էի գալ.— մի քիչ հիվանդ էի՝ պիտի կազդուրվեի, ապա ձգձգվեց մինչև մեր դեսպանատունից իրավունք ստացա Ռուսիա մտնելու, և միևնույն ժամանակ, որ ամենակարևորն էր, անհրաժեշտ դրամի չգոյությունը՝ առնվազը պետք էր 1000 ֆր. ուղևորվելու համար:

Հիմա, որ երկու արգելառիթ հանգամանքները վերացված են մեջտեղից, այժմ էլ դեռ իր լիակատար ուժի մեջն է երրորդ արգելքը — փողը: Ինձ թվում է, որ ո՛չ մի հնարավորություն չպիտի ունենամ 1000 ֆր. միանվագ գտնելու, թո՛ղ և այն գումարը, որ պիտի թողնեմ այստեղ ընտանիքիս, որովհետև երեք հոգով մեկնելու համար պետք է 3000 ֆրանկ, մի ֆանտաստիկ մեծությամբ գումար՝ իհարկե, ինձ համար...

Դրությունս, ինչպես տեսնում եք, լավ չէ. և այսպիսի ժամանակ, ստիպված եմ հայրենիքից հեռու լինելու մինչև պատերազմի վերջը՝ քաշքշելով մի հիմար կացություն:

Մի խնդիր ունեմ Ձեզ, հարգելի բարեկամ.— գրել էիք, որ հրատարակելիք գրվածքներ ուղարկեմ ընկերությանդ. դժբախտաբար, գրություններս, որ քիչ չէին, մնացին թշ-

նամի հողում (Բեռլին), իրավունք չունեի հետս թղթեր դուրս բերելու, իսկ նոր շատ քիչ բան ունիմ. և հնարավո՞ր է արդյոք, այս արտով այս օրերում բան գրել. այս ամենը ի նկատի ունենալով, խնդրում եմ հանձնարարեք ինձ մի մնայուն արժեքով բան թարգմանելու, օրինակ, «Դոն-Քիխոտը», (ֆրանս-ռուսերեն-գերմաներենի համեմատությամբ), կամ մի ուրիշ բան, խնդրելով միաժամանակ մի զգալի կանխավճար տրամադրեիք ինձ, որ միջոց ունենայի աշխատելու:

Եթե հաջողեցնեք այս, շա՛տ պարտավորեցրած կլինեք ինձ, իսկ եթե այդ չի մտնում Ձեր ծրագրի մեջ... ապա հնարավոր չէ՞ մի փոխառություն, որ հետո կամ կվճարեմ, կամ գրվածքներ կտամ. մի կերպ պետք է ազատվել այս դրությունից, և, կամ հայրենիք ձգել ինձ, կամ այստեղ կարողանալ արդյունավետ անցկացնել:

Խնդրում եմ մտածեք իմ մասին:
Խորին հարգանքներով և ջերմ բարևներով
մնամ Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

Հասցես՝
Avedik Bajazide (փոստը այս անունով է ճանաչում ինձ)
Av. Beau sejour, 3
Genève,

131. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1916, հուլիսի 20, Ժընև:

Սիրելի Գարեգին,

Ապրիլի առաջին օրերին քեզ մի ապահովված նամակ ուղարկեցի՝ «Գեղարվեստի» համար նյութերով. չորրորդ ամիսն է քեզնից պատասխան չառա՝ ստանալուդ մասին: Հիմա խնդրում եմ իսկույն գրես՝ ստացե՞լ ես, թե ոչ: Եթե ստացել ես, խնդրում եմ, եթե հնարավոր է, երկու մաճր ոտանավորը չզետեղես. ուղղումներ եմ արել. միայն կհրատարակես պոեմը. խնդրում եմ ականջի հետև չձգես և պատասխանես:

Գրիր ի՞նչ կա գրական շրջաններում. ի՞նչ է անցնում-դառնում:

Իմ վերադարձը դեռ որոշ չէ:

Ե՞րբ է լույս տեսնելու «Գեղարվեստը», և մի՞թե պատեհ ժամանակ է դրա համար:

Կովկասի լրագրները չափազանց տխուր լուրեր են բերում, ասես, հայ ժողովուրդը հոգևարքի մեջ է. մեր թշնամիները (իսկ բարեկամ երբեք չունենք) հասան իրենց նպատակին — Հայաստանում հայ չկա:

Համբույրներով, բարևներով,
քո՝ **Ավետիք**

A. Issahakian
Beau Sejour, 3
Genève.

132. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1916>* սեպտեմբ<երի> 21, Ժընև

Սիրելի Գարեգին, նամակս ստացել ես, և տազ արել. ինչո՞ւ լռեցիր. եթե «Աբու-Լալաև» թույլ կտան տպելու (գրաքննիչը), ապա իսկույն ինձ հայտնիր. վերջերս սըրբագրել եմ և լավ է դուրս եկել. ցանկալի է, որ բարեփոխված լույս տեսնի. իսկույն կուղարկեմ սրբագրվածը, երբ որ քեզնից նամակ ստանամ: Այլև գրել էի մի կարտով, որ երկու մանր ոտանավորները չզետեղեիր. դրանց մասին էլ չգրեցիր: Իսկ ե՞րբ է լույս տեսնելու «Գեղարվեստդ»: Կովկասի լրագրները չափից ավելի մոայլ պատկերով են ներկայացնում հայերի կյանքը թե՛ Կովկասում և թե՛ թրքահայկական նոր գրաված երկրներում: Ես պատերազմի սկզբում գուշակել էի հայկական ջարդերը և Հայաստանն առանց հայերի. հիմա էլ գուշակում եմ այն, ինչ որ կատարվեց սրանից ուղիղ 10 տարի առաջ Կովկասում... Նոր Գալիցին:

Նզովված Գերմանիան աշխարհ կործանեց և ինքն էլ

* Ըստ փոստակնիքի

կործանվելու է շնորհիվ մեծ, սուրբ, փոքր ազգերի պաշտպան, նահատակ հայերի փրկիչ Ռուսիայի և նրա ազնիվ, ասպետ դաշնակիցների:

Քո՝ **Ավետիք**

133. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1916>, դեկտեմբերի 8, Ժընև

Սիրելի Գարեգին.

Ստացա փակ և բաց նամակներդ. շա՜տ ուրախանում եմ նամակ ստանալուս. միայն ափսոս, որ շատ բան չես կարող գրել, բայց ինչ որ գրում ես, շա՜տ հետաքրքիր են. գրի՛ր գրական անցուդարձից:

Շանթի «Կայսրը» խնդրեմ չուղարկես. արդեն կարդացի. «Հին աստվածները» ավելի քան աջողված է սրանից. սա մի սառն, շինծու, աղքատ գրվածք է. ավելի կարծիք չեմ ուզում հայտնել. թո՛ղ գրեն ինչ որ ուզում են, ինձ ի՛նչ. արդեն քննադատություն ասված<ը> անպետք բան է. ժամանակն է միակ մեծ, անաչառ քննադատը. ժամանակակիցները, այս կամ այլ կերպ, կույրեր են: Ժամանակակից մարդկանց մեջ խոսում է կիրքը, նախանձը, թշնամանքը, կուսակցական, դասակարգային նկատառումներ և այլն:

Դրա փոխարեն ուղարկիր, եթե ուզում ես, Գ. Քյալաշյանի նոր ժողովածուն և գրախոսած «Դանտեական առասպելը» ... Տեսնենք երիտասարդների մեջ ի՞նչ կա: Կուզեի և ունենալ Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» գրքույկը: Անպիտան «Գուտենբերգը» ինձ փող է տալիք՝ չի ուղարկում («Հայ գրողներ» խրեստոմատիայի հաշվին), գոնե նրանից այդ բրոշյուրները առ. այդ տղան՝ գլադա է, ոչինչ ավելի:

Բաքվի «Գործը» դիմել է, <խնդրելով> աշխատակցությունս. մասնակցում եմ, թե՛ այդ խմբին գնահատելով, և թե՛ ատելով «Հորիզոնի» մարդկանց. իմացած եղիր, որ քեզ ուղարկած երկու մանր ոտանավորներս նրանց ուղարկեցի՝ սրբագրելով. նյութեր չունեի: Քեզ նոր բաներ կուղարկեմ.

գիտեմ, որ «Գեղարվեստդ» ուշ լույս կտեսնի: «Հավերժական սերը» քոնն է:

Պրոֆ. Ադոնցին գրեցի, որ, եթե հնարավոր է «Աբու-Լալան» լույս ընծայել՝ ուղարկեմ նորը. սպասում եմ պատասխանի:

Կ. Միքայելյանը դեռ հուլիս ամսին ինձ գրել էր, որ մոտ օրերս «Գարունից» կանխավճար կտեղափոխենք 200 ռ., սակայն մինչև օրս ոչ մի կոպեկ չստացա, չստացա և նույնիսկ «Армянские поэты», որ խոստացել էին, և, կարծեմ, պարտական էին: Այդ առթիվ նրան նորից գրեցի, ինչպես և Մակինցյանին:

«Հորիզոնի» մեջ Մատենցյանը գրել է, որ մի ոտանավորս Հաֆիզի նմանություն է. չի սխալվում, սակայն ես այդ ոչ մի տեղից չեմ թարգմանել, այլ 1892—93 թվերին, երբ դեռ պատանի էի, մեր հարևան թուրք գյուղացի մի բեկ, որից երբեմն դասեր էի առնում պարսկերենի, նա է բերացած մի քանի տող ասել, և ես սարքել եմ, ու այդ թվականներին տպվել է «Տարազի» մեջ Հաֆիզի անունով. այսքանն եմ հիշում: Ես դրա մասին պիտի գրեմ, նույնպես իմ մի երկու ոտանավորների մասին, որոնք խիստ ազդված են, բայց երբ Կովկաս գամ, ես ունեմ 4—500 ոտանավոր, որից հազիվ մի 4—5-ը ազդված լինեն. ներկա բոլոր գրողները, և մանավանդ մեռածները, ավելի մեծ քանակ ունեն. այդ մասին էլ գրում եմ, սակայն «Հորիզոնի» միտքը այլ է — ինձ վիրավորել. բայց ոտքս Կովկաս դրի թե չէ՝ կտեսնեն. ոչ ոք ինձ պես ծանոթ չէ ազգերի գրականությանը (մեր մեջ) և գիտեմ բոլորի նմանողությունները. ամենից քիչ ես եմ ազդված: Իմ՝ գրողի պատիվը ինձ թույլ չի տա այդ անելու, բայց մի կերպ կձևակերպենք: Առայժմ այսքան: Համբույրներով,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

<Լուսանցքներում> ա) Կովկասում մաքուր թերթ չկա. «Հորիզոնը» լիրբ է, «Մշակը» ևս ավելի. երկուսին էլ ատում եմ. «Արևը» շա՜տ ավելի համակրական է. «Համբավաբերը» լավ է: Ամենից լավը՝ «Армян<ский> Вестник»-ն է:

բ) «Աշխարհե աշխարհ» գիրքդ չեմ ստացել. ուրախ կլինեի, որ ուղարկեիր. շնորհակալ եմ, որ ինձ ես ևվիրել:

գ) Այս անգամ կարճ գրեցի, որովհետև միայն նամակներ գրելով եմ զբաղված՝ շատ նամակներ եմ գրում:

134. ՅՈԼԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆ

<1917>, հունվարի 28, Ժընև

Սիրելի Յոլակ.

Շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած 492 ֆր. Սպասում եմ, որ բարի կլինեք նույնպես «Գործ» հանդեսից մի օրինակ ինձ ուղարկելու:

Շուտով մի քանի բաներ կղրկեմ հանդեսի համար. ամեն ամիս ինձնից նյութ կունենաք ամսագրի համար:

Խնդրում եմ ընկերներիդ (Վահանին, Կարենին) հասկացնեք, որ պետք է ինձ մի օրինակ «Поэзия Армении» ուղարկելու. չե՞ք գտնում, որ իրավացի եմ. նրանք վեց ամիս է միայն խոստացել են, և չեն կատարել:

Ա՛խ, մի պատերազմը վերջանար, թե՛ հայության մնացորդի տառապանքը վախճան ունենար, և թե՛ ես էլ դառնայի տուն, ապրեի կամ մեռնեի այդտեղ. հոգնեցի արտասահմանից: Սիրտս կտրատվում է՝ ի՞նչ է լինում հայրենիքում, և ես հեռու եմ:

Ջերմագին բարևներ Ձեզ և բոլոր-բոլորիդ.

Ձերդ՝ **Ավ. Իսահակյան**

Exp. A. Bayazide.
Prévost Martin, 53.
Genève.

135. ՅՈԼԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆ

<1917>, մարտի 24, Ժընև

Սիրելի Յոլակ.

Իր ժամանակին ստացել եմ փողը 492 ֆր., որ հայտնած եմ բաց նամակով:

Ստացա և մի երկու օր առաջ «Գործ» հանդեսը. դեռ չեմ կարդացել, որովհետև թե՛ ժամանակ չունեմ (թերթերը ամբողջ ժամերս կլանել են, ռուսական հեղափոխության պատճառով), և թե՛ մի ուսանող տարավ:

Մեծ հավատ ունեմ, որ ռուս հեղափոխությունը չպիտի ծնի ռեակցիա. ուրեմն, փրկվեցինք՝ հայերը, մանավանդ թրքահայերը, որոնց մնացորդները հին ռեժիմի տակ հալումաշ պիտի լինեին... Իմ խիղճս չափազանց արդար է, և արհամարհում եմ այն բոլոր մարդկանց, որոնք իրենց խելացի էին համարում և ղեկավարող՝ ազգի վիճակը: Բայց Սուրբ Սարգսի պես հասավ հեղափոխությունը:

Երբ ոտս ընկնի Կովկաս, շա՛տ բան ունեմ ասելու, հարկավ, միայն պատմական արժեք ունի. այժմեությունը կորավ:

Ուղարկում եմ այս երեք ոտանավորը. կամաց-կամաց խնդրում եմ զետեղեք. Հ. Հովհաննիսյանի ոտանավորները շաբլոնային էին, իսկ Թումանյանինը՝ շատ երկար և ո՛չ արժանի իր մեծ տաղանդին:

Վահանինը սառն էր, արվեստական. «Մթնաշաղից» մի՞թե էլ շողեր չկան:

Բայց, կարծեմ, ինձ չի վերաբերում կոլլեգների մասին խոսել:

Այն ոտանավորս, որ ղրկել էի ձեզ, եթե դեռ չեք տպել, խնդրեմ այսպես տպիր, մոռացած եմ եղել ուղղումը ղրկել: Ոտանավորը սա է՝

Ձյուն է գալիս ու թախծալիր...

Առաջին տունը անփոփոխ, իսկ երկրորդը այսպես՝

Եվ գընգվեի սրտիս սրտում
Պատկերդ անուշ ու աղվոր,
Ու ձյունը գար մեղմ ու տրտում
Ծածկեր շիրիմս հեռավոր...

Իհարկե նույնն է, բայց սա է ինձ դուր գալիս:

Ջերմ բարևներով,
Ձեր՝ Ավետիք Իսահակյան

136. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1917, մարտի 28, Ժընև

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և ուրախությամբ կարդացի: Անսահմանի, անսահմանի ուրախ եմ ռուսական հեղափոխության հաղթանակով. ևո՛ր դարագլուխ. և վերջապես փրկվեց հայությունը: <...> Այժմ ընդմիշտ ապահով է հայ ժողովրդի ապագան,—մի 30-40 տարուց հետո, մենք կունենանք ամուր, ուժեղ, հարուստ, մեծաքանակ հայություն. Ռուսիան պիտի հավաքողը լինի հայկական հողերի և հայը ինքը ազատագրողը և յուրացնողը այդ նվիրական հողերի. մեր ներկա սերունդի և ապագա բոլոր սերունդների միսսիան պիտի լինի Հայաստանը դարձնել Հայաստան: Սոցիալիզմը պիտի նպաստող լինի, և ոչ թե խանգարող:

Ջերմ շնորհակալություններս սիրելի բարեկամ-ընկերներիս՝ Շիրվանզադե, Սիսակ, Խանազատ, Աշոտ, Գրիգոր և այլն, որ ինձ հիշել եք և իմ կենացս խմել. հույս ունենամ, որ ես էլ արժանանամ այդ քեֆերին: Անհուն կարոտ ունիմ Կովկաս գալու, բայց հիմա անկարելի է դարձել, եթե չես ուզում ջրի տակն անցնիլ. գուցե հետո ճանապարհը բացվի:

Դեռ չեմ ստացել քո և Քյալաշյանի ուղարկած գրքերը:

Թերթերին ուղարկեցի հերքումը Մատենճյանի գրության. եթե տպվել է, լավ, եթե չէ, դու գրիր: Նա տպված է (ստուգեցի Վիեննայից), 1893 թիվ, № 31, երես 491—92, «Տարազ»:

Աշխատի՛ր շուտ-շուտ նամակներ գրել, և սրտիդ ուզածը, քանի որ ազատ է հիմա:

Խնդրում եմ Գր. Վարդանյանի և Ար. Աբեղյանի Հայաստանի քարտեզներից մի-մի օրինակ ինձ համար առնես և պահես. եթե ինձ փող ես ուզում ուղարկել, նրանից դուրս արի: Վախենամ սպառվին այդ քարտեզները, իսկ եթե ոչ, ուրեմն թո՛ղ մնա, ես գամ:

Եթե ուզում ես փող հասցնել ինձ, խնդրում եմ այդտեղ հանձնիր Գինովաբե քրոջս կամ Մկրտչին, որ ինձ ուղար-

կելիք փողերի հետ միասին ղրկեմ. ավելի հարմար է, և ծախս քիչ կլինի տեղափոխության:

Հույս ունեմ, որ «Գեղարվեստի» մեջ կզետեղես Լեոնցի ոտանավորներից, թո՛ղ այդ մարդը հանդես գա, շա՛տ է մոռացված: Մոտ օրերս նրա գրածներից մի քանի հատ պիտի ուղարկեմ Մոսկվա, Հայկ. կոմիտեին, որ եթե հավանին, զետեղեն երկրորդ անգամ հրատարակվելիք «Поэзия Армении» մեջ: Ստացա վերջապես. այո՛, հոյակապ գիրք է. մեծ ջանք, մեծ ճաշակ. միայն ափսոս, որ մեծ տեղ է տված Ծատուրյանին, և շա՛տ քիչ Դերենիկին, Սիամանթոյին, Վարուժանին, Ալիշանին:

Գրի՛ր ընկերական շրջանից. դա ամենից շատ է ինձ հետաքրքրում:

Մենք լավ ենք, թե՛ Սոֆին, և թե՛ երեխաս, կինս բարեվում է քեզ. ջերմ բարևներ մայրիկիդ, և տնեցոց, և հշանածիդ, եթե ունիս. բարևներ նույնպես տիկ. Վիկտորիայիդ, օր. Արմենուհուն:

Ուղարկում եմ այս 3 ոտանավորը, և «Հավերժական սերի» ուղղումները: «Աբու-Լալա Մահարին» խնդրեմ առայժմ **չտպես.** սրբագրություններ եմ արել. այդ առթիվ գրեցի և՛ Ադոնցին. կամ սրբագրվածը կուղարկեմ, կամ հետս կբերեմ:

Համբույրներով և բարևներով,
քո՝ **Ավետիք**

137. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1917, հունիսի 25, Ժընև

Սիրելի Գարեգին.

Այս 5-6 ամիս է, թե՛ քեզանից և թե՛ մեր տնից նամակ չունեմ. եթե ընդունենք, որ փոստը տակնուվրա է եղել, բայց ուրիշները ստանում են: Ինչպե՞ս բացատրել:

Խնդրում եմ իսկույն գրես, ի՞նչ կա, ի՞նչ չկա: Ես քեզ մի

3 ամիս առաջ երեք ոտանավոր էի ուղարկել. չգրեցիր, թե՝ ստացա՞ր, թե՞ ոչ: Դրա մասին էլ գրիր: Նամակ շուտ-շուտ գրիր, որ գոնե մի երկուսը ստանամ:

Քո՝ **Ավետիք**

138. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1918, դեկտեմբերի 5, Ժընև

Սիրելի բարեկամ Արշակ Չոպանյան.

Շնորհակալությամբ միշտ ստանում եմ «Վերածնունդը» և հետաքրքրությամբ կարդում:

Ժընևից բացակա ժամանակս ստացվել էր Ձեր ուղարկած նվերը՝ La femme arménienne: Հայտնելով խորին շնորհակալությունս Ձեզ, մեծարգո բարեկամ, որ ինձ չեք մոռացել և պատվել եք Ձեր թանկագին նվերով, հայտնում եմ միևնույն ժամանակ այն անուշ տպավորությունը, որ ստացա այդ եզակի, սիրուն գրքույկից:

Հիացած եմ Ձեր անսպառ եռանդի վրա. Դուք մեն-մենակ ավելի բան եք արել հայ գրականության համար, և եվրոպացիներին ծանոթացնելու մեզ հետ, քան ընկերությունները զանազան՝ միասին առած:

Մեծ հույս ունեմ, որ մոտակա ազատ Հայաստանը անսահման կորով է տալու Ձեր ստեղծագործությանը:

Հայաստանը, որ վերջ ի վերջո իրականանալու է մեր արյունոտոտ լեռների վրա, իմ հոգին լցնում է անսահման ուրախությամբ և անսահման վշտով միաժամանակ. ինչպե՞ս մոռնալ մեր միլիոն մեռելները. ինչպե՞ս մոռնալ. ի տես ազատ և մեծ Հայաստանի՝ նույնիսկ անկարելի է մոռանալ հարյուր տարվա չափ՝ մեր անծայր աղետը: Ես այնպես խորն եմ հարվածված ու շփոթված, որ երկար ժամանակ ինձ չպիտի կարողանամ գտնել՝ մի ոտանավորով գոնե արտահայտել զգացածս սուգն ու բերկրանքը:

Այստեղ մի երիտասարդ դերասան կա՝ Պ. Հարությունյան, որ ուզում է մի հայկական դրամա ներկայացնել,

ֆրանսերեն լեզվով. ինձ դիմեց, որ Ձեզ խնդրեմ,— ասելով, որ Դուք ունիք Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսի ֆրանս. թարգմանությունը,— ուղարկեք, կա՛մ այդ «Պատվի համարը», կա՛մ մի ուրիշ բան, եթե ունեք:

Խնդրեմ բարի լինիք մի երկու տողով հայտնել ինձ Ձեր հաճությունը:

Սրա հետ միասին ուղարկում եմ այս երեք հատ ոտանավորը «Վերածնունդի» հունվար ամսվա թվի համար:

Ընդունեցեք ջերմ բարևներս և հարգանքներս,
Մնամ Ձեր միշտ անկեղծ բարեկամ
Ավ. Իսահակյան

139. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1918, դեկտեմբերի 13, Ժընև

Սիրելի բարեկամ
Ար. Չոպանյան,

Այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանավոր, որ 1913 թ. Լոզանում մեր եղերաբախտ բանաստեղծ Ռուբեն Չիլինկարյան-Սևակն գրեց իմ ծոցատետրիս մեջ. այդ ծոցատետրս միայն վերջերս հնարավոր եղավ ստանալու, (մոտս չէր ուրիշ ձեռագրներիս հետ), ուստի և պարտք եմ համարում տպագրության հանձնելու, միգուցե չկորի այս գեղեցիկ բանաստեղծությունը:

Որքան հիշում եմ՝ ո՛չ մի տեղ չի տպված դա:

Սրանից մի քանի օր առաջ Ձեզ ուղարկեցի 3 հատ ոտանավորներ «Վերածնունդի» հունվարի համարի մեջ լույս ընծայելու. դրանցից մեկը կիսատ էր. սրանով լրացնում եմ թերին. խնդրում եմ չմոռանաք լրիվը հրատարակելու:

Շատ տխուր լուրեր եկան երեկ, հեռագրով, Կովկասից. թուրքերը դեռ չեն հեռացել Ռուսական Հայաստանից, չեն դատարկել գրաված երկրամասերը — Ախալքալաք, Ալեք-

սանդրապոլ, Սուրմալի, Կաղզվան, Կարս: 600 000 տնից-տեղից փախած և լեռներում ապաստանած հայերը մատնված են սովի և համաճարակի:

Երևանում իսկ սովի պատճառով արյունոտ ընդհարումներ են տեղի ունեցել. սպանվել է երիտասարդ ազնիվ գործիչ Խաչիկ Կարճիկյանը, Կովկասյան նախկին հանրապետության ֆինանսական մինիստրը:

Սնունդ, հագուստ և դեղորայք են խնդրում: Շատ կխնդրեի Դուք Ձեր ձեռքի եկածը անեիք՝ դիմելու թե՛ մեր պատգամավորությանը և թե՛ ամենուրեք, որ շուտափույթ օգնության հասնին Կովկասին. սա է հիմա հայության մեր հիմքը:

Խնդրել բարեկամ պետություններին, որ շուտով դուրս հանեն տաճիկներին և փրկեն ժողովուրդը սովամահից: Ավելորդ չի լինի և՛ ասել, որ Էնվեր փաշան գնացել է Կովկաս թե Allies*-ների դեմ խառնակություն և դժվարություններ կազմելու տեղական թաթարների և դաղստանցիների միջոցով, և թե հայկական ջարդեր կազմակերպելու:

Շա՛տ եմ վախենում, և հիմք ունիմ վախենալու, թե միգուցե Հայաստանի մոտակա ազատությունը ծագի մեր ժողովրդի համատարած գերեզմանոցի վրա:

Եթե այս ճգնաժամը հաղթենք, այլևս ապահովված ենք կորստից:

Ջերմ բարևներով և խորին հարգանքներով
Մնամ Ձեր անկեղծ բարեկամ՝
Ա.վ. Իսահակյան

140. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ

1919, հուլիսի 3, Ժընև

Սիրելի Օհաննես և Դերենիկ ջան և բոլոր սիրելիներս, կարոտյալներս.

Ստացա Նվարդի և Դերենիկի սիրալիր տողերը, և շա՛տ

* Դաշնակիցներ

ու շա՜տ ուրախացա: Անսահման տխուր եմ, որ հեռու եմ հայրենիքից և բոլոր հին, ազիզ ընկերներից...

Սիրելիք, առայժմ ոչ մի հնարավորություն չունեմ վերադառնալու. ճամփու ծախս չկա, և, հակառակի պես, ոչ մի տեղից հիմիկուհիմակ հնար չկա փող ստանալու. Կովկասից փող չի գա, կուիսը ընկած է, և ինձ էլ բավական փող է պետք՝ տեղիցս շարժվելու համար. հույս ունեմ, որ մի երկու ամսվա ընթացքում հայկական դժբախտ ճակատագիրը որոշվի, դրությունը մի քիչ կարգավորվի, հաղորդակցություն սկսվի, գուցե հնարավորություն ունենամ գործերս շիտկել:

Չափազանց ձանձրացել եմ Եվրոպայից, համը վաղուց ելել է այստեղ մնալու. վերջին տարիներն էլ գերության վիճակ էր, ասես. մի խոսքով՝ հոգիներս ելավ:

Հույս ունեմ, որ հակառակ բոլոր ձեր կրած դառնություններին ու զրկանքներին, հիմա լավ եք, և լավագույնի հույսերով՝ ուրախ ու ոգևորված. բարով արժանանանք իրար տեսության, գոնե մի-երկու տարի լավ ապրելու միասին: Ամեն: Ծտապում եմ վերջացնել այս երկու տողս, և գրկելով ձեզ ամենքիդ, կարոտով համբուրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեր՝ **Ավետիք**

141. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

<19>19, նոյեմբերի 26, Ժընև

Սիրելի Վահան.

Նամակդ ստացա. մինչև հիմա չէի գրում, որովհետև շա՜տ հոգնած էի՝ Բեռլինում պարապ քաշ գալով, աննպատակ, երեք ամիս, չհաջողված միսիոնովս, և Հայկի շուրջը կատարված անախորժ պատմությունով... Հիմա ջղերս հանգիստ են, բայց հայկական հարցի անորոշ վիճակը մեռցնում է ամեն եռանդ:

Ի՜նչ գրեմ... Գնացել են Ամերիկա, լավ են ընդունել, բայց հույս չկա մանդատ ընդունելու. ավերակ, ամայի երկիր

է, աղքատ, ոչ ոք չի ուզում մանդա առնել. Հայաստանի և Թուրքիայի լավ տեղերը Անգլիան և Ֆրանսիան գրավել են (Կիլիկիա, Ադալիա, Սիրիա, Միջագետք....) և ցուրտ լեռները թողել են Ամերիկային. նրանք էլ, ինչպես բոլորը, հարստություն են որոնում:

Հիմա էլ լսում ենք, թե խաղաղության ժողովը վերջանալու վրա է Փարիզում, և Թուրքիայի հարցը, մերն էլ մեջը,— տեղափոխվում է Լոնդոն. Անգլիան ուզում է տնավարի կերպով հարցը լուծել, թերևս այդ ավելի լավ է, քան Փարիզի շնական մթնոլորտում, թեև Անգլիան էլ մի բարի պտուղ չէ:

Հարբորտի (Ամերիկ. գեներալի) միսիոնի մասին դրական բան չգիտենք, բայց խելքս բան չի կտրում, Կովկասից եկած լուրերը լավ և վատ են. կարծեմ կռիվները դադարել են:

Վերջերս Բեռլինի գազանը, հրեշը մի քանի օրով եկած է եղել Զվիցերիա. մինչև իմացանք, արդեն վերադարձել էր նորից Բեռլին. ժողով են ունեցել Բերն՝ խաղաղության ժողովի համար պատրաստություններ տեսնելու. նույն անունով էր եկել, ինչ որ Բեռլին ուներ:

Դուք նորից պիտի շարունակեք հետաքրքրությունը. փող կարող եմ ուղարկել, գիտես, բայց մարդ — միայն Նեվրուզին կարճ ժամանակով, եթե պետք է:

Գալով Հայկին, նա Փարիզում արդարացրել էր իրեն և կարծեմ չի ուզում Բեռլին դառնալ. լսեցի, որ պահանջում են, որ դր. Գրենֆիլդը փաստական մեղադրանքը ուղարկի Փարիզ: Համոյից դեռ նամակ չունեմ. ե՞րբ կունենամ, աստված գիտե:

Գերիների հաստատ մեկնելու մասին ինձ գրիր, և արդյոք Մելի՞քն էլ է գնում հետները:

Հա, մոռացա քեզ ասել, թե մեկնելուս Մելիքին 1000 մարկ տվի, որ 500 քեզ հանձնե, 500 Աշոտին: Շուտով Աշոտին պիտի գրեմ այդ փողի մասին:

Այլ ոչինչ չունեմ գրելու: Բարևներ Գրենֆիլդին, Աշոտին, Մելիքին, Վարդանին և քեզ:

Քո՝ **Ավետիք**

Բարևներ տ. Անտոնից:

Նամակդ մի օր ուշ տվին, հրավիրեցին ինձ պոստը՝ վճար լրացնելու, որովհետև Գերմանիայից պահանջում են հիմա 30 թքեն մարկ դնել. ես չեմ կարծում. այդ ի՞նչ բան է:

Գրի՛ր իմ հասցեն՝

A. Issahakian.
Rue Prévost Martin, 53.

142. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

19<19>, դեկտեմբերի 30, Ժընև

Սիրելի Վահան.

Գնացի Փարիզ, Հայաստան գնալու համար, բայց հետո գտանք վաղահաս, վերադարձա նորից Ժընև՝ գարնանը գնալու համար:

Հայաստանի հարցը վճռվելու վրա է. մինչև մի ամիս, կամ փետրվարի սկիզբը, որոշված կլինի. հույսեր շա՜տ քիչ կան հաջող ելք ունենալու համար. բախտավոր պիտի լինենք, եթե միայն Վանի և Բաղեշի վիլայեթները կցեն Կովկասի Հայաստանին. նույնիսկ Էրզրումը ստանալու հույս չունենք. ծով, գուցե Բաթումը շինեն ընդհանուր նավահանգիստ: Ամերիկան առայժմ հետացավ, ամբողջ գործը մնաց Անգլիային և Ֆրանսիային, որոնք իրենց հոգին ցույց տվին. դարձյալ հին մտայնությունն է — պաշտպանել Թուրքիան: Մանավանդ շատ ավելի է հակառակ Անգլիան Հայաստան ստեղծելուն, գտնելով, որ հայերը ռուսասեր են, իսկ նա ուզում է ջարդված, փոքրացած, քայքայված Ռուսիա, որ չկարողանա մոտենալ Պարսկաստանին, Միջագետքին:

Սիրելի Վահան, Համոն ինձ, Բեռլին գալուս, 500 մարկ էր ղրկել իր կնոջ ազգականուհուն, որ Մյունխենի բանտումն էր, նրան հասցնելու համար, բայց որ եկա, այդ աղջիկը գնացել էր արդեն. ուրեմն այդ 500 մարկը պատկանում է Համոյին, քեզ մոտ թողեցի 500 մարկ. դա հաշվիր

Համոյի կողմից, իսկ եթե ծախսել ես, գրիր, կղրկեմ այդ գումարը:

Գալով մեր ծանոթ գործին, ես չեմ կարող այդ փողից ղրկել գործի համար, որովհետև Հայկի վրա ո՛չ մի վստահություն չունեմ, իսկ դու մենակ չես կարող բան անել, սակայն եթե ուզում ես, քո պատասխանատվությամբ կղրկեմ:

Ինչքան էլ որ այդտեղ փորձեր կատարվեն Հայկին արդարացնելու Լիանոզովի գործի մեջ, ես համոզված եմ նրա շանտաժի մեջ և համոզմունքս չեմ կարող փոխել. ես ոչ տիկ. Լիանոզովի պես շանսոնետկա եմ եղել Բաքվի կաֆե-շանտաններում, և ոչ էլ Գրենֆիլդի պես վախկոտ, զգույշ, խորամանկ, կեղծավոր: Քեզ մի երկար նամակ եմ գրած և մի բաց. խնդրում եմ պատասխանես:

Համբույրներով քո՝ **Ավետիք**

Բարևներ Համոյից և Անեմյաններից, այսինքն Փարիզից:

143. ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

<1919>

Սիրելի, սիրուն Նվարդ.

Ստացա գրածդ բարևները. բախտավոր պիտի լինեմ չափազանց այն օրը, երբ ձեր հարկի տակ հին լավ օրերի նորումը ապրելու <արժանանամ>:

Ես, եթե ճակատագիրը ուզենա, մարտ ամսին հայրենիքում կլինեմ — ազա՛տ, ապահով հայրենիքում, որի համար ընկան, մարեցին մեր ամենալավ աստղերն ու ծաղիկները. անուններ չեմ ուզում տալ... Մեր շրթունքները պիտի մոռանան նրանց անունները, բայց մեր ոգիները միշտ պիտի այրվեն նրանց վշտով, կսկիծով ու կարոտով...

Ջերմ համբույրներս հայրիկիդ, մայրիկիդ, Մուշեղին, Աշխենին, քեզ, Անուշին, Համլիկին, Արեգին, Արփիկին, Սեդային և Թամարին:

Բարևներ մեր բոլոր բարեկամներին:

Քո՝ **Ավետիք**

144. ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ

<1921>, մայիսի 31, Վենետիկ

Սիրելի Զարյան,

Քարտդ վաղուց եմ ստացել, ուշ պատասխանեցի, որովհետև վարանքի մեջ էի մի որոշմունք կայացնելու համար, որ թվում է, թե հիմա վճռել եմ.— ուզում եմ հեռանալ Վենետիկից և քեզ մոտ գալ: Պատճառները մի քանի հատ են.— անհաճո միջավայր, ձանձրույթ, գեշ կլիմա՝ ձմեռը խոնավ, ամառը խեղդող. բնակարանի անհարմարություն,— մի խոսքով ինչ որ ինձ ասացիր Ժընևն, շա՜տ ճիշտ դուրս եկավ. ցավում եմ, զղջում եմ, որ քեզ հետ չմեկնեցի Ֆիրենցե: Երիտասարդությանս ատեն եղել էի այստեղ և լավ տպավորված էի, հիմա հիասթափվեցա: Երեխաս տվի դպրոց՝ ցերեկօթիկ, բայց մոտեն ծանոթանալով մեթոդի և մարդկանց հետ—զզվեցի:

Այժմ ես այստեղ գրեթե մենակ եմ հոգով, ընկեր և ինձ հասկացող չունեմ (վարդապետները ճիզվիթներ են) և զգում եմ, որ քեզ հետ լավ կապրեմ. այն մի քանի ժամերը, որ Ժընևն հետդ անցուցի, ինձ կարծել է տալիս, որ քո մեջ այս օտարության անապատի մեջ՝ պիտի գտնեմ մտերիմ սրտակիցս: Մեկ լավ ընկեր ունենալը մեծ բախտ է, և բավական է: Կինս էլ նույն զգացումներն ունի քո հանդեպ:

Հիմա ինձ իսկույն գրի՛ր, թե այն բնակարանը, որ ասում էիր, թե 3—4 սենյակ ունի, կահավորված, և կարծեմ ամսական 160 ֆրանկ, կա՞ նորեն, և կարո՞ղ ենք գալ այդ հույսով. բնակարանը ապահով պիտի լինի, որովհետև ներկայումս դա կենսական հարց է. կահավորված պիտի լինի՝ երեք անկողին, գոնե մի գրասեղան, մի-երկու պահարան, խոհանոց անհրաժեշտ պարագաներով, ափսե և այլն, և մանավանդ՝ օդային գազ, կերակուր եփելու գազ. կարծում եմ, որ ջուր և լույս (էլեկտրական) կունենա տան մեջ, և ինչքա՞ն ժամանակի համար ապահով է տունը. գոնե մինչև մի տարի, որ հանկարծ փողոց չհետեն մեզ: Ահա այսքան գործնական հարցեր:

Պիտի գրես նույնպես, թե ամառը ո՞ւր պիտի անցկաց-

ենս. հնարավոր չէ՞ արդյոք այդտեղ անցնել, առանց գյուղ գնալու, ավելորդ ծախսեր չանենք. այստեղ անկարելի է մնալը մնալ:

Եթե ասածդ բնակարանը հիմա չկա, կարո՞ղ ես մի 20 օրվա մեջ առնվազն 2 կահավորված սենյակով և մի խոհանոցով բնակարան գտնես, քո մոտերը, գինը 150—200 ֆրանկ: Իսկ եթե այդ միջոցում չես կարող, այն ժամանակ մենք այստեղ գյուղ գնանք, և մինչև սեպտեմբեր դու մեզ համար գլուխ դնելու տեղ գտնես:

Կարծեմ, ամեն բան ասացի. եթե բնակարանը կա, քո վիլլայի մեջ, ուրեմն կպատրաստվեմ և միչև ամսուս վերջը կգամ:

Երեխայի կրթությունը տանը պիտի հոգանք. այդ մասին միասին կխորհենք՝ քո փոքրերի, իմի մասին մի բան անելու:

Գոնե այս ձմեռ էլ անցկացնենք, գուցե մյուս տարի դրությունը պարզվի, ապա թե ոչ ներկայումս անմտություն է ընկնել այս ու այն կողմ. Կ. Պոլիս վտանգավոր է, իսկ Բուլղարիա — չի ժպտում, և վերջապես հեռու է, ճանապարհածախս և այլն:

Դու ի՞նչ ես մտադիր անել, մի՞թե ուզում ես հետանալ. լա՛վ մտածիր. Պոլիս բնավ խորհուրդ չեմ տա, ո՞վ գիտե, մի օր էլ սրիկա անգլիացիք թողնեն ու փախնեն, ի՞նչ անել հետո:

Հարցնում ես, թե վանքի տպարանի հետ մի բան հաջողացրի՞ր.— նույնիսկ փորձ չարի. հոտառությունս ավելի խելոք է... Այդ ճիզվիթները անվերջ գանգատվում են, թե աղքատ ենք, վնաս ունենք, և այլն, և այլն: Սիմ. Երեմյան կոչված բանաստեղծը դեռ մի օր մոտս ոտք չի դրել: Ուշ-ուշ եմ տեսնում դրանց և տեսնելիս էլ — խույս եմ տալիս: Մեկ-մեկ գնում եմ վանքը գրքեր նայում — այդքան. չարժե դրանց մասին երկարել, լավ ես ճանաչել. ես չէի ճանաչում:

Երկար եղավ նամակս. այդ հոգսն ու մտմտուքն էր պատճառը, որ օրեցօր հետաձգում էի նամակս. գնամ-չգնամ, գնամ-չգնամ...

Եթե մոտդ չեղավ, ապա ուզում եմ Հռոմ գնալ, բայց հույս չունիմ բնավ այնտեղ բնակարան գտնել, և չգիտեմ

Էլ ո՞ւմ գրեմ, որ այդ հոգսը հանձն առնի. դու չունի՞ս մեկը, որ հակառակ դեպքում, եթե Ֆլորանս չեղավ, այնտեղ պատսպարվենք...

Եթե ո՛չ քո մոտ, ո՛չ Հռոմ,— ապա ուղղակի չգիտեմ ո՞ւր երթամ. Վենետիկ կշտացա, ավելի սիրով գյուղ՝ դաշտե՛ր, ազա՛տ դաշտեր, քան այստեղի հոտած կանալները, հոտած հայր-սուրբերով, իսկ Ժըննե դառնալ—երբեք, սիրտս խառնում է. ուրիշ բան էր մնացած լինեինք:

Սպասում եմ նամակիդ:

Հարգանքի բարևներ տիկնոջդ, քեզ, երեխաներիդ իմ և տիկնոջս կողմից:

Մնամ քո՝ **Ավետիք Իսահակյան**

145. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1921, հուլիսի 1, Վենետիկ

Սիրելի Օհաննես.

Շտապում եմ մի քանի տող գրել, որ հանձնեմ գրաբերիս՝ ճ. Դիոնիսիոս վ. Կալատոզյանին, որ մեկնում է դեպի Թիֆլիզ:

Ես երեք ամիս է Վենետիկ եմ ապրում, իբրև էժան երկիր, և մանավանդ Ս. Ղազարի գրադարանից օգտվելու, և հենց որ հարմար եղավ՝ Կովկաս դառնալու:

Ինձ թվում է, որ այժմ Կովկասի վիճակը ավելի լավ պիտի լինի, քան անցյալ տարի, մանավանդ թշվառ Հայաստանի. գոնե հիմա դրությունը կայուն է, այլևս կռիվ չկա զանազան ցեղերի մեջ, և թվում է, թե՝ արտաքին վտանգը անցած է. ռուսական ուժի ներկայությունը կսանձե թշնամու ախորժակները:

Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ հավատացող, և ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել և պահել անկախությունը. Եվրոպան ո՛չ միայն չի օգնի մեզ, այլև թշնամի է և հրճվում է հայկական բնաջնջումով. սրան համոզված եմ

փաստերի վրա. ինձ համար Անգլիան և Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այս ավազակներից, և մոտենալ Ռուսաստանին, ինչ ձևի տակ էլ որ նա ներկայանա. հայկական առածը այնքան ճիշտ է՝ լավ է փորձած սատանան, քան անփորձ քահանան որքան ռուսական առածը՝ «Старый друг лучше новых двух». Դու լավ ես հասկանում, թե ես ի՛նչ եմ ասում: Ըստ իս, Հայաստանը և հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան է:

Մնում է հիմա, որ ռուսների և մեր միջև ծագած թյուրիմացությունները հարթել, և հայ ժողովրդի ապագան ապահովելու համար ընդլայնել նրա երկրի սահմանները, և ապա լծվել կուլտուրական աշխատանքի. ես սպասում եմ այդ ժամին. ես զենքի, կռվի մարդ չեմ, և ոչ էլ ջանել եմ դրա համար, ուստի խնդրում եմ, ինձ հայտնես, եթե հարմար ժամանակ է, կանչի՛ր, ես կգամ, կվերադառնամ, իսկ եթե դեռ կռիվ, ատելություն, չարություն կա, ես չեմ վերադառնա:

Ջերմ համբույրներով ու կարոտներով քեզ, ընտանիքիդ և բոլոր մեր լավ բարեկամներին ու ընկերներին,

քո՝ **Ավետիք**

Հասցես՝ Ս. Ղազարի վանքը:

146. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

<1921>, նոյեմբերի 3, Վենետիկ

Վահան ջան.

Մեծ շնորհակալությամբ ստացա խնդրածս գրքերը և վերջերս էլ նամակդ:

Կխնդրեի, որ ավելի հաճախ գրես Բեռլինի մեր տղայոց մասին. գիտես, որ ամենից շատ սրտի կապեր ձեր շրջանի հետ ունեմ:

Ես այստեղ բոլորովին մենակ եմ, այդ պատճառով կարողանում եմ մի քիչ պարապել, թեև մեր ժողովրդի սար-

սափելի ճակատագիրը թուլացնում է էներգիաս և հաճախ հուսահատեցնում, ի՞նչ ասել այդ մասին. մի խոսք միայն, դաշնակիցները ավելի լի՛րբ, ավելի սրիկա՛ և գազա՛ն դուրս եկան: Անեծք գերմանացուն ու օրհնանք բոլշևիկին:

Ես հայհոյանք չեմ գտնում, որ չթափեմ աշխարհի գլխին, միայն հայհոյանք, ուրիշ ոչինչ:

Իմ մասին բան չունեմ գրելու. սխալվել եմ, որ այստեղ եմ եկել. տեղս Բեռլինն էր, բայց եղավ. միառժամ էլ մնանք, տեսնենք ի՞նչ կլինի, գուցե Թիֆլիզ դառնանք. ասում են՝ լավ է հիմա, ապրել կարելի է:

Գրի՛ր ձեր բոլորիդ մասին. ինչպե՞ս եք բարոյապես, մարմնապես և տնտեսապես:

Ասում են անթիվ հայեր կան՝ Կովկասից, Ռուսիայից, և լավ միջավայր է ստեղծված. անվերջ ռուս ներկայացումներ, բալետ. ես այնքան զուրկ եմ մնացել, որ երևակայի՛ր, սկսում եմ երազել:

Այս տարի ուզում էին Ամերիկայում «Ուստա Կարոս» տպել, չեղավ. գտան, որ շատ մեծ է, սուղ կնստի, մնաց մյուս տարի. ողջ մնանք — կտեսնենք:

Ուղարկածդ գրքերից մի քանիսը երկրորդ անգամն էիր ուղարկել, որ ես մի 3 ամիս առաջ ետ ճամփեցի, երևի ստացած կլինես, եթե չես ստացել, ուրեմն մի հիմարություն էլ եմ գործել՝ հազարներով գործած հիմարություններիս վրա: Կուզենայի իմանալ:

Լիպարիտի քեֆը ո՞նց է, պառավացե՞լ է, թե՞ լավ է դեռ. Հայկը ի՞նչ է անում. քննություն տվե՞ց, թե՞ ոչ. Աշոտը կարողացա՞վ արդյոք իրեն մի քիչ դրստել, թե ավելի առաջ գնաց:

Ջերմ բարևներ Գրենֆիլդին, Լիպարիտին, Աշոտին, Հայկին և բոլորին:

Համբույրներով քո՝ **Ավետիք**

A. Issahakian,
2266. Dorsoduro
Venezia.

147. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1921, նոյեմբերի 8, Վենետիկ

Սիրելի Օհաննես.

Լսեցի Պոլիս գալդ. հաջողություն եմ փափագում առաքելությանդ: Կխնդրեի մի-երկու տողով ինձ գրեիր, ինչ որ գիտես մեր և կնոջս ընտանիքի մասին. ո՞ղջ են, առո՞ղջ են, կո՞ւշտ են, ինչ են, ինչ չեն. շատ-շատ վաղուց է լուր չունինք: Նույնպես ձեր ընտանիքի, Դերեճիկի, Աղայանի և մեր Վերնատան անդամների մասին,— մի խոսքով գիտես, թե ի՞նչ եմ ասում:

Եվ Հայաստանի մասին միսիթարիչ լուրեր. աճավոր բաներ միշտ կարդում ենք և հալվում. ասում են, որ Քեմալը 60000 հայ կոտորեց, Շիրակ-Կարս-Կաղզվան ժողովուրդը ոչնչացուցած է...

Եվ որո՞նք են այժմյան Հայաստանի սահմանները, իրապես:

Իմ մասին մի երկու խոսք: Ես 7 ամիս է, որ Վենետիկ եմ. եկա հոս իբրև էժան երկիր, բայց նորից թանկ է. մտադիր եմ Ավստրիա, Վիեննա գնալ, ուր ապրուստը էժան է: Դարձել ենք թափառական, ուր գնալներս ու մնալներս չգիտենք...

Պոլսի «Ժողովուրդի ձայնը» թերթի հոկտեմբերի 20 թվի մեջ կարդացի, թե Հայաստանի կառավարությունը որոշել է մի շարք գրողների գոյության պայմանները ապահովել ցըմահ... ծաղրել է թվում տված ժողովրդի այս դրության մեջ այդպես բարբառելը:

Սակայն խնդրում եմ ինձ գրես, եթե ճիշտ է, ուրեմն շտապեն, խնդրեմ, ինձ օգնություն հասցնել. ապա թե ոչ, պետք չէ որ իմ անունը շահագործվի, ունայն տեղը, ինչպես եղել է միշտ. օրինակի համար, անցյալ տարիներն էլ նախկին կառավարությունը օգնում էր գրողներին, և ես ոչինչ չստացա, կամ «Գրողների ընկերությունը» քո նախագահության տակ, ոչինչ չհասցրեց ինձ, թեև կարող էր, և պարտական էր, բայց չուզեցին՝ դու կամ բոլորդ,— միևնույն է ինձ համար, ես բան չստացա: Այժմ եթե ինձ դրական չեն

օգնելու, շուտով պիտի իմանամ, որ հրապարակավ ներքեմ այդ ձրի բարությունը, որ իմ անունը չկապվի իրապես օգտագործողների հետ:

Եթե դու իրազեկ չես ինձ պատասխանելու, խնդրեմ, կառավարությանը հասցրու:

Նվարդը, աղջիկդ, գրել էր ինձ, որ մտադիր է Վենետիկ գալու՝ վանքի գրադարանում ուսումնասիրություններ կատարելու. իմացած եղիր, որ դա անկարելի է. վանքը փակ է կանանց համար: Խորհուրդ կտայի Վիեննա գալ, թե՛ գերմաներեն կսովորի, և թե՛ իմ միջոցով կկարողանա վանքից գրքեր ստանալ և մանավանդ կամ մեզ մոտ կապրի, կամ վերջապես աչքս վրան կլինի: Եվ ապրուստը ձրի է*:

Հարգանքի բարևներ պ. Եր. Թաղիանոսյանին. սիրո և կարոտի բարևներ և համբույրներ իմ ու Սոֆիկի կողմից:

Քո՝ **Ավետիք**

Հասցես՝
A. Issahakian,
Collegio Armeno „Moorat-Raphael",
Venise.

148. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1921, դեկտեմբերի 26, Վենետիկ

Սիրելի՛ բարեկամ
պ. Արշակ Չոպանյան.

Վաղուց կուզեի Ձեզ մի երկուտող գրել, շնորհակալություն հայտնելու Ձեր այն ազնիվ նամակի համար, որ ուղարկել էիք ինձ Բեյրութից. այսօր ահա գրում եմ. կուզենայի գրքիցս մի օրինակ ուղարկել, բայց այստեղ մոտս չունիմ, (Ժընևն մնացին), ստանամ՝ անպատճառ կուղարկեմ:

Ես գարնանից սկսած Վենետիկ եմ տեղափոխված՝ թե՛ իբրև էժան երկիր, և թե՛ երեխայիս հայերեն սորվեցնելու, ես էլ մի քիչ օգտվեմ վանքի գրադարանից: Եվ վերջապես՝ հոգնեցի Զվիցերիայից, և ո՛ւր գնալ. գրեթե անհայրենիք դարձանք՝ շնորհիվ մեր միամիտ հավատքի և դաշնակից սրիկաների երեսից:

* Կամ ասում են, որ Եվրոպայի ամենաէժան քաղաքն է (Ավ. Իս.):

Ի՜նչ աճավոր դաս տվին ֆրանսիացիք մեզի. հանդիսավոր խոստումներից հետո, գիտակից և անգիտակ զոհաբերումներից հետո նորից քաշել հայությունը յաթաղանի տակ՝ դիվային, ճիվաղային բան է. ո՜ւր մնացին խոստումները.— մեր մարտիրոսացումով սրբագործեցին իրենց ավազակային դատը, և այժմ թքում են մեզ վրա:

Ի՜նչ է մնում մեզ,— եթե ոչ դարերով ատել այդ միջազգային պոռնիկին, և ուխտել վրեժխնդիր լինել, և վնասել... և մենք դեռ կարող ենք հարվածել նրան. Փոքր Ասիայում դեռ մենք կանք, և դեռ դեր ունինք...

Ըստ իս՝ «հայկական հարցը» մեռած է արդեն. գարշելի Եվրոպայից այլևս, և երբեք էլ, սպասելիք չկա, պիտի մեր ուժերի կարողացածի չափով արյունի վրեժ լուծել այդ բորենիներից, և ամփոփվել Ասիայում, հաշտվել դրացիների հետ, մտերմանալ բոլշևիզմին, և զարնել ամեն տեղ եվրոպացուն, թե՛ նրա վաճառականությանը, պրիստիժին, դպրոցներին, թե՛ մասնակցել հակաեվրոպական շարժումներին: Ուրիշ կերպ չի կարելի ապրել: Այլևս ոչ մի հավատ չունիմ մեր հարցի մասին, և բոլորովին անմիտ, վնասակար եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը, Ամերիկա կամ Պապին դիմումները. մամուլին,— այդ բոզերի ոհմակին,— դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը, և ազգերի լիգայի կեղծավորությունը. հայերիս համար կոզաքը ավելի իրական է, քան Վիլսոնը, Ջեյմս Բրայսը, և բոլորը...

Վերջացած է ամեն ինչ. խաբված ենք ապուշի պես, պարտված ենք չարաչար, նոր ուղիներ պիտի փնտրել...

Դուք ի՜նչ եք անում, սիրելի բարեկամ, ի՜նչ եք մտածում, ի՜նչ եք գրում, եթե երբեք սիրտ մնաց մի բան գրելու, աշխատելու:

Ջերմագին բարևներս Ձեզի, Շիրվանզադեին, Փանոս Թերլեմեզյանին...

Մնամ Ձեր անկեղծ բարեկամ՝

Ավետիք Իսահակյան

149. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

<1922> ապրիլի 6, Վենետիկ

Սիրելի Վահան.

Նամակդ ստացա, շնորհակալ եմ, ի՞նչ է պատահել խեղճ Լիպարիտին, ուշս ունեմ, որ անցողական է:

Լավ կանես, որ երբեմն-երբեմն գրես, նույնիսկ բաց քարտեր, որ իմանամ, թե ի՞նչ վիճակի մեջ եք:

Անցյալ օրերը քեզ 3 հատ «Աշնան ծաղիկներ» ղրկեցի, չնչին բան է, փոքրիկ. կան միջին մի քանի լավ բաներ, ձեր շրջանում կկարդաք, նվիրելու արժան բան չէր:

Սիրելի Վահան, ներփակ ուղարկում եմ 100 մարկ, խնդրում եմ հանձն առնես այս նեղությունը:

Մեր դոկտ. Լեպսիուսից գրքեր էի ուզել, փող էի ղրկել, ուղարկեց մարդը, բայց պարտք են 41, 40 մարկ, այստեղ մանր փող չկա, ուրեմն իմ կողմից հանձնիր նրան, կամ ավելի ճիշտը՝ Der Tempelverlag in Potsdam, Roonstrasse, 13: Մնացած 60 մարկի չափով կառնես հետևյալ գրքերից, բայց այնպես անես, որ ճամփու ծախս չունենաս, այսինքն բոլորը իմ փողովս հոգաս. ես գրում եմ մի քանի գրքերի անուն, չգիտենալով գրքերի գները. որը որ առաջին տեղն եմ դրել, սկզբից նրանք են կարևորները, մնացածները, երբ փողը կբավարարե.

(Reclam- Univ<ersal>Bibliothek-ից կան
Arnold, Leute Asiens
Byron, Ritte Harold.
Indische sprache
Talmud
Nirvana
Edda
Platon. Phaidros
Ollanta
Chinesische gedichte
Macculag
Gracian
Schelling
Emerson
Davids Badd.
Carlyle

Բոլորը լինում է 25 № հին հաշվով կարժեներ — 5 մարկ, հիմա, չգիտեմ. երևի ճամփու ծախսն էլ ավելի արժենա, քան գրքույկները:

Կխնդրեի մի ցուցակ էլ թե Reclam-ից, թե Insel-Verlag-ից և Otto Handel-ի և Megers volks bücher-ից.

Եթե ժամանակ չունես, հանձնիր մի ջահել ուսանողի:

Ամբողջ ժամանակս անցնում եմ պարապելով. ուրիշ ոչ մի մխիթարանք չունեմ, թե հայրենիքից եմ հեռո՛ւ, և հեռո՛ւ ընկերներից:

Համբույրներ և բարևներ բոլորիդ և քեզ.

Ծնորհավոր Զատիկներդ,
քո՝ **Ավետիք Իսահակյան**

150. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1922>, սեպտեմբերի 27, Հռոմ

Վիգո՛ւշ ջան,

Ինչ որ Հռոմում տեսա, քեզ համար դեռ բոլորովին հետաքրքիր չէին, բայց Նապոլի գնացի և Վեզուվը տեսա.— սա քեզ համար շատ հետաքրքրական էր. այնպես որ մյուս տարի քեզ պիտի տանեմ, որ տեսնիս:

Համբույրներով,
քո պապան

<Լուսանցքում Սոֆյա Իսահակյանի ձեռքով>
Շատ, շատ պաչիկներ իմ բալիկ ջանիս:
Քո՝ մամա:

151. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1923, փետրվարի 25, Վենետիկ

Մեծարգո պարոն Հ. Ավագյանց.

Մեծ շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը, որով ինձ պատիվ եք անում Ձեր պատվական «Կոչնակին» իմ մաս-

նակցությունը բերելու, սակայն ներկա օրերս շա՜տ զբաղված լինելով մի գրությամբ, որ կլանում է իմ ամբողջ ժամանակը, խոստանում եմ հենց որ ազատ ժամեր գտնեմ՝ ուղարկեմ մի-երկու բան:

Խնդրում եմ ընդունեք իմ հարգանքներս ու բարևներս:

Մնամ Ձերդ՝
Ավետիք Իսահակյանց

152. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1923, ապրիլի 26, Վենետիկ

Սիրելի հայրենակիցներ.

Վերջապես կարող եղա այս փոքր պատմվածքը ուղարկելու «Կոչնակի» համար. ներողություն, որ ուշ եղավ. չգիտեմ, սա էլ պիտի հավանի՞ք, թե ոչ: Ինչպես առաջին նամակիս մեջ գրեցի, շա՜տ զբաղված եմ մի մեծ վեպով, որ կլանում է բոլոր ժամանակս, մյուս կողմից էլ հոգիս այնքան տխուր է թե՛ մոտիկ բարեկամներիս մահով, թե՛ թուրքահայության վիճակով, որ ո՛չ մի եռանդ չի մնում աշխատելու, ստեղծելու, սակայն և այնպես ճիգ եմ գործ դնում աշխատելու,— և պատրաստ եմ աշխատելու:

Շատ տեղից նյութեր են ուզում. Ս. Հակոբյանի «Արեգը», Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը, Երևանի «Նորքը» և զանազան տարեգիրներ. մերժել դժվար է, իսկ մատակարարել ավելի դժվար, մանավանդ լավ, մշակված բաներ, և գրեթե պատրաստի գրություններ էլ չունիմ, սակայն պիտի ջանամ Ձեր թերթին կարողացածիս չափ աշխատակցել: Ներող կլինեք, եթե ավելին անկարող լինեմ:

Երբ մեծ վեպս ավարտեմ, շա՜տ ժամանակ կունենամ: Ընդունեցեք, խնդրեմ, ջերմ բարևներս ու հարգանքներս:

Ձերդ՝ Ավ. Իսահակյան

2266. Dorsoduro de marchi,
Venezia.

153. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1923, հուլիսի 3, Վենետիկ

Սիրելի պ. Հովհ. Ավագյան.

Շնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը, և «Կոչնակը». ուղարկում եմ այս փոքրիկ գրույցը (առասպել):

Այս երկու օրս մտադիր եմ Վիեննա (Ավստրիա) գնալ, տեսնել տեղական պայմանները, բնակարան գտնել, հոն տեղափոխվելու համար. Վենետիկը միջնադարյան քաղաք է, անձուկ իր գաղափարներով ու փողոցներով. խեղդվում եմ հոս. գրեթե նոր գիրք՝ ֆրանսերեն, գերմաներեն գոյություն չունի, և ապրուստն էլ Մուսոլինիի շնորհիվ օր-օրի վրա սղում է. հույս ունեմ, որ Վիեննայում ավելի լավ պիտի աշխատեմ, միջավայրը նպաստավոր է նոր ներշնչումների համար. ես առաջին անգամ հոն եմ ուսանել, ապա Գերմանիայում. քաղաքը լավ եմ ճանաչում:

«Կոչնակը» լավ է խմբագրվում, շա՛տ հետաքրքրական է, մանավանդ գրական բաժինը:

Ջերմ հարգանքներով մնամ Ձերդ՝

Ա.վ. Իսահակյան

Հ. գր.— Դեռ մի-երկու ամիս հոս ենք, մինչև վերջնականապես տեղափոխվելներս:

154. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1923, հոկտեմբերի 27, Վենետիկ

Սիրելի բարեկամ պ. Հ. Ավագյան.

Մի երեք շաբաթ առաջ ուղարկեցի Ձեզ մի-երկու փոքրիկ բաներ. հիմա էլ այս կտորը, որ գեշ չէ, իրական մի էջ է: Պետք է ջանամ ամեն ամսաթվի մեջ պատվական հնօրյա «Կոչնակի»՝ մի բան ունենալ: «Կոչնակը» ազնիվ թերթ է, սիրում եմ նրա վիճաբանության կիրթ ձևերը: Էականը իրար հասկանալու մեջ է, և դժվարին բանը:

Հոս մի լավ երիտասարդ կա. Խորեն Գաբիկյան, որ Պոլիս ուսուցիչ էր, հիմա Մուրատ Ռաֆայելյանի մեջ դասատու է մի-երկու դասերի. զարգացած տղա է, համալսարանավարտ, մի երկու անգամ երևացել է «Ժողովրդի ձայնի» մեջ, գիտական-պատմական-մանկավարժական հոդվածներով. ինքս դիմեցի նրան, որ աջակցե Ձեր թերթին, որովհետև ոամկավարական է: Կխնդրեի, որ տեղ տայիք նրան և **վճարեիք**, որովհետև միջոցները սուղ են, դասերի վարձը չի բավում. համեստ, խեղճ տղա է. երևի Ձեզնից պատասխան առնելուց առաջ մի բան կուղարկեմ նրանից: Հոս է և երիտասարդ բանաստեղծ Նշան Պեշիկթաշլյան՝ Ձեր աշխատակիցը, նույնպես խեղճ վիճակի մեջ է:

Շնորհակալությամբ ստացա մի քանի օր առաջ 10 դոլարի չեքը:

Ջրտագին բարևներով,
մնամ Ձեր՝
Ավետիք Իսահակյան

155. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1923, դեկտեմբ<երի> 29, Վենետիկ

Սիրելի եղբայր
Ա. Չոպանյան.

Մի շաբաթ առաջ անչափ ուրախությունը ունեցա՝ ստանալով Ձեր նամակը և Ձեր թանկագին նվերները: Ժամանակին վանքում տեսել էի Roseraie և հիացել ու հպարտացել. թերևս ավելորդ մի խոսք ասած պիտի լինեմ արտահայտելու համար զգացածս. ինձնից շա՜տ կարող մարդիկ ասին իրենց ծանրակշիռ գնահատական խոսքը, սակայն նորից պիտի ասեմ, Roseraie մի գանձարան է, մի դյութական պարտեզ մեր փառքի, մեր լույսերի, մեր հանճարի. թերթում եմ, նայում եմ աքանչելի նկարները, որ կարծես համադրումը լինին հին և նորագույն արվեստների. կարդում

եմ հոգուս ու վշտիս մտերիմ հազարամյա սրբագործված էջերը և ասում են ինձ. ահա՛ մի ժողովուրդ՝ մեծ իր հանճարով, երազով ու ողբերգությամբ...

Եվ Ձեր դերը, սիրելի մեծանուն եղբայր, հսկայական է մեր մեջ, ու անսպառ է Ձեր հայրենասիրությունը. Ձեր ևվիրվումը մեր ազգին, իսկ Ձեր վարձը գրեթե ոչինչ, քաղքենի մտքով, բայց անմոռանալի է ու պիտի մնա անմոռանալի Ձեր անունը:

Ես պատիվ եմ ունեցել միշտ Ձեր անկեղծ գնահատողն ու հիացողը լինելու ավելի քան 25 տարվա ընթացքին, երբ «Անահիտը» տակավին չէիք հրատարակել, երբ 1897 թ. ծանոթացա «Արշալույսի ձայների» հետ, և տարեցտարի աճեց իմ սերն ու հարգանքը հանդեպ Ձեր անունին ու գործին:

Նամակս ուշացրի, որպեսզի կարողանայի կարդալ «Տղու հոգիներ» գրքույկդ:

Հայտնի է Ձեզ, որ գրականության մեջ երկու դժվարակոխ մարզեր կան. մեկը երեխաների հոգեբանությունն է, մյուսը կենդանիներինը, և սակայն Ձեր գծած պատկերներից «Առաջին նամակը» և «Ես ինչ ընեմ հոգիով»՝ շա՜տ հաջողված են. գեղեցիկ է «Անուրջը» նույնպես. հուզիչ է «Աստված պապան». լավ է «Հեռավոր քույրիկը», իսկ մնացածները՝ իմ կարծիքով, թույլ են:

Արդեն «Ես ինչ ընեմ հոգիովը» վաղուց կարդացել էի դասագրքերի մեջ և շա՜տ սիրել էի: Նա իմ հին բարեկամս է:

Գրել էիք, թե փափագ ունիք Վենետիկ գալու. անսահման ուրախ կլինիմ Ձեզ այստեղ տեսնելու. շա՜տ մենակ եմ հոս և լավ օրեր կանցնենք. նույնիսկ կարող ենք մեր հավերժ սիրելի Հովի. Թումանյանի քեֆերն ունենալ այս օտար երկրում, բայց մեր հայ հարկի տակ: Ս. Ղազարի վարդապետները ևս սրտագին սպասում են Ձեզ. լավ կլինի, որ գարնան սկիզբները գաք. շա՜տ գեղեցիկ է Վենետիկ այդ ատեն:

Ձեր գալը ապարդյուն չի անցնի. շա՜տ հին մարգարիտներ կգտնեք դարձյալ հին փոշիների միջից:

Շնորհավորում եմ Ձեր Նոր Տարին, սրտանց փափագելով Ձեզ առողջություն, երկար կյանք, եռանդ և ուրախություն:

Մնամ Ձեր անձնվեր՝
Ավետիք Իսահակյան

156. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, հունվարի 5, Վենետիկ

Սիրելի պարոն Հովհ. Ավագյան.

Մեծ ուրախությամբ կարդացի Ձեր նամակը. շնորհակալություն՝ «Լիլիթի» Ձեր անկեղծ գնահատության համար:

Նամակիս հետ ուղարկում եմ այս փոքրիկ գրությունը՝ «Մի անմեղ հայացք»՝ «Կոչնակի» համար. ցավում եմ, որ սրտիս ուզածի պես դեռ չեմ կարողացել նյութեր տալ «Կոչնակին». գրեթե մի տարի կա, զբաղված եմ մի վեպի (մեծ վեպ է) գրությամբ ու մշակումով, և ազատ ժամեր չեն մնում ուրիշ բաներ գրելու, թեև շա՜տ բան ունեմ դեռ անելու, շա՜տ բան անմշակ գրել-թողել եմ, այնպես որ, երբ վեպս վերջացնեմ, հանկարծ մենկեն շատ բան պիտի լույս ընծայեմ:

Հանձնեցի պ. Ն. Պեշիկթաշլյանին Ձեր նամակը. նա հիմա ավելի լավ դրության մեջ է, Մուրատ Ռափայելյան դպրոցում հսկիչի պաշտոն ստացավ. հացն ու սեղյակը ապահով է:

Շնորհավորում եմ Ձեր Նոր տարին սրտագին բարեմաղթություններով:

Մնամ Ձեր անկեղծ՝

Ավետիք Իսահակյան

157. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, մարտի 9, Վենետիկ

Սիրելի պարոն Հովհ. Ավագյան.

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և 20 դոլլարը:

Արդարև, թեպետ շա՜տ զբաղված եմ, որովհետև վեպս կլանում է բոլոր ժամերս և ուշադրությունս, սակայն պիտի չմոռանամ «Կոչնակը», որ գնահատելի թերթ է և նրա մեջ հյուրասիրվելը՝ միշտ պատվաբեր:

Ծտապում եմ, գոնե մինչև ամառային տաքերը, վեպիս առաջին հատորը (երկու հատոր է լինելու) վերջացնեմ, մյուսը՝ աշնանը:

Արդեն դադարել եմ ուրիշ թերթերի մասնակցել՝ բացի «Կոչնակից» և «Հայրենիքից»: Հույս ունեմ շուտով մի բան հասցնել:

Ջերմ հարգանքներով ու բարևներով,
մնամ Ձեր անձնվեր՝

Ավ. Իսահակյանց

158. ԳԵՈՐԳ ԿԱՌԱՎԱՐԵՆՑԻՆ

1924, մարտի 22, Վենետիկ

Սիրելի պարոն Գեորգ Կառավարենց.

Մեծ շնորհակալությամբ ստացա Ձեր գրքույկը՝ «Գերեզմանի ծաղիկներ» որ պատվել էիք ինձ՝ ուղարկելով այն:

Ուշադիր՝ մի-երկու անգամ կարդացի, և թույլ եմ տալիս ինձ իմ համեստ կարծիքը ասելու:

Ձեր տեքնիկը, արվեստը, ձևը շա՜տ լավ է, նուրբ է ու նոր. հանգերը ավելի քան ճոխ են, և այս առավելությունը հաճախ թերություն է:

Պոեզիաներիդ մեջ կան հայտ բերած քնքուշ, խորունկ ապրումներ, ո՜չ այս—աշխարհից:

Եվ կուզենայի, որ ավելի մտերիմ զգայիք Ձեզ կյանքին և նրա գեղեցկություններին, արևին ու լույսին, աղջկան և սիրո լիրիկ վշտերին:

Ուրիշ անգամներ Պոլսի թերթերի մեջ հանդիպել եմ Ձեր անունով՝ ուրիշ ծաղիկներ, ավելի բուրիչ, ինչպես սյ. Թեոդիկի տարեցույցի մեջ եղածը.—

Վա՜յ մեզ կերտող, վա՜յ մեզ կոտրող բրուտին:

Թո՛ղ բանաստեղծության Աստվածը Ձեզ ավելի ներշնչումներ տա: Դուք դեռ երիտասարդ եք, և կյանքը Ձեր առջև — չհնձված արտ:

Լավագույն բարևներով,
մնամ Ձեր՝
Ավետիք Իսահակյան

159. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, օգոստոսի 30, Վենետիկ

Սիրելի սյ. Հ. Ավագյան.

Խնդրում եմ շա՜տ, ներողամիտ լինեք այսքան ժամանակվա լռությանս համար:

Վերջին ամիսները այնքան տաք էին, որ անկարելի էր գրեթե զբաղվիլ. գրություններս երեսի վրա էի ձգել. հիմա զովացավ, սկսել եմ զբաղմունքներս:

Գարնանը մտադիր եմ Հայաստան վերադառնալ. կառավարությունը (մեր) քանիցս հրավիրել է ինձ, վերջապես դրական խոսք տվի. հիմա ուզում եմ մինչև գարուն ձեռքիս տակ եղած մեծ գրություններս ավարտել, ապա մեկնել, գիտենալով, որ Հայաստանում երկար ժամանակ պիտի չկարողանամ լուրջ զբաղվիլ. օրերս պիտի անցնին այնտեղ բարեկամական և ընկերական, Կովկասին հատուկ, խնջույքների մեջ, թափառումների մեջ, և վերջապես, նոր նյութեր պիտի հավաքեմ նոր բաներ գրելու համար:

Ձեռքիս տակ երկու մեծ վեպեր ունեմ, որ փոխնեփոխ մշակում եմ. հույս ունեմ մինչև գարուն ավարտելու:

«Կոչնակի» համար ուղարկում եմ այս երկու կտոր բաները. սրանից հետո կաշխատեմ ամիսը մի բան հասցնել: Աշնան և ձմեռվա ամիսները, առհասարակ, լավ եմ աշխատում:

Վշտով կարդացի ողբացյալ պրոֆ. Անանիկյանի մահը. շա՜տ ափսոս. գիտուն մարդ էր...

«Կոչնակը» շարունակում է մնալ իր բարձրության վրա. փափագելի է, որ միշտ տեւե և միշտ օգտակար հանդիսանա: Նրա դիրքը դեպի Սովետը պիտի լինի, իմ կարծիքով, գովաբանող կամ խարազանող:

Մնամ ջերմ բարևներով և հարգանքներով,

Ձերդ անձնվեր՝
Ավետիք Իսահակյան

160. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, սեպտեմբերի 28, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս ջան.

Ծնորհակալությամբ ստացել եմ բոլոր նամակներդ՝ Հեռլինից, Մոսկվայից և քաղցր Երևանից: Երեկ էլ ստացա ուղարկածդ փողը՝ 103 լիր, 70 սանտիմ:

Ուրախ եմ, համենայն դեպս, որ ստողջ հասել ես տուն. վնաս չունի կորուստդ, թեև ցավալի է:

Այսօր պատվիրեցի նկարներիցդ 25 հատ. կգնեմ ոզածներդ, բայց պիտի մտածել ուղարկելու մասին. փոստով վախենում եմ տեղ չհասնի. երևի Բեռլին կղրկեմ. տեսնենք դեռ:

Իտալական «Il Mondo» թերթը (Նեապոլի) գրել էր քո և նկարներիդ մասին. պահել եմ, ինչպես և իմ գրածը, որ վաղուց է եկել. նրանք էլ վախենում եմ ուղարկել նամակիս հետ. թող ուշ լինի, բայց տեղ հասնի: Այսքան քո գործերիդ մասին:

Երկու պատճառով մինչև այսօր չեմ գրել քեզ.

1) Մի 15 օրով գնացել էի Թրիեստի կողմերը թափառելու. հետաքրքիր վայրեր էին. գեղեցիկ բնություն, ծով, անտառ, լեռներ. տեսա Ակուլեայի նշանավոր տաճարը, բյուզանդական շենք. այդ հին քաղաքում է իշխել հայ զորավար Ներսեսը. այդ քաղաքը կործանել է Աթտիլան (Կարա-Բեկիրի մեծ հայրը). տեսա Միրամարի չքնաղ պալատը. վերջին

պատերազմի վայրերը, խրամները, և մի հսկա և վսեմ ու գեղեցիկ զինվորական գերեզման, ուր թաղված են 30.000 իտալական զինվորներ...

Իսկ ամենից հրաշալին էր Պոստումիայի (Ադելսբերգի) քարայրերը, ստալսկրիտ. սա երկրագնդի ամենամեծ այրն է, 28 կիլոմետր մեծությամբ, գրեթե Հայաստանի չափ վայր. միջից գետ է անցնում... Գեղեցիկ և զարհուրելի բան:

2) Վերադարձա տուն. սկսեց աջ բութս (ձեռքիս բթամատը) ցավել, այնպես որ չէի կարող բան գրել. չգիտեմ՝ րևմատի՞զմ էր, թե՞ բանի էի զարկել, բայց հոգիս հանեց. այս քանի օր է լավ է. կարող եմ գրել, բայց գրիչը չեմ կարող ամուր բռնել. տառերը փախչում են...

Շնորհակալություն, որ բարևներս տեղ ես հասցրել. շնորհակալություն Ա. Հովհաննիսյանի փոխ-բարևիդ:

Կարդացի մեծ ուրախությամբ Շիրակի ջրանցքի բացման մասին. մեծ գործ է. գրեթե առաջին անգամն է, որ կոմունիստական թերթերը այսպիսի հրճվանքով կարդացի: Ես հայ թերթերը կարդում եմ վրդովվելու, հայհոյելու համար. կարծեմ, սիրելիս, ազնիվ Մարտիրոսս, դու բավական ուսումնասիրեցիր քարաքտերս, որ անզուսպ է, ջղայնացած, անհավասար, և պիտի ներես, որովհետև վերջ ի վերջո հիվանդ մարդ եմ.— տեսնել հայկական աղետը, և առողջ մնալ՝ անկարելի է: Հա՛, ասացի, որ հայ թերթերը կարդում եմ ու կատաղում. դաշնակցական թերթերը կարդում եմ, դաշնակցականներին հայհոյում, իսկ ռամկավար-հնչակ թերթերը անպատիվ եմ համարում կարդալ:

Վերջերս կարդացի «Նոր ակոսի» մեջ Զորյանի հոդվածը՝ «Սկսնակ հանցավորները», սարսափելի էր...

Շա՜տ գեղեցիկ էր Թոթովենցի «Սեղբոսը», և հասկացա ո՛վ էր. իմ հին Պողոսը, Աբելյան:

Կ. Զարյանի հետ տեսնվում եմ. ինքը մոտեցավ. դեռ այստեղ է: Ի՞նչ գրեմ նրա մասին. դու ավելի լավ ես ճանաչում նրան: Այստեղ էր մի ամիս առաջ Բեռլինից՝ Սաշա Բեկզատյանը, հին բարեկամս. լավ տպավորություն թողեց վրաս. չափավոր էր, փորձված, և մանավանդ՝ հակառակ էր նոր ուղղագրությանը:

Իմ գալու մասին կգրեմ քեզ: Փիրումյանին դեռ չեմ գրել, բայց գրելու եմ:

Դու ի՞նչ ես անում. սկսեցի՞ր աշխատանքներդ: Ուրիշ անգամ երկար կգրեմ: Շատ բարևներ կնոջդ, երեխաներիդ, և ընկերներ ու բարեկամներիս: Բարևներ կնոջիցս, հարսիցս և մեր ընդհանուր ծանոթներից քեզ: Վիգենը դեռ գյուղումն է:

Կարոտով համբուրում եմ քեզ:
Մնամ միշտ քո անձնվեր՝

Ավետիք Իսահակյան

161. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924. հոկտեմբերի 8, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Մի նամակ գրել եմ Երևան՝ քեզ. երևի ստացար արդեն: Դրամն ստացել եմ: Պատվիրել եմ 24 հատ նկարներդ, և առել եմ 4 հատ ալբոմներ. ուղարկելու մասին կմտածեմ: Մի երկու օր առաջ լսեցինք և տեսանք, որ նկարդ՝ «Երևանը», ծախվել է. թե ի՞նչ գնով՝ չկարողացա իմանալ. մարդ չկար, որ հարցնեի: Երևի քեզ հայտնել են արդեն:

Վերջապես պարզվեցավ, որ Խաչ. Աբովյանի արձանը ողջ է. կոտրված չէ (փշրված), և պիտի Երևան ուղարկվի: Հիշո՞ւմ ես, որ ես քեզ ասում էի, թե ականատես էի նրա գնելու պատմությանը: Անցյալ անգամ մոռացած էի ուղարկելու Չոբանյանի և Քոչարյանի հասցեները. հիմա հիշեցի. A Tchobanian, 9 Rue say E. Kotcharian, 6 bis Rue de l'Ecole Polytechnique, Paris, v.

Ուրախությամբ կարդացի թերթերի մեջ Ղարաբաղի գյուղերի ցուցակը, մոտ 200 հատ. Շուշի քաղաքն էլ մեջը. շա՜տ կխնդրեի մեր երկրի կամ ողջ Կովկասի քարտեզը ուղարկեիր. մանավանդ Հայաստանի և Ղարաբաղի. եթե տպածը չկա, մի թղթի վրա քո ձեռքով նշանակիր. պետք չէ, որ մանրամասն լինի. միայն սահմանները, կմախքը:

Մենք կանք, ինչպես որ թողիր. մի օր ուրախ, չորս օր տխուր, ձանձրացած: Անպայման ինձ ձգելու եմ Երևան: Պատրաստվում եմ վիճել Թոթովենցի «Սեղբուսի» հետ: Բարևներ մեր բոլորից քեզ և տ. Լյուսիին:

Համբույրներ, քո՝ **Ավետիք**

162. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, նոյեմբերի 12, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Երկու նամակ եմ գրել քեզ, որով հայտնել եմ քեզնից ստացած նամակները և փողը: Գնումները կատարել էի, և ուղարկելու մասին հարցուփորձից պարզվեց, որ ավելի ապահով ճամփան է տեղ հասցնելու համար մարդու միջոցով ուղարկել (թեև դու էլ էիր մարդ և տղամարդ միևնույն ժամանակ, բայց կորցրիր). ուստի ես էլ որոշեցի ուղարկել մարդու միջոցով (այս անգամ կնիկմարդու միջոցով, մտածելով, որ սրանք ավելի աչքաբաց են նյութեղենի նկատմամբ, և ավելի գործնական). ուղարկեցի տիկին Մարտիրոսյանի հետ, Շիրակի ջրանցքի ինժեների կնոջ, ճանապարհում ես նրան: 24 պատճեն է նկարներիդ, 2 կատալոգ, և 4 ալբոմ Վենետիկի. 2 քննադատական թերթիկներ, իմը և մի ուրիշինը, և 2 հատ մեր լուսանկարներից: Հույս ունեմ, որ կհասնին. եթե չհասան, այս անգամ նորից կառնեմ, և ես կբերեմ հետս:

Իսկ ես մտածում եմ գարնանը գալ. մենակ. կինս չի ուզում տեղից շարժվել. կանանց խոսք չի կարելի հասկացնել. նրանց տրամաբանություն չի տրված, այլ ինստինկտ, ինտուիտիոն, որ խելքից ավելի խոլոք է:

Մոռացա ասել, որ տիկ. Մարտիրոսյանը 4-5 օր է, որ մեկնել է, Մոսկվայի վրայով:

Աշունը գալուց ի վեր սկսել եմ պարապել. ամառը անկարելի էր բան շինել:

Մի երկու օր առաջ վարդապետներից լսեցի, թե հայկական համալսարանի լեկտոր Կոստան Զարյանը կոնսուլ է

ընդունակվելու խորհրդային պետությունների կողմից Վեհետիկ կամ մի այլ տեղ, չգիտեմ: Դիմում է արել, միջնորդներ կան... Չգիտեմ, դա պատի՞վ է հայոց համալսարանին և նրա կոլեգիային, որ իր դասախոսը հյուպատոս է դառնում, սակայն, Զարյանի համար դա աստիճանի «անկում է» այն պատճառով, որ նա 1919 թվին ձգտում էր Հռոմի դեսպան դառնալ, երբ չհաջողվեց, գժտվեց այն ժամանակվա իշխանների հետ. թեև մի կողմից՝ այն դեսպանությունը հավասար է ներկա կոնսուլությանը... Ես տեսնվում եմ հետը, բայց ինձ բան չի ասել, և բնական է. ես «գաղափարի ընկեր» չեմ հետը, ինչպես և «գրչի ընկեր» չեմ:

Մարտիրոս ջան, մի պատիկ խնդիր ունեմ. եղբորս տղան՝ Աբաս Իսահակյան, ուսանում է համալսարանում, նրան նամակ եմ գրել, բայց պատասխան չունեմ. բարի եղիր Վահան Թոթովենցի միջոցով իմանալ, թե նա այս տարի ևս ուսանում է, թե ոչ, և եթե Երևան է, տեսնվիր նրան, խրատուսիր, տնտեսականի մասին հարցնիր և ինձ գրիր, և իրան էլ ասիր, որ գրեր: Հավատացած եմ, որ կկատարես:

Ուրիշ ի՞նչ գրեմ. տրամադրությունս գեշ չէ, շա՜տ ուրախ եմ, որ Ֆրանսիան ճանաչեց սովիետները. Ռուսիան կուժեղանա և թշնամիների աչքը կհանե:

Շա՜տ ուրախ եմ նույնպես, որ հայերից մասնակցող չէղավ վրացիների ավանտյուրիային. ռուսական մի կարմիր գինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է:

Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ). միայն մի բան է գեշ — ուղղագրությունը. աշխատեցեք փոխել:

Կարդացի Ս. Զորյանի «Ցանկապատից» մի երկու պատմվածք. լավ բաներ են. իրական, ճշմարիտ: Ափսո՜ս լրիվ ձեռքս չընկավ Թոթովենցի Սեղբոսը. ինչո՞ւ վանքը չուղարկեցին. շատ կխնդրեի իմ անունով ուղարկեիք վանքին հանձնելու համար (որպեսզի առաջ ես կարդամ) հետևյալ գրքերը. Դերենիկի «Քաջ Նազարը», 2) «Սեղբոսը», 3) Զոր-

յանի «Տխուր մարդիկ», 4) «Կարմիր արև» դասագրքերը, և այլն. ասա ուր որ տեղն է, որ ուղարկեն:

Վենետիկը հիմա դատարկվեցավ. էն «լավերը», որոնց «ախն» էի քաշում քեզ հետ միասին (կինդ չիմանա՞) էլ չկան. մեկ-մեկ պատահում են ուշացած ծաղիկների պես, բայց փաթաթված են հաստ-հաստ տերևներով (պալտոներով) և էլ չեն ցույց տալիս իրենց նկարչական (մի բան պլաստիկ, դեկորատիվ, էքսպրեսիոնիվ-իմպրեսիոնիվ) հրապույրները: Պիտի երևակայությամբ լրացնես՝ հիմք ունենալով ծովափի ապրումները:

Գու ո՞նց ես, կինդ, երեխաներդ, բարեկամներդ... Գրիր մանրամասն: Այստեղ էր նկարիչ Կոնչիալովսկին. լավ տպավորություն թողեց, իբրև մարդ: Քո մասին խոսում էր սիրով:

Տերնովեցը մոտ օրերս գոցելու է ցուցահանդեսը և Մոսկվա գնալու:

Վարդապետ-եպիսկոպոսի (այդտեղ) հանած աղմուկներն ու բրոշյուրները կարդացի և զզվեցի, ինչո՞ւ. նախ, որ դրանք սրիկա մարդիկ, գարշելի, ավազակ են և երկրորդ՝ փորի ցավեր ունին, անկեղծ չեն: Իսկ գալով «կենդանի եկեղեցի» շինելուն, անմիտ բան է.

Բարևում են կինս և Վիգենը, Նշոջդ, երեխաներիդ և քեզ: Իսկ ես համբուրում եմ բոլորիդ:

Միշտ քո՝ **Ավետիք**

163. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1924, դեկտեմբերի 24, Վենետիկ

Սիրելի եղբայր.

Սրտագին ցավում եմ, որ հակառակ փափագիս, անկարող եղա անձնովս ներկա գտնվելու Ձեր հոբելյանին և Ձեզ գնահատողների հետ միասին բաժակ բարձրացնելու Ձեր թանկագին կյանքի համար:

Եվ հիմա հեռվից, հոգվով մասնակից եմ Ձեր տոնին, և համատրոփ սրտով բոլորի սրտերի հետ:

Սիրելի եղբայր, այնքա՜ն մեծ է Ձեր գործը, այնքա՜ն ակնհայտնի է, և հաներության վաղուց բաժին Ձեր անունը, որ ավելորդ եմ զգում իմ կողմից և նույնիսկ վիրավորիչ Ձեզ համար էլ՝ հազարների հետ կրկնելու այն անգին ծառայությունները, որ բերել եք դժվարին, տքնաջան պայքարների միջից՝ հայ գրի փառքի և հայ մշակույթի կատարյալ ձևավորման համար:

Երկա՜ր, և՛ հերոսական, և՛ գեղեցիկ է եղել Ձեր անցած ուղին, և արդար են Ձեր վաստակները, և լիուլի արժանի եք հայրենիքի երախտագիտությանը:

Մաղթում եմ բոլոր հոգվովս Ձեզ, սիրելի եղբայր, երկար կյանք, առողջություն, ուրախություն, և նորից Տոն Ձեր անունին՝ հայրենիքի ավելի նպաստավոր մի ժամանակաշրջանում:

Սեղմում եմ խորին հարգանքներով Ձեր ձեռքը.
եղբայրական համբույրներով,
միշտ Ձեր անձնվեր՝

Ավետիք Իսահակյան

Շա՜տ սիրելի և շա՜տ հարգելի
Արշակ Չոպանյանին,
Մեծանուն հոբելյարին

164. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1925, հունվարի 29, Վենետիկ

Սիրելի եղբայր Չոպանյան.

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը, և մեծ ուրախությամբ թերթերի մեջ կարդացի Ձեր պսակումը:

Երբ մի ժողովուրդ գիտակցաբար գնահատում է իր վաստակավորներին, նշան է, որ նա ապագա ունի և կարելիություններ պայքարի ու հաղթանակի:

Շա՜տ գեղեցիկ է Ձեր մտադրությունը Վենետիկ գալու. և՛ կհանգստանաք, և՛ նյութեր կհավաքեք Ս. Ղազարի «գանձարանիներից», որոնք մեր հայրերի համար չոթն կնիքով կողպված գանձեր են այնուս...

Ինձ համար առավել ևս շա՜տ փափագելի է Ձեր ներկայությունը, որովհետև կարոտ եմ մարդու, և մանավանդ Ձեր նման բարձր մշակույթ և սիրտ ունեցող մարդու:

Կգրեք, որ ապրիլին եք ուզում գալ, սակայն, մայիսը այստեղ հրաշալիք է. արդյո՞ք լավ չի լինի, որ եթե Նափոլի-Հռոմ-Ֆլորենցիա չեք եղած, գոնե մի ամսով,— ապրիլ ամիսը,— այցելեիք այդ հոյակապ և զարմանալի քաղաքները, որոնց չտեսնել և մեռնել, արդարև, մեծ կորուստ է: Ի սեր աստծու, գնացեք, տեսեք, և իմ աչքերս թո՛ղ Ձեզ հետ լինեն՝ նորից վայելելու այդ հրաշքները:

Ձեր գալուց առաջ բարի կլինեիք ինձ հայտնելու օրառաջ:

Հայտնի է Ձեզ, որ այս տարի լրանում է ճ. Արսեն Ղազիկյանի քահանայական և գրական գործի հոբելյանը. ես մի բան գրել եմ Ամերիկա<յի> «Հայրենիք» ամսագրի մեջ. այնտեղ նա հայրենակիցներ ունի, թերևս օգնեն դրամապես. վարդապետը իր ընտանիքի համար դժվար կացության մեջ է. վանքը, որ հարուստ է, չի կարող և չի կամենում օգնել. իրար նախանձում են վարդապետները և իրար վնասում:

Կխնդրեի Ձեզ,— ինքը արդեն, վարդապետը, գրած է Ձեզ իր վիճակի մասին,— խորհեիք, թե ի՛նչ կարելի էր անել Փարիզում. անշուշտ, Ձեզ անհարմար է հիմա զբաղվել այդ հարցով. միայն ուրիշին թելադրեիք, մի ուժեղ, եռանդուն բարեկամի,— մի խմբակ կազմել՝ հանձնախումբ և այլն, հոգային նրա հոբելյանով, մի հանգանակություն...

Շա՜տ դժվար է այդպիսի մի հարց հարուցանել. իսկույն պիտի պատասխանեն. վարդապետ մարդ, կին-երեխա չունեցող, հարուստ վանքի միաբան... այնուս ի՞նչ կուզե, աստծուց կրա՞կ... երբ ուրիշները չոր հաց չունին... Բայց պիտի հասկացնել, թե... հետևից մայր և քույր կա, քրոջ զավակներ, որոնց ինքն է խնամում:

Ես, մասնավորապես, հույսեր չեմ տածում. եթե մի բան անում եմ, ավելի շուտ թե՛ իբրև փորձ, և՛ թե խղճիս անդորրի համար:

Նամակս երկար եղավ, և ձանձրալի:

Սիրելի՛ եղբայր, անշուշտ հասկացաք միտքս. կարելի՞ է արդյոք մի բան անել... Կխնդրեի շատ՝ գետինը շոշափեիք: Ներողությո՛ւն, որ Ձեզ գլխացավանք եմ պատճառում:

Սրտագին ողջույններով ու համբույրներով,

Ձեր աննման՝
Ավ. Իսահակյան

165. ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

1925, փետրվարի 2, Վենետիկ

Սիրելի Համաստեղ.

Վաղուց է ստացել էի Ձեր գեղեցիկ գործը՝ «Գյուղը»: Շնորհակալություններս այդ պատվի համար: Ժամանակին գրել էի ընկ. Դարբինյանին ստանալս:

Երբ Ձեր պատկերները լույս էին տեսնում «Հայրենիքի» մեջ, կինս կարդաց և ասաց, որ շա՛տ շնորհքով բաներ ունի Համաստեղը: Ես «Հայրենիքի» բոլոր նյութերը չեմ կարող հասցնել կարդալու, քանի որ շա՛տ բան կա կարդալու — ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն թերթեր...

Առաջին պատմվածքը, որ կարդացի «Չալոն» էր: Ոճը պատկերավոր ու իրական, պատմվածքը հանդարտ ու սրտագին, շատ հավանեցի, բայց ընդհանուր առումով՝ դժգոհ մնացի, որովհետև անասունների հոգեբանությամբ զբաղվողներին այնքան չեմ հավատում. այդ հոգեբանության ըստուգումի միակ կրիտերիումը ինքը մարդն է. ուրիշ ոչ մի միջոց չկա. այնպես որ կենդանիներին մենք մարդեղացնում ենք. հետևապես ավելի երևակայական, ենթադրական, քան իրական մարզի մեջ ենք: Հետո կարդացի «Վարդանը» և շա՛տ գնահատեցի Ձեր իրական, մեծ տաղանդը:

Այժմ գիրքը առջևս է. ներից կարդացի բոլորը. ոճը՝ հոյակապ է, անկեղծ, և ապրված՝ միջավայրը:

Սակայն կան, իմ կարծիքով, փոքրիկ թերություններ. երբեմն գործ եք ածում անպատշաճ նմանություններ ու դարձվածքներ: Օրինակ.

— Բեգասով հափշտակված. (անտեղի է այս՝ գյուղական միջավայրում էջ 28):

— Նիրվանայի հավիտենական... էջ 49.

— Դժվար թե հայ գյուղացին երգեր «թրալալա» («Փիլիկ աղբարը»):

Վարդանի բերանը, խորհրդածության պահերին, դնում եք իրեն մշակույթին անդաշն խոսքեր՝ «ֆոսֆորային», «հեթանոս»: Թեև դուք եք կարդում նրա մտքերը, բայց այդ ձևով չի դրված:

Եվ այսպիսի մանր-մունր բաներ:

Երբեմն էլ հեղինակը մատնում է իրեն թե՛ հումակրությամբ ու հակակրությամբ, և թե՛ խորհրդածություններ է անում, որ պետք չէ: Ամեն խորհրդածություն պիտի լինի հերոսների կողմից կամ հեղինակն է պատմում իր բառերով նրանց խոհերը: Մի-երկու անբնական թվացող բաներ.— Փիլիպ աղբոր հաղարկավորությանը ձիի մասնակցությունը:

— Միջոն, եթե 13 տարու էր, անկարելի էր, այդ տարիքին, այդքան ուժեղ զարթնումը սիրո բնազդին:

Հետո տեղին չավարտված, օրինակ.

«Աղավնիներ» սքանչելի պատմվածքը պիտի վերջանար Խաչիկի մահով, հոր լացի հետ:

Մյուսները՝ ծիրանի լափվիլը կատուից և այլն ավելորդ էին: Սա ինձ երևցող բացասական փոքրիկ գծերն էին, որ ես պարտք զգացի, իբրև ավագ գրչի եղբայր, Ձեզ ասելու, գիտնալով, որ գովեստից ավելի, նկատումները կօգնեն գրողին, մանավանդ թարմ գրողին: Եվ բացի այդ, որ դուք Ձեր գիրքը ինձ շնորհ բերելով՝ պետք է որ սպասեիք մի-երկու անկեղծ խոսքի: Իսկ դրական կողմերը Ձեր մեծ շնորհի՝ շա՛տ են ու անվիճելի: Ահա սրանք.—

Ճիշտ և հարուստ դիտողություններ.

Հզոր հիշողություն.

Իրական միանգամայն — ռեալիզմ:

Ո՛չ մի ճիգ, սեթևեթանք, և ձգտումն նոր, արտառոց երևնալու՝ մարդկանց զարմացնելու համար. խեղաթյուրումն բնական հոսուն լեզվի՝ մինչ օրս չասած ձևով ծամածռվելու:

Ջուսպ, ողջախոհ, համեստ, բնական մակդիրներ.

Կարճախոս, բնության նկարներ մի-երկու տողով, և այլն, և այլն:

Սրանք այնպիսի անգնահատելի հատկություններ են, որոնց շնորհով Դուք, աստված տա որ շա՛տ ապրիք, բարձրանալու եք շատ բարձր, դառնալու մեր գրի փառքերիցը:

Սիրում եմ Ձեզ, և Ձեր տաղանդը, շա՛տ սիրելի Համաստեղ:

Մնամ Ձերդ՝
Ավետիք Իսահակյան

166. ՎԱՀԵ ԳՈՅՈՒՄՃՅԱՆԻՆ

1925, ապրիլի 1, Վենետիկ

Սիրելի՛ Վահե.

Հայրիկիդ հետ 1900—1901 թվերին ուսանող էինք Ցյուրիխում: Ուզեցինք մի օր ձմերուկ գնել, սակայն ձմերուկի գերմաներեն անունը չէինք հիշում: Մտածելով գնում էինք, Հակոբ Աղասերն էլ մեզ հետ էր, երբ հայրիկդ, որ միշտ սրամիտ էր և կատակող, դարձավ մեզ, ասելով.

— Հիշեցի ձմերուկի անունը:

— Ինչպե՞ս է,— հարցրինք մենք:

— Das ձմերուկ,— հանգստությամբ պատասխանեց հայրիկդ:

Մեր զվարթ ծիծաղին այլևս վերջ չկար:

Ա՛խ, երիտասարդության անգին օրեր...

Ա՛խ, իմ երիտասարդության սիրելի ընկերներ, հավերժ ողբալի Միսա՛կ և Աղասե՛ր:

Ավետիք Իսահակյան

167. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, ապրիլի 22, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Ծա՜տ ժամանակ է, որ նամակդ ստացել եմ, բայց, ներող եղիր, սիրելիս, որ մինչև այսօր չեմ պատասխանել. տխուր եմ շատ, սրտաբեկ, անտրամադիր. այսպես գնաց մեր սերունդի կյանքը...

Վերջապես այսօր գրում եմ քեզ. Երևանը ծաղկել է հիմա, գուցե կեռասը հասել, Արարատյան դաշտը կանաչին է տալիս. լեռներից իջնում են գարնան հորդ ջրերը, և Աղեքսանդր Մյասնիկյանը չկա. նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը և ամենախելացի ու ամենաբարի բոլշևիկը։

Ամենաանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը. նա ամեն հայի սրտի մեջն էր ապրում, և հիմա ամենքը ողբում են նրան։ Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում. ո՜վ պիտի փոխարինե նրան. դա է նույնպես շատ մտածել տալիս ինձ...

Ախտո՜ս, անհուն ախտո՜ս. ի՜նչ կարճ կյանք ունեցավ և ի՜նչ մեծ գործ կատարեց։

Անձնապես ցավ եմ զգում, որ Հայաստան գալով, երջանկությունը չպիտի ունենամ նրան տեսնելու. իմ միակ մեծ բարեկամ-ընկերն էր նա ներկա իրավակարգի մեջ. մյուսները, բացի Մակինցյանից, անծանոթ մարդիկ են ինձ։

Համոզվում եմ, որ հայ ժողովուրդը անբախտ աստղի տակ է ծնվել. գոնե խնայե, ով որ խնայելու է նրա ազնիվ ընկերներին. հույս ունեմ, որ կան. գոնե Լուկաշինի մասին շատ լավ են խոսում. այդ լավ ընկերները թող ապրեն հայրենիքի համար, միայն թե ծխա հայի օջախը։

Սիրելի Մարտիրոս, մարտ ամսին այստեղ էր Ե. Չարենցը. ամեն օր միասին էինք. շատ քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով։ Նրա մասին շատ գեշ, չար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է։ Երիտասարդական տարիքի պատճառով թերություններ ունի — մեծամիտ է, երեստված է և անհանդուրժող է. սակայն խեղճը շա՜տ ջղային է. հիվանդ

տղա է ուղղակի. անշուշտ տարիների մեջ այս ամենը կանցնի: Առաջին շրջանի գրվածքները նրա՝ կարդացի. գեղեցիկ բաներ են. տաղանդավոր է, բայց նրա փուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել. երևի հին մարդ եմ և չեմ հասկանում:

Տարիքից ավելի զարգացում ունի և կարդացած ու կարդալ սիրող տղա է. շա՜տ հառաջ կգնա:

Սիրելիս, ստացել եմ Մռավյանի ղրկած «Արևները» և Ս. Զորյանի «Տխուր մարդիկը»: Շնորհակալություններս անպատճառ հայտնիր նրանց, չմոռանաս:

Զորյանը շա՜տ լավ բաներ ունի — պարզ, ճշմարիտ: Ուրախ եմ, որ դեռ երիտասարդ է և հառաջ գնալու ժամանակ ունի:

Ի՞նչ ես անում դու. աշխատո՞ւմ ես, թե՞ կոտրված ես. ինչպե՞ս են կինդ ու երեխաներդ: Ինչպե՞ս է Երևանի տնտեսական դրությունը, ժողովրդի ապրուստը:

Շատ բարևներ բոլոր քո և իմ լավ բարեկամներին և ընկերներին. հատկապես բարևներ Դերենիկիկ—Դեմիրճյան. ասա իրան, որ ամեն օր կարոտով անունը տալիս եմ նրա, բայց չեմ գրում, որովհետև՝ եթե գրեմ, մի ողջ գիրք պիտի գրեմ, այնքան բաներ ունեմ նրան ասելու. 14 տարվա մեջ սրտիս մեջ հավաքված բաներ. ինչպե՞ս գրեմ նամակով. երբ աստված կամենա իրար տեսության արժանանանք, ամիսներ պիտի խոսենք, որ վերջ ունենա...

Մերոնք լավ են. բարևում են սիրով քեզ և ձերոնց:

Իսկ ես ջերմ բարևելով տիկ. Լուսիկիդ, համբուրում եմ քեզ, երեխաներիդ և Դերենիկիկն:

Միշտ քո՝
Ալեքսանդր Խաչատրյան

168. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

19<25>, մայիսի 26, Վենետիկ

Շա՜տ սիրելի Մարտիրոս.

Նամակդ ստացել եմ իր ժամանակին, և ուզածդ իրերի պատվերը տվել եմ, բայց մինչև այսօր փողը չստացա,

ուղարկածդ փողը. պոստաև հայտնեցի՝ նույնպես դեռ չի ստացել: Ի՞նչ է եղել՝ չգիտեմ: Դու ևս հետաքրքրվիր իմանալու. գուցե կորել է...

Քո նամակը ստանալուց առաջ քեզ, Երևան, գրել էի արդեն, երևի հիմա ստացել ես:

Շարևցը եկավ, գնաց, և անշնորհքը մի տող չգրեց. չգիտեմ ո՞ւր է հիմա:

Ես լավ եմ, բայց շա՜տ տխուր եմ. ի՞նչ պիտի լինի օտար երկրում ապրող մարդու կյանքը. ո՛չ այս ենք, ո՛չ այն. քաշ ենք գալիս:

Բարևիր Մոսկվա եղող իմ բարեկամներին: Լսում եմ, որ այս տարի մեր հայրենիքի բերքը գեշ է. մրսել են ցանքերն ու այգիները. սով չլինի՛, ի սեր աստծու...

Շատ և շատ ջերմ բարևներ մեզնից:

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

Spec. A. Issahakian, 2266. Dorsoduro
le Marchi, Venezia.

169. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, հունիսի 10, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս ջան.

Ստացել եմ 5 դոլլարը. ամսուս 6-ին ուղարկեցի տվածդ հասցեով հետևյալ գրքերը.

1. Ugo Neblia, 2. Nuova Antologie, 3. Մի կատալոգ, 4. Թինտորիդո, 5. Տիցիան, 6. Մ. Անջելո, 7. Թիեպոլո, 8. Վերոնեզե, 9. Վատիկանը:

Կատալոգները և լրացուցիչը՝ ռուսականը սպառվել են, իսկ «Renaissance l'art français» դեռ չստացա: Նորից պատվիրեցի, որ գտնեն. երբ ստանամ՝ իսկույն կղրկեմ: Քեզ պարտք եմ դեռ մոտ 10 լիրեթ:

Մակինցյանը այստեղ էր, մի քանի օր մնաց կնոջ հետ, երեկ գնաց Հռոմ:

Հանձնել, խնդրեմ, Մ. Սարյանին:

170. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, հուլիսի 28, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Բավական ժամանակ կա ստացել եմ քո նամակը և հետո էլ «Նորքը», սրտագին շնորհակալություններս երկուսի համար էլ:

Վերջերս գնացել էի Միլան. տեսա Պ. Մակինցյանին. լծված է մի գործի, որ իր գործը չէ — վաճառականությո՞ւն. այնինչ իր տեղը գրականությունն է ու համալսարանի ամբիոնը:

Չարենցը գնաց, և ո՛չ մի տող չգրեց. դավաճան մարդ դուրս եկավ: Ես սիրեցի նրան. լավ ընկեր է, և նույնիսկ հայ մարդ է:

Սիրելի Մարտիրոս, կարդացի գրածդ հոդվածը. շնորհակալություն ինձ նվիրած տողերի համար: Համույքով կարդացի գրածդ:

Մեծ ցավով լսեցի Երևանին հասած աղետի մասին. դժբախտ ժողովուրդ ենք, ինչ կուզես ասա:

Սիրելի Մարտիրոս ջան, քո ուզած գրքերը, ինչ որ կարողացա ձեռք բերել, հունիսի 6-ին ուղարկել եմ Մոսկվա, Կուսիկյանի հասցեին, ապահովագրած. երևի արդեն ստացար: Պատկերահանդեսի ցուցակից միայն մի օրինակ գտա, ռուսականից՝ ոչ մի հատ. սպառվել են: Մոտս ունիս դեռ մի 10 լիրա էլ. գրել էի այդ մասին, հիմա չեմ գտնում մանրամասն հաշիվը, բայց գրել եմ քեզ, նույնպես, թե ի՛նչ եմ ուղարկել:

Մի բան եմ խնդրում քեզ, սիրելիս. կարո՞ղ ես ինձ ուղարկել այն «Նորքի» համարները, ուր տպված է Դերենիկի «Քաջ Նազարը», երկու գրքի մեջ է. առանց քեզ վիրավորելու գրում եմ, որ փոխարենը քեզ կղրկեմ խելքս կտրած գրքեր, պատկերներ արվեստի մասին: «Քաջ Նազարից» մի կտոր կարդացի և համը բերանս մնաց. սքանչելի բան էր. կեցցե՛ Դերենիկը:

Ուրախությամբ կարդացի Մոսկվայում տարած քո հաջողության մասին:

Գրում ես, որ մյուս տարի գալու ես Իտալիա. ողջ մնանք, նորից տեսնենք իրար, և ծով գնանք՝ «լավերը» տեսնելու. այդ ապրանքից այս տարի էլ շա՜տ կա. գնում եմ, բայց մենակ եմ. նայում եմ և միշտ հիշում քեզ: Ճիշտ որ՝ սնցած օրին օր չի հասնի...

Իսկ մյուս տարի հետդ կդառնամ Երևան. այլևս անկարող եմ սպասել, հոգիս ելավ օտարության մեջ:

Մարտիրոս ջան, երեք ամիս է՝ այստեղ է նկարիչ Լ. Հազարապետյանը. քեզ մատաղ, մեկ գրիր տեսնեմ, թե դա ի՞նչ նկարիչ է. բան չեմ տեսել նրանից, բայց ասում է, որ ինքը մեծ բան է... Ի՞նչ էր անում Թիֆլիզ, ի՞նչ դիրք ուներ. շա՜տ եմ հետաքրքրվում, ուզում եմ ճանաչել նրան. շա՜տ տարօրինակ մարդ է:

Այստեղ սարսափելի շոգեր են, տաք-կրակ. հազիվ կարողանում եմ մի քիչ պարապել. ծովն է փրկում: Մտադիր ենք օգոստոսի վերջերը Հռոմ գնալ, գուցե և Նեապոլի. տոմսերի մեծ զեղչ կա, որովհետև այս տարի «Սուրբ տարին» է կոչվում, ուխտագնացության տարի դեպի ս. Պետրոսի քաղաքը:

Մենք լավ ենք, և սիրով ու կարոտով հիշում ենք քեզ, և բարևում ենք քեզ, տիկնոջդ և երեխաներիդ: Բարևիր Դերենիկին, Մուշեղին, Ա. Հովհաննիսյանին, Գ. Լևոնյանին, Դ. Անանունին, և բոլորին, բոլորին:

Երբ տրամադրություն կունենաս՝ գրիր, մանավանդ թե՝ ստացա՞ր ուղարկածներս:

Համբույրներով քո՝ **Ավետիք**

171. ՀԱԿՈԲԻՆ

1925, նոյեմբերի 19, Վենետիկ

Սիրելի Հակոբ-Գրիգոր.

Շնորհակալությամբ ստացա ուղարկածդ գրքերը: Կարդացի: Զարմանում եմ, որ գերմանական մամուլը այդքան գովել էր այս միջակությունները: Մի նոր ապացույց, որ քննադատությունը սուբյեկտիվ բան է, եթե ոչ — անպետք:

Ուշ պատասխանեցի, որովհետև ուզում էի Ձեզ իմ գրքերից մի քանիսը ուղարկել, բայց չկարողացա ճարել:

«Երգեր ու վերքերը» և «Աղա-Նազարը» վաղուց սպառված են: «Հայրենի աղբյուրից» Փարիզում կա մի պարոնի մոտ, գրեցի, ուզեցի, պատասխան չեկավ:

Իսկ «Աբու-Լալան» նույնպես չունեի: Ուղարկում եմ, ինչ որ ունեմ: Ներող եղեք, որիշ անգամ պարտաճատույց կլինեմ:

«Աբու-Լալայի» գերմաներեն թարգմանությունը առանձին գրքով չկա լույս տեսած, այլ հանդեսի մեջ. «Der Neue Orient», Berlin, № 50, 1919 թվի վերջերին, կամ 1920 <-ի>սկզբներին: Իմ ունեցածը կտրված է հանդեսի միջից, և տարեթիվը չկա: Թարգմանությունը կատարած են Heinrich Noeren և L. Nasarianz.

Ես մտադիր եմ մոտ օրերս Փարիզ մեկնել. թերևս փորձեմ այնտեղ բնակիլ, եթե հնարավոր լինի: Շատ զզվել եմ Վենետիկից. բացարձակ մենակ եմ:

Հայր Արսենը լավ է, կաշխատի:

Ջերմ բարևներ հայրիկիդ, մայրիկիդ և բոլորիդ:

Միշտ Ձեր բարեկամ՝
Ավետիք Իսահակյան

172. ՊՈՂՈՍ ՄԱՆԻՆՅԱՆԻՆ

1925, նոյեմբերի 23, Վենետիկ

Սիրելի Պողոս,

Ստացել եմ թե՛ հեռագիրդ, թե՛ նամակդ, բայց լրագրները — ոչ:

Սպասում էի Դավիթի գրքի մասին վերջնական կարգադրության, սակայն ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը:

Կարծում եմ, որ գիրքը չի տպվելու այստեղ, եթե ուզենաս էլ:

Տպարանի վարդապետը տեղափոխվում է Միլան, որիշն է նստելու նրա աթոռին. բայց սա երկրորդական է, ան-

շուշտ: Ցավալին այն է, որ հայերեն շարող երկու գրաշարներից մեկը խեղթացավ. հիվանդանոցումն է: Շարող չունեն: Պոլսից սպասում են գրաշարի, որ այս վեց ամիս է՝ պիտի գա, և դեռ պիտի գա: Իրանք էլ չեն իմանում, թե ե՞րբ պիտի գա:

Այդ դժվարությունից դուրս, հիմա առաջարկում են ինձ (երբ սկսեն գիրքը շարել), որ պայմանը կապենք իտալ. լիրեթի վրա, որովհետև ֆր<անսիական> ֆրանկը ընկնում է, և, ըստ իրենց ակնարկին, 100-ին 50 տոկոս հավելումն պիտի աներ: Առհասարակ սրանց հետ գործ ունենալը — դժվարին բան է:

Նոր վարդապետը, որ ստանձնեն գործերը, կխոսիմ հետը, եթե ուզենաս, որ տպվի, և եթե գրաշարն էլ գա...

Խերյանի կտակը ստացա. այժմեությո՞ւն ունի գործը հիմա քեզ համար. ուզո՞ւմ ես, որ ուղարկեմ, պատճեն առնելու համար: Գրի՛ր:

Քեֆս շա՛տ գեշ է, և տրամադրությունս ու գլուխս՝ քաոս:

Բարևներ տիկ. Սեբարին, համբույրներ քեզ և աղջկանդ:

Քո՝ **Ավետիք**

173. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ

1926, հունվարի 4, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Շնորհավոր քո և տիկ. Սեբարի նոր տարին, ցանկանում եմ Ձեզ բախտավորություն և շա՛տ փող:

Երկու օր առաջ տպարանի հետ վերջացրի պայմանը Դավիթի գրքի տպագրության վերաբերմամբ. նույն պայմանն է, նույն թղթով ու ձևով, ինչ որ քեզ հայտնել են նրանք, միայն ֆրանսիական ֆրանկը վերածեցինք դոլլարի հաշվով: Դոլլարը իբրև կայուն դրամ:

Կսկսվի տպագրությունը իսկույն, երբ համաձայնես,

երբ,— նոր առաջարկ,— կանխավճար ուղարկես 100 դոլլար: Չգիտեմ, չկարողացա բացատրել այս պահանջի դըրդապատճառը, բայց կանխավճար պահանջում են սկսելու համար:

Եթե ուղարկելու ես դրամը, ուղարկի՛ր նրանց, վանքի վրա, իսկ եթե չես համաձայնում, գրիր ինձ, որ ձեռագիրը ետ ստանամ:

Դու ի՞նչ բանի վրա ես, ի՞նչ եք անում, ինչպե՞ս է Ձեր առողջությունները և տրամադրությունները:

Իհարկե, խնդիրը կանխավճարի մեջ չէ, եթե առհասարակ չես ուզում գիրքը տպվի, որովհետև այդ մասին ինձ վարանոտ բաներ էին հայտնել:

Քեֆս շա՛տ գեշ է, շա՛տ տխուր եմ: Ծանր է կյանքը, և քանի գնում ավելի է ծանրանում կյանքը իմ ուսերիս վրա: Նեղանում է սիրտս շա՛տ, ջղային եմ և մոայլ... Դատարկությանց մեջ խարխափում եմ:

Էլ ի՞նչ գրեմ. ո՛ղջ լեր:

Համբույրներով, քո՝ **Ավետիք Իսահակյան**

Չմոռանաս հասցես ճիշտ գրել.
2266 Dorsoduro

174. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1926, հունվարի 31, Վենետիկ

Սիրելի հայրենակից Հովհ. Ավագյան.

Մեծ գոհունակությամբ ստացել եմ Ձեր «Գրական դեմքեր»-ը և հետո Ձեր նամակը:

Սրտագին շնորհակալություններս՝ Ձեր իմ հանդեպ ունեցած ուշադրության համար:

Սակայն ուշացրի պատասխանը, որովհետև հարկ էր ամբողջ գիրքը կարդալ՝ տպավորությունս Ձեզ հայտնելու համար: Ամենից առաջ շնորհավորում եմ Ձեզ՝ գրական-քննական Ձեր կարողության համար: Անհրաժեշտ հատկու-

թյուններ ունեք թափանցելու հեղինակի ապրումներին, հասկանալու նրանց ներաշխարհը, գնահատելու լավը, այն՝ ինչ որ կարողացել է մի հեղինակ իր հոգեկան բավիղից ու թնջուկից առարկայացնել: Եվ հայտ բերել թերիները, բայց միշտ արտացավ բարեկամի պես և ո՛չ թե չարախնդությամբ:

Հիանալի է Ձեր ոճը. պարզ է նա, ըմբռնելի, բայց և ճոխ, և՛ նոտրբ, և՛ մշակված: «Կոչնակ»-ի հոբելյանական թվի մեջ տեսնելով Ձեր նկարը, ավելի զարմացա, որ տակավին այդքան երիտասարդ՝ ձեռք եք բերել այդպիսի մի սուր և հաջող գործիք՝ Ձեր լեզուն:

Կփափագեի՝ չլքվեիք երբեք և շարունակեիք Ձեր գործը: Ապերախտ է մեր իրականության մեջ գրական ուղին: Մենք ամենքս էլ այդ ուղիի վրա շա՛տ ենք տառապել և մնացել ենք միշտ նյութով աղքատ, բայց հարուստ մեր այն գիտակցությամբ, որ Աստվածությունից մեզ շնորհած մեծ կամ փոքր քանքարը չենք թաքցրել:

Ի՞նչ օգուտ ուրիշին, եթե, օրինակ, ես հիմա մի հարուստ դրամատեր մարդ լինեի և գրած չլինեի նույնիսկ մի ոտանավոր... մի ոտանավոր. այո՛, եթե իրոք, իմ հարյուրավոր գրածներից միայն մեկը պիտի ապրի մեր լեզվի մեջ,— բավ է. կնշանակե արդարացած է իմ գոյությունը և իմ տագնապները լիուլի վճարված:

Միլիոնավոր մարդիկ են ծնվում ու մեռնում առանց մի հետք թողնելու, ստվերի պես, որ անցնում է ժամանակի անապատի վրայով, բայց մի «անտունի», բայց «ջան-գյուլումի» մի քաույակ մի անմահ հաղթանակ է ժամանակի վրա:

Քննադատությունը շա՛տ մեծ դեր ունի. նա տատմայրն է, դայակը գրականության: Հայ գրողները ավելի արժեքավոր երկեր կիրականացնեին, եթե ունենային այնպիսի քննադատ-ուղեցույցներ, ինչպիսին եվրոպական ազգերը ունեն: Մեր մեջ քննադատությունը նոր է քայլ առնում:

Թողնելով Ձեր պատվական գրքի մեջ մյուս հեղինակներին վերաբերած Ձեր գրածի մասին խոսելը, ես՝ թույլ եմ տալիս ինձ՝ իմ մասին գրածին մի-երկու խոսք ասել:

Համաձայն եմ Ձեզ հետ, որ «աշուղ» հորջորջումը իմ

մասին՝ հեգնանք չեմ ընդունել ես, այլ արժանիք: Քուչակ Նահապետն էլ էր աշուղ, Սայաթ-Նովան էլ. երանի՜ չէր նրանց փառքին ու մեծությանը ես էլ հաղորդ լինեի...

Սիրելի բարեկամ, ասացեք, խնդրեմ. ինչո՞ւ պիտի բանաստեղծ կոչվելու համար հետևել Վերլենին կամ Մալարմեին, Վերհարնին կամ Ալ. Սրմենին, փոխ առնել նրանց ձևերն ու եղանակները, և պարծենալ, իսկ ոտնահարել մեկին, երբ նա հետևում է հայ հանճարի դարևոր ստեղծագործություններին, այն հավատով, թե շարունակում է ազգային-ինքնատիպ թելը, մեր ինքնուրույն աշխարհագրացումը և աշխարհապատկերացումը: Այլ բան է, թե ես չեմ հաջողել, բայց մտածումը ճշմարիտ է: Յուրաքանչյուր ազգ պիտի ունենա իր ոտքույն, ինքնահատուկ ոճը. միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, և չեն ջնջվում ո՛չ ջարդերով, ո՛չ հրով ու սրով. ոճը ազգի նկարագիրն է: Արարատի ստվերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգով ու իր ճարտարապետությամբ պերճախոս կերպով ցույց է տալիս աշխարհին, որ ինքը դեմք ունի, իր ձևը ունի, իր սեփականահատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի և նրա խորհուրդների: Ի՞նչ կա ավելի բարձր, քան մի ազգի մշակույթը, նրա ոգու դրսևորումը:

Ես աչքս բացել եմ այնպիսի մի աշխարհում, որ զուտ հայացի է, Շիրակը, ուր ամեն անկյունը հայկական կնիք ունի: Անի՜ն... և շուրջը հոծ, կենդանի հայություն, երգ, լեգոն, պար, իմաստություն. մի երկիր, ուր ժամադրավայրն է եղած հայկական բոլոր հատվածների. խոյեցու կողքին երգնկացին, մշեցու կողքին կարնեցին, վանեցին, նույնիսկ ւրաբկիրցին: Ինչո՞ւ պիտի խուսափեի ես բնաշխարհիկ ներշնչումներից... Ես վաղ հասակից (18 տարեկան) Եվրոպա եմ եկել ուսանելու, և մի օր չեղավ, որ ոգևորվեի Շարլ Բոդլերի պոեզիայով, որ իրոք ինձ համար «չարության ծաղիկներ» էին: Ինձ համակել են այն բանաստեղծները, որ ազգային, ֆոլկլորի տարրեր են ունեցել — Հ. Հայնե, Գյոթե, Ռոբերտ Բյորնս:

Երբեք Էդգար Պո, երբեք Մալարմե — ատում եմ նրանց:

Գրում եք, որ աղքատ է իմ բառամթերքս: Ես գիտակ-

ցաբար եմ վարվել այս խնդրում. իմ կարծիքով քնարականի (լիրիկայի) լեզուն պիտի լինի շա՜տ պարզ, անսեթևեթ, աղքատ, նախնական (լիրիկան արդեն գրականության սկիզբն է). միայն սրտի անպաճույճ լեզու: Իմ նախատիպարը եղել է ժողովրդի երգը՝ մեր և ուրիշ ազգերի. և իմ տեսությամբ — ամենակատարյալ լիրիկան ժողովրդի երգն է: Նրանից հետո եկածը — արհեստ է, արվեստ, տեխնիկ, ձեռնածություն: Ամենահաջող դեպքում — ռիտորիկա, ճարտասանություն:

Խոստովանում եմ, որ լեզվիս մեջ, անտեղի կերպով, շատ թրքական բառեր կան, որ դյուրավ կարելի էր փոխանակել հայ-ռամկական բառերով, բայց պատանի տարիքումս եմ գրած նրանց մեծ մասը: Այլ բան էր, եթե ուշ գրած լինեի, կբյուրեղացնեի. թերևս, եթե մի օր նորից բոլորը հրատարակեմ՝ մաքրեմ այդ բարբարոսությունը:

Զգաստ և պարկեշտ մարդիկ ամենալավ քննադատներն են իրենց արժեքի: Ես մեծամիտ մարդ չեմ, և իմ ներքին անկեղծության մեջ ինձ պզտիկ տեղ եմ տալիս. գիտեմ, որ շա՜տ և շա՜տ թերիներ ունեմ, գիտեմ, որ մեր գրականության մեջ ինձնից շա՜տ բարձրերը կան, որ կատարելությունից անչափելի հեռու եմ, բայց առանց հավակնության համամիտ եմ Ձեր այն գնահատանքին, որով պատվել եք ինձ և մխիթարել — «Հայ բանաստեղծության ամբողջ երկու հատվածներուն մեջ չիկա ուրիշ մը»... (էջ 144): Եվ՝ «Խսահակյանի երգերն ու վերքերը կըլլան նաև մեր ալ երգերն ու վերքերը...» (էջ 147):

Այսքանը բավ է, որ ինձ հալալ համարեմ հայ նվիրական ժողովրդի տված արդար հացը:

Գալով «Աբու Լալա Մահարի»-ին, սիրելի Հ. Այվազյան, իմ հոգու զավակն է նա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը:

Արաբ նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր գիրք, գերմաներեն, ձեռքս անցավ. կարդացի և գտա իմ հոգիս նրա հոգու նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածքին,— քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն,— ընտրեցի նրան

իմ հույզերս մարմնացնող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ո՛չ մի բառ, ո՛չ մի պատկեր, որ չլինի վերարտադրությունն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. աղքատ է եղել նա, կույր, Բաղդադից դուրս չի եկել. միայն էությունն եմ առել, իմ էությունը միևնույն ժամանակ:

Հաջողած եմ թե ոչ, չգիտեմ. ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար, շա՛տ տառապած մարդ եմ, երկար ժամանակ հիվանդ եմ եղել, և հիմա ջղերով քայքայված, բանտեր նստած, աքսորված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ շա՛տ թանկագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ «Մահարին» նրանց արդյունքն է:

Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը. (Սիամանթոյից հետո դժվար է երգել), սակայն «Աբու Լալայիս» ոուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել մի հոգի, հայ մարդու հոգին...

Այսքա՛ն, սիրելի բարեկամ:

Հիմա մտադիր եմ գարնանը Հայաստան գնալ. թերևս ներշնչվեմ նոր, պայծառ իրականությամբ, և եթե վիճակված է ինձ ապրել այս աշխարհում, ի կատար կածեմ մի-երկու բան, որ տարիներից ի վեր ամբարվել է մտքիս մեջ, որոնք գրել եմ, սակայն դեռ չեմ մշակել:

Նորից շնորհակալություն հայտնելով Ձեր սրտագին վերաբերմունքի համար իմ հանդեպ,

մնամ միշտ Ձեր անձնվեր՝

Ավետիք Իսահակյան

175. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, փետրվարի 9, Փարիզ

Սիրելի Սոֆի.

Ներողություն, որ մինչև օրս չգրեցի. օրերը այնպես են անցնում Փարիզում, որ չես իմանում՝ ե՛րբ լուսացավ, ե՛րբ մթնեց:

Հաջող տեղ հասա: Հյուրանոցում եմ, մի փոքր սենյակում, տաք ջուր, վճարում եմ 15 ֆրանկ, ծառայությամբ 16,50:

Ճաշեր — միշտ հյուր եմ:

Գաբոյին տեսա. լավ է, բայց չսիրեցի: Ոտքից գլուխ տուտ: Ամիսը 17.000 ֆրանկ է շահում...

Ադոնցը սառն ընդունեց սկզբում (ո՛չ համբույր, ո՛չ ուրախություն). չուզեցավ միջնորդել Ղուկասյանի մոտ: Մեկնելիս՝ հրավիրեց նորից գնամ. ասացի, թե՝ ես բարեկամների մոտ միայն կարող եմ երկրորդ անգամ գալ: Այդտեղ լեզուս բացվեց և ասացի.— Սա ի՞նչ ընդունելություն է. եթե դուք լինեիք, ուրեմն, Ղուկասյանի տեղ՝ դռնից պիտի դուրս անեիք...

Լեզուն բռնվեց. դես-դեն, թե տրամադրությունս գեշ էր, կինս հիվանդ էր (հարբուխ. երեսը դեռ չեմ տեսել):

Ես Ադոնցին ասացի, որ մերժում եմ նրանց թերթին գրել:

Գնացի Ղուկասյանի մոտ. մենակ. շատ լավ ընդունեց. երկար խոսեցինք. ասաց.— Գնա՛, եթե կարող ես այնտեղ ապրել և ընտանիքդ ապրեցնել, շատ լավ, եթե չես կարող՝ վերադարձիր: Միայն այնպես արնես, որ կարողանաս վերադառնալ: Ես կօգնեմ կնոջդ նույն չափով, ինչպես որ օգնել եմ:

Դուրս եկավ, որ Ադոնցը ոչ մի անգամ իմ մասին նրա հետ խոսակցություն չէ ունեցել, թե Փարիզ բերենք, և այլն: (Այդ ձեր ցեղի հատկությունն է, չնեղանաս): Սուտ խոսող:

Ադոնցը ինձ ուզում է հավատացնել, որ ինձնից մի տարի է մեծ. 51 տարեկան է, մազերը ճերմակ, երեսը կնճռոտ...

Փիրումյանին դեռ չեմ տեսել: Վաղն եմ տեսնելու: Գեղամ Կոստանյանը... Երեկ մուտք էի. երեկոյան. գրկել է ինձ և լալիս ենք: Լավ կին ունի, խելոք, տնտես, զարգացած. լավ ոռճիկ է ստանում, և աղախին չունեն. ազգասիրաներին փող է ուղարկում, քույրերին...

Ասում է՝ գնա տես և եկ:

Տեսա Սամսոն Թադեոսյանին՝ թշվառ, խեղճ, աղքատ: Կինը թողել է իրեն, հեռացել:

Հա՛, Ղուկասյանն ասաց.— Փիրումյանից խոհուրդ հարցրու. ընկերաբար, ինչպես և Կարեն Միքայելյանից (Բելճիկա է, գալու է վաղը). լավ մտածիր, և նորից արի մոտս: Ասաց՝ Ադոնցի հետ խորհուրդ արա: Ասացի՝ նա ինձ վատ ընդունեց, ոչ ընկերաբար:

Ասաց.— փող չտեսած մարդը այդպես կլինի...

Հիմա գնում եմ Բալաբյան եպիսկոպոսի մոտ ճաշի: Հայտնել եմ, որ օր. Էլիզեն, Աշխենը ժամադրություն տան:

Լիզայի հասցեն չեմ գտնում:

Եկեղեցի գալիս են թրքահայերը, ռուսահայերը չեն գալիս:

Ստիպված եմ վերջացնել, մյուս օրը նորից կգրեմ:

Համբույրներով քեզ և Վիգենիս,

քո՝ **Ավետիք**

176. ՍՈՖՅԱ ԽՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, փետրվարի 15, Փարիզ

Սիրելի Սոֆիկ.

Այսօր ստացա նամակդ և պատասխանում եմ իսկույն:

Փարիզը մի վիշապ է, որ օրերդ կլանում է՝ անձդ կրանելու չափ: Լրագիր եմ առնում և չեմ կարողանում կարդալ: Գիշե-

րը ժամը 2-ին եմ տուն գալիս, և առավոտ 8—9-ին ոտքի եմ: Վաննա եմ ընդունում, որ ջերս հանգստանան:

Հսկա քաղաքի մի ծայրից մյուս ծայրը կանչում են ինձ. ճաշե՜ր, ճաշե՜ր, ճաշե՜ր: Մինչև հիմա մի անգամ եմ ճաշել իմ փողով, այն էլ դերասան Հարութի հետ, որին ես եմ հյուրասիրել, փող չուներ:

Ճաշել եմ Բալաքյան եպիսկոպոսի մոտ, Աննա Բուդաղյանի, Փիրումյանի, Գեղամի մոտ՝ երկու անգամ (քեֆ սարքեց իմ պատվին), Ակարիչ Խաչատրյանի մոտ, վերջապես Ադոնցի մոտ, բայց կինը տանը չէր. Ադոնցը ինձ փառավոր ընդունելությունից հետո՝ փոխվել է... Գաբոյին դեռ չեմ տեսել, երկրորդ անգամ: Չերևաց: Ճաշի են կանչում Ծատուրյանը, Թումանյան Համբարձում, Վաչյան, Իշխ. Արղության, Գեղամն ու Փիրումյանը անվերջ. նույնիսկ Համբ. Մելիքյանը, որին չեմ տեսել, բայց կանչել է. չեմ գնալու: Խնդրեցի, որ թերթերի մեջ՝ «Հառաջի» և «Երևանի» մեջ իմ մասին բան չգրեն: Բոլորը գոհ են, որ ես ինձ պահում եմ պատվավոր:

Եղա ճաշին Կարեն Միքայելյանի մոտ. շատ տեղեկություններ տվեց Հայաստանի մասին: Նրա կինը հետաքրքիր է (Չարենցի գոված կինը), սիրուն է: Շիրվանը Նիցցա է, աղջկա մոտ, երևի այնտեղից էլ կերթա Հայաստան:

Տեսա ակարիչ Քոչարյանին. կինը հիվանդանոցն է. երեխան մեռել է. քեֆը տեղը չէր:

Սամսոնի քույրը սպանվել է, մյուսները Կովկաս են, ապրում են մի կերպ:

Դեռ չեմ տեսել Լիզային (Հ. Խունունցին ասացի, որ ժամ նշանակե):

Ղուկասյանին ընդից պիտի տեսնեմ, ժամ եմ խնդրում. գուցե գնամ նրանց մոտ: Ես նրան իր կանտորում եմ տեսնում:

Թումանյաններին չեմ տեսել: Չեմ տեսել Ս. Ադամյանին. շատ ընդության մեջ է: Բոլորի կանայք կար են անում. Ասրի-Բեկյանի, Սուրենի, նույնիսկ իշխ. Արղությանի:

Դեռ չեմ տեսել Պապաջանյանին, Չոպանյանին, տիկ.

Եսայանին, Տիգրան Զավենին և շատ շատերին, որ պիտի տեսնիմ՝ ամենքն էլ կամք են հայտնել տեսակցելու:

Չեմ տեսել Աբել վարդապետին: Էլիզին լուր ղրկեցի, որ տեսնվինք. խեղճը ժամանակ չունի, բայց կտեսնվինք:

Աշխենն եկավ մոտս, շալը տարավ:

Բժ. Թորգոմյանին տեսա ժամի բակում:

Երիտասարդները պիտի թեյասեղան տան:

Ամենքը, ամենքը զբաղված են հաց գտնելով. անգործները սոսկալի վիճակի մեջ են:

Համլիկ Թումանյանը այստեղ է, գուցե մոտ օրերս տեսնեմ, թեյի սեղանին:

Ինչքա՞ն պիտի մնամ. երևի մի 8—10 օր ևս: Ղուկասյանին պիտի տեսնիմ վերջնականապես: ՀՕԿ-ի անդամներին՝ Գրիգոր Վարդանյանին, բժ. Կամսարյանին տեսա:

Պիտի դաշնակցականների հետ հաշիվ մաքրեմ, որ վրաս գեշ չխոսեն: Լավ չեն տրամադրված իմ հանդեպ:

Դեռ ո՛չ մի տեղ չեմ եղել. միայն մի գիշեր Շատլե անունով մի թատրոն: Հայկական երեկույթին չեղա, և ժամանակ չկար: Գեղամի մոտ էի. հյուրեր ուներ, բացի այդ՝ չէի գնա,

Տեսա Արմենակ Բուդաղյանին: Դեռ նրա ճաշը չեմ կերել. խոստացել եմ:

Փիրումյանի տանը, ճաշին, որ կային 15 հոգի, հայտնեցին նրանք՝ մեծամասնականները թե Քաջազնունու և Ս. Հակոբյանի գալով մենք այնքան ուրախ չենք, որչափ քո, որովհետև դու հայ ժողովրդի մի կտորն ես, նրա ոսկորից ու նրա մարմնից, և Թումանյանի կողքին հավասար տեղ ունիս, սիրում ենք քեզ հիմա, որովհետև սիրել ենք միշտ:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Բարևներ վարդապետներին,

համբույրներ քեզ և Վիգենին:

Ձեր՝ Ավետիք

Եթե չտեսնիմ չտեսած մարդկանցը՝ շատ պիտի վիրավորվին, որ լավ չի լինի:

Թեև ճաշի փող չեմ տալիս, բայց փողերս հալչում են ծաղիկների, բոնբոնների և ավտոմոբիլի մեջ: Հիմա եմ զգում, որ ես շատ մեծ տեղ եմ գրավում: Մեծամասնականներն էլ, բուրժուաներն էլ, դաշնակներն էլ ասում են — ամենախելացին դու ես, որ մնում ես կոչմանդ վրա, պատվավոր, և խոսքդ արժեք ունի:

Ս.վետիք

177. ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ

<1926>, փետրվարի 18, Փարիզ

Սիրելի տիկ. Իզաբելլա.

Շնորհակալությամբ ստացած եմ Ձեր երկու նամակները ալ: Ես նույնպես կփափագեի Ձեզ տեսնել: Ձեր առաջին նամակին կամեցա իսկույն պատասխանել, որովհետև մտածում էի ազատ օր գտնել մեր տեսակցության տրամադրելի: Բոլոր օրերս գրավված են, ազատ եմ երկուշաբթի: Կխնդրեի երկուշաբթի կեսօրից հետո քաղաքիս մեջ մի տեղ նշանակեք, մի սրճարան, Ձեզ հարմար վայրում: Երկուշաբթի, 22-ին փետրվարի:

Սիրալիր բարևներով՝

Ձեր Ա.վ. Խահակյան

178. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1926, փետրվարի 19, Փարիզ

Սիրելի եղբայր Արշակ Չոպանյան.

Շա՜տ կփափագեի Ձեզ հանդիպել, մի քանի հոգեկան վայելքի ժամեր անցկացնել Ձեզ հետ:

Ես ազատ եմ փետրվարի 23-ից (երեքշաբթի օրից). կխնդրեի քաղաքի մեջ մի սրճարան, մի որևէ տեղ նշանակելիք հանդիպելու:

Ժամը և ժամադրավայրը գնալու Metro, և այլն:

Սրտագին բարևներով և համբույրներով

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

179. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, փետրվարի 25, Փարիզ

Սիրելի Սոֆի.

Դու շարունակ երեխայական նամակներ ես գրում, կարծես թե Փարիզը վայելեցի, քեզ բան չմնաց:

Ես այնպիսի հարցի առաջ եմ կանգնած, որ կյանքի և ճակատագրի խնդիր է, և լուծելը մի օրվա, մի շաբաթվա բան չէ:

Փիրումյանին վերջնականապես չեմ տեսել (շա՜տ դժվար բան է նրան տեսնելը, ինչպես և Ղուկասյանին. ժամադրություն են տալիս, գնում ես՝ զբաղված են, հետաձգում են ուրիշ օր):

Երևի չեմ գնա: Դեռ ոչ ոքի չասես:

Այստեղ փոխադրվելու հարցն եմ խորհում: Եղա Վահան Փափազյանի մոտ. լավ տուն ունի, քաղաքից մի ժամ հեռու, պարտեզի մեջ, երկու հարկանի. վերին հարկում Զավոն է ապրում, 300 ֆրանկից ավելի... Այստեղ էժան է Վենետիկից, բայց միսը թանկ է: Մեր փողը չի բավականացնի այստեղ: Ղուկասյանը երբեք միտք չունի ավելացնելու: Երբեք:

Մտածում եմ, և դիմեցի Ադոնցին՝ մի երկու ոսկի գտնել. խոստացավ մտածել:

Բոլորը, բացի մի քանիսից, մեծ նեղությամբ են ապրում. կար, կար, ամբողջ օրը կար: Փարիզի երեսը ամիսներով չեն տեսնում:

Ղուկասյանը խորհուրդ չի տալիս Փարիզ գալ, ասում է՝ կծուլանաս, բան չես գրի, իսկ ես ապրեցնում եմ քեզ, որ գրես — «Ուստա Կարոն» գրես:

Եթե չեղավ, դու կգաս մի-երկու ամիս կապրես, կկշտանաս Փարիզից, և նորից Վենետիկ, մինչև Վիգենը վերջացնես:

Ամենայն դեպս, Ադոնցը դեռ չպատասխանեց: Լիզային տելեֆոն արեցի, տանը չէր, նամակ գրեցի՝ տեղ ու ժամ նշանակե. պատասխան չունիմ:

Ճաշերս վերջացան: Նոր մարդ էի, տեսան, հագեցան:

Գաբոն մի օր եկավ մոտս, ու գնաց:

Մի անգամ էլ տեսա Մայիլյանի կնոջ հոգեհանգստին:

Ղուկասյանների տունը չեմ գնում և չեմ գնա: Նա չի սիրում կեղծավորություն: Պետք չէ. ծանր, անմատչելի մարդ է:

Շատ աղքատություն կա ռուսահայերի մեջ:

Կանայք են մարդկանց պահում:

Իշխան Արղությանի կինը կարում է:

Սուրեն Ադամյանի կինը կարում է:

Մայիլյանները կարում են, մածուն են շինում:

Ադոնցի թերթի գործը գլուխ գալու բան չէ: Երեկ եղա Տեր-Օհանյաններին: Գնացել էին Նիցցա, նոր եկան. շատ վշտահար են:

Մոլորված է գլուխս. ժամե-ժամ տրամադրությունս փոխվում է: Բայց «Ուստա Կարոն» պիտի գրել ինչ գնով որ ուզում է լինի:

Ամենքը խեղճ, ծերացած, լքված... ես եմ միայն մեջերը փայլում:

Բուդաղյան Արմենակը այսօր հետս էր. նա էլ խորհուրդ չի տալիս: Եվ ասում է՝ Ղուկասյանի աչքին շատ չերևաս, թարս մարդ է, տեսնի, որ պարապ ես, կկտրե...

Զարյանի եղբոր հասցեն անկարելի է գրել. ճանաչող չկա:

Զարյանը ուզում է Կիպրոս գնալ պաշտոնով...

Ես ամենաուշը մի շաբթից կուգամ. կվերջացնեմ ամեն բան: Վ. Փաշազյանի տունը աշնանն է դատարկվում, Զավոն աշնանն է տեղափոխվում:

Մնացածների տները ծակեր են, մութ, զզվելի, կգամ մաքրամասը կպատմեմ:

5 հարկ, ոտքով ելնել. խոհանոցները մի բուռն տեղ, արտաքնոցները՝ հոտած...

Վարանդյանի տունը... խոզի բուն:

Լավ տուն ունի Ադոնցը, Ծատուրյանը, Տեր-Օհանյանը...

Համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք

Հազարապետյանը այստեղ է, իջել է Քոչարի մոտ (նկարչի), քնում է հատակի վրա: Չեմ տեսել և չեմ էլ ուզում տեսնել:

Նկարիչ Սարյանը ուզում է Եվրոպա գալ:

180. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, մարտի 1, Փարիզ

Սիրելի Սոֆիկ.

Քարտդ հիմա ստացա: Ես քեզ գրել էի, որ ժամե-ժամ տրամադրությունս փոխվում է: Վերջապես վճռեցի գնալ Հայաստան: Սիմոնիկի հետ երկար խոսեցի. այդ մարդը անկեղծ է, և բարեկամ. ասաց.— Եթե գնում ես իբրև քաղաքական գործիչ, մի՛ գնար: Եթե գնում ես իբրև բանաստեղծ, գրող, իսկույն գնա՛ և բախտավոր կլինես, և երբ ուզենաս, դուրս կգաս:— Մի խոսքով, գնում եմ:

Գործերս վերջացան, շաբաթ օրը. Ղուկասյանին էլ տեսա, նորություն չկա. հիմա մնում եմ մի քանի օր, մի քանի մարդիկ տեսնելու. բացի այդ, երեկ, այսօր և վաղն էլ տանն եմ նստած. հարբուխ եմ սաստիկ և հոգնել եմ այսքան վազվզելուց, աղմուկից, և այլն:

Վերջապես, Լիզայից նամակ առա. վաղը երեկո ժամադրություն տվեց: Ադոնցի մոտ վաղուց է չեմ եղել: Պիտի գնամ, մի անգամ ևս:

Համբարձում Թումանյանները ուզեցել են ինձ տեսնել: Պիտի գնամ: Սեյլանյան Արշալույսը (Ժընևի) այստեղ տեսա Գեղամի մոտ. շա՜տ սիրուն կին ունի, Շադինովի աղջիկը:

Օվանես խան Մասեհյանը, այստեղ է. մի քանի օրից հետո գնում է Պարսկաստան: Վիճակը գեշ է, փող չունի: Գնում է պաշտոն ձեռք բերելու:

Կաշխատեմ գտնել Զարյանի եղբոր հասցեն. բայց դրանցից փող դուրս չի գա: Վանքին այդպես կխաբեն, թեև վանքը լավ գիտեր:

Վ. Փափազյանի տունը լավ է. քաղաքից 3/4 — կամ մի ժամ, տրամվայով. կա և՛ երկաթուղի: Բայց դու որ գաս, երևի Լիզայի մոտ պիտի իջնես, կամ Ջավոյի մոտ, կամ Վահանի: Լիզայից կիմանամ մանրամասնությունները: Գաբոյից խեր չկա. հույսդ կտրի՛ր. թերևս Ադոնցը մի-երկու ճաշ տա:

Քեզ բարեկամ կլինեն իմ հին ընկերները և բոլշևիկները, ուրիշ ոչ ոք: Լավ կընդունեն նույնպես Տեր-Օհանյանները:

Գլուխս ցավում է, ներիք գրեմ: Ծանր հարբուխ եմ:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Բարևներս բոլորին:

Քո՝ Ավետիք

181. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ

1926, ապրիլի 18, Վենետիկ

Սիրելի Պողոս,

Այստեղ շատ հարցուփորձ արինք, աղախին գտնելու համար:

Վերջապես, ասացին, որ Միլանում մի հայ կին կա, մոտ 40—45 տարեկան. աշխատասեր, խանում կին, թրքահայ, գաղթական, լավ տանից:

Եթե լավ վճարես, կմնա մոտդ և ամեն բան կանե:

Շուտով, հենց նամակս ստանալուդ պես, պիտի գտնես, որովհետև մոտ օրերս նա Վենետիկ է գալու:

Անուն է Սկուճի (Իսկուճի) Իսրայելյան. ապրում է մի բարեկամի տանը, Ալեմշահի: Ահա հասցեն. Alemchah (Alemcia), via sta Radegonda № 7, Milano (III).

Քաղաքի արվարձան է, կենտրոնից մի ժամ, կես ժամ հեռու:

Իսկ Լիտո ապրելու մասին. պիտի ասես, թե՝ ինչքա՞ն կարող ես վճարել. բնակարանները թանկ են այնտեղ. ամսական, սովորաբար, 1000 լիրից սկսած, երեք սենյակ:

Կարծում եմ, որ ի վիճակի չես: Լավ որոնելով, մի քիչ հեռուները, կարելի է, 7—800 լիր: Գրի՛ր, թե ինչքա՛ն կարող ես տրամադրել: Լավ իմացիր, որ Լիտոն բուրժուազիայի վայրն է՝ անգլո-ամերիկեն, գերմանո-չեխ...

Դ. Անանունից նամակ առա. իր գրքի մասին է գրում, և իմ մասին: Սպասում եմ Մոսկվայի կարգադրությանը, որ մեկնեմ:

Գրում է, որ քեզ բարևեմ, և ասեմ, որ դու չես ըմբռնել նրա նամակի իմաստը և իզուր ես նեղացել:

Չգրեցիր, թե «Մարտակոչը» ի՞նչ էր գրել, որով հետաքրքրվեմ փնտրել վաճառում և կարդամ:

Զարմանալի է, որ թերթերը (ուղարկածդ) տեղ չեն հասնում. երևի, ծառաները նիշերի փողը գրպանում են, եթե նրանց ես փող տալիս, որ նամականիշեր առնեն:

Պատմական: Ժ. Զանդի նամակները՝ Ա. դը Մյուսեին ուղարկած, տեղ չէին հասնում. իտալական հոտելի ծառան... Իտալացիք միշտ նույնն են, պզտիկ գողեր՝ պըզտիկները, մեծ գողեր՝ մեծերը:

Ջերմ բարևներ տ. Սեբարին և քեզ: Այս նամակն էլ շտապ գրեցի:

Քո՝ Ավետիք

Հ. Գ. Սրբուհի Իսրայելյան: Ուղիղը:

182. Գ. ԱՄԱՏՅԱՆԻՆ

<1926, մայիսի 12>

... Սիրելի բարեկամս, ես մոտ օրեն Հայաստան պիտի մեկնեմ: Լավ չէ՞ր լինի, որ Դուք ևս այդպիսի դիտավորություն որոճայիք: Պետք է որ կարող մարդիկ, երիտասարդ ուժեր հավաքվին հայ ժողովրդի մոտ: Հաջողություն Ձեր գործին, ջերմ բարևներ Ձեզի և ընկերներիդ: Մնաք բարյավ:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

183. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ

1926, մայիսի 29, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Ստացա նամակդ: Ստացել եմ ուղարկած թերթերը. եթե կուզես, քեզ ճամփեմ, կամ վանքին տամ:

«Նորքը» կարդացի. վանքը ունի. բայց եթե քեզ հարկավոր չէ, ուղարկիր ինձ, ես կպահեմ Զարենցի գրածի համար:

Զարենցի գրությունը լավն էր, մանավանդ սկիզբը. բայց շա՜տ երկարացրել է, և տավտալոգիա է դուրս եկել, անվերջ կրկնություններ: Եվ մի տեսակ սինթեզ է իր գաղափարների: Մյուս կողմից էլ, ես և նա, հինն ու նորը, սիմբոլներ են դարձել. ամբողջ հին մտայնությունը իմ վրա է կուտակել: Բայց և այնպես տաղանդավոր տեղեր շա՜տ կան: Շատ գեղեցիկ էր Դերենիկի «Կովի դաշտումը». ոճը—հատու, որոշ. ճշմարիտ դիտողություններով: Սակայն վերջը թույլ էր — «էյի» հոգեբանությունը, մտածումները. մեռնողը առանց ցավի, տանջանքի մեռնում է փիլիսոփայելով: Ճիշտ չէ: Ալազանի գրությունը անեկդոտային էր. արվեստը—հասարակ:

Ակսել Բակունցը ավելի վարպետ գրիչ է. ռեալիստ, դիտող, բայց պատմվածքը ծայրե ծայր կրկնություն էր Գոգոլի «Հին պոմեշչիկների» հայտնի կտորի. դու երևի լավ պիտի հիշես. այն ծեր մարդն ու կինը. մյուրաբաները, կնոջ

մահը, մարդու մահը: Հար և նման: Մյուս բաները չկարդացի: Ժամանակ չունեցա:

Լավ կլինի, որ դուք գայիք մի քանի օրով, նկարչական ցուցահանդեսը տեսնելու. բայց հառաջիկա շաբթուն — ո՛չ, ես բացակա եմ մի քանի օրով: Հունիսի 6-ից Վենետիկ եմ:

Դոլլարների փոխման հարցը. երբեք 30 չի դառնա նա, գոհ կլինիմ, եթե 26—27-ի ժամանակ փոխես: Ուրեմն հիմա, որովհետև կընկնի. չի կարող բարձրանալ. բայց ընկնել հավանական է:

Դավիթի գրքի 5-րդ թերթն է տպվում. կուղարկեմ քեզ:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Ուշացավ վիզաս. գոնե սեպտեմբերից հայրենիք լինեմ, բաղերի քաղցրությունը վայելեմ:

Կինս ջերմապես բարևում է Սերարիին, քեզ և աղջկանդ պաչում, այդ շնորհին ես էլ եմ մասնակցում:

Համբույրներով՝ քո **Ավետիք**

184. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆԻՆ

<1926, օգոստոսի 2>, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Գրում ես, որ թույլտվություն կա: Ուրեմն՝ կարգադրեմ: Ի՞նչ կարգադրեմ. ինձնից ի՞նչ է կախված. գրի՛ր՝ ի՞նչ պիտի անեմ: Ծո՛ւտ, շո՛ւտ շարժվիր. անցագիրս շուտով ձեռքս անցնի, որ Հռոմ ուղարկեմ՝ իտալական կառավարությունից visa առնեմ, Իտալիա մտնելու համար, համենայն դեպս:

Գրեցի, որ գաս. աշխատիր գալ:

Հետո, եթե Մոսկվայի վրայով գնամ՝ տոմսակի գնելը: Եվ՝ ո՞ր կառավարության մոտ վիզա պիտի ունենամ:

Մեր տանից գեշ լուր ունեմ. Ալեքսան եղբայրս հիվանդ է. արդյոք հիվա՞նդ է, թե... Ա՛խ, գոնե նրան տեսնեի...

Շուտով գրիր: Համբույրներով,

քո՝ **Ավետիք**

185. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1926, օգոստոսի 3, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Շատ ուրախացա, որ Փարիզ ես եկել: Լավ ես արել, շա՛տ կօգտվիս: Փափագելի է, որ մեր նոր և նույնպես հին մտավոր գործիչները հնար ունենան երբեմն Եվրոպան տեսնել — նկարիչներ, քանդակողներ, գրողներ, դերասաններ, և այլն:

Այս կողմից էլ ցավում եմ, որ քեզ պիտի Երևանում չգտնեմ: Տեղափոխություն: Ոմանք գալիս են, ոմանք գնում: Վերջ ի վերջո, մղված միմիայն հայրենիքի կարոտից, վճռեցի գնալ, տեսնել հայրենիքը: Ականջով հազար ու մի հակասող բաներ եմ լսել և ոչ մեկին էլ չեմ հավատացել, և ինչպե՛ս հավատալ, երբ իրար չնչում են աստծները: Լինել Թովմաս առաքյալ: Տեսնել, շոշափել և ոչ թե հավատով խաբել կամ խաբվել:

Իմ գնալը անձնապես, շա՛տ դժվարությունների հետ է կապված: Կինս չի ուզում գալ, և տղաս էլ դեռ պիտի սովորի, այսպիսով իմ վերադարձը լիովին չեղավ. առայժմ այսպես: Կգնամ, որոշ ժամանակ կմնամ, հետո կգամ և ամբողջապես կտեղափոխվեմ:

Իմ տնտեսական դրությունս ապահով էր, բայց գնալովս խախտվում է նա, և եթե չիրականանա կառավարության խոստումը թե որոշումը, ապա, ուրեմն, գործած քայլս հիմարությունից ավել մի բան կլինի:

Հույս ունեմ, որ այդպես չի լինելու:

Դու մենա՞կ ես եկել, թե՞ ընտանիքով: Թվում է, թե չպիտի կարողանայիր ընտանիքով գալ. թերևս տիկին Լուսիկը հետդ լինի, երեխաները մայրիկիդ մոտ:

Ես որ Փարիզ էի, լսեցի գալուդ մասին, որ գրեթե մի տարվա չափ մնալու ես:

Շուտով կգնամ ես. երեկ նամակ առա Պողոսից, որ հրամանն եկել է: Վերջապես, 5 ամիս սպասելուց հետո:

Սիրելի Մարտիրոս, խնդրում եմ գրես, թե երկաթուղու տոմսը Բեռլինից Մոսկվա, Մոսկվայից Թիֆլիզ, II կլաս,

ի՞նչ արժենա, դոլլարի հաշվով: Ուզում եմ Մոսկվայով գնալ: Շատ է հետաքրքիր ողջ Ռուսիան անցնել, զգալ, տեսնել իրերի ներկայությունը, առարկայությունը:

Եվ՝ քանի՞ տեղ վիզա է պետք: Եթե դու մոռացել ես, դեսպանատանից կարող ես իմանալ. այդտեղ գիտցողներ շատ կան:

Ուրիշ ինչպե՞ս ես, ինչպե՞ս է առողջությունդ, քեֆդ, ընտանիքդ, և վերջապես Երևանը, մեր ընդհանուր բարեկամ-ընկեր-ծանոթները:

Ասում ես, որ Փարիզ գամ: Սիրելի՛ս, այս տարի մոտ երկու ամիս մնացի: Բավ է:

Կինս ու տղաս շա՛տ բարևում են քեզ:

Իմ կողմից ջերմ բարևներս հայտնիր Սիմոնիկին և տիկնոջը, Զուբարին և տիկնոջը, կամ, ավելի քաղաքավարի լինելու համար, տիկին Զուբարին և Զուբարին...

Համբույրներով քո՝

Ավետիք

Հ. Գ. Քանի՞ օրվա ճանապարհ է Բեռլինից Մոսկվա, և Մոսկվայից Թիֆլիզ: Այս էլ չմոռանաս գրել:

Spec. A. Issahakian, 2266. Dorsoduro.
Venezia.

186. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1926, օգոստոսի 15, Վենետիկ

Սիրելի բարեկամ
Հ. Ավագյան

Շա՛տ ներողություն եմ խնդրում այսպես ուշ պատասխանելուս համար Ձեր պատվական նամակին — խճճված էր գլուխս շատ, 5 օր հետո ամենամեծ հաճույքը ունեմ, բախտը — Հայաստան դառնալու: Հայաստանից կգրեմ անպատճառ, «Կոչնակին»:

Եթե աստված հաջողե, սեպտեմբերի առաջին օրերը կլի-

ձեմ Երևանում. ինչպիսի՜ ապրումներ, հուզումներ պիտի ունենամ... զգում եմ ինձ երիտասարդ և թևեր են բուսել թիկունքիս. տեսնել հայրենի թանկ, անգին հողը, լսել հայոց խոզուն, գյուղացու գերանդիի զնգոցը, հոտերի մայուկը... թոնիրի հացը ուտել և Այրարատի գինին խմել: Ի՜նչ կա սրանցից բարձր ու ևվիրական բաներ — ոչի՜նչ, ոչի՜նչ:

Շնորհակալությամբ ստացած եմ 5 դոլլարը: Կխնդրեմ դադարեցնեք «Կոչնակի» առաքումը Վենետիկի հասցեին: Այլևս տուն չունեմ Վենետիկ: Հայաստանից կգրեմ հասցես: Բարի եղեք, խնդրեմ, ջերմ և հարգալիր բարևներս հաղորդել «Կոչնակի» ազնիվ խմբագրներին: Մնացեք բարև, սիրելի հայրենակիցներ, գրկում եմ Ձեզ բոլորիդ:

Մնամ միշտ Ձեր անկեղծ բարեկամ և հարգող՝
Ավետիք Իսահակյան

187. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926, սեպտեմբերի 26, Սև ծովի վրա

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Այսօր վերջին օրն է ծովի վրա: Վաղը առավոտ կլինինք Բաթում: Ծովը մինչև հիմա շատ լավ էր. խաղաղ, հանգիստ, լուսնյակ գիշերներ: Քնելու տեղս լավ է, և սնունդը նույնպես լավ: Նավապետի հետ լավ բարեկամացանք: Կյանքիս մեջ այսքան իտալերեն չէի խոսել. հասկանում եմ և հասկացնում: Ֆրանսերեն գիտցողներ էլ կան: Ամբողջ ծառայողների թիվը — 35 հոգի է, և միայն ես ուղևոր: Պոլիս կանգ առանք մոտ 10 ժամ. իրավունք չկար դուրս ելնելու: Շահվերդյանը մի ուրիշի հետ եկան այցի: Հեռագիր ունեին Պողոսից: Տեսնենք Բաթում ինչպես պիտի վերաբերվին:

Այս նամակը ձեռքդ ուշ կհասնի. Իտալիայից պիտի պոստին հանձնեն: Միևնույն ժամանակ կատանաս մի կապոց լրագրական կտրոններ, կկարդաս և կպահես. հետաքրքրական բաներ կան:

Նամակիս հետ ղրկում եմ հայր Գաբրիելի ինձ հանձնած «Երթաս բարևի» ճառը: Նույնպես պահիր:

Էլ ի՞նչ գրեմ: Շատ համբույրներ քեզ և Վիգենին: Ջերմ բարևներ Սահակ վարդապետին, հ. տեսչին, Սրապիոնին, Պայտանին, Գաբիկյանին և բոլորին: Մանավանդ Բաբայաններին:

Ձեր՝ **Ավետիք**

188. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926, հոկտեմբերի 12, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Վերջապես Երևանում եմ: Ես ինձ շատ բախտավոր պիտի զգայի, եթե չիմանայի այն ծանր հարվածները, որ հասել են մեր ընտանիքին: Թիֆլիզում իմացա, որ Ալեքսան եղբայրս մեռել է ապրիլ ամսում: Մեռել է և՛ տերտերանց Գեորգը, Վիգոն (Աքայի աղջիկը) և շա՜տ շատերը մեր բարեկամներից և իմ ընկերներից...

Հանգիստ հասա Բաթում. լավ ընդունեցին: Մի երկու օր մնալուց հետո գնացի Թիֆլիզ. ընդունելությունը սրտագին էր և անկեղծ: Ճաշեր, ընդունելություններ: Սկզբում հյուրանոց իջա, բայց Հովհ. Թումանյանի ընտանիքը չթողեց դուրսը մնայի. տարան իրենց տունը: Լավ են նրանք: Աշխենը, Նվարդը, Սեդան և Թամարան Երևանումն են ապրում: Տանն էր Մուշեղը, Համլիկը, որ ամուսնացել է, Անուշը և Արփիկը: Օլյան շատ չի ծերացել: Նրանց մոտ իմ տանն էի զգում: Քնում էի Օհանեսի սենյակում:

Շատ բարեկամներ տեսա. ուրախացա և տխրեցի. այդ է կյանքը:

Երևան եկա Դիլիջանով և Սևանով, Սիմոնիկ Փիրումյանի հետ, օտոմոբիլով: Հրաշալի ճանապարհ էր. պայծառ, տաք, գեղեցիկ: Տեսա Խորհրդային Հայաստանի շինությունները, պաճրագործարանը. հրաշալի էր: Երևանը շա՜տ է փոխված, եռուզեռ, կենդանի, բազմամարդ: Անվերջ քանդում են ու շինում. մեծ աշխատանք են թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը. ապրելու ընդունակ. լալիս է, բայց նորից շինում ու ստեղծում, քարից հաց հանում:

Ավելորդ է խոսել իմ մասին: Ամեն տեղ գրկաբաց ընդունելություն: Բայց սիրտս կոտրված է:

Լենինական դեռ չեմ մտել. ո՞ւմ գնամ տեսնիմ. բայց, իհարկե, պիտի գնամ: Սակայն դեռ Երևանում շատ պիտի մնամ. վաղը գնում եմ շրջակաները, օտոմոբիլով. հետո՝ Էջմիածին: Եղանակները շատ լավ են. տաք, պայծառ: Հրաշալի ջուր ունի Երևանը, և՛ մրգեր, պտուղներ:

Ապրում եմ հոտելում. սենյակ պիտի ստանամ մոտ ապագայում:

Շատ շատերը բարևում են քեզ: Բժ. Ասլանյանը, Վիկտորյան (հիվանդ է խեղճը, ոտքերը ուռել են) բժշկվում է:

Բոլորը գտնում են, որ ես լավ եմ մնացել, ինչպես և դու: Վիգենով հիանում են:

Ծովի վրայից քեզ համակ գրեցի. Բաթումից հեռագրեցի: Նամակ չէի գրում, որովհետև ժամանակ չունեի, և սիրտ միևնույն անգամ: Ստացա քո գրած նամակը:

Մեր ծանոթները, բարեկամները, ընկերները բոլորն էլ խեղճ վիճակի մեջ են. գրեթե ամբողջ ժողովուրդը խեղճ է. աղքատ, քանդված, ավերված, թալանված երկիր է եղել. զարհուրանքներ տեսել, անհուն, անսահման: Հիմա նոր-նոր է ոտքի կանգնում. տեսնում ես այս բոլորը և սիրտդ կտորկտոր է լինում. ուզում ես հոգիդ տալ նրանց, այնքան խղճում ես: Խե՜ղճ, անբա՜խտ հայ ժողովուրդ, գնացել է մահի դուռը ամբողջովին, և կիսով՝ մերկ ու քաղցած, զարհուրած ետ է դարձել: Եթե Ռուսաստանը չհասներ 1920 թվին, ջնջված էր հայությունը: Հիմա կուշտ են. սուլ չկա: Բայց բնակարանի մեծ կրիզիս կա. թափված են իրար վրա, բառիս բուն նշանակությամբ: Անվերջ շինում են տներ, բայց ծով կարիքին հասնել կարելի չէ. Եվրոպայի հայությունը պիտի օգնե, շա՜տ օգնե, եթե սիրում է նա հային ու հայ լեզուն: Ամբողջ քաղաքը լծված է աշխատանքի: Կառավարության գլուխ կանգնածները ընտիր, խելոք երիտասարդներ են (մոտ 40 տարեկան մարդիկ), աշխատող, եռուն, եռանդով, զարգացած: Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը: Գլուխները կախ աշխատում են, համբերանքով և հույսով: Անշուշտ, մի 10 տարի հետո, Հայաստանը, եթե ունենա խաղաղություն և աջակցություն դրսից, շա՜տ գեղեցիկ,

լավ երկիր է լինելու: Հիմքերը լավ են դրված: Երանի՛ երիտասարդ լինեի և ընկնեի գործի, սև, չարքաշ գործի ծովում: Թո՛ղ Վիգենս իմ տեղը կատարե իմ ուզածն ու չկարողացածը:

Բաթում—Թիֆլիզ գրեթե շինարարական գործ չտեսա. նրանք արդեն շեն են ու հարուստ. խեղճը, աղքատը մենք ենք:

Էլ ի՞նչ գրեմ: Դերենիկին տեսա, դժբախտ է: Սնարը ամուսնացել է դերասան Աբելյանի աղջկա հետ: Հիմա մի աղջիկ ունի: Սիմոն Հակոբյանին՝ դեռ չեմ տեսել, մի տղա ունի:

Սիսակը լավ է, զվարթ ու ազնիվ գործող: Շիրվանզադեին, Քաջազնունուն դեռ չեմ տեսել:

Ով որ ճանաչում է քեզ, բարևում է:

Թիֆլիզում տեսա Անահիտին՝ Զիթողցյան. իր մարդուց բաժանված չէ. լավ տղաներ ունի: Տեսա և՛ Սոֆիկ Աբովյանին. լավ զավակներ ունի: Խեղճ են, բայց ամեն մարդ աշխատում է. պարապ լինել — քաղցած լինել կնշանակե:

Գրիր Վիգենի մասին. ի՞նչ եղան քննությունները, հաջող տվե՞ց: Ասա, որ լավ աշխատե, որ ապագայում հաց ունենա: Իր հասակի տղաները հա՛մ աշխատում են, հա՛մ սովորում: Օրինակ, Վիկտորյայի տղան և որիշները:

Ռուբեն ախպերը շատ հիվանդ է եղել. հիմա լավ է: Տերտերը պարալիչ է ընկել. խե՛ղճ մարդ: Մնացածները լավ են:

Շատ ջերմ և կարոտով բարևներ վանքին ու դպրոցին, հայր տեսչին, Անտոն վարդապետին, Սահակին, Սրապիոնին, Պայանին, Գաբիկյանին, Աջեմին, Խոջային: Վանքը: Հայր աթոռակալին, հայրեր Գաբրիելին, Հովսեփին, Ավետիքին, Արսենին, Վարդանին, Օհանին, Քերովբեին, Վրթանեսին, Վահանին, Եղիային, և այլն, այլն: Սիրով եմ հիշում նրանց, և կարոտով եմ պատկերացնում վանքը:

Բարևիր Բաբայաններին, քեռուն, Հ. Արսենին, մորը, քրոջը ու Զոնին, Մարիին, Աստղիկին ու ծնողներին (Շիրինյան), Ծովինյաններին և բոլորին:

Երբ հանգստանամ, նամակ կգրեմ վանքը, և ում որ խոստացել եմ:

Գարեգին Լևոնյանը, Միշո Մանվելյանը, Մամիկոն Գևորգյանը, ամենը լավ են ու բարևում են:

Մտադիր եմ ձմեռը Մոսկվա գնամ. ձերոնց դեռ նամակ չեմ գրել, կգրեմ: Ժամանակ չունեմ, անվերջ տեսակցություններ, խոսք ու ճաշ: Եվ երբեք մենակ չեմ գտնվում:

Երվանդ Լալայանը ամուսնացել է Զարիկի հետ (Սահակ Մատինյանի քրոջ աղջկա): Թիֆլիզ չկարողացա շատ մարդ տեսնել, քո և իմ բարեկամներից: Ժամանակ չկար:

Համբույրներով քեզ և Վիգենին,

քո՝ **Ավետիք**

Via Berlin—Moscau, URSS,
Эриван, Армения,
Ашот Иоанисян.
Աշոտ Հովհաննիսյան,
Բաֆֆի փողոց, հանձնել ինձ:

189. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, դեկտեմբերի 7, Երևան

Սիրելի Սոֆյա.

Նամակներդ ստացել եմ:

Տրամադրություն չունեի նամակ գրելու: Գնացի, տեսա մեր քաղաքն ու գյուղը: Գյուղի տունը, ջաղացը կործանված են. գարնանը պիտի սկսել վերաշինել: Կառավարությունը պիտի օգնե:

Ռուբենի վիճակը ծանր է: Մի բժիշկ ասում է, որ ռակ է, մյուսները, թե՝ վերք է ստամոքսի, բայց խեղճը հալումաշ է եղել: Աքայի և Սաթենիկի տնտեսական վիճակը գեշ է, ես եմ օգնում:

Աբասը լավ տղա է, բայց իր հիմարությամբ զոհն է դարձել. բանտարկված է, իմ գալուցս առաջ: Կառավարության հակառակ է իր կարճ խելքով. սխալ, վնասակար ընթացք: Այն, ինչ որ անում է կառավարությունը, նրանից ավել ի՞նչ կարող է անել. երկիրը աղքատ, քանդված, անընդհատ պատերազմներ տեսած: Ի՞նչ է, եթե մի ուրիշը լիներ, ուրիշ կառավարություն, ավելի՞ն պիտի գործեր: Երբե՛ք:

Անվերջ նոր, հսկա շենքեր են շինում, տներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ֆաբրիկներ, ջրանցքներ և հազար ու մեկ բաներ:

Վրաստանն ու Ադրբեջանը ժառանգեցին շեն ու հարուստ երկիր, քաղաքներ, ճանապարհներ, իսկ Հայաստանը — միայն ավերակներ, որբեր և հիվանդություններ, սով և մերկություն: Ուրիշ ով որ լիներ սրանց տեղը, պիտի փախչեր: Բայց աբասները հիմար են և, ցավալին այն է, որ գործիքներ են անհայտ ուժերի ձեռքին, որոնք գտնում են անձնուրաց, ազնիվ երիտասարդներ ու գործադրում:

Խնդիրն այն է, որ մայրը մնացել է անտեր և պիտի պահեմ մորը, մինչև տղայի ազատվիլը, որ հույս ունեմ շուտով լինի:

Դու շարունակ գրում ես իմ գալու մասին: Իհարկե, ես երբ ուզենամ կարող եմ գալ, բայց գալու մասին ես տակավին չեմ մտածում, որովհետև շատ բաներ ունիմ անելիք: Ջաղացը պիտի վերաշինեմ, գյուղերը պիտի թափառեմ, նոր գյուղեր պիտի հավաքեմ, նոր կենցաղը պիտի ուսումնասիրեմ: Շատ բան ունեմ կարդալիք. անագին գրականություն կա նոր ու ինձ անծանոթ:

Երևանը ունի չափազանց հարուստ գրադարաններ. ազգային, համալսարանի, Էջմիածնի:

Հետո, շա՜տ հաճելի կյանք կա Երևանում, շա՜տ ընտիր, բարձր հասարակություն: Ես շա՜տ սիրված եմ ու հարգված: Կառավարությունը ամեն դյուրություն է տալիս ինձ երկիրս ու ժողովուրդը ճանաչելու: Սա իմ տեղն է ու իմ տարերքը: Ի՞նչ պիտի անեմ Եվրոպայում: Զզվել եմ ու երբեք փափագ չունիմ նորից այնտեղ ձանձրանալու, բայց երբ պետք կլինի գալու, Վիգենին համալսարան դնելու համար կամ այլ անհրաժեշտ գործի համար, իսկույն կարող եմ գալ. դրա մասին մի՛ մտածիր: Աշխատիր Վիգենի համար համալսարան մտնելու ստիպենդիա ճարել, որովհետև ես դեռ չեմ կարող ձեզ դրամ ուղարկել, շա՜տ եմ ծանրաբեռնված: Հիմարություն ունեցա, և դրա մեջ Պողոս Մակինցյանն էլ շատ մեղավոր է, գուցե միակ, որ հետս չբերի ձեռագրերից և մշակված «Երգեր ու վերքերը» և ուրիշ գործեր («Սասմա Մհեր»), որ այստեղ հրատարակեի և փող ստանայի: Հիմա

նոր բաներ պիտի գրեմ: Տեսնենք: Իմ իդեալն է — ապրել Հայաստանում մշտապես և երբեմն գալ Եվրոպա, կարճ ժամանակով: Դու գիտես, թե ինչքա՜ն էի զզվել Եվրոպայից և ինչքա՜ն էր տխուր:

Դեռ բնակարան չունիմ. հյուրանոցումն եմ. սա շատ ծանր խնդիր է — բնակարան: Բառացի ասած՝ բնակարան չկա. երբ ինձ տուն տան, խոստացել են երկու սենյակով նոր բնակարան, այն ժամանակ կգաս, թե չէ միտք չունի, ապրել կարելի չէ. այդ մասին հետո, դու Վիգենի հարցը լուծիր մեր բարեկամների՝ Աբրահամի և Ադոնցի միջոցով. թեև դեռ ժամանակ կա, բայց այդ ուղղությամբ գործիր: Քեզ շատերն են բարևում. հիշո՞ւմ ես Ժընևի Թամարան, այստեղ է և քեզ բարևում է. ամուսնացած է: Ում կորցրել ես, այստեղ կգտնես: Կորգանովին բարևիր, ասա քեռին Թիֆլիզ է. դեռ չեմ տեսել: Բարևիր Կորգանովներին, Ադոնցին, Գաբոյին, Փիրումյանին, Չուբարին, Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին և բոլորին, Լիզային և այլն:

Համբույրներով, քո՝ Ավետիք:

Նամակներս ուղարկիր Վենետիկ, Վիգենին:

190. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, դեկտեմբերի 7, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Ներողություն, որ ահա երկու ամիս է, որ Հայաստանի մեջն եմ, բայց քեզ մի նամակ դեռ չեմ գրած: Բայց չկարծես, թե քեզ մոռացել եմ. մայրիկիդ գրել եմ շարունակ և հարցուփորձ արել քո մասին:

Հայաստան ոտ կոխելուս, իսկույն, շա՜տ ցավալի, չափազանց տխուր բաներ լսեցի մեր ընտանիքի մասին. մեծ եղբայրս (Ալեքսան) մեռած գտա և մյուս եղբայրս, Ռուբենը (Կոլյայի հայրը) ծանր հիվանդ, որ [illegible] է և օրերի հարց է նրա կյանքը: Եվ ուրիշ շա՜տ թանկագին կորուստներ մեր ընտանիքից և իմ ընկերներից: Մեր ազգականնե-

րից 25 հոգի կաև մեռած. այս բոլորը շա՜տ վշտացրին ինձ, և եռանդս ցամաքեցրին. ո՜չ մի սիրտ չունեի նամակ գրելու: Հայրենիք գալուս ուրախությունս փոխվեց ինձ համար ծանր սուգի:

Այդ տակավին չէր անցել, երբ զարհուրելի երկրաշարժը գրեթե կործանեց մեր քաղաքը և շա՜տ գյուղեր:

Մեր գյուղը, մեր ջրաղացը, մեր տունը բոլորովին կործանված են, հողին հավասար: Իհարկե, կառավարությունը պիտի վերաշինե, թերևս ավելի լավը, բայց մի աղքատ ժողովրդի համար, որպիսին մենք ենք, անչափելի կորուստ էր: Մի 3—4 տարի է պետք, որ քաղաքը վերաշինվի:

Ես հիմա Երևանումն եմ: Լավ եմ, գոհ եմ, որ գտնվում եմ հայրենակիցներիս հետ: Ամեն երեկո մի տեղ եմ — թատրոն, կոնցերտ, ժողով, երեկույթ: Շա՜տ մեծ կյանք կա Երևանում և շա՜տ ընտիր, կրթված հասարակություն:

Այցելում եմ ամեն տեղ — հիվանդանոցներ, համալսարան, դպրոցներ, ֆաբրիկներ, զորքի մոտ: Եվ ամեն տեղից հեռանում եմ գոհ և ոգևորված: Հայրենիք ունենք, պետություն, զորք և ամեն բան:

Պիտի գնամ գյուղերը թափառեմ, տեսնեմ գյուղացուն իր հողի վրա. ի՞նչ է անում, ինչպե՞ս է ապրում, ի՞նչ է մտածում:

Գալով քեզ, սիրելի տղաս, լա՛վ աշխատիր, լա՛վ սովորիր: Դու արդեն մեծ տղա ես և ամեն բան հասկանում ես: Աշխատի՛ր մարդ դառնալ, լա՛վ մարդ, քաջ, զարգացած, պատրաստված, որ թե՛ քեզ պետք գաս և թե՛ հայ ժողովրդին:

Մի՛ մտածիր, որ քեզնից հեռու ենք. սրտով և հոգով միշտ քեզ հետ ենք: Ինչ որ կախված է մեզնից՝ կանենք, որ ուսումդ ավարտես, համալսարանը վերջացնես: Երբ համալսարանը ավարտես, գիտություն ունենաս, այն ժամանակ միայն կարող ես օգտակար լինել քո հայրենիքին:

Սիրի՛ր և հարգի՛ր տեսուչիդ, ուսուցիչներիդ և ընկերներիդ:

Առողջությունդ լա՛վ պահիր, լա՛վ, ազնի՛վ ընկերների հետ եղիր, և ազնի՛վ մտածիր, ազնի՛վ զգա, և ազնի՛վ գործիր:

Սիրելի Վիգենս, ես շա՜տ լավ եմ: Ինձ այստեղ շա՜տ հարգում են ու սիրում:

Բախտավորություն է հայրենիքում ապրելը: Ուղարկում եմ այն պրոգրամը, որով կիմանաս, թե ինչպես ընդունեցին ինձ ու տոնեցին իմ գալը:

Բարևիր իմ կողմից հայր տեսչին, ճ. ճ. Սահակին, Սրապիոնին, Անտոնին, Աբբե Ժյուստին, պարոններ Պայանին, Գաբրիկյանին, Խոջային, Ահեմյանին, Գեորգ Պալըքչյանին և Պագանիներին, Դե-Մարքիներին և բոլոր քո ընկերներին:

Ներփակ նամակը կհանձնես ճ. Սահակին: Կարոտալի համբույրներով,

քո հայր՝ **Ավետիք Իսահակյան**

Հասցե. URSS, Erevan, Achot Iohannissian.
Ռուբենի փողոց, Երևան:
Աշոտ Հովհաննիսյանին,
հանձնել Ավոյին

191. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, հունվարի 23, Երևան

Սիրելի Սոֆի.

Վերջին գրած նամակներդ բոլորն էլ ստացել եմ: Դու պիտի աշխատես շուտ-շուտ գրել, տեղեկություններ տալով ձեր մասին: Ես շա՜տ ղալմաղալի մեջ եմ. անթիվ նամակներ ունեմ գրելու, անթիվ մարդկանցից նամակներ եմ ստանում, որոնք տեղեկություններ են ուզում Հայաստանից. այստեղ գալիս էլ շատերին խոստացա գրել: Իսկ գալու օրվանից մինչև այսօր դեռ չեմ կարողացել անփոփվել. հին աշխարհը իրեն մարդկանցով փոխվել է. նոր աշխարհ, նոր մարդիկ, նոր խոսքեր, նոր հայացքներ, նոր կարգեր: Պետք է ծանոթանալ, ուսումնասիրել, դիտել, կարդալ, լսել: Հարյուրավոր մարդիկ եմ տեսել, անհուն չափով տպավորություններ, պատմություններ:

Եվ վերջապես երկրաշարժը իր ծանր հետևանքներով:

Քանդված է ջրաղացը, գյուղի տները ամբողջ. պիտի վերաշինել, չորս կողմս — կարիք, պիտի հասնել: Ռուբեն աղբոր մահից հետո, և իմ բոլոր եղբայրների մահից հետո ես եմ մնացել մեր տան մեծը, նահապետը. ծանր պարտականություններ ունիմ: Եվ միևնույն ժամանակ ամեն կողմից ձյութ են ուզում. հիմարի պես, ձյութերս թողի Վենետիկ, հիմա այս շփոթի մեջ, ե՛կ բաներ գրիր:

Այս բացիկը գրում եմ, որ մի քանի օր շահեմ, հետո քեզ երկար նամակ գրեմ: Այսօր-վաղը նամակներ կգրեմ Պ. Մակինցյանին, Գեղամին, Ադոնցին: Առայժմ համբույրներ, բարևներ քեզ և բոլորին:

Ավետիք Իսահակյան

Մի շաբաթ է՝ լեհինակաև էի: Նորից պիտի գնամ:

192. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, հունվարի 31, Երևան

Սիրելի Սոֆի.

Նամակ ստացա Վիգենից և ճ. Սահակից: Ծա՜տ ուրախացա ու հանգստացա այդ մասին, որ Վիգենը առողջ է և լավ է սովորում:

Նիկողայոսից նամակ ստացա. իրեն ասա, որ շուտով կպատասխանեմ:

Հա՛, ես զարմանում եմ, որ գրածս հոդվածի այն տողը լավ չես հասկացել, և իմ էությանն ու մտքերիս հակառակ բացատրություն ես տվել: Գիշատիչ անասունը մեր մեջ, այսինքն մեր հոգում՝ դա մարդկային էգոիզմն է, որին պիտի գետին տապալե գիտությունը, կրթությունը, զարգացումը՝ հոգեկան և ձյութական:

Այդպես եմ գրել. պետք է ուշադրությամբ կարդալ:

Նկարիչ Աղաջանյանը, քեռիդ, շատ է բարևում քեզ: Իմ կողմից կարոտով բարևներ բոլոր բարեկամներիս:

Համբույրներով՝ **Ավետիք**

193. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

1927, փետրվարի 5, Երևան

Սիրելի Ռոմանոս.

Մորաքույրիս թոռի մասին է խնդիրս — Հեղինե Մազմանյան, որ սովորում է քեզ մոտ:

Նրանց տնտեսական վիճակը տխուր է. հայրները մեռած, և ամբողջ ընտանիքը մեծ քույրն է պահում, որ ծառայում է այստեղ, հիվանդանոցում:

Ռոճիկը հազիվ է բավարարում իրենց, էլ ո՞ւր մնաց հոգալ ուսման ծախսերը: Ուստի սրանով շատ խնդրում եմ քեզ — աևես կարելին. առանց վարձատրության սովորի մոտդ, և մանավանդ որ ընդունակ աղջիկ է:

Եթե գիտենայի, որ միջոցներ ունիմ, բնականաբար քեզ չէի դիմի:

Ամիսներ է այստեղ եմ, և դեռ հնարավորություն չունեցա Թիֆլիզ գալու: Սակայն մտադիր եմ մի ամսից հետո գալ Թիֆլիզ մի քանի ժամանակով:

Այստեղ ես ինձ տակավին լավ եմ զգում:

Ջերմ բարևներ և հարգանքներ սիրելի տիկնոջդ:

Համբույրներով,
քո՝ **Ավետիք Իսահակյան**

194. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, փետրվարի 27, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Փետրվարի 9-ի գրածդ նամակը երեկ ստացա: Լենինականէի գնացել, երեկ վերադարձա: Ջրաղացի գործերով. պետք է բոլորովին նորը շինենք, կառավարությունը փող պիտի տա երկար տարիներով և չնչին տոկոսով, այնպես որ մեր քաղաքը պիտի շինվի՝ ունենալով և՛ կանալիզացիա, և՛ ամեն տուն՝ ջուր: Հայաստանի ամենալավ քաղաքը պիտի դառնա մի 3—4 տարվա ընթացքում: Փող կա. Խորհրդային

Միությունը որոշել է տալ **16 միլիոն** ռուբլի: Թող սա ամբողջ աշխարհը լսե և ըմբռնե, թե հայ ժողովուրդը ի՜նչ մեծ և իրական բարեկամ ունի իր կռնակին կանգնած. «Սարի պես մեջքիդ կանգնած յար ունես»: Ես շա՜տ զբաղված եմ: Այս ամսիս երկու գիրք պիտի լույս ընծայեմ: Պողոսին ասա, որ մոտ օրերս իրեն թե՜ նամակ կգրեմ, թե՜ նյութ կուղարկեմ: Իմացիր, որ Պողոսը, թեև խելառ է, բայց մեր ամենաազիզ բարեկամն է, ընկերը՝ գաղափարի բուն իմաստով: Մոտ օրերս քեզ էլ, Վիգենին էլ, վանքին էլ և բոլորին էլ նամակներ կգրեմ: Տրամադրությունս հիմա լավ է. վշտերին հաղթեցի: Առողջ եմ: Ամեն տեղ ընդունված և սիրված: Գալու մասին դեռ չեմ մտածում, որովհետև գործեր ունեմ. երկիրը գարնանը պիտի տեսնեմ: Տխուր բաներ շատ կան, իհարկե, բայց ընդհանուր գումարը շա՜տ լավ է և պայծառ: Խորհրդային կարգերին ուրիշ կարգեր չեն կարող փոխարինել. միակ հնարավոր լավ դրությունը սա՜ է, և հայերիս համար ամենանպաստավորը: Այս խոսքերս ամեն տեղ կարող ես ասել և ամեն մարդու ցույց տալ: Գեղամին ասա, որ իզուր է ինձնից վիրավորվել. ես կամեցել եմ իր բարեկամներին ուրախացնել իր վիճակով, իսկ ռոճիկի մասին որոշ բան չեմ ասել, որովհետև ինքս էլ չեմ իմացել: Համբույրներ ու բարևներ Պողոսին, Սեբարին, բալիկին: Ադոնցին, Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին, Դերբեդարյաններին: Ջերմ բարևներ Ս. Փիրումյանին, Ե. Չուբարին, Ե. Քոչարին ու Գաբոյին:

Համբույրներով՝ քո **Ավետիք**

195. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, մարտի 1, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Ստացել եմ նամակդ, ինչպես և հ. Սահակի նամակը: Վերջերս բացակա էի Երևանից, նոր եմ դարձել և շատ զբաղված եմ, դրա համար էլ երկար չեմ կարող գրել. շու-

տով երկար նամակներ կգրեմ բոլորին (վանքին):

Ես զբաղված եմ հիմա երկու գիրք հրատարակելով և մեր ավերված ջրաղացի վերաշինության գործերով: Գարուն է արդեն և ջրաղացը պիտի սկսել շինել նոր և գեղեցիկ կերպով. փողը կառավարությունն է տալիս: Մեր Շիրակը և քաղաքը Մոսկվայից ստանում է այս տարի 6 միլիոն ռուբլի, ուրեմն հիմա կա մոտավորապես 8—9 միլիոն ռուբլի փող, որ ասել է ավելի, քան 100 միլիոն լիր իտալական: Մոսկվան տալու է նորից 10—11 միլիոն: Տեսնում ես ինչպե՞ս է օգնում Ռուսիան իր դաշնակից փոքրիկ Հայաստանին: Քաղաքը պիտի շինվի նոր պլանով և բոլոր հարմարություններով. կլինի Հայաստանի ամենալավ քաղաքը: Աշխատանքները կտևեն մի երկու-երեք տարի: Իսկ մեր ջաղացքը մինչև ամառ պատրաստ կլինի:

Ես Մոսկվա շուտով չեմ կարող գնալ. գործեր շատ ունիմ: Նամակիս մեջ կդնեմ մի քանի պոստ-կարտեր. առհասարակ քիչ կաս. այդպես բաներով դեռ չեն զբաղվում. զբաղվում են պրակտիկ գործերով. շինում են կանալներ, ֆաբրիկաներ, ճանապարհներ, տներ, էլեկտրական կայաններ: Բարևիր բոլոր հայրերին, մեր գաղութի բարեկամներին և ընկերներիդ, և բոլոր մեր ծանոթներին՝ հայ և իտալացի:

Համբույրներով՝ քո հայր **Ավետիք**

Հասցես.
URSS, Armenia, Erivan, A. Issahakian.
Կենտրոնական հյուրանոց, Նալբանդյան փողոց:
Բոլորը ֆրանսերեն, սրանք հայերեն:

196. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927, մարտի 1, Երևան>*

Տեսնում ես, Վիգեն ջան, որ պոստ-կարտերը լավ չեն, որովհետև Հայաստանը մինչև վերջերս մտահոգված է եղել

* Բացիկը, որի վրա գրված է երկտողը, ներկայացնում է Վաղարշապատի Լեճինի անվան ջրանցքը: Անթվակիր է և անհասցե. ըստ երևույ-

տնտեսական դրությամբ ժողովրդի: Սովից և մահից ազատել մի ժողովուրդ: Այդ պատճառով էլ ուշք չի դարձած գեղեցիկ պոստ-կարտեր շինելու: Հիմա նոր-նոր են սկսում այդ գործը:

197. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, մայիսի 8, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Ստացա երկու նամակդ էլ, և Վիգենիս նամակն էլ: Շա՜տ ուրախ եմ, որ լավ եք:

Զարմանում եմ, որ Վիգենի նամակը ետ են դարձրել: Պատճառն ի՞նչ է:

Ես էլ այն կարծիքին եմ, որ լավ կլինի Վիգենին բերես Փարիզ, թող տեսնի, որ տպավորվի: Միայն վերադարձը դեպի Վենետիկ պիտի ապահովվի, այնպես չլինի, որ հետո չթողնեն վերադառնա և զրկվի դպրոցից, մանավանդ որ վերջին տարին է:

Իսկ եթե չես բերելու Փարիզ, այն ժամանակ տար Հռոմ, Ֆլորենցիա, գոնե այդ երկու քաղաքը տեսնի: Ես մի շաբաթ հետո գնում եմ Թիֆլիզ, գրքերս այնտեղ պիտի տպվեն, և փողն էլ այնտեղ պիտի ստանամ. այնտեղից քեզ փող կտեղափոխեմ. կարծում եմ, որ առնվազը մի 200 դոլլար կուղարկեմ: Թիֆլիզ մնալու եմ մի շաբաթ կամ 10 օր: Ամառը Հայաստանում թափառելու եմ, և տպավորություններս գրելու. ձեռքս փող կանցնի: Իսկ աշնանը գնալու եմ Մոսկվա: Այդ ժամանակ էլ կորոշվի Եվրոպա գալուս հարցը:

Ջրաղացով գրեթե այլևս չեմ հետաքրքրվում: Շնորհ է դառել. ուզում են, որ Գեղամը, Աբասը և ես գնենք ջրաղացը, բայց Սաթենիկն ու Թամարը չեն համաձայնում. այսպես էլ մնում է գործը: Իսկ նրանց հետ միասին՝ անկարելի

թին, որպես Սովետական Հայաստանի բացիկի մի նմուշ, դրված է եղել ծրարի մեջ: Գրության ժամանակը՝ 1927, քանի որ 1927 թ. մարտի 1-ի նամակում (նույնպես բացիկ) գրում է, թե «նամակիս մեջ կդնեմ մի քանի պոստ-կարտեր. առհասարակ քիչ կան...»

է գործ բռնել և օգտվել: Ջահլես գնաց դրանցից. զզվելի բան է: Աբասը դեռ նստած է, երևի կաքսորեն Ռուսաստան: Ոչինչ չեմ կարող անել:

Մոտ օրերս մեր տերտերը մեռավ. ազատվեց թշվառ վիճակից. խիղճս հանգիստ է, որ վերջին ամիսները օգնության հասա: Գրեթե երեսի վրա էր մնացել: Խեղճ աղջիկները՝ Հեղինեն, Դշխուհը ազատվեցին. անտանելի բան էր պարալիչ մարդուն պահելը, դրա հետ միասին աղքատությունը... Գիտե՞ս, որ մեռավ և՛ խեղճ Ռիպսա Մամյանը. շա՜տ ցավալի էր, երիտասարդ հասակում: Պլևրիտից մեռավ և՛ Հ. Թումանյանի աղջիկը, Անուշը, հենց Զատկի կիրակի օրը:

Այդպիսի ցավալի բաներ:

Գրում ես Զ. Եսայանի մասին, թե նա ասում է, որ Հայաստանը արքայություն է: Սխալ մեթոդ է այդ. ոչ ոքի էլ չի կարող խաբել, և դրանով վնասում է ժողովրդին: Վերքերը ծածկելով չեն բժշկում հիվանդին, այլ ցույց տալով: Հայաստանը վերքերով ծածկված հիվանդ է, բայց սրտացավ բժիշկների ձեռքին է գտնվում նա, որ օր ու գիշեր աշխատում են բժշկել ծանր վիրավորին, և եթե խաղաղությունը տևե, մի քանի տարիների ընթացքում ոտքի կկանգնի նա, որովհետև շատ են աշխատում, և առողջ հիմքերի վրա է դրված գործը:

Նամակներիդ մեջ փիլիսոփայություն մի՛ անիր. գրի՛ր ինձ միայն քո և Վիգենի մասին, բարեկամների մասին և գաղութի մեջ անց ու դարձի: Ինձ միայն փաստեր և դեպքեր են պետք: Դատողություններդ մի կողմ թո՛ղ: Պ. Մակինցյանը դեռ Երևան չեկավ, բայց տիկինը եկավ և շատ բաներ պատմեց քեզնից:

Գրքերը, պատկերները դեռ չեմ ստացել:

Ներփակ պոստ-կարտերը ուղարկիր Վիգենին:

Գրում ես, որ ասում են, թե այստեղ ես ուրախ ու քեֆով կյանք եմ անցնում, իսկ նամակները տխուր եմ գրում: Ճիշտ է և ճիշտ չէ: Երբ լինում եմ ընկերների և հասարակության մեջ՝ բնական է, որ ուրախ եմ լինում, բայց երբ մենակ եմ լինում, իհարկե, տխուր: Այդպես եմ եղել միշտ, այդպես էի

և՛ Վենետիկում, և՛ ամեն տեղ: Տխուր լինելու շատ պատճառ ունիմ, բավական է՝ հենց մեր ընտանիքին հասած սղետները:

Էլ ի՛նչ գրեմ. բարևներ Գեղամին, կնոջը, Նիկոլային, կնոջը, Հուբարներին, Փիրումյաններին, Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին, Պապաջանյաններին, Լիզային, Էլիզին, Զավենին, մի խոսքով՝ բոլոր բարեկամներին և հարցնողներին:

Համբույրներով՝ **Ավետիք**

198. Վ. ԲԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, մայիսի 12, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Վաղուց է քեզնից նամակ չունիմ. թեև մամաս միշտ քո նամակները ուղարկում է ինձ:

Լսեցի, որ լավ ես սովորում. շա՛տ և շա՛տ ուրախ եմ: Լա՛վ եղիր, առո՛ղջ եղիր:

Ես շա՛տ զբաղված եմ զանազան բաներով. այս երկու օրս էլ Թիֆլիզ եմ գնալու մի քանի օրով. հետո շատ ժամանակ կունենամ, և ընդարձակ նամակներ կգրեմ վանքի վրա, հայր սուրբերին:

Մամայիդ գրեցի, որ քեզ Փարիզ տանի, մի քիչ հանգստանաս, Փարիզը տեսնես, ֆրանսերենդ նորոգես:

Հիմա քննություններդ մոտենում են. աշխատիր դասարանդ փոխես, և կմնա մի տարի: Մինչ այդ ես կգամ և կմտածենք քեզ ո՛ւր դնել, ի՛նչ սովորես և որտե՛ղ:

Ես լավ եմ, առողջ եմ:

Շատ կարոտով և հարգանքի բարևներ հայր տեսչին, հայր աթոռակալին, հայր Գաբրիելին, հայր Հովսեփին, Սահակին և բոլոր հայրերին: Ե՛վ ուսուցիչներիդ, և՛ ընկերներիդ:

A. Issahakian,
Erevan, Armenia (URSS).

Համբույրներով, քո՝
Ավետիք:

Կենտրոնական հյուրանոց,
Նալբանդյան փողոց:

199. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927>, հունիսի 8, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Նամակդ հիմա ստացա. Նիկոլային մանրամասն նամակ եմ գրում, որ վաղը կվերջացնեմ: Զարմանում եմ, որ նամակս չստացար: Թիֆլիզից բաց-քարտ ղրկեցի, որ «Աբու Մահարիս», Ամերիկայի տիպը, արտագրես ու ղրկես Ս. Փիրումյանի միջոցով: Հիշո՞ւմ ես, տիկին Նինոյի (Բեկլարին, Զավարյան) մոտ կա, ես տվի:

Ամսիս 1-ին քեզ 50 դոլլար ղրկեցի: Իրավունք չկա ավելին ղրկելու. ամսական միայն 100 ռուբլի: Ամսական այդքան կարող եմ ղրկել: Ստացա Մակինցյանից գրքերն ու նկարները և տետրակները, բայց Հեղուշի մոր կապոցը ես չեմ ստացել և չեմ էլ լսել նրա մասին: Քոչարի պատկերները ծախելու մասին կհոգամ:

Կարծեմ, քեզ գրել էի մեր տերտերի մահը, նույնպես Անուշ Թումանյանի և Ռիպա Մամյանի մահերը: Մեր Աբասը աքսորվեց: Աքան այստեղ է և խնամքիս տակ: Նրանք վրաս ամսական 30—35 ռուբլի են ծախում: Ամսիս վերջին գնում եմ Ղարաբաղ և Զանգեզուր, Շուշի, Գորիս, Տաթև, Մեղրի, հանքերը: Վիգենին նամակ եմ գրել, բայց պատասխան չունիմ:

Կարոտով բարևներ բոլոր մեր բարեկամներին:

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

200. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, սեպտեմբերի 3, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջապես ստացա ձեր նամակները: Երկար ժամանակ է, նամակ չունեի և շա՜տ էի տանջվում: Դրա համար էլ հեռագրեր տվի: Քո պատասխանը հեռագրով մինչև օրս

տակավին չստացա, բայց սիրելի Գեղամը հեռագրեց, և վերջ ի վերջո հանգստացա։

Ես թեև Երևան էի, բայց շարունակ, կարճ միջոցներով թափառում էի՝ երկիրը և ժողովուրդը տեսնելու համար։ Հիմա այլևս Երևանումն եմ և սկսում եմ պարապել։

Ջաղացի գործը շա՜տ խառն է. մինչև օրս մի քար քարի վրա չենք դրել. ուզում ենք հարցը պարզել։ Ես, Գեղամը և Աբասը (նրա կողմից, իհարկե) ուզում ենք Սաթենիկից և Թամարից ջաղացը գնել. նրանք չէին ուզում ծախել. մենք առաջարկում էինք, որ կամ նրանք ծախեն իրենց բաժիններ՝ մենք առնենք, կամ մենք ծախենք, իրենք առնեն։ Չէին ուզում ո՛չ առնել, ոչ ծախել. վերջապես գործը ընկավ դատարան, որ երկար քննությունից և վեճերից հետո՝ տրամադրություն ստեղծվեց մեզ վրա թողնելու, բայց դեռ վերջացած չէ։ Հակառակ դեպքում իմաստ չունի ջաղացը շինելու այս պայմանների մեջ, ուր կան անթիվ տերեր, որոնք իրարից քաշում են շարունակ, և կոիվների անսպառ աղբյուր է։ Ի՞նչ միտք ունի պարտքի տակ ընկնել, ջաղաց շինել և չօգտվել։

Մեր վրա մնալու և մեր ջանքերով շինելու դեպքում տարիներ մենք ի վիճակի չենք օգտվելու, որովհետև պարտքերը պիտի տանք։ Բայց հետո, կալվածք է, կմնա Վիգենի համար։

Մերոնք էլ հիմա մտադիր են Ամերիկա գնալու, Կոլյան կանչում է նրանց։ Եթե գնան, չգիտեմ ի՞նչ է լինելու ջաղացի ապագան և նրա հարցը։

Գրում ես մի շարք ծանր հարցերի մասին։— Վիգենի բժշկությունը, դպրոցի հարցը, ստիպենդիայի մասին, իմ վերադարձի մասին և այլն։

Ամենից առաջ շա՜տ ուրախ եմ, որ Վիգենը բժշկվում է. տա՛ աստված, որ հաջողվի։ Օպերացիան դարդակ բան է, պիտի անմիջապես անել, չսպասել իմ վերադարձին, որ կարող է ուշանալ։ Իսկ ստիպենդիան, պիտի խնդրես Նիկոլային, որ մեր բարեկամին հասկացնե, որ ես այստեղ ոսկու հանք չեմ գտել, որ վերաս պարտք կա եղբորս կնոջն ու որդուն օգնել, իսկ ձեզ կարող եմ ուղարկել ամսական 30 դոլլար. այնպես որ նա գոնյա պիտի բարի լինի հանձն

առնել Վիգենի կրթության մասին, մի քանի տարի, վճարելով այնքան, որքան նա հիմա տալիս է քեզ, նախկին տվածի կեսը, ոչ թե դեկտեմբերին վերջացնե, այլ շարունակե. շա՞տ եմ խնդրում այդ ձևով խնդիրը լուծել: Եթե Վիգենի ուսման փողը լինի, մնացածը դյուրին է, ես կլրացնեմ: Ուրեմն թող Վիգենին առնի իր ոսանողների թվի մեջ: Այս մասին խնդրում եմ և՛ Նիկոլային:

Գալով Մուրադ-Ռափայելյան դպրոցի վճարին, դա հեշտ է, մաս-մաս կարելի է տալ, կհամաձայնեն: Իսկ Վիգենը անպատճառ վերադառնա Վենետիկ, իր դպրոցը. մի տարի է մնացել. ափսոս է, որ մի տարվա համար իր բոլոր աշխատանքները ջուրն ընկնին. մի տարին ի՞նչ է, որ մարդ չդիմանա. մի վկայական ձեռք բերե, հետո ուր ուզում է՝ թող մտնի, ինչ ուզում է թող սովորի: Նա մեծ տղա է արդեն և պիտի լուրջ մտածե իր ապագայի մասին, իր հացի մասին. եթե ուսում չառնի ի՞նչ պիտի լինի նրա դիրքը հասարակության մեջ: Վերաքննություն ունի, թո՛ղ աշխատի: Վերաքննության պատճառով ո՞ր մարդ չպիտի զրկվի ուսումից: Ամո՛թ է:

Իսկ քո Փարիզ կամ Վենետիկ մնալու կամ գնալու մասին, ես ի՞նչ կարող եմ ասել. դու գիտես, որտեղ որ քեզ լավ ես զգում, և մանավանդ, որտեղ որ կարող ես մի քիչ փող շահել, այնտեղ էլ մնա: Իմ կարծիքով Փարիզն ավելի լավ է:

Ինչ վերաբերում է իմ Եվրոպա վերադարձին, դրա մասին մտածում եմ. նախ, որ ձեզ տեսնեմ և վերջնականապես որոշեմ, կարգի դնեմ ամեն բան, հետո ձեռագրերս և գրքերս հավաքեմ ու բերեմ Հայաստան: Բայց գալս իսկույն չի հաջողվի. նախ, որ վիզաների հարց կա. այստեղից արգելք չկա, միայն կուշանա, բայց Ֆրանսիան էլ պիտի վիզա տա. այդ մասին դու պիտի աշխատես՝ վիզա առնել, իսկ եթե Իտալիա ես գնում, իտալական վիզա պիտի ձեռք բերես:

Ես կարող եմ գալ Եվրոպա կարճ ժամանակի համար. ես չեմ ուզում Եվրոպայում ապրել, որովհետև թե՛ հոգնած եմ եվրոպական գաղթականի կյանքից և թե՛ ի՞նչ միտք հայրենիքից միշտ հեռու լինել: Ես հայրենիքում շա՞տ հարգված եմ ամեն կողմից. երկրի իշխանավորները ինձ սիրում

են ու հարգում. ես չեմ կարող այդ կապերը խզել: Բացի այդ, օրեցօր սիրտս կապվում է երկրի և խորհրդային կարգերի հետ, և տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտավոր զգալ և նպատակահարմար: Ինչքան էլ որ Խորհրդային իշխանությունը բացասական կողմեր ունենա, բայց և այնպես նրա դրական կողմերը գերակշիռ են, և մեր երկրի ապագան այս կարգերի մեջ՝ և՛ ապահովված, և՛ լավ: Երկրի, այս ավերված, թալանված և բնությունից աղքատ ու չոր երկրում, ամեն անկյունում տեսնում ես նոր իշխանության ստեղծագործ շունչը. անհուն եռանդ է թափվում երկիրը բարձրացնելու տնտեսապես. ջրային աշխատանքները չտեսնված գործեր են նույնիսկ ամբողջ Միության մեջ. քանի կանալներ են շինել և շինում են. հիդրոկայաններ, որոնց վրա 10—13 միլիոն փող է ծախսվում: Եվ ուրիշ բազմաթիվ շենքեր՝ հիվանդանոց, դպրոց, համալսարանի շենքեր, թատրոն, կայարաններ, ճանապարհներ, գործարաններ և ուրիշ շատ բաներ: Եվ այս ամենը տեսնելով, հրճվում է հոգիդ, և համոզվում ես, որ ներկա իրավակարգը ամենաանպատասխանորդ է մեզ համար, և ուրիշ մի պետականություն չի կարող և միտք էլ չունի վերադարձնելու սրան:

Հայերիս գլխին թափված զարհուրանքներից հետո ներկա դրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի չտալ և պիտի պաշտպանել:

Ես այսպես եմ զգում ու մտածում, և այսպես լինելով՝ ես չեմ կարող երկար ժամանակ հեռու լինել Հայաստանից: Եվ ուր էլ որ լինեմ, պիտի պաշտպանեմ այն, լավին լավ ասելով, վատին՝ վատ, ձգտելով իմ ներկայությամբ և իմ խոսքով վատը չեզոքացնել, ուղղել սխալները:

Ես խնդրում եմ շատ բաների ականջ մի՛ կախիր. ո՛չ հավատ ընծայե չափազանց գովեստներին և ո՛չ էլ հավատա չարամիտ քննադատներին. ճշմարտությունը այն է, որ երկրի բախտը ուղիղ ճանապարհի վրա է, և ապագան մխիթարիչ: 5—10 տարվա մեջ չէր կարող մի երեսի վրա լքած երկիր Ծվեցարիա դառնալ, բայց այդ կարճ միջոցում, դու հիմա կարող ես երկրի մի ծայրից մյուս ծայրը գնալ, լեռները բարձրանալ, լինել թուրքերի և քրդերի մեջ — և ամեն տեղ ապահով, անվտանգ: Սա մի երազ է, որ առաջ միայն

գիշերները քնի մեջ կարող էիր ունենալ: Դու կարո՞ղ էիր երևակայել, որ Սևանի վրա ամեն օր նավագնացություն, շոգենավակներ են բոլոր ափերը: Հիմա փաստ է:

Նամակս վերջացնեմ:

Ջերմ բարևիր Նիկոլային, Գաբոյին, Զուբարին և կնոջը, ընկեր Դանուշին, Գեղամին և կնոջը, հայտնելով բոլորին և վերջիններիս սրտագին շնորհակալություններս: Մակինցյանը, կարծեմ, դեռ Կ. Պոլիս չի գնացել. Աբասթումանի պիտի լինի: Հեղուշի կապոցի մասին լուր չունիմ:

Երկու գիրք եմ տպում. մեկը շուտով պատրաստ կլինի, մյուսը կտպվի աշնանը: Նրանցից շատ փող ստանալիք չունիմ, որովհետև արտատպումներ են. ստանալու եմ 1200 ռուբլի: «Աբու-Լալա Մահարին» ստացել եմ:

Համբույրներ և կարոտալի բարևներ քեզ և Վիգենին:

Ավետիք

201. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1927>, հոկտեմբերի 29, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Երեկ և առաջին օրը ստացա ձեզնից երկու նամակներ. բայց ձեր ուղարկած երկու վալիս-նամակները դեռ չեմ ստացել:

Շատ ուրախացա, որ ստացա Վիգենի դպրոց ընդունվելու լուրը: Վիգեն ջան, շա՜տ լավ սովորիր, որ ամոթով չմնաս:

Ես երեկ խնդրեցի ընկեր Մռավյանին, որ Վիգենին թոշակավորների մեջ առնի. խոստացավ կատարել խնդիրս. այդ մասին կհայտնե, ուր որ պետք է:

Երեկ էլ Սիսակը նամակ գրեց ընկեր Դանուշին Վիգենի մասին: Այս օրերս, նոյեմբերի սկզբին փող կուղարկեմ:

Իմ գալս այսպես շուտով չի կատարվի: Գործեր կան, որ պիտի կարգադրվի, ետո միայն կարող եմ գալ:

Առայժմ դրա մասին չեմ կարող հայտնել: Նոյեմբերին կտպվի գիրքս և կղրկեմ:

Կարեն Միքայելյանի առողջությունը հիմա լավ է. մոտ օրերս դուրս կգա հիվանդանոցից:

Շտապ եմ գրում, մի վարչության միջից եմ գրում, հետո ավելի երկար կգրեմ:

Կարոտով բարևներ Նիկոլային, Գաբոյին: Նույնպես Տեր-Օհանյաններին:

Շատ համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք

202. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, դեկտեմբերի 6, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա Ձեր նոյեմբերի 19 գրած նամակներդ: Շատ ուրախ եմ, որ լավ եք: Ես ձեզ շատ նամակներ եմ գրել, հիմա ստացած կլինեք. այնտեղ կա ամեն բան: Կրկնեմ:

Հոկտեմբերի մեջ ես գրիպով (խիստ տեսակի) հիվանդացա. երբ անցավ գրիպը, նկատվեց սրտի հիվանդություն (արիտմիա), անկարգ զարկեր, չափից անց արագ, և ջղերի քայքայում: Պատճառները սրանք են: Եվրոպայում ապրել էի կանոնավոր, խաղաղ կյանք, մանավանդ Վենետիկ, ցած երկրներում, ծովափում տարիներ և չափավոր կյանք: Իսկ այստեղ՝ շատ բարձր երկիր, խիստ կլիմա: Շատ քեֆեր արեցի, խմեցի, կերա ծանր կերակուրներ և շատ թափառեցի: Սարերը ելա, իջա: Այսպիսով սիրտս վնասեցի: Իսկ ջղերս քայքայվեցին՝ շա՜տ տխուր բաներ լսելով անցյալից: Զարհուրելի բաներ են տեղի ունեցել. սով, մահեր, ջարդեր, և այս ամենը դաշնակցության օրով, միայն բոլշևիկները եկան, և վերջացավ:

Ընկերներիս, բարեկամներիս կեսը չկան, ողբերգական վերջ են ունեցել: Գյուղերը դատարկվել են, մեր քաղաքի հին բնակչության մի մասը չկա. մեր ազգականները նույնպես, իսկ մեր ընտանիքից, գիտես, բան չի մնացել: Սրանք բոլորը խիստ ներգործեցին վրաս:

Հիմա ասեմ, որ գրիպը շատ թուլացրեց ինձ: Բժշկվում էի, հիմա բոլորովին լավ եմ, բայց թույլ եմ դեռ: Խորհուրդ չեն տալիս ձմեռը ճամփա ընկնել: Այստեղ լավ խնամք ունիմ. ընկերներս միշտ մոտս են. քաղաքի հայտնի բժիշկները պարտք համարեցին հասնել. համալսարանի պրոֆեսոր բժիշկներն էին խնամում: Կառավարությունը օգնում է ամեն կերպ. եթե ամառ լիներ, կղրկեին հանքային ջրերը. դրա փոխարեն ուղարկում են Եվրոպա, ճամփու ծախսը հոգալով:

Բայց, բացի բժշկների խորհուրդից, ես ստիպված եմ մնալ գոնե մինչև մարտ ամսի վերջը, որովհետև հիվանդությանս պատճառով գործերս հետաձգվեցին:

Գիրքս չտպվեց: Եվ ջրաղացի համար փող չստացանք, որովհետև վեճ ունեինք, իրար մեջ. պիտի վերջանար, որ փողը տային: Հիմա գրեթե վերջացավ, Սաթենիկը, Թամարը բողոքել են, բայց արժեք չունի:

Ամսուս վերջին գնում եմ Լենինական, կստանաք ջաղացի փողը: Հունվարին Թիֆլիզ եմ, կտպեմ գիրքս: Հյուր եմ Մակինցյանի մոտ: Փետրվարին՝ Երևան. մի քիչ կհանգըստանամ և կպատրաստվեմ մեկնելու. Մոսկվա կմնամ, այնպես որ ապրիլ ամիսը կլինեմ <այդտեղ>: Ընկ. Ս. Փիրումյանի ասածը ճիշտ է գրեթե: Փետրվարին նյութեր պիտի հավաքեմ, որ այդտեղ գրեմ Հայաստանի մասին, ցույց տալու համար փաստերով, որ ներկա կառավարությունը բարիք է մեր երկրի համար և այլն:

Վիգենի ստիպենդիայի հարցը Պողոսն իր վրա առավ լուծելու Թիֆլիզում. փողը չէ, որ խնայում են, այլ որոշ սահման կա արտասահման փող դուրս հանելու: Վերջ ի վերջո կլուծվի Վիգենի օգտին: Հանգիստ մնացեք:

Մոտ օրերս ուղարկեցի ձեզ 50 դոլլար. երբեմն թույլ են տալիս. հիմա էլ ուզում եմ խնդրեմ՝ թույլ տան Վիգենի ծախսերի համար՝ հագուստ, գիրք՝ մի 40 դոլլար ղրկեմ, այս ամսիս, իբրև բացառություն:

Դու պիտի աշխատես Փարիզի վիզան հետաձգել տալ մի 6 ամսով, պատճառաբանելով՝ հիվանդություն, նրա հետևանքով տնտեսական գործերի խանգարում:

Եղբայրդ լավ է, Լենինական է աշխատում հիմա: Ես

ո՞նց պիտի ապրեմ ցուրտ, խոնավ Փարիզում: Ես լավ եմ հագնված: Ամեն վատ լուրի մի՛ հավատա. Հայաստանը դուրսը շա՜տ աննարդար, անիրավ թշնամիներ ունի: Դրանց մասին հետո:

Քոչարի նկարներով հետաքրքրվող չկա, բայց որից որ կախված է, նա այնտեղ չէր: Կգա մոտ օրերս և կլուծի հարցը:

Համբուրյրներով՝
Ավետիք

203. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ

1928, ապրիլի 2

Отправлено с итальянским правописанием

Italia Sorrento,
Maxim Gorkiy.

Творцу ярких, смелых образов, певцу сокола и буревестника, прекрасному рассказчику и стилисту в день 60-летия его жизни, шлет сердечные поздравления Армянское литературное общество.

Аветик Исаакян.

2/IV, 1928 г. Эривань, ул. Налбандян, 16,
кв. С. Айвазян, —Аветик Исаакян.

Հեռագրի սույն պատճենին կից պահվում է հեռագրատան անդորրագիրը:

204. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, հունիսի 15, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երևի արդեն ստացար Բեռլինից 100 դոլար: Դա մեր կառավարությունը ուղարկեց իր կողմից. սրանից հետո Վիգենը ամսական 25—30 դոլար կստանա իբրև ստիպեն-

դիա: Կառավարությունը ամեն կերպ տրամադիր է օգնելու ինձ, բայց դե՛հ, գիտես, թալանված երկիր, հազար ու մեկ կարիք կա, ո՞ւմ հասնել, ո՞ւմ թողնել. պահանջը շատ, միջոցը՝ քիչ: Արտասահմանի հարուստ հայերն էլ քարի պես անտարբեր, անզգա:

Այս աղքատ միջոցներով ինչ որ արվում է, դարձյալ մեծ բան է: Եթե երկիրը խաղաղ մնա, Եվրոպան պատերազմ չփաթաթե Ռուսաստանի վզին, ապագայում լավ կլինի, որովհետև պետության հիմքերը լավ են դրված. ճգտումները լավ են, վարիչները եռանդուն և ժողովրդասեր. կարգադրությունները՝ առողջ, օգտակար. բայց երկիրը աղքատ է, պատերազմը քանդել, ջախջախել է ամեն բան:

Երկու օր առաջ ուղարկեցի 30 դոլլար, հունիսի համար: Երևի ստացար մայիսին ուղարկածս — 30 դոլլարը: Ձեռքս որ փող անցնի, մի կերպ կուղարկեմ:

Վաղը գնում եմ Լենինական. կմնամ մի 10 օր, հետո կգամ նորից Երևան և կաշխատեմ գնալ Կիսլավոդսկ, բժշկվելու, Նարզանի ջրերով: Նամակներդ ուղղիր Լենինական, փողոց 27, տուն 73. անունս միշտ սխալ ես գրում, ոուսերենը. գրում ես I տառով, գրի՛ր. Исаакян Аветик, Ленинакан.

Առաջին նամակում գրեցի, որ իմ գալը կլինի աշնանը. հանգիստ եղեք և մի՛ ջղայնացեք:

Գրում ես, որ Վիգենը ուզում է բժշկություն սովորել. իր կամքն է: Բայց լավ կլիներ քիմիա, էլեկտրականություն, հիդրավլիկա սովորեր. կարողանար շաքար շինել սովորել. բայց խորհրդակցիր ուրիշների հետ, իր ուսուցիչների հետ և այլն:

Եթե չկարողացավ դպրոցն ավարտել, մի՛ ճնշիր, մի՛ ձեղացրու, թող մի տարի էլ ուշ ավարտե: Վնաս չունի, միայն թե առողջ լինի:

Շատ ցավացի խեղճ Արմենակի և Թեոդիկի մահերով, ափսոս էին: Ցավում եմ տիկ. Օհանյանի հիվանդության վրա. բարևի՛ր նրանց հատկապես:

Եր. Քոչարին ասա, որ նկարները մոտս են: Թանգարանի պատկերներ գնող և գնահատող անձը՝ Դրամբյանը, 10 ամսից ի վեր Մոսկվա—Լենինգրադ է. նա պիտի գա, որ մի

բան անենք: Ուրիշները չեն խառնվում այդ գործի մեջ: Բայց խելքս չի կտրում, թե առնեն: Եթե մերժեն՝ կհանձնեմ քրոջը՝ Թիֆլիզ:

Շատ բարևներ Գեղամին, կնոջը, Հոբանյանին, Նիկալային, Գաբոյին և բոլոր բարեկամներին:

Համբույրներով քեզ և Վիգենին՝
ձեր **Ավետիք**

205. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1928, հունիսի 24, Լենինական

Սիրելի Գարեգին.

Այս երկու օր է, որ լավ եմ. եկած օրից հիվանդացա. մրսել էի: Կմնամ դեռ մի շաբաթ ևս: Սիսակին հարցրու՝ նամակ կա՞ ինձ համար եկած. ավելի լավ է, պահել մինչև գալս, տեղափոխելիս կարող է կորչել: Իսկ եթե տեղափոխել է, գրի՛ր ինձ, որ հետևեմ այստեղ փոստատանը: Այստեղ կարգն այսպես է:

Դուք ընկերներով ի՞նչ եք անում. ի՞նչ նորություններ կան: Երևի լավ տաքեր են այդտեղ: Այստեղ դեռ տանելի է, միայն՝ փոշի, փոշի:

Համբույրներով և բարևներով՝
Ավետիք

Լենինական,
Փողոց 27, տուն 73,
Ա. Իսահակյան.

206. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, օգոստոսի 2, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն.

Վերջին նամակդ՝ քո և Վիգենի գրած՝ ստացա:

Այս երկու օրս ես Երևան եմ. շուտով կլուծվի հանքային

ջրերը գնալու հարցը. եթե չեղավ, կմնամ Լենինգրադում:

Կառավարությունը պնդում է, որ 100 դոլլար կարգադրված է Բեռլին, Ղարաբեկյանին, որ հանձնեն ձեզ: Ինչո՞ւ է ուշացել՝ զարմանում եմ:

Մի քանի օր առաջ ուղարկեցի 30 դոլլար: Եվ երկու օր առաջ, «ՀՕԿ»-ի միջոցով, 50 դոլլար. կդիմես Փարիզի ճյուղին, ՀՕԿ-ի, Եապի Կարիքյանին, որ հանձնեն ձեզ 50 դոլլարը:

Կարիքյանը կամ Փարիզ է լինում, կամ Բրյուքսել:

Նամակ գրիր Լենինգրադ:

Ես լավ եմ:

Համբուրներով ձեր՝ **Ավ. Իսահակյան:**

207. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, օգոստոսի 29, Լենինգրադ

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացել եմ բոլոր նամակներդ, և վերջին նամակը՝ Վիգենի բացիկով (Էֆֆելի):

Ես հիմա Լենինգրադ եմ. գնացել էի մի 10 օրով Լոռի, Գարեգին Լևոնյանի հետ. լավ ժամանակ անցրինք: Մոտ օրերս մի քանի օրով գնում եմ Երևան. գուցե հաջողվի Կիսլավոդսկ գնալու: Կառավարությունն է ուղարկում, բայց որովհետև տեղերը առաջին հերթին տրվում են հիվանդ բանվորներին, այդպիսով մեր հերթը ուշանում է:

Վիգենի ստիպենդիան, կարծում եմ, պետք է հաշվել մայիսից կամ հունիսից: Այդ կպարզվի Երևանում, երբ գնամ: Կգրեմ այդ մասին:

Լավ ես հասկացել, որ Վարդանյանը սուտ է խոսում: Աշնանը, ուրեմն մինչև նոյեմբեր, կհաջողվի Եվրոպա գալս, մեր նախագահի խոստման համաձայն: Ծա՜տ հույս ունեմ, տեսնենք: Դու մի՛ չղայնացիր, ուրիշների խոսքին էլ մի՛ հավատար և նամակներդ հանգիստ տոնով գրիր:

Ես այնպիսի անցագիր պիտի առնեմ, որ դյուրին լինի մի տարուց հետո վերադառնալ, որովհետև ես չեմ ուզում

մշտապես Եվրոպա մնալ. զզվել եմ Եվրոպայից. գամ գործերս վերջացնեմ և դառնանք միասին:

Ուրախ եմ, որ Վիգենին ուղարկում ես ծովափ: Միայն որոշ չգրեցիր ի՞նչ քննություններ մնացին, և արդյոք կհաջողվի՞ նրան համալսարան մտնել: Ինձ թվում է, որ նամակիդ մեջ մի բան ծածկում ես. մի խոսքով պարզ գրիր: Կարծում եմ, որ եթե Վենետիկ մնար, հիմա վերջացրած կլիներ: Բայց անցածն անցած է:

Երևի արդեն իմացած կլինես, որ Գեղամ Կոստանյանի տունը քանդվեց, փուլ եկավ. անցած երկրաշարժի հետևանքն էր: Լավ էր, որ մարդկային զոհ չեղավ: Խեղճ հարսիկը մոլորվել է, չգիտե ինչ անե:

Չգրեցիր, թե ի՞նչ եղավ Ավետիսը. աչքերը ինչպե՞ս են, լավի դառնո՞ւմ են, արդյոք:

Շա՞տ ցավեցի Քոչարի կնոջ համար. մխիթարիր Քոչարին իմ կողմից:

Նամակներդ գրիր Լենինականի հասցեով: Ջերմ բարևներս արա Գեղամենց, Ջավոյենց, Տիգրան Ջավենենց, Նիկոլային, Գաբոյին, Տեր-Օհանյաններին, փոքրիկ Ջավենին, բարևիր հատկապես Համաստեղին և բոլորին:

Բարևներ մերոնց կողմից:

Համբուրներով քեզ և Վիգենին, քո՝ Ավետիք

208. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, սեպտեմբերի 13, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջին նամակդ ստացա Լենինականում:

Մի շաբաթ է Երևան եմ. ամսիս 8-ին տեղափոխեցի 30 դոլլար, նախկին հասցեովդ: Կհարցնես:

Վիգենի ստիպենդիան հաստատ է և որոշ. կանոնավոր կերպով կստանա Բեռլինից. կառավարությունը այդ մասին կարգադրել է Մ. Կարաբեկյանին, այնպես որ դու նրան կգրես: Մեր նախագահը, ընկեր Սահակն ասաց, և ուրեմն հարցը վերջացած է:

Հավանական է, որ մոտ օրերս գնամ Կիսլավոդսկ. սպասում ենք հեռագրի. հենց որ հեռագիր եկավ և տեղը պատրաստ լինի, գնալու եմ մի ամսով, գուցե մի քիչ երկար բժշկվելու վանճաներով:

Կիսլավոդսկ գնալուց առաջ կգրեմ:

Առայժմ ճամակները Լենինականի վրա ուղարկիր:

Փարիզ գալուս մասին խոսք կլինի վերադարձիցս հետո, ամենից առաջ պետք է բժշկվել: Փարիզ երբ լինի՝ կգամ:

Գալով Վիգենի ինչ մասնագիտություն ընտրելու մասին, այստեղից չեմ կարող հրահանգներ տալ, դուք խորհրդակցեք բարեկամների հետ, թե ի՞նչ ընդունակություններ ունի Վիգենը, ի՞նչ է սիրում, ի՞նչ է կարող: Թո՛ղ լինի իր կամքի և ընդունակությունների համաձայն:

Ես լավ եմ և հույս ունեմ ավելի լավանալու: Ջերմ բարևներ բոլոր բարեկամներին:

Չուբարի մասին լուր չունիմ. միայն գիտեմ, որ առողջ է, հիվանդ չէ:

Համբուրներով քեզ և Վիգենին,
ձեր՝ **Ավետիք**

209. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1928>, սեպտեմբերի 25, Կիսլովոդսկ

Սիրելի Գարեգին.

Չորրորդ օրն է այստեղ եմ: Լավ սանատորիա է, լուրջ և սոլիդ: Պրոֆեսորների, գիտնականների, ինժեներների տեղ է: Հասարակ մարդիկ չկան: Բոլորս էլ լուրջ, տարիքով և հիվանդ: Մինչև հոկտեմբերի վերջը կմնամ:

Անցա ռազմավիրական ճանապարհով. շա՜տ լավ էր, և շա՜տ գոհ եմ. լավ եղանակ էր:

Մնացածը կլսես Պողոսի ճամակից, որ իսկույն կհանձնես նրան:

Ծատ բարևներով,
քո՝ **Ավետիք**

210. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, սեպտեմբերի 26, Կիսլովոդսկ

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Մոտ մի շաբաթ է այստեղ եմ, մի ճշանավոր սանատորիայում. ուղարկված եմ կառավարության կողմից: Պիտի մնամ մինչև հոկտեմբերի վերջը:

Հույս ունեմ սիրտս ամրացնելու վանճաներով, ղիետով և այլ միջոցներով:

Երևանից արդեն գրեցի քեզ գնալուս մասին: Սեպտեմբերի սկզբներին ուղարկեցի 30 դոլլար: Հոկտեմբերի վերջերին կարող եմ նորից ուղարկել 30 դոլլար: Բեռլինից կանոնավոր կերպով կստանաս Վիգենի ստիպենդիան. գրիր այդ մասին Կարաքեշիշյանին, Միշա:

Արտասահման գալս նորից ուշացավ այստեղ լինելուս պատճառով. մնում է, որ, երբ Երևան դառնամ, սկսեմ նորից խնդիրս, և հույս ունիմ, որ մեր նախագահի խոստման համաձայն անցագիր ստանամ: Ջղայնանալու պետք չկա, ամեն ինչ լավ կլինի. պետք է համբերել և առողջությունը պահել:

Հոգս տար և խիստ հսկիր Վիգենի առողջության մասին. Փարիզը մեծ և վտանգավոր քաղաք է. իհարկե գիտես ինչ եմ ուզում ասել: Նա հասկացող տղա է, բայց նորից հիշեցրու և հսկիր:

Գալով նրա մասնագիտության ընտրությանը՝ թող սովորի այն, ինչ որ ուզում է, ինչ որ կարող է, ինչ որ սիրում է: Բժշկություն,— թո՛ղ լինի բժշկություն, միայն թե լավ սովորի, աշխատի, տքնի, ուժ ու եռանդ թափե:

Մի խոսքով՝ մարդ դառնա՝ պետքական թե՛ իրեն և թե՛ հասարակության համար:

Նամակները ուղղիր նորից Լենինական՝ մեր տան վրա. կղրկեն ինձ:

Ես այստեղ ապրում եմ գիտնականների և պրոֆեսորների սանատորիայում՝ Кисловодск, санаторий Цекубу.

Շատ բարևներ Գեղամին, կնոջը, Զավենին, Սիրանուշին, փոքր Զավենին, Նիկոլային, Տեր-Օհանյաններին, Զա-

վոյենց, Գաբոյին և բոլոր հարցնողաց: Ինչպես և Զորանյանին, Համաստեղին և այլն:

Համբույրներով քեզ և Վիգենին,
Ս.վետիք

<Հ. Գ.> Իհարկե, մանրամասն կգրես Վիգենի քննությունների մասին: Առանց թաքցնելու:

Ավետիք

211. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, հոկտեմբերի 22, Կիսլովոդսկ

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Ստացա Լենինականց ուղարկած ձեր նամակները: Ես այստեղից արդեն մի նամակ գրել եմ ձեզ Շավիլի հասցեով: Իսկ սեպտեմբերին ուղարկել եմ փող՝ 30 դոլլար, Bois de Baulague-ի հասցեով:

Ամսիս 25-ին կթողնիմ Կիսլովոդսկը, Թիֆլիզ և Լենինականց մի քանի օր մնալով, կերթամ Երևան, և կսկսեմ Փարիզ գալու համար դիմումը կրկնել. կարծում եմ, որ խոստումները կկատարվեն:

Երևանից փող կտեղափոխեմ: Չե՞ս կարող Գեղամից էլի մի 50 դոլլար ստանալ, ես այստեղ կվճարեմ: «ՀՕԿ»-ը այլևս չի ընդունում:

Առողջությունս հիմա բավական լավ է, բայց ես արդեն ծեր մարդ եմ. խիստ դիետ. ծխել չկա, խմել չկա. քիչ ուտել, շուտ-շուտ ուտել, ծանր մաև գալ, քիչ մաև գալ, շուտ քնել, գիշերը չպարապել. չհուզվել, մի խոսքով՝ ծերացած մարդ:

Ձերոնց մասին միամի՛տ եղիր, լավ են, վատ բան չեմ լսել: Մերոնք էլ լավ են:

Երևանից կղրկեմ պատկերս, նոր նկարված:

Ինչպե՞ս անցան Վիգենի քննությունները: Բեռլինից ստացա՞ր թոշակը, գրիր իսկույն դրանց մասին:

Գրիր Երևանի հասցեիս:

Դիմի՛ր նոր ֆրանսիական վիզա ստանալ<ու համար>, եթե հարկավոր է, գուցե հնով կարելի լինի գալ. մի խոսքով, լավ տեղեկացիր. դիմի՛ր դարձյալ մեր բարեկամի միջոցով: Դու լավ գիտես արդեն, թե ում պիտի դիմես:

Ի՞նչ պիտի անե Վիգենը, եթե քննությունը չկարողանա բռնել. դրա մասին չես գրում. անշուշտ մտածել ես: Դրա մասին էլ գրիր, եթե կտրվեց քննությունից:

Շատ բարևներ բոլոր բարեկամներին. Զավոյենց, Նիկոլային, Գաբոյին, Զավենին, կնոջը, տիկին Երվանդյանին, փոքր Զավենին, վարդապետներին Ս. Ղազարի, բժ. Թորգոմյանին, Տեր-Օհանյաններին, Համաստեղին, Չոբանյանին, Դավիթ-Բեկին, Մանյային: (Չուբարը կարծեմ հիմա Բաքու է, վաղուց է չեմ տեսել նրան, Կիսլովոդսկ գալուս՝ նա մի քանի օր առաջ Թիֆլիզումն է եղել): Եվ բոլորին, որոնց չեմ հիշում այս րոպեիս:

Համբույրներով քեզ և Վիգենիս:

Ձեր՝ **Ավետիք**

Ո՞ր մասումն եք Փարիզի, 5 թե՞ 14 (երկուսն էլ գրել ես):

212. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, նոյեմբերի 17, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա վերջին նամակդ, որ գրում ես, թե Բեռլինից գրում են, որ ստիպենդիայի մասին կարգադրություն չկա: Ուղղակի չափազանց զարմանալի է դա: Նախագահը՝ Սահակը անթիվ անգամ հայտնել է ինձ, որ դա կարգադրած է: Հիմա նա այստեղ չէ, Մոսկվա է. մի քանի օրից հետո կգա և խնդիրը կպարզվի:

Բայց ավելի լավ կլիներ, որ դու այդտեղ գտնեիր մի ստիպենդիա: Այնքան գտնում են ուրիշները. մի՞թե դու չես կարող: Աշխատիր: Իմ գալն էլ կախված է նախագահի վերադարձից. խոստացել էր աշնանը. հիմա արդեն ժամանակն է: Տեսնենք ի՞նչ դուրս կգա:

Կիսլովոդսկուց գրել էի, որ նորից վիզա հանենիր Ֆրանսիա մտնելու համար. երևի աշխատում ես և կհաջողիս:

Հիմա այլևս բանկը փող չի տեղափոխում. երեկ փող պիտի ուղարկեի, մերժեցին: Փող տեղափոխելու իրավունքը պիտի Փարիզից գա: Պետք է դիմես Փարիզի Ռուսական միության դեսպանատանը, երևի կոնսուլին, հայտնես — ապացուցես, որ դու և Վիգենը ապրում եք իմ միջոցներով, գտնվում եք իմ խնամքի տակ, և նրանից թուղթ առնես այդ բանը հաստատող և ուղարկես ինձ. նոր այդ թղթի հիման վրա բանկը կհամաձայնվի փող տեղափոխել: Ծուտով արա այդ բանը:

Առայժմ դու Գեղամից 50 դոլլար վերցրու, այն պայմանով, որ ես այստեղ վճարեմ՝ ում որ նա կկամենա:

Զմոռանաս Գեղամին ասել, որ իր եղբայրը՝ Հովհաննեսը ողջ և առողջ է և ուսուցչություն է անում Բաքվում:

Տրամադրություն չունիմ երկար գրելու. հույս ունիմ, որ Վիգենի քննությունը լավ անցավ և լավ է ձեր երկուսիդ առողջությունը:

Համբույրներով՝ ձեր **Ավետիք**

<Հ. Գ.> սեպտեմբերին ուղարկածս 30 դոլլարը Bois de Baulague-ի հասցեով ստացա՞ր, թե՞ ոչ:

213. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, դեկտեմբերի 8, Երևան

Սիրելի Սոֆի ջան.

Անսահման ուրախացա Վիգենի հաջողության համար: Մի ծանր քար ընկավ սրտիս վրայից:

Խորհուրդս գյուղատնտեսությունն է, որ մեծ ապագա ունի Հայաստանում, իսկ Վիգենը պիտի Հայաստանում գործե, իրեն ժողովրդի մեջ և իրեն ժողովրդի համար: Պիտի ապրի Հայաստանում, պիտի սիրե մեր ժողովուրդը, նրա կուլտուրան, նրա զարգացումը, նրա ապագայի համար աշ-

խատե: Սրանից դուրս երջանկություն չկա — ո՛չ մի տեղ, միայն հայ ժողովրդի ծոցում, նրա հետ:

Իմ արտասահման գալս, եթե խոստումները կատարվեն, շուտով գլուխ կգա. մի կամ երկու ամսվա հարց է: Սպասում եմ ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյանին, որ վերադառնա Մոսկվայից և վերջացնե: Չեմ կարծում, որ արգելքներ լինեն. ամենաշատը մեկ տարի կմնամ, հետո միասին կդառնանք, իսկ Վիգենը կմնա, կսովորի:

Հեռագրեցի Մոսկվա ընկեր Սահակին, որ ձեզ փող տեղափոխելը կարգադրե. մոտ 20 օր կա:

Հետո գրեցի, որ Միության կոնսուլին դիմես, ցույց տաս, որ տղան ուսանող է և դուք կարիքի մեջ եք, որ ես Երևան եմ, և այստեղից եք փող ստանում, ինձնից. նա թուղթ կտա քեզ, և կղրկես ինձ: Այդ դեպքում բանկը փող կտեղափոխե:

Բայց այս երկու օրս մի ուրիշ ճամփա ցույց տվին ինձ. վաղը պիտի փորձեմ, գուցե հաջողվի:

Փողի հարցը շա՛տ է տանջում ինձ. դա որ լուծվի, մնացածը ոչինչ:

Առողջությունս բավական լավ է. երբ ջղերս լավ են լինում, հոգիս հանգիստ և քիչ եմ տանջվում, այն ժամանակ սիրտս էլ լավ է աշխատում:

Մեկ գալի ձեզ մոտ, Վիգենի դրությունը բոլորովին ապահովեի, «Ուստա Կարոն» էլ վերջնականապես ավարտեի, տպեի, հետո ինչ կլիներ, թող լիներ: Մահը մերն է, մենք՝ մահինը:

Ուղարկում եմ այս երեք լուսանկարս քեզ և Վիգենի համար:

Շատ սիրով կբարևես Գեղամին, Սիրանուշին, կհամբուրես երեխային: Կբարևես մեր թանկագին բարեկամներին՝ Նիկոլային, Զավեններին, փոքրիկ Զավենին, Տեր-Օհանյաններին. բժիշկ Թորգոմյանին, Չորանյանին, Չուբարի կնոջը, Դրաստամատին և կնոջը, կբարևես Դանիել-Բեկին, Զավոյենց, Մխիթարյաններին և բոլորին:

Ընկեր Դանուշը գուցե հիմա այդտեղ է, բարևիր. նա քեզ շա՛տ պետք կգա. շա՛տ ազնիվ մարդ է:

Շատերը բարևում են քեզ՝ Սիսակը, Գարեգին Լևոնյանը, Միշոն, կինը, Վիկտորյան և շատերը:

Համբույրներով,
քո՝ Ավետիք

Ներփակ նամակը հանձնիր տիկ. Դրաստամատին:

214. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, դեկտեմբերի 12, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Մի երկու օր առաջ ապահովված նամակ գրեցի և ուղարկեցի երեք հատ պատկերներ:

Փողի հարցը այս երկու օրս կորոշվի, նույնպես ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանը կգա և դրությունս կորոշվի:

Գլխավորը ձեզ փող հասցնելն է, իմ գալը վնաս չունի, թե մի քիչ էլ ուշանա:

Գրել էի, որ Վիգենը գյուղատնտեսություն սովորի, բոլոր կուրսը և մասնավորապես pommelogie, բայց դուք տեղում ավելի լավ կարող եք ընտրել. քիմիա, ինդուստրիել, էլեկտրական գիտություններ, և վերջապես ինչ որ ինքը սիրում է, կարող է և սրտովն է:

Ռուբենի ընտանիքը ուզում է Ամերիկա գնալ, անցագրի դիմում տվել են, բայց դեռ պատասխան չկա: Ջրաղացը շինվել է, բայց պարտքեր պիտի տա: Առայժմ օգուտ չունի: Բայց էլի լավ եղավ, որ շինվեց: Այս տարի Հայաստանում շատ մեղմ ձմեռ ունենք, տեսնենք ինչպե՞ս կլինի: Բոլորս լավ ենք, առողջ և աշխատում ենք:

Եթե խաղաղություն լինի երկրում և դուրսը, լավ կլի՛ի Հայաստանի վիճակը. օրեցօր առաջ է գնում, տնտեսապես և կուլտուրապես: Շատ նոր, մեծ շենքեր են շինված ու շինվում են: Լենինականը հիմա ունի էլեկտրակայան, փարթամ լույս:

Արթիկի տուֆը մեծ ապագա է խոստանում, Լենինականից մինչև Արթիկ, Ալագյազի տակը, երկաթուղու գիծ են

շինում: Իսկ Երևանի մոտ չոր (ղըռ) տեղերի ջրումը, որի վրա առնվազն 14 միլիոն ռուբլի են ծախսում, բոլորովին կփոխե Հայաստանի վիճակը. այդ բոլորը, մոտ 44000 հեկտար հող, այգիներ պիտի տնկվին. Հայաստանը պարտեզ կդառնա:

Մի 10 տարի հետո անճանաչելի կլինի մեր երկիրը: Երանի՜ երիտասարդներին, որ պիտի տեսնեն ու վայելեն:

Մոռացա առաջին համակի մեջ գրել, որ Փանոս Թերլեմեզյանը նկարում է ինձ. մի-երկու օրից հետո կվերջացնե: Շա՜տ հաջող նկար է: Բարևում է ձեզ:

Շատ սիրով բարևներ Գեղամին, կնոջը, համբուրներ երեխային և բարևներ Նիկոլային:

Շատ համբուրներով,
ձեր՝ **Ավետիք**

215. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, դեկտեմբերի 29, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Այսօր ստացա համակդ, և արդեն պիտի գրեի:

Այսօր ուղարկեցի Վիգենի անունով 30 դոլլար. հիմա իրավունք տվին փող ուղարկել ամսական 30 դոլլար, Վիգենի անունով, իբրև ուսանողի:

Իսկ մի երկու օր առաջ ընկեր Սահակը հեռագրով 100 դոլլար կարգադրեց, որ Փարիզի խորհրդային торгпред-ը քեզ հանձնի 100 դոլլար. երևի արդեն ստացար:

Վիգենի ստիպենդիան որոշ է, բայց ցավն այն է, որ ամեն չորս ամիսը մեկ՝ կարգադրություն է լինում. այդպես է բոլոր ստիպենդիաների դրությունը: Դրա համար գրել էի, որ մի փոքր բան գտնեիր Վիգենի համար մինչև գալս: Իսկ իմ գալս խոստանում են և հույս ունեմ, որ կհաջողվի:

Գլխավորն էն է, որ կարողանամ ձեզ փող հասցնել:

Կոլյայից հույս չունիմ, թե փող ուղարկե. նա իր հոր տղան է: Վիգենը, ինչպես գրել էի, շա՜տ լավ կանե, որ սովորի գյուղատնտեսություն, կամ քիմիա, ո՛չ թե բժշկություն:

Իսկ սինեմաև — դրա մասին գաղափար չունիմ. լավ կլինի գյուղատնտեսություն կամ քիմիա սովորի, հետո սինեմայի արվեստը: Դեռ պատանի է, շա՜տ բան կարող է սովորել:

Ես լավ եմ. Երևանը այս տարի տաք է անցնում, մրսել չկա: Ապրում եմ, միայն տրամադրությունս անհանգիստ է, լավ չեմ կարող աշխատել:

Բայց պետք է հուսալ, սպասել, տոկալ. վերջը լավ կլինի:

Շնորհավորում եմ բոլորիդ նոր տարին: Ջերմ բարևներ Գեղամին, Սիրանուշին, բժ. Թորգոմյանին, Նիկոլային, Քոչարին, Զավենիներին, Գաբոյին, Դրաստամատին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենին:

Ձեր՝ **Ավետիք**

Նամակդ անսովոր կերպով շա՜տ ուշ եկավ — Փարիզում շա՜տ էին պահել:

216. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1928, դեկտեմբեր, Երևան>

Շա՜տ սիրելի Վիգեն ջան.

Երբեք կյանքիս մեջ այնքան չէի ուրախացել, որքան ուրախացա, լսելով հաջող քննություն բռնելդ և դիպլոմ ստանալդ: Ապրի՛ս, տղա՛ս, շա՜տ ապրիս: Հիմա քո բախտդ որոշ է և վճռված է. կյանքը առաջդ է, մնում է նույն սիրով և հաջողությամբ շարունակես: Մի քանի տարի էլ լուրջ աշխատանք, և կլինիս կյանքիդ տերը, կամքիդ իշխանը, իսկական մարդ:

Աշխատի՛ր, պարապի՛ր և քեզ առողջ պահիր, և եղիր քաջ, համարձակ, և մի՛ վախեցիր արգելքներից ու խոչընդոտներից:

Ազատ ժամերիդ հետևիր հայկական կյանքին, Հայաստանի իրականությանը և սիրի՛ր Հայաստանը և նրա ազնիվ, աշխատավոր, շա՜տ տառապած ժողովրդին, ու պատրաստվիր նրան ծառայելու՝ Հայաստանում, ազնիվ և անկեղծ կերպով:

Իմ խորհուրդս է սովորես գյուղատնտեսություն՝ agriculture, agronomie և հատկապես նրա պտղագիտական, մրգեր հասցնելու մասը, fruit conserve շինելը, չորացնելը: Պտուղների նոր տեսակներ առաջ բերելը, ազնվացումը պտուղների՝ խաղողի, դեղձի, ծիրանի, խնձորի, տանձի և այլն:

Եվ առհասարակ գյուղատնտեսություն:

Ֆրանսիայում շա՜տ զարգացած է պտուղների այդ գիտությունը, որովհետև պտուղներ կան Եվրոպայում միայն Ֆրանսիայում, Իտալիայում, Սպանիայում, իսկ այդ մշակման ճյուղը գիտնականորեն՝ միայն Ֆրանսիայում:

Հայաստանում շա՜տ մեծ ապագա ունի պտուղների գործը, ո՛չ միայն Հայաստանում, այլև ամբողջ Խորհրդային Միության մեջ: Շա՜տ քիչ մասնագետներ կան այդ ճյուղի մեջ. Հայաստանում գրեթե չկան, այլ կան պանիրի, յուղի, գինու:

Հիմա Հայաստանում պիտի ջրվեն նոր 40000 հեկտար հողեր Երևանի մոտ, հատկապես միայն այգիների համար — պտուղների համար: Գյուղատնտեսություն-այգեգործությունը շա՜տ գեղեցիկ գիտություն է և գեղեցիկ գործ, և՛ առողջարար է, և՛ բանաստեղծական: Բնության մեջ պիտի լինես՝ հողի, ջրի, արևի հետ. գյուղացիների, մշակների, բանվորների հետ, որ շա՜տ սիրելի մարդիկ են: Գործ կունենաս ձիերի, եզների հետ, անասունների հետ, որ ավելի լավ է, քան հիվանդների հետ:

Բացի սրանից, շա՜տ ապահով գործ է. ամեն տեղ այդ մասնագետների մեծ պահանջ կա:

Բժշկություն խորհուրդ չեմ տալիս. ծանր գործ է, բարդ, դժվար: Բժշկական գիտությունը երկարատև բան է նրա սովորելը. կասկածելի է նրա արժեքը. մինչև փորձված բժիշկ լինելը, շատ մարդ պիտի մեռցնել. շատ շաղլատանություն կա բժշկության մեջ, և վերջապես, անթիվ բժիշկներ կան ամեն տեղ, որոնք աղքատ վիճակի մեջ են. միայն անվանի բժիշկներն են հաց վաստակում: Եվ վերջապես, դու հոգով նուրբ տղա ես, քնքուշ ես. բժիշկի համար պետք է լինել պինդ ջղերով մարդ, գործ ունենալ դիակների, մեռնողների հետ — շա՜տ ծանր բան է, քո գործդ չէ:

Բժիշկը մի քիչ շաղլատաև, աֆերիստ պիտի լինի. դու այդ չես կարող լինել և պետք չէ, որ լինես:

Գյուղատնտեսությունը ազնիվ գործ է, խաբեբայություն չկա:

Ատամնաբուժությունը դատարկ բան է. գուցե շահավետ է, բայց չեմ ուզում այդ սովորես. հասարակ բան է. ինչքան ուզում են գովեն: Ես չեմ ուզում: Ինչ գործ ուրես հոտած բերանների հետ:

Եղիր գյուղատնտես, կլինես առողջ, կլինես հասարակական գործիչ և մեծ գործ կկատարես մեր նոր ոտքի կանգնող Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Կմտցնես նոր գիտական մեթոդներ, կուլտուրա, մեքենաներ, և ազատ բնության մեջ շա՜տ ժամանակ կունենաս կարդալու, մտածելու և ուսումնասիրելու բնությունը, բնական գիտությունները, բոտանիկա, զոոլոգիա, գեոլոգիա, բիոլոգիա:

Կարոտալի համբույրներով, քո հայր՝ **Ավետիք**

217. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1929, հունվարի 25, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա վերջին նամակդ: Երևի արդեն ստացար 100 դոլլարը և դեկտեմբերին Վիգենի անունով ուղարկած 30 դոլլարը, ինչպես և հունվար ամսին ուղարկածս 30 դոլլարը:

Սիրելի Գեղամին ասա, երբ և ում որ կուզե իսկույն կուղարկեմ 100 ռուբլին:

Արսեն քեռուն ասա, որ հիմա ոչ մի հնարավորություն չկա նրա պայմանը կատարելու. Ռուսաստանը մի երկիր է, ուր խիստ կերպով արգելված է ամեն մի սպեկուլյացիա: Վերջին դեկրետով, դոլլարը ամեն տեղ արժե 2 ռուբլի. այդպես գնվում և ծախվում է: Թո՛ղ նա միջոցներ գտնի 50 դոլլար հասցնելու, ում որ ուզում է, բայց ո՛չ իմ միջոցով. ես ոչ սպեկուլյանտ եմ, ո՛չ էլ մութ, արգելված գործերով զբաղվող:

Ասում են՝ Փարիզում խիստ տարածված է գրիպը. լավ պահեցեք ձեզ. շատ վախենում եմ: Ես արդեն Փարիզից այդ բանի մեջ շա՜տ եմ վախենում. մտածում եմ՝ երբ գամ, ի՞նչ պիտի անեմ, որ ազատվեմ այդ սարսափելի հիվանդությունից, որ մահացու կլինի իմ թույլ սրտի համար:

Ընկեր Ա. Եսայանին հարևանցի կերպով տեսա. նոր է եկել, շա՜տ զբաղված է, կտեսնեմ:

Բարևներս հայտնիր Գեղամին, կնոջը, բժ. Թորգոմյանին, տ. Արաքսում և իր ամուսնուն, Գաբոյին, Նիկոլային և բոլոր բարեկամներիս, նույնպես շնորհակալություններս;

Համբույրներով՝ **Ավետիք**

218. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1929, հունվարի 25, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Գրում ես, որ սովորելու ես արխեոլոգիա, մուզեոգրաֆիա և իր ճյուղերը: Շա՜տ լավ բաներ են, լավ է ևս ֆիլմը, բայց ինչ որ սովորելու ես, կարգին, հիմնավոր, լուրջ սովորիր: Ես ո՜չ մի բան ստիպմունքով չեմ ասել կամ պահանջել: Ինչ որ սիրտդ ուզում է, այն էլ սովորիր: Ես ուզում էի այնպիսի բաներ սովորեիր, որ պետք գայիր Հայաստանին և կապվեիր հայ ժողովրդի, նրա կուլտուրայի հետ: Արխեոլոգիան և իր ճյուղերը քեզ կկապեն մեր երկրի հետ. Հայաստանը, և դրացի երկրները, արխեոլոգիայի անսպառ մուզեյ են:

Լավ ես անում, որ սովորում ես անգլերեն և ռուսերեն. հիմքը դիր, մանավանդ ռուսերենի, հետո Մոսկվայում կկատարելագործես:

Այստեղ շատերը ուրախացան, որ այդ մասնագիտությունն ես ընտրել: Դե՜հ, ուրեմն, հաջողությո՜ւն, աշխատի՜ր: Երևի հիմա լսում ես Սոլոմոն Ռայնախին, Շարլ Դիլին և այլն:

Փարիզում երկու նշանավոր մարդիկ կան, ուսուցիչ և իր աշակերտը — Սորբոնի պրոֆեսոր Henri Facilion, որ հայ

արխիտեկտուրայով է, կարծեմ, պարապում, և իր աշակերտը, Jurguis Baltrusaitz. Baltrusaitz-ը երկու անգամ, թե մի անգամ արդեն Հայաստան է եղել, և այս տարի էլ, կարծեմ, ուզում է գալ. երիտասարդ տղա է. ծանոթացիր հետը — աճա հասցեն. 5 villa Virginie, Paris, XIV. Համալսարանից կգտնես ավելի ճիշտ հասցեն:

Առողջ եղիր, լուրջ եղիր, սովորիր, ապագան առաջդ է, քեզ մի՛ փչացրու:

Հազար համբույրներով, քո՝ **Ավետիք**

Շա՜տ ուրախ եմ, որ լավ բարեկամ ես Երվանդ Քոչարի հետ: Նա հանճարեղ տղա է, օգտվիր նրա խրատներից, խորհուրդներից: Շա՜տ բարևիր նրան և մյուս ընկերներիդ:

Քո հայրդ

219. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, մարտի 5, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ձեր վերջին նամակը ստացել եմ փետրվարի 18-ին, որ գրել էիք նույն ամսի 3-ին: Մինչև օրս ուրիշ նամակ չունիմ: Հիմացա, թե վերջնականապես Վիգենը, որ ընտրել է արխեոլոգիա, հաճախո՞ւմ է, թե՞ փոխել է իր միտքը: Ցանկալի է շա՜տ, որ մի բան միանգամից ընտրե և հաստատ հետևի:

Գրում ես, որ ստացել եք դեկտեմբերին ուղարկածս 30 դոլլարը Վիգենի անունով, իբրև ուսանողի. նրանից հետո ուղարկել եմ հունվարի 10-ին, փետրվարի 5-ին և երեկ մարտի 4-ին, 30-ական դոլլար, ուրեմն միասին 120 դոլլար: Գրեցեք ստանալներիդ պես:

Առողջությունս լավ է. այնքան գրիպ կա, բայց դեռ չեմ հիվանդացել: Դուք ինչպե՞ս եք. վախենում եմ՝ հիվանդացած լինեք...

Մի-երկու օր հետո գնում եմ մի քանի օրով Լենինական և

Թիֆլիզ. երևի մինչև մարտի վերջերը այնտեղները կանցկացնեմ: Հետո կվերադառնամ Երևան և, կառավարության խոստման համաձայն, կձեռնարկենք անցագրի հարցին:

Նիկոլային ասա, որ Էջմիածնում հանդիպեցի իրեն քրոջը՝ Շուշանիկ Սարգսյանին: Տեղեկություններ հարցրեց եղբոր մասին: Եվ գոհ եղավ. միայն խնդրեց, որ իրեն նամակ գրե:

Բուենոս-Այրեսում (Արգենտինա) տպվել է իսպաներեն լեզվով իմ «Աբու-Լալա-Մահարին»: Մի օրինակ ուղարկված էր ինձ թարգմանչի կողմից: Նրան նամակ գրեցի, որ ձեզ էլ մի օրինակ ուղարկե. եթե չստացաք, գրեցեք և մի օրինակ խնդրեցեք, ահա հասցեն՝ A. S. Agayan, Paragnay 1877, Buenos Aires (Argentina).

Լավ տպագրություն է, պատկերազարդ, իմ պատկերս էլ վրան: Էլ ուրիշ բան չունիմ գրելիք: Շա՛տ բարևներ Դրաստամատին, իր տիկնոջը, Մանյային և մեր բոլոր բարեկամներին: Շտապում եմ նամակս վերջացնել, փոստին հասցնելու:

Համբույրներով և կարոտներով,
ձեր՝ **Ավետիք**

Մի շա՛տ ցավալի լուր. Գեղամի քույրը, Թագուհի քույրիկը, Շուշիկի մայրը, մի 10 օր առաջ՝ գրիպի հետևանքով՝ թոքերի բորբոքումից մեռավ: Գեղամին դու մի՛ հայտնիր: Կնոջը հայտնիր: Թո՛ղ տխուր լուրը քեզնից չլսե:

Քո՝ **Ավետիք**

220. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, ապրիլի 13, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վաղուց է ձեզնից նամակ չունիմ: Վերջին նամակդ գրված է մարտի 1-ին. ինչո՛ւ եք լռել, ի՞նչ կա:

Այս երկու-երեք օր է, որ ես Երևանումն եմ: Լենինականից գրել եմ ձեզ նամակ, երևի, ստացաք:

Երեկ մեր նախագահը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը, հեռագրով Փարիզ մեր դեսպանատան վրա՝ կարգադրեց ձեզ տալ 150 դոլլար, եթե դեռ չես ստացել, գնա ստացիր: Մարտին ուղարկել եմ ձեզ 30 դոլլար, մոտ օրերս էլ կուղարկեմ նույնչափ:

Ես վիզա կստանամ Փարիզ գալու համար մայիսի սկզբներին. այդ ժամանակ միայն հնարավոր է, որովհետև կառավարությունը շա՜տ զբաղված է նոր ընտրություններով: Հարցը լուծված է վերջնականապես, մնում է տեխնիկական կողմը: Հունիսի սկզբներին կլինեմ Փարիզ: Հիմա հանգիստ սրտով Վիգենը կպարապի, և դու էլ չես ջղայնանա:

Դու մի՛ լսիր դաշնակցական թերթերին. նրանք իրենց քաղաքական հաշիվներն ունեն և ուզում են իմ դեպքը օգտագործել:

Ես Հայաստանին, նրա ժողովրդին և նրա կառավարությանը բարեկամ եմ, և վերջին հաշվով նրանց հետ եմ: Արդեն դրանցից դուրս էլ ոչինչ չունենք, որով ապրենք ու ոգևորվենք: Դրանցից դուրս մենք՝ հայերս, կլինինք մի թափառական և արհամարհված ազգ:

Ես շատ եմ կապված մեր երկրի հետ և դժվար թե երկար կարողանամ հայրենիքից դուրս ապրել: Սակայն առանց ձեզ էլ անտանելի դժվար է մենակ, անընտանիք ապրել. այս հարցը պիտի լուծել: Երևի, Վիգենին կթողնենք մինչև համալսարանն ավարտելը՝ մենակ մնա Փարիզում, մի լավ ընտանիքում, իսկ մենք կվերադառնանք և ընդմիշտ կտեղավորվենք Երևանում:

Այստեղ լավ շրջան ունիմ. մեր ինտելիգենցիան Երևան է հավաքված: Գարունն ու աշունը շա՜տ գեղեցիկ են Երևանում. ամառները դուրս կգանք: Իսկ ձմեռը, եթե լավ բնակարան ձեռք բերենք, նույնպես լավ կանցնի: Փարիզ կգամ Մոսկվայով, կմնամ այնտեղ մի քանի օր, և մի քանի օր էլ Բեռլին: Բեռլին թողած գրադարանս կմաքրեմ և լավ գլրքերը կամ կտեղափոխեմ Երևան կամ պահ կտամ՝ մինչև դրությունս որոշելը:

Վերջացնում եմ նամակս: Շատ բարևներ մեր լավ բա-

րևկամներին՝ Գեղամին, կնոջը, Քոչարին, Գաբոյին, բժ. Թորգոմյանին, Ջոբանյանին, Զավենին, Զավենիկին, և այլն: Հ. Գաբրիելին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենին՝
Ավետիք

221. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, հունիսի 10, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Տեսնում եք, որ դեռ Երևանումն եմ: Գալս ուշացավ բոլորովին կողմնակի պատճառներով: Երևան հյուր եկան Ադրբեջանի և Վրաստանի գրողները՝ բանաստեղծներ և վիպասաններ, 40 հոգի, թե՛ ծանոթանալու Հայաստանի հետ և թե՛ բարեկամական-ընկերական դաշինքներ կնքելու Հայաստանի գրողների հետ: Մի շաբաթ է նրանցով ենք զբաղված՝ դիմավորեցինք նրանց մինչև Ղարաքիլիսե՝ ավտոմոբիլներով, Սևանի վրայով: Պտտցրեցինք նրանց մեր երկրի մի քանի վայրեր. ժողովներ, ընդունելություններ, հանդեսներ, ճաշեր: Այսօր մենք՝ հայ գրողներս մոտ 17 հոգով, նրանց հետ գնում ենք Լենինական, այնտեղից էլ Վրաստան և ապա Ադրբեջան: Այս կտևե մի 15 օր, հետո կվերադառնանք նորից Երևան:

Շա՛տ ուրախ և բովանդակալից օրեր ենք անցկացնում:

Երևան վերադարձից հետո իմ գալու թղթերը պատրաստ կլինեն, ապա մի քանի օր էլ իմ մնաս-բարևը կտևե, և ճանապարհ կընկնեմ դեպի Մոսկվա:

Վնաս չունի որ մի քիչ կուշանամ. ամեն բան պիտի կարգին լինի: Շատը գնաց, քիչը մնաց: Իմ հարաբերությունները իշխանության հետ լավ են եղել, բայց այս տարի շա՛տ և շա՛տ լավացել են: Նրանք ինձ հիմա հասկացել են, ամեն թյուրիմացություն պարզվել է և ես նրանցն եմ, նրանք էլ իմը: Այս մասում ես շա՛տ ուրախ եմ: Այլևս պարզ է, որ ես կապված եմ Հայաստանի հետ և նրա իշխանության հետ: Իմ մնալը բարիք եղավ ինձ համար:

Իմ սրտապահմանում մնալը կլինի ժամանակավոր, մի տարվա չափ, և նորից կդառնամ Հայաստան ու կհաստատվեմ: Հայրենիքից դուրս չկա կյանք և բախտավորություն:

Հիմա տպում եմ երկու գրքույկ՝ «Աբու-Լալա-Մահարին» և մի քանի պատմվածքներ: Իմ բացակայության ժամանակ կտպվեն բանաստեղծություններս: Արսենն եկավ և տեղեկություններ բերեց ձեզնից: Շատ ուրախ եմ: Ուրեմն՝ մի քիչ էլ համբերեցեք, ամեն բան լավ կլինի: Շա՛տ և շա՛տ բարևներ մեր բոլոր բարեկամներին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենիս,

ձեր՝ **Ավետիք**

222. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ

1929, հունիսի 17, Թիֆլիս

Սիրելի ընկեր Էփրիկ.

Այսօր գնում ենք Բաքու. կմնանք մինչև, երևի, ամսիս 23—24-ը: Հետո ես կլինեմ Լենինական և կմնամ մի շաբաթ: Եթե պատրաստ կլինի մինչ այդ «Աբու-Լալան», խնդրում եմ երկու օրինակ ուղարկես ինձ՝ այս հասցեով. Լենինական, փողոց 27, տուն 73:

Շատ բարևներ հայրիկին, տ. Թամարին և Ջեզ:

Ձեր Ավ. Իսահակյան

223. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, հուլիսի 2, Լենինական

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երևանից ձեզ գրեցի, որ Հայաստան հյուր եկան, հունիսի 5-ին, Վրաստանի և Ադրբեջանի բանաստեղծներն ու գրողները. մի շաբաթ մնացին և հայ գրողներիս հետները վերցրին և հյուր տարան: Եղանք Թիֆլիսում, նրա շրջա-

կաները և Կախեթիա. շա՜տ բան տեսանք, նոր շինություններ ,ֆաբրիկներ: Հրաշալի ընդունելություն, հանդեսներ: Ապա գնացինք Բաքու, Գանձակ: Նորից մեծ հանդեսներ, և տեսանք շա՜տ նորություններ, շենքեր, ֆաբրիկներ և կուլտուրական ու տնտեսական նվաճումներ: Շա՜տ հետաքրքիր էր և շա՜տ ուսանելի: Բայց այս ճամփորդության շնորհիվ գալս ուշացավ: Չմասնակցել չէի կարող, շա՜տ կարևոր էր ինձ համար. մերժելը վատ տպավորություն կթողներ թե՜ իմ ընկերների և թե՜ Վրաստանի և Ադրբեջանի գրողների վրա: Այսքան ուշացել է գալս, թող մի քիչ էլ ուշանա:

Հիմա մի-երկու օրից հետո գնում եմ Երևան, և հավատացած եմ, որ պասպորտս պատրաստ կլինի, և շուտով կմեկնեմ:

Քեզ արդեն հայտնի է, որ այլևս ո՜չ մի խոչընդոտ չկա Փարիզ գալուս համար: Կառավարությունը (իմացիր, որ ներկա մեր կառավարիչները հինը չեն, նոր ղեկավարություն է) շա՜տ բարյացակամ է դեպի ինձ և իմ գալու մի քիչ ուշանալը ավելի օգտակար եղավ ինձ համար: Շատ թյուրիմացություններ պարզվեցին՝ ի նպաստ ինձ: Այժմ ես թույլտվություն ունիմ արտասահման գալու և վերադառնալու, և երբ ուզենամ՝ նորից գնալու և դառնալու:

Պողոս Մակինցյանը գալու է Փարիզ Торгпред-ի մեջ աշխատելու. երևի միասին կգանք, կամ նա ինձնից մի քիչ շուտ, կամ մի քիչ ուշ, բայց անպատճառ: Դուք այսքան դիմացել եք, մի քիչ էլ դիմացեք. պարտքեր արեցեք, կգամ, կվճարեմ: Իսկ եթե տեսնեմ, որ մի քիչ կուշանամ, իսկույն փող կտեղափոխեմ ձեզ:

Առողջությունս լավ է, միայն ճամփորդությունը, հանդեսները, քեֆերը, անքնությունները շա՜տ հոգնեցրին ինձ, սիրտս մի քիչ վատացավ. հիմա Լենինականում հանգստանում եմ. ամբողջ օրը պառկում եմ, քնում եմ, և բարեկամների այցելություններն ընդունում և վերանորոգում հին հուշերը, հին մարդկանց կյանքը, որոնք շա՜տ պետք են «Ուստա Կարոյիս» համար:

Վերջապես շա՜տ և շա՜տ բաներ ունիմ ձեզ պատմելու, և մանավանդ գրելու:

Հույս ունիմ, որ լավ եք, առողջ և հանգիստ:

Համբույրներ քեզ և Վիգենին, և բարևներ բարեկամներին:

Ձեր՝ Ավետիք

<Հ. Գ.> «Աբու-Լալաև» արդեն լույս տեսավ. մնում է մյուս գրքույկը. նա էլ մոտ օրերս:

Ավետիք

224 ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ

1929, հուլիսի 3, Լենինական

Սիրելի Միսակ.

Բաքվից վերադառնալով՝ տեսա «Աբու-Լալաև»,— շա՜տ ուրախացա: Վերջապե՜ս:

Ես դեռ մի քանի օր կմնամ Լենինական: Կուզենայի՝ քանի դեռ չեմ մեկնել՝ «Չիբուխն» էլ լույս տեսներ, միամտեի:

Շատ բարևներ Թամարային և քեզ, նույնպես մյուս ընկերներին:

Ձեր Ա. Խաճակյան

225. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, հուլիսի 23, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երևի ստացել եք Լենինականից գրած նամակս՝ Բաքվից վերադառնալիս: Ահա երեք շաբաթ է՝ Երևանումն եմ, և ամեն օր սպասում եմ անցագրիս գալուն, Թիֆլիզից: Հիմա հույս ունեմ, որ մուտ օրերս գա, և ճանապարհ ընկնեմ:

Սակայն ուրախ եմ, որ կարողացա մի քանի օր առաջ ձեզ ուղարկել 200 դոլլար: Երևի արդեն ստացաք. հեռագրով ուղարկվեց Eurobank-ի միջոցով, այն բանկի, որի միջոցով անցյալ անգամ ստացար 150 դոլլարը: Այս աջողեցրեց նույնպես մեր նախագահը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որ անսահման լավ, բարի մարդ է:

Այսօր Բաքու տ. Չիլինկարյանին ուղարկեցի 100 ռուբլի: 2 ամիս առաջ ուղարկել էի, բայց ետ դարձավ. դու հասցեն մանրամասն չէիր գրել: Հիմա կստանա. հասցեն ճիշտ է:

Մամայիդ էլ նամակ էի գրել, երեկ պատասխան ստացա: Խեղճը սպասում է ինձ:

Ինչպե՞ս է ձեր առողջությունը: Ես բավական լավ եմ: Սարսափելի շոգեր եղան այստեղ. հիմա մեղմացավ: Միերկու օրով գնում եմ Արսեն քեռու մոտ հյուր, հետո էլ, եթե անցագիրս ուշացավ, մի մոտիկ տեղ, այսպես, մինչև որ անցագիրս ստանամ:

Շատ համբույրներ ձեզ,
ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

226. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, սեպտեմբերի 6, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացել եմ թե՛ Մոսկվա և թե՛ Երևան գրած նամակներդ: Վերջերս լճնիական էի, հով էր: Առաջարկեց կառավարությունը, որ նորից գնայի Կիսլովոդսկ. մերժեցի, թե՝ էս է անցագիրս կստանամ և կմեկնեմ. բայց անցագիրս ուշացավ և ես էլ զրկվեցի Կիսլովոդսկից:

Հիմա ամեն օր սպասվում է անցագրիս թույլտվությունը Մոսկվայից. ամեն ինչ լուծված է. Թիֆլիզն էլ համաձայն է, մնում է Մոսկվան, որը չի մերժի: Գոնե այսպես ենք կարծում: Ուրեմն շատը գնացել է, քիչն է մնացել: Առողջությունս վատ չէ, ոչինչ:

Ուրախ եմ, որ իր ժամանակին փողն ստացել եք և հնար կունենաք մի կողմ գնալու, գոնե մի քիչ Փարիզից դուրս գալու:

Քեռու վրա մի՛ բարկացեք. ուրիշ հնար չկա. դրությունը այդպես է:

Ուրախալի լուր. Աբասին արձակել են բանտից. հիմա երեք տարով աքսորել են, բայց տղան հիվանդ է և կարիքի մեջ. հնար եղածի չափով օգնում եմ:

Ս. Խանոյանը տեսավ ինձ. ուրախացա, որ եղել էր ձեզ մոտ: Նա նպաստեց իմ գործին: Ընկեր Դևոնուշը այստեղ է, նա էլ ձեռքի եկածն անում է իմ գործիս համար:

Ե. Չուբարը վերադարձավ սանատորիայից. հիմա լավ է, մի քիչ նիհարել է, սիրտը լավ է: Բարևիր Մանյային:

Շա՜տ ցավում եմ տիկին Տեր-Օհանյանի մահվան համար. խե՜ղճ կին, շա՜տ տանջվեց Անահիտի համար... Ցավակցությունս հայտնիր պ. Վարդգեսին և Աստղիկին ու Արտեմիսին: Շա՜տ և շա՜տ բարևներ բոլոր բարեկամներին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենիս,

ձեր՝ **Ավետիք**

<Հ. Գ.> Չմոռանամ ասել, որ մարտ ամսվա 30 դոլլարը ետ ստացա:

227. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, հոկտեմբերի 29, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Բավական ժամանակ է ձեզնից նամակ չունիմ, ինչպես և ես չեմ գրել: Իմ նամակը ուշացնելու պատճառն այն էր, որ ամենօրվա սպասողական դրության մեջ եմ, թե այսօր-էգուց վերջնական մի բան կլինի և կգրեմ: Հարցն այն է, որ իմ արտասահման մեկնելու թղթերը ուղարկված են Մոսկվա և այնտեղից ամեն օր սպասում ենք պատասխանի: Եվ ուշանում է: Կարծում եմ, որ շուտով կլուծվի այս հարցն էլ:

Կարծում եմ, որ շատը գնաց, քիչը մնաց. համբերել, չջղայնանալ, հանգիստ մնալ: Դուք էլ այդտեղ հանգիստ կացեք, մի՛ վրդովվեցեք:

Հայաստանից երկու պրոֆեսոր բժիշկներ են եկել Փարիզ, եթե ուզում ես նրանց տես, նրանք կհուսադրեն քեզ:

Արսեն վարդապետը արդեն եպիսկոպոս է և գնաց Պարսկաստան. հայտնիր նրա աղջկան:

Բանաստեղծություններս տպում ենք այստեղ, այնպես որ

շուտով հնարավորություն կգտնեմ ձեզ փող ուղարկելու. մի կերպ յոլա գնացեք:

Այս ամիսը մեզ համար շա՜տ տխուր անցավ. հանկարծամահ եղան բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը և մեր լուսավորության կոմիսար Ասքանազ Մուավյանը: Շա՜տ ցավալի կորուստներ, մանավանդ վերջինս, որ դեռ երիտասարդ էր և եռանդով լիքը:

Աբասը բանտից ազատվել է. հիմա աքսորված է: Լավ է:

Իմ առողջությունս վատ չէ. եթե ձեզ մոտ լինեմ, կլավանամ, որովհետև ինձ հոգեկան հանգստություն է պետք և կանոնավոր կյանք և դիետա, մի բան, որ առանց ընտանիքի չի գլուխ գալիս:

Ինչպե՞ս է ձեր առողջությունը, ձեր վիճակը. Վիգենը ի՞նչ է անում. դասերն սկսվեցի՞ն, թե դեռ ոչ:

Համբույրներով՝ ձեր **Ավետիք**

228. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ

1929, նոյեմբերի 13, Երևան

Ընկերներ.

Սրանով խնդրում եմ Ձեզ՝ ընդունել ինձ Հայաստանի գրողների ֆեդերացիայի մեջ, իբրև անհատ անդամ:

Հարգանքներով՝
Ավետիք Իսահակյան

229. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1930, մարտի 7, Երևան>

Սիրելի Սոֆիկ և Վիգեն.

Ստացա ձեր վերջին բաց-նամակը:

Երեկ ստացա անցագիրը, այսինքն արտասահման մեկնելու պասպորտս: Այնպես որ հարցը վերջացավ. առաջը

ուղիղ է ասում. վերջը լավ, ամեն բան՝ լավ: Վերջին հաշվով շահվողը ես եղա. այս տարի երեք հատ գիրք տպեցի: Խղճբով, շա՜տ մեծ պատիվներով գնացինք Վրաստան ու Ադըրբեջան: Սմեն թյուրիմացություն իմ շուրջը չքացավ. հիմա բաժանվում եմ Հայաստանից լավ զգացումներով և մեր կառավարության բարիկամեցողական տրամադրությամբ:

Մի շաբաթ հետո կմեկնեմ Երևանից, մի-երկու օր կմընամ Լենինական. մի երկու օր էլ Թիֆլիզ՝ երկաթուղու համար և կմեկնեմ Մոսկվա. մինչև նամակս ստանաս, ես Մոսկվա կլինեմ. լավ կանեես Ֆրանսիա մտնելու վիզա վերցնես և հետագրես Մոսկվա, եթե ոչ՝ ստիպված պիտի լինիմ Բեռլին մնալ, որ թանկ կնստի վրաս: Առայժմ այսքան:

Համբուրներով՝ ձեր **Ավետիք Իսահակյան**

230. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, ապրիլի 1, Թիֆլիս

Սիրելի Գարեգին.

Ընկ. Պ. Մանիցյանից պարտք եմ վերցրել 50 ռուբլի, խնդրեմ պարտքը հատուցանես նրան: Ես մի-երկու օրից կմեկնեմ Լենինական, ապա Երևան:

Բարևներով՝ **Ավետիք Իսահակյան**

231. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, մայիսի 21, Բեռլին

Գարեգին ջան.

Այսօր երկու օր է, Բեռլին եմ: Մոսկվա շատ մնացի, երեք շաբաթ: Շատ հետաքրքիր էր Մոսկվան: Նոր շենքեր, հսկա շենքեր: Բեռլինն էլ շա՜տ է փոխվել, անճանաչելի է: Փարիզից կգրեմ, ուր կգնամ մի-երկու օրից: Շատ բարևներ ընկերներին:

Ձեր՝ **Ավետիք**

232. ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻՆ

1930, հունիսի 14, Փարիզ

Սիրելի Ստեփան.

Այսօր երեք շաբաթ է՝ Փարիզ եմ, բայց ժամանակ չգտա մի-երկտող գրելու ընկերներիս-բարեկամներիս: Անվերջ այցեր ու այցելուներ: Այս ու այն կողմը հսկայական քաղաքի: Երևանի անդորրության կարոտն եմ զգում:

Առայժմ ջերմագին բարևներ Ձեզ, ընտանիքին և ընկերներին:

Ձեր՝ **Ա. Խաչիկյան**

17 rue Denfert Rochereau, Paris, 5.

233. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, հունիսի 14, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Հազիվ ժամանակ ու տրամադրություն գտա մի-երկու տող գրելու: Գալու օրվանից գլուխս իմս չեղավ: Անվերջ սա ու նա: Ընտանիքս գտա ավելի լավ վիճակի մեջ, քան կարծում էի: Թահմազին բարևներդ տվի: Հետո կգրեմ:

Համբուրներ: Բարևներ ընկերներին:

Ավետիք

17 rue Denfert Rochereau, Paris, 5.

234. Ս. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

1930, հունիսի 24, Փարիզ

Հարգելի պարոն
Ս. Պողոսյան.

Յուր ժամանակին ստացել եմ Ձեր նամակը, որով կհայտ-

Ձեիք Ռամկավար կուսակցության մեծարգո անդամների ինձ հայտ բերած պատիվը՝ լսելու Հայաստանի շինարարության մասին:

Խնդրելով Ձեր ներողամտությունը՝ մինչև օրս Ձեր նամակին պատասխանած չլինելուս համար, այժմ, սրտի ցավով, ստիպված եմ հաղորդելու Ձեզ, որ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում եմ հասարակության առաջ հանդես գալու Հայաստանի դրության մասին արտահայտվելու նկատմամբ:

Խորին շնորհակալություններս մեծարգո անդամներին ի պատիվ ինձ տրվելիք թեյասեղանին համար: Վերստին խնդրում եմ Ձեր բոլորի ներողամտությունը իմ հանդեպ:

Մնամ հարգանքներով,
Ձերդ՝ **Ավետիք Իսահակյան**

235. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1930, հուլիսի 15, Փարիզ

Սիրելի Ար. Չոպանյան.

Խնդրում եմ, հինգշաբթի օրը առավոտ, մինչև ժամը 11-ը բարի լինեք տանը մնալ, Ձեզ մոտ ենք գալու, անհրաժեշտ գործով — ես և Մ. Մելիք-Հակոբյանը՝ Բաֆֆիի ազգականը:

Բարևներով Ձեր՝
Ավ. Իսահակյան

236. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, դեկտեմբերի 23, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Վերջապես քեզանից նամակ ստացա. հասկանալի է, որ շա՜տ ուրախացա Երևանից հաղորդածդ տեղեկությունների մասին, թե՛ ընկերների և թե՛ հասարակական գործերի մա-

սին: Սիրտս անբաժան կապված է Երևանի հետ. միշտ նրա մասին եմ մտածում, և շա՜տ կարոտել եմ Երևանին ու ընկերներին:

Տիկինդ ուզել էր մոդաների ժուռնալներ. մի շաբաթ առաջ, պատվիրած պակետով, գրավաճառը ուղարկեց քո հասցեին երկու ժուռնալ, վերջին մոդայի, դեկտեմբեր ամսին: Պիտի իմանաս, որ Փարիզում մոդան փոխվում է ամիսը մի անգամ: Պատերազմից առաջ տարին մի անգամ էր մոդան, իսկ 19-րդ դարի վերջերին մոդան 10 տարին մի անգամ էր. հիմա — ամեն ամիս: Թռչունի թևով չես կարող հասնել նրան:

Ես լավ եմ, ամբողջ երկու ամիս բժշկվում էի, հիմա դադար է, նորից պիտի բժշկվիմ, հետո բոլորովին լավ կլինեմ:

Սկսել եմ պարապել, բայց Փարիզում ժամանակը շա՜տ արագ է թռչում: Կարծես, մարդ բան չի անում, բայց բանից էլ չի պրծնում: Մեծ քաղաքը կլանում է: Անթիվ հետաքրքիր բան կա, և գլուխդ կորցնում ես:

Հա՜, անցյալ օրը մի բանախոսության մեջ լսեցի, որ Արփաչայ կամ Արպաչայ (Շիրակի գետը) չի նշանակում Գարեգետ, այլ Սահմանագետ: Պարսկերեն արպա կնշանակե սահման: Թուրքիայի և Պարսկաստանի միջև սահմանագետ: Հարցրու մեր լեզվագետներին և նայիր գրքերի մեջ: Ես էլ նույնը պիտի անեմ:

Տ. Զարուհուն ասա, որ ես գրել եմ Հեղուշին, թե մայրիկը տ. Թամարայի միջոցով ուղարկել է ընտանեկան հիշատակներ ու նվերներ. բայց Հեղուշը ինձ գրեց, որ տ. Թամարան մինչև այսօր նրան չի հայտնել մայրիկի ուղարկածի մասին: Սա անհասկանալի վարմունք է, բայց փաստ է, անշուշտ, վերջը պիտի հանձնե: Հեղուշը արդեն գրել է Թամարայի բարեկամին, շուտով կպարզվի: Թո՜ղ մայրիկը հանգիստ լինի. վերջը լավ կլինի:

Հետո, Հակոբին էլ ասա, որ կարծեմ բան գլուխ չի գա, բայց դեռ վերջնական չէ: Թո՜ղ սպասե առայժմ:

Շա՜տ ուրախ եմ, որ հիմա ազատ ժամանակ ունես, և պիտի կարողանաս բոլոր ուժով նվիրվել գրական գործերիդ: Անհամբեր սպասում եմ «Սայաթ-Նովայիդ» լույս տեսնելուն. միայն կուզենայի իմանալ, բնագիրը ամբողջ կա՜.

այն, որ հայտնի է մեզ Գ. Հախվերդյանի տվածով և այն, ինչ որ լույս է տեսել զանազան հանդեսների մեջ:

Հետո, աշխատիր բառարանդ վերջացնել. գոնե մի մասը: Դա շա՜տ կարևոր գործ է:

Այստեղ, առհասարակ, գրական մարզում, աչքի ընկնող մի բան չկա, ծուտի-պուտի բաներ են. չապրված, շինծու բանաստեղծություններ ու պատմվածքներ. կեղծ ու ոռկոկո: Եվ ուրիշ բան էլ անկարելի կլիներ սպասել — հայրենիքից ու ժողովրդից հեռու ի՜նչ իրական ստեղծագործություն կլինի. մյուս կողմից էլ ֆրանսիական գրականությունը ճզմում է ամեն բան:

Ես, հավանական է, եթե արտաքին ու ներքին արգելքներ չծագեն, 1931 թվի ընթացքին կվերադառնամ հայրենիք: Փարիզը լավ է, բայց հայրենիքը ամեն տեղից լավ է: Լավագույնն է:

Կնոջս և տղայիս կողմից շատ բարևներ քեզ: Իմ կողմից բարևներ կնոջդ, և բոլոր ընկերներին. Դերենիկին, Միշոյին, Պողոս Աբելյանին, Սիսակին, Ցոլակին, Էփրիկյաններին, տ. Ուրարտուին և ամուսնուն, Արշակ Տոնյանին և կնոջը, Փաշոսին, Կոջոյանին և այլն, և այլն. բոլորին, բոլորին:

Համբույրներով, քո՝ Ավետիք

Մեկ-մեկ գրիր, շա՜տ մեծ հաճույք կպատճառես նամակներովդ:

Ավետիք

237. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

1931, հոկտեմբերի 7, Փարիզ

Սիրելի Վահան.

Գրեթե մի տարի կլինի քեզ նամակ չեմ գրել: Այս բոլորը այն է ցույց տալիս, որ ժամանակը, կյանքը, իրերը գնում են ո՜չ մեր ուզածով. տրամադրություն չի մնում, մի խոսքով — գոյություն քարշ տալ:

Ամիսներից ի վեր ուզում էի նամակ գրել, բայց ասում

էի՝ ի՞նչ գրեմ, բան չկա գրելու, կամ եթե կա, և իրոք շա՜տ բան կա, բայց դրա համար պետք է միասին լինել և խոսել, երկար խոսել:

Շա՜տ կուզենայի մի ամսով Բեռլինն լինել, բայց ներկա պայմաններում անկարելի է տեղից շարժվել:

Գրում եմ, իմանալու համար, սիրելի Վահան, քո քեֆը, հալը, առողջությունը, տրամադրությունդ. ի՞նչ ես անում, ինչպե՞ս է ընտանիքդ, կինդ:

Գրում եմ իմանալու համար սիրելի Հայկի մասին, ի՞նչ է անում, տրամադրություն, առողջություն, վիճակ: Ինչպե՞ս է նրա աղջկա — Նորայի վիճակը, առողջությունը:

Ի՞նչ է անում Գրենֆիլդը, վիճակը, և այլն:

Շա՜տ կխնդրեմ բարևես Հայկին և Գրենֆիլդին:

Գալով ինձ՝ ես լավ եմ հիմա, առողջության տեսակետից, քանի որ Հայաստանից եկա. համեմատաբար լավ եմ: Կինս և տղաս էլ լավ են: Տղաս սինեմայի մի ստուդիայի մեջ աշխատում է՝ սովորում է ռեժիսորություն՝ նրա արվեստը, տեխնիկան. ասում են՝ շնորհք ունի: Տեսնենք, ի՞նչ պիտի դուրս գա:

Ես, երևի, այս վերջին ձմեռս է, որ պիտի անցկացնեմ Եվրոպայում: Գարնանը կմեկնեմ Հայաստան, կնոջս հետ. գուցե տղաս էլ գա հետս. կամ մնա Եվրոպայում, եթե սինեմայի մեջ գործ գտնի, իրեն հարմար: Եթե ոչ՝ նա էլ կգա հետս և կաշխատե սովետական սինեմայի մեջ՝ Հայաստանում և Մոսկվայում:

Լսում ենք, որ Բեռլինի կյանքը շա՜տ ծանր է, գործ չկա, կրիզ, աղքատություն, թանկություն: Ինչպե՞ս եք յոլա գնում:

Ափսո՜ս, ի՞նչ լավ էր պատերազմից առաջ: Բայց աշխարհը այդ չհասկացավ, չգնահատեց, և ձգեց իրեն դժոխքի մեջ:

Այստեղ, թեև տակավին լավ է, բայց սպասվում է կրիզին, անգործության, թշվառության: Արդեն բավական դըժվարություն կա ապրելու և գործ գտնելու մեջ: Ավելի վատ պիտի լինի օտարների, հայերի վիճակը:

Գրիր ուրիշ ծանոթ-բարեկամների մասին:

Կարծում եմ, որ Բեռլինում հայ գաղութի կյանք չկա.

այստեղ այդ նկատմամբ՝ լավ է: Անվերջ ժողովներ, հանդեսներ, երեկույթներ, թեև ես քիչ եմ հաճախում:

Սպասում եմ նամակիդ: Համբույրներով և բարևներով,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

A. Issahakian.
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

288. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՑԱՆԻՆ

1931, հոկտեմբերի 25, Փարիզ

Սիրելի բարեկամ.

Ստացա Ձեր նամակը, սակայն, չկարողացա անմիջապես գրել, որովհետև Մեհրաբյանը և Տ. Զավենը շատ զբաղված էին այս երկու օրերս ՀՕԿ-ի պատգամավորական ժողովի առիթով: Նրանց կտեսնեմ այսօր կամ վաղը:

Թահմազյանը նույնպես հեռագիր է ստացել Փափազյանից, և չգիտե անելիքը. ինձնից խորհուրդ հարցրեց: Ես ևս մոլորված եմ: Անկասկած, առանց ապրուստի միջոցները ապահովելու՝ ռիսկ է Փարիզ ընկնելը. ես չգիտեմ՝ ո՞վ կարող է նրան օգնել: Ես այդ շրջաններում կապեր, բարեկամություններ չունեմ, թերևս ինքը ավելի ունենա՝ հարուստների մեջ բարեկամներ: Համաձայն եմ Ձեզ հետ, որ նույնպես հույս չի կարելի դնել ներկայացումների վրա: Հեռվից Փարիզը շատ հրապուրիչ է՝ Էլդորադո: Անշուշտ, Փափազյանը իր մեծ տաղանդով արժանի է, որ գնահատվի, ճնարավորություններ ստեղծվեն բուժվելու, բայց միայն մեր բարի բաղձանքներով բան գլուխ չի գա:

Խորհինք Մեհրաբյանի, Զավենի, ՀՕԿ-ի հետ, տեսնենք ի՞նչ կասեն:

Ցտեսություն,

սիրով և հարգանքով

Ձեր՝ **Ավ. Իսահակյան**

239. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1932, հունիսի 6, Փարիզ

Սիրելի Կոլյա ջան.

Ստացա նամակդ և 25 դոլլարի չեքը: Շնորհակալություն: Իրավ որ վաղուց է իրար չենք գրել: Մարդկային է: Երբ իրարուց հեռանում են, ժամանակն ու տարածությունը գրեթե մոռացնում են մարդկանց սրտերը իրարուց: Տնից էլ երկար ժամանակ է նամակ չունեմ: Զգիտեմ, ի՞նչ են անում: Ո՞ւր մնաց Աբասը, նույնպես չգիտեմ: Եվ վախենում եմ հարցնել նրա մասին:

Լավ է, որ դու այս կրիզին կարողանում ես ոտքի վրա կանգուն մնալ: Այստեղ շատ ծանր է հայերի դրությունը:

Ես գնալու եմ Հայաստան, բայց դեռ որոշ չէ. եթե ոչ աշնանը, գարնանը՝ անպատճառ:

Փողի պատմությունը հետևյալն է: Մամուլյանները Փարիզ եղած ժամանակ, իրենք, իբրև իմ հին բարեկամներ, դրությունս տեսնելով, իրենց կողմից խոստումներ տվին ինձ: Խոստացան Վիգենի համար միջնորդել իրենց որդու մոտ, որպեսզի կանչե Հոլիվուդ իրեն մոտ, իր ձեռքի տակ. ես էլ գրեցի, խնդրեցի Ռուբենին, բայց կրիզի պատճառով դեռ չկարողացավ մի բան անել: Վիգենը սինեմայի համար շատ ընդունակություն և սեր ունի, լավ էլ հասկանում է գործը: Սինեմայի մասին գրում է հայ և ֆրանսիական թերթերում. աշխատում է այստեղ սինեմայի մի ստուդիայի մեջ, բայց դեռ ձրի:

Փողի կողմից շա՜տ նեղ ենք, որովհետև կառավարությունից ստացած իմ կենսաթոշակը չի բավականում. կյանքը թանկ է. ես էլ հիվանդ եմ, սիրտս թույլ է, բժշկվում եմ: Եվ ուրեմն շա՜տ ծախսեր:

Մամուլյանները ինձ հույսեր տվին թե, որ Ամերիկա գնան, իրենք կապեր ունեն, ծանոթություններ, կդիմեն և մի գումար ձեռք կբերեն ինձ համար, որպեսզի մի վեց ամսով հեռանամ Փարիզից, վերջացնելու համար իմ դժբախտ «Ուստա Կարոն», և հանգիստ վերադառնամ Հայաստան:

Այս վեպի գլխին մեծ փորձանք եկավ. տարիներով մնաց անավարտ. պատերազմը, հեղափոխությունը, Հայաստան

գնալս ու այնտեղ 3 ½ տարի մնալս (և վեպս թողել էի Եվրոպայում. որոշել էի մի վեց ամիս մնալ Հայաստան, բայց 3 ½ տարի մնացի, հիվանդացա և այլն). այնպես որ հնար չունեցա այդ մեծ գործը վերջացնելու. և հետո էլ միշտ փողի կարիք, ուրիշ բաներով զբաղված, մի խոսքով միշտ խանգարված: Հայ գրողի վիճակ:

Մամուլյանների խոստումներով սիրտ առած վերջերս գրեցի նրանց, որ շտապեն, բայց ինչպես երևում է, կրիզի պատճառով ջուրն ընկավ այդ ամենը:

Ես չգրեցի քեզ, գիտնալով, որ դու դժվար թե կարողանայիր օգնել:

Ի՞նչ գրեմ հիմա... եթե դու կարողանաս ինձ 100 դոլլար ուղարկել (ուրեմն 75 դոլլար ևս) մի քանի ամսվա մեջ, ես Հայաստանում կվճարեմ մայրիկիդ՝ փոխարենը մի քանի անգամ ավելի, քան որ բանկը տալիս է, դոլլարին 4 ռուբլի. բանկը կարծեմ դոլլարին տալիս է 2 ռուբլի: Իսկ եթե չես կարող, բնավ մի՛ նեղվիր. գրիր ինձ, ամոթ բան չէ: Ուրեմն սպասում եմ պատասխանիդ և մնացած 25 դոլլարին: Հայաստանում փող շա՛տ է անցնում ձեռքս, բայց անկարելի է երկրից դուրս հանել:

Ահա՛, տեսնում ես, Կոլյա ջան, ի՛նչ ժամանակի հասանք:

Մենք Հայաստան ընտանիքով ենք վերադառնալու. Վիգենը այնտեղ կաշխատե հայկական սինեմայի մեջ:

Մերոնք սիրով բարևում են Շուշիկին և քեզ. իմ կողմից էլ ջերմ համբույրներ և սրտագին բարևներ Շուշիկին և քեզ:

Քո **Ավետիք**

A. Issakian.
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

240. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

1932, հուլիսի 5, Փարիզ

Մեծարգո բարեկամ
պ. Վ. Մալեզյան.

Գրաբերս, պ. Ստեփան Շուշանյան, շատ ծանր կացու-

թյան մեջ է։ Փարիզում չի կարող ապրել։ Ուզում է Մարսեյլ գնալ, ուր ծանոթներ ունի և կարող է այնտեղ, նավահանգստում աշխատել։ Իրեն չար բախտից, ուր որ դիմել է, մերժած են։ Ես հազիվ կարողացա մի 50 ֆրանկ ձեռք բերել, որով կարողացավ մեր հայրենակիցը մի քանի օր ապրել։

Նրան անհրաժեշտ է մի տոմսակի դրամ՝ Մարսեյլ գնալու համար։

Խնդրում եմ շա՛տ, Ձեր միջոցները ի գործ դնեք մի տոմսակի դրամ հայթայթելու համար, ամենաշատը 200 ֆրանկ։

Պարոնը հուսահատական վիճակի մեջ է։ Նորից թախանձում եմ բարի լինեիք չմերժելու իմ և մեր հայրենակցի խնդիրքը։

Հարգանքներով, Ձերդ՝
Ավետիք Իսահակյան

241. ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻՆ

<1932, օգոստոսի 5, Փարիզ>

Սիրելի ընկեր Ալազան.

Հաստատում եմ երկու վերջին նամակներիդ ստանալը։ Բազում շնորհակալություններ քո ընկերական շա՛տ սրտառուչ և ցվիրված վերաբերմունքի համար ինձ հանդեպ։ Ստացել եմ նույնպես «Գրական թերթերը», նույնպես Մեծարենցի հատորը, որ սքանչելի իրականացած է։ Այդ մասին, ինչպես և Պետհրատի մյուս հրատարակությունների մասին, գրելու եմ «ՀՕԿ»-ի հաջորդներից մեկի մեջ։

Ներփակ նամակների մասին։ Կհանձնեք Պետհրատ, ընկ. Ռ. Աթայանին, գրել էր ինձ, որ հրատարակենք «Աբու-Լալա Մահարին», ես էլ մի քանի ուղղումներ եմ արել։ Մյուս նամակը՝ նույնպես Պետհրատ, ընկ. Խորեն Սարգսյանին. ուղարկել էր իր կազմած գիրքը, գրական քրեստոմատիա։ Հետո մի խնդրանք, որը և ուղղում եմ քեզ։ Նախկին դաշնակցական, ապա նրանցից բաժանված մարդկանցից — Վ. Շուշանյանը, որ, գիտես անշուշտ, երիտասարդ շնորհքով

գրող է, ուզում է Հայաստան գալ, ընդմիշտ ապրելու և գործելու: Դիմում է տվել Ս. Գաբրիելյանին, ես էլ խնդրել եմ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Աղասի Խանջյանին, որ արտոնություն տան: Ընկ. Չարենցի հետ քեզ էլ եմ խնդրում, որ միջնորդեք. երիտասարդ գրող է, ընկերական ձախ հակումներ ունի.— Չարենցը լավ է հասկանում. կարող է Խորհրդային Հայաստանի հրաշագործ իրականության մեջ փոխվել, պետության մարդ-գրող դառնալ: Խնդրում եմ Չարենցի հետ մտածեք այդ հարցի մասին՝ երկուսիդ միջամտությունը ավելի արդյունավետ դարձնելու համար:

Գալով իմ երկերի ժողովածուի հրատարակությանը, այդ ձեռնարկը ինձ գետել է շա՜տ տխուր և մոայլ մտածումների մեջ: Թափառական կյանքիս շնորհիվ, հարատև հիվանդանալուս շնորհիվ, և գրականության հետ կապ չունեցող այլ գործերով զբաղվելու շնորհիվ թերավարտ, կիսատ են մնացել բազմաթիվ գրություններս՝ վեպ, վիպակ, պոեմներ, և հիմա երբ երեկոյացել է իմ կյանքը, հաշվի եմ նստում, տեսնում եմ, որ, վերջ ի վերջո, ստեղծվածների գումարը չնչին է... Գոնե կարողանայի, մի երկու տարվա մեջ, քանի դեռ ողջ եմ, լրացնել մի քանի կարևոր բաներ: Գոնե «Ուստա «Կարոն», որ մղձավանջ դարձավ:

<...> Շատ և շատ լավ պիտի լիներ, որ այս տարի, իսկապես, հաջողեցնենք ներգաղթը, թե՛ մեր պրեստիժը շատ կբարձրանար և թե՛ բավական աշխատավորներ կազատվեին տառապանքներից...

<...> Բոլոր ցանուցիր իրերս՝ Վենետիկ և այլուր, պիտի հավաքել, մեծ գրադարանս տեղափոխել, ցավում եմ ոչնչացնել...

Այս մասին մանրամասն պիտի բացատրեմ ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանին և Խանջյանին:

Այս դժվարությունները ջղայնացնում են ինձ, առանց էն էլ շատ ջղային եմ, թունավորում են տրամադրությունս և աշխատանքի ունակությունս քայքայում...

Առողջությունս միշտ մտահոգիչ է, սիրտս միշտ վատ է գործում և արյան ճնշումս բարձր է: Ասենք, դու չես հասկանա և բախտ ունենաս երբեք չհասկանալու: Մարդ ապ-

րում է կիսամեռ, սա կյանք չէ, թքած մի գդալ արյան մեջ, բավական է, որքան տանջվեցի...

Շատ ձեռագիրներ ունեմ թողած Վենետիկի ինչքերիս մեջ, չգիտեմ՝ երբ պիտի հավաքեմ: Վերջապես պիտի անպատճառ <...>

Ավետիք Իսահակյան

242. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1932, օգոստոսի 7, Փարիզ

Շա՜տ սիրելի Գարեգին.

Նամակդ ստացել եմ իր ժամանակին: Իսկույն ուզում էի պատասխանել, բայց հետաձգեցի, և այսպիսով շա՜տ հետաձգվեց: Հետաձգվելու գլխավոր պատճառն այն էր, որ ուզում էի հաստատապես հայտնել, որ նյութ կուղարկեմ ժողովածուի համար. բայց դեռ մինչև հիմա գլուխ եմ կոտրում և չգիտեմ՝ ի՜նչ գրեմ: Սահմանած նյութին հարմար այուժե չունիմ. ծանոթ չեմ նոյեմբերյան անց ու դարձերին. ներկա չեմ եղել, չեմ ապրել: Չգիտեմ ի՜նչ գրեմ, մոլորվել եմ: Հազար նյութ է անցնում մտքովս, և ոչ մեկը հարմար չեմ գտնում: Սակայն նորից մտորում եմ: Տեսնենք:

Շա՜տ շնորհակալ եմ ուղարկածդ թանկագին նվերի համար — «Սայաթ-Նովայի»: Շատ լավ հրատարակություն է: Լիակատար, սպառված ուսումնասիրություն է քո արածը: Հաճույքով կարդացի:

Մակինցյանի գրությունը սարից-ձորից, դեսից-դենից բաներ է. մի տեղ մտքի, թե փաստի, թե բացատրության կոպիտ սխալ կար, բայց գիրքը մոտս չէ, որ ցույց տամ. (մի ընկեր տարավ կարդալու): Ի միջի այլոց «մինստրել» չի նշանակում «խալխի նոքյար» այլ ուղղակի ծառայող, պաշտոնյա, որից և ծագել է մինիստր բառը: Թերևս Մակինցյանը սխալ չէ, որովհետև ամեն մի պաշտոնյա վերջ ի վերջո հասարակական նոքար է: «Սայաթ-Նովայի» երկրորդ օրինակը ուղարկեցի, ուր որ ուզեցել էիր:

Սիրելիս, ինձ վրա էլ մի մեծ ծուլություն է իջել, կամ ուրիշ խոսքով ասած, ուժերս, ժամանակս կուլ է գնում հասարակական գործերին: Այստեղ գործող անձեր չունինք, դիրքով, անունով անձեր, որ կանգնած լինին Խ. Հայաստանի կողքին և պաշտպանեն թշնամական հարձակումների դեմ: Այստեղ շա՛տ գործ կա անելու, մեծ պայքար կա մղելու. երիտասարդ, եռանդուն մարդկանց տեղն է: Ես հոգնած եմ, մտքերով ցրված. սակայն ի՞նչ արած՝ պետք է գործել. «ձեռքս ի բան, ոտքս ի գերեզման», ինչպես ասում էին մեր հայրերը: Շա՛տ զբաղված եմ արտաքին գործերով, և գրական աշխատանքներս բառացի մտքով ասած՝ երեսի վրա են ընկած: Փարիզն էլ, գիտես, շա՛տ մեծ քաղաք է, վիշապի նման բան է, և սպառում ու կլանում է մարդու օրն ու եռանդը: Վայրերը հեռու, խճճված, հոգնեցնող, աղմկալից, քաոս: Մի մարդու տեսնելը, մի տեղ գնալը ամբողջ օրդ ուտում է: Եվ միշտ ժողովներ, խմբեր ղեկավարել, արվարձաններ գնալ, հանձնաժողովներ, և այլն, և այլն:

Երազս է՝ շուտով Երևան ընկնել, ընտանիքովս, ունենալ մի-երկու սենյակ և ամփոփվել, սկսել պարապել, ականջս՝ հանգիստ, սիրտս՝ խաղաղ: Չգիտեմ, ե՞րբ է այդ իրականանալու: Ի դեպ՝ առողջությունս հիմա բավական լավ է:

Գարեգին ջան, նամակդ շատ ուրախացրեց ինձ և տեղափոխեց Երևան: Չափազանց կարոտել եմ Երևանին և ընկերներին և ամբողջ բնակչությանը, կարելի է ասել: Մարդ միայն հայրենիքում իրան երջանիկ կզգա, ինչքան էլ այդ հայրենիքը անշուք և խեղճ լինի: Իր ժողովրդի հետ, իր լեզվով խոսող մարդկանց մեջ: Այդ միջավայրում միայն կա քաղցրություն, արտաբացություն, հարազատություն:

Ցոլակի հիվանդության մասին վաղուց է լսել էի. շա՛տ և շա՛տ ուրախ եմ, որ փրկվել է: Իսկ ի՞նչ է պատահել Միշոյին (Մանվելյանին), ինչո՞ւ է հիվանդացել: Հանգիստ եմ, որ գրում ես, թե՝ լավի է դառնում: Լսել եմ, որ «Աբու-Լալաս» վրացերեն լեզվով լույս է տեսել: Խնդրում եմ, մյուս նամակովդ գրես դրա մասին:

Բարևներ բոլոր-բոլոր ընկերներին՝ Ցոլակին, Պողոս Աբելյանին, Դերենիկին, Սիսակին, Միշոյին, Փանոս Թերլեմեզյանին, Մ. Սարյանին, Հակոբ Խաչատրյանին, Թ, Ավ-

դալբեկյանին, Արշակ Տոնյանին, Թ. Թորամանյանին և մյուս սիրելի ընկեր, բարեկամներին:

Կնոջս, Վիգենի և իմ կողմից կարոտով բարևներ քեզ և տիկին Ռիմային:

Համբուրներով միշտ քո՝
Ավետիք Իսահակյան

248. ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

1933, ապրիլի 1, Փարիզ

Սիրելի ընկերներ.

Թախանձագին ներողություն եմ խնդրում հարգելի հասարակությունից և սիրելի ուսանող ընկերներից, որ հիվանդությանս պատճառով անկարող եղա բանալու այս հանդեսը, որի նախագահության պատիվը մատուցեց ինձ Փարիզի հայ ուսանողական միությունը:

[Հայտնում եմ սրտագին շնորհակալություններս ինձ մատուցած հարգանքի համար և խնդրում եմ թույլ տալ ինձ մի-երկու խոսք ասել ուսանողության դերի և կոչման մասին:]

...Ուսանողությունը միշտ դեպի իդեալն է թևերը թափահարել. խոսքս նրա լավագույն տարրերի մասին է, նրանց, որոնք կյանքի իմաստը բնազդային հաճույքների մեջ չեն գտնում, այլ կյանքի մեջ տեսնում են վեհ իմաստ և բարձր նպատակ:

Այդ ուսանողությունը, իբրև թարմ, երիտասարդ և դյուրագրգռ տարրը հասարակության մեջ՝ ներկայացել է առաջին կրողն ու մուննետիկը դարաշրջանի ամենեն հառաջադեմ և լուսավոր գաղափարների:

Նրա թևավոր հոգին՝ ընդունակ իդեալով խանդավառվելու, զգացել է և հավատացել այդ քանդիչ և ստեղծիչ գաղափարներին, որ փայլատակել են հասարակական ճահճացած և քարացած կարգերի և դրությունների վրա:

Նա՝ ոգևորված՝ նետվել է կռվի ասպարեզ, ընդդեմ

մարդկային զարգացումը կասեցնող և կաշկանդող ուժերի, և որպես հառաջամարտիկ զինվոր, ընկել է այդ կռվի մեջ, բայց հաղթանակելով:

Այսպես է եղել բոլոր ժողովուրդների մեջ և այսպես է եղել մեր հայկական պատմության մեջ:

Հայ ժողովուրդի արևելյան և արևմտյան հատվածների մեջ ուսանողությունն է եղել հայ կյանքը խմորողը. Դորպատի, Պետերբուրգի, Փարիզի և այլ համալսարանների հայ ուսանողներն են եղել՝ Խ. Աբովյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Գ. Արծրունի, Ռուսինյան, Մամուրյան, Ոսկան, Գր. Օտյան, Ծերենց, որոնք, ներշնչված ժամանակի հառաջավոր գաղափարներով, հեղափոխության, դեմոկրատիայի, ազատագրման, սոցիալիզմի տեսիլներով՝ մտել են հայ իրականության մեջ և հուզել են մեր կյանքի բորբոսնած ճահիճը:

Պայքար են մղել ամեն տեսակի բռնությունների, խավարամտության, հետամնացության դեմ: Պայքարել են միջնադարյան կղերի, ամիրաների, էֆենդիների, բուրժուաների դեմ, օտար բռնակալների և նրանց չարաշահության դեմ: Կռվել են գրչով, կռվել են խոսքով, իրենց վսեմ գաղափարները իրականացնելու համար կրել են բանտ, շղթա, աքսոր, հազար տեսակ զրկանքներ:

Երբե՛ք չեն ընկրկել, երբե՛ք չեն դավաճանել, այլ միշտ բարձր են բռնել մարդու ազատագրման և երջանկացման դրոշակը, որ մարդկության ազնիվ ներկայացուցիչները՝ սրկսած մեծ մարգարեներից, մեծ բարոյախոսներից, մեծ փիլիսոփաներից՝ բարձրացրել են դարերի խավարի միջից, և հանձնել են սերունդե սերունդ, մինչև մեր օրերը:

[Այդ վսեմ դրոշակն է—

Մարդկայնություն,

Կատարելագործություն,

Ազատագրում մարդը մարդու ձեռքով շահագործումից,

Ազատագրում ճնշված ժողովուրդների,

Ազատագրում սեռերի, դասակարգերի, ցեղերի՝ առանց գույնի խտրության.

Ժողովուրդների եղբայրություն,

Անհատների ազատություն, հավասարություն, եղբայրություն:

Մեր առաջամարտիկ ուսանողներն են եղել մեր վերածնունդի վարպետները, ռահվիրաները: Նրանք են կերտել մեր նոր մշակույթը, մեր նոր լեզուն, գրականությունը: [Նրանք են շարժման մեջ դրել մեր հասարակական կյանքի զարգացման անիվը:

Եվ դո՛ւք, ներկա ուսանողներդ, նրանց որդիներն եք և ժառանգորդները:]

Ձեր առաջ, սիրելի ուսանող ընկերներ, բացվում է ավելի մեծ և կոնկրետ ասպարեզ, քան որ ձեր նախակարապետներին էր վիճակված:

Այս երկրագունդը, որ ընչաքաղց կապիտալիզմը արյունի ծովերով շաղախեց, ուր խողխողվեցան բազմամիլիոն երիտասարդ կյանքեր և մեր չարատանջ ժողովրդի կեսը, այս երկրագնդի մի վեցերորդի վրա, ծագեց և բարձրացավ դարերով երազած փրկության Արեգակը, որի շնորհիվ կենսագործվեցավ նաև մեր բազմաչարչար ժողովրդի հին երազը: Մեր ազգային ազատությունը իջավ, մարմնացավ մեր երկաթե լեռների և ցորենի դաշտերի վրա:

Այսօր ունինք մենք մեր հայրենիքը, Խորհրդային Հայաստանը, իրավահավասար ընկերը մեծ Միության և նրա քույր հանրապետությունների: (Այնտեղ կառուցվում է մի դրություն, ուր վերջ է գտել մարդկային շահագործումը, ուր պիտի իշխե աշխատանքը և դարբնվի բախտավորությունը բոլոր նրանց համար, ով աշխատում է և ստեղծագործում):

Այնտեղ իրականացնում են մեծ գործեր՝ ազգային և համամարդկային իմաստով: Ստեղծում են նոր, արդար իրավակարգ, նոր մարդկություն:

Այնտեղ ունինք մենք մեր մշակույթը՝ հոգեկան և նյութական բոլոր մարզերի մեջ, իր բոլոր ազդակներով. համալսարան, բազմաթիվ դպրոցներ, կոնսերվատորիա, թատրոն, օպերա, թանգարան և այլն:

Մեր աշխատավոր ընկերները՝ բանվոր և գյուղացի, գործակից ունենալով լավագույն մտավորականներին, տքնաջան, և զրկանքներ կրելով, կառուցանում են հսկա շենքեր, գործարաններ, ջրանցքներ, ճանապարհներ, էլեկտրո-կայաններ... Մշակում են նոր տեխնիկայով հանքերը, անտառ-

ները, դաշտերը: Կերպարանափոխում են երկիրը, հաղթահարում են բնության տարերքը՝ բոլորի բարեկեցության համար:

Ունինք մեր գիտակից բանակը՝ պաշտպանելու համար աշխատավորական հայրենիքը:

Դո՛ւք, ուսանող ընկերնե՛ր, ձեր ուսողության տարիներում, թաթախված և վառված վերածնվող և վերակերտվող հայրենիքով, պիտի այստեղ ամենայն տոկունությամբ կըրծեք գիտության ապառաժը, ամբարեք մարդկության նվաճած գիտելիքներն ու տեխնիկան, այն բոլոր մտավոր դիսցիպլինները, որոնցով հզոր է ներկա մարդը, և զինված, գոտեպնդված այդ թանկագին պաշարով՝ դառնաք հայրենիք:

[Դառնաք հայրենիք և լծվիք անձնվիրաբար ստեղծագործ աշխատանքի, ձեր ժողովրդի հետ կողք կողքի, և ուր պիտի գտնեք ձեր բարձր պահանջներին լիուլի բավարարությունը և ձեր անձնական երջանկության գոհացումը միաժամանակ:

Աշխատող կամքերի համար գրկաբաց է մեր հայրենիքը:

Գնահատեցե՛ք ձեր թանկ ժամանակը և պատրաստվեցե՛ք այդ փայլուն ասպարեզի համար:

Իմ շնորհակալություններս ձեզ, սիրելի ընկերներ և քաղաքացիներ, որ այսօր եկել եք այստեղ մասնակցելու ձեր հարազատ ուսանողների ուրախությանը:

Ես համոզված եմ, որ դուք լավ կգիտակցեք ուսանողության դերը, և ինչքա՜ն բախտավոր պիտի զգաք ձեզ, եթե ավելի գուրգուրանքով, բարոյական և նյութական միջոցներով պաշարեք ձեր մատաղ հայրենակիցներին՝ ուսանելու իրենց կարիքավոր տարիներում:

Չէ՞ որ նրանք են մեր վաղվան իրականության տերերը լինելու և մեր փայփայած հույսերի մարմնացնողները:

Կեցցե՛ Փարիզի հայ ուսանողությունը:

Ընկերական բարևներով, ձեր՝ **Ավետիք Իսահակյան:**

244. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1933, օգոստոսի 5, Փարիզ

Սիրելի ընկեր Սահակ.

Վաղուց է Ձեզ նամակ չեմ գրել, հիմա էլ այս տողերը գրելուս ժամանակ գլուխս շա՜տ խառն է: Կինս երկու շաբաթ կա հիվանդ է, նեֆրիտ ունի, դեռ անկողնու մեջ է: Երևի մի երկու շաբաթ էլ այս դրությունը պիտի տևե:

Ընկ. Գրիգոր Վարդանյանը ամսիս վերջերին, հավանական է, որ ճանապարհ ընկնի դեպի Երևան, և Ձեզ մանրամասն կպատմի մեր այստեղի գործերի մասին:

Անցագին աշխատանք թափեցինք թե՛ մենք, թե՛ ընկ. Գ. Վարդանյանը ներգաղթի բնակարանային ֆոնդ կազմելու մասին: Ինչպես գիտենք, Բարեգործականի և «ՀՕԿ»-ի միությամբ կազմվեց մարմինը (կենդրոնական մարմինը) Պողոս Նուբարի որդու Զարեհ Բեյի նախագահությամբ և իմ փոխնախագահությամբ: Հանդես-երեկույթ կազմեցինք, հանգանակություն բացինք, բայց արդյունքը չնչին եղավ: Հույսերս աշնան վրա է, երբ բուրժուաները կվերադառնան ամառանոցներից և նրանց կդիմենք: Հանգանակության գործը մշտապես պիտի շարունակվի, բայց տնտեսական կրիզիսի պատճառով, ես կարծում եմ, որ մի զգալի գումար չի գոյանալու:

Համակրություն շա՜տ կա, բայց միջոցներ չկան: Հանգանակություն բացինք նույնպես «Արմենիա» հյուրանոցի համար, դա էլ կաղում է, սաստիկ կաղում է:

«ՀՕԿ» ամսագիրը շարունակում ենք դժվարություններով, հազիվ ծախսերը ծածկենք:

Տեսնում եք, սիրելի ընկեր, որ մխիթարական բան քիչ կա: Գոնե առայժմ:

Ինչ որ իմ ձեռքում կա, ես անում եմ գործի համար, բայց իմ ուշադրության կենտրոնը իմ գրական գործն է, որով վերջին ժամանակներս շատ մտահոգված եմ, ուզում եմ լրացնել կիսատ բաներս: Ո՞վ գիտե ի՜նչ լինի, ի՜նչ չլինի. պետք է շտապել:

Գր. Վարդանյանը վիզա չկարողացավ ձեռք բերել Ամե-

րիկա գնալու համար. դեռ հույս ունի: Մյուս կողմից էլ մտածում է, որ այնտեղ անելիք չունի, նույն կրիզը, փողի չգոյությունը ամեն տեղ է:

Սիրելի ընկ. Սահակ, ապրիլ ամսից սկսած մինչև հիմա, ուրեմն 6 ամիս, ես կենսաթոշակս չեմ ստացել. դիմեցի Բարեգործականին, կարծելով, թե՝ Դուք նրան հայտնել էիք, որ ամսե ամիս կամ պերիոդներով վճարեն ինձ, ինչպես հեռագրով իմացրիք ինձ Ձեր որոշումը՝ թոշակս պարբերաբար ստանալուս համար: Բայց Բարեգործականը պատասխանեց, որ Ձեզնից հրահանգ չունի:

Ձեզ վաղուց պիտի գրեի այդ մասին, բայց գլուխս կորցրել էի, դրա վրա մտածելու ժամանակ չունեի:

Հիմա շատ խնդրում եմ Ձեզ, որ Բարեգործականին կարգադրեք՝ կանոնավոր ստանալու համար ամսականներս, և մինչև այժմ չստացածս: Ավելի հարմար է ֆրանկով ստանամ, որովհետև դոլլարի կուրսը ընկել է և կայուն չէ: Ջերմագին և կարոտալի բարևներով, մնամ Ձեզ հարգող և սիրող, Ձեր անձնվեր՝

Ավետիք Իսահակյան

245. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1933, օգոստոսի 18, Փարիզ

Սիրելի Գարեգին, նամակիդ անմիջապես չպատասխանեցի, որովհետև ուզում էի Պարույրից նամակ ստանալ: Հիմա միասին ուղարկում եմ: Ինձ էլ էր գրել, որ լավ է դառնում. շա՛տ ուրախացա: Նույնպես հայտնել էր, որ իր ժամանակին ստացել է ուղարկածս «Սայաթ-Նովան», որի մասին զլացել էր ինձ գրել: Հիմա սպասում եմ քո ընդարձակ նամակին: Դու շա՛տ բան ունես գրելու ինձ, ոչ թե ես՝ քեզ: Իրականությունը ձեր մոտն է, շինարարություն, գործեր. մենք ապրում ենք երազով: Գրիր շա՛տ ու շու՛տ-շու՛տ:

Իմ վերադարձը միշտ ձգձգվում է, երևի, հառաջիկա գարնանը անպատճառ կվերադառնամ. գոնե ես այդպես եմ

կարծում: Կարոտել եմ Երևանին, ընկերներին, և ձանձրացել եմ Եվրոպայից. բացի այդ՝ Փարիզում չի կարելի աշխատել. մեծ քաղաք է, կլանում է մարդու ուժերը և շա՛տ հոգնեցնում: Շատ ժամանակ է խլում երթևեկը, հասարակական գործուներությունը, ժողովներ, վեճեր, պայքար: Եվ գրական գործերս երեսի վրա են մնում: Հավատացած եմ, որ Երևանում ավելի հանգիստ կլինեմ, ավելի ժամանակ կունենամ գրական աշխատանքներիս նվիրվելու: Առողջությունս գեշ չէ — բավարար է: Կինս վերջերս շատ ծանր հիվանդացավ, հիմա լավ է: Տղաս հաջող գործի մեջ է, սինեմայի մեջ է աշխատում, առաջ է գնում. ապագան փայլուն է:

Հիմա վերջացնում եմ նամակս և խնդրում եմ բարևներս տեղ հասցնես — բարևներ Դերենիկին, Սիսակին, Պողոս Աբելյանին, Ցոլակին, Միշա Մանվելյանին, Արշակ Տոնյանին, կնոջը, Վ. Թոթովենցին, Զ. Եսայանին, Ալազանին, Գ. Մահարուն, Փանոս և Ռուբեն Թերլեմեզյաններին, Եղ. Չուբարին, Վ. Նորենցին, Մ. Սարյանին, Հ. Կոջոյանին, Թ. Թորամանյանին. և այլն, և այլն: Ում որ գիտես, բարևիր:

Բարևիր և՛ կնոջդ ու ձերոնց:

Մյուս թերթը կհանձնես նկարիչ Ստեփան Աղաջանյանին: Բարևներ մերոնց բոլորի կողմից:

Համբույրներով, քո՝

Ավետիք Իսահակյան

246. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ

1933, օգոստոսի 22, Փարիզ

Սիրելի ընկեր Զապել Եսայան.

Չգիտեմ, ի՛նչ խոսքերով ներողություն պիտի խնդրեմ Ձեզանից այն ծուլության, այն դանդաղկոտության և չգիտեմ ուրիշ ինչ տգեղ պատճառի համար, որոնցով ընդարմացած եմ ես, և չկարողացա իր ժամանակին Ձեր սիրալիր, ուշադիր նամակներին պատասխանել: Մի խոսքով, ներո՛ղ եղեք:

Ամենից առաջ կինս չափազանց շնորհակալ է, որ այն-

պես խնամքով հանձնել եք նրա մորը տրվելիք իրերը: Շա՜տ շնորհակալ եմ, որ այդքան զբաղումների, հոգերի մեջ չեք մոռացել ինձ գրել և երկրորդել նամակներդ:

Ես այստեղ խրված եմ ապարդյուն գործերի մեջ. ՀՕԿ-ի փոխնախագահ, «ՀՕԿ» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ. ապարդյուն եմ ասում, որովհետև աճագին ջանք և ժամանակ ենք սպառում և արդյունքը՝ չնչին: Ինչպես միշտ և հիմա էլ ես շփոթված եմ և շվարած: Եղբա՜յր, ինձ պետք է մի խաղաղ անկյուն, մի գրասեղան, մի կտոր հաց, նստեմ և գրեմ, լավ թե գեշ՝ գրեմ, գրեմ: Սակայն այդ բացակայում է: Այս տարի Ձեր հեռանալով, Տ. Զավենի հեռանալով, ավելի խճճված եմ հասարակական գործերի մեջ.— ժողովներ, ժողովներ, ներգաղթի մարմին, (նրա փոխ-նախագահն եմ), և օրեցօր ավելի եմ հեռանում գրասեղանից: Մինչև ե՛րբ պիտի տևե այս սրտմաշուկ վիճակը: Հույսս՝ Երևանն է, որ գամ և վերջնականապես ամփոփվեմ իմ սիրած գործով...

Շա՜տ ուրախ եմ, որ գոհ եք Ձեր վիճակից և անվրդով աշխատում եք: Շա՜տ լավ արիք, որ թողեցիք Փարիզը, այս քաոսը: Անկեղծորեն նախանձում եմ:

Մի քանի օրեն Տ. Զավենը կմեկնի. սեպտեմբերի միջին կլինի Երևան:

Երկու օր առաջ Ձեր որդուն՝ Հրանտին իր նշանածի հետ տեսա «ՀՕԿ»-ի օֆիսում: Գյուղից էր գալիս, և նշանածի հետ մեկնելու էր Նիս՝ նշանածի ծնողների մոտ: Հարսդ՝ կենսուրախ, աչքաբաց աղջիկ է. ինդիկի տիպ է (հնդուս): Շատ բարևներ ուղարկեցին: Հարսիդ հարցրի, թե ի՞նչ կուզես գրեմ սկեսուր-մայրիկիդ: Ասաց, թե՝ գրիր, որ կուզենայի, որ նա ինձ սիրեր: Հրանտը շատ առողջ և զվարթ տեսք ուներ:

Կինս երեք շաբաթ հիվանդ էր երիկամունքից, հիմա լավ է, ոտքի ելավ: Շատ տանջվեցինք:

Մի քանի օր հետո կնոջս հետ մեկնում ենք Ժընևի մոտ, սահմանին կից մի գյուղ: Այնտեղ մի ընկեր ունեի, որ այս տարի մեռավ. նրա մոտ թողել էի գրադարանս. գնամ, որ հավաքեմ, տեղափոխեմ Փարիզ, և այստեղից էլ Երևան: Կամաց-կամաց պատրաստվում եմ Երևան գալու:

Վիգենը լավ է, աշխատում է նույն տեղում: Գր. Վարդանյանը կամ Ամերիկա կմեկնի, կամ կգա Երևան. դեռ որոշ չէ: Բայց գալը որոշ մարդկանց կողմից հուսացած արդյունքը չտվեց: Նույնը լինելու է և Ամերիկայում: Սկզբից գիտեմ: Կրիզի ծանր տարիներ են, դրամ չկա, և այլն, և այլն: «ՀՕԿ»-ի գրասենյակի և «ՀՕԿ» հանդեսի ծախսերը հազիվ թե կարողանանք ծայրը ծայրին հասցնել: Բախտավոր օրս պիտի լինի այն օրը, որ «ՀՕԿ»-ի հոգերից պիտի ազատվիմ:

Սիրելի ընկեր, նյութ եք ուզում «Խորհրդային արվեստի» համար և տեղական բնույթի նյութ: Երբեմն խորհում եմ այդ մասին, բայց տակավին սրտովս նյութ չեմ գտել: Նորեն կմտածեմ, թերևս մուսաս անակնկալի բերե ինձ: Գնամ Ծրնև, գամ, ամփոփվեմ, տեսնեմ: «ՀՕԿ»-ի համար էլ նյութ պիտի տամ...

Ձեք գրում, թե ի՞նչ է անում օր. Սոֆին, ինչպե՞ս է զգում իրեն և ինչո՞վ է զբաղվում:

Հիմա խնդրում եմ այս բարևներս տեղ հասցնեք — բարև՝ Դերենիկին, Մ. Մանվելյանին, Փ. Թերլեմեզյանին, Վ. Թոթովենցին, Ս. Հակոբյանին, Եղիա Չուբարին և Մանյային, պրոֆ. Հովհ. Հակոբյանին, Մամիկ. Գեորգյանին, Դրաստամատին, կնոջը, Ա. Բակունցին:

Բարևներ կնոջս կողմից Ձեզ և օր. Սոֆիին:

Եվ իմ կողմից շատ ջերմ և հարգալիր և սիրո բարևներ Ձեզ և Սոֆիին:

Ձերդ՝ **Ավետիք Իսահակյան**

247. ՁԱՐԵՀ ՈՐԲՈՒՆՈՒՆ

1933, հոկտեմբերի 5, Կոլոնժ

Սիրելի ընկեր Որբունի.

Շա՜տ ներողություն եմ խնդրում մինչև օրս Ձեզի պատասխանած չլինելուս և շնորհակալություն չհայտնելուս համար: Բանն այն է, որ Ձեր նամակն ու գիրքը ստանալուս

օրերը մեկնեցի այս գյուղը հանգստանալու համար, շա՜տ հոգնած էի և սիրտս (ֆիզիկական) թույլ էր:

Գլուխս այնքան խառնված էր, որ մոռացա Ձեր գիրքը հետս առնել, այստեղ կարդալու համար: Առաջին օրերս՝ այստեղ գրեթե բան չէի անում, և հետաձգում էի Ձեզ գրել՝ մտածելով, որ Փարիզից կգրեմ և գրքիդ ընթերցումի տպավորության մասին էլ, միասին: Հիմա, տեսնելով, որ ուշացավ պատասխանս, շտապում եմ այս երկու տողը գրել:

Փարիզից կգրեմ Ձեզ ընդարձակ:

Ինչ որ բան էիք հարցրել ինձ, Երևան նյութ ուղարկելու մասին: Ես բնավ տեղեկություն չունեմ, թե ինչ մասնավոր հրատարակության մասին է խոսքը. միայն թե տիկ. Զ. Եսայանի վրա, «Խ. Հայաստան»-ի հասցեով կարող եք ուղարկել, ինչ որ կամենաք և ապահով հասցե է:

Շա՜տ շնորհակալ եմ նվերիդ համար:

Հույս ունեմ, որ լավ եք, առողջ եք ու շարունակում եք գրել: Երևի լույս տեսավ Ձեր գիրքը, որի մասին խոսեցիք ինձ և Հրաչի հետ:

Լավագույն բարևներով, Ձերդ՝

Ավետիք Իսահակյան

248. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1933, հոկտեմբերի 26, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Նամակդ ուղարկեցի Պարույրին, իսկ Պարույրից ստացած այս նամակը մի քանի օր առաջ էի ստացել, որի առաքումը ուշացավ, որովհետև Թամարայի քույրը նամակ պիտի բերեր և ուշացրեց. հիմա, ուրեմն, երկու նամակները միասին եմ ուղարկում: Եփրիկյանին կհանձնես ներփակը:

Դու ինչքան որ նամակ ես ուղարկել ինձ, բոլորն էլ անպատճառ ուղարկել եմ Պարույրին. միամիտ եղիր:

Պարույրի մասին էլ միամիտ եղիր. այս նամակի հետ ուղարկած լուսանկարը ցույց է տալիս, որ տղան զվարթ է և կենսուրախ, առողջ:

Առաջին նամակներիցդ մեկի մեջ գրել էիր Շարականի մասին: Այստեղ մի ունևոր հայ գրավաճառ կա. նա էլ տրամադրություն չունի գնելու: Ուրիշ մարդկանց հարցրի, որոնք ասում են, թե ամենից առաջ՝ գիրքը պիտի ներկա լինի, որ գնողը տեսնե: Այս հին պատասխաններն էին, որ մոռացել եմ քեզ իր ժամանակին գրել:

Երեկ մի մարդու տեսա, որ սովորաբար այդպիսի գրքեր հավաքող է. ասաց, որ ներկա կրիզի ժամանակ ոչ ոք այդպիսի քայլ չի անի, զորօրինակ, ինքը, հրաժարվում է:

Իսկ ուղարկել գիրքը այստեղ առանց նախորոշ, անպայման գնողի — արկածախնդրություն է: Վա՛զն անցիր, առայժմ:

Ես բան չունիմ գրելու. գաղութում կյանք չկա, այսինքն՝ ստեղծագործ աշխատանք. միայն իրար միս ուտել, իրար հայհոյել, ծեծ, արյունհեղություն և ուրիշ ոչինչ: Ինչ որ կա լավ և պայծառ բան՝ այդտեղ է, ձեզ մոտ, Խորհրդային Հայաստանում:

Սեդրակ Աբդալյանը եկավ և շատ ոգևորիչ բաներ է պատմում. սիրտս բաբախեց. քա՛ղցր բան է հայրենիքը և հավիտյան ապրեցնող և հուզող:

Բարևներ սրտով և սիրով բոլոր ընկերներին և ձեզ՝ զույգիդ:

Համբույրներով, քո՝
Ավետիք Իսահակյան

249. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1934, մարտի 29, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և վերջին անգամ ուղարկածդ նամակը լուսանկարով միասին. ուղարկել եմ իսկույն Պարույրին, բայց մինչև օրս նրանից պատասխան չունեմ: Սակայն վատ բաներ չմտածես, որովհետև չկան. հասցեն փոխել էր. գնացել էր մի նոր տեղ, նոր սանատորիա, ուր արդեն լավ դար-

ձածներն են գնում: Հանգի՛ստ եղիր. «ՀՕԿ»-ի միջոցով կգրեմ, տեղեկություն կստանամ:

Սիրելիս, չես գրում, թե ստացա՞ր Պարույրի ուղարկած լուսանկարը. վաղուց եմ ուղարկել: Հետո գրել էիր «Ցայսմաւուրքի» մասին: Այդ առթիվ էլ էի գրել, որ՝ առնող չկա, կամ եթե առնող էլ լինի, պետք է ապրանքը, առարկան տեսնեն: Ոչ մեկի մասին չգրեցիր:

Ներփակ ուղարկում եմ ռումանական «ՀՕԿ»-ի վկայագիրը Պարույրի մասին: Մեր «ՀՕԿ»-ի թղթերից ելավ. մոռացած էին իր ծամանակին ուղարկել:

Շնորհակալ եմ, սիրելի Գարեգին, տված լուրերիդ համար: Եթե մի բան կատարվում է հայության մեջ, դա էլ Հայաստանումն է կատարվում: Ստացանք «Կապիտալը». ի՛նչ հոյակապ գործ. կեցցե Թ. Ավդալբեկյանը. ո՛նց հերոսաբար հաղթահարել է Մարքսի դժվարահաղթ լեզուն. ե՛րբ Թադեոսը սորվեցավ այդքա՛ն գերմաներեն. զարմանալի մարդ է. հանճարեղ մարդ է Ավդալբեկյանը. հազար անգամ կեցցե:

Գրականության պատմությունը դեռ չեմ կարդացել. կարդամ, կգրեմ նրա մասին: Երևի կստանանք Բունիաթյանի «Գառնին». շա՛տ եմ հետաքրքրվում: Կեցցեք երևացիներդ. ի՛նչ մեծ գործեր եք կատարում: Գաղութահայության մեջ բան չկա. ջուր ծեծել է. զավզակություն, բառեր, ածականներ — թրքահայկական գրականություն. գոռշ է արժեքը:

Շա՛տ և շա՛տ ցավեցի Թորամանյանի կորստի վրա. շա՛տ հասմով մարդ էր, և իհարկե՝ եզակի մասնագետ:

Այսպե՛ս, սիրելիս, գնում են մեր սերունդի խոշորները, մեր ընտիրները: Անհունորեն ցավալի է այս օրենքը:

Ես էլ շուտ-շուտ հիվանդանում եմ. սիրտս լավ է, բայց պիտի շարունակ խնամել: Այս մոտ օրերս գյուղ եմ գնում, Փարիզի մոտիկ մի գյուղ. այնտեղ պիտի մնամ մի քանի ամիս, որպեսզի թե՛ հանգստանամ Փարիզի այս տենդից ու աղմուկից, ժողովներից, վեճերից, և ամփոփվեմ, գրեմ: Շա՛տ եմ ուզում գրել, բայց միշտ խանգարվում եմ: Էնքան չմեռնեի, կիսատ գրություններս ավարտեի, վերադառնայի Երևան, և այնտեղ գոցեի աչքերս: Ծերությունը արդեն փաթթում է մեզ...

Դու ինչպե՞ս ես, ինչպե՞ս է առողջությունդ. գրել էիր մի անգամ, թե սիրտդ սկսել է մի քիչ թուլանալ. հիմա ինչպե՞ս ես: Լա՛վ պահիր քեզ: Ինչպե՞ս է Դերենիկի առողջությունը. գրի՛ր, ամեն անգամ նրան բարևներս տուր, և մեր բոլոր ընկերներին: Շա՛տ ուզում եմ բոլոր սրտագին ընկերներին գրել՝ Դերենիկին, Միշոյին, Պողոսին, Ցոլակին, բայց չի լինում, ժամանակ չկա:

Լսեցինք, որ Ե. Չարենցը մի նշանավոր գիրք է գրել, բայց չտեսանք. մեկն ու մեկին, որ ունեն, ասա, որ մի հատ ուղարկեն մեզ, «ՀՕԿ»-ին:

Սիրելիս, երբ մեր քաղաքացի Լյուդվիգ Սարգսյանին տեսնես, ասա, որ «ՀՕԿ»-ի վրա (քո նամակիդ հետ մեկտեղ) նամակ եմ գրել իրեն, գնա, ստանա:

Շա՛տ բարևներ բոլոր մեր ընկերներին, սիրո և կարոտի բարևներ: Բարևիր կնոջդ. բարևներ մերոնցից:

Ի՞նչ եղավ Ա. Թամանյանի ժողովրդական տան շենքը. բարձրանո՞ւմ է, արդյոք: Կառուցվո՞ւմ է «Մելքոնյան գրադարանը»:

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

250. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

<1934>, ապրիլի 25, Փարիզ

Սիրելի Վահան.

Այստեղ Արշակ խան Գորոյանը և բարեկամդ՝ պ. Վռամ Փիլոսյան՝ հանձն առան միջամտել Պարսից դեսպանատանը, որ տղայիս անձնագիր տան հենց որ ստացվի Բեռլինի կոնսուլատից procès-verbal*-ի պրոտոկոլը և մի վկայական այդ արձանագրության հիման վրա, որ նա պարսկական քաղաքացի է:

Նրանց խորհրդով, և տրամաբանական է, որ տղաս գրե խնդիրը տեղույդ կոնսուլի վրա, և այսօր խնդիրը ուղարկեց արդեն:

Խնդրի մեջ գրված է, որ նրա հայրը, մայրը և ինքը՝

* Արձանագրություն (ֆր.)

Վիգեն Իսահակյան, ծնված 1910 թվին, ստացել են անձնագիր, լինելով պարսիկ հպատակներ. այնուհետև նա (որդիս) պատերազմի տարիներին և հետո, մինչև 1927 թիվը, սովորել է Վենետիկ, Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում, և այդ ժամանակաշրջանում անձնագրի պետք չունենալով և փոքր լինելով, կորցրել է անձնագիրը: 1927 թվին դպրոցի վարչության միջամտությամբ ստանալով laissez-passer*, իհարկե իտալական, և դրանով եկել է Փարիզ, Սորբոնի համալսարանում ուսումը շարունակելու: Ամեն անգամ, որ ուզեցել է վերահաստատել իր պարսկական քաղաքացիությունը, հարկավոր դոկումենտները չունենալով, ետ է դարձել այդ մտքից և մնացել է առանց անձնագրի: Հիմա մտածում է և հավատացած է, որ երբ ստանա 1914 թվի procès-verbal-ի պատճենը և certificat** իր քաղաքացիությունը հաստատող (հենց պասպորտ տալու փաստի վրա), այստեղ կստանա պարսկական դեսպանատնից անձնագիր և կվերահաստատվի իր իրավական դրությունը:

Սա է գրված, և դու սա պիտի պաշտպանես, և շա՛տ պիտի խնդրեի, որ արագացնես: Մեր բարեկամները այստեղ մնացածը կլրացնեն: Զինվորության հարցն էլ կլուծեն. դեռ որդիս սովորում է, ուրեմն հետաձգում, և բացի այդ, ասում են, որ մի հատիկ որդուն չեն տանում զինվոր:

Երկրորդ կարևոր կետն էլ այն է, որ ես չպիտի երևամ. ես բացակա եմ: Որդիս չափահաս է և ջանք է գործ դնում վերագտնել իր nationalite***.— Պարսկաստանի քաղաքացի լինելը:

Քո հանձարը նրա մեջ պիտի լինի, որ արագացնես և անսպասելի արգելքներ, ձևականություններն հաղթահարես:

Որդուս ապագան, երևակայիր, այդ անձնագրից է կախված. եթե այդ մոգական թուղթն ունենա, Սպանիայում իսկույն հաց կունենա և ուրիշ տեղեր ևս՝ Իտալիա, Ամերիկա և այլն:

Քո տված հարցի մասին հետո կխոսեմ: Հավատացած

---

* Անձնագիր (ֆր.)

** վկայական (ֆր.)

*** ազգություն (ֆր.)

եղիր, որ այս տողերը շա՛տ զոռով գրեցի. հիվանդ եմ, դողում եմ, մրսել եմ. ամբողջ մարմինս ջարդված է:

Առայժմ շատ բարևներ և համբույրներ:

Քո՝ **Ավետիք**

17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

251. ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1934, ապրիլի 25, Փարիզ

Սիրելի Արմիկ և Աբաս ջան.

Նամակդ, որ ստացա մի-երկու օր առաջ, շա՛տ և շա՛տ ուրախացրեց ինձ, միևնույն ժամանակ տխրեցրեց և հուզեց: Ուրախացա, որ վերջապես քեզնից բարի լուր առա, տխրեցի, որ դեռ տառապում ես: Չորս տարի է անցել, ինչ որ թողել եմ Միության սահմանները. քո մասին սկիզբները հարցրել եմ, պատասխան չեմ առել և ընկել եմ շա՛տ տխուր ենթադրությունների մեջ՝ ի նկատի ունենալով քո վիճակը, առողջական դրությունդ, և հետո վախենում էի քո մասին հարցնել. վերջերս Կոլյայից գրեցի, որ մի լուր առնեմ քեզնից, դեռ չունեմ:

Լուր չունեմ մայրիկիդ և Օլիկի մասին. ո՞վ գիտե, արդյոք ի՞նչ եղած...

Շատ ուրախ եմ, որ Արմիկի հետ ես և միասին կմխիթարվեք. չափազանց հուզվեցա, որ տղա ունես և անմահ Իսահակի անունով. գրում ես, որ առողջ երեխա է. լա՛վ պահիր: Միշտ հոգ տար և՛ քո առողջության վրա. չգիտեմ Միհուսինսկ քաղաքը ի՞նչ մեծության է. ունի՞ լավ բժիշկներ, որ միշտ նրանց դիմես, նրանց հսկողության տակ լինես:

Արդյոք շա՛տ պիտի մնաս դեռ Սիբիրում. մի՞թե չես կարող դիմում անել, դառնալ Երևան: Դու, երևի, գիտես, որ ես Հայաստանի կենտգործկոմի անդամ եմ, член ЦИК'а Армении. որպես այդպիսին չե՞մ կարող միջնորդել, արդյունք կունենա՞. ի՞նչ ես կարծում:

Եթե չեղավ, երևի, մի տարուց հետո ես Հայաստան կլինեմ, թերևս մի բան արվի:

Դուք ի՞նչ եք անում, ինչո՞վ եք ապրում, ո՞ւր եք աշխատում. ինչպես է բոլորիդ առողջությունը:

Գալով մեր մասին,— ես Հայաստանի օգնության (ՀՕԿ) կոմիտեի փոխնախագահն եմ, աշխատում եմ այդ գծով, նույնպես ներգաղթի մարմնի փոխնախագահն եմ, որ դրամ է հավաքում գաղթականներ փոխադրելու Հայաստան: Գիտակցաբար և սիրով աշխատում եմ Խորհրդային Հայաստանի բարձրացման համար:

«Ուստա Կարո» վեպս տպված չէ, և տպվելիք էլ չունի. շատ մեծ գումար է պետք, և որովհետև չի տպվում, ուստի չի էլ վերջացել. միշտ մշակում եմ, և քառս է դարձել. շա՜տ ուշացավ, ճնացավ, փոխվեցին ժամանակներն ու տրամադրությունները. դարձավ պատմական վեպի պես մի բան, բայց եթե մի-երկու տարի կյանք ունենամ, իր վերջնական ձևը կգտնի:

Այդ վեպի գլխին շա՜տ փորձանքներ եկան, տարիներով կտրված էի նրանից և հեռացած էր ինձնից:

Վիգենը թողեց համալսարանը, չուզեցավ վերջացնել, տարված է սինեմայի (կինո) արվեստով և մինչև վերջերս աշխատում էր Փարիզի ստուդիոների մեջ. իհարկե, ոչ դերասան, այլ ստեղծող, տեխնիկ, պատրաստվում է ֆիլմեր նկարել. շնորհք ունի. գրում է թերթերում սինեմայի մասին. ծանոթ է նայտնի ռեժիսյորների հետ, ինչպես Էյզենշտեյնի հետ: Հիմա ընդհանուր կրիզի պատճառով գործ չունի. առաջարկում են Սպանիա գնալ, դեռ չի որոշված. գուցե գնա Մոսկվա, Совкино-ում աշխատելու:

Համալսարանում գրականություն և փիլիսոփայություն էր լսում, բայց բոլոր ուշքը սինեմայի վրա էր. թո՜ղ գնա իր սիրած ճանապարհով. սինեման մեծ արվեստ է, մասսայական է, և մեծ ապագա ունի:

Ուղարկում եմ քեզ 300 ֆրանկ, որից 100 ֆրանկը Վիգենը տվեց սիրելի Իսահակի համար, որ հագուստ առնեք: Ձեռքս որ փող անցնի, քեզ նորից կհասցնեմ. միամիտ եղիր. մանավանդ, երբ Վիգենը գործի անցնի:

Խորհուրդ տվեց Փարիզի բանկը, որ Торгсин-ի գործով է զբաղվում, այս կերպ վարվել. ուրեմն չեքով Торгсин-ից ամեն բան կառնես:

Իսկույն կգրես ստանալուդ մասին:

Կարծեմ 300 ֆր. կբռնե մոտ 23 ռուբլի:

Եթե այս ձևը հարմար չէ, գրիր ուրիշ կերպ ուղարկեմ:

Շա՜տ բարևներ և համբույրներ Սոֆիի և Վիգենի կողմից,

Համբուրում եմ երկուսիդ և Իսահակին հատկապես:

Քո՝ **Ավետիք Իսահակյան**

Մոռացա ասել, որ Վենետիկ ուղարկած քո նամակներդ երբեք չեմ ստացել:

A. Issahakian,
17.rue Denfert Rochereau.
Paris 5.

252. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1934>, ապրիլի 30, Փարիզ

Սիրելի Գարեգին ջան.

Ներփակ կստանաս Արտաշեսի նամակը, որ երեկ ստացա:

Ի՞նչ անես, հոգիս, այս է վիճակված մեր բոլորիս, և ավելորդ եմ գտնում մխիթարանքի խոսք ասելու քեզ:

Խեղճ Պարույրը շա՜տ էր ուզում Հայաստան գալ, երևի, հոգին վկայում էր, հողը քաշում էր, բայց բախտը այլ էր կամեցել: Ամիսներ առաջ հայտնի էր ինձ, որ վիճակը օրեցօր վատանում է, օրհասական ելքին ավելի շուտ էինք սպասում: Ես քեզ չէի գրում. գրելու բա՞ն էր, որ գրեի:

Ափսո՜ս Պարույր, ինչքա՜ն դեռ հույսեր, երազներ, եռանդ հետը տարավ, հավիտյան անդարձ: Ռումանիայում սիրված էր, և թաղումը կատարված է շքով...

Սիրելիս, դու քեզ լա՜վ պահիր, ջանք դիր շատ չընկճվելու. տար, դիմացիր. մեզանից ամեն մեկը սոսկալի կորուստներ <է> ունեցել. հայտնի է քեզ:

Լսած եղա՜ք, որ երեք ամսից ի վեր Ա. Ահարոնյանը անդամալույծ ընկած է, ո՜չ կարողանում է շարժվել, ո՜չ խո-

սել, ո՛չ էլ նույնիսկ գիտակցել ամբողջովին: Մի վիճակ, որի համեմատաբար մահը փառք է, երջանկություն... Ընկնել անգիտակից, անզգա, բույսի պես միայն շնչել. սխալվում եմ, բույսը լավ է, ծաղկում է, բուրում է, այլ մեքենայի պես... Մի երկու օր էլ առաջ նրա կնոջ եղբայրը՝ Միք. Վարանդյանը կաթվածք ունեցավ և մեռավ. նրանից ավելի բախտավոր եղավ:

Սիրելի Գարեգին, մի ամիս առաջ «ՀՕԿ»-ի վարչության հասցեով ուղարկեցինք Արամ Չարըքի կողմից նվիրված «Օ. Խայամի» թարգմ. գրքերից. մի-մի օրինակ նվեր կա քեզ, Դերենիկին, Չարենցին, Ա. Կարինյանին. գնացեք, ստացեք, չկորսվի:

Շատ բարևներով և համբույրներով,
քո՝ **Ավետիք**

Հ. Գ. Ներփակ նամակս հանձնիր Տիգրան Չավենին. նրա նամակի մեջ (գրած մարտի 31-ին) քեզ վրա նամակ էի գրել. ստացիր: Մի՞թե ձեռքդ չի հասել:

253. ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՅԱՆԻՆ

1934, հունիսի 6, Ռուսաստ

Սիրելի Վահան.

Շնորհակալությամբ ստացա նամակդ և կոնսուլից էլ թուղթը: Բայց կարծում եմ, որ տղայիս անունը պիտի լիներ. թերևս մարտ-ապրիլ ամիսներում, 1914 թ.: Ինչ որ է. տեղիս կոնսուլատը խորհուրդ տվեց նորից դիմել Բեռլին և խնդրել, որ պատճենը պարսկերեն տան և կնիքով, տղաս գրել է: Շատ հույս ունենք ստանալու: Վռամ խանը Ժընևն էր, որ գա՝ մի բան կանե. դեսպանի քարտուղարը խոստացավ, տղայիս հետ ծանոթացավ և բարեկամացան. երիտասարդ տղա է, և իհարկե, համոզված է, որ պարսկահայ է:

Հարց էիր տվել գաղութների հայության հարատևության մասին: Շա՛տ բարդ հարց է, կախված է զանազան պայ-

մաններից, ըստ երկրի, մշակույթի, (կուլտուրայի) քանակի և որակի: Մոտավորապես 600 000 հայեր կան՝ սփռված աշխարհի չորս կողմերը: Նրանք, որոնք գտնվում են, օրինակ, Ֆրանսիայում, մոտ 60 000 ուշ կամ կանուխ ձուլման են դատապարտված: Նոր սերունդը հայերեն չի ուզում սովորել, նույնիսկ ամաչում է դուրսը հայ երևալ: Վերջապես, հացի խնդիրը կա, որ հարկադրում է իշխող լեզվի լավ գիտենալու անհրաժեշտությունը: Հետո ֆրանսիական մեծ կուլտուրա կա, մեծ գրականություն և ֆրանսուհիներ: Սրանք ամենքը ձուլող մեծ մեքենաներ են: Մենք կարող ենք այս դաժան երևույթի դեմ պայքարել, գոնե մաքը հետաձգելու համար, հետևյալ միջոցներով՝ հայ գրականություն տարածելով, հայ լեզվի դասընթացներով — պատմության, անցյալի և ներկայի մասին, և մանավանդ՝ ոգևորելով Հայաստանի փաստով: Այս փաստը, ինչքան նկատել եմ, խանդավառող հատկություն ունի: Քանի ուժովնա Հայաստանը, գաղութահայությունը այնքան կհուսալցվի, կապրի այդ ներշնչող իրականությամբ: Եվ վերջապես ներգաղթը կա: Թեև հիմա ներգաղթը տկար է, ցանկալի չափերով չէ, բայց Հայաստանի վերելքի հետ զուգընթաց սա էլ թափ կառնի:

Նույն վիճակն է ամերիկահայերի վերաբերմամբ:

Ուր որ հոծ բազմություն կա, իրար գլխի հավաքված, ավելի երկար կյանք կունենան: Օրինակ, Կալիֆորնիա, Բուենոս-Այրես և այլուր, բայց Նյու-Յորք, Չիկագո՝ հոգևարք է:

Իսկ այն երկրները, ուր տիրող կուլտուրան թույլ է, հետամնաց երկրներում, և հայ գաղութները համեմատաբար հոծ և հին տվյալներով, շա՛տ երկար կապրեն: Այստեղերը ձուլումը շատ դանդաղ է ընթանում, օրինակ, Ռումանիա, Բուլգարիա, Հունաստան, Եգիպտոս և մանավանդ Սիրիա, ուր կա մոտ 140 000 հայություն: Վերջին վայրում ձուլման, այլասերման նշաններ առայժմ չկան: Կան հայկական բեկորներ, 70—80 000 հոգի՝ Թուրքիայում, այնտեղ ձուլում, թուրքացում չկա, բայց տնտեսական հյուծում: Ես լավատես չեմ նրանց նկատմամբ:

Հետո, քո Պարսկաստանը, որ դու լավ գիտես. պարսկացում չկա, բայց <կա> տնտեսական քայքայում: Ռիզա խանի ձուլման քաղաքականությունը հայերի դեմ չի ուղղ-

ված, այլ թուրքերի՝ Ատրպատականի: Եվ պարսկահայերը, իբրև հին գաղութ, ունին տպադիցիաներ, ավանդություններ, սովորույթներ՝ տակավին ամուր և ազգապահ: Իսկ Ատրպատականի և Թավրիզի հայերը մոտիկ լինելով Հայաստանին, կտաքանան և կներշնչվեն վերջինով:

Այս է իմ համեստ կարծիքը:

Սիրելի Վահան, դր. Ջեմսի մոտ ունեմ մի կապոց նամակներ, հետաքրքրական, պատմական բաներ, կարծեմ կան, և մի շարք գրքեր: Խնդրեցի, որ քեզ մոտ թողնե, ինքը գնում է Պարսկաստան: Խնդրում եմ մի տեղ դիր մնա, ես կգրեմ Երևան, որ տեղափոխեն: Առհասարակ, ձեռքդ որ գիրք կընկնի, հայերեն, գերմաներեն, եթե քեզ պետք չեն, պահիր Հայաստանի համար. շարունակ ես հավաքում եմ ձվերներ և ուղարկում ենք պետական ազգային գրադարանին: Օտար լեզուներով գրքերի և հին հայերեն գրքերի (որոնք այլևս չեն վերատպվում) մեծ կարիք կա: Ես իմ գրադարանները բոլորը տվել եմ պետ. գրադարանին: Այսօր մեր պետակ. գրադարանը (Bibliothèque nationale) ավելի քան 800 000 հատոր գիրք ունի. հայերեն, ռուսերեն, կան ֆրանսերեն, բայց գերմաներեն՝ քիչ:

Համենայն դեպս հավաքիր, իբրև ձվերներ, և գրիր ինձ, կկարդացնենք:

Ես դեռ այս տարի այստեղ եմ:

Ի միջի այլոց, ամսից ավել է այս գյուղումն եմ. եկել եմ հանգստանալու և պարապելու, Փարիզից $1/2$ ժամ հեռու է, իջևում եմ պետք եղած դեպքում, մի ամիս ևս կմնամ: Հետո Փարիզ: Հասցես Փարիզինն է:

Գրի՛ր երբեմնապես:

Շատ բարևներ Հայկին:

Ներփակ նամակս,— բարի եղիր հանձնել դր. Ջեմսին:

Հարգանքի բարևներ տիկնոջդ:

Համբույրներով,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

254. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934, <հուլիսի 9—10>

Հարգելի ընկեր Սուքիասյան.

Ընկ. Գ. Լևոնյանից շա՛տ ուշ ստացա Ձեր նամակը. միայն մի 20 օր առաջ: Թե ինքը ուշ էր ուղարկել, և թե ես բացակա էի Փարիզից: Թանկագին Վահանից պատահական կերպով մոտս կա միայն մի նամակ իր բազմաթիվ նամակներից. նրանց մի մասը Վենետիկ է, գրադարանիս հետ, որ անկարող եմ ստանալ. մնում է, որ ես անձամբ գնամ, հանեմ: Մյուսները զոհ են գնացել աղետին և տարերքին: Վեհինակաև եղածները թուրքերը փչացրել են, իսկ Բեղինի՝ գրքերիս հետ, ում մոտ որ պահ էի տվել, զոհ է գնացել հրդեհին:

Հիմա պիտի գրեմ հուշերս. ձեռքիս տակ ոչ մի մատերիալ չունեմ: Բայց և՝ ո՛չ ժամանակ ունեմ, ո՛չ տրամադրություն: Այստեղ գոյություն ունի ՀՕԿ ասված մի կազմակերպություն իր ամսագրով, և իմ բոլոր ժամանակը կլանված է այդ, ինձ համար, տհաճ գործերով. (նրանց մեջ գործոն պատասխանատու անդամ եմ): Ինձ համար ոչինչ չեմ կարող անել, և իմ գրվածքները երեսի վրա են մնում: Բայց ժամանակ և տրամադրություն պիտի ստեղծեմ Ձեզ մի բան հասցնելու մինչև ամսիս վերջը:

Ներող եղեք:

Բարևներով, հարգանքներով՝

Ավ. Իսահակյան

A. Issahakian,
17 rue Denfert Rochereau
Paris 5.

255. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934, հուլիսի 27, Փարիզ

Հարգելի ընկեր Սուքիասյան.

Երևի ստացած կլինեք բաց նամակս, որով հայտնել էի թե շուտով կուղարկեմ հուշերս: Վերջապես կատարեցի խոս-

տումս. շատ դժվարությամբ եղավ, որովհետև շատ զբաղված էի և միևնույն ժամանակ հիվանդ: Մի խոսքով՝ այսպես եղավ. ավելի լավ կարող էր լինել:

Վահանից ունեմ մոտս միայն այս նամակը. մյուսներից կան Վենետիկ՝ պահված: Մնացածները կորած պիտի համարել: Ի՜նչ չկորավ մեծ պատերազմի շնորհիվ և թուրքերի արշավանքով, որ Վահանի նամակները չկորավեին:

Ուղարկում եմ այս նամակը. սա վերջին նամակն էր խեղճ Վահանի: Կխնդրեմ շատ, որ այս նամակը, ինչ չափով որ կուզեք օգտագործեք, այսինքն՝ լուսանկարել, արտագրել, քաղվածքներով տպել,— ետո ինձ ուղարկեցեք заказное, որ չկորավի: Հիմա ուղարկելուս էլ վախենում եմ, որ փորձանք պատահի: Կխնդրեմ լավ պահեք:

Հարգանքներով,

Ձեր՝ Ավետ. Իսահակյան

Exp<éditeur>
A. Issahakian,
17 rue Denfert Rochereau,
Paris 5.

256. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934, օգոստոսի 30, Փարիզ

Սիրելի ընկ. Ս. Սուքիասյան.

Այսօր շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և Վահանի ձեռագիր նամակը, և իսկույն պատասխանում եմ:

«Խառնակություն» բառի անպատշաճության մասին լիովին իրավունք ունեք: Հենց գրելիս էլ զգացի նրա անհարմարությունը, բայց սահեցի, անցա վրայից: Խնդրեմ այսպես փոխարինեք — «հեղափոխության հուզումնալից իրադարձությունների հետևանքով, ժամանակ...»:

Գալով «վերջին երգիչը հայ քնարի» արտահայտությանս,— դրա մասին շա՜տ եմ մտածել և հասել եմ այդ

տխուր եզրակացությանը: Մեր քնարերգությունը, արևելահայերիս մեջ, ծագում առավ Ս. Շահազիզից և բոլորեց 50-ամյա մի շրջան մինչև Վահան Տերյանը: Այդ շրջանի մեծ և փոքր լիրիկները մշակելով լեզու, եղանակներ, ձևեր, պատկերներ՝ պատրաստեցին Վ. Տերյանի հողը, և Տերյանը իր հայտնությամբ գլխավորեց մեր լիրիկան: Վահանը ինձ համար կատար է, բարձունք. նրա երգերը ոչ պակաս հավասար են Գյոթեի, Հայնեի, Լերմոնտովի, Վեռլենի լիրիկական երգերին: Վահանից սերածները էպիգոններ են: Ե. Չարենցը, անշուշտ, մեծ բանաստեղծ է, բայց ո՛չ կարկառուն լիրիկ: Նրա քնարական երգերը, մի-երկու բացառությամբ, շա՛տ աղոտ բաներ են, Վահանի նման հետևողություններ, ճապաղ, ջրալի: Նրա «Տաղարանը», շա՛տ գեղեցիկ է, իսկ «Ես իմ անուշ Հայաստանի արևահայմ...» ունիկում՝ մեր գրականության մեջ, աննախընթաց հրաշակերտ: Միայն այսքան նրա լիրիզմից:

Հզոր է պոեմների մեջ — «Դանթեական առասպելը», «Խմբապետ Շավարշը» և «Ամբոխները խելագարված», և «Հոգիս ոսդիո կայան է», և այլն:

Սրանց մեջ կան շա՛տ տարերք, կիրք ու կորով, թափ ու բոց, շռինդ ու շառաչ, բայց և շա՛տ մտածում ու քարոզ: Լավագույն անուններ՝ լիրիկական էպիկա, բայց երբեք՝ մաքուր լիրիկա, բյուրեղային լիրիզմ:

Այնպես որ, ես չեմ կարող Չարենցին համարել Տերյանի լիրիկան զարգացնող, կատարելագործող, ինչպես վերջինս զարգացրեց, կատարելագործեց Ս. Շահազիզին, Հ. Հովհաննիսյանին, Լ. Մանվելյանին, Ա. Ծատուրյանին, Դ. Դեմիրճյանին և ինձ՝ մեր լիրիկան. (Հ. Թումանյանը լիրիկ չէ. նա մեծ էպիկ է, հետևապես համեմատության եզր չի հանդիսանում նա): Ընդհակառակը, անկում կրեց մեր լիրիկան:

Եվ Չարենցից հետո եկողները — Գ. Մահարի, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, և այլն, շնորհալի բանաստեղծներ, բայց չանցան, [չգերազանցրին], բնավ երբեք չկարողացան մոտենալ նրա պատվանդանին:

Վահանը մնում է, կրկնում եմ, կատար, լեռ-բարձունք, և այդ իմաստով է, որ ասում եմ. «վերջին երգիչը հայ քնարի»: Դժբախտաբար այս օրենք է գրականության մեջ. գալիս է մի հանճար և ծծում է, չորացնում է շուրջը, ինչպես կաղնին, որ մոտը չի հանդուրժում ուրիշ կաղնիի աճելուն, այլ մանր-մունր թփերի: Հանճարը սպառում է իր դարը, և պիտի անցնի երկար ժամանակ, մինչև որ հող պատրաստվի նորի հայտնության, երբեմն դարեր... Գյոթեից և Հայնեից հետո Գերմանիան չունեցավ նրանց հավասարը, ո՛ւր մնաց գերազանցողը. Պուշկինից և Լերմոնտովից հետո անկում է՝ Տյուտչևն էլ մեջն առած — Նեկրասով, Նադսոն, Բալմոնտ, Բրյուսով, նույնիսկ Ֆետ և Եսենին:

Պիտի հարցնեք. ապա Մայակովսկի՞ն:— Մայակովսկին մեծատաղանդ պրոպագանդիստ է. Չարենցը նրա հայկական մասշտաբով՝ երկվորյակը:

Մնաց որ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում այժմ լիրիկան տեղի է տալիս: Այսօր ո՛չ Գերմանիայում, ո՛չ Ֆրանսիայում, ո՛չ Իտալիայում, ո՛չ Անգլիայում չկան մեծ լիրիկներ: Արձակի դար է: Պրոզա:

Այս տեխնիկական-ինդուստրիել-մեքենապաշտ-պրագմատիկ դարում, այս դինամիկ դարում, ուր ընկերական մեծ պրոբլեմների լուծման արյունահեղ պայքարն է բռնկված — ո՞ւմ սրտին կխոսի Գյոթեի

Über allen Gipfeln ist Ruh.

Իմ ասած լիրիկան — սա է:

Երանի՛ իմ հոռետեսությունը չարդարանա, և մեր որդիները բախտ ունենան ողջունելու մի նոր Վ. Տերյան, որ լեռների աղբյուրների պես՝ աստղերի մաքուր լույսով օծուն, կարկաչե իսկական բանաստեղծությունը, երազ տա և մոռացում տառապանքների և մահի հանդեպ և ստեղծե գերզգայական, գերիրական երջանիկ աշխարհ...

Կխնդրեի սիրալիր բարևներս հայտնել ընկ. Աշոտ Հովհաննիսյանին, Վ. Վահանյանին, Ներսեսին (Վահանի եղբորը):

Կխնդրեի նույնպես, ներփակ նամակ հասցնել Կարեն

Միքայելյանին. հասցեն չեմ գտնում, բայց հիշում եմ փողոցը՝ Сверчков переулок, թիվը չեմ հիշում. ընկ. Աշոտը գիտե:

Սիրով և հարգանքով,
բարևներով,
Ձեր՝ **Ավետ. Իսահակյան**

Exp. A. Issahakian,
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

257. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1934, սեպտեմբերի 13, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ձայնդ չէ լսվում, ի՞նչ ես անում, ինչո՞ւ ես լռել. վաղուց է նամակ չես գրում. իսկ եթե ինձնից ես սպասում, քեֆս շա՜տ վատ է, բնավ տրամադրություն չունիմ, տխուր եմ շատ, թեև առողջությունս վատ չէ:

Ստացել եմ քեզնից մեր սիրելի Կոջոյանի մասին գրածդ, որ կգետեղեմ «ՀՕԿ»-ի մեջ: Շա՜տ ուրախ եմ, որ Կոջոյանը հիմա, վերջապես, գնահատվեց. արժանի է, խոշոր տաղանդ է: Լավ կլիներ, որ Ս. Աղաջանյանի մասին էլ մի բան գրեիր, նա էլ է անտեսված:

Լսեցի, որ շուտով հրատարակում ես մամուլի պատմությունը. կեցցե՜ս: Իսկ ե՞րբ ես ձեռնարկելու էնցիկլոպեդեական հատորները: Ուրիշ ի՞նչ բաներ ունես, որ ինձ հայտնի չեն:

Մի-երկու օր առաջ լսեցի, որ Հր. Աճառյանի՝ Երուսաղեմի մրցանակին ներկայացրած գիրքը — «Հայոց լեզվի պատմությունը» շահել է 100 ստերլինկ (8000 ֆր): Բավական լավ գումար է, մանավանդ торгсин-ի համար. Հրաչյան նրանով մինչև մահը (աստված չանե) լավ կապրի: Շա՜տ ուրախ եմ, շնորհավորի՜ր:

Ի՞նչ են անում մեր ընկերները — գրող, նկարող, երգող, խաղացող, վերջապես, մեր ընկերները: Լա՜վ են, առո՞ղջ են, զվա՜րթ են:

Ինչպե՞ս է Դերենիկը, Միշոն, Ցոլակը, Պողոսը, Սիսակը, Մ. Սարյանը, քանդակագործ Ուրարտուն և իր ամուսինը, Փանոսը... Բոլորին ջերմաջերմ բարևիր:

Ամենքի մասին տեղեկություն ունիմ, միայն չգիտեմ՝ ո՞ղջ է մեր Արամ Վիրապյանը. բարևիր և գրիր նրա մասին: Բարևներ և՛ մեր Ալեքսանին, Զատրճյան, մորքուրիս տղային:

Ի՞նչ գրական-գիտական նորություններ կան. տեսա Ա. Խաչատրյանի գիրքը «Սեպաձև... գր. պատմությունը» ճոյակապ գործ է:

Բարևիր կնոջդ:

Մեր բոլորի կողմից սիրով և կարոտով բարևներ:

Համբուրներով, քո՝

Ավետիք

258. ԹՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

1934, դեկտեմբերի 7, Փարիզ

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան.

Սրտագին շնորհակալություն Ձեր այն ուշադրության համար, որ ի հայտ եք բերել իմ հանդեպ՝ ուղարկելով Ձեր կազմած հայոց գրականության գեղեցիկ քրեստոմատիան:

Ներողություն մինչև այժմ ստացած լինելս չհայտնելու համար, որովհետև, իրոք, շա՜տ զբաղված էի և մանավանդ մի-երկու շաբթով բացակա էի Փարիզից: Իսկ Փարիզը վիշապ քաղաք է՝ կլանում է մարդու ժամանակը, ուժը, եռանդը:

Իմ ոտանավորների ընտրությունը, ընդհանրապես, հաջող եք կատարած, բացի մի-երկուսից: «Ի՞նչ ես գազազում...» ոտանավորը երկու անգամ է տպված: Անուշադրություն տպագրական:

Ցանկալի էր, որ «Աբու-Լալան» քրեստոմատիայի մեջ լույս տեսներ մշակված վարիանտով:

Ես, սիրելի ընկեր, թաթախված եմ գրականության հետ

կապ չունեցող ուրիշ գործերով (հասարակական), միայն ազատ ժամերս, որոնք երբեմն թունավորված չեն մշտագո հիվանդությամբս (սրտի կրիզներ) տալիս եմ գրական թերավարտ գործերիս, որոնք, ավա՛ղ, չափազանց շա՛տ են և հարատև երկյուղ են պատճառում ինձ՝ միգուցե անկատար մնան, չիրականանան:— Հունական այն նշանավոր յոթն հին իմաստասերներից մեկը (մոռացել եմ անունը՝ Թալեսի, Հերակլիտի շարքիցն է) ասել է, թե մարդիկ երբեք չեն հասնում իրենց նպատակներին...

Կատարյալ երկ տալու համար պետք է երկար ապրել և մանավանդ՝ առողջ լինել:

Ներկա առիթից օգտվում եմ Ձեզ հայտնելու, որ տարիներ առաջ Ձեզնից մի նամակ առա Րաֆֆիի ձեռագրերը Հայաստան տեղափոխելու նկատմամբ: Ես գրեցի Րաֆֆիի որդուն, Լոնդոն, և պատասխան չառա. ուրիշի միջոցով (Արշակ Սաֆրաստյանի) դիմեցի, նույնպես անպատասխան մնացի: Այդ մասին Ձեզ, իր ժամանակին, Երևանի «ՀՕԿ»-ի գրասենյակի միջոցով գրել եմ, որ Դուք պաշտոնապես դիմեիք նրան: Ուրիշ աղբյուրից լսել էի, որ նա (Արշակ Րաֆֆին) հավատ չի ընծայում, թե ձեռագրերը լավ կարող են պահվել, որովհետև նրան հասկացրել են, թե Րաֆֆին հալածված է Հայաստանում, և այլն, և այլն:

Երբեմնապես, Երևանի թերթերում պատահել եմ Ձեր գրական-քննադատական հոդվածներին. հմտությամբ, էրուդիցիայով հագեցած, զգացած և խորհած բաներ էին: Ցավալի է, որ ուշ-ուշ եք երևում:

Զարմանում եմ, թե ինչո՞ւ քրեստոմատիայի մեջ տեղ չեն գտել Հ. Հովհաննիսյանը, Դ. Դեմիրճյանը — պետք էր, որ նրանք էլ լինեին, նույնիսկ մի-երկու բաներ կարող էիք առնել Ռ. Պատկանյանից, Ս. Շահազիզից, Րաֆֆիից, Մուրացանից — նույնպես:

Ջերմագին բարևներ Ձեր տիկնոջը և քրոջը. հույս ունեմ, որ չեն մոռացել ինձ:

Ջերմ բարևներս ընկեր Մ. Մկրյանին:

Սիրով և հարգանքով,

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

321

259. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1934, դեկտեմբերի 11, Փարիզ

Սիրելի ընկեր Սահակ.

Վաղուց է Ձեզ նամակ չեմ գրել, թեև ինձ միշտ մեծ հաճույք է պատճառում Ձեզ նամակ գրելը, բայց մի կողմից էլ ավելորդ բան եմ համարում Ձեր բազմազբաղ ժամանակը խլել: Ես լավ գիտեմ, որ դուք այնքան զբաղված եք, որ Ձեր զահլան պիտի գնա ավելորդ բաներ կարդալով:

Բայց առիթ կա հիմա գրելու, օգտվում եմ հանգամանքից մի քիչ շատախոսելու:

Ֆրանսիայի հայ գաղթականների, մեր բանվորների, աշխատավորների դրությունը շա՜տ ծանր է այս տարի գործազրկության պատճառով, անվերջ արձակում են ֆաբրիկաներից, իբրև օտարականների, և գրկում են այն չնչին նպաստից, որ կառավարությունը վճարում է գործազուրկներին: Վերջերս ֆրանսիական գավառ էի գնացել Հայաստանի խորհրդայնացման հանդեսները նախագահելու — շա՜տ ցավալի դեպքերի ականատես եղա: Շա՜տ մեծ նեղության մեջ են մեր աշխատավոր մասսաները, և բոլորի աչքը դարձած է Խ. Հայաստանի վրա, իբրև միակ հույսի և ապագայի,— ներգաղթի վրա:

Արտասահմանի թերթերի մեջ շրջում է առել այն լուրը, որպես թե 1935 թ. ներգաղթ կա, ոգևորված են մասսաները, և դիմում են մեզ «ՀՕԿ»-ի վարչությանը, բայց մենք տեղեկություն չունենք: Ի՞նչ աղբյուրից են եկած այդ լուրերը... Լավ կլիներ, որ մի կերպ մեզ իրազեկ դարձնեիք:

Շատ և շատ լավ կլիներ, որ այս տարի ձեռնարկեիք ներգաղթին. թե՛ Հայաստանի պրեստիժը կբարձրանար և թե՛ բավական աշխատավորներ կազատվեին այս տառապալից դրությունից:

Սիրելի ընկեր Սահակ, այս տարի, գարնանից ընկըսած, դաշնակցականները մեր հոգին հանեցին այն չար լուրով,— որը տարածեցին իրենց մամուլի միջոցով, տարածեցին իրենց ճառերով,— որպես թե Միության կառավարությունը, Մոսկվան, երբ պատերազմի բռնվի

Ցապոնիայի հետ, Անդրկովկասի պաշտպանությունը հանձնելու է Թուրքիային:

Դաշնակցության այս չարամիտ լուրը թափանցել է գաղթականության բոլոր խավերի մեջ, սարսափի է մատնել բոլորին, առաջ բերել խորին հուսահատություն: Մենք շա՜տ աշխատեցինք և աշխատում ենք հերքել այդ շինծու, պրովակացիոն լուրը: Սա շա՜տ է խանգարում մեր գործին և գաղութահայության ջերմ վերաբերմունքին Հայաստանի հանդեպ: Շա՜տ է դժվարանում մեր գործը:

Սա գրում եմ Ձեզ, որ գիտենաք, և տեղն եկած ժամանակ հերքեիք՝ զինաթափ անելու համար դաշնակցության այս պրովակացիոն զենքը, որ մինչև հիմա գործադրվողներից ամենից սուրն ու խոցողն է եղել:

Ես կարծում եմ, որ Ձեզ հայտնի կլինի նրանց թերթերից: Բայց ավելորդ չէր գրածս:

Այս նամակիս հետ ուղարկում եմ մի խնդրագիր: Վազգեն Շուշանյանը, նախկին դաշնակցական է, որ մի երեք տարի առաջ կռիվներով բաժանվեց դաշնակցությունից: «Մարտկոց» թերթի հրատարակողների մեջ էր. հեռացավ և՜ նրանցից: Հիմա բոլոր կապերը կտրել է նախկին ընկերների հետ և զգացմունքով ու գիտակցությամբ փափագում է Խ. Հայաստան գալ, միշտ ապրել Հայաստանում և իր ուժերը ծառայեցնել Հայաստանին: Նախկին որբերից է, տանկահայ է, ավարտել է գյուղատնտեսական դպրոց Ֆրանսիայում, և հիմա էլ գավառում մի ֆրանսիական դպրոցում պաշտոնավարում է: Երիտասարդ, շնորհքով գրող է, նույնիսկ կարելի է ասել, սոցիալիստական հակումներով: Նրան ճանաչում են ընկերներ Զ. Եսայանը և Տիգրան Զավենը. իբրև երիտասարդ մարդ Խ. Հայաստանի մթնոլորտի մեջ շուտով կփոխվի, կոգևորվի և օգտակար գրող ու գործիչ կդառնա:

Ես կարծում եմ, սիրելի ընկեր, որ հավանություն կտաք նրա գալուն և կհաջողացնեք այդ գործը: Սա նույնպես մի ապտակ է իր հին կուսակիցների երեսին:

Ընկեր Ա. Խանջյանին էլ եմ դիմում այս խնդրի համար, և այս ներփակ նամակը, բարի լինեք ընկեր Աղասուն հանձնել:

Գանք հիմա իմ մասին:

Ես զբաղված եմ «ՀՕԿ»-ի գործերով, և հասարակական մի շարք գործերով նույնպես: Գրեթե իմ գրական աշխատանք-ներիս համար շատ քիչ ժամանակ է մնում: Իսկ իմ երազն է — ամբողջապես նվիրվել իմ գրական գործերին, օրեցօր ծերանում եմ, եռանդս մարում է, իսկ աշխատություններս մնում են երեսի վրա ընկած: Առողջությունս էլ այնքան լավ չէ, արյան ճնշումը (давление крови) միշտ բարձր է և միշտ բժիշկի հսկողության տակ եմ:

Գոնե հիվանդ սիրտս, այս մաշված մեքենան այնքան դիմանար, մինչև կիսատ գրություններս վերջացնեի:

Որդիս շա՜տ լավ գործ ուներ Սիևեմա Պատոմոնտի ստուդիայի մեջ, բայց իբրև օտարականի՝ հանեցին. հիմա անգործ է:

Մոսկվա, հայտնի արվեստագետ Ս. Էյզենշտայնին նամակ գրեց (հետը լավ ծանոթ է), որ իրեն մոտ կանչե. Ս. Էյզենշտայնը պատասխանեց, որ այս տարի ֆիլմ չի դարձնում ինքը:

Իմ վերադարձի մասին կգրեմ հաջորդ նամակով: Ձեզ նախապատրաստելու համար ասեմ, որ վերադարձս կապված է բավական ծախսերի հետ:

Առայժմ, մինչև «ՀՕԿ»-ի նոր կոմիտեի ընտրությունը, ես ստիպված եմ մնալ:

Հույս ունեմ, որ Ձեր առողջությունը հիմա ավելի լավ պիտի լինի, որովհետև թերթերի մեջ շարունակ կարդում եմ, որ միշտ շրջում եք գավառը և միշտ գործի վրա եք: Սա շատ է ուրախացնում ինձ:

Մոռացա ասել, որ ներգաղթի լուրը Բարեգործականի շրջանակից է դուրս ելել, ուրեմն Երևանից է գրված: Այդ ինչպե՞ս է, որ Երևանի ՀՕԿ-ի վարչությունը մեզ իմաց չի տվել:

Կարոտով և ջերմ բարևներով՝
մնամ խորին հարգանքներով

Ձեր միշտ անկեղծ

Ավետիք Իսահակյան

Հ. Գ. Շա՛տ կխնդրեի, ինձ հայտնեք Ձեր որոշումը:

Դրականի դեպքում ի՞նչ ձևակերպություններ պիտի անե Վ. Շուշանյանը, ո՞ւմ և ո՞ւր պիտի դիմե և ի՞նչ բովանդակությամբ:

Ա. Ի.

260. ՊԵՏՐՈՍ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ

1935, հուլիսի 6, Փարիզ

Մեծարգո բարեկամ՝ Պ. Տոնապետյան.

Շա՛տ ներողություն եմ խնդրում, որ նամակս այսպես ուշացրի: Վերջերս չափազանց խանգարված էի. օրինակի համար, երեկ ամբողջ օրը տունը մնացի նամակներ գրելու համար, բայց չկարողացա մի տող գրել, անընդհատ մոտս բարեկամներ մտան ու ելան:

Երեկ երեկո մեկնեցավ Ալազանը, և այսօր վերջապես, ազատ եմ:

Շնորհակալությամբ ստացանք Ձեզնից թելը, շատ լավ թել է և առատ. խորապես շնորհակալ է կինս: Ուրիշ թելերի հետ խառնելով, պատվական բուրմունք ստացվեց:

Ձեր ուղարկած գրքերի երկրորդ մասի նկատմամբ Ալազանը ո՛չ մի տեղեկություն չուներ: Առաջին առաքումի մասին, որի բացման և դասավորման համար կազմված հանձնախումբի անդամ է եղել ինքը, շա՛տ մեծ հիացմունքով էր խոսում. բոլոր գրասերներն էլ ուրախացել են և հիացել:

Հիմա նոթեր առավ, որ հարցուփորձ անե գրքերի ստացած լինելու մասին և գրե ինձ, և նույնպես Ձեզ իմաց տամ: Պատճառ չկա, որ ստացած չլինի. անհանգստանալու տեղիք չպիտի ունենաք:

Մեծարգո բարեկամ, կարծում եմ, որ Փարիզում խոսած մեր նյութի մասին,— գրի առնել Ձեր հուշերը,— մոռացած չեք լինի և կամաց-կամաց կիրականացնեք: Եթե օրը մի կամ երկու էջ գրեք, մի տարի հետո կունենաք մի 5—600 էջանոց արժեքավոր մի գործ մեր նոր հասարակությանը

ծանոթացնելու համար Տիգրանակերտի կյանքը, ժամանակի մտայնությունը, Ձեր պատանեկությունը, Ձեր բանտերը, աքսորը. փախուստը (Գևորգյան ճեմարանի այն ժամանակի կյանքը, Էջմիածինը, Կովկասահայերի մտային վիճակը, հուզող հոգեկան հարցերը և այլն, և այլն) և հայկական չարաբաստիկ հարցի փուլերը: Արդ, գոտեպնդվեցեք և գործի անցեք: Պատմությունը այդպիսի հուշերի վրա է հիմնված և մանավանդ երբ վավերական տվյալներից են բխում: Ես շատ եմ սիրում հուշեր կարդալ, երբ նրանք գրված են լինում պարզ, անկեղծ կերպով՝ համեստ, խոհուն և փորձված անձերի կողմից:

Ջերմագին բարևներ կնոջս և իմ կողմից:

Ձեր անկեղծ՝

Ավետիք Իսահակյան

261. ԳԵՂԱՄ ԱՖՐԻԿՅԱՆԻՆ

1935, նոյեմբերի 1, Փարիզ

Սիրելի Գեղամ ջան.

Եկողը որդիս է, Վիգենը: Շատ կարոտով բարևներ և համբույրներ բերել է իմ կողմից քեզ, Հեղինեին, Դոշոյին, Մարտինին և երեխաներին:

Խնդրում եմ ծանոթացնես քո արվեստի ընկերների հետ: Որդիս բավական հասկանում է արվեստից:

Հետո, եթե դու ժամանակ ունես, տանես Լենինական և ներկայացնես մեր բոլոր ազգականներին և քաղաքին: Իսկ եթե ժամանակ չունիս՝ գրես Մարտինին և ուղարկես մոտը:

Վիգենը պիտի մնա Մոսկվա, թե՛ ռուսերեն սովորելու և թե՛ Սովկինոյի մեջ աշխատելու համար:

Ես էլ, երևի, մինչև գարուն կկարողանամ իմ վերադարձը հաջողեցնել: Սոֆին դեռ վիզա-պասպորտ չունի:

Ես Մարտինին մի երկու ամիս առաջ նամակ գրեցի. ստացած կլինի անպատճառ, որովհետև заказное էի ուղարկել: Խնդրում եմ հարցնես նրան:

Հույս ունեմ, որ առողջ ես, լավ և հաջողակ: Քո մասին երբեմն կարդում եմ լրագրերի մեջ:

Շա՜տ կարոտով բարևներ քեզ և բոլոր հարցնողաց:

Համբույրներով,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

262. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1935, նոյեմբերի 3, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ահա տղաս՝ Վիգենը գալիս է Միության երկրները: Երեվան գալիս է տոներին ներկա լինելու. կմնա մի քանի օր, ապա կգնա Մոսկվա՝ Սովկինոյի մեջ աշխատելու:

Կխնդրեի նրան ընդունեիր իմ տեղս և ծանոթացնեիր ընկերներին, բոլոր իմ բարեկամներին:

Իմ վերադարձս տակավին քաշքշվում է. կինս դեռ վիզա չունի. հույս ունեմ, որ ստանա: Հետո տեղափոխվելու հոգսերը կան, փող է հարկավոր:

Դուք ի՞նչ եք անում, հույս ունեմ, որ լավ եք:

Շա՜տ և շա՜տ, խորապես ցավեցի սիրելի Ցոլակի մահով. հազա՜ր ափսոս:

Այս տարի մեծ կորուստներ ունեցանք. Ռոմանոսը, Սիսակը... դեռ մղկտում է սիրտս նրանց պատճառած վշտով:

Ինչո՞ւ այլևս ինձ նամակ չես գրում. թերևս ես եմ մեղավորը. բայց դու ավելի հավասարակշռված մարդ ես, դու պիտի չընդհատես գրելը:

Սիրելիս, իմ կողմից սրտագին կբարևես Դերենիկին, Միշոյին, Պողոս Աբելյանին, Թերլեմեզյաններին, Սարյանին, Կոջոյանին, Վ. Թոթովենցին, մորքուրանցս Ալեքսանին, Արազիին և բոլոր իմ ընկեր-բարեկամներին:

Այստեղ լուր է տարածվել, թե Խնկո-ապերը մեռել է. մի՞թե. շա՜տ ցավալի է:

Բարևիր իմ և կնոջս կողմից քո կնոջը՝ Ռիմային:

Համբույրներով, քո՝ **Ավետիք**

263. ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ

1936, սեպտեմբերի 15, Վենետիկ

Սիրելի ընկեր Ռ. Շիշմանյան.

Սիրով կարդացի Ձեր նամակը և շատ շնորհակալ եմ ընկերական սրտագին խորհուրդիդ համար, բայց քանի տրամադրությունս գեշ է, չպիտի հետևիմ խորհրդիդ: Եկանք Վենետիկ և բռնեցինք մնացինք: Լավ բանն այն եղավ, որ հիվանդությունս բուժվում է: Շատ դժվարություններ և սրտնեղություններ ունենք. հույս ունեմ, որ շուտով անցնին. ամսուս վերջին կմեկնենք. երևի հոկտեմբերի վերջին կհասնենք:

Սիրալիր բարևներ ընկեր Ալիսին և բոլոր մեր ընկերներին թե՛ ինձնից և թե՛ տիկնոջս կողմից:

Միշտ Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

264. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1936, հոկտեմբերի 13, Վենետիկ

Սիրելի Վիգեն ջան.

Վերջապես վաղը ճամփա ենք ընկնում դեպի Աթենք. այնտեղից էլ նավ ենք առնում դեպի Կոնստանցա (Ռումինիա), այնտեղից էլ՝ Բաթում. ուրիշ ճամփա չկա. նավերը ուղիղ Բաթում չեն գնում, միայն թե Կոնստանցայի նավը գա: Շա՛տ ուշացանք, հազիվ նոյեմբերի սկիզբներին հասնենք Բաթում, որովհետև ես հիվանդացա՝ ստամոքսիս հին ցավերը նորոգվեցին, բայց սա պատճառ եղավ, որ արմատապես բժշկվեմ. պրոֆեսոր Պարտիզյանը կարգին բժշկեց. հիմա շա՛տ լավ եմ, բոլորովին առողջ, գոնե ստամոքսիս կողմից:

Շատ եմ ցավում, որ դու հետներս չէիր՝ Աթենքը տեսնելու համար. բայց երիտասարդ ես, ժամանակ և առիթ կունենաս տեսնելու: Երբ որ հեռագրենք քեզ, թե՛ ե՛րբ Բաթում կհասնենք, հեռագիրը կհայտնես ընկերներ Ա. Գուլոյանին

(Ժողկոմխորհի նախագահին), Արսեն Եսայանին և Ազատ Մանուկյանին: Նրանց գրել եմ, որ մարդ ուղարկեն Բաթում մեզ ընդունելու, այսինքն՝ գրքերը՝ 8 արկղ, մեր իրերը և ձեռագրերս: Դու էլ կմիանաս եկողի հետ:

Պիտի աշխատես, որ մեր գույքերի, ձեռագրերի քննությունը կատարվի ո՛չ թե Բաթումի մեջ, այլ Հայաստանում, Երևանում կամ Լենինականում:

Շատը գնաց, քիչը մնաց. շուտով կլինենք սիրելի հայրենիքում:

Համբույրներ քեզ և Գեղամին, բարևիր ջերմապես բոլոր իմ ընկերներին և բարեկամներին. նամակներս շուտով, անձամբ հասցրու ում որ ուղղել եմ:

Համբույրներով,
քո՝ **Ավետիք Իսահակյան**

265. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1937, մայիսի 10, Երևան

Սիրելի Սոֆի.

Նամակդ ստացանք, Վիգենը պատասխանեց: Մեզ շա՛տ մեծ վիշտ պատճառեց մամայի հիվանդությունը: Հեռագրեցինք, որ պատասխանես վիճակի մասին, բայց դեռ լուր չտվիր: Հույս ունենք, որ կլավանա:

Մեր Գեղամն էլ, Աֆրիկյանը, մի քանի օր է հիվանդ է. բարձր տաքություն ունի. դեռ որոշ չէ, թե ի՞նչ է հիվանդությունը: Դշխունը, քույրը, եկավ: Իհարկե, վտանգ չկա, երևի, գաղտնի մալարիա է:

Մենք լավ ենք, մի կերպ կառավարվում ենք. Զեկն էլ լավ է. շա՛տ մեծացել է: Ես շա՛տ և շա՛տ զբաղված եմ, ուղղակի ժամանակ ասած բանը չունեմ. անվերջ ժողովներ, ելույթներ, կռիվ, վեճ, և ամեն կողմից նյութ են խնդրում: Ձեռքիս տակ 14 բան ունեմ, որ պիտի հասցնեմ: Իսկ Պետհրատին տրվելիք ժողովածուս դեռ չեմ կազմել:

Սիմոն Հակոբյանը իմ դեմ կատաղի կռիվ է սկսել, բայց տակը պիտի մնա: Կգաս կիմանաս:

Կարճ եմ գրում, շտապ. հիմա գնում եմ ժողովի: Գրողների Ընկերության վարչության անդամ ընտրվեցա, առանց քվեարկության, ուղղակի, ծափահարությամբ: Ես բացակա էի:

Այստեղ դեռ չենք գտել կերոսինկա, եթե դու գտնես, մեկ հատ առ, մի լավ կերոսինկա. մենք էլ կառնենք, թող ավելորդ լինի, վնաս չունի:

Շատ բարևներ ուղարկողներ կան քեզի:

Մեր կողմից էլ շատ բարևներ. համբուրիր մամայի ձեռքը. ջերմ բարևներս Ռոզային, Նինային, հարսներին, Պավլին, Վանյային և բոլոր հարցնողներին:

Համբույրներով՝
Ավետիք

Ուղարկում եմ Վարիայի, Ատրուճու նամակները:
Հասցեն չես մոռացել՝ 26:

266. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ

1937, օգոստոսի 30, Սևան

Սիրելի Շիրազ.

Ստացել եմ սրտագին նամակդ. ներիր, որ ուշ եմ պատասխանում, այսօր-վաղն էի ձգում. վերջապես այսօր գրում եմ, և մի-երկու օրից հետո Երևան եմ գնում, այնտեղ կհանձնեմ փոստին:

Շա՜տ ծույլ եմ նամակ գրելու մեջ. ներո՜ղ եղիր:

Նախանձում եմ քեզ, որ թափառում ես իմ սիրելի Արփաչայի ափերում, Ալագյազի հովիտներում, Շիրակի երկրքի տակ. նախանձում եմ նաև, որ սիրո վիշտ ունես.— դրանցից ավելի բան չպիտի ունենա իսկական բանաստեղծը — սեր, վիշտ, բնություն, հայրենիք, և գաղափարական մտաշխարհ: Այդ բոլորը դու ունես, և վրան էլ ավելացրու մատաղ հասակ, նոր բխող աղբյուր,— ուրեմն ստեղծագործի՜ր, սավառնի՜ր, թռի՜ր:

Սևանում բավական լավ ժամանակ անցրի, թեև շա՜տ խըժուբըժ կար, շա՜տ աղմկող երեխաներ, բայց նորեն գեշ

չանցավ: Զբնաղ ծովակ, հրաշալի երկինք, անհամար ադամանդային աստղեր, և այդ բոլորը իմս էր, կարող էի վայելել և վայելեցի:

Գրեցի մի փոքր պոեմա և մի-երկու փոքր ոտանավորներ: Սակայն շատ կարդացի: Լողացա, թափառեցի լճի վրան ու կղզու շուրջը, կարդացի, խորհեցի:

«Մհերի» վերջը վաղուց է ավարտել եմ և հանձնել եմ «Խորհրդային գրականությանը». այս ամսում կեսը կհրատարակվի, կեսն էլ՝ մյուս ամսում. հետո՝ առանձին գրքույկով: Հարցնում ես, թե գո՞հ ես. երևակայիր, որ գեշ դուրս չեկավ, բավական հաջող է և գոհ եմ: Ինչ որ գրում ես «Ուստա Կարոյի» մասին, ճշմարիտ է, բայց պիտի ժամանակ ստեղծեմ, որ ինքնամփոփ, բոլորանվեր դրանով զբաղվեմ և չտարվեմ մանր-մունր բաներով, ժողովներով, վեճերով, և և այլն, և այլն:

Հույս ունեմ, որ գլուխ բերեմ այս իմ խորին տենչանքս: Այս տարի, ո՛չ-ուշ:

Սևանից վերադարձիս՝ մի քանի օր կմնամ Երևանում և կգամ Լենինական. քեզ կհայտնեմ, եթե դու այդտեղ լինես, և ոչ թե Երևանում:

Ջերմագին բարևներով,
քո՝ **Ավետիք Իսահակյան**

Հ. Գ. Այսօր եկա Երևան, և կարդացի «Բևեռի առումը» գրվածքդ, շա՛տ և շա՛տ լավն է. մեծ թափով ես գրել, շքեղ պատկերներ կան, հոյակապ բան է, միայն մի քիչ երկարախոսություն կա, մի-երկու անտեղի, ավելորդ տողեր:

Ապրիս, զորանաս:

Ա. Ի.

267. ԱՀԱՐՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

1937, օգոստոսի 30, Սևան

Հարգելի ընկեր Ահարոն.

Ձեր սիրալիր նամակը ստացա Սևանում, ուր հանգստանում եմ ամսից ի վեր: Վաղը-մյուս օրը վերադառնում եմ

Երևան, և նամակս Երևանից եմ հանձնում փոստին:

Շատ զգացված եմ Ձեր՝ իմ հանդեպ հայտնաբերած հարգանքի և սիրո համար: Ուրախ եմ, որ իմ գրությունները արձագանք են գտնում հեռավոր արտերում: Հեղինակի համար սրանից ավելի մեծ վարձ և փառք գոյություն չունի:

Ուրախ եմ նաև, որ գրականությամբ եք զբաղվում և արտահայտվելու փափագ ունիք: Ձեր առջև է Ձեր երիտասարդ կյանքը և համաշխարհային գրականությունը: Կարդացեք մեծ հեղինակներին, մեծ ստեղծագործողներին — Գյոթե, Հայնե, Բայրոն, Շելլի, Պուշկին, Լերմոնտով, և մեր հայ գրականությունը: Սովորեցե՛ք, աշխատեցե՛ք տոկունությամբ, սիրով, համբերանքով: Գրեցեք Ձեր զգացածը, խորհածը: Եղեք անկեղծ, որպես թե խոստովանություն եք անում:

Սիրեցեք մեր հայրենիքը, մեր ժողովուրդը, մեր լեզուն, ամբողջ մարդկությանը և ամբողջ տիեզերքը և արտահայտեցեք այն բոլոր հույզերն ու խոհերը, որ ներշնչում են Ձեզ այս էությունները: Այս է՝ լավ, մեծ բանաստեղծ լինելու ուղին:

Երբ Երևան կգաք, աշխատեցեք ինձ տեսնել, կխոսենք ավելի մանրամասն: Դժբախտաբար ես շա՛տ զբաղված եմ և քարտուղար էլ չունեմ, որ ավելի երկար գրեմ և թղթակցեմ, ինչպես ունեն ռուս և օտար գրողները:

Սիրով և հարգանքով՝
Ավետիք Իսահակյան

268. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ

1938, օգոստոսի 25, Մաղկաձոր

Սիրելի ընկեր Արամ.

Ստացա Ձեր սիրալիր նամակը, և շտապում եմ պատասխանել: Շատ ուրախ եմ և նախանձում եմ, որ այդպիսի լավ օրեր եք ապրում հայրենի հարկի տակ, հարազատների մոտ,— որոնցից ես, ավա՛ղ, զրկված եմ, հիմա ո՛չ մայր ունեմ, ո՛չ քույր, ո՛չ եղբայրներ, ո՛չ էլ հայրական տուն...

Սրտագին բարևներ Ձերոնց բոլորին և սիրելի Մանիկին, որին շա՜տ կարճ տեսա, բայց շատ երկար և քաղցր հիշատակ ունեմ:

Ինձ հայտնի չէ, թե ընկ. Հ. Մելիքյանը իմ մասին պիտի զեկուցեր, սակայն լսել էի, որ «Գրական թերթի» մի հատոր իմ գրականությանը պիտի նվիրվեր: Ինչո՞ւ չեղավ, չգիտեմ, և, ճշմարիտն ասած, չեմ էլ հետաքրքրվում իմանալ:

Սիրելիս, հարցնում ես թե՝ ի՞նչ չափով կապված համարում եմ ինձ հայ նախորդներին, առանձնապես Հ. Հովհաննիսյանի հետ:

Իմ մանկության ժամանակ, 80-ական թվականներին, երբ հայերենից բացի գրեթե ուրիշ լեզու չգիտեի — խորին տպավորություն է թողել իմ վրա մեր ժողովրդի երգը, գեղջկական երգը, այն, որ Շիրակի ցորեն արտերի հետ ծփում է, ծաղիկների հետ բուրում, ամեն տարի նոր ու նոր, և Ախուրյանի ալիքների հետ կարկաչում:

Առաջին ընտիր գիրքը, որ ընկել է ձեռքս երախտավոր Միանասարյանի սքանչելի «Քնար Հայկականն» է, որի նման ժողովածու, նրանից հետո, տակավին մեր գրականությունը չունեցավ: Այնտեղ կարդացի Ս. Պալասանյանի շատ հրմտալից գրական ներածությունը, որ նորից մնում է հետաքրքրաշարժ:

Այնտեղ սիրեցի, հափշտակվեցի Սայաթ-Նովայով, մեր ռամկական երգով, Գամառ-Քաթիպայի «Մայր Արաքսի»-ով և նրա այլ գործերով. հայր Ղ. Ալիշանի քերթվածներով, արևմտյան հայերի պոեզիայի մի քանի ընտիր նմուշներով և վերջապես Ս. Շահ-Ազիզի «Ես լսեցի մի անուշ ձայն» չքնաղ բանաստեղծությունով:

Սրանք բոլորը, անշուշտ, մեր պոեզիայի հին և մշտնջենական գոհարներն են, որոնք վճռական, բարի ազդեցություն են ունեցել իմ վրա և կաղապարել են ինձ:

Նրանցից հետո, երբ 1889 թվին ծանոթացա Հ. Հովհաննիսյանի բանաստեղծություններին — զգացի, հասկացա՝ թե ինչն է իսկական լիրիկան, — և գծվեց իմ ուղին:

Բացի այդ՝ պիտի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ Գևորգյան ճեմարանում 1889 թվից Հովհաննիսյանը իմ

ուսուցիչն է եղել, իմ սիրելի ուսուցիչը և ես Նրա սիրելի աշակերտը:

Նրան շատ և շատ պարտական եմ ես, և ի՞նչ խոսք, որ խորապես կրել եմ Նրա ստեղծագործիչ ազդեցությունը, մանավանդ իմ սկզբնական շրջանում:

Քննադատներին է մնում պրպտել և գտնել Նրա հետքերը իմ բանաստեղծությունների մեջ:

Առայժմ այսքանով բավականացիր.— Երևանում, ուր ես կլինեմ սեպտեմբերի սկզբներից, կխոսենք ավելի հանգամանորեն:

Նորից սրտագին բարևներ ձեզ բոլորիդ, իմ թանկագին բարեկամներ. բարևներ նաև մերոնցից:

Միշտ ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

269. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1939, փետրվարի 3, Երևան

Սիրելի Հակոբ ջան.

Ամենից առաջ սրտագին ուրախությունս հայտնիր թանկագին Մարիետային իր բարձր պարգևատրության համար: Իրեն սիրողներին և գնահատողներին այստեղ մեծ ուրախություն պատճառեց այս: Վաղուց արժանի էր:

Ուրախ եմ նույնպես շատ, որ Гослитиздат-ը հրաման է հանձնել թարգմանելու «Մխերս»: Կարծում եմ, որ Մարիետան իբրև մեծ էրուդիցիայի տեր, խելոք, նուրբ և խորունկ՝ պիտի հասկանա իմ կոնցեպցիան և հնարավոր չափով ադեկվատ հասցնել ռուս հասարակությանը: Հավատացած եմ դրան, և խնդրում եմ գործին սրտով կպչի:

Հակոբ ջան, ես էլ քեզ շա՜տ կարոտել եմ, և ինչպես կուզեի՜ մի-երկու շաբաթ միասին անցկացնեինք, քեֆ անեինք: Զգիտեմ՝ ժամանակ և առողջություն պիտի ունենա՞մ գալ Մոսկվա, տեսնելու թե՛ քեզ, թե՛ Մարիետային, թե՛ բարեկամներին և թե՛ նոր Մոսկվան: Գուցե դու քեզ ձգես Երևան, որին շատ կարոտցած կլինես, գիտեմ: Գարնանը, Սասունցի Դավիթի հանդեսներին արի:

Ես լավ եմ, պարապում եմ. հիմա կազմում եմ գրվածքներիս մի մեծ ժողովածու, շուտով կհանձնեմ տպագրության:

Առողջությունս վատ չէ, բայց լավ էլ չէ. սիրտս միշտ թույլ է:

Ուղարկում եմ ահա «Մոները» և այս բառացուցակը: Ներիր, որ ուշացրի. շատ եմ խանգարվում զանազան ստիպողական գործերով: Ի դեպ, նամակդ ուշ հասավ ձեռքս. Վաղարշը ուշ տեսավ ինձ:

Չմոռանամ քեզ խնդրել, որ հետաքրքրվես իմանալ, թե բանաստեղծություններիս փոքր ժողովածուն, որ տպում է Гослитиздат-ը, և պիտի լույս տեսներ հունվարին, ինչու՞ ուշացավ: Ե՞րբ, վերջապես, լույս պիտի տեսնի:

Ջերմագին բարևներ սիրելի Մարիետային, Լուսիկ Սարյանին, Աշխեն և Սաշա Բարխուդարյաններին, իրենց որդիներին, Նաիրի Զարյանին և համբույրներ քեզ:

Միշտ քո՝ **Ավետիք Իսահակյան**

Հասցես.
А. Исаакяну улица
Г. Гукасяна, 12, кв. 10.

270. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ

1939, ապրիլի 19

Սիրելի Շիրազ.

Հին խոսք է, որ դաբաղը (կաշեգործը) սիրած կաշին շատ է գետնե գետին տալիս:

Դու մեծ տաղանդ ես, բայց պիտի բյուրեղանաս, որ անմահ բաներ թողնես: Պիտի խտացնես, պիտի շա՛տ կարդաս, և կդառնաս մեր պոեզիայի հրաշալի ապագան:

Ա. Ի.

271. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1939, մայիսի 28, Երևան

Սիրելի Օլյա.

Երևի արդեն Նվարդը գրեց քեզ, որ ես տեսել եմ ընկեր Հովիկ Մելիքյանին: Ներողություն, որ մինչև հիմա չգրեցի

քեզ, պատճառն այն էր, որ նոր բան չունեի ասելու:

Հովիկն ասում է այն, ինչ որ միշտ ասել է: Այսինքն, որ՝ ես իրավունք չունեմ օրենքից դուրս գործելու, ով որ լինի իմ տեղը նույնը պիտի անե, կամ ավելի վատը, քանի որ ես շատ բարյացակամ եմ և խորին հարգանքով լցված Օհանեսի հիշատակի հանդեպ:

15 տարի անցել է Օհաննեսի մեզնից հեռանալուց հետո. ամբողջ Միության համար հաստատված օրենքի համաձայն, որ ոչ մի բացառություն չի ընդունում, ժառանգները կորցրել են իրենց իրավունքները, և Օհաննեսի գրական ժառանգությունը պատկանում է հիմա ժողովրդին: Եթե ես հակառակ գործեմ, ինձ դատի կտան և կպատժեն:

Իմ հարցին, թե ինչո՞ւ տիկին Թումանյանի նվերի մասին չհայտարարեցիք ո՛չ մի տեղ և ո՛չ մի ձևով, պատասխանեց այսպես.— Քանի որ մեր ձեռքը չի անցել արխիվը, չէինք կարող հայտարարել. բայց երբ մեր ձեռքն անցնի, անպատճառ, հրապարակավ կհայտնենք, և կշեշտենք, և կհայտնենք մեր խորին շնորհակալությունը:

Ընտանիքը նվիրում է և մեր կառավարությունն էլ ի նկատի ունենալով Օհաննեսի մի-երկու ժառանգի նեղ պայմանները, 50 000 ռուբլիով օգնության է հասնում, իսկ եթե չեն ուզում նվիրել և չեն ուզում ընդունել նաև 50000 ռուբլին, այլ ուզում են, որ մենք գնահատենք թե՛ մնացած անտիպ գրությունները և թե՛ արխիվը, հավատացնում եմ քեզ, ասում է ընկ. Հովիկը, որ 10—15000 ռուբլուց ավելի չի բռնե:

Այսպես, ուրեմն, Հովիկի վերջնական խորհուրդն է, որ համաձայնեք ձեր նախկին որոշումին, այսինքն՝ նվեր տալ, ամբողջ արխիվը հանձնել: Դրա համար կուղարկենք մեկին՝ Նվարդին կամ մի ուրիշին՝ բոլոր ծախսերը հոգալով, որ գա և մանրամասն գրանցե թղթերն ու գրությունները, իսկ 50000 ռուբլին կվճարվի երեք տարվա ընթացքում:

Սիրելի Օլյա, վերջ ի վերջո ամեն բան կախված է քեզնից: Եթե ինձ էլ խոսք կհասնի, կարծում եմ, որ ուրիշ ելք չկա, գոնե Երևանում այդպես է նրանց տրամադրությունը:

Թերևս դիմեք Մոսկվա, Օհաննեսի մեծ հարգողին, եթե նա էլ հետաքրքրվի և նոր լուծում տա: Նրան պետք է լավ իրազեկ դարձնել:

Բարևներ մեր բոլորից:
Սրտագին բարևներով,

միշտ ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

272. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1939>, հուլիսի 29, Ծաղկաձոր

Սիրելի Գարեգին.

Գրում եմ շատ շտապ, որովհետև ավտոմեքենան սպասում է ընկեր Հուսիկին:

Խնդրում եմ, անպատճառ գաս մի քանի օրով մեզ մոտ հյուր: Գիտես, որ հրաշալի վանքեր կան:

Հարմարություններ կան հյուր ընդունելու, այնպես որ չես ձեղվի և չենք ձեղվի: Տունդ պահելու համար պատրաստ է ընկեր Հուսիկը. կարող է քեզ տանդ և պահել. կամ, գտիր քո կնոջ ազգականներից:

Բարևներով՝

Ավետիք

273. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

<1939>, օգոստոսի 4, Ծաղկաձոր

Հարգելի ընկ. Ա. Ֆադեև.

Ձեր նամակն ստացա ուշացումով, որովհետև Երևանից բացակա էի (գտնվում էի Զանգեզուրում):

Ցավոք, Մոսկվայի խորհրդակցությանը չեմ կարող մասնակցել, բայց պատրաստում եմ զեկուցում պլենումում կարդալու համար:

Ջեկուցման թեզերն են՝
1. Էպոսի դիցաբանական գծերը.
2. Փոքր Մհերի տիպը.
3. «Սասմա Մհերի՝» իմ մշակման կառուցվածքը:

Հարգանքով՝
Ա. Խաչիկյան

274. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

1939, հոկտեմբերի 27, Մոսկվա

Սիրելի Օննիկ. շնորհակալությամբ ստացա ուղարկածդ ն. «ԽՍ-գրականություն» և, ժամանակ գտա այս ջրապտույտի մեջ կարդալու հոդվածդ: Ամենից առաջ ասեմ, որ թուղթ չունենալու պատճառով բաց նամակի վրա եմ գրում: Գրել ես շատ սրտանց, ջերմությամբ, սիրով — դրա համար հատկապես շնորհակալություններս: Քննադատը պիտի սիրե հեղինակին, որ հասկանա նրան, երբ սիրես կհասկանաս, երբ հասկանաս, կսիրես: Հետո, երևում է, որ իմ մասին նախկին գրածները բոլորը կարդացել ես, նաև իմ գրեթե բոլոր գրածները: Շատ լավ ուսումնասիրություն է, լրիվ և լուրջ, միայն մի երկու կետի մասին խոսք ունիմ ասելու այն էլ Երևանում կասեմ: Առայժմ ջերմ բարևներ քեզ, Արամին և Հակոբին:

Ջեր՝ Ավետիք Խաչիկյան

275. ՄԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1940, հունվարի 25, Երևան

Սիրելի ընկեր Ս. Սուքիասյան.

Շնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը և մանավանդ այս թանկագին նկարները՝ հավերժ սիրելի Վահանի տան և նրանց գեղեցիկ գյուղի: Նայեցի տանը և սիրտս լցվեց «թախծանուշ» (Վահանի բառն է) հուշերով. այդ՝ եր-

կու պատուհաններ ունեցող սենյակումն եմ ապրել 1905 թվին ամբողջ մի շաբաթ. աչքերս խփում եմ, և տեսնում եմ տերտերին, Վահիկին, եղբայրներին, և բոլոր օրերը կենդանանում են հոգուս մեջ. տեսնում եմ Վահանի պատանի դեմքը և լսում եմ նրա մեղմ ձայնը...

Հոդվածիդ մասին խոսեցի «Գր. թերթի» պատասխանատու խմբագրի՝ ընկեր Գ. Բորյանի հետ. նույնիսկ որոշ տեղեր կարդացի մոտը. պատասխանեց թե՝ մենք չենք կարող ամբողջապես տպել, թերթը այդքան տեղ չի կարող տրամադրել, և այլն, և այլն:

Եվ եղավ այն, ինչ որ կտեսնիք:

Վահանին նվիրած երեկոն շատ և շատ լավ անցավ. անագին բազմություն կար և նույնչափ էլ ետ դարձան՝ տեղ չլինելու պատճառով:

Երիտասարդ քննադատ Օնիկ Ղանալանյանը կարդաց Վահանի պոեզիայի մասին մի շատ գեղեցիկ, լավ ըմբռնած վերլուծում թե ցուցաբերում — ներկայացում, միայն կարճ էր: Հուշեր պատմեցինք՝ ես, Գ. Լևոնյանը և Ս. Զորյանը. եղավ ընթերցում Վահանի պոեզիայից, երգ, նվագ: Մի խոսքով, շատ լավ անցավ. մի անգամ ևս պարզվեց, որ Վահանը տաղավին, և շատ երկար ժամանակներ, խոսում է հայ հասարակության հոգուն, կենդանի է, սիրով և վշտով, հայ մարդու սրտի մեջ:

Հոդվածդ կառնեմ և կկարդամ, հետաքրքրական է: Ի միջի այլոց, այսօր տեսա նրա <Վահան Տերյանի> եղբայրների հուշերի տետրակները. կարդում էին, երևի, հրատարակելու միտք ունին: Տպվում է Վահանի բանաստեղծությունները 20 մամուլի ծավալով: Տպվում է և՛ իմ բանաստեղծությունների և արձակ փոքր պատմվածքների մի ստվար հատոր, մոտ 40 մամուլ. երևի, մի-երկու ամսից հետո լույս կտեսնի:

Ես դեկտեմբերին մի քանի օրով եղա <Բաքու> Նիզամիի հոբելյանական նախապատրաստական խորհրդակցության համար: Թարգմանելու ենք «Խոսրով և Շիրին» պոեման, 14000 տող, ես էլ եմ խմբագրական կազմի մեջ:

Այս տարի հոբելյանների մի շարք ունենք — Մայակովս-

կի, Ղ. Աղայան, Ա. Ծերեթելի, Լենինի 70-ամյակ՝ ծննդյան, Հայաստանի խորհրդայնացման 20-ամյակ... մի խոսքով ժամանակ չպիտի ունենանք մեր անձնական ստեղծագործությունների համար:

Լա՛վ եղեք, առողջ և ուրախ:

Բարևներով, Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

276. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1940, մարտի 7, Երևան

Սիրելի Հակոբ ջան.

Ներողություն, որ մինչև հիմա, գնալուցս ի վեր, մի երկտող չգրեցի քեզ — ծուլություն, ջանջալություն, հետաձգում, և վերջապես՝ գիրքս տպում էի, ուզում էի վերջացած ուղարկել քեզ, բայց ուշացավ:

Հենց որ ստացա ընկ. Սուզաննա Խիթարովայից հեռագիրը, որ շտապեցնեմ նյութերի առաքումը, հավաքեցի ուժերըս ու բարկությունս և կարողացա Պետհրատից ստանալ այս OTTИCK-ները և ճամփել քեզ:

Սիրելի Հակոբս, այն ոտանավորներս, որ կարմիր նշան ունին, դրանք չկան քո ունեցած գրքի մեջ (իմ բանաստեղծությունների), որոշ մասով հին են, որոշ մասով նոր են. սրանցից ո՛րը հավանում եք՝ թարգմանեցեք. թողնում եմ ձեր ճաշակին:

Ներողություն խնդրիր ընկեր Խիթարովայից և շատ ջերմ բարևներ հաղորդիր նրան, նաև ընկ. Եվգենովին:

Ես լավ եմ, պարապում եմ: Շուտով լույս կտեսնի գրքվածքներս՝ երկու հատորով՝ չափածո և արձակ:

Քույրդ ինձ ասաց, որ մարտին-ապրիլին ուզում ես գալ Երևան. չեմ հավատում, բայց քաղցր է հուսալ և սպասել:

Կինս և տղաս բարևում են քեզ և թանկագին Մարիետային:

Ուրիշ ի՛նչ գրեմ. կանք, էլի՛. որ գաս մի փոքր աշխուժություն կբերես մեր թմրած կյանքին. մի-երկու լավ քեֆ անենք:

Սրտագին բարևներ Մարիետտային, Լուսիկին, Աշխենին, Արփիկին (Թումանյան), Սարիկին. համբուրում եմ քեզ:

Միշտ քո՝

Ավետիք Իսահակյան

Հ. Գ. Շմոռանաս բարևել Դերենիկին և Ն. Զարյանին:

Գրիր՝ այս թղթերը ստանալուդ մասին:

Ավետիք

Հասցես՝

А. Исаакян, ул.

Г. Гукасяна, № 12, кв. 10 Ереван

277. ԱՇՈՏ ԳՐԱՇՈՒՆ

1940, մարտի 24, Երևան

Սիրելի Գրաշի.

Իր ժամանակին ստացել եմ սիրալիր նամակդ և բայաթիներիդ չքնաղ գիրքը:

Շատ և շատ շնորհակալ եմ քո հարգալից ուշադրության համար:

Վերջերս չափազանց զբաղված էի «Ընտիր երկերիս» հրատարակության գործով. վերջապես առաջին հատորը լույս տեսավ, պահանջին անհամապատասխան տիրաժով (5000), որ իրար գլուխ կոտրելով մի-երկու օրում սպառվեց: II հատորը, որի մեջն է «Աբու-Լալան», մի քանի օրից հետո լույս կտեսնի:

Դա ուղղած օրինակն է:

Ինչպե՞ս պիտի կազմակերպել «Աբու-Լալայի» թարգմանությունը. արդյոք տողացի թարգմանությունը ինչպե՞ս պիտի լինի. ռուսերենի՞ց թարգմանել, թե՞ դու կամ մի ուրիշը՝ ուղղակի հայերենից՝ ադրբեջանական լեզվի: Այս հանգամանքը պիտի պարզել: Իհարկե, այստեղ կա լավ ռուսերեն գիտցող, բայց ո՞վ պիտի տա նրա հոնորարը: Թե՞ դուք Բաքվում այդ գործը կկատարեք: Գրի՛ր այս մասին:

Հիմա դառնանք քո թարգմանություններին՝ բայաթինե-

րի: Բոլորը կարդացի, և շա՛տ-շա՛տ հավանեցի, և մի հոդված եմ պատրաստում, մի գեղեցկական «Գրական թերթի» համար: Թարգմանություն չէ, այլ, շատերի նկատմամբ, կարող եմ ասել, որ ստեղծագործություն է, հայացրած, միանգամայն: Ապրես, զորավասս:

Զգացված, ապրած, էմոցիոնով հագեցած գեղեցկություններ են դարձել:

Սիրելի Գրաշի, ջերմագին կբարևես Ադրբեջանի մեր ազնիվ ընկերներին, Սամեդ Վուրղունին, Ռասուլ Ռզային, Ջամանովին, որ այսպես սրտով ուզում են «Աբու-Լալահ» ադրբեջանական հարազատ, եղբայր, արտակից ժողովրդին հասցնել, դարձնել այդ՝ զգացմունքներով վառ ու հարուստ, սիրաշատ ժողովրդի սեփականությունը: Սա մեծ պատիվ է ինձ համար և երախտապարտ եմ ամենաանկեղծ կերպով. թող մեր հարևանները մեզ հասկանան և սիրեն, մնացածները դատարկ բաներ են:

Մեր արձանագործները ու նկարիչները, որ եկել էին մեծ Նիզամու արձանի կոնկուրսի համար, վերադարձան հիացած մեր ադրբեջանական ընկերների ընդունելությունից, վերաբերմունքից. խոսք չեն գտնում արտահայտելու իրենց գոհունակությունը:

Բարևներ մեր հայ ընկերներին, բոլորին:

Սպասում եմ նամակիդ և, մանավանդ, քո գալուն:

Սիրով և կարոտով՝
Ավետիք Իսահակյան

278. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, հունիսի 7, Ախալցխա

Սիրելի Սոֆյա.

Մի քանի օր է Ախալցխայումն եմ. ամբողջ քաղաքը ոտքի վրա է. տնից տուն են <տանում>. մեծ հարգանքներ և մեծ սեր. չեն թողնում, որ գնամ. Աբասթումանից սկսած արքայական ընդունելություն: Նվիրեցին մի հրաշալի ար-

ծաթագործ, նուրբ գրիչ: Կանչում են գյուղերից և Ախալքալաքից, բայց վերջին տեղը չեմ գնա: Մի-երկու գյուղ պիտի գնամ. կառավարությունը տրամադրել է ավտոմոբիլ: Երեկ տեղի ունեցավ այստեղ Ա. Ծերեթելու հոբելյանական հանդես: Ես ևս ելույթ ունեցա, լավ անցավ:

Շա՜տ հոգնած եմ, թե՛ կերուխումից, թե՛ շրջագայելուց. երևի 11—12-ին ամսիս, կմեկնեմ այստեղից, մի երկու օր կմնամ Բորժոմ, և կգնամ Թիֆլիզ. մինչև Բորժոմ երիտասարդներ պիտի գան հետս՝ ուղեկցելու...

Համբույրներ բոլորիդ՝

Ավետիք

279. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, հունիսի 18, Քութայիսի

Սիրելի Սոֆի.

Այս քանի օր է Քութայիսումն եմ. լավ ընդունեցին վրացիները ինձ. դյուրություններ են տալիս, ուր որ ուզում եմ գնալ տեսնելու: Պիտի գնամ Գելատի և ուրիշ վայրեր, այստեղից էլ Բորժոմ, Բակուրիանի և այլն, և այլն:

Ուրեմն, Փարիզն ընկավ, ափսո՜ս:

Տեսնես ի՞նչ եղան մեր մոտիկները և մեր Մուսան:

Բարևներ, համբույրներ բոլորիդ:

Ավ. Իսահակյան

280. ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ

<Թարգմանություն>

1940, հունիսի 22, Բորժոմի

Թբիլիսի, գրողների միությանը.

Վրաստանում ճամփորդելիս հիվանդացա և, ցավոք, զրկված եմ հնարավորությունից՝ անձամբ մասնակցելու

վրաց ժողովրդի լուսավոր ապագայի բանաստեղծ մարտիկի հիշատակի մեծարմանը:

Երջանիկ եմ, որ գտնվում եմ նրա փառավոր հայրենիքում:

Ամենուրեք, որտեղ եղա՝ Կախեթիայում, Իմերեթիայում՝ լսեցի ժողովրդի կողմից երգվող Ա. Ծերեթելու բանաստեղծությունները:

Ա. Ծերեթելու ընկերական երազանքը կատարվեց...

Կեցցե՛ վրաց գրականությունը:

Կեցցե՛ ժողովուրդների եղբայրությունը:

Ա. Խաչատրյան

281. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ

1940, հունիսի 24, Բորժոմ

Ծա՛տ սիրելի Արամ.

Ես մոտ մի ամիս է թողել եմ Երևանը՝ Վրաստանում ճամբորդելու համար. տեսնելու երկիրը. ժողովուրդը, կենցաղը և հնությունները ու նորությունները. եղա Կախեթիա, Իմերեթիա — նամակդ հասավ ինձ Ճանապարհին՝ Թիֆլիզում, Կախեթիայից վերադարձիս:

Հիմա քո կարոտած ծննդավայրի շեմքի առաջ պատասխանում եմ սրտագին նամակիդ, գրված, և միշտ անկեղծությամբ, մեծ սիրով:

Արամ ջան, ամենից առաջ թե ես և թե բոլոր ընկերները շատ և շատ ուրախ ենք, որ ողջ և առողջ ես, և մեծաճույս ենք քեզ շուտով տեսնելու: Դու, անշուշտ, գիտես, թե որքա՜ն էինք մտահոգված քո ճակատագրով, բայց վերջը լավ՝ ամեն բան լավ: Ես միշտ սրտի տրոփով հետաքրքրվել եմ քո բախտով և մեր սիրելի Կարոյից միշտ ստացել եմ տեղեկություններ քո մասին:

Շատ ուրախ եմ, որ բարձր տրամադրություն ունես, չես ընկճվել, և հիմա այնպես եռանդով և ոգևորությամբ հետաքրքրվում ես քո տարերքով՝ գրականությամբ, զբաղվում ես, կարդում, ուսումնասիրում:

Վերջապես լույս տեսավ մի ամիս առաջ «Ընտիր երկերիս» երկու հատորները՝ շքեղ տպագրությամբ. 5000-ական տիրաժով. և մի քանի օրվա մեջ ձեռքեձեռք խլեցին, հազիվ, օրինակի համար, մի 20 հատ կարողացան Թիֆլիզ հասցնել. բոլորը սպառվեցին Երևանում և մասամբ Լենինականում: Հազվագյուտ օրինակներ կարելի է ձեռք բերել ուրիշներից կրկնակի գներով: Եթե բախտ ունենաք քեզ մեր մեջ տեսնելու, կարծում եմ, որ Պետհրատի պահեստից, թերևս պոկենք մի-մի օրինակ:

Ինչքան որ ինձ տվին, մի քանի անգամ էլ տվածից ավել գնեցի, ևվիրեցի բարեկամների, նորից շատերը դժգոհ մնացին ինձնից:

Սիրելի՛ս, ուզեցել ես իմ «Արձակ էջերը» — հենց որ Երևան հասնեմ, մի օրինակ կուղարկեմ քեզ: Գրական նորություններ Երևանում, երևի լսած կաս, հետևյալներն են.— Րաֆֆիի «Սամվելը» 8000 տիրաժով, որ նույնպես գոլորշիացավ. Հ. Մանանդյանի «Տիգրան Մեծը», որը դեռ կա հրապարակում, դանդաղ է վաճառվում. Խաչիկ Սամվելյանի «Հայ իրավունքի պատմությունը»՝ հմուտ ուսումնասիրություն, որ նորից դանդաղ է վաճառվում: Հիմա լույս պիտի տեսած լինի Վահան Տերյանի «Բանաստեղծությունների» լիակատար հավաքածուն, որի խմբագիրը ես էի. հավաքել ենք մի մեծ հատորի մեջ (29 մամուլ) Վահանի բոլոր տըպված ու անտիպ բանաստեղծությունները, վարիանտները, մի խոսքով ինչ-որ կարողացել ենք գտնել: Ես որ ճամբու ընկա, վերջին էջերն էին տպվում:

Մոտ օրերս նույնպես լույս էր տեսնելու Խաչ. Կանայանի մի ուսումնասիրությունը — «Ս. Իսահակյանի բառարանը թե լեզուն» լավ չեմ հիշում. այնքան գիտեմ, որ իմ գործածած բառերի քանակի և որակի մասին էր. նոր և յուրահատուկ ուսումնասիրություն:

Չմոռանամ ասել. որ այս տարի լույս տեսավ մեր Օննիկ Ղանալանյանի մոնոգրաֆիան «Իսահակյանի լիրիկան», սրտով, սիրով գրված գործ, երիտասարդ քննադատի առաջին, հաջողված, մի փորձ:

Լույս են տեսել նաև՝ Ս. Տարոնցու, Շիրազի, Վահան Գրիգորյանի, Նաիրի Զարյանի բանաստեղծությունների հա-

վւսքաճուները, նաև Վեսպերի և Սարմենի ժողովածուները:

Տեսնում ես, բավական առատ հունձ կա:

Արամ ջան. ուզում եմ Ախալցխա անցնել մի-երկու օրով. անպատճառ ձերոնց կտեսնեմ. միայն լսել եմ թե «пропуск» է հարկավոր. եթե այդ չեղավ, կամ դյուրին եղավ ձեռք բերելը կգնամ. տեսնեմ՝ ի՞նչ վիճակի մեջ է իմ վաղեմի ծանոթ Ախալցխան, ուր անցկացրել եմ շատ լավ օրեր ու ժամեր, իմ բուռն երիտասարդության օրերին:

Շա՛տ և շա՛տ շնորհակալ եմ, որ միշտ գրում ես ինձ. և ներողություն եմ խնդրում որ ուշ կամ քիչ եմ պատասխանում. ժամանակ չեմ հասցնում, շատ եմ զբաղված կարևոր և անկարևոր գործերով: Այս տարի ձեռնարկում եմ «Ուստա Կարոն» ավարտելու, թեև շատ հուզված ժամանակ է, չեք իմանում — ե՞րբ է խաղաղվելու և ինչպե՞ս: Այդ բոլորը ազդում է իմ ներվային սիստեմի վրա և հետևապես հանգիստ աշխատելու վրա:

Ցանկանում եմ քեզ առողջություն, տոկունություն, արիություն. ի սրտե ցանկանում եմ քեզ շուտափույթ վերադարձ:

Համբույրներով միշտ քո՝

Ավետ. Իսահակյան

282. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, հուլիսի 2, Աբաստուման

Սիրելի Սոֆյա.

Քութայիսից եկա Բորժոմ, Ցաքվերի, Լիքանի, Բակուրիանի — հրաշալի վայրեր են. մի տաս օր թափառելուց հետո, Աբաստուման եմ, ամսուս 4-ին կգնամ Ախալցխա, ուր եղա մի օր, հիմա կմնամ մի քանի օր, խոստացա: Վարսիկի նարեկը կբերեմ, եթե գտնեմ ծերուկին: Նամակդ ստացա: Ի՞նչ գործ ունեի հոբելյանին: Ախալցխայից, եթե Ախլքալաք չգնացի, Բորժոմի վրայով կդառնամ Թիֆլիզ. մի տեղ էլ պիտի գնամ — Բելի-Կլյուչ: Հետո կգամ տուն: Ինչպես երևում է, նամակներս չես ստացել. չորս հատ նամակ եմ գրել, փակ և բաց: Բարևներ և համբույրներ բոլորիդ:

Ավետիք

283. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, հուլիսի 13, Բորժոմի

Սիրելի Սոֆյա.

Ախալցխայից եկա Բորժոմ. շատ մեծ պատիվներ տվին այնտեղ. ուղարկում եմ տեղական թերթի կտորը: Նվիրեցին գրիչ-թանաքամանի արծաթե-ոսկեջրած գարնիտուր, շատ մեծ արվեստով շինված. հրաշալի գործ, 1000 ռուբլուց ավելի արժեքավոր:

Ի միջի այլոց — գնել եմ 10 պակետ լավ տեսակի սուրճ, մոկկա. Բելայի համար մի օձե բրասլետ՝ թևի համար, և մի քիչ էլ շորեղեն, Վիգենի համար խակի կտոր, ինձ մի շիվիոտ շալվարցու և շապիկի նուրբ կտորներ, շիֆոն:

Աբասթումանի և մանավանդ Բորժոմի կլիման շատ լավ է ներգործում սրտիս. թեթև եմ շնչում, թրթռոց չունեմ. մեղմ կլիմա է, ամբողջապես сосна (sapin) անտառներ շուրջը: Վաղը գնում եմ մոտիկ Տաբուցիայի լիճը, ուր հայ գյուղ կա, հրավիրված եմ. այնտեղից էլ գնում եմ Սուրամ, որ Թիֆլիզի և Բաթումի մեջտեղն է, նշանավոր թունելի բերանը, հին բերդ ունի, և շատ հայ կա: 17-ին Թիֆլիզ կլինեմ: Ուզում էի Բելի-Կլյուչ գնալ, բայց ուշ է արդեն:

Շատ նյութ եմ հավաքել. արդեն նյութերի մեջ խեղդված եմ, բայց նորից ագահ եմ նոր բան տեսնելու և լսելու:

Վրացիք լավ ընդունեցին ինձ ամեն տեղ. ավտո տվին, և ուղեկիցներ. երբեք մենակ չեմ ճամփորդում, այլ միշտ ընկեր կա հետս, օգնում է, տոմսի, տեղավորելու, և այլն, և այլն: Վրացի ուսանողներն էլ ճանաչեցին ինձ և խորամանկ հարգում են, իսկ հայերը՝ գյուղ ու քաղաք՝ ուղղակի խելագարվեցին:

Վարսիկի հորեղբորը չգտան. Նարեկը ձեռք չընկավ, գոնե պիտի անունը ասեր, տունը և կամ մի հայտնի ազգականի անուն տար, որ գտնեին. 15 000 հայություն կա Ախալցխա, ո՞նց իմանային: Բարևներ բոլորիդ՝ Վիգենին, Բելային, Գյուլիզարին:

Համբույրներով՝ **Ավետիք**

284. ԱՇՈՏ ԳՐԱՇՈՒՆ

1940, սեպտեմբերի 12, Երևան

Սիրելի ընկեր Գրաշի.

Շնորհակալությամբ միշտ ստանում եմ «Խորհրդային գրող» Ձեր ամսագիրը: Կարծեմ ավելի պերճախոս կերպով չպիտի կարողանայի ապացուցել իմ շնորհակալությունը, քան ոտանավորներ ուղարկելով: Հույս ունեմ, որ մեկ-մեկ նյութ կուղարկեմ Ձեզ, առայժմ այս երկու փոքրիկ ոտանավորներս «Խորհրդային գրողի» համար:

Ես նոր եմ վերադարձել Սևանից, ուր ընկերների հետ լավ ժամանակ անցրինք. նրանից առաջ մոտ երկու ամիս թափառեցի Խորհրդային Վրաստանում: Երևի, մյուս տարի էլ կթափառեմ Ադրբեջանում, հատկապես՝ Ղարաբաղում:

Ջերմ բարևներ ընկերներին՝ Սևունցին, նրա տիկնոջը, Հուրյանին և բոլորին: Բարևիր նաև ընկերներ Սամեդ Վուրղունին, Ռ. Ռզային և մյուսներին:

Սիրով միշտ քո
Ավետիք Իսահակյան

285. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1940, սեպտեմբերի 12, Երևան

Սիրելի ընկեր Սուքիասյան.

Ձեր թանկագին նամակը Հաշտարխանից շատ ուշ ստացա, որովհետև գտնվում էի Սևանում: Շատ հուզեց ինձ այն բոլորը, ինչ որ գրել էիք. հավերժ անմոռանալի Վահանի ներկայական գերեզմանը և նրա մասին վերջին՝ ականատեսների հուշերը... Շա՜տ հուզիչ էր, մանավանդ, Ձեր այդքան արդյունավետ հոգացողությունը մեծ և տարաբախտ բանաստեղծի հանդեպ:

Ձեր նամակը կմնա մի շատ թանկագին վավերաթուղթ, և լավ եք արել շատ, որ գրել եք ինձ՝ անմիջապես այն տեղե-

րից, ուր թշվառ և մշտապես արտասվելի բանաստեղծը վերջին անգամ տեսավ արևը և իր աչքերը փակեց...

Ես ուզում էի Ձեզ իսկույն գրել, նամակդ սեղանիս վրա էր, բայց սպասում էի, որ մի մոտիկ տեղից՝ Թիֆլիզից կամ Ախալքալաքից (գրել էիք այդ մասին) կստանայի մի-երկու տող Ձեզնից: Այսօր ընկեր Նշանը հայտնեց Ձեր մասին և տվեց Ձեր հասցեն: Շտապեցի մի քանի տող գրել Ձեզ:

Հայտնում եմ շնորհակալությունս Ձեր այնքան սրտագին նամակի համար:

Խնդրում եմ, երբ գաք Երևան, առանց ինձ տեսնելու չմեկնեք:

Երևի լսած կլինեք, որ հրատարակվեց Վահանի բանաստեղծությունների գրեթե լրիվ մի հատոր, իմ խմբագրությամբ. աշխատել ենք, որ ինչքան հնարավոր է լրիվ լինի: Տպագրությունը վատ չէ. թուղթը լավորակ է, տիպը՝ մաքուր: Իհարկե՝ ավելի լավ կարելի էր հրատարակել, բայց ներկա պայմանների համաձայն սա միանգամայն գոհացուցիչ է:

Բարևներ ինձնից Ախալքալաքի հայրենակիցներիս:

Այս տարի, հուլիսին, Ախալցխա եղա, ուզում էի Ախալքալաք էլ գալ, բայց չհաջողվեց, հաղորդակցությունը դըժվարին էր. մնաց հաջորդ տարին:

Ջերմ բարևներով,
Ձեր՝ **Ավետ. Խահակյան**

286. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, սեպտեմբերի 18, Երևան

Սիրելի Հայկ.

Քո բոթաբեր նամակը շատ ուշացումով ձեռքս անցավ, միայն ամսուս 12-ին, որովհետև բացակա էի Երևանից:

Անհուն ցավ պատճառեց ինձ մեր շատ սիրելի Արամի կորուստը.— ամբողջ մանկությունս, պատանեկության երազային օրերը—բոլորը հյուսված էին Արամի հետ: Ինչքա՜ն ենք միասին երազել և ոգևորվել. եղել ենք միասին Ղազարապատում, հայրս, մայրս, գնացել ենք Անի, Շիրակի գյուղերը, և հազար ու մեկ գեղեցիկ հիշողություններ... Ուղղակի շշմել եմ և հաշիվ չեմ կարող տալ ինձ, չեմ հավատում, նո-

րից ու ցորից կարդում եմ նամակդ ու մտածում. ինչքա՜ն դաժան բան է մտերիմների կորուստը: Ավելի խորն ես զգում մահի ուժը և կյանքի ոչնչությունը՝ մի վայրկյան միա՛յն — ահա մեր ողբալի գոյությունը. երեկ և այսօր. երեկ կյանք, սեր, ուրախություն, թռիչքներ. այսօր լռություն, դատարկություն...

Ես, որ մտքով միշտ հաշտվել եմ մահի հետ, իբրև մի անխուսափելի անհրաժեշտության հետ — հիմա այս թանկագին կորուստի առաջ համարում եմ մահը մի անբնական երևույթ, անտրամաբան անմտություն, բռնության գործ, ոճրագործություն:

Ափսո՜ս, հազա՜ր ափսոս Արմմիս...

Հայկ ջան, ի՜նչ խոսք կարող եմ գտնել մխիթարության համար սիրելի Բագրատ եղբորը, քեզ, Նունիկին և երեխաներին... Դարդակ բան է մխիթարությունը, դարդակ բան է փիլիսոփայությունը: Ժամանակը միայն կարող է թմրեցնել կսկիծի սրությունը, ուրիշ ոչ մի բան:

Մենք էլ ծերացել ենք արդեն և ուրիշ սպասելիք էլ չունինք աշխարհից. գլուխներս պիտի խոնարհենք անհաղթելի բնության առեղ օրենքի առաջ և լռենք: Ուրիշ իմաստություն չկա:

Համբուրյրներով բոլորիդ,
Ձեր վշտակիր **Ավ. Իսահակյան**

287. ԱՇՈՏ ԳՐԱՇՈՒՆ

1940, հոկտեմբերի 15, Երևան

Սիրելի Գրաշի.

Այս առավոտ ստացա նամակդ. առաջ սպասում էի նամակիդ, բայց հետո իմացա Հուրյանից, որ Բորժոմ ես, հանգստացա:

Լավ ես արել, գնացել ես. այս տարի ես էլ եղա թե՛ Բորժոմ, թե՛ Աբաստուման և թե՛ Ախալցխա. ոչ երկար ժամանակով. ամեն տեղ մի քանի օր միայն:

Շտապում եմ գրելու այս նամակը, հայտնելով, որ «Հայ-

բենի ճող» պոեմաս, որ հավանել եք և ուզում եք տպել, կարծում եմ, որ լավ կլինի մի առ ժամանակ հետաձգեք: Այստեղ ինչ-ինչ պատճառներով, ինձ համար անհասկանալի և անհեթեթ պատճառներով, թերևս ոմանց քմահաճության, մերժեցին. կարծում եմ, որ գլխացավանք պիտի պատճառե նրա հրատարակումը թե՛ ձեզ և թե՛ ինձ: Անհարմար է, թերևս. լավագույն է՝ թողնել առայժմ, եթե ուշ չէ արդեն:

Ուղարկում եմ նորից չորս ոտանավոր, և՝ թողնում եմ խմբագրության բարեհաճության:

Ասում ես, որ գալ տարի գնանք Ադրբեջան, Ղարաբաղ՝ թափառենք. լավ միտք է. ուրախությամբ, օրը գա, բարին հետը. կամ հին հասկացողությամբ՝ եթե աստված կամենա: Գոնե լինենք Նուխի, Շամախի և Ղարաբաղ:

«Կարոտ մանկության» բանաստեղծությունդ շատ և շատ լավն է. անկեղծ, էմոցիոնալ և նոր, ոչ շաբլոն. սա դասվում է «Ա՛խ, միտս ընկավի» կողքին: Ապրե՛ս: Գրաշի ջան, հույս ունեմ, որ նամակս ստանալուդ պես՝ կպատասխանես:

Նկատում ես, անշուշտ, որ գրում եմ նորագույն ուղղագրությամբ. այս նորամուծումը կիսատ-պռատ լավ բան էր:

Ձեր թերթը (ամսագիրը) լավ է խմբագրվում, հետաքրքրական է, և որ գնահատելի է՝ ժամանակին է լույս տեսնում:

Ջերմագին բարևներ ընկերներին՝ Գ. Սևունցին, Ս. Գրիգորյանին, Հ. Սահյանին, Հ. Ամիրխանյանին և մյուսներին: Նաև Ռասուլին, Սամեդին և այլն:

Սրտագին բարևներով,
Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

288. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1940, դեկտեմբերի 8, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Խորապես շնորհակալ եմ քո այդ անձնվեր վերաբերմունքի և սիրո համար իմ հանդեպ, շնորհակալ եմ նաև շատ ու շատ՝ հայրենի քաղաքիս սովետից:

Նամակիդ բովանդակությունը, իհարկե, ոչ ոքի չեմ ասել, և հարկ էլ չկար վաղօրոք հայտնելու. ես այս վերագրում եմ քո անհամբեր սիրուն, որ փութացել է ինձ ուրախացնելու:

Սիրելիս, որոշված է, որ 23-ից հետո ես հանդես գամ հիմնարկներում և ուրիշ վայրերում: Ես կգամ անպայման Լենինական, ուրեմն ամսիս 23-ից հետո: Կգրեն օրվա մասին, որովհետև մենակ չեմ գալու. հետս լինելու են ևս ուրիշ ընկերներ:

Անշուշտ, լավ կլիներ և իմաստ կունենար, որ իմ ծնված ու մեծացած փողոցը կրեր իմ անունը, բայց եթե անկարելի է, ի՞նչ անել, պիտի համակերպվել, միայն կուզենայի գիտենալ, ո՞րն է այդ չարաբաստիկ 27-րդ փողոցը, որ պիտի կրե իմ անունը, ես չեմ կարող պատկերացնել. եթե ժամանակ ունես, գրիր այդ մասին:

Մնացած բոլոր բաները ձեր գործն է, ես ոչ մի իրավունք չունեմ միջամտելու:

Ջերմագին բարևներով քեզ, մայրիկիդ, կնոջդ և ընկերներին,

Քո՝ Ավետիք Իսահակյան

289. ՍԱՐԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ

1940, դեկտեմբերի 9, Երևան

Սիրելի Սարիկ ջան.

Քո սրտագին նամակը հայրիկդ հանձնեց ինձ մի փոքր ուշացումով: Խորապես շնորհակալ եմ քո այնքան ջերմ, խանդավառ վերաբերմունքի համար իմ պոեզիայի հանդեպ, ուրախ եմ, որ երիտասարդներդ այդպիսի սիրով, հայրենասիրությամբ եք թևավորված, վաղվա օրը ձերն է, և երբ այդ բարձր զգացմունքներով համակված պիտի մտնեք հայկական կյանքի մեջ գործելու, ուրեմն, մեր ժողովրդի ապագան՝ ձրա կուլտուրան ապահովված է: Սիրեցե՛ք հայ լեզուն, հայ կուլտուրան, և հայ ժողովուրդը չի կորչի. ազգերը ֆիզիկա-

պես չեն ոչնչանում, ֆիզիկապես նրանց չեն կարող ոչնչացնել. ազգերը ջնջվում են միայն ինքնասպանությամբ:

Ներողություն եմ խնդրում ուշ պատասխանելուս համար, սակայն այդ ուշ պատասխանելը ինձնից կախված չէր. թերևս լսած լինիս, որ հոկտեմբերի վերջերից մինչև նոյեմբեր անգործության էի դատապարտված աչքերիս հիվանդության պատճառով. վարակվել էի կոնյուկտիվիտ ցավով, կոպերի, ներքին լորձունային թաղանթի բորբոքումով. աչքերս լցված էին լերդ-լերդ արյունով. հիմա լավ եմ, բուժվեցի և սկսել եմ պարապել: Լսել ես, անշուշտ, որ դեկտեմբերի 23-ին տոնում են հոբելյանս՝ 65-ամյակս մեծ շուքով են տոնում. բոլորը լծված են աշխատանքի, և սկսել են արդեն իմ մասին զեկուցումներ, դասախոսություններ. իմ ժամանակս էլ կլանված է դրանով՝ նյութեր, տեղեկանքներ տալով, և այլն:

Սիրելի Սարիկ, հարցիդ ի՞նչ պատասխանեմ, այդ նոր հայ լեզվին խորթ, տգեղ տերմինների համար. մենք բոլորս էլ զայրացած ենք. դու խո՞ տղա չես, ի՞նչ կարող ենք անել. գրես էլ ոչ մի արդյունք չի ունենա և երևի, չեն էլ տպագրի. պետական որոշումնք է: Պիտի համբերատար լինենք, և փրկենք, ինչ որ կարող ենք, և շատ բան կարող ենք անել: Գլուխները քարը, դրանով մի առանձին հարված տված չեն մեր լեզվական կուլտուրային: Մի՛ հուսահատվեք, այլ ավելի լծվեք ներքին, ստեղծագործ ուժերով, ներքնապես չպիտի ընկնել, պարտվել:

Համաձայն եմ, որ «Պեպոն» պիտի բերել Մոսկվա, բայց դեռ Մոսկվա գալու խոսք չկա:

Հայրիկդ այս տարի նկարեց ինձ. դա մի գլուխ-գործոց է, հավիտենական արժեք ունեցող գործ, պատմական փառավոր կոթող. նույնիսկ նկարիչները, օրինակ, Հ. Կոջոյանը նույն հիացմունքն է հայտնում: Դրված է ցուցահանդեսում, բոլորը հիացած են. նրա բացիկն է պատրաստվում հոբելյանի օրը և իհարկե, միշտ, վաճառելու համար: Իհարկե, պատկերը կգնվի մուզեյի կողմից:

Խեղճ Հովիկ Թումանյանը վախճանվեց, ինձ շատ մեծ վիշտ պատճառեց. երբեք չեմ մոռանալու նրան. շատ ազնիվ. խելացի տղա էր, հազար-հազար ափսոս: Քեզ լավ

պահիր, չմրսես, շատ չհոգնես, լավ կեր, լավ քնիր, շատ մի՛ աշխատիր, որ ուժասպառվիս. ամենից առաջ առողջ կյանք, հետո մնացած բաները:

Ջերմ բարևներ մայրիկիդ և բոլոր քո ընկերներին.

Սիրով և բարևներով,

քո՝ Ավետիք Իսահակյան

290. ԱՇՈՏ ԳՐԱՇՈՒՆ

1941, հունվարի 4, Երևան

Սիրելի Գրաշի.

Գնացիր և լռեցիր:

Այն խնջույքը, որ տեղի ունեցավ իմ տանը, շատ լավ անցավ, ափսո՛ս, որ չմնացիր՝ կենացդ խմեցինք: Իսկ Մարգարիտը շարունակ քեզնից էր խոսում, կարծես, զառանցում էր: Նա էլ մեկնեց՝ գնաց Մոսկվա:

Ես հիմա լավ եմ. վաղը գնում ենք Լենինական, ներկա լինելու հայրենի քաղաքում կազմված իմ հոբելյանական հանդեսին: Նրանից հետո, կարծում եմ, որ կազատվեմ և կհանգստանամ. շա՛տ հոգնեցի — բանկետ, հյուրասիրություններ, և այլն, և այլն:

Շնորհավոր նոր տարի բոլորիդ, մեր բոլոր ընկերներին, քեզ, Սևունցին, Թաթուլին, Վ. Աղասյանին — մի խոսքով՝ բոլորին:

Սիրելի Գրաշի, մի ներողություն սիտի սպասեմ քեզ — սա է՝ խնդրեմ այն համարները՝ թերթերի, որոնց մեջ գրված կան իմ մասին, ուղարկես ինձ՝ «Կոմունիստը», ադրբեջանական թերթը, «Սովետական գրողը», և այլն:

Ջերմագին բարևներով՝

Ավ. Իսահակյան

291. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1941, հունվարի 27, Երևան

Սիրելի ընկեր Անդրանիկ.

Իմացած եղիր, որ Լենինականից դարձած մյուս օրը հիվանդ էի. կարծում եմ, որ ճանապարհին մրսեցի, վագոնը տաքացրած չէր: Ստամոքսի նյարդային բորբոքում ունեցա և ունեմ (թեև արդեն թուլացել է). ամեն օր գնում եմ հիվանդանոց, էլեկտրական հոսանք եմ ընդունում: Լավանալուց հետո՝ Թբիլիսի պիտի գնամ: Իհարկե, Մոսկվա չեմ գնալու, եթե նույնիսկ բոլորովին լավացած էլ լինեմ. վախենում եմ մրսելուց և հիվանդությունս կրկնվելուց:

Սիրելիս, ասացիր, որ դու էլ ես հիվանդացել. այդպես էլ կարծում էի, շատ էիր հոգնած և թույլ: Ուրախ եմ, որ լավ է վերջացել, առողջացել ես:

Առայժմ շատ զբաղված եմ և չեմ կարող ճաշս արտագրել, բայց հենց որ մի փոքր թեթևանամ գործերից (անհրաժեշտ գործերից) իսկույն կարտագրեմ և կուղարկեմ. միամիտ եղիր, մի՛ տարակուսիր:

Մոսկվա գնալը դեռ որոշ չէ, սակայն գնալու եք, բայց պատրա՞ստ եք արդյոք. հարցը դա է:

Խնդրում եմ ջերմ բարևներս հաղորդես ընկերներին, մայրիկիդ, կնոջդ, եղբորդ:

Ջերմ սիրով՝
քո՝ **Ավետիք Իսահակյան**

292. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1941, հունիսի 9, Մոսկվա

Սիրելի Գարեգին.

Վաղուց ուզում էի քեզ նամակ գրել, բայց ուղիղն ասած, ժամանակ չէի գտնում, այնքան կլանված էր ժամանակս մանր-մունր բաներով — ժողովներ, հոդվածներ գրել, երեկույթներ, հյուր գնալ, մարդ ընդունել, դես-դեն գնալ, գիշեր-

ները ուշ տուն գալ, անքնություն, ջղայնություն. ուղղակի հոգիս բերանս է եկել, հոգնել եմ չափազանց. մանավանդ նկարվելուց և ժուռնալիստների հետապնդումներից...

Վերջապես ժամանակ գտա քեզ այս երկտողը գրելու:

Ո՞նց ես, քեֆդ, առողջությունդ, նույնպես սիրելի Ռիմային.— հույս ունեմ, որ լավ եք: Եղբորդ՝ Լևոնին, երկու անգամ տեսա հայկական ներկայացումներին, և իր ավտոյով տարավ մեզ տուն: Գրականության դեկադային Մոսկվայում չէր և չկարողացավ, այսպիսով, ներկա լինել: Լավ է, առողջ է, հաջողակ է:

Շատ բան ունեմ քեզ պատմելու, բայց, երևի, ուշ պիտի տեսնեմ քեզ, որովհետև որոշել եմ ամսուս 20-ին գնալ Կիսլավոդսկ հանգստանալու. Սոֆյան կգա Երևան, կմնա մի քանի օր, գործերը մեր տան կարգի կբերե, և կգա Կիսլավոդսկ. ամառը ուզում ենք հանքային ջրերում անցկացնել: Ինչքա՜ն լավ կլինի, որ դուք էլ գաք, գեղեցիկ ժամանակ կանցկացնենք. մտածիր դրա մասին. իմ հասցեն սա է.— Ессентуки, санатория № 10, Седа Туманян — Сафразбекян հանձնել Ա. Իսահակյանին:

Ես քեզ այնտեղից կգրեմ, երբ տեղավորվեմ:

Մոսկվան մեր եկած օրից մինչև հիմա ցուրտ է. երբեմն շատ ցուրտ. մինչև հիմա չեմ տաքացել. երևի, դուք այրվում եք, իսկ մենք մրսում ենք:

Գարեգին ջան, մի բան եմ խնդրում. Большая советская энциклопедия-ի հաջորդ համարը, եթե ստացվել է այդտեղ, Կիրակոսյանից ստանաս իմ անունով և պահես. վախենում եմ՝ մինչև գալս սպառված լինի. համարը (№) կարծեմ լինելու է 49: Վերջինը ստացել եմ, կարծեմ, ապրիլ ամսում:

Սիրով և սրտագին բարևներ քեզ և Ռիմային: Նաև Ուրարտուին, Վարսիկին, Ռուբեն Զարյանին և բոլոր հարցնողաց: Ջերմորեն բարևներ Սոֆիից ձեզ բոլորիդ:

Համբույրներով, քո՝

Ավետիք Իսահակյան

293. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1941, հունիսի 26, Էսենտուկի

Սիրելի Սոֆիկ.

Վերջապես եղավ այն, ինչ որ անսպասելի էր, գոնե ինձ համար. և սարսափելի. մենք չէինք ուզում պատերազմ, և մեր վզին փաթթեցին: Գազան Հիտլերը արյան ծարավի է, իբրև նոր Աթիլլա և վերջ ի վերջո պիտի խեղդվի իր ծովերով թափվող արյան մեջ: Ես մտածում էի, թե նա այնքան խելք կունենա, որ չի կռվի մեզ հետ. բայց ելավ, ի՞նչ անենք. ամեն միջոց պիտի գործ դնել, հաղթանակով դուրս գալու այս սոսկալի փորձությունից:

Ուրախալին այն է, որ Անգլիան և Ամերիկան մեզ հետ են, և Թուրքիան էլ առայժմ չեզոք է. իսկ մենք էլ, իհարկե, ուժեղ ենք և տակը մնացողը չենք:

Ես առաջին օրերը գլուխս կորցրել էի, և չգիտեի թե ինչ անեմ. հիմա մի փոքր հանգստացել եմ: Մեր բոլոր ծրագրերը ջուրն ընկան. այլևս Կիսլավոդսկ դես-դեն գնալ չի լինի. ո՛չ տոմսակ տվող կա, ո՛չ էլ իմաստ՝ տնից հեռանալու: Ես ուզեցա նույն օրը, մյուս օրը ճամփա ընկնել դեպի տուն, անկարելի եղավ. մինչև այսօր դեռ տոմսակ չեն ծախում դեպի Բաքու—Թիֆլիզ. երկաթուղիները միայն զինվորականների համար է, իսկ ե՞րբ թույլ կտրվի մեզ՝ հայտնի չէ: Ես շատ անհանգիստ եմ Վիգենի համար. կանչե՞լ են արդյոք նրան, ի՞նչ վիճակի մեջ է: Խեղճ Գյուլիզարի տղան, երևի, արդեն կռվի մեջ է. երևակայում եմ, թե Երևանը ի՜նչ հուզված վիճակումն է: Կարծում եմ, որ Բելլան դերասաններին հետ, մի կերպ, կդառնա տուն. երևի նրանց համար դյուրություն կտան:

Իմ վիճակը այսպես է.— ես արդեն 15 օրվա համար պարտական էի վճարել ըստ պայմանի, և վճարեցի մինչև հուլիսի 5-ը: Օրը 40 ռուբլի է և մանր ծախսեր, տվի 650 ռուբլի: Լավ սանատորիա է, թանկանոց. լավ սնունդ, լավ բժիշկներ: Ինձ քննեցին — արյան ճնշումս բարձր է՝ 170/120. թոքերս թուլացել են, և մանր-մունր բաներ: Հավատացնում են, որ եթե մի ամիս կուրս անեմ (սովորաբար մի ամիս է կուրսը), բուժվեմ, ճնշումը կիջնի, թոքերը կուժեղանան.

մշտական նամարկա (քիթս-կոկորդս) կբուժեն...

Չեմ իմանում ի՛նչ անեմ: Բժ. Սաֆրազբեկյանը խորհուրդ է տալիս, որ մնամ, ուրեմն եղածից մի 15—17 օր ավել, մինչև հուլիսի 22—25. կարծում են, որ ճանապարհներն էլ կբացվին տուն գալու համար: Բայց փող պետք է, թե՛ սանատորիայի համար, թե՛ ճամփու ծախս. դիմիր լիտֆոնդին, որ այդ ծախսերը հոգա, ո՛չ պակաս 1000 ռուբլի, թերևս ավելի, ո՛վ գիտե ինչ անսպասելի դեպքերի առաջ ենք կանգնած, և մանավանդ ես, հեռու հայրենիքից, տնից: Ա՛յ քեզ կուրորտ գնալ, ա՛յ քեզ խաթա-բալա. ինչո՛վ պիտի վերջանա, ո՛ւր պիտի գնա էս դժբախտությունը՝ մասնավոր և ընդհանուր:

Փողը հեռագրով տեղափոխել սանատորիայի վրա՝ Есентуки, санатория № 5, учёных. Իմ բախտից Սեդային երեկ ուղարկեցին Վորոշիլովսկ, ռենտգենոլոգիայի մեջ ծառայելու, զինվորական պարտավորություն. եթե բժիշկն էլ գնա՝ ամուսինը, երեխաները կմնան անտեր, ծեր մոր հսկողության տակ:

Մորքուրիս աղջիկն էլ տեղափոխվում է Կիսլավոդսկ՝ ինչ-որ զինվորական հիվանդանոց, այնտեղից էլ, երևի, ուրիշ տեղ:

Ո՞նց գտնեմ բժ. Արծրունու հասցեն՝ կոշիկները տալու. դեռ Կիսլավոդսկ չեմ գնացել, և առհասարակ տրամադրություն չունեմ ոչ մի բանի. միևնույն ժամանակ անսպասելի էր թոքերիս թուլացման փաստը ինձ համար, նաև ճնշման բարձրությունը:

Շուտով գրիր, հեռագրիր Վիգենի, Բելլայի, բոլորի մասին: Մոսկվա գրեցի, որ Բելլային հոգան:

Համբույրներով բոլորիդ՝ **Ավետիք**

294. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1941, հուլիսի 10 Էսենտուկի

Սիրելի Սոֆյա.

Երեկ ստացա փողը՝ 1000 ռուբլի, որ ուղարկել էիր հեռագրով: Ստացել եմ նաև երկու հեռագրերը. հիմա մի փոքր

հանգիստ եմ, բայց դեռ նամակդ չեմ ստացել: Այստեղ նույնպես ժողովուրդը հանգիստ է և ինքնավստահ. զգում ես, որ ռուսը շա՛տ մեծ և հանգիստ ժողովուրդ է. ջղայնություն չի ցույց տալիս. հավատացած է վերջնական մեր հաղթանակի մասին: Ես բուժվում եմ. երևի ամսիս կընկնեմ դեպի տուն ամսիս 20-ից հետո:

Համբույրներ բոլորիդ,
Ավետիք

295. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1942, հուլիսի 8, Երևան

Սիրելի Հայկ.

Իր ժամանակին ստացել եմ քո բոթաքեր նամակը և ամեն օր որոշել եմ պատասխանել նամակիդ, բայց չեմ կարողացել:

Աստծուն հայտնի է, որ ես մեր մեծ եղբորը՝ թանկագին Բագրատին շատ էի սիրում և հարգում էի շատ, իբրև խելացի և պատվասեր, թասիբ պահող մարդու: Քանի նա կար՝ ես զգում էի, որ մեր տոհմի մեծը կա, և արժանավոր մեծը: Անսահման ցավ պատճառեց ինձ մեր սիրելագույն Բագրատի կորուստը, ուղղակի անմխիթարելի, անմոռանալի վիշտ: Մեր ընկեր խեղճ Արամի կորուստն էլ խորունկ ցավ պատճառեց, բայց Բագրատի ցավը շատ ավելի ազդեց հոգուս վրա: Գուցե պատճառը այն է, որ ես այս տարի շատ տխուր եմ և ընկճված: Անողորմ պատերազմը աճավոր ծանրությամբ ճնշում է ինձ. ինչքա՜ն վիշտ, տխրություն կա նրա հետևանքով. ամեն մարդու հարվածել է նա, և դեռ վերջը չի երևում: Ես խորապես զգում եմ թանկագին Բագրատի վիշտը.— գրում ես, որ միակ որդուց ոչ մի տեղեկություն չէր ստանում: Այս երկու տողը ինձ շատ բան հասկացրեց: Խե՛ղճ, խե՛ղճ Բագրատ ջան, ի՜նչ տխուր, վշտագին ապրումներ է ունեցել:

Սիրելի Հայկ, ուզում եմ մի քանի օրով Լենինական գալ, բայց որ մտածում եմ, որ Բագրատին չեմ տեսնելու — սար-

սափում եմ. սակայն ուժ պիտի գործ դնեմ վրաս և գամ: Կարոտցել եմ մեր քաղաքին, ո՛վ գիտե, մեկ էլ տեսնիմ, թե ոչ-մենք բոլորս էլ-ես էլ, դու էլ ծերացել ենք արդեն:

Խնդրում եմ, Հայկ ջան, իմ կողմից մխիթարիր խեղճ Թագուհի քույրիկիս, Անահիտին և բոլորին: Կինս էլ շատ տխրեց: Հերու տեսավ Բագրատին և շատ համակրեց:

Համբույրներով բոլորիդ, քո՝ **Ավ. Իսահակյան**

296. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1942, դեկտեմբերի 10, Երևան

Սիրելի Հակոբ.

Ո՞նց է քեֆդ. Մոսկվայից հատ ու կենտ եկողներից հարցնում-իմանում եմ քո մասին. այն տպավորությունն է ստացվում, որ վատ չես, ապրում ես: Կարևորը դա է — հավատալ մեր գործերի վերջնական լավ ելքին, պատերազմի հաղթանակին, և տոկալ, համբերել, դիմանալ:

Մենք՝ քո ծանոթ-ընկերները նույնպես լավ ենք, դիմանում ենք: Քույրերդ էլ լավ են, առողջ են:

Այս տողերիս գրելու դրդապատճառը իմ սրտագին շնորհակալությունն է, որ ուզում եմ հայտնել քեզ, «Октябрь» ամսագրի մեջ քո թարգմանությամբ լույս տեսած իմ երեք պատմվածքների համար: Ոչ-գեղեցիկ նախադասություն կազմեցի, բայց դու էությունը հասկացիր — շնորհակալություն քո հաջող, որակավոր թարգմանությանդ համար:

Երբեմն-երբեմն գրի՛ր մեզ կենցաղիդ, առողջությանդ մասին. Մարիետտայի մասին, ո՞ւր է, ինչպե՞ս է: Բարևիր Մոսկվայի մեր բարեկամներին՝ Սեյֆուլինային, Անջելիկային, Քոչարյան ընտանիքին (Վանյային և Ռոզային), ռուստավցի մեր ընկարիչ բարեկամին, որի անունը, հենց գրելիս, միտքս չեկավ, բայց գիտեմ:

Ե՞րբ պիտի նորից հանդիպենք իրար. ե՞րբ պիտի վերադառնան խաղաղության այն չքնաղ օրերը, նորից գանք սիրելի Մոսկվան, ուրախանանք, ուտենք-խմենք, գրքեր գնենք — ափսո՛ս, ափսո՛ս ժամանակներ:

Եթե Ս. Մ. Խիթարովան այդտեղ է, ջերմապես բարևիր: Մենք՝ կինս, տղաս և հարսս կարոտով բարևում են քեզ, իսկ ես սրտագին համբուրում եմ քեզ՝ ցանկանալով առողջություն և երջանիկ օրերի վերադարձ:

Քո՝ **Ավետիք Իսահակյան**

297. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1943, հուլիսի 12, Երևան

Սիրելի Հակոբ.

Վաղուց էի ուզում քեզ համակ գրել, ծուլանում էի և տրամադրություն չէր ստեղծվում: Վերջապես գրում եմ մի քանի տող:

Առհասարակ մենք, ընկերներով, լավ տրամադրության մեջ չենք. ապրուստի պայմանները ծանր են, ճարպային և շաքարային մասերը քիչ են, ձիհարում ենք և թուլանում, աշխատունակությունից զրկվում: Պատերազմը շատ երկարեց և հոգնել ենք. միակ հույսը, որ մեզ պահում է, դա այն բացարձակ ճշմարտությունն է, որ հաղթանակը մեր կողմն է, ուշ թե շուտ, Գերմանիան ծնկի է գալու: Դիմանանք մինչև այդ մեծ օրը:

Սիրելի Հակոբ, ես մի 18 օրով գնացել էի Լենինական, շրջեցի ռայոնները, լավ ժամանակ անցրի, մի քիչ թարմացա. վերադարձա, բայց գրիպով մի քանի օր պառկեցի. հիմա լավ եմ. մի քանի օրից հետո գնում եմ Արագած՝ սասունցիների մոտ հյուր. հրավիրել են ինձ. հույս ունեմ, որ լավ օրեր պիտի ապրեմ:

Այս տողերը գրում եմ մի խնդիրով առ քեզ — կարո՞ղ ես, արդյոք, իմանալ իմ՝ թարգմանված և չտպագրված բանաստեղծություններիս բախտի մասին. հարցնես Гослитиздат-ի Խիթարովայից՝ ի՞նչ վիճակի մեջ են թղթերս, պահվա՞ծ են, արդյոք, թե՞ կորած են, և վերջապես՝ տպվելո՞ւ են երբևիցե: Այդքան: Խմացիր և գրիր ինձ:

Հետո, սիրելիս, դու գրել էիր Ն. Զարյանին ընկեր Ա. Ֆադեևի ինչ-որ ասածի մասին. ինչ-որ թյուրիմացության

մասին ինձ պարգևատրության համար: Ի՞նչ բան է այդ. ի՞նչ թյուրիմացություն է և ո՞ւմ կողմից: Շատ հետաքրքիր է այդ իմանալ:

Ո՞նց ես դու, առողջությունդ, ապրուստդ, ո՞նց ես յոլա գնում. ո՞ւր է Մարիետտան, աղջիկդ. ողջ-առողջ են, ինչպես են:

Գալու մտադրություն չունե՞ս մեր կողմերը. թերևս մեզ մոտ ավելի լավ լինի. ո՞վ գիտե:

Դերենիկը մի կերպ քաշ է գալիս: Մի վեպ է գրել՝ «Վարդանանց պատերազմը» և չի կարող վերջացնել:

Նաիրին ռայոն գնաց կոլխոզում աշխատելու համար:

Գրական նորություններ չկան: Մերոնք լավ են և բարևում են քեզ:

Համբույրներով,
քո՝ **Ավետիք Իսահակյան**

298. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1943, հուլիսի 28, Իրինդ

Սիրելի Սոֆիկ.

Արդեն 10 օր է այստեղ եմ. ժողովուրդը շատ լավ ընդունեց և լավ պահում, պատվում է. միայն խեղճ Արուսի մահը տրամադրությունս շատ փչացրեց, շա՛տ ազդեց վրաս և մի վայրկյան չեմ կարողանում մոռանալ: Ափսո՛ս, շա՛տ ափսո՛ս:

Ուրեմն դեռ մի 20 օր էլ կմնամ. ուրիշ գյուղերից հրավիրում են, հյուրասիրելու համար. մի-երկու գյուղ կգնամ:

Այս գրաբերիս՝ ընկեր Արշակից հետո պիտի Երևան գա Խաչիկ Դաշտենցը. նա կպատմե մանրամասնություններ Պիտի մտածել վերադարձի համար — ավտո, ավելի լավ թեկուզ գրուզավիկ, պիտի գտնել. թե չէ երկաթուղիով ինչ պես պիտի բերել այն, ինչ որ Խաչիկը մեզ խոստացավ Ո՞ւմ ավտոն: Թերևս Աշոտ Մարտիրոսյանի, կամ մե Գրողների տան: Մի խոսքով, սա շատ ծանր խնդիր է:

Խաչիկը կգա, կխոսեք:

Ուղարկում եմ կինոյի՝ «Դավիթ Բեկի» համար, այս երկու ոտանավորը. կհանձնեք Մխիթարին, Դավթյանին: Սրանից լավը չեմ կարող գրել. բանաստեղծություն չկա մեջը, որ գրեի. ճառային բան է, որի համար ես շնորհք չունեմ: Չեն հավանում (եթե չհավանեցին), թո՛ղ ուրիշին տան, ես չեմ վիրավորվում: Ես առաջին պատվերը սիրով և պատվով կատարել եմ, սա երկրորդ պատվերն է, որը սրտովս չէ:

Էլ բան չունեմ գրելու. համբույրներ և բարևներ բոլորիդ:

Ավետիք

299. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1943, օգոստոսի 16, Իրինդ (Թալինի շրջան)

Սիրելի Հակոբ.

Նամակդ, որ գրել ես 2/VI, ստացա չորս օր առաջ այստեղ, Արագածի վրա, Իրինդ գյուղում, սասունցիների մոտ: Շատ ուրախացա, որ գիրքս տպվում է. բոլորովին հավատալս չի գալիս, թե դա իրականություն է. բնավ հույս չունեի. շատ ուրախ եմ և շատ շնորհակալ քեզնից և Ս. Խիթարովայից:

Արդեն, սրանից մի ամիս առաջ քեզ նամակ եմ գրել, պատվիրած, կվիտանցիան մոտս է (квитанция, № 233, Ереван, 13/7). եթե չի հասել, կարող ես պահանջել, և խնդրել էի նամակովս, որ հետաքրքրվեիր գրքիս բախտով: Ուրեմն, այդ եղավ:

Հակոբ ջան, նաև խնդրել էի, որ գրեիր ինձ հետևյալ լուրի մասին. Նաիրի Զարյանը քեզնից նամակ է ստացել (ես չկարդացի նամակը) ուր դու ինչ-որ բան էիր հայտնել իմ մասին՝ ընկեր Ա. Ֆադեևի կողմից. ինչ-որ թյուրիմացություն վերաբերմամբ... Այդ ի՞նչ թյուրիմացություն է, ո՞ւմ կողմից, ո՞վ է մատ խառնել. վերջապես, եթե կարող ես, ավելի որոշ բան գրի:

Հետաքրքիր է:

Հիմա իմ այստեղ լինելուս մասին. այս շրջանը ունի 19 գյուղ սասունցիներով բնակված, մոտ 10—12000 մարդահա-

մարով: Ես նրանց հյուրն եմ. մի ամիս է այստեղ եմ, և նրից մի 15 օր էլ ապրելու եմ: Նրանցից պատգամավոր եկան և հայտնեցին ժողովրդի ցանկությունը՝ հյուր լինել իրենց մոտ ընտանիքով. կինս չէր կարող գալ, ես եկա. հրաշալի պահում են, բառացի՝ յուղ ու մեղրի մեջ եմ. ձիով շրջում եմ գյուղերը, Արագածի յայլաները, աղբյուրները... Ահա իսկական գնահատանք ժողովրդի կողմից: Ես էլ պարապում եմ և թափառում:

Հա՛, արձակիս թարգմանությունները, որ թողեցիր Հրաչի մոտ,— ձգձգում է, քաշ է տալիս, իրապես նպատակ չունի հրատարակելու. նույնիսկ Կուսիկյանի հոդվածը թաղեց: Նա միայն խոստումներ տալ գիտե և երբեք չկատարել:

Վնաս չունի. պատերազմից հետո կլինի:

Ամսուս 12-ին Երևան, Գրողների տանը Մարիետտային ևվիրված երեկո է եղել 40-ամյակի առթիվ. ափսոս, ես բացակա էի: Քաղաք վերադարձիս կկարդամ «Новый мир»-ի մեջ նրա հոդվածը:

Չգիտեմ, երևի կինս գրաբերիդ միջոցով քեզ գրած կամ հայտնած կլինի նամակդ ստանալներուս համար:

Համբույրներով և բարևներով,

քո՝ **Ավետիք Իսահակյան**

Ջերմագին բարևներ Ս. Մ. Խիթարովային — անպատճառ:

Ա. Ի.

300. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1943, օգոստոսի 22, Իրինդ

Սիրելի Սոֆի.

Ստացել եմ ուղարկածդ բոլոր նամակները և թերթերը:

Ես ողջ և առողջ եմ: Եթե խանգարիչ հանգամանքներ չծագեն, շաբաթ օրը, ամսի 28-ին, կդառնամ դեպի տուն: Խոստացել են ավտո տալ:

Մնացածի մասին ընկեր Դաշտենցը կպատմե:

Համբույրներ բոլորիդ՝

Ավետիք

301. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1943, դեկտեմբերի 29, Երևան

Սիրելի ընկեր Մաթևոս.

Վաղուց է ձեր բոլորից ո՛չ մի տեղեկություն չունեմ. ինչպե՞ս եք, լա՞վ եք, առո՞ղջ եք: Զարմացած եմ և վիրավորված, որ Երևան եք եղել, և մոտս չեք եկել: Նվարդը և Մարիամը խոստացել էին գալ և չեկան: Գոնե մյուս անգամ, անպատճառ գաք:

Ես միշտ հիշում եմ ձեր բոլորիդ, և կարոտցել եմ. ի՛նչ լավ օրեր անցրինք. աղբյուրների գլուխը, սարում, ջաղացների դռանը: Մոռանալու օրեր չեն:

Հիմա այս երկու տողով ամբողջ սրտով շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարին և ցանկանում եմ բոլորիդ առողջություն, երկար կյանք, հաջողություն, բարով ձեր սիրելիները պատերազմից ողջ և առողջ և հաղթանակով տուն դառնան:

Սրտագին բարևներ քեզ, Նվարդին, հայրիկիդ, Հակոբ Պետրոսյանին, Գալուստ և Խաչիկ Քոթանյաններին, Հմայակին, Արմենակին, կնոջը, Հարությում Հարությունյանին, ուստա Միհրանին, Ղազարին, Գևորգ Հեքոյանին, Հլոյին, բոլոր մեր քաղաքակիցներին, իմ տնտեսուհի Արուսիկ և մեր աղջիկներին: Մի խոսքով՝ բոլոր իրիկնցոց, նաև ձեր դրացի գյուղերի իմ ծանոթ, բարեկամներին: Ջմռուկնաս ամենքին բարև հաղորդել:

Ջերմ և սիրո բարևներով,
միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

302. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1944, հունիսի 30, Լենինական

Սիրելի Սեդա.

Ինչպես տեսնում ես՝ դեռ Լենինականումն եմ և կմեկնեմ Երևան, երևի, կիրակի օրը: Ընկերները չթողին գնալ, պահեցին: Դու էլ ինձ արդեն ճանաչում ես. Համլետի ասածի

պես, ես մի այնպիսի սրինգ եմ (ֆլեյտա), որի վրա ամեն ոք կարող է նվագել, և դրանով, կարծես, ավելի կատարյալ է լինում հարմոնիան (ներդաշնակությունը):

Մի խոսքով՝ շտապեցի եկա. ցավում եմ, որ շուտ թողեցի Դսեղը. չքնաղ էր, գեղեցիկ էր, անուշ էր Դսեղը ամեն կողմերով, ամեն խորություններով, բարձրություններով և լայնություններով. 16—17 տարուց ի վեր այսպիսի հաճելի, քաղցր մոմենտներ, պահեր չէի ապրել, ինչ որ ապրեցի գեղեցիկ Լոռիի գեղեցիկ գրկում: Դսեղի հաճը բերանս մնաց, բախտ ունենամ և ժամանակ՝ նորից կգամ:

Սեդա՛ ջան, ինձ հյուրընկալող Արմենակի սեղանի վրա մոռացա, թողեցի մի տետրակ. եթե Նվարդի հետ չեք ճամփել ինձ հանձնելու համար, խնդրում եմ շատ՝ որոնիր, գտիր և մոտդ պահիր:

Ջերմագին բարևներ Արմենակին, Ռեբեկային, Աստղիկին և տանտիրուհուդ:

Համբույրներ աչիկիդ և քեզ.
միշտ Ձեր բարեկամը՝

Ավետիք Իսահակյան

Հասցես՝ Երևան, կամ մեր տունը, կամ Գրողների տունը, կամ Նվարդին:

208. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1944, օգոստոսի 15, Լենինական

Սիրելի Սեդա.

Գրում եմ Լենինականից. հասա թե ոչ՝ հետախոսեցի Երևան և սրտի ցավով իմացա, որ մինչև ամսուս 20-ը կարող էի մնալ, որովհետև Զանգեզուր գնալներս հնարավոր է նրանից (20-ից) հետո: Կարող էի մի-երկու օր էլ Դսեղի գեփյուռը վայելել. ափսո՛ս, հազա՛ր ափսոս...

Հիմա անվերջ կրկնում եմ անցած օրին օր չի հասնի, և՛ երեկ լավ էր, քանց որ էսօր: Մնաք բարև Ծովեր, Կաթնաղ-

բյուր և ս. Գրիգորի աղբյուր, երջանկալից պահեր, իմ կյանքիս վերջալույսի շքեղ ժամեր, անցաք անդառնալի:

Լենինականից գնում եմ կիրակի օրը մեր գյուղը՝ Ղազարապատ, որը ջրի տակն է անցնելու՝ ծրագրված և իրականացվելիք լճի հետևանքով. իմ մանկության վայրերը էլ արև չեն տեսնելու, թաղվելու են խավարի և խոնավության մեջ, ինչպես մի օր էլ ինձ է վիճակված այդպես թաղվելու:

Հիմա՛ր սենտիմենտալիզմ:

Դու ողջ լինես՝ մի՛շտ լավ, ջահել և գեղեցիկ:

Շնորհակալություն ձեր բոլորից, և՛ Արմենակից, և սրտագին բարևներ ձեզ՝ բոլորիդ:

Միշտ քո՝ **Ավետիք Իսահակյան**

804. ԱՇՈՏ ԳՐԱՇՈՒՆ

1944, օգոստոսի 22, Երևան

Սիրելի Աշոտ.

Ինչպես մեր երջանիկ պապերն են սկսել իրենց նամակները, նույնպես էլ ես եմ սկսում — նախ և առաջ ունեմ սիրով և կարոտով բարև քեզ, սիրելի Մարգարիտին, մայրիկին, մեծին և փոքրին և բոլոր հարցնողաց. թե մեր կողմանե կհարցնեք՝ մենք ողջ և առողջ ենք և ձեր տեսությանն ենք կարոտ. ամեն:

Սիրելի, կարոտալի Աշոտ, շնորհակալությամբ ստացել եմ գիրքդ՝ «Կռունկը». շատ ուրախ եմ, որ չես մոռացել ինձ և թանկագին գիրքդ ուղարկել ես ինձ:

Գիրքդ միշտ սեղանիս վրա է, կարդում եմ և վայելում, կարդում են և՛ մերոնք և բոլոր ինձ այցելողներին ցույց եմ տալիս իմ սիրած բանաստեղծությունները: Գեղեցիկ են շա՛տ «Ղարաբաղի կապույտ լեռներում» շարքի բանաստեղծություններից շատերը: «Վերադարձրեք իմ մանկությունը», «Ա՛խ, միտս ընկավ» — սրանք գոհարներ են. զգացմունքով, գեղեցկությամբ, թարմությամբ լի:

Շնորհակալություն ինձ նվիրած երկու սիրուն բանաստեղծությունների համար:

Այրես, զորանաս, ավելի և ավելի առաջ գնաս, երգես նորանոր չքնաղ, լիրիզմով թաթախուն տաղեր, անսպառ լինես: Գիրքդ վատ չէ տպված, ի նկատի ունենալով պատերազմի պայմանները:

Շուտով պատերազմը կվերջանա, երկիրը շունչ կքաշի և բախտ կունենանք լավ թղթի վրա կարդալու երգերդ:

Սիրելիս, առողջությունս վատ չէ, բայց էնքան էլ փայլուն չէ. սիրտս լավ չի գործում: Բայց կդիմանամ մինչև խաղաղության բարիքները տեսնելու օրերը և վայելելու մեր երազների իրականացման ոսկե պահը, որ ուշ չէ: Անհի տեսնելու եմ անպատճառ...

Վիգենը գալիս է մոտդ, կպատմի իմ մասին. կօգնես տոմսակ առնելու մեջ: Երևի, այս տարի, աշնանը, ես Մոսկվա կգնամ, կանգ կառնեմ Բաքու և բոլորիդ կտեսնեմ:

Առայժմ ջերմ բարևներ բոլորիդ, մեր Բաքվի գրող ընկերներին ու Ադրբեջանի գրող ընկերներին — Սամեդին (Վուրղունին), Ռզային և այլոց:

Բարևներ մերոնցից՝ Սոֆիկից և Բելլայից:

Քո՝ **Ավետիք Իսահակյան**

805. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1944, հոկտեմբերի 28, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Լյուսի Թարգյուլի միջոցով իմացա Շուշինկի նկատմամբ քո և Կարոյի ցույց տված մարդասիրության մասին: Խորապես զգացված եմ, որ ձոգ եք քաշել, որպեսզի հանգուցյալ տիկին Շ. Միրաքյանի թաղումը շքեղ լինի, որ անտեր չեք թողել: Հուր հավիտյան, մինչև մահ, գերեզման չեմ մոռանա ես նրան: Հիմա կարող եմ ասել, որ իմ կեսը մեռել է:

Քո՝ **Ավ. Իսահակյան**

306. ԹԲԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ ԹԻՎ 5-ՐԴ ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԳԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

1946, հունվարի 8, Երևան

Սիրելի ընկերներ.

Շատ եմ ցավում, որ Ձեր հեռագիրը, որով պատվել էիք ինձ շնորհավորելով իմ 70-ամյա հոբելյանը — ես մինչև այսօր չեմ ստացել: Ապահո՛վ եղեք, խնդրում եմ, ում որ չկարողանայի պատասխանել ժամանակ չունենալու պատճառով կամ այլ հանգամանքի բերումով, Ձեզ անպատճառ կպատասխանեի՝ իմ անունը կրող դպրոցի վարչությանը և ուսանողությանը:

Սրանով, ուրեմն, թեև ուշ, հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը Ձեր ուշադրության և Ձեր հարգանքի համար, որ տածում եք իմ անձի և գործի հանդեպ:

Բոլոր սրտով ցանկանում եմ Ձեզ՝ ամենքիդ, առողջություն. ցանկանում եմ հաջողություն և առաջադիմություն Ձեր ուսման մեջ: Ապրեք մեր մեծ հայրենիքի համար: Ձեր սրտերում թո՛ղ միշտ վառ մնա սրբազան սերը հայ ժողովրդի հանդեպ, նրա լեզվի և գրականության հանդեպ, նրա բարօրության հանդեպ և Ձեր հավատը երբեք չտատանվի նրա լուսավոր ապագայի հանդեպ:

Խորին հարգանքներով և ջերմ բարևներով, միշտ Ձեր անկեղծ՝

Ավետիք Իսահակյան

8. I 1946 թ. Երևան.

307. ՄԱՇԱ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ

1946, հոկտեմբերի 10, Երևան

Շատ սիրելի Մաշա.

Այնքան խոսք ունեմ ասելու քեզ և զգացմունք արտահայտելու, որ պետք կլինի տասնյակ էջեր գրել, սակայն

բավականանամ մի միայն մի խոսքով — շա՛տ և շա՛տ կարոտցել եմ քեզ, կուզեի մնացած կյանքիս մեջ գոնե մի անգամ տեսնեի քեզ:

Ուրախ եմ, որ ողջ և առողջ ես, և չես մոռացել ինձ, եղբոր և քրոջ սիրով:

Շնորհակալությամբ ստացել եմ Աշոտ Աբրահամյանի միջոցով ուղարկածդ արծաթե մատիտը և այս անգամ էլ Արամ Երեմյանի միջոցով՝ տապակերկան: Սրանք գուրգուրանքով պահում եմ, քեզ միշտ հիշելով:

Ես տակավին առողջ եմ և աշխատելու ընդունակ: Ապրում եմ հայ ժողովրդի լավագույն ապագայի հավատով, և եռանդով մասնակցում եմ Սովետ. Հայաստանի կուլտուրայի վերելքին:

Ամբողջ սրտով ցանկանում եմ քեզ և երեխայիդ երկար, առողջ կյանք, բախտավոր լինեք: Ջերմաջերմ բարևներ կնոջս կողմից:

Համբուրում եմ ձեռքերդ,
միշտ քո՝ **Ավետիք Իսահակյան**

308. Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

1947, հունվարի 9, Երևան

Երևանի դազգահ-գործիքային տեխնիկումի դիրեկտոր ընկեր Վ. Փափազյան

Հարգելի ընկեր.

Այս տոմսակս բերողները հայրենադարձ պատանիներ են՝ Մասիսյան Հակոբ Պողոսի, 17 տարեկան և Ինճեյան Լազար Խաչիկի, 18 տարեկան:

Նրանց հայրերին ես արտասահմանից եմ ճանաչում, մեր լավ, գաղափարական ընկերներիցն են: Մի-երկու ամիս առաջ են ներգաղթել Երևան:

Մասիսյան և Ինճեյան մեր պատանի ընկերները երկու

տարի հաճախել եմ Փարիզի մեխանո-տեխնիկական մասնավոր դպրոցը:

Հիմա շատ եմ խնդրում Ձեզ, հարգելի ընկեր, ամեն ջանք գործ դնել և ի նկատի ունենալ նրանց բացառիկ դրությունը, ընդունել Ձեզ հանձնված դպրոցում, որպեսզի տղաները իզուր ժամանակ չկորցնեն: Մանավանդ խնդրում եմ զիջողաբար վարվել նրանց լեզվի նկատմամբ, որովհետև գաղութահայերը հնարավորություն չունեին լրիվ հայերենով սովորել տեխնիկայի լեզուն, տերմինները:

Մեծ հույս ունեմ, որ կընդառաջեք իմ դիմումին. անձամբ պիտի գայի Ձեզ մոտ, բայց հիվանդացա և դեռ հիվանդ եմ:

Հարգանքներով՝ **Ավետիք Իսահակյան**

309. Տ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ «ՄՈՒՍԱ-ԴԱՂԻ ՀԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ»

1947, օգոստոսի 29, Երևան

Սիրելի ընկ. Տ. Ալեքսանյան.

Այսքանը կարող եմ ասել Ֆրանց Վերֆելի և նրա վեպի մասին:

Ֆ. Վերֆելը ծնվել է 1890 թվին, հրեա ընտանիքում: Վիեննայի բնակիչ է: Գրում է գերմաներեն: Գրել է բանաստեղծություններ, վեպեր, դրամաներ. վերջիններից կան ռուսերեն թարգմանություններ: Եվրոպական գրականության մեջ համբավ ունի վաստակած: Առաջավոր գաղափարների կրող է:

Մեզ հետաքրքրող նրա վեպը Կիլիկիայի մի մասի հայերի կյանքից է — նրանց օրհասական կռիվը ջարդարար թուրք կառավարության դեմ, 1915 թ.:

Թուրք ջարդարարները պաշարեցին Մուսա լեռն՝ հայերին կոտորելու, իրականացնելու իրենց հայաջինջ ծրագիրը, ինչպես իրականացրին Մեծ Հայքում և ամենուրեք:

Այս վեպի լրիվ խորագիրն է. «Հայկական հերոսապատում. Մուսա լեռան քառասուն օրերը, բախտորոշ դյուցազներգություն»: Բաղկացած է երկու ստվար հատորից, մոտավորապես 900—1000 էջերից:

Ի՞նչն է դրդել անվանի հեղինակին գրել այս հուզիչ վեպը հայ ժողովրդի գոյամարտի մասին, մի ժողովրդի, որի դատի հանդեպ ոչ մի համակրանք չունեին ո՛չ գերմանացիք, ո՛չ ավստրիացիք:

Հեղինակը գրեթե բացառություն է գերմանական լեզվով գրողների մեջ, հայկական տրագեդիայով հետաքրքրվելու տեսակետից, և այս հանգամանքով նա մեզ համար շատ սիրելի է և հարազատ:

Հեղինակը այսպես է գրում այդ դրդապատճառի մասին.— «Այս գործը ծրագրվեցավ 1929 թվ. մարտին, հեղինակին Դամասկոս բնակության միջոցին: Գորգի գործարանի մը մեջ աշխատող խեղանդամ ու սովատանջ մանուկներուն արտաճմլիկ տեսարանը վճռական մղումը եղավ՝ սովորական դեպքերում կարգեն խլելու և պատմականորեն դասավորելու համար հայ ժողովուրդին անտանելի ճակատագիրը: Այդ փոքրերը փախստականներուն զավակներն էին...»:

Այնուհետև հարգելի հեղինակը ձեռնարկում է հայ ժողովրդի պատմությունը, հայոց հարցը ուսումնասիրելու: Վիեննայի Մխիթարյանները շատ օգնում են նրան, և այլն, և այլն...

Այս վեպի մասին ես առաջին անգամ լսեցի 1933—34 թվին, Փարիզում: Պատահաբար կարդացի մի թերթում 1933 թվին գերմաներեն լեզվով լույս տեսած աչքի ընկնող գեղարվեստական գրքերի մասին. հոդվածը ստորագրել էր նշանավոր գրող Ստ. Ցվայգը: Ստ. Ցվայգը նշում էր 2—3 գրքերի անուններ, որոնք ամեն դրվատանքի արժանի էին. մեկը Ֆր. Վերֆելի վեպն էր. «Հայկական հերոսապատումը»:

Ես ձեռք բերի վեպը, կարդացի և հիացա: Օտար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար դատին նվիրված անգնահատելի գանձ է, եզակի, նմանը չունեցող: Մենք խորին երախտագիտությամբ պետք է մեր սրտերում ունենանք հեղինակի սիրելի անունը: Վեպը գրված է զգացմունքով, մեծ սիրով ու սրտով: Եվ դեպի հայերն ու մեր դատը խորին համակրանքով:

Այս վեպը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Կուլ-

տուրական ժողովուրդ չի մնացել, որի լեզվով փոխադրված չլինի հայ ժողովրդի դատը նվիրագործող այս երկը: Միայն տմարդի, նյութապաշտ դիպլոմատիան է, որ ամեն միջոցներով ուզում էր արգելակել նրա տարածումը Եվրոպայում և Ամերիկայում և ջնջել նրա ներգործությունը:

1930-ական թվերին Ամերիկայի Մետրո-Գոլդվին կինո ֆիրման ձեռնարկեց այս վեպի նկարահանումը: Գործը հանձնված էր հայազգի հայտնի ռեժիսոր Ռ. Մամուլյանին: Ռեժիսորը պատրաստություններ էր տեսնում, հայեր հավաքում. թերթերը խոսում էին դրա մասին: Հանկարծ լսեցինք, որ կինո-ֆիրման <դարեցր> -եց ձեռնարկը:

Պարզվեց, որ թուրք կառավարությունը դիմել է Ամերիկայի կառավարությանը, որ վերջինս արգելի նկարահանումը, սպառնալով բոյկոտ հայտարարելու Ամերիկայի կինո-նկարներին: Սակայն Մ. Գոլդվինը չհամաձայնեց: Այնուհետև թուրքերը դիմեցին Ֆրանսիային և փոքր Անտանտի պետություններին (Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան) նույն իմաստով: Նրանք միջամտեցին և խափանեցին ձեռնարկը: Փոքր Անտանտը և Ֆրանսիան պատճառաբանել էին, թե հայկական ջարդերը արդեն մոռացված պատմություն է, և անմտություն է եվրոպական խաղաղության տեսակետից նորից բորբոքել ժողովուրդների զգացմունքները, և գրգռել թուրքերի դեմ, և այլն, և այլն: Թուրքերը խոշոր գումարներ ծախսեցին այս նպատակի համար, կաշառեցին ժուռնալիստների, թերթերի:

Չմոռանամ ասել, որ Հիտլերը արգելեց այս վեպի վաճառումը Գերմանիայում:

Սակայն վեպը իր հաղթանակը տարավ, թարգմանվեց 24 լեզուներով: Երկու անգամ չեխերեն լեզվով:

Մի ամերիկացի ընթերցող գրում է, թե՝ «այս զարմանալի վեպը կարդալիս 4—5 օր ես կտրվել էի աշխարհից և ապրում էի հայերի տառապանքով և նրանց հերոսությամբ»:

Վեպը հայերեն թարգմանվել է 1935 թվին հանգուցյալ գրականագետ Երվանդ Տեր-Անդրեասյանի ձեռքով (արևմլտահայ բարբառով) և տպագրվել է Սոֆիայում: Որքան

գիտեմ՝ ռուսերեն լեզվով չկա. ցանկալի է, որ այդ լեզվով էլ լինի:

Շատ և շատ բաղձալի է, և մանավանդ շատ այժմեական և անհրաժեշտ, որ մեր Պետհրատը առանց հապաղելու ձեռնարկե այս չքնաղ վեպի թարգմանությանը արևելահայ բարբառով և լույս ընծայե:

Ավետ. Իսահակյան

310. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1948, դեկտեմբերի 4, Երևան

Սիրելի Հակոբ.

Վաղուց ուզում էի քեզ նամակ գրել, բայց տրամադրություն չէր ստեղծվում: Ամբողջ տարին, գրեթե ամբողջ տարին հիվանդություններից աչք չենք բացել.— ես հիվանդացա, թոռս երկու անգամ հիվանդացավ. հիմա էլ կինս է հիվանդ: Աշնանը գնացել էինք կնոջս հետ Սոչի (Сочи), կինս հիվանդ վերադարձավ: Մի խոսքով, հիմա լավ ենք:

Լսեցի, որ ուզում էիր գալ Երևան. սպասեցինք. չէ՞ որ ոիթմը սա էր — քո ոիթմը — ամեն աշուն Երևանում երևալ:

Շա՛տ և շա՛տ շնորհակալություն քո տարած արժեքավոր աշխատանքների համար ի նպաստ հայ գրականության. նովելաների թարգմանությունը շա՛տ մեծ գործ է, երախտավոր աշխատանք: Այս երկու օրս տղաս բերեց «Знамя надежды» պատմվածքներիս ժողովածուն, «Огонёк»-ի հրատարակությամբ. սա արդեն նվաճում է, հայ գրականության նվաճում. քիչ բան չէ. բարեկամները շատ են ուրախացել:

Միայն զարմանում եմ, թե ինչո՞ւ «Гарибальдиец»-ի սկիզբը կրճատել եք և հանկարծակի սկսվում է պատմությունը ոչ մի բանի հետ չկապված, կարծես օդի մեջ է: Ով կարդաց, ով կարդացել է, նույն նկատողությունն է արել:

Սիրելի Մարիետայի հոբելյանը շնորհավորող մի նամակ էի գրել, որ վերադարձել էր և մեր քարտուղարը նորից ետ էր ուղարկել: Չգիտեմ, վերջ ի վերջո ստացե՞լ եք, թե ոչ:

Սրտագին բարևներ քեզ և Մարիետային:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

311. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ

1951, օգոստոսի 2, Կիսլովոդսկ

Իմ թանկագի՛ն բարեկամ Մաքսիմ Ֆադեևիչ.

Մեծ ուրախությամբ ստացա Ձեր խմբագրությամբ լույս տեսած իմ բանաստեղծությունների հատընտիր ժողովածուն: Ես շատ երջանիկ եմ, որ Դուք այդքան շատ ջանք ու եռանդ եք ներդրել, որպեսզի ուկրաինացի ընթերցողին ծանոթացնեք իմ պոեզիային:

Ներեցեք ինձ, որ այսքան ուշացումով եմ պատասխանում. մեկ ամսից ավելի հիվանդ էի: Բացի այդ, ես շատ էի ուզում, որ ինձ կարդային ժողովածուն (իսկ դրա համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որը տիրապետեր ուկրաիներեն լեզվին) և օգնեին ինձ Ձեզ նամակ գրելու Ձեր մայրենի լեզվով: Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Ձեր և իմ ընկերները իմ բանաստեղծությունները թարգմանել եք ճիշտ, լավ, կարողացել եք իմ խոսերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր:

Մեծ երջանկություն է ինձ համար, որ ուկրաինացի ներոսական և բանաստեղծական ժողովուրդը կկարդա իմ բանաստեղծությունները և, ուզում եմ հուսալ, որ կսիրի դրանք:

Իմ անկեղծ շնորհակալությունները Ձեզ, թանկագին Մաքսիմ Ֆադեևիչ, շնորհակալություն թանկագին Պավել Գրիգորևիչին, ինչպես նաև Վ. Սոսյուրային, Լ. Պերվոմայսկուն, Օ. Նովիցկուն և բոլոր նրանց, ովքեր թարգմանել են իմ ստեղծագործությունները:

Ջերմորեն, ամբողջ սրտով ողջունում եմ Ձեզ, ցանկանում եմ երկար կյանք, առողջություն և ուժ, նոր հաջողություններ աշխատանքում:

Ավետիք Իսահակյան

312. ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ

1951, օգոստոսի 2, Կիսլովոդսկ

Սիրելի ընկեր Մարգար Դավթյան.

Ամենից առաջ՝ շնորհակալությունս եմ հայտնում Ձեր ջերմ հոդվածի համար իմ գրքի առթիվ, «Կոմունիստի» մեջ:

Ընկեր Արշավ. Դարբինի դեռ ապրիլ ամսին հայտնեց ինձ՝ Ձեր կողմից հաղորդած ինձ համար շատ ուրախալի լուրը՝ ադրբեջանական լեզվով գրվածքներիս հրատարակումը: Այնուհետև աչքս ծով դարձավ սպասելով նրա երեսը տեսնելու, մինչև որ հուլիսի 9-ին կամ 10-ին շատ համակրելի Քովսար Խաչումը բերեց մի օրինակ ինձ ևվեր, գեղեցիկ ձոնով: Գիտես, անշուշտ, Քովսար Թաղիվերդիևնան:

Թարգմանությունները, ինչքան կարողացա հասկանալ, մեծ մասով հաջող են, կան և անհաջող թարգմանություններ: Նյութերի ընտրության մասին էլ նույնը կարող եմ ասել:

Խնդրում եմ, ջերմ շնորհակալություններս հաղորդել ընկեր Մ. Ռահիմին իր սրտագին աշխատության համար:

Այստեղ լսեցի, որ «Бакинский рабочий» թերթում եղել է գրախոսական, բայց չեմ տեսել: Երևանում, երևի, կհաջողվի տեսնել:

Հիմա գործնականին — խնդրում եմ մի քանի օրինակ ձեռք բերես կամ կարգադրես ինձ հասցնելու Երևան այս հասցեով. Ереван, ул. Плеханова, № 32, Ав. Исаакяну, հեղինակին հասանելիք օրինակներ կամ վերադիր վճարով: Հոնորարի մասին — ո՛չ պայման ունենք, ո՛չ էլ մի բան գիտեմ. Հով. Թումանյանի ասածի պես՝ «Դրա մասին խոսելն էլ ամոթ ա» (կամ ճիշտը — «Դրա մասին ավելորդ ա, մեր մեջ խոսելն էլ ամոթ ա»:

Հոդվածիդ մեջ գրում էիք՝ լուսանկարիս մասին, սակայն տիկին Քովսարի ևվիրած գրքիս մեջ լուսանկարս չկա: Չհասկացա:

Շատ ուրախ կլինեի, եթե մի-երկու տող գրեիք ինձ, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքս ադրբեջանական հա-

սարակության վրա. ադրբեջանական մամուլում եղա՞վ խոսք դրա մասին...

Ներողություն, որ վատ եմ գրել. գրիչը շատ փչացած էր, ձեռագիրս էլ, ծերության հետևանքով՝ փչացել է: Երևի հագիվ պիտի կարողանաք կարդալ:

Սիրով և բարևներով՝
Ավետիք Իսահակյան

313. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՉԵՅԱՆԻՆ

1951, նոյեմբերի 27, Երևան

Հարգելի ընկ. Խաչերես.

Շատ ներողություն եմ խնդրում, որ այսքան ուշ եմ գրում Ձեզ:

Երևան հասնելուց հետո թե՛ շատ զբաղված էի, և թե՛ հիվանդացա գրիպով, որ կարճ չտևեց: Իհարկե՝ Ձեր դիմումը, խնդիրը, հայտնեցի մեր Գրական Ինստիտուտին և էտնոգրաֆիկ սեկտորին. երկար պրպտումներից հետո հայտնեցին, որ հանգուցյալ Եր. Լալայանի գրքերի մեջ չեն գտնում Խաչ. Փորքշեյանի ձեռագրերը: Մի քանի օր առաջ ինձ ասացին, որ Եր. Լալայանը սովորություն ուներ հեղինակների անունը վերացնել, չքացնել և իր անունով պահել: Ասացին ինձ, որ թող Խ. Փորքշեյանը, եթե հիշում է՝ գրե իր նյութերի անունները, որ այդ անուններով որոնումներ կատարեն Լալայանի թղթերի, տետրակների մեջ, որ շատ մեծ քանակությամբ կա,— իբրև Լալայանի գործերը:

Հարգելի ընկեր, ես Ձեզ խոստացա հանգուցյալ Խաչ. Սամվելյանի «Հայոց իրավունքի» այն հատորը ուղարկել, որ մոտս կար. սակայն նայեցի տեսա, որ մոտս եղածը «Հին Հայաստանի կուլտուրան» երրորդ հատորն է:

Ես մեր բուկինիստներին հանձնարարեցի, որ ձեռք բերեն ինձ համար իրավունքի մասին գրածը: Խոստացան: Հայաստանում գիրք չի մնում, իսկույն վաճառվում է, մանավանդ, երբ տիրաժը շատ քիչ է, 1000—2000 օրինակ, և էժան գներով:

Գրեցեք ինձ, ի՞նչ գրքեր կուզեք, թերևս կարողանամ գտնել. նորերը շուտ կարելի է, իսկ հները՝ դժվար է:

Գրեցեք Ձեր մասին, ի՞նչ եք անում, ինչպե՞ս է Ձեր առողջությունը, Ձեր աչքի վիճակը:

Ես առայժմ լավ եմ, կարողանում եմ երկար աշխատել:

Չեռրեքչյանը գնաց Մոսկվա, քթի վերքը բուժելու: Քթի վերքը մեր տեղիս բժիշկները բարի պերսպեկտիվա (հեռանկար) չէին տեսնում:

Բարևներ կնոջիցս:
Ձերմ բարևներով՝
Ձերդ Ավետ. Իսահակյան

Հասցես՝
Ереван, ул. Плеханова № 32
А. Исаакян.

314. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆԻՆ

1952, հունվարի 14, Երևան

Սիրելի ընկեր Գուրգեն Հովհան.

Շատ տարիներ առաջ (կարծեմ, 1902 թվին) Յուրի Վեսելովսկուն ուղղած իմ նամակի մեջ գրել եմ, որ «Իմ ներքին աշխարհի վրա ուժեղ տպավորություն է գործել Գոգոլը իր անմահ «Մեռած հոգիներ» վեպով»:

Հիմա, սիրելի Գուրգեն, Դուք դիմել եք ինձ, որ եթե հնարավոր է մի քիչ ավելի մանրամասն անդրադառնայի իմ այս տողերի մտքին: Ես Գոգոլին կարդացել եմ առաջին անգամ Գևորգյան ճեմարանում աշակերտ եղած ժամանակս, 1891—92 թթ.: Շատ սիրել եմ, հիացած եմ եղել նրա հանճարով, կարդացել եմ «Ռևիզորը», «Տարաս Բուլբան» և «Մեռած հոգիները»: Եվ նույնիսկ, սիրուցս դրդված, հանդգնել եմ այն տարիքիս և ռուսերեն թույլ գիտնալով հանդերձ, թարգմանել նրա «Կյանք» պատմվածքը:

Յու. Վեսելովսկուն նամակ գրած ժամանակը ես արդեն լույս էի ընծայել «Երգեր ու վերքեր» ոտանավորների գրքույկս, և տակավին գրեթե ոչ մի արձակ բան չէի գրել,— և

իմ ոտանավորների մեջ երբեք չկա Գոգոլի ազդեցությունը, նրա սատիրան, նրա դառն վիշտը: Ուրեմն ի՞նչ հիմք ունի իմ արտահայտությունը՝ Գոգոլի ազդեցության մասին: Ինչո՞վ բացատրել... Ես սիրել եմ Գոգոլի տիպերի, կերպարների պատկերասրահը, ռուսական կյանքի նկարագրությունները, պեյզաժները, լիրիկական զեղումները, նրա ցավագին ծիծաղը, ծաղրը արցունքի միջով:

Միայն հետագայում ինձ համար պարզվեց, որ այդ հին մեծ տպավորությունը (Գոգոլից կրած) ապրելով իմ ենթագիտակցության մեջ, իր արտահայտությունը գտել է, տարիներ հետո, «Ուստա Կարո» վեպիս մեջ, նրա որոշ անձնավորությունների մեջ և թերևս այլ մոմենտների մեջ:

Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել:

Միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

315. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ

1952, հունվարի 14, Երևան

Սիրելի Գուրգեն, Ձեր երկրորդ հարցին նախառևոլյուցիոն հայ գրականության Գոգոլից կրած ազդեցության մասին, այսքանը կարող եմ ասել: Րաֆֆիի, Սունդուկյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի մեջ ես չեմ նկատել Գոգոլի ազդեցությունը: Տաղանդավոր գրող Դ. Դեմիրճյանի վրա միայն նկատել եմ Գոգոլի բարերար ազդեցությունը: Դեմիրճյանին ես ճանաչում եմ նրա պատանեկության օրերից. նա այդ ժամանակ (ինչպես և միշտ) Գոգոլին շատ և շատ էր սիրում. «Մեռած հոգիներից» էջեր գիտեր անգիր, առօրյա խոսքի մեջ, ամեն պատեհ առիթով մեջբերումներ էր անում Գոգոլի զանազան գործերից, աֆորիզմներ, սուր, կծու, սատիրիկ ասումներ, մտքեր: Հայկական իրականության մեջ որոնում էր Գոգոլի կերպարների նմանողություններ:

Բնավ սխալ գործած չեմ լինի, որ ասեմ, թե՝ դեպի Գոգոլն ունեցած Դեմիրճյանի երկար տարիների սերը իր արտացոլումը գտել է իր գրվածքների մեջ: Գոգոլի ոգին, Գո-

գոլի հումորը, սատիրան ակնբախ են Դեմիրճյանի բազմաթիվ ֆելիետոնների մեջ, պատմվածքների մեջ, «Քաջ Նազարի» և մյուս կոմեդիաների մեջ:

Վերջապես Դեմիրճյանի հմուտ ճանաչողությունը Գոգոլի գրականության հետ՝ նրան մղեց թարգմանելու հանճարեղ «Մեռած հոգիների» առաջին հատորը շատ գեղեցիկ, շատ հաջող կատարումով:

Ջերմ բարևներով՝
Ավետիք Իսահակյան

316. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1952, մայիսի 22, Երևան

Սիրելի Սաքո Սուքիասյան.

Ստացել եմ քո գեղեցիկ նամակը և շատ ուրախացել եմ, և հուզվել: Շատ հուզիչ էր ախալքալաքցիների սրտագին վերաբերմունքը իմ՝ Ախալքալաք գալու մտադրությանս հանդեպ... Բնավ մտքովս չի անցել, թե այդպիսի ջերմ, սիրալիր զգացումներ կարող էի արթնացնել իմ հայրենակիցներիս մեջ. ցավում եմ, որ հակառակ իմ կամքին, բախտ չունեցա լինել այդ հայրենասեր, հայ, ավանդապահ հոգիների ազնիվ շրջանում: Հիմ, քաղցր ձայներ եմ լսում այդ բոլորի միջից:

Ջերմ շնորհակալություններս հայտնիր ինձ հյուրընկալող ախալքալաքցիներին. նրանց հյուրասիրության կազմած պլանը ես իրականացած եմ համարում և շատ զգացված եմ:

Նամակիդ ուշ պատասխանելուս պատճառները, թեև չնչին, բայց շատ էին և խանգարիչ. իրար վրա ժողովներ ունեի, և վերջերս էլ հիվանդ էի, մրսել էի:

Երևի, այս ամիսներս Երևան կգաս և շատ բաներ կլսես՝ քեզ հետաքրքրող:

Բարևներդ հաղորդեցի Ուրարտուհի և Աշոտին, սիրով վերադարձնում են բարևներդ: Քեֆները տեղն է, ոչինչ...

Գրում ես Կիսլովոդսկում ապրող քո հայ բարեկամների մասին, Կուպեցյանների մասին, որոնց ես էլ իրավունք

ունեմ իմ բարեկամները համարելու, քանի որ գրականությունը (հայ, իհարկե) սիրողներ են, միայն զարմանում եմ և դժգոհ եմ, որ Կիսլովոդսկում չեն մոտեցել ինձ, չեն ծանոթացել: Եթե հաջորդ տարի, կամ հետո, գնամ Կիսլովոդսկ, կայցելեմ նրանց. հաղորդիր նրանց իմ բարեկամական բարևները:

Սիրելի Սաքո, երևի դժվարությամբ պիտի կարդաս գիրս. հիվանդությունից և ջերմից հետո ձեռքս դողում է, իհարկե ծերությունն էլ իր կարգին:

Եթե այս ձմեռ հայկական տասնօրյակը կատարվի Մոսկվայում, և եթե ողջ լինեմ, կհանդիպենք Մոսկվայում: Առայժմ վերջացնելով նամակս, ցանկանում եմ քեզ առողջություն և բախտավորություն:

Բարևներով՝
Ավետ. Խահակյան

317. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՁԵՑԱՆԻՆ

1952, մայիսի 26, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Հազար ներողություն պիտի խնդրեմ նամակս այսպես ուշ գրելուս համար: Ձեր բոլոր նամակները ստացել եմ. ես շատ զբաղված եմ մանր-մունր գործերով, որոնք թե՛ շատ ժամանակ են խլում ինձնից, թե՛ շատ եռանդ, և մանավանդ փչացնում են տրամադրությունս: Ոչ մի գործ չեմ կարողանում իր ժամանակին վերջացնել, միշտ խանգարվում է, միշտ հետաձգվում: Եվ տարին լրանում է՝ տեսնում եմ, որ շոշափելի, կամ մի մնայուն գործ չեմ տեսել: Եվ մեջեմեջ էլ միշտ հիվանդանում եմ, կամ գրիպ է, կամ աչքի ցավ, և այլն, և այլն:

Ձեր հարցերին պատասխանում եմ. վերջապես որոշվեցավ, որ դեկադան պիտի լինի հունիս ամսի վերջին, ուրեմն մի ամիս հետո: Ես վճռել եմ՝ չգնալ. հոգնած եմ, թույլ եմ, առողջությունս չի ներում՝ այսքան ճանապարհ գնալ ու

դառնալ, օրերով Մոսկվայում անհանգիստ, հուզված կյանք վարել: Իհարկե, ցավում եմ, որ չեմ գնալու:

Որոշել եմ նույնպես ամառը Հայաստանից դուրս չգնալ. զզվել եմ երկաթուղիներից, կայարաններից, ուզում եմ Հայաստանում անցկացնել և շատ տաք օրերը գնալ լեռները, հով տեղերը: Իսկ մերոնք կգնան՝ թերևս Կիսլովոդսկ կամ ուրիշ տեղ:

Պարզապես ծերացել եմ, հավաս, եռանդ մարել են. հանգստություն եմ ուզում, լավ զրուցընկերներ, և կարդալ, մտածել, կարդալ, խորհել:

Ես վաղուց գիտեի, որ Շամիլի կինը հայ է եղել, և ամենասիրելի կինն է եղել, իհարկե, լավ չէ, բայց շատ ավելի վատ է, որ եղբայրը լրտես է եղել. (այդ փաստը ես չգիտեի). ես չեմ սիրում դավաճան, անհավատարիմ մարդկանց: Մարդ պետք է հավատարիմ լինի իրեն, իր խոսքին, իր բարեկամին, ընկերին, ազգին, հայրենիքին: Արաբական առածն ասում է. «Մի՛ դավաճանիր այն մարդուն, որը քեզ հավատում է, եթե դու նույնիսկ պաշտոնով լրտես լինես»:

Ոխտադրուժը ամենամեծ մեղքն էր արիական կրոնի և ժողովուրդների մեջ:

Շամիլի կնոջ եղբորը չեմ սիրում, և պատիվ չեն բերում հայ ժողովրդին ո՛չ քույրը և ո՛չ եղբայրը — Ալիխան:

Այս մեծ պրոբլեմ է, որի մասին նամակով, կիսատ-պռատ չի կարելի խոսել. դրանով չի սպառվում խնդիրը: Իմ կարծիքով մորալի մեջ, էտիկայի նկատմամբ, ռելատիվիտե չպետք է լինի, այլ բացարձակություն, աբսոլյուտ: Ձսիտի խաբել, ուրեմն՝ չսիտի խաբել. չսիտի սպանել, ուրեմն՝ չսիտի սպանել: Այստեղ խիստ, ռիգորիստ: Իհարկե, մենք բոլորս էլ աբսոլյուտ մորալ չունենք, համեմատական է մեր չափը, հարաբերական: Մարդը անկատարյալ արարած է, ծնված կենդանական չար, վատ բնազդներով, և մարդը չի կարող բացարձակ բարոյական լինել. թերևս բացառիկ հերոսները: Հետևապես, մարդկային մորալը կիսատ է, անլրիվ. մենք ռելատիվիստներ ենք:

Դուք դեռ ծեր չեք, կարող եք Երևան գալ. եկեք տեսեք, թե Երևանը ի՛նչ է դառել, ի՛նչ գեղեցիկ քաղաք է դառել: Երևի, պատերազմ չլինի, (հույս ունենանք, որ չի լինի), և

Հայաստանի շինարարությունը անարգելք կզարգանա:

Ով որ գալիս է Ռուսաստանից և Եվրոպայից, Ամերիկայից, ոչ հայեր, այլ օտար ազգեր, հիանում են Երևանի շինարարությամբ և ճարտարապետությամբ:

Սիրելի Խաչերես, ասենք, ես ուշացա պատասխանելու նամակիդ, բայց դուք էլ լռեցիք. ինձ միշտ հաճելի է Ձեր նամակները ստանալ և կարդալ, այնպես որ Դուք մի՛ կապվեք իմ պատասխանի հետ:

Շմոռանամ ասել, որ «Սովետական գրականություն» ամսագրի 3, 4 համարները վաղուց են լույս տեսել. արդյոք ստանո՞ւմ եք, հասե՞լ է Ձեզ, եթե չեք ստանում, հայտնեցեք, խնդրե՛մ, որ պահանջեմ ուղարկել:

Շնորհակալ եմ Թիթրովայի, Ժենյա, հասցեի համար, բայց դեռ չեմ գրել, և չգիտեմ ի՞նչ գրեմ, հաճելի կլինի՞ իմ նամակը նրան: Աստված հետը:

Ջերմ բարևներ Ձեր տիկնոջը. ջերմ բարևներ կնոջս և իմ կողմից Ձեզ:

Ա.վ. Իսահակյան

318. ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Սիրելի Համազասպ.

Շատ դժգոհ եմ և վրդովված, որ իմ կամքի հակառակ չկարողացա ներկա լինել քո դիսերտացիայի պաշտպանությանը. ինձ ասել էին, որ երեկոյան է կատարվելու պաշտպանությունը, այնինչ ցերեկով է եղել, և զարմանում եմ, որ ինձ չէին հայտնել: Մի խոսքով շատ ցավում եմ, որովհետև գտնում եմ, որ շատ հետաքրքիր կլիներ:

Հետո, շարունակ հեռախոսում եմ տունդ՝ շնորհավորելու համար, ո՛չ մի կենդանություն չի հայտ բերվում տնիցդ:

Ուրեմն, բոլոր սրտով, բոլոր անկեղծությամբ, սիրով հայտնում եմ քեզ իմ խնդրակցությունը. երկար-երկար տարիներ առողջ, աշխատունակ և նվաճես գիտական բարձունքներ:

Զարմանում եմ, ո՛չ թե քո էրուդիցիայի համար, որ իրոք շատ զարմանալի է, այլ առավել և առավել զարմանում եմ քո անսպառ եռանդի վրա, քո հավեսի վրա, կեցցե՛ս, ջահել, մշտագարուն, ավիշով ու ավյունով լի մարդ ես. այդպես էլ մնաս, որպես ոգևորիչ հեռանկար նորահաս սերունդի համար:

Կինս, որդիս և բոլորս սրտանց շնորհավորում ենք դոկտորության աստիճան ստանալդ:

Ջերմագին բարևներով տիկնոջդ, Վիկտորին և քեզ:

Քո՝ Ավետիք Իսահակյան

519. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՋԵՅԱՆԻՆ

1952, օգոստոսի 5, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Շատ ներողություն, որ այսպես ուշ եմ պատասխանում նամակիդ: Երկու ամիս է, որ ընկերներով թափառում ենք Հայաստանում. ուր ասես, որ չեղանք: Հենց այսօր էլ գնում եմ Լենինական: Այս տարի Հայաստանից դուրս չելա ամառը (այսինքն ամառանոց), որ Հայաստանում շրջեմ. մինչև սեպտեմբեր պիտի վերջացնեմ շրջելս:

Հույս ունեմ, որ ամսագիրը արդեն ստանում ես նոր հասցեովդ. եթե ոչ՝ գրիր իսկույն:

Մի երկու վայր էլ Մարտիրոս Սարյանի հետ գնացի (Վայոց Ձոր՝ Դարալագյազ). Մարտիրոսը էտյուդներ արավ: Նա հիմա Լոռի է. մի խումբ նկարիչների հետ գնաց:

Հայաստանում այս տարի այնքան տաք չէ. միայն վերջերս ուժեղ շոգեր են լինում: Մինչև այսօր այգիների բերքը լավ է. վնասված չէ, իսկ հացը նույնպես լավ է և առատ:

Կաթողիկոսը, կարծեմ, հիմա Կիսլովոդսկ պիտի լինի. վաղուց է մոտը չեմ եղել: Լսեցիք, երևի, որ Կիլիկիայի կաթողիկոսը՝ Գարեգինը վախճանվեց:

Քեզ հետաքրքրող դեկադան հետաձգվեց. ասում են, որ ձմեռը՝ դեկտեմբեր-հունվար ամիսներում պիտի կայանա:

Հիմա ինձ գրիր, թե դու ի՞նչ ես անում, ինչպե՞ս են գործերդ ու առողջությունդ:

Առայժմ այսքան. աշնանը կվերսկսենք մեր մանրամասն նամակագրությունը:

Հակոբ Խաչատրյանը հունիսին այստեղ էր մի 15 օրով:

Ջերմ բարևներ քեզ և տիկնոջդ:

Ավետ. Իսահակյան

320. ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ

1952, սեպտեմբերի 12, Երևան

Հարգելի ընկեր Գ. Մեհրաբյան.

Մի քանի ամիս առաջ էր՝ մեկը հեռախոսով հայտնեց ինձ, թե Ծալկայից իրեն գրել են, որ Ավ. Իսահակյանին իմաց տալ, որ Ուստա Կարոն մահացել է վերջերս Ծալկայում, կամ նրա գյուղերից մեկում:

Առաջին նվագ ինձ թվաց թե կատակ են անում ինձ հետ: Ես կարճ պատասխանեցի, թե Ուստա Կարոն գոյություն չունի, դա հավաքական տիպ է, իսկ նրա փոքրիկ նախատիպը թուրքական արշավանքների ժամանակ՝ Կարսում, Կաղզվանում աննշմարելի է: Ես խոսափողը վար դրի, և չուզեցի ավելին իմանալ, որովհետև զբաղված էի գրելով, և շատ ջղայնացա, որ խանգարեցին ինձ հեռախոսի մոտ կանչելով: Հետո միայն անդրադարձա, որ մեծ սխալ գործեցի չհետաքրքրվելով այդ լուրի ծագման հանգամանքներով:

Արդեն ուշ էր, և լուրը հայտնողը աննշմարելի մնաց ինձ, անունը չիմացա: Հարցուփորձ անելով, բախտ ունեցա գտնել Ձեր հասցեն և հիմա Ձեր ներողամտությունը խնդրելով Ձեզ անհանգստացնելուս համար, գրում եմ այս տողերս: Սիրելի հայրենակից, բարի եղեք օգնել ինձ՝ գտնելու այդ լուրի աղբյուրը:

Թերևս Ձեր ծանոթների, բարեկամների միջոցով Ծալկայում և նրա գյուղերում գտնեք, թե ո՛վ է այդ մասին Երևան գրել: Եվ արդյոք հայտնի՞ չէ Ձեզ այդ լուրը, այդ լե-

չենդան, գուցե կարողանաք իմանալ՝ ո՞վ էր իրեն «Ուստա Կարո» հայտարարել, ի՞նչ արհեստի մարդ էր, որտեղի՞ց էր, քանի՞ տարեկան էր, ընտանիք ունե՞ր: Զարմանում եմ, որ վեպը դեռ չտպված, նրա գլխավոր հերոսը, որ մտացածին է, տիպականացած,— արդեն մարմին է առել, ապրել, գործել մինչև օրս և մեռել օտար Ծալկայում: Ինչո՞ւ անպայման Ծալկայում: Ինչո՞ւ անպայման Ծալկայում: Շատ հետաքրքրքիր է:

Հույս ունեմ, որ կհետաքրքրվեք և բարի կլինեք ինձ պատասխանելու...

Ղուշչիում ունեմ ծանոթներ՝ Մուշեղ Գինոսյանը և դըպրոցի դիրեկտոր Հրանուշ Սիմոնյանը:

Սիրով և հարգանքով՝
Ավ. Իսահակյան

321. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1952, դեկտեմբերի 30, Երևան

Մեծահարգ
Տիար Արշակ Չոպանյան,
Բեյրութ.

Սիրելի և անձնվեր բարեկամ, մեծ ուրախությամբ լսեցի Ձեր վաթսունհինգամյա գործունեության կատարված հոբելյանը, որ տեղի ունեցավ Բեյրութի մեջ, նախագահությամբ Տեղապահի Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խադ Արք. Աջապահյանի:

Մաղթում եմ երկար և երջանիկ տարիներ, որ կատարեք Ձեր կիսատ ձգած գործերը, և նմանապես մաղթում եմ, որ Ձեր իսկ ներկայությամբ վայելեք Ձեր անխոնջ աշխատանքի յոթանասունհինգամյա հոբելյանը:

Ձեր անկեղծ բարեկամը՝
Ավետիք Իսահակյան

322. ՊԱՎԼՈ ՏԻՇԻՆԱՅԻՆ

1954, հուլիսի 13

Թանկագին Պավլո Գրիգորևիչ.

Ամենաջերմ ողջույններ Ձեզ Երևանից:

Շատ եմ խնդրում ներել, որ մի հարցով անհանգստացնում եմ Ձեզ: Նամակս Ձեզ հանձնողը, առաջին քուրդ նկարիչ Բագո Կալոևը, որ ավարտել է Երևանի գեղարվեստական ուսումնարանը, ջերմ ցանկություն ունի շարունակելու իր ուսումը, որպես նկարիչ, Կիևի գեղարվեստական ինստիտուտում:

Նա հետաքրքրական կենսագրություն ունի — նախկին հովիվ է, որբ: Շատ եմ խնդրում օգնել նրան իր ցանկությունն իրականացնելու, այսինքն՝ ինստիտուտ ընդունվելու:

Նախապես շնորհակալություն եմ հայտնում:

Ջերմագին հարգանքներով,

Ձեր՝ **Ավ. Իսահակյան**

323. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՉԱՆԻՆ

1954, սեպտեմբեր Երևան

Սիրելի Հարություն.

Այս քանի օր է, մեր տունը լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի քո թարգմանած «Եղելություններ և խոհեր» անկրկնելի գործը:

Գերցենը դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի շունչ կա թարգմանությանդ մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու:

Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը:

Ցանկանում եմ ավելի հաջողություն և եռանդ:

Ջերմագին բարևներով՝

Ավետ. Իսահակյան

324. ՀԱՄԱՋԱՍՊ ԴԱԲԱՂՅԱՆԻՆ

1954, հոկտեմբերի 20, Երևան

Հարգելի ընկեր Հ. Դաբաղյան.

Հիվանդությանս պատճառով, ակամայից, ուշացրի Ձեր նամակին պատասխանելս:

Վեսպերին ետ դարձնելու դիմումը Գրողների կողմից ուր որ պետք է, կատարված է, մոտ մի շաբաթ առաջ: Դեռ մինչև այսօր պատասխան չկա. երևի, շուտ չեն պատասխանի. հարցուփորձեր, քննություններ կկատարվին, միայն ցանկանում ենք, որ հաջող վերջ ունենա, ամեն ինչ բարվոք կվերջանա: Վեսպերին իմ կողմից (և տիկնոջը) բարև ուղարկեցեք:

Ավետ. Իսահակյան

325. ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

1955, ապրիլի 12, Երևան

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ստացա ձեր սիրալիր նամակը, որով հայտնում եք ինձ ձեր որոշումը՝ տոնելու իմ ութսունամյակը, որ, ի դեպ, լրանում է 1955 թ. հոկտեմբերի 30-ին:

Շատ և շատ շնորհակալ եմ Ձեր իմ հանդեպ տածած զգացումների և ուշադրության համար:

Սրտիս բոլոր ջերմությամբ ողջունում եմ ձեզ, սիրելի հեռավոր ընկերներ, մաղթում եմ ձեզ հաջողություն, առողջություն, երկար, բախտավոր և բեղմնավոր կյանք:

Թանկագին ընկերներ, կփափագեի հայրենի հողից հեռու, օտար երկնքի տակ ապրող իմ հայրենակիցներին բարձր պահել հայության անունը, խորապես սիրել հայ հրաշալի լեզուն՝ մեր հարատևության անպարտելի զենքը, սիրել մեր դարավոր գրականությունը, ուր բաբախում է հայ ժողովրդի սիրտը, ուր ամփոփված են մեր իդեալները, երա-

զանքները, հայ պանծալի գրականությունը, որ անշեջ կրակի պես ջերմացնում է մեզ, վառում է մեզ պայքարի խանդով, լուսավորում է մեր ուղին:

Կփափագեի հայրենիքը կրեիք ամենուրեք ձեր հոգիներում, սիրեիք Սովետական Հայաստանը և անձնուրաց պաշտպան հանդիսանայիք նրան, որ ձե՛րն է և ձե՛րը պիտի լինի:

Ապրի՛ք, զորանա՛ք:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

326. ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

1955, հունիսի 1, Երևան

Սիրելի բարեկամ Աղ. Վարդանյան.

Շատ մեծ շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած թանկագին նվերը. արժեքավոր գրքեր են, մանավանդ դրժբախտ հայկական հարցի վերաբերյալ գիրքը: Նորից շնորհակալություն եմ հայտնում Ձեր ուշադրության և նեղության համար: Այդ գրքերը պատվավոր տեղ կգրավեն իմ գրադարանիս մեջ:

Մնացած գրքերը մարդկանց միջոցով կկարգադրվի: Ձեր քրոջը, իհարկե հիշում ենք, բայց, դժբախտաբար մոտիկ չենք եղել: Խնդրեմ բարևեցեք մեր կողմից նրան:

Դուք գանգատվում եք, թե հայերեն սխալներով եք գրում. երկար տարիներ հեռու լինելով Հայաստանից, դարձյալ լավ եք գրում, և ուրախանալի է, որ չեք իսպառ մոռացել. Երևանում նույնիսկ հայ մարդիկ կան, որ Ձեր կիսու չափ էլ չգիտեն:

Բարևներ նորից Բաքվի իմ բարեկամներին:

Ջերմագին բարևներով,

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

327. ԳԵ ԲԱՌ-ՑՅՈՒԱՆԻՆ

<1955, հոկտեմբեր>

Սիրելի ընկեր Գե Բառ-Ցյուան.

Մեծ շնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը և ամսագիրը: Անչափ ուրախ եմ, որ իմ պոեզիան գրավել է Ձեր ուշադրությունը, և այժմ էլ Դուք նվիրված աշխատանք եք տանում իմ բանաստեղծությունները ներկայացնելու չինական լեզվով:

Մանուկ օրերից ես հեքիաթների, ճանապարհորդների գործերի և բազմաթիվ նկարների մեջ տեսել եմ չինացուն և նրա մեծ արվեստը, սիրել եմ ու հիացել դրանցով: Ժողովուրդները պիտի սիրեն իրար, իրար սիրելու համար պիտի ճանաչեն միմյանց, դրան հասնելու ամենաիմաստուն ճանապարհը իրար գրականության և արվեստների ճանաչումն է:

Մենք՝ գրական գործիչներս, վառված միևնույն գաղափարներով, իդեալով ու նպատակով, աշխատում ենք համաշխարհային խաղաղության և եղբայրության համար, համամարդկային երջանկության համար: Բոլոր սրտով ցանկանում եմ Ձեր գործին հաջողություն:

Կարոտով սեղմում եմ իմ հեռավոր, բայց մոտիկ բարեկամիս ձեռքը:

Ավ. Իսահակյան

328. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԳՐԱՄՅԱՆԻՆ

<1955, դեկտեմբերի վերջ>

Մեծարգո և շատ սիրելի
Հովհաննես Խրիստաֆորիչ.

Ամենից առաջ շնորհավորում եմ Ձեր նոր տարին, ցանկանալով Ձեզ երկար և առողջ կյանք, նորանոր հաջողություններ ի փառս մեր մեծ հայրենիքի:

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը այն գեղեցիկ հեռագրի համար, որով պատվեցիք ինձ իմ նոբելյանի առթիվ:

Շատ ներողություն եմ խնդրում Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Այս գրությունս բերողը X.X., իմ բարեկամն է, խնդրում եմ բարի լինեք նրան ընդունելու և լսելու նրան, և ինչքան հնարավոր է, ընդառաջեք նրան:

Հարգանքներով և սրտագին բարևներով՝

Ա.վ. Իսահակյան

329. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

1956, հունվարի 12, Երևան

Շատ սիրելի հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ.

Հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը Ձեզ՝ բոլորիդ, որ օտար ափերում հիշում եք ինձ և տոնում եք իմ 80-ամյա հոբելյանը:

Սիրտս լցվում է անհուն բերկրանքով, որ, հայրենիքից հեռու, այսպես գուրգուրում եք հայ խոսքը և պանծացնում մայրենի գրականությունը: Սա արդեն հայկական Ոգու հաղթանակն է, ամուր գրավականը հայ ժողովուրդի հարատևության և ապրելու կամքի:

Սիրեցեք հայ գրականությունը, նա Ձեր հոգևոր հայրենիքն է, որ միշտ և ամենուրեք կլինի Ձեզ հետ: Հայ լեզուն և տոհմիկ գրականությունը դարերի երկար ընթացքում պահել-պաշտպանել են հայերիս. այժմ էլ մենք պիտի պահպանենք նրանց, որ նրանք էլ այսուհետև, կատարեն իրենց փրկարար դերը:

Հայ լեզուն և հայ լեզվով գրականությունը այն անխորտակելի ոսկե կամուրջն է, որ կա Սովետ. Մայր Հայաստանի և Սփյուռքի միջև, բոլոր հայության միջև:

Սփյուռքը մեր ևվիրական արևմտյան Հայաստանն է, նրա ավանդապահ, աշխատասեր, ստեղծագործ ժողովուրդը, որ դարերով հերոսական և անձնուրաց պայքարել է զարհուրելի և խավարակուռ բռնապետության դեմ, այլասերման դեմ՝ հանուն հայրենիքի, մայրենի լեզվի, կուլտուրայի և ազգային իդեալների:

Սրտիս բոլոր ջերմությամբ մաղթում եմ, որ Ափյուռքի հայությունը միշտ վառ պահե հայրենիքի սերը, հավատարիմ մնա մեր բազմադարյան սրբազան ավանդներին, մեր հոյակապ լեզվին, արիաբար բարձր պահե հայ անունը, աշխատե և չվհատի, անհողդողդ հավատա իր լույս-ապագային և ավելի սերտ կապվի մայր հայրենիքին, որ մեր բոլորինս է, մեր երազների և իրականացումների ևվիրական հայրենիքը:

Սիրելի հայրենակիցներ, մաղթում եմ Ձեզ բոլորիդ առողջ և բախտավոր կյանք, տոկունություն և հաղթանակներ:

Խորին շնորհակալություններս հոբելյանական հանձնաժողով <խ>՝ հարգելի հայրենակիցներիս Ե. Ազնակյանին, Ջապել Արամին, Արմեն Միրջանյանին, Օքսեն Սարյանին, Արշավիր Շամլյանին. և շատ սիրելի ընկեր Սիտալին:

Ձեր՝ **Ավետիք Իսահակյան**

330. ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ ԴԻՐԵԿՏՈՐԻՆ

1957, հունիսի 26, Երևան

Ներողություն եմ խնդրում Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Շատ ցանկալի կլիներ, որ Հայպետհրատը լույս ընծայեր հանգուցյալ Լևոն Աթաբեկյանի բանաստեղծություններից մի գրքույկ, մոռացության չտալու համար Լ. Աթաբեկյանի հիշատակը և մանավանդ ընդառաջելու բազմաթիվ ընթերցողների փափագին, որոնք ուզում են ունենալ նրա բանաստեղծությունները:

Լ. Աթաբեկյանի «Բանաստեղծությունները» առաջին անգամ հրատարակվել են Բաքու, 1918 թվին:

Կառաջարկեի այդ գիրքը վերահրատարակել, անշուշտ, խմբագրական որոշ աշխատանքի ենթարկելով: Նա գրել է մի շարք լիրիկական և խոհական քաղցրակներ և ապրված գեղեցիկ ոտանավորներ, օրինակի համար՝

1) Հե՛յ, սարսարոտ իմ վաթան.
2) Բանտի վերա.
3) Քունը բանտում.
4) Զանգի երգը.
5) Քաղաքի միջով.
6) Բուխարիկում և ուրիշները:

Շատ գեղեցիկ են՝
Մոր նամակը,
Լաց մի՛ լինիլ,
Չորքանն ու կարաբաշը:

ոտանավորները, որոնք լավ կոլորիտ ունեն և հայտնի են լայն հասարակությանը, շատերը անգիր գիտեն դրանք:

Հարգանքներով՝ **Ավետիք Իսահակյան**

331. ՀԱԿՈԲ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ

1957

Սիրելի Հակոբ.

Վերջերս ծանր հիվանդություն անցրի և դեռ չեմ կազդուրված: Ձեռագիրս կմատնի առողջությանս վիճակը:

Անցյալ տարի, ամառը իմ ձեռքս հասավ ֆրանսերեն թարգմանված իմ «Աբու-Լալա Մահարի»-ն, որտեղից իմացա, որ նա ֆրանսիական Ակադեմիայեն պատվեր է: Ուրիշ ոչինչ չգիտեմ. այսինքն՝ ե՞րբ է արժանացել այդ պսակադրմանը, ո՞վ կամ ի՞նչ ընկերություն է առաջադրել, ի՞նչ դոկումենտներ կան, այսինքն՝ վճիռ, հայտարարություն:

Լսեցի, որ դու մասնակցած ես թարգմանությանը, և վերջապես, ո՞վ է թարգմանիչս՝ Միհասյանը:

Գրիր մանրամասն՝ ո՞վ տպեց, ինչպե՞ս եղավ, որ ես նրանց նամակ գրեմ, շնորհակալություն հայտնեմ:

Իմացած եղիր, որ դրանով ինձ շատ մեծ պարտքի տակ գցած կլինես:

Ջերմագին բարևներով՝
Ավետիք Իսահակյան

332. «ԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1957, հունիսի 26, Երևան

Կուլտուրական պետությունների մայրաքաղաքները և խոշոր քաղաքները ունեն իրենց սեփական, հատուկ պարբերական թերթերը, Օրգանները, որոնք նվիրված են լինում քաղաքի առօրյային, որոնք հայելիացնում են հասարակության կյանքը, չարն ու բարին:

Մեր մայրաքաղաքն էլ այսօրվանից հանդես է գալիս իր հատուկ օրաթերթով՝ «Երևան» անունով:

«Երևանը» պիտի ներկայացնի մեր քաղաքը հուզող հարցերը, խիզախորեն պիտի պայքարե թերությունների դեմ, հսկե քաղաքի կարգ-կանոնին, կուլտուրական բարքեր ներմուծե փողոցներում, և ամեն ձևով օժանդակե քաղաքի բարեկարգմանը:

Շնորհավորում եմ և ցանկանում հաջողություն մեր «Երևանին» և եռանդ ու տոկունություն նրա աշխատողներին անձնվիրաբար գործելու համար:

Ավ. Իսահակյան

333. ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ

Հեռագիր

1957, ... 27-ին

Ձեր գիրքն ստացել եմ հիվանդությանս օրերին, միայն այժմ ծանոթացա բովանդակությանը: Հայտնում եմ երախտագիտությունս և հիացմունքս:

Ավետիք Իսահակյան

Անվանացանկ-բառարան

Ավետիք Իսահակյանը համակներ գրել է մոտ 70 տարի՝ 1889—1957 թթ.: Այդ համակների ամբողջական հրատարակությունը կկազմի մի քանի հատոր: Մինչև օրս հրատարակվել է Վարպետի համակագրության միայն մի փոքր մասը: Այս հրատարակությունը այդ պատկառելի ժառանգությունից կատարված ընտրանի է: Նամակների ընտրությունը կատարել էր անվանի գրականագետ Արամ Ինճիկյանը, սակայն նա չհասցրեց ավարտել գրքի վրա կատարվող աշխատանքները. դրանք ավարտին է հասցրել գրականագետի դուստրը՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակից Արմիկ Ինճիկյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չափազանց բարդ գործ է յուրաքանչյուր համակի ծանոթագրումը, նպատակահարմար գտնվեց անձնանունները ծանոթագրել անվանացանկ-բառարանում: Ի դեպ, մի շարք մարդկանց մասին, որոնք հիշատակված են համակներում, հավաստի տեղեկություններ իմանալ չհաջողվեց:

Նամակների մի մասը տպագրվում է որոշ կրճատումներով և ուղղագրական աննշան փոփոխություններով:

ԱԲԱՍ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԲԱՍ (1900—1976) Ակ. Իսահակյանի Գևորգ եղբոր որդին, հրատարակել է իր եղբոր՝ Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ» բանաստեղծությունների և արձակ երկերի ժողովածուն (1974): Նշանակալի ավանդ ունի Ակ. Իսահակյանի ժառանգության ուսումնասիրության գործում: 159, 160, 161, 199, 236, 245, 246, 248, 249, 279, 281, 289, 309—311

ԱԲԴԱԼՅԱՆ ՍԵԴՐԱԿ կրթական, հասարակական գործիչ 305

ԱԲԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1865—1936) նշանավոր դերասան, ՀՍՍՀ ժող. արտիստ 235

ԱԲԵԼՅԱՆ ՊՈՂՈՍ (1877—1937) մասնագիտությամբ իրավաբան, գրական գործիչ 196, 286, 294, 301, 327

ԱԲԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ 221

ԱԲԵՂՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (1878—1955) բանասեր 169

ԱԲՈՎՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1809—1848) 118, 197, 296

ԱԲՈՎՅԱՆ ՍՈՖԻԿ 235

ԱԲՈՎՅԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ Խ. Աբովյանի թոռնուհին, մանկավարժ, դերասանուհի, թարգմանչուհի 90—93, 95—110, 111—119, 125, 143—145, 158, 170, 234, 235, 266

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ (ծն. 1903) պատմաբան, պատմական գիտ. դոկտոր պրոֆեսոր 370

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ հայազգի ֆրանսագիր դրամատուրգ Արթուր Ադամովի (1908—1970) հայրը 220, 224

ԱԴՈՆՑ ՆԻԿՈՂԱՅՈՍ (1871—1942) նշանավոր պատմաբան, հայագետ 138, 139, 141, 142, 166, 170, 218, 219, 220, 223, 224, 225, 238, 243, 247, 248, 249, 250, 252, 253, 257, 259, 261, 271, 273

ԱԶԱՏ Ալեքսան Իսահակյանի որդեգրած տղան 154, 263

ԱԶՆԱԿՅԱՆ Ե. 392

ԱԹԱԲԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ (1875—1918) մասնագիտությամբ բժիշկ, հասարակական գործիչ, բանաստեղծ 28, 30, 392—393

ԱԹԱՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (ծն. 1907) սովետահայ արձակագիր 291

ԱԹԵՆԱՍ (դից.) 9

ԱԹԻԼԼԱ (5-րդ դար) հոների թագավոր 195, 357

ԱԼԱԶԱՆ ՎԱՀՐԱՄ (1903—1966) սովետահայ գրող, գրական-հասարակական գործիչ 228, 290—293, 301, 325

ԱԼԵՄՇԱՀ ԳՈՒՐԳԵՆ (1907—1947) սփյուռքահայ կոմպոզիտոր 227

ԱԼԵՔՍԱՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ Ակ. Իսահակյանի ավագ եղբայրը (1850—1926) 12, 154, 159, 161, 229, 233, 238

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ծն. 1906) փիլիսոփայական գիտ. դոկտոր պրոֆեսոր, 1947-ին՝ Հայաստանի պետական հրատարակչության դիրեկտոր 371

ԱԼԻՇԱՆ ՂԵՎՈՆԴ (1820—1901) 170, 333

ԱԼԻՍ ընկարիչ Ռաֆայել Շիշմանյանի կինը 328

ԱԽՎԵՐԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1818—1861) բանասեր, Սայաթ-Նովայի տաղերի առաջին հրատարակիչը 286

ԱՀԱՐՈՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ (1866—1948) գրող 40, 90, 122, 124, 141, 157, 175, 259, 311
ԱՂԱՅԱՆ ՂԱԶԱՐՈՍ (1840—1911) 29, 42, 56, 90, 183, 340
ԱՂԱՅԱՆ (ԱԳԱՅԱՆ) Հ. մշակութային գործիչ, «Աբու-Լալա Մահարի» պոեմի իսպաներեն թարգմանիչը 273
ԱՂԱՅԱՆ ՄՈՒՇԵՂ (1883—1966) երաժշտագետ, Ղ. Աղայանի որդին։ Սովորել է Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում, հաստատվելով Երևանում՝ զբաղվել է մանկավարժությամբ, ապա և պաշտոնավարելով ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում, նվիրվել է կոմիտասի ժառանգության գիտական ուսումնասիրությանը, հեղինակել և մշակել է մի շարք երգեր 210
ԱՂԱՋԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1863—1940) նշանավոր նկարիչ 241, 301, 319
ԱՂԱՍԵՐ ՀԱԿՈԲ, ԱՂԱՍԵՐՅԱՆ ՀԱԿՈԲ (1890—1957) բանաստեղծ, հրապարակախոս 205
ԱՂԱՍՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ (1898—1974) բանաստեղծուհի 354
ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ (1876—1953) ականավոր հայագետ, լեզվաբան 319
ԱՃԵՄ, ԱՃԵՄՅԱՆ, ԱՃԵՄՅԱՆՆԵՐ 177, 235, 240
ԱՄԱՏՅԱՆ Գ. 228
ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՀԱՄՈ (ծն. 1906) գրականագետ, լրագրող, խմբագրել է Բաքվի «Կոմունիստ» հայկական թերթը 351
ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՀՈՎ. 121
ԱՆԱՀԻՏ Հայկ Իսահակյանի կինը 360
ԱՆԱՀԻՏ 280
ԱՆԱՆԻԿՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (1875—1924) պատմաբան, բանասեր 195
ԱՆԴԵՐՍԵՆ ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ (1805—1875) դանիացի գրող, մանկագիր 132
ԱՆՆԻԿ, ՄԱՏԱԿՅԱՆ ԱՆՆԱ (1886—1962) Շուշանիկ Մատակյանի քույրը 48—59, 63—66, 67, 68, 69, 70
ԱՆՋԵԼԻԿԱ 360
ԱՆՏՈՆ 148, 176
ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ 235, 240
ԱՆՈՒՇ Ա. Ահարոնյանի կինը 141
ԱՆՈՒՇ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ (1898—1927) Հովհ. Թումանյանի դուստրը 177, 233, 246, 248
ԱՇԽԵՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՇԽԵՆ (1891—1968) Հովհ. Թումանյանի դուստրը 89, 177, 233, 341
ԱՇՈ, ՇԱՀԽԱԹՈՒՆԻ ԱՐՇԱՎԻՐ (1885—1947) դերասան 91
ԱՇՈՏ 175, 182
ԱՇՈՏ, ԱԹԱՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ (1870—1941) մասնագիտությամբ գյուղատնտես, խմբագիր «Գյուղատնտես» երկշաբաթաթերթի (1909—1917), երգիծաբան, հանդես է եկել Սալմա ծածկանունով 169
ԱՋԱՊԱՀՅԱՆ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ 386
ԱՊԼԱ, ԱԼՄԱՍՏ ՂԼՏՃՅԱՆ (1833—1918) Ավ. Իսահակյանի մայրը 131, 132, 135, 136, 137, 140, 141

ԱՍԼԱՆՅԱՆ բժիշկ, Վիկտորյա Աբովյանի ամուսինը 234
ԱՍՏՂԻԿ (դից.) 8
ԱՍՏՂԻԿ հայրական ազգանունը՝ Շիրինյան 235
ԱՍՏՂԻԿ Շուշիկ Մատակյանի քույրը 50
ԱՍՏՂԻԿ 280
ԱՍՏՂԻԿ 366
ԱՍՐԻԲԵԿՅԱՆ 220
ԱՎԱԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1882—1959) ամերիկահայ գրականագետ, քննադատ, լրագրող, «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի խմբագիրներից: Գրականագիտական հոդվածներն ամփոփված են «Գրական դեմքեր» գրքում, որտեղ տրված է նաև Իսահակյանի դիմանկարը: 187—190, 192, 193, 194—195, 213—217, 231—232
ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ (1885—1937) հայագետ, տնտեսագետ, հեղինակ մի շարք պատմա-բանասիրական աշխատությունների, որոնք ամփոփված են «Հայագիտական հետազոտություններ» ստվար հատորում (1969): Կ. Մարքսի «Կապիտալի» հայերեն թարգմանիչը 295, 306
ԱՎԵՏԻՔ ՎԱՐԴԱՊԵՏ 235
ԱՎՈ հյուրանոցատեր Թիֆլիսում 50
ԱՏՐՈՒՆԻ 330
ԱՐԱ (պատմա-ավանդ.) 18
ԱՐԱԶԻ ՄՈՎՍԵՍ (Հարությունյան) (1878—1965) արձակագիր 327
ԱՐԱՄ (պատմա-ավանդ.) 18
ԱՐԱՄ ԶԱՊԵԼ 392
ԱՐԱՄ, ՂԱՆԱԼԱՆՅԱՆ ԱՐԱՄ (ծն. 1907) բանասեր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս 338
ԱՐԱՄ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ (1872—1940) Ավ. Իսահակյանի Սիմոն հորեղբոր որդին, մանկավարժ, կատարել է թարգմանություններ 7—11, 349, 350, 359
ԱՐԱՄՍԱԶԴ (դից.) 8, 18
ԱՐԱՄՅԱՆ 140
ԱՐԱՍԽԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ (1857—1917) մասնագիտությամբ տնտեսագետ, հրապարակախոս, «Մուրճ» ամսագրի հիմնադիրն ու խմբագիրը (1889—1900): «Մուրճի» շուրջն են համախմբված եղել ժամանակի ականավոր գրական դեմքերը և գրողները (Պ. Պռոշյան, Ղ. Աղայան, Շիրվանզադե, Հովհ. Թումանյան, Հ. Հակոբյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան և ուր.) 19—20, 22, 23, 28
ԱՐԱՔՍԻ 271
ԱՐԵԳ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԵԳ (1901—1937) Հովհ. Թումանյանի որդին 177
ԱՐԻՍՏԱԿԵՍ, ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ Շուշիկ Մատակյանի Աստղիկ քրոջ ամուսինը 65, 66—69, 70, 73
ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ (1845—1892) հրապարակախոս, «Մշակ» լրագրի հիմնադիր-խմբագիր (1872—1892) 296
ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՀԱՆ (1860—1947) բժիշկ, ավարտել է Փարիզի հա-

մաշարանի բժշկական ֆակուլտետը, երկար տարիներ աշխատել է Թիֆլիսում։ 1921-ից հաստատվել է Երևանում։ «Առողջապահիկ» թերթի հիմնադիր-խմբագիրը (1903—1906)։ Հեղինակ մի շարք բժշկագիտական գրքերի, հրել է նաև գեղարվեստական արձակ երկեր («Մատնիչ», «Պատրանք») Վահունի գրական ծածկանունով 358

ԱՐՂՈՒԹՅԱՆ 220, 224

ԱՐՄԵՆԱԿ 256

ԱՐՄԵՆԱԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ Դսեղի կոլտնտեսության նախագահը 366, 367

ԱՐՄԵՆՈՒՀԻ, ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ բանաստեղծուհի, գրել է Մենուհի գրական ծածկանունով 158, 170

ԱՐՄԻԿ, ԻՍԱՀԱԿՅԱՆ-ՂԱՏՃՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ (ծն. 1902) Ավ. Իսահակյանի եղբորորդի՝ Աբասի կինը, բժշկուհի 309—311, 395

ԱՐՇԱԿ 362

ԱՐՍԵՆ, ԱՄԻՐՅԱՆ ԱՐՍԵՆ (1881—1918) հեղափոխական գործիչ, լրագրող, հրապարակախոս, Բաքվի 26 կոմիսարներից 30

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ, ՀԱՅՐ ԱՐՍԵՆ, ՂԱՏՃՅԱՆ ԱՐՍԵՆ (1868—1943) Ավ. Իսահակյանի մորեղբոր որդին, սովորել է Գևորգյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում։ Գերմանիայում ստացել է իրավաբանական բարձրագույն կրթություն։ Զբաղվել է ուսուցչությամբ, հետագայում ընդունել կուսակրոնություն։ Եղել է եպիսկոպոս։ Գրել է «Միջազգային իրավունք» (1904), «Հայոց հին իրավունքը» (1913), «Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի» (1912)։ Հրատարակել է նյութեր հայոց իրավունքի պատմության 132, 134, 145, 235, 279, 280

ԱՐՏԱՇԵՍ, ՏԻՐԱՑՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ 311

ԱՐՏԵՄԻՍ 280

ԱՐՏԻԿ, ԱՐՏԱՎԱԶԴ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ (1894—1918) Հովհ. Թումանյանի որդին 89

ԱՐՈՒՍ Իսահակյանի տնտեսուհին Իրինդում 362, 365

ԱՐՓԻԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐՓԻԿ (ծն. 1899) Հովհ. Թումանյանի դուստրը 177, 233, 341

ԱՓԻՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1870—1944) մանկավարժ, մշակութային գործիչ, հրատարակել է «Շիրակ» սեղանի և պատի օրացույցները, 1907—1914 թթ. խմբագրել է «Ախուրյան» հասարակական-գրական լրագիրը 59

ԱՔԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԼՈՒԱ Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր կինը 131, 132, 135, 149, 159, 160, 161, 233, 236, 248

Ա.ՖՐԻԿՅԱՆ ԳԵՂԱՄ (ծն. 1904) դերասան, ՀՍՍՀ վաստակավոր արտիստ, Իսահակյանի Փեփրոնե քրոջ որդին 326—327, 329

ԲԱԲԱՅԱՆ ԶԱՊԵԼ ալեքսանդրապոլցի, սովորել է Թիֆլիսի իգական գիմնազիայում, զբաղվել է թարգմանությամբ՝ ռուսերենից, Իսահակյանի պատանեկության շրջանի ծանոթուհիներից 16,18

ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ թարգմանիչ, սովորել է Գերմանիայում, թարգմա-

Ընդ է Հ. Իբսենի «Հասարակության ընցուկները» դրաման (1904) 18, 139
ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ (1874—1969) երաժշտագետ, մասնագիտական կրթությունը ստացել է Թիֆլիսի կոնսերվատորիայում, ապա Դրեզդենում: Համաշխարհային պատերազմի նախօրյակին հաստատվել է Փարիզում, մշակել է Կոմիտասի մի շարք ժողովրդական երգերը: Նշանակալի դեր է կատարել Կոմիտասի ստեղծագործությունների հրատարակության գործում 139, 146—147
ԲԱԲԱՅԱՆՆԵՐ 233, 235
ԲԱԳՐԱՏ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲԱԳՐԱՏ (1869—1942) Ավ. Իսահակյանի Սիմոն հորեղբոր ավագ որդին 8, 350, 359, 360
ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ գրող, մանկավարժ 86
ԲԱԼԱՋՅԱՆ, ՊԱԼԱՋՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ (1876—1934) 113, 219, 220
BALTRUSAITZ GURGUIS ճարտարապետ, եղել է Հայաստանում 272
ԲԱԽ ՄԱՐԻԱ ՖՈՆ (Märia von Barch) Կ. Համսունի «Պան» վիպակի գերմաներեն թարգմանիչը, որից Իսահակյանը կատարել է իր թարգմանությունը (տպագրվել է 1913-ին) 120
ԲԱԿՈՒՆԻՑ ԱԿՍԵԼ (1899—1937) 228, 303
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1897) զորավար, Սովետական Միության մարշալ, Սովետական Միության կրկնակի հերոս 390—391
ԲԱՅԼՄՈՆՏ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԴՄԻՏՐԻԵՎԻՉ (1867—1942) ռուս բանաստեղծ, հայ բանաստեղծներից կատարած թարգմանություններով մասնակցել է Վ. Բրյուսովի խմբագրած «Հայաստանի պոեզիան» անթոլոգիային (1916) 318
ԲԱՅՐՈՆ ՋՈՐՋ ՆՈԵԼ ԳՈՐԴՈՆ (1788—1824) անգլիացի մեծ բանաստեղծ 150, 332
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ա.ՃԽԵՆ 335, 341
ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՍԱՇԱ (ԱԼԵՔՍԱՆԴՐ) (ծն. 1889) լրագրող, թարգմանիչ 335
ԲԵԼԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲԵԼԱ (ծն. 1918) Ավ. Իսահակյանի հարսը՝ Վիգեն Իսահակյանի կինը 347, 357, 358, 368
ԲԵԿԶԱԴՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (ՍԱՇԱ) (1881—1937) կուսակցական-պետական գործիչ 196
ԲԻՍՄԱՐԿ-ՇԵՆՈՒՀԱՈՒԶԵՆ ՕՏՏՈ-ԼԵՈՊՈԼԴ-ԷԴՈՒԱՐԴ (1815—1898) պրուսական իմպերիայի ռեակցիոն գործիչ 27, 69
ԲՅՈՐՆՍՈՆ ԲՅՈՐՆՍՏԵՐՆԵ ՄԱՐՏԻՆԻՈՒՍ (1832—1910) նորվեգացի գրող 18
ԲՅՈՐՆՍ ՌՈԲԵՐՏ (1759—1796) շոտլանդացի մեծ բանաստեղծ 215
ԲՅՈՒՐԳԵՐ ԳՈՏՖՐԻԴ ԱՎԳՈՒՍՏ (1747—1794) գերմանացի բանաստեղծ 132
ԲՈԴԼԵՐ ՇԱՐԼ (1821—1867) ֆրանսիացի բանաստեղծ 215
ԲՈՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ (1915—1971) սովետահայ բանաստեղծ և դրամատուրգ 339

ԲՐԱՅԱՆ ՋԵՅՄՍ (1838—1922) Անգլիայի պառլամենտի լորդերի պալատի անդամ համաշխարհային պատերազմի շրջանում 185

ԲՐՅՈՒՍՈՎ ՎԱԼԵՐԻ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ (1873—1924) ռուս նշանավոր բանաստեղծ, նրա խմբագրությամբ և ընդարձակ ներածական հոդվածով 1916 թ. Մոսկվայում լույս տեսավ «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան 318

ԲՈՒԴԱՂՅԱՆ ԱՆՆԱ (1880—1964) դերասանուհի, թատերական գործիչ, 20-ական թվականներից հաստատվել է Փարիզում 220

ԲՈՒԴԱՂՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ 221, 224

ԲՈՒԴԱՂՅԱՆ ՀՈՎԱԿ փաստաբան 99, 137, 140

ԲՈՒԴԴՀԱ (սանսկրիտ՝ պայծառացած) ըստ սովանդության, հնդիկ իշխանազն Սակիա Մունի, ապրել է 563—483 թթ. մ. թ. ա., բուդդհայական կրոնի և փիլիսոփայության հիմնադիրը 90, 122

ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ (1874—1943) ճարտարապետ, ավարտել է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիան, մասնակցել է Մառի հնագիտական պեղումներին Անիում, 1924-ից հաստատվել է Երևանում, դասախոսել է Երևանի համալսարանում: Աշխատություններից կարևորներն են՝ «Անիի պալատական եկեղեցու չափագրությունները» (1915), «Գառնիի հեթանոսական տաճարը» (1933), «Ակնարկ հայ ճարտարապետության» 306

ԲՈՒՍԼԱԵՎ ՖԵՑՈԴՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ (1818—1897) ռուս բանասեր և արվեստաբան 19

ԲՈՒՍԵ ԿԱՐԼ (1872—1918) գերմանացի բանաստեղծ 31

ԳԱԲԻԿՅԱՆ ԽՈՐԵՆ ուսուցիչ նախ Կ. Պոլսում, ապա Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում 190, 233, 235, 240

ԳԱԲՈ, ՔՈՉԱՐՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ Սոֆյա Իսահակյանի եղբայրը 218, 220, 224, 226, 238, 243, 252, 253, 257, 259, 262, 263, 268, 271, 275

ԳԱԲՐԻԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ, ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, աբբահայր 232, 235, 247, 275

ԳԱՐՈ ԱՐՄԵՆ (Փաստրմաջյան Գարեգին) 1873—1923) հասարակական գործիչ, 148

ԳԱՐՈՒՇ Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբոր զավակը 136, 152, 153, 154, 161

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ (1867—1952) կաթողիկոս տաճն Կիլիկիո, հայագետ, բանասեր 384

ԳԵ ԲԱՈՑՅՈՒԱՆ չին բանաստեղծ, եղել է չին-սովետական բարեկամության ընկերության գլխավոր քարտուղարի տեղակալ: 1955-ին այցելել է Սովետական Հայաստան և ծանոթացել Ավ. Իսահակյանի հետ: Վարպետի ստեղծագործություններից թարգմանել է չինարեն 390

ԳԵՂԱՄ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբոր տղան 154, 161, 249

ԳԵՂԱՄ, ԿՈՍՏԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ Ավ. Իսահակյանի մորաքրոջ (Սաո-

դպիտի) որդին։ Կ. Կոստանյանի նյութերը, Շուշիկ Մատակյանի քեռին 65, 139, 219, 220, 221, 226, 243, 245, 247, 249, 252, 257, 259, 261, 262, 264, 265, 267, 268, 270, 271, 273, 275

ԳԵՐՑԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ (1812—1870) ռուս նշանավոր գրող, հրապարակախոս, հեղափոխական գործիչ 387

ԳԻՆՈՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ ուսուցիչ Ղուշչիում 386

ԳԻՆՈՎԱԲԵ, ԳԻՆՈ Ավ. Իսահակյանի քույրը, ամուսնական ազգանունը՝ Զարիֆյան 131, 135—136, 140, 143, 145, 149, 152—154, 159, 160, 161, 169

ԳՅՈԹԵ ՀՈՎՀԱՆ-ՎՈԼՖԳԱՆԳ (1749—1832) 215, 317, 318, 332

ԳՅՈՒԼԻԶԱՐ Իսահակյանների տան տնտեսուհին 347, 357

ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ (1809—1852) 228, 378, 379, 380

ԳՈԼԻՑԻՆ ՆԻԿՈԼԱՅ ԴԻՄԻՏՐԻԵՎԻՉ (1850—1925) 1903-ին լինելով Կովկասի փոխարքա, վարել է հայասպան քաղաքականություն։ Նրա փոխարքայության ժամանակ փակվեցին հայկական դպրոցները և գրավվեցին եկեղեցական կալվածքները՝ առաջ բերելով բողոքի ցույցեր Կովկասի մի շարք հայաբնակ վայրերում 164

ԳՈՅՈՒՄՃՅԱՆ ՄԻՍԱԿ, ԱՌԱՆՁԱՐ (1877—1913) գրող, հայտնի է նրա «Վշտի ծիծաղը» պատմվածքների ժողովածուն 205

ԳՈՅՈՒՄՃՅԱՆ ՎԱՀԵ Առաձձարի որդին 205

ԳՈՐԿԻ ՄԱՔՍԻՄ (1868—1936) սովետական մեծ գրող, 1938-ին Ավ. Իսահակյանը գրել է «Մաքսիմ Գորկու ծննդյան 70-ամյակին» ոտանավոր 255

ԳՈՐՈԴԵՑԿԻ ՍԵՐԳԵՅ (1884—1967) ռուս բանաստեղծ, թարգմանիչ, 1916-ին լինելով Արևմտյան Հայաստանում (Վան), գրել է «Հայաստանի հրեշտակ» բանաստեղծությունների շարքը, ակնարկներ ու ոտանավորներ, ինչպես նաև «Շամիրամի պարտեզները» վեպը, կատարել է թարգմանություններ հայ բանաստեղծներից։ Հատկապես մոտ է եղել Հովհ. Թումանյանի հետ, որի մասին գրել է արժեքավոր հուշեր։ Ս. Գորոդեցկու գրածները Հայաստանի և հայ գրականության մասին ամփոփված են «Об Армении и армянской культуре» ժողովածուի մեջ (1974) 395

ԳՈՐՈՅԱՆ ԱՐՇԱԿ ԽԱՆ 307

ԳՐԱՇԻ Ա.ՇՈՏ (1910—1973) սովետահայ բանաստեղծ 341—342, 348, 350—351, 354, 367—368

ԳՐԵՆՖԻԼԴ ՋԵՄՍ գերմանացի պարսկագետ, հայ-գերմանական ընկերության փոխնախագահ, հեղինակ է «Պարսկաստանի առևտրական իրավունքը» և «Պարսկաստանի պետական կարգը» աշխատությունների։ Գրենֆիլդի մայրը ազգությամբ եղել է հայ 175, 177, 182

ԳՐԻԳՈՐ, ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1868—1938) հասարակական, կուսակցական, մշակութային գործիչ, 1925-ին՝ ՀՕԿ-ի քարտուղար, 1932—1935-ին՝ ՀՕԿ-ի վարչության նախագահ 169, 221, 258, 299, 303

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՍԱՄՎԵԼ (ծն. 1907) գրող, ապրում և ստեղծագործում է Բաքվում 351

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱՆ (ծն. 1909) սովետահայ բանաստեղծ, արձակագիր 345
ԳՐԻՄՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ, ՅԱԿՈԲ (1785—1863) և ՎԻԼՀԵԼՄ (1786—1859) գերմանացի բանագետ-բանասերներ, հավաքել և հրատարակել են գերմանական ժողովրդական հեքիաթները, որոնք համաշխարհային ճանաչում են գտել 19
ԳՈՒԼՈՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ 328
ԳՈՒՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ 107
ԳԵՎՈՐԳ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1855—1911) Ավ. Իսահակյանի եղբայրը 159
ԳԵՎՈՐԳ, ԱՖՐԻԿՅԱՆ ԴԵՎՈՐԳ Ավ. Իսահակյանի քրոջ որդին, բանաստեղծ 135, 161, 233
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ (1877—1962) մշակութային գործիչ, բանաստեր, թարգմանիչ 236, 303

ԴԱԲԱՂՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ 383
ԴԱՆԹԵ ԱԼԻԳԻԵՐԻ (1265—1321) 32
ԴԱՆԻԵԼ-ԲԵԿ 265
ԴԱՆՈՒՇ, ԾԱՀՎԵՐԴՅԱՆ ԴԱՆԻԵԼ (1882—1938) պետական-կուսակցական գործիչ, Անդրկովկասի ֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչը Կ. Պոլսում և Փարիզում 232, 252, 265, 280
ԴԱՇՏԵՆՑ ԽԱՉԻԿ (Տոնոյան) (1910—1974) բանաստեղծ, արձակագիր, Շեքսպիրի մի շարք դրամաների թարգմանիչը 362, 364
ԴԱՎԹՅԱՆ ՄԱՐԳԱՐ (1909—1964) գրող, ապրել և ստեղծագործել է Բաքվում 376—377
ԴԱՎԹՅԱՆ ՄԽԻԹԱՐ (1902—1978) մշակութային գործիչ 363
ԴԱՎԻԹ, ԱՆԱՆՈՒՆ ԴԱՎԻԹ (Տեր-Դանիելյան) (1879—1943) հրապարակախոս, պատմաբան, հասարակական գործիչ 210, 211, 212, 227, 229
ԴԱՎԻԹ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 18, 40, 334
ԴԱՐԲԻՆՅԱՆ 203
ԴԱՐԲՆԻ ԱՐՇԱՎԻՐ (ծն. 1910) սովետահայ առակագիր 376
ԴԵՄԻՐՃՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ (1877—1956) 29, 37, 38, 39, 42, 44, 45, 46, 56, 90, 130, 134, 170, 173—174, 183, 199, 207, 209, 210, 228, 235, 286, 294, 301, 303, 307, 312, 317, 320, 321, 327, 341, 362, 379, 380
ԴԵՐԲԵԴԱՐՅԱՆՆԵՐ 243
ԴԻԼ ՇԱՐԼ ֆրանսիացի ճնագետ, ճարտարապետ 271
ԴՇԽՈՒՆ, ԴՈՇՈ (Դշխուհի) Ավ. Իսահակյանի Փեփրոնե քրոջ դուստրը 246, 326, 329
ԴՐԱՄԲՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ծն. 1891) արվեստաբան 256
ԴՐԱՄԲՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1878—1952) լրագրող, հետագայում՝ հոգևորական. Չարամիտ «քննադատի» տխուր հռչակ ձեռք բերեց Հովհ. Թումանյանի դեմ գրած հոդվածներով, որոնց սուր, ոչնչացնող հերքումով

հանդես եկավ բանաստեղծը («Ոչ գրական ոչնչություններ քննադատ», «Հայոց դրամբլանիզմը» և այլն) 122

ԴՐԱՍՏԱՄԱՏ, ՍԻՄՈՆՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ (1895—1935) կուսակցական և պետական գործիչ, գրականագետ: 1928-ին Փարիզում խմբագրել է «Երևան» թերթը 265, 268, 273, 303

ԵՂԻԱ. Վ.ԱՐԴԱՊԵՏ 235

ԵՍԱՅԱՆ Ա.ՐՍԵՆ (1898—1938) ՀՕԿ-ի գործիչներից 271, 276, 329

ԵՍԱՅԱՆ ԶԱՊԵԼ (1878—1943) արձակագիր 221, 222, 246, 301—303, 304, 322

ԵՍԵՆԻՆ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ (1895—1925) ռուս նշանավոր բանաստեղծ 318

ԵՎԳԻՆԵ, ԹԻԹՐՈՎԱ ԺԵՆՅԱ, ԹԻԹՐՅԱՆ ԵՎԳԻՆԵ Ավ. Իսահակյանի Նոր Նախիջևանի ծանոթուհիներից, որի հետ նամակագրություն է ունեցել 46—48

ԵՎԳԵՆՈՎ 340

ԵՐԵՄՅԱՆ Ա.ՐԱՄ (1898—1972) բանասեր 370

ԵՐԵՄՅԱՆ ՍԻՄՈՆ (1871—1938) Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, գրականագետ, խմբագիր «Բազմավեպ» ամսագրի: Աշխատություններից առավել հայտնի է «Ազգային դեմքեր—գրագետ հայեր» տասը հատորով (1913—1934) 128, 130, 131, 133, 138, 146, 179

ԵՐՎԱՆԴ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ Ավ. Իսահակյանի Սիմոն հորեղբոր որդին 8

ԵՐՎԱՆԴ, ԼԱԼԱՅԱՆ ԵՐՎԱՆԴ (1864—1931) ազգագրագետ, «Ազգագրական հանդեսի» խմբագիրը (1896—1916) 142, 236, 377

ԶԱՄԱՆՈՎ ադրբեջանցի գրող 342

ԶԱՆԴ ԺՈՐԺ (1804—1876) ֆրանսուհի գրող 227

ԶԱՎԵՆ ՏԻԳՐԱՆ (Չուգասըզյան) (1874—1938) մշակութային գործիչ, խմբագիր մի շարք պարբերակների (նաև ֆրանսերեն), լրագրող, ՀՕԿ-ի վարչության անդամ, հետագայում ՀՕԿ-ի փոխնախագահ (Ֆրանսիայում): 1933-ից հաստատվել է Երևանում 221, 247, 259, 261, 263, 265, 268, 275, 288, 302, 312, 323

ԶԱՎԵՆ (փոքրիկ) 259, 261, 263, 265, 268, 275

ԶԱՐԴԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1874—1905) գրող, հրապարակախոս 124

ԶԱՐՅԱՆ ԿՈՍՏԱՆ (1885—1970) ապրել և ստեղծագործել է արտասահմանում (Կ. Պոլիս, Փարիզ, Վենետիկ), հիմնական երկը «Նավը լեռան վրա» վեպն է, 1961-ից հաստատվել է Երևանում 178—180, 196, 198, 199, 224, 225

ԶԱՐՅԱՆ ՆԱՒՐԻ (1900—1969) 335, 341, 345, 361, 362, 363

ԶԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ծն. 1909) թատերագետ, գրականագետ 356

ԶԱՐԻԿ, ԶԱՐՈՒՀԻ 236, 285

ԶԱՔԱՐԵ (բիբլ). 103

ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ 174—177, 181—182, 186—187, 286, 307—309, 312—314
ՋՈՐԱՍՏՐ, ՋՐԱԴԱՇՑ ՋԱՐԱՏՈՒՍՏՐԱ (մոտ 10—7 դդ. մ. թ. ա.) մարգարե, հիմ իրանական կրոնի վերաձորոգիչ, զրադաշտականության հիմնադիրը 90
ՋՈՒԿԳԵՆ ԱԼԲԵՐՏ 120
ՋՈՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1860—1967) 196, 199 207, 283, 339

ԷԼԻԶԵ, ԼԻԶԱ 219, 220, 221, 224, 225, 226, 238, 247
ԷՅԶԵՆՇՏԵՅՆ ՍԵՐԳԵՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ (1898—1948) սովետական ականավոր կինոռեժիսոր 310, 324
ԷՓՐԻԿՅԱՆ ՄԻՍԱԿ (1892—1938) հրատարակիչ-խմբագիր, լինելով «Հերմես» հրատարակչության տեսուչ-կարգադրիչը, տպագրել է Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը (1929) և «Համբերաձքի չիբուխը» պատմվածքների ժողովածուն (1929) 276, 278, 304
ԷՓՐԻԿՅԱՆՆԵՐ 286

ԹԱԳՈՒՀԻ Ավ. Իսահակյանի հորեղբորդոյի բագրատի կինը 360
ԹԱԳՈՒՀԻ Շուշիկ Մատակյանի մայրը 273
ԹԱԴԵՈՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ 219
ԹԱԼԵՍ (մոտ 625—547 մ. թ. ա.) հույն փիլիսոփա 321
ԹԱՀՄԱԶ, ԹԱՀՄԱԶՅԱՆ ՀՕԿ-ի քարտուղար Փարիզում 283, 288
ԹԱՂԻԱՆՈՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ (1864—1948) գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ, «Գործ» ամսագրի (1917) հրատարակիչը 184
ԹԱՄԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (1878—1936) հայ մեծ ճարտարապետ, Ավ. Իսահակյանը 1936-ին Փարիզում գրել է «Անզուգական Թամանյանի հիշատակին» հոդվածը 307
ԹԱՄԱՐ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ԹԱՄԱՐ (ծն. 1907) Հովհ. Թումանյանի դուստրը 177
ԹԱՄԱՐ Միսակ Էփրիկյանի կինը 238, 245, 249, 254, 276, 278, 285, 304
ԹԱՐԳՅՈՒԼ ԼՅՈՒՍԻ (1905—1955) սովետահայ արձակագիր 368
ԹԱՐՎԵՐԴԻԵՎԱ ՔՈՎՍԱՐ 376
ԹԵՈԴՈՒԿ (Թեոդորոս Լապչինճյան) (1873—1928) գրող, բանասեր, «Ամենուն տարեցույցը» տարեգրքի (1907—1929) հիմնադիրն ու հրատարակիչը 194, 256
ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1896—1942) երաժշտագետ 301, 327
ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ ՓԱՆՈՍ (1865—1941) ՀՍՍՀ ժող. նկարիչ 185, 267, 294, 301, 303, 327
ԹՈՓՈՎԵՆՑ ՎԱՀԱՆ (1893—1938) 196, 198, 199, 301, 303, 327
ԹՈՒՄԱՆ ԱՌԱՔՅԱԼ Քրիստոսի տասներկու առաքյալներից, որ, ըստ բիբլիական լեգենդի, չհավատաց Քրիստոսի հարությանը, մինչև որ չշոշափեց նրա վերքերը։ Օրինակ թերհավատության 220
ԹՈՐԱՄԱՆՅԱՆ ԹՈՐՈՍ (1864—1934) հայ մեծ ճարտարապետ, Ավ.

Իսահակյանը 1911 և 1934 թթ. գրել է «Ճարտարապետ Թորոս Թորամանյան» հոդվածները 295, 301, 306

ԹՈՐԳՈՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ (1858—1942) բժիշկ, բանաստեր 221, 263, 265, 268, 271, 275

ԹՈՓՉՅԱՆ ԵՂԻՇԵ (1872—1909) գրական-հասարակական գործիչ, «Լոյս» օրացույց-հանդեսի (տարեգիրք) խմբագիրը (1904—1905) 29

ԹՈՒՄԱԵՎ 148

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ վաճառական 220

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1869—1943) բանաստեղծ, մանկավարժ 39

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎԻԿ (1914—1941) Հովհ. Թումանյանի դուստր Աշխենի որդին 353

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1869—1923) 28—29, 37—41, 41—46, 52, 55, 56, 59, 63, 70, 88—90, 118, 119—120, 121—124, 130, 157, 165 168, 173—174, 180—181, 183—184, 191, 221, 233, 246, 317, 336, 337, 376

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄՈՒՇԵՂ (1889—1937) Հովհ. Թումանյանի ավագ որդին, մանկավարժ 89

ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐ Համբարձում Թումանյանի ընտանիքը 220, 226

ԹՈՒՐՉՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1900—1976) թարգմանիչ, պատմաբան 387

ԺՅՈՒՍՏ Ա.Բ.Բ. 240

ԻԲՍԵՆ ՀԵՆՐԻԿ (1828—1906) նորվեգացի մեծ դրամատուրգ 21

ԻՆՃԵՑՅԱՆ ԼԱԶԱՐ ԽԱՉԻԿԻ հայրենադարձ պատանի 370

ԻՆՃԻԿՅԱՆ ԱՐԱՄ (1910—1975) գրականագետ, տեքստաբան, բանասիրական գիտությունների դոկտոր: Երկար տարիներ զբաղվել է Իսահակյանի կյանքի և ժառանգության ուսումնասիրությամբ: Գրել է «Ավետիք Իսահակյան» (1940, 1955, 1977) աշխատությունները. կազմել է «Հիշատակարանը» (1977), «Ավետիք Իսահակյանը արվեստի մասին» (1977) ժողովածուները, հրատարակության է պատրաստել և ծանոթագրել բանաստեղծի երկերը, այդ թվում և այս վեցհատորյակի գերակշռող մասը 332—334, 344—346

ԻՍԱՀԱԿ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԻՍԱՀԱԿ Ա.ԲԱՆԻ (ծն. 1933) Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր թոռը, ապրում է Երևանում 310, 311

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԾԵՐՈՒՆ Ավ. Իսահակյանի Սիմոն որդեղբոր որդին 8

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ (Սրբուհի) գաղթական Միլանում 22

ԼԱԶԵՐԼՅՈՖ ՍԵԼՄԱ (1858—1940) շվեդացի գրող 122

ԼԵՈ (Առաքել Բաբախանյան) (1860—1932) պատմաբան, գրող, գրականագետ, 1933-ին Ավ. Իսահակյանը հուշեր է գրել Լեոյի մասին 40, 45, 88, 89, 90, 120

ԼԵՊՍԻՈՒՍ ՅՈՀԱՆՆԵՍ (1858—1926) գերմանացի միսիոներ, պատմաբան 186

ԼԵՌՆԵՑ, ՆԱԶԱՐԲԵԿ ԱՎԵՏԻՍ (1858—1939) հասարակական գործիչ, բանաստեղծ 39, 142, 151, 170

ԼԵՐՄՈՆՏՈՎ ՄԻԽԱՅԻԼ ՅՈՒՐԵՎԻՉ (1814—1841) ռուս մեծ բանաստեղծ 317, 318, 332

ԼԻԱՆՈԶՈՎ 177

ԼԻ ԹԱՅ-ՊՈ չին բանաստեղծ 390

ԼԻՊԱՐԻՏ, ՆԱԶԱՐՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ (1875—1947) հասարակական գործիչ, թարգմանիչ 148, 182, 186

ԼԻՍԻՑՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1865—1947) ազգագրագետ, թարգմանիչ, «Հառսեր» մանկական ամսագրի խմբագիր (1905—1916), ազգագրական աշխատություններից նշանավոր է «Զանգեզուրի ազգագրությունը», թարգմանություններից՝ Հ. Սեզնկինչի «Յո՛ երթաս» վեպը (1910) 14—19

ԼՅՈՒՍԻ, ԼՈՒՍԻԿ ՍԱՐՅԱՆ (1893—1974) Մարտիրոս Սարյանի կինը, Ղ. Աղայանի դուստրը 198, 207, 230, 335, 341

ԼՈՒԿԱՇԻՆ (Սարգիս Սրապիոնյան) (1884—1937) կուսակցական-պետական գործիչ, Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար (1921) 206

ԼՈՒՍՈ Ժրընևում իսաուակյանի ծանոթներից 32

ԼԵՎՈՆ, ԱԲՈՎՅԱՆ ԼԵՎՈՆ (1885—1951) Խաչատուր Աբովյանի թոռը, թարգմանիչ 98, 99, 100, 102, 103, 104, 117

ԼԵՎՈՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ (1872—1947) բանասեր, գրական-մշակութային գործիչ, խմբագիր «Գեղարվեստ» հանդեսի (1908—1921), հեղինակ բանասիրական մի շարք աշխատությունների, որոնցից նշանավոր են «Սայաթ-Նովայի կյանքը և գործը» (1931), «Հայ պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը» (1934), «Հայ աշուղները և նրանց արվեստը» (1944), «Հայ գրքի և տպագրության արվեստը» (1946)։ Ավ. Իսահակյանի ընկերն ու բարեկամը վաղ մանկությունից մինչև իր մահը 88, 110—111, 127—128, 129—131, 133, 137—139, 141—142, 149—151, 156—158, 163— 167, 169—171, 210, 236, 257, 258, 260, 266, 282, 283, 284, 293—295, 300—301, 304—307, 311—312, 315, 319—320, 327, 337, 339, 355—356

ԼԵՎՈՆՅԱՆ ԼԵՎՈՆ, Գարեգին Լևոնյանի եղբայրը 356

ԽԱՅԱՄ ՕՄԱՐ (12-րդ դար) պարսիկ մեծ բանաստեղծ 157

ԽԱՆԱԶԱՏ ՌՈՒԲԵՆ, ԽԱՆԱԶԱՏՅԱՆ (1862—1929) հասարակական, մշակութային գործիչ, թարգմանիչ 169

ԽԱՆԴՈՒԹ (պատմա-ավանդ.) 40

ԽԱՆԴԱՄՈՒՐ ՀՈՒՍԻԿ (ծն. 1915) սովետահայ գրող 337

ԽԱՆՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ (1877—1937) կուսակցական-պետական գործիչ 280

ԽԱՆՋՅԱՆ ԱՂԱՍԻ (1898—1936) կուսակցական-պետական գործիչ 292, 323

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ (1861—1937) կրթական գործիչ, պատ-

մաբան, գրել է «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն» գիրքը (1933) 320
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ (1884—1960) թարգմանիչ, հայ արձակագիրների մի շարք երկերը թարգմանել է ռուսերեն 285, 294, 334—335, 340—341, 360—362, 363—364, 374, 385,
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ (1886—1947) նկարիչ 220, 238, 243, 247
ԽԱՏԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1879—1935) իրավաբան, մշակութային գործիչ, թարգմանիչ, Հովհ. Թումանյանի դուստր Աշխենի ամուսինը 137
ԽԵՐՅԱՆ 212
ԽԶՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ (1867—1919) մանկավարժ 90
ԽԻԹԱՐՈՎԱ ՍՈՖՅԱ, ԽԻԹԱՐՅԱՆ (1908) թարգմանչուհի, բանաստեղծուհի, բանասեր 340, 361, 363, 364
ԽՆԿՈ-ՍՊԵՐ, ԽՆԿՈՅԱՆ ԱԹԱԲԵԿ (1870—1935) մանկավարժ, մանկագիր 327
ԽՈՋԱ 235, 240
ԽՈՒՆՈՒՆՑ ՀՈՎՍԵՓ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ 220

ԾԱՏՈՒՐՅԱՆ 220, 225
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (1864—1917) նշանավոր բանաստեղծ 15, 39, 44, 93—95, 151, 170, 317
ԾԵՐԵԹԵԼԻ ԱԿԱԿԻ (1840—1915) վրաց բանաստեղծ և դրամատուրգ 340, 343, 344
ԾԵՐԵՆՑ (Հովսեփ Շիշմանյան) (1822—1888) 296
ԾՈՎԻԿՅԱՆՆԵՐ 235

ԿԱԼԱՏՈԶՅԱՆ ԴԻՈՆԻՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 180
ԿԱԼՈՆՎ ԲԱԳՈ քուրդ նկարիչ 387
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ 221
ԿԱՆԱՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1881—1976) մանկավարժ, բանասեր 345
ԿԱՐՎԱՐԵՆՑ ԳԵՈՐԳ (1892—1946) բանաստեղծ, թատերական գործիչ, հրապարակախոս 193—194
ԿԱՏՅՈՒՇ 49
ԿԱՐԱ-ԲԵԿԻՐ թուրք զինվորական 195
ԿԱՐԱ-ՔԵՇԻՇՅԱՆ ՄԻՇԱ Հավանորեն նույն Ղարաբեկյան-Կարաբեկյան Միշան է Փարիզում (ազգանունը շփոթված), որից Վիգեն Իսահակյանը թոշակ էր ստանալու (տես 1928, օգ. 2 և 1928, սեպտ. 13) 258, 259, 261
ԿԱՐԻՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (1886) գրականագետ, քննադատ, կուսակցական-պետական գործիչ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս 312
ԿԱՐԻՔՅԱՆ ԵՍԱՅԻ, ՀՕԿ-ի Փարիզի ճյուղի գործիչներից 258
ԿԱՐԼԵՅԼ ԹՈՄԱՍ (1795—1881) անգլիացի պատմաբան և փիլիսոփա 21
ԿԱՐՇԻԿՅԱՆ ԽԱՉԻԿ 172

ԿԱՐՈ 363
ԿԱՐՈ, ՂԱՖԱԴԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1907—1976) ճնագետ, պատմական գիտությունների դոկտոր 344
ԿՈԼՅԱ, ՆԻԿ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբորորդին 131, 137, 155, 160, 161, 238, 249, 267, 289—290, 309
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 356
ԿՈՋՈՅԱՆ ՀԱԿՈԲ (1883—1959) հայ ճշտանավոր նկարիչ 286, 301, 319, 327, 353
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1853—1920) բանաստեղծ, հայագետ, մանկավարժ 69, 83
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1861—1948) բանաստեղծ 15, 37, 38, 48, 59, 264
ԿՈՏԻԿ Վիկտորյա Աբովյանի որդին 91, 102, 105, 109, 110, 143
ԿՈՆՉԱԼՈՎՍԿԻ ՊՅՈՏՐ ՊԵՏՐՈՎԻՉ (1876—1956) ռուս գեղանկարիչ, Մ. Սարյանի հետ մասնակցել է 1924-ին կերպարվեստի միջազգային ցուցահանդեսին Վենետիկում 200
ԿՈՐԳԱՆՈՎ, ՂՈՐՂԱՆՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ զինվորական 238
ԿՐՈՆՊՐԻՆՑ 156
ԿՈՒՊԵՅԱՆՆԵՐ գրականագետ Ս. Սուքիասյանի բարեկամները Կիսլովոդսկում 380
ԿՈՒՍԻԿՅԱՆ ՀՈՎՍԵՓ (1890—1964) հայագետ, լեզվաբան 209, 364
ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ (1876—1927) անվանի բանաստեղծուհի 87—88

ՀԱԶԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԵՎՈՆ (1882—1946) նկարիչ 210, 225
ՀԱԽՈՒՄՅԱՆ ՍԻՄՈՆ (1859—1905) հրապարակախոս, խմբագիր 26
ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1876—1938) պատմաբան, մշակութային, հասարակական գործիչ, հեղինակ «Ուղեգրությունների» (հ. Ա 1932, հ. Զ 1934) 303
ՀԱԿՈԲՅԱՆ ՍԻՄՈՆ (1888—1937) գրականագետ, հեղինակ հայ դասական գրողներին նվիրված մի շարք աշխատությունների (Շիրվանզադե, Պ. Դուրյան, Ա. Արփիարյան, Հովհ. Թումանյան, Վ. Տերյան, Ե. Չարենց), 1922—1924 թթ. խմբագրել է «Արեգ» ամսագիրը 188, 221, 235, 303, 329
ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ Լայպցիգում Ավ. Իսահակյանի ծանոթներից 210
ՀԱԿՈԲ 338
ՀԱՄԱՋԱՍՊ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ Ավ. Իսահակյանի Սիմոն հորեղբորորդին 9
ՀԱՄԱՍՏԵՂ (Կելենյան Համբարձում) (1895—1966) սփյուռքահայ արձակագիր 203—205, 259, 262, 263
ՀԱՄԼԵՏ Շեքսպիրի համանուն ողբերգության հերոսը 365
ՀԱՄԼԻԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԼԻԿ (1896—1937) Հովհ. Թումանյանի որդին, թարգմանել է Ռ. Թագորի «Պարտիզպանը» 89, 177, 221, 233
ՀԱՄՍՈՒՆ ԿՆՈՒՏ (1859—1952) նորվեգացի գրող 117, 120

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ (1880—1965) բանաստեղծ, գրականագետ 383—384
ՀԱՄՈ, ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՀԱՄՈ հասարակական գործիչ 175, 176, 177
ՀԱՅԿ, ԻՍՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ Ավ. Իսահակյանի Սիմոն հորեղբոր որդին 8, 349—350, 359—360
ՀԱՅԿ 174, 175, 177, 182, 287, 314
ՀԱՅՆԵ ՀԵՆՐԻԽ (1797—1856) գերմանացի մեծ բանաստեղծ 20, 215, 317, 318, 332
ՀԱՅՐԻԿ, ԽՐԻՄՅԱՆ ՄԿՐՏԻՉ (1820—1907) եկեղեցական, հասարակական գործիչ, գրող, 1869—1873 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարք, 1892—1907 թթ. կաթողիկոս ամենայն հայոց Մկրտիչ Ա անունով։ Բեռլինի կոնգրեսում (1878) հայկական պատվիրակության նախագահ։ Խմբագրել է «Արծվի Վասպուրականի» (1855—1863) և «Արծվի Տարոնա» (1863—1865) պարբերականները։ Գրական գործերից նշանավոր են՝ «Հրավիրակ Արարատյան», Հայգույժ», «Վանգույժ, «Սիրաք և Սամվել», «Պապիկ և Թոռնիկ» 43
ՀԱՅՐՈՐՏ ամերիկյան գեներալ 175
ՀԱՅՈՒԹ ԼԵՎՈՆ (Հարությունյան) (1898—1957) դերասան 220
ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ 365
ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ Պ. դերասան Ժընևում 171
ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ (1869—1944) իրավաբան, հասարակական գործիչ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության նախագահ, խմբագիր «Համբավարեր» շաբաթաթերթի (1915—1917) 123
ՀԱՈՒՊՏՄԱՆ ԳԵՐՀԱՐԴ (1862—1946) գերմանացի դրամատուրգ 21
ՀԱՖԻԶ (1300—1389) պարսիկ մեծ բանաստեղծ 166
ՀԵԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ 365
ՀԵԳԻՆԵ Ավ. Իսահակյանի Փեթրոնև քրոջ դուստրը 246, 326
ՀԵԳՈՒԾ 248, 252, 285
ՀԵՐԱԿԼԻՏ (ծն. մոտ 544—540 մ. թ. ա. — մահվան թ. անհայտ) հույն փիլիսոփա մատերիալիստ 321
ՀԵՐԱԿԼ, ՀԵՐՔՈՒԼԵՍ (դից.) 18
ՀԵՐԴԵՐ ՅՈՀԱՆՆ ԳՈՏՖՐԻԴ (1744—1803) գերմանացի փիլիսոփա, գրականագետ, գրող 40
ՀԵՐԻՈ պետական գործիչ 199
ՀԵՓԵՍՏՈՍ (դից.) 8
ՀԼՈ 365
ՀՄԱՅԱԿ 365
ՀՈՄԵՐՈՍ հին հունաստանի լեգենդար բանաստեղծը, որն համարվում է «Իլիականի» և «Ոդիսականի» ստեղծողը։ Նրա ապրած ժամանակի վերաբերյալ հնագույն աղբյուրների տվյալները տատանվում են 12-րդ դարից մինչև 7-րդ դարը մ. թ. ա. 18,139
ՀՈՆԱՆ Ժընևում Ավ. Իսահակյանի ծանոթներից 31
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՇՈՏ (1887—1972) պատմաբան, կուսակցական-պետական գործիչ 196, 210, 318, 380

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1864—1929) 128—129, 168 281, 317, 321, 333
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, ՎԱՐԱՆԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1872—1934) 28, 157, 225, 312
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1865—1921) իրավաբան, թարգմանիչ, մշակութային գործիչ 162—163
ՀՈՎՆԱՆ ԳՈՒՐԳԵՆ (Հովհաննիսյան) (ծն. 1910) գրականագետ 378—380
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (1914—1968) արձակագիր 351—352, 355, 368
ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ Իրինդի կոլտնտեսության նախագահ 365
ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏ 235, 247
ՀՈՐԱՑԻՈՍ (65—8 մ. թ. ա.) հռոմեացի մեծ բանաստեղծ 41
ՀՈՐՏԱՆՍ Ժընևում Ավ. Իսահակյանի ծանոթներից 31
ՀՐԱՆՏ, ԵՍԱՅԱՆ ՀՐԱՆՏ (ծն. 1910) գիտնական-քիմիկոս, Զապել Եսայանի որդին 302
ՀՐԱՉ, ԶԱՐԴԱՐՅԱՆ ՀՐԱՉ ափյուռքահայ արձակագիր 304
ՀՐԱՉ, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ (1907—1969) գրականագետ 364
ՀՈՒՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ (1912—1942) բանաստեղծ 348, 350, 354
ՀՈՒՍԻԿ 337

ՋԻԹՈՂՑՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Դրամբյան) ալեքսանդրապոլցի, Ավ. Իսահակյանի մտերմուհիներից 235

ՂԱԶԱՐ 365
ՂԱԶԱՐ Ժընևի հայ ուսանողներից 32
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ հրապարակախոս, հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ «Նոր հոսանք» ամսագրի (1913—1915) 29
ՂԱԶԻԿՅԱՆ ԱՐՍԵՆ (1870—1932) բանասեր, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից 202, 211, 235
ՂԱԶԻԿՅԱՆ ՆԵՐՍԵՍ գրավաճառ 139
ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ մեծաճարուստ, մեկենաս 218, 219, 220, 221, 223, 224, 225, 238

ՄԱԶՄԱՆՅԱՆ ՀԵՂԻՆԵ Ավ. Իսահակյանի մորաքրոջ թոռնուհին 242
ՄԱԼԱՐՄԵ ՍՏԵՓԱՆ (1842—1898) ֆրանսիացի բանաստեղծ, սիմվոլիզմի առաջատար ներկայացուցիչներից 215
ՄԱԼԵԶՅԱՆ ՎԱՀԱՆ (1871—1967) գրող 290—291
ՄԱԿԱՐ 140
ՄԱԿԴՈՆԱԼԴ անգլիական պետական գործիչ 199
ՄԱԿԻՆՑՅԱՆ ՊՈՂՈՍ (1884—1938) գրականագետ, քննադատ, պետական գործիչ 142, 157, 166, 206, 208, 209, 211—213 226—229, 230, 237, 243, 246, 248, 252, 254, 260, 277, 282, 293, 307, 320
ՄԱՀԱՐԻ ԳՈՒՐԳԵՆ (1903—1969) սովետահայ բանաստեղծ, արձակագիր 301, 317

ՄԱՄՅԱՆ ՌԻՊԱ 246, 248
ՄԱՄՈՒԼՅԱՆՆԵՐ Ռուբեն Մամուլյանի ծնողների ընտանիքը 289, 290
ՄԱՄՈՒԼՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ծն. 1898) ամերիկյան նշանավոր կինոռեժիսոր 289, 378
ՄԱՄՈՒՐՅԱՆ ՄԱՏԹԵՈՍ (1830—1910) գրող, հրապարակախոս, խմբագիր «Արևելյան մամուլ» ամսագրի (1871—1901) 296
ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ (1893—1930) 318, 339
ՄԱՅԻԼՅԱՆ 224
ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱԿՈԲ (1873—1952) հայագետ, պատմաբան, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս 345
ՄԱՆԹԱՇՅԱՆՆԵՐ բարեգործ, մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանի (1842—1911) ընտանիքը 27
ՄԱՆԻԿ, ԻՆՃԻԿՅԱՆ-ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԱՆԻԿ (ծն. 1918) Արամ Իճճիկյանի կինը 333
ՄԱՆՅԱ Եղիա Չուբարի կինը 263, 273, 280, 303
ՄԱՆՆԻԿ, ՊԵՐՊԵՐՅԱՆ ՄԱՆՆԻԿ (1885—1960) բանաստեղծուհի 148
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.ԶԱՏ (1878—1958) կոմպոզիտոր 329
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԼԵՎՈՆ (1864—1919) բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ 317
ՄԱՌ ՆԻԿՈՂԱՅՈՍ (1864—1934) ականավոր հայագետ, լեզվաբան 86
ՄԱՍԵՀՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1864—1931) Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանիչը. Ավ. Իսահակյանի տարագրության տարիներին ցույց է տվել նյութական և բարոյական օգնություն: Ավ. Իսահակյանը 1920-ական թվականների սկզբներին գրել է «Հովհաննես Մասեհյան» հոդվածը
ՄԱՍԻՍՅԱՆ ՀԱԿՈԲ ՊՈՂՈՍԻ հայրենադարձ պատանի 370
ՄԱՏԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ (1877—1944) Ավ. Իսահակյանի ճեռավոր ազգականուհին: Բանաստեղծի մայրը և Շուշիկի տատը եղել են մորաքրոջ աղջիկներ՝ Շուշիկը Իսահակյանի մորաքրոջ (Սանդուխտ) թոռնուհին է, Ավ. Իսահակյանի մեծ սերը: Հովհաննես Տեր-Միրաքյանի ճետ ամուսնացել է 16 տարեկանում: Օժտված է եղել գրական ձիրքով, գրել է բանաստեղծություններ: Դարասկզբին «Հորիզոն» թերթում Շուշանիկ Տեր-Միրաքյան և Ազալիա ստորագրություններով հոդվածներ է տպագրել կանանց ճարցի մասին 12, 60—62, 65, 83, 84, 273, 368
ՄԱՏԵՆՅԱՆ ՄԱՄԲՐԵ (1882—1920) գրականագետ-քննադատ, մանկավարժ 166, 169
ՄԱՏԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ մանկավարժ 236
ՄԱՐԳԱՐԻՏ ԱԹԱԲԵԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ (ծն. 1917) գրականագետ, Լևոն Աթաբեկյանի դուստրը, Աշոտ Գրաշու կինը 354, 367
ՄԱՐԻ 235
ՄԱՐԻԱՄ Ավ. Իսահակյանի Սիմոն ճորեղբոր դուստրը 8
ՄԱՐԻԵՏՏԱ, ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՐԻԵՏՏԱ (ծն. 1888) 334, 335, 340, 341 360, 362, 364, 374
ՄԱՐՏԻԿՅԱՆ ՈՍԿԱՆ (1867—1947) մշակութային գործիչ 120

ՄԱՐՏԻՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐՏԻՆ Ավ. Իսահակյանի Հակոբ հորեղբոր որդին 10, 326
ՄԱՐՏԻՐՈՍ Ավ. Իսահակյանի Հակոբ հորեղբոր որդի Մարտինը 11
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ 362
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Շիրակի ջրանցքի ինժեների կինը 198
ՄԱՐՔԻՆԵՐ (Դե Մարքիներ) 240
ՄԱՐՔՍ ԿԱՐԼ (1818—1883) 306
ՄԵԼԻՔ, ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1893—1970) հայագետ, բանաստեղծ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս 175
ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ Մ. Րաֆֆու ազգականը (հորեղբորորդին) 284
ՄԵԼԻՔՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (1861—1932) ճանապարհաշինարար, «Հորիզոն» օրաթերթի հրատարակիչը 123, 220
ՄԵԼԻՔՅԱՆ ՀՈՎԻԿ (1902—1953) արձակագիր, գրականագետ 333, 335, 336
ՄԵԼԻՔՅԱՆ ՌՈՄԱՆՈՍ (1883—1935) սովետահայ անվանի կոմպոզիտոր 242, 327
ՄԵԾԱՐԵՆՑ ՄԻՍԱԿ (1886—1908) 291
ՄԵՀՐԱԲՅԱՆ 288
ՄԵՀՐԱԲՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ գրասեր, Վրաստանի Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղից, որին Իսահակյանը ճամակ է գրել Ուստա Կարոյի ճախատիպի վերաբերյալ 385—386
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ (1865—1939) հոգևորական, կրթական գործիչ, բանաստեղծ 121
ՄԵՏԵՐԼԻՆԿ ՄՈՐԻՍ (1862—1949) բելգիացի դրամատուրգ, բանաստեղծ, գրել է ֆրանսերեն 92
ՄԵՖԻՍՏՈՓԵԼ 56
ՄԻԱՆՍԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1829—1880) հայ ճշգրտավոր մատենագիր, «Քնար հայկական» ժողովածուի (1868) հրատարակիչը 333
ՄԻՀՐԱՆ 365
ՄԻՇՈ, ՄԻՇԱ, ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1877—1944) ՀՍՍՀ ժող. դերասան, արձակագիր 236, 266, 286, 294, 301, 303 307, 320, 327
ՄԻՆԱՍՅԱՆ «Աբու-Լալա Մաաարիի» ֆրանսերեն թարգմանիչը 393
ՄԻՍԱԿ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԻՍԱՀԱԿ ԳԵՎՈՐԳԻ (1893—1916) Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր որդին, ավարտել է Ալեքսանդրապոլի ռուսական դպրոցը, պատանեկան տարիներից դրսևորել է բանաստեղծական ձիրք, սկսել տպագրվել պարբերական մամուլում: 1912-ին, առանձին գրքով, լույս է տեսնում նրա «Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմը: Սպանվել է 1916-ի հունվ. 31-ին՝ Կարինի համար մղվող հերոսամարտում 131, 134—135, 136, 137, 140, 141, 155, 159, 160, 161, 205
ՄԻՐԶՈՅԱՆ ՋՈՋԱ Ա.ՃՃա Մատակյանի ընկերուհին 52
ՄԻՐԶԱՅԱՆ ՄԱՇԱ 369—370
ՄԻՐԶԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ 392
ՄԻՑԿԵՎԻՉ ԱԴԱՄ (1798—1855) լեհ մեծ բանաստեղծ 25
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ (1883—1941) արձակագիր, «Գարուն» ալ-

մաճախի (1910—1912) խմբագիրներից 166, 167, 219, 220, 252, 319
ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ (12-րդ դար) պատմիչ, մեզ հասած նրա միակ աշխատությունը է «Մխիթարայ Անեցւոյ պատմութիւն» (Պետերբուրգ, 1879) 86
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ 265, 372
ՄԿՐՑԱՆ ՄԿՐՏԻՉ (ծն. 1907) գրականագետ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ 321
ՄԿՐՏԻՉ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՄԿՐՏԻՉ (1871—1921) Ավ. Իսահակյանի եղբայրը, ունեցել է գրական հակումներ, հավաքել է ժողովրդական բանահյուսության նմուշներ, զբաղվել է առևտրով 12, 131, 134, 136, 158, 159, 161, 169
ՄՀԵՐ, ՓՈՔՐ ՄՀԵՐ 18, 40, 134, 338
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (Մարտունի) (1886—1925) գրականագետ, քննադատ, կուսակցական-պետական գործիչ 206
ՄՅՈՒՍԵ ԱԼՖՐԵԴ դը (1810—1857) ֆրանսիացի գրող 227
ՄՈՄՁՈՒՅԱՆ ՊԵՏՐՈՍ (1869—1939) բանաստեղծ 39
ՄՈՒՎՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ (1886—1929) կուսակցական-պետական գործիչ 207, 252, 281
ՄՈՒՇԵՂ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄՈՒՇԵՂ (1889—1937) մանկավարժ, բնագետ, Հովհ. Թումանյանի ավագ որդին 89, 177, 233
ՄՈՒՍՈԼԻՆԻ 189
ՄՈՒՐԱՑԱՆ (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) (1854—1908) հայ նշանավոր արձակագիր 321, 379

ՅՈՐԴԱՆ ՎԻԼՀԵԼՄ (1819—1904) գերմանացի գրող և քաղաքական գործիչ, ինն գերմանական ժողովրդական ասքերի հիման վրա գրել է «Նիբելունգներ», «Սագա Զիգֆրիդի մասին», «Հիլդերբրանդի վերադարձը» էպիկական պոեմները 40

ՆԱԴՍՈՆ ՍԻՄԵՈՆ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ (1862—1887) ռուս բանաստեղծ, Ավ. Իսահակյանը թարգմանել է նրա «Над свежей могилой» բանաստեղծությունը 318
ՆԱԶԱՐՅԱՆ Լ. 211
ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ 393—394

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ (1812—1879) հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի (1858—1864) հիմնադիր խմբագիր-հրատարակիչը 296
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1829—1866) 296
ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ միջնադարի հայ մեծ բանաստեղծ 215
ՆԱՏՈ 135
ՆԱՐ-ԴՈՍ (Միքայել Հովհաննիսյան) (1867—1933) 379
ՆԵԿՐԱՍՈՎ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ (1821—1877) 318
ՆԵՐՍԵՍ ԶՈՐԱՎԱՐ 195
ՆԵՐՍԵՍ, ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԵՐՍԵՍ (1882—1949) մանկավարժ, տնտեսագետ, Վաճառ Տերյանի եղբայրը 318

ՆԵՎՐՈՒԶ ՀԱԿՈԲ (1864—1947) հասարակական գործիչ 148, 175
ՆԻԶԱՄԻ ԳԱՅԱՆԶԵՎԻ (մոտ 1141—1209) Արևելքի մեծ բանաստեղծ։ 1943-ին Ավ. Իսահակյանը Նիզամիի ծննդյան 800-ամյակի առթիվ գրել է «Նիզամի Գյանջևի» հոդվածը 339, 342
ՆԻԿՈԼ, ԱՂԲԱԼ, ԱՂԲԱԼՅԱՆ ՆԻԿՈԼ (1873—1947) գրականագետ, մանկավարժ 22—23, 29, 37, 42, 45, 90
ՆԻՆԱ 248, 330
ՆԻՑՇԵ ՖՐԻԴՐԻԽ (1844—1900) գերմանացի փիլիսոփա, գրող 20, 21, 27
ՆՇԱՆ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՆՇԱՆ (ծն. 1908) գրականագետ 349
ՆՈՅԵՐՆ ՀԱՅՆՐԻԽ գերմանացի բանաստեղծ, Լիպ. Նազարյանի հետ «Աբու-Լալա Մահարի» պոեմը թարգմանել է գերմաներեն 211
ՆՈՎԻՑԿԻ Օ. ուկրաինացի բանաստեղծ, թարգմանել է Ավ. Իսահակյանի բանաստեղծություններից 375
ՆՈՐԵՆՑ ՎԱՂԱՐՇԱԿ (1903—1973) սովետահայ բանաստեղծ 301
ՆՎԱՐԴ, ՆՈՒՆԻԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ (1892—1957) Հովհ. Թումանյանի դուստրը։ Նշանակալի դեր է կատարել բանաստեղծ հոր գրական ժառանգության ուսումնասիրության և հրատարակության գործում 89, 173, 177, 233, 335, 336, 366
ՆՎԱՐԴ հավատորեն Հովսեփյան Մաթևոսի կինը 365, 366
ՆՈՒՊԱՐ ԶԱՐԵՀ (ԶԱՐԵՀ ԲԵՅ) Պողոս Նուպարի որդին (1883—1963) հասարակական գործիչ 299
ՆՈՒՊԱՐ ՊՈՂՈՍ ՓԱՇԱ (1851—1930) հասարակական գործիչ 299
ՆՈՒՆՈՒԿ Արամ Իսահակյանի կինը 350

ՇԱԴԻՆՈՎ 226
ՇԱՀԱԶԻԶ ՍՄԲԱՏ (1841—1907) հայ նշանավոր բանաստեղծ 317, 321, 333
ՇԱՄԻԼ (1797—1871) Կովկասի լեռնականների առաջնորդը 382
ՇԱՄԼՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ գրող, հասարակական մշակութային գործիչ 392
ՇԱՆԹ ԼԵՎՈՆ (Սեղբոսյան) (1869—1951) դրամատուրգ, արձակագիր 19, 28, 29, 37, 40, 42, 44, 56, 89, 90, 165
ՇԱՄՏԱՆՑՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1874—1926) հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ 19
ՇԱՐԱ (պատմա-ավանդ.) 18
ՇԱՐԱԲԱՆԴՅԱՆ ՄԿՐՏԻՉ ուսանող 26
ՇԵԼԼԻ ՊԵՐՍԻ ԲԻՇԻ (1792—1822) անգլիացի նշանավոր բանաստեղծ 332
ՇԵՐԲԱՐԴ ՊԱՈՒԼ (1863—1915) գերմանացի գրող 20
ՇԻԴՀԱՐ (պատմա-ավանդ.) 18
ՇԻՇՄԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (1885—1959) նկարիչ, արվեստաբան 328
ՇԻՐԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1915) 330—331, 335, 345
ՇԻՐԻՆՅԱՆ 235

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ (Ալեքսանդր Մովսիսյան) (1858—1935) 120, 169, 172, 185, 220, 235, 379

ՇԼԱՖ ՅՈՀԱՆՆԵՍ (1862—1941) գերմանացի արձակագիր, դրամատուրգ, նատուրալիզմի ներկայացուցիչներից 20

ՇԽՈՎ (Շխյան) հավանորեն՝ փաստաբան Արսեն Շխյանը կամ նրա եղբայրը՝ բժիշկ Արտաշես Շխյանը՝ Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի ծանոթներից 42

ՇՈՒՇԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ 290

ՇՈՒՇԱՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ (1903—1941) սփյուռքահայ գրող 291, 323, 325

ՇՈՒՇԻԿ, Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբորորդու՝ Նիկողայոսի կինը 290

ՈՍԿԱՆ ՍՏԵՓԱՆ (1825—1901) հրապարակախոս, խմբագիր «Արևելք» (1855—1856) և «Արևմուտք» (1859—1865) պարբերականների 296

ՈՐԲՈՒՆԻ ՋԱՐԵՀ (Էոքսուզյան) (1902) սփյուռքահայ գրող 303—304

ՉԱԼԽՈՒՇՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1861—1931) գրական հասարակական գործիչ, հրապարակախոս 142

ՉԱՏԶՐՄՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ Ավ. Իսահակյանի մորաքրոջ որդին 320, 327

ՉԱՐԵՆՑ ԵԼԻՇԵ (1897—1937) 206, 208, 209, 220, 228, 292, 307, 311, 317

ՉԱՐԸԳ ԱՐԱՄ (1875—1947) արևմտահայ բանաստեղծ 312

ՉԵՈՐԵՔՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1868—1954) կաթողիկոս ամենայն հայոց, երաժշտագետ, մանկավարժ 378

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ (ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ) ՌՈՒԲԵՆ, ՍԵՎԱԿ ՌՈՒԲԵՆ (1885—1915) արևմտահայ նշանավոր բանաստեղծ 148, 172

ՉԻԼԻՆԿԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ (1868—1917) մանկավարժ, «Դասընկեր» դասագրքի հեղինակներից՝ Տ. Րաշմաճյանի և Ավ. Իսահակյանի հետ 161

ՉԻԼԻՆԿԱՐՅԱՆ (տիկին) 279

ՉՈԲԱՆՅԱՆ ԱՀԱՐՈՆ ուսուցիչ Վրաց. ՍՍՀ Բոգդանովկա ավանում 331—332

ՉՈՒԲԱՐ ԵԼԻԱ (1897—1938) հրապարակախոս, գրական գործիչ, խմբագրել է «Խորհրդային Հայաստան», «Նոր ակոս», «Վերելք», «Երևան» (Փարիզում) պարբերականները 231, 238, 243, 247, 252, 260, 263, 265, 280, 301, 303

ՉՈԲԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ 1877—1878 թթ. ռուս-տաճկական պատերազմին մասնակցել է Ավ. Իսահակյանի ավագ եղբոր՝ Ալեքսանի հետ։ Ունեցել են բարեկամական «խնամիական) կապ։ Չ. Հ.-ն Գեղամ Ափրիկյանի քրոջ ամուսնու՝ Ղազար Չորանյանի եղբայրն է 10, 12

ՉՈՊԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ (1872—1954) արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս, գրականագետ 23—26, 171—173, 184—185, 190—192, 197, 200—203, 220, 222—223, 257, 262, 263, 265, 275, 284, 386

ՊԱԳԱՆԻՆԵՐ 240
ՊԱԼԱՍԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ (1837—1889) գրականագետ, պատմաբան։ Գրել է «Պատմություն հայոց գրականության» (1865), «Պատմություն հայոց, սկզբից մինչև մեր օրերը» 333
ՊԱԼԸՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1900) սփյուռքահայ գրող 240
ՊԱՅԱՆ 233, 235, 240
ՊԱՅԱՋԱՏՅԱՆ ԱՎԵՏԻՔ 111
ՊԱՊԱԶԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1872—1926) իրավաբան, հասարակական գործիչ 136, 153, 154, 220, 247
ՊԱՎԵԼ 330
ՊԱՏԿԱՆՅԱՆ ՌԱՓԱՅԵԼ, ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ (1830—1892) 296, 321, 333
ՊԱՐՏԻԶՅԱՆ պրոֆեսոր, բժիշկ Վենետիկում 328
ՊԱՐՈՒՅՐ, ԼԵՎՈՆՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ Գարեգին Լևոնյանի եղբայրը։ Բոլխարեւանի «Նոր արշալույս» եռօրյա թերթի խմբագիր-հրատարակիչ (1922—1933), ՀՕԿ-ի անդամներից 128, 300, 304, 305, 306, 311
ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ ՆՇԱՆ (1896—1972) գրող, բանաստեր, թատերական գործիչ 190, 192
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ 365
ՊԵՐՎՈՄԱՅՍԿԻ ԼԵՈՆԻԴ (ծն. 1908) ուկրաինացի գրող 375
ՊՈ ԷԴԳԱՐ ԱԼԱՆ (1809—1849) ամերիկյան գրող, քննադատ 215
ՊՈՂՈՍՅԱՆ Ս. 283—284
ՊՈՒՇԿԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ (1799—1837) 19, 318, 332

ՋԱՒԱՅԱՆ ԳԵՂԵՈՆ 149
ՋԱՎԱՀԻՐ, ՋԱՎՈ, ՆԵՐՍԻՍՅԱՆ ՋԱՎԱՀԻՐ Հետագայում Լևոն Շանթի կինը 30—37, 223, 224, 226, 259, 262, 263, 265
ՋԵՄՍ 314
ՋՈՆ 235

ՌԱՀԻՄ ՄԱՄԵԴ (ծն. 1907) Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ 376
ՌԱՅՆԱԽ ՍՈԼՈՄՈՆ ճնագետ, ճարտարապետ Փարիզում 271
ՌԱՇՄԱՃՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1862—1947) մանկավարժ, Ավ. Իսահակյանի և Արշակ Չիլինկարյանի հետ կազմել է «Դասընկեր» դասագիրքը 161
ՌԶԱ ՌԱՍՈՒԼ (ծն. 1910) Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ 342, 348, 351, 368
ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՇՈԹԱ (12-րդ դար) 63
ՌՈՒՍԻՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ (1819—1876) հասարակական գործիչ, բանաստեղծ 296
ՌԱՏՑԵԼ ՖՐԻԴՐԻԽ (1844—1904) գերմանացի բնագետ, աշխարհագրագետ և սոցիոլոգ, մարդաբանական աշխարհագրության և քաղաքական աշխարհագրության հիմնադիրներից մեկը, 1886—1904 թթ. աշխարհագրության պրոֆեսոր Լայպցիգի համալսարանում 21

ՌԻՋԱ ԽԱՆ 313
ՌԻԼՍԿԻ ՄԱՔՍԻՄ ՖԱԴԵԵՎԻՉ (1895—1969) ուկրաինացի նշանավոր բանաստեղծ, հասարակական գործիչ 375
ՌԻՄԱ, ԱԲԵԼՅԱՆ ՌԻՄԱ Գ. Լևոնյանի կինը 295, 356
ՌՈՒԲԵՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1857—1926) Ավ. Իսահակյանի եղբայրը 154, 159, 160, 161, 235, 236, 238, 241, 266
ՌԵԲԵԿԱ, Արմենակ Թումանյանի կինը 366
ՍԱՀՅԱՆ ՀԱՄՈ 351

ՍԱՆԴՈՒԽՏ Շուշիկ Մատակյանի քույրը 80
ՍԱՐԳՍՅԱՆ ուսանող Լայպցիգում 18
ՍԱՐԳՍՅԱՆ ԼԵՎՈՆ (1861—1927) մանկավարժ, հրապարակախոս, «Մուրճ» ամսագրի խմբագիրը (1902—1907) 41, 100
ՍԱՐԳՍՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ալեքսանդրապոլցի 307
ՍԱՄՎԵԼՅԱՆ ԽԱՉԻԿ (1873—1940) իրավաբան, բանաստեր 345, 377
ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ (12-րդ դար) ժամանակագիր 86
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (1722—1795) 215, 333
ՍԱՐԳՍՅԱՆ ԽՈՐԵՆ (1891—1970) գրականագետ 291, 320—321
ՍԱՐԳՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ Նիկողայոս Ադոնցի քույրը 273
ՍԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ (1902—1977) 317
ՍԱԹԵՆԻԿ, Ավ. Իսահակյանի Ալեքսան եղբոր կինը 154, 236, 245 249, 254
ՍԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (1880—1972) 195—200, 206—210, 225, 230, 294, 301, 320, 327, 384
ՍԱՐԻԿ, ՍԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ (1917—1962) գրականագետ, Մարտիրոս Սարյանի որդին 341, 352—354
ՍԱՐՅԱՆ ՕԳՍԵՆ (1896—1976) լրագրող, հասարակական գործիչ 392
ՍԱՐՄԵՆ (ծն. 1901) սովետահայ բանաստեղծ 346
ՍԱՖՐԱԶԲԵԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ բժիշկ, Սեդա Թումանյանի ամուսինը 358
ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ԱՐՇԱԿ (1885—1958) հրապարակախոս, խմբագիր, պատմաբան 321
ՍԵԲԱՐ դերասանուհի, Պողոս Մակինցյանի կինը 212, 227, 229, 243
ՍԵԴԱ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍԵԴԱ Հովհ. Թումանյանի դուստրը (ծն. 1905) 177, 233, 358, 365—367
ՍԵՅԼԱՆՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ 226
ՍԵՖՈՒԼԻՆԱ ԼԻԴԻԱ ՆԻԿՈԼԱԵՎՆԱ (1889—1954) ռուս բանաստեղծուհի 360
ՍԵՎՈՒՆՑ ԳԱՐԵԳԻՆ (1911—1969) սովետահայ գրող 348, 351, 354
ՍԵՐՈԲՅԱՆ ԲԱԳՐԱՏ 150, 351
ՍԵՐՎԱՆՏԵՍ (1547—1616) իսպանացի մեծ գրող 133
ՍԸՄԵՆ (ՍԱՄԵՆ) ԱԼԲԵՐ ՎԻԿՏՈՐ (1858—1900) ֆրանսիացի բանաստեղծ 215
ՍԻԱՄԱՆԹՈ (Ատոմ Յարճանյան) (1878—1915) հայ մեծ բանաստեղծ 147—148, 170, 217

ՍԻՄՈՆ 142
ՍԻՄՈՆԻԿ, ՓԻՐՈՒՄՅԱՆ ՍԻՄՈՆԻԿ 225, 231, 233
ՍԻՄՈՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղի դպրոցի վարիչ 386
ՍԻՍԱԿ, ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ ՍԻՍԱԿ (1872—1935) Ավ. Իսաֆակյանի երիտասարդական տարիների մտերիմ ընկերներից: Վարպետը աքսորավայրում եղել է նրա հետ: «Գրական նախաձեռնության ընկերը Սիսակն է: Դրաստամատ Սիմոնյանի հորեղբայրը 169, 235, 252, 257, 266, 286, 294, 301, 320, 327
ՍԻՏԱԼ ԿԱՐԱՊԵՏ (1891—1972) սփյուռքահայ գրող, հասարակական գործիչ 392
ՍԻՐԱՆՈՒՇ Տիգրան Զավենի կինը 261, 265, 268
ՍՆՆԱՐ (Սիմեոն Նարինյան) (1887—1941) հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Ամերիկայում հրատարակվող կոմունիստական «Բանվոր» թերթի խմբագիր: 1925-ին տեղափոխվել է Սովետական Հայաստան, եղել է Պետհրատի դիրեկտոր 235
ՍՈԼՈՎՅՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ (1853—1900) ռուս փիլիսոփա, բանաստեղծ 45
ՍՈԿՐԱՏԵՍ (470/469—399 մ. թ. ա.) հույն փիլիսոփա 71
ՍՈՍՅՈՒՐԱ ՎԼԱԴԻՄԻՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ (1897—1965) ուկրաինացի բանաստեղծ 375
ՍՈՖԻԿ, ԻՍԱՀԱԿՅԱՆ—ՋՈՋԱՐՅԱՆ ՍՈՖՅԱ (1885—1966) Ավ. Իսաֆակյանի կինը 99, 100, 121, 123, 137, 140, 149, 152, 153, 159, 170, 184, 187, 218—222, 223—226, 232—238, 240—241, 242—243, 245—247, 248—255, 255—257, 257—260, 261—268, 270—271, 272—276, 276—278, 278—282, 303, 311, 326, 329—330, 342—343, 346—347, 356, 357—359, 362—363, 364, 368
ՍՐԱՊԻՈՆ, ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ ՍՐԱՊԻՈՆ Վենետիկի Մխիթարյան վանքի աբբահայր 233, 235, 240
ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ (1825—1912) 379
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍԱՔՈ (1896—1965) գրականագետ, տերյանագետ 315—319, 338—340, 348—349, 380—381

ՎԱՀԱԳՆ (դից.) 18
ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ 318
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ 235
ՎԱՂԱՐՇՅԱՆ ՎԱՂԱՐՇ (1894—1959) ՍՍՀՄ ժողովրդական դերասան, դրամատուրգ 335
ՎԱՉՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ 220
ՎԱՐԴԱՆ 175
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ 235
ՎԱՐԴԱՆ Իսաֆակյանների ջրաղացի վարպետը 154
ՎԱՐԴԱՆՅԱՆ Ժընևում Իսաֆակյանի ծանոթներից 32

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՂԱՍԻ (1891—1968) բանաստեղծ, արձակագիր, խմբագիր 389
ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ ՓԻԼԻՊՈՍ (1858—1935) մշակութային գործիչ 38
ՎԱՐԴԳԵՍ 280
ՎԱՐԻԳՈ 11
ՎԱՐՍԻԿ, ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ (1895—1974) 346, 347, 354, 356
ՎԱՐՈՒԺԱՆ ԴԱՆԻԵԼ (1884—1915) 170
ՎԵՍԵԼՈՎՍԿԻ ՅՈՒՐԻ ԱԼԵՔՍԵԵՎԻՉ (1872—1919) ռուս գրականագետ, թարգմանիչ, սովորել է Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանի պատմալեզվաբանական բաժնում, հայտնի է հայ գրողների մասին գրած հոդվածներով և ուսումնասիրություններով 39, 378
ՎԵՍՊԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ (1893—1977) սովետահայ բանաստեղծ, թարգմանիչ 346, 388
ՎԵՐԳԻՆ, ՎԵՐԳԻՆԵ, ՎԻԳՈ Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր դուստրը 159, 233
ՎԵՐԼԵՆ ՊՈԼ (1844—1896) ֆրանսիացի բանաստեղծ 134, 215, 317
ՎԵՐՀԱՐՆ ԷՄԻԼ (1855—1916) բելգիացի բանաստեղծ, դրամատուրգ, քննադատ 215
ՎԵՐՖԵԼ ՖՐԱՆՑ (1890—1945) ավստրիացի գրող, դրամատուրգ, «Մուսա լեռան բառասուն օրերը» վեպի հեղինակը 371, 372
ՎԻԳԵՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՎԻԳԵՆ (ծն. 1910) Ավ. Իսահակյանի որդին, կինոռեժիսոր 131, 132, 135, 136, 140, 141, 187, 197, 200, 219, 221, 224, 225, 226, 232—236, 237, 238—240, 243—245, 247, 248—255, 255—257, 257—260, 261—264, 266—270, 271—276, 276—278, 278—282, 289, 290, 295, 303, 308, 310, 311, 326, 327, 328—329, 347, 357, 358, 368
ՎԻԼՀԵԼՄ Գերմանիայի կայսր 156, 159, 161
ՎԻԼՍՈՆ ՎՈՒԴՐՈ (1838—1922) ԱՄՆ-ի պրեզիդենտ (1913—1921) 185, 199
ՎԻՐԱՊՅԱՆ ԱՐԱՄ Ավ. Իսահակյանի պատանեկան ընկերներից «Ամբողջ բոքոնը տվեց» պատմվածքի նախատիպը 320
ՎԻՐԳԻԼԻՈՍ (70—19 թթ. մ. թ. ա.) հռոմեացի մեծ բանաստեղծ 18, 139
ՎՈՒՐԴՈՒՆ ՍԱՄԵԴ (1906—1956) աղրբեջանցի բանաստեղծ, դրամատուրգ 342, 348, 351, 368
ՎՐԹԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ 235

ՏԱՐՈՆՑԻ ՍՈՂՈՄՈՆ (1904—1971) սովետահայ բանաստեղծ, թարգմանիչ 317, 345
ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ (1865—1945) կրթական, մշակութային, հասարակական գործիչ, թարգմանիչ, Ֆր. Վերֆելի «Մուսա-Դաղի բառասուն օրերը» վեպի առաջին հայերեն թարգմանիչը (1935, Սոֆիա) 373
ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՍԱՀԱԿ (1886—1937) կուսակցական պետական գործիչ 259, 265, 266, 267, 274, 278, 292, 299—300, 322—325
ՏԵՐ-ԳԵՎՈՐԳԲԵԳՅԱՆ Տ. բժիշկ 140
ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ալեքսանդրապոլցի 80

ՏԵՐ-ՄԻՐԱՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1859—1938) մանկավարժ, Շուշիկ Մատակյանի ամուսինը 73, 83
ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ 121
ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ (1885—1920) 130, 134, 135, 142, 157, 167, 168, 315, 316, 317, 318, 338, 339, 345, 348, 349
ՏԵՐՆՈՎԵՑ Բ. Ն. (1884—1941) արվեստաբան, Վենետիկում 1924-ին կերպարվեստի XIV ցուցահանդեսի սովետական տաղավարի կազմակերպիչը 200
ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1882—1915) բանաստեղծ, թարգմանիչ 138
ՏԵՐ-ՕՀԱՆՅԱՆ 224, 225, 226, 238, 243, 247, 253, 256, 259, 261 263, 265, 280
ՏԵՓՈ Իսահակյանների ջրաղացի աշխատողը 154
ՏԻԳՐԱՆ (պատմա-ավանդ.) 18
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ վիրաբույժ Թիֆլիսում 140
ՏԻԳՐԱՆՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ (1856—1951) կոմպոզիտոր 149
ՏԻՉԻՆԱ ՊԱՎԼՈ (1891—1967) ուկրաինացի նշանավոր բանաստեղծ 387
ՏԻՐԱՑՐ ՎԱՐԴԱՊԵՏ (Մելիք-Մուշկամբարյան), արքեպիսկոպոս (1867—1956) բանասեր, թարգմանիչ, Ֆրիկի հրատարակիչն ու հետազոտողը 150
ՏՅՈՒՏՉԵՎ ՖՅՈԴՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ (1803—1873) ռուս նշանավոր բանաստեղծ 318
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ՊԵՏՐՈՍ (1867—1949) մշակութային գործիչ, թարգմանիչ 325—326
ՏՈՆՅԱՆ ԱՐՇԱԿ մաթեմատիկոս, Երևանի պետ. համալսարանի պրոֆեսոր 286, 295, 301

ՐԱՖՖԻ ԱՐՇԱԿ (1880—1946) վիպասանի որդին, մանկավարժ 321
ՐԱՖՖԻ (Հակոբ Մելիք-Հակոբյան) (1835—1888) 284, 321, 345, 379

ՑՈՒԼԱԿ, ԽԱՆԶԱԴՅԱՆ ՑՈՒԼԱԿ (Գրասեր) (1886—1935) գրականագետ, քննադատ 167—168, 286, 294, 301, 307, 320, 327
ՑՎԱՅԳ ՍՏԵՖԱՆ (1881—1942) ավստրիացի նշանավոր գրող 372

ՈՒԼԱՆԴ ԼՅՈՒԴՎԻԳ (1787—1862) գերմանացի բանաստեղծ, գրականության պատմաբան 18, 19
ՈՒՍՏԱ ԿԱՐՈ 385
ՈՒՐԱՐՏՈՒ (ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ) ԱՅՏԵՄՆԻԿ (1899—1974) քանդակագործ 286, 320, 356, 380

ՓԱՓԱԶՅԱՆ ՎԱՀԱՆ հասարակական գործիչ 223, 224, 226
ՓԱՓԱԶՅԱՆ ՎԱՀՐԱՄ (1888—1968) հայ մեծ դերասան 288
ՓԱՓԱԶՅԱՆ Վ. Երևանի դազգահ-գործիքային տեխնիկումի դիրեկտոր 1947-ին 370

ՓԵՓՐՈՆ Ավ. Իսաուակյանի քույրը 132, 149, 154, 159
ՓԵՓՐՈՆԻԱ Ավ. Իսաուակյանի Սիմոն հորեղբոր դուստրը 8
ՓԻԼՈՅԱՆ ՎՐՈՒՄ 307, 312
ՓԻՐՈՒՄՅԱՆ ՍԻՄՈՆ աճդրֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչը և Հալաստանի ներկայացուցիչը Փարիզում (1925) 197. 219, 220, 221, 223, 238, 243, 248, 254
ՓԻՐՈՒՄՅԱՆՆԵՐ247
ՓՈՐՋԵՅԱՆ ԽԱՉԵՐԵՍ մշակութային գործիչ 377—378, 381—383, 384—385,

ՔԱԼՈՅԱՆ ԳԱՌՆԻԿ (1885—1921) բանաստեղծ 165, 169
ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1868—1937) մասնագիտությամբ ճարտարապետ 221, 235
ՔԵՄԱԼ 183
ՔԵՐՈՎԲԵ ՎԱՐԴԱՊԵՏ 235
ՔՅՈՒՈՂԼԻ 90
ՔՈԹԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ 365
ՔՈԹԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ 365
ՔՈՉԱՐՅԱՆ, ՔՈՉԱՐ ԵՐՎԱՆԴ (1899—1979) սովետահայ ճշանավոր քանդակագործ, նկարիչ 197, 220, 225, 243, 248, 255, 256, 259, 268, 272, 275
ՔՈՉԱՐՅԱՆ ՌՈԶԱ, ՎԱՆՅԱ Սոֆյա Իսահակյանի քարեկամները Մոսկվայում 330, 360

ՕԼԻԿ (Հովհաննես) Ավ. Իսահակյանի Գևորգ եղբորորդին 154, 159, 161, 309
ՕԼՅԱ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՕԼԳԱ (1871—1970) Հովհ. Թումանյանի կինը 40, 89, 233, 335—337
ՕՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ—235
ՕՆԻԿ, ՂԱՆԱԼԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1911) գրականագետ 338, 339, 345
ՕՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1834—1887) հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ 296

ՖԱԴԵԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ (1901—1956) սովետական ճշանավոր արձակագիր, հասարակական գործիչ 337, 361, 363
FACILLON HENRI Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, զբաղվել է հայկական ճարտարապետությամբ 271
ՖԵՏ ԱՖԱՆԱՍԻ ԱՖԱՆԱՍԵՎԻՉ (1820—1892) ռուս բանաստեղծ 318
ՖԻՐԴՈՒՍԻ միջնադարի պարսիկ մեծ բանաստեղծ 40
ՖՐԱՆՍ ԱՆԱՏՈԼ (1844—1924) 124

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Արամ Իսահակյանին 1889, դեկտեմբերի 3 . . . 7
2. Արամ Իսահակյանին 1890, փետրվարի 11 8
3. Արամ Իսահակյանին <18> 90, մայիսի 6 10
4. Մկրտիչ Իսահակյանին <18> 90, սեպտեմբերի 1 . . 12
5. Շուշանիկ Մատակյանին ∠1893>, մարտի 28 . . . 12
6. Ստեփան Լիսիցյանին ∠1893>, մայիսի 18 14
7. Ստեփան Լիսիցյանին <18> 93, հոկտեմ ∠բերի> 30 . 16
8. Ստեփան Լիսիցյանին <18> 93, նոյեմբերի 20 . . . 17
9. Ավետիք Արասխանյանին 1894, հունիսի 1 . . . 19
10. Ավետիք Արասխանյանին 1895, սեպտեմբերի 17 . . 20
11. Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերության նախագահին 1897, օգոստոսի 5 21
12. Նիկոլ Աղբալյանին <1898> 22
13. Արշակ Չոպանյանին <18> 99, ապրիլի 9 23
14. ∠Հայ ուսանողական ընկերությանը>, <1899> . . . 26
15. Ավետիք Արասխանյանին 1900, փետրվարի 2 . . . 28
16. Հովհաննես Թումանյանին 1900, հոկտեմբերի 21 . . 28
17. Ջավահիր Ներսիսյանին 1900, դեկտեմ<բերի> 2 . . 30
18. Ջավահիր Ներսիսյանին 1901, մարտի 11 32
19. Ջավահիր Ներսիսյանին 1901, հունիսի 6 34
20. Հովհաննես Թումանյանին 1901, սեպտեմբերի 12 . . 37
21. Հովհաննես Թումանյանին <1901>, հոկտեմբերի 29 . . 38
22. Հովհաննես Թումանյանին 1901, դեկտեմբերի 3 . . 38
23. Հովհաննես Թումանյանին 1902, հունվարի 18 . . . 38
24. Հովհաննես Թումանյանին 1902, մարտի 30 . . . 39
25. Հովհաննես Թումանյանին 1902, հուլիսի 21 . . . 40
26. Լևոն Սարգսյանին <1902>, օգոստոսի 8 . . . 41
27. Հովհաննես Թումանյանին∠1902>, հոկտեմբերի 4 . . 41
28. Հովհաննես Թումանյանին 1902 դեկտեմբերի 11 . . 43
29. Հովհաննես Թումանյանին <1903>, նոյեմ<բերի> 30 . 43
30. Հովհաննես Թումանյանին 1904, հունվարի 8 . . . 43
31. Հովհաննես Թումանյանին 1904, փետրվարի 17 . . . 44
32. Հովհաննես Թումանյանին 1904, փետրվարի 23 . . . 44
33. Հովհաննես Թումանյանին 1904, մայիսի 10 . . . 45
34. Եվգինե <Թիթոյանին> ∠1904>, օգոստոսի 15 . . 46
35. Աննա Մատակյանին 1904, հոկտեմբերի 8 48
36. Աննա Մատակյանին 1904, հոկտեմբերի 15 . . . 50
37. Աննա Մատակյանին 1904, հոկտեմբերի 18 . . . 52
38. Աննա Մատակյանին 1904, նոյեմբերի 2 53
39. Աննա Մատակյանին 1904, նոյեմբերի 9 56
40. Աննա Մատակյանին 58
41. Հարազատներին 1904, նոյեմբերի 28 59

42. Ա.ՃՃա Մատակյանին 1904, նոյեմբերի 29 59
43. Շուշանիկ Մատակյանին <1904> 60
44. Հովհաննես Թումանյանին 1905, հունվարի 5 63
45. Ա.ՃՃա Մատակյանին 1905, հունվարի 17 63
46. Ա.ՃՃա Մատակյանին 1905, հունվարի 19—20 65
47. Արիստակես Տերտերյանին 1905, փետրվարի 4 . . . 66
48. Ա.ՃՃա Մատակյանին 1905, փետրվարի 29 70
49. Ա.ՃՃա Մատակյանին 1905, ապրիլի 5 71
50. Ա.ՃՃա Մատակյանին 1905, ապրիլի 7 72
51. Ա.ՃՃա Մատակյանին 1905, ապրիլի 14 75
52. Ա.ՃՃա Մատակյանին 1905, մայիսի 7 75
53. Ա.ՃՃա Մատակյանին 1905, մայիսի 15 77
54. Ա.ՃՃա Մատակյանին 1905, հունիսի 25 78
55. Ա.ՃՃա Մատակյանին 1905, հուլիսի 14 79
56. Ա.ՃՃա Մատակյանին 1905, օգոստոսի 4 81
57. Ա.ՃՃա Մատակյանին <1905> 82
58. Նիկողայոս Մառին 1906, օգոստ<ոսի> 4 86
59. Նամակ խմբագրությա 1906, հոկտեմբերի 23 . . . 86
60. Շուշանիկ Կուրղինյանին 1907, հոկտ <եմբերի> 11 . . 87
61. Շուշանիկ Կուրղինյանին 1907, դեկտեմբերի 11 . . 87
62. Գարեգին Լևոնյանին <1908>, ապրիլի 13 . . . 88
63. Հովհաննես Թումանյանին <1908>, ապրիլի 21 . . 88
64. Հովհաննես Թումանյանին 1908, հունիսի 20 . . . 89
65. Վիկտորիա Աբովյանին 1910, մարտի 22 90
66. Վիկտորիա Աբովյանին 1910, ապրիլի 5 92
67. Ալեքսանդր Ծատուրյանին 1910, ապրիլի 20 . . . 93
68. Վիկտորիա Աբովյանին <1910>, մայիսի 2 . . . 95
69. Վիկտորիա Աբովյանին 1910, մայիսի 21 96
70. Վիկտորիա Աբովյանին 1910, հունիսի 11 97
71. Վիկտորիա Աբովյանին 1910, հոկտեմբերի 1 . . . 98
72. Վիկտորիա Աբովյանին <19> 10, հոկտեմբերի 8 . . 100
73. Վիկտորիա Աբովյանին 1910, դեկտեմբերի 31 . . . 100
74. Վիկտորիա Աբովյանին <1911>, հունվարի 13 . . 101
75. Վիկտորիա Աբովյանին 1911, հունվարի 31 . . . 102
76. Վիկտորիա Աբովյանին 1911, փետրվարի 8 103
77. Վիկտորիա Աբովյանին 1911, ապրիլի 8 103
78. Վիկտորիա Աբովյանին <1911>, հունիսի 5 . . . 104
79. Վիկտորիա Աբովյանին ∠1911>, հուլիսի 25 . . . 105
80. Վիկտորիա Աբովյանին <1911>, օգոստոսի 3 . . . 105
81. Վիկտորիա Աբովյանին <1911, օգոստոսի 11> . . . 106
82. Վիկտորիա Աբովյանին 1911, սեպտեմբերի 11 . . . 107
83. Վիկտորիա Աբովյանին <1911>, սեպտեմբերի 19 . . 109
84. Գարեգին Լևոնյանին 1911, նոյեմ <բերի> 12 . . . 110
85. Վիկտորիա Աբովյանին 1911, նոյեմբերի 24 111

86. Վիկտորիա Աբովյանին <1911> 114
87. Վիկտորիա Աբովյանին 1912, ապրիլի 10 114
88. Վիկտորիա Աբովյանին 1912, ապրիլի 24 115
89. <Վիկտորիա Աբովյանին> <1912> 118
90. Հովհաննես Թումանյանին <1912>, մայիսի 8 . . 119
91. Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեծաճարտ մասնաժողովին 1912, մայիսի 8 . . . 120
92. Հովհաննես Թումանյանին 1912, մայիսի 28 121
93. Հովհաննես Թումանյանին <1912>, հունիսի 4 . . . 123
94. Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը 1912, հուլիսի 4 124
95. Վիկտորիա Աբովյանին <1912>, հուլիսի 16 . . . 125
96. Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեծարգո վարչությանը 1912, օգոստոսի 3 125
97. Կովկասի հայոց հրատարակչական ընկերության վարչությանը 1912, սեպտեմբերի 4 126
98. Գարեգին Լևոնյանին 1913, ապրիլի 23 127
99. Հովհաննես Հովհաննիսյանին 1913, ապրիլի 30 . . . 128
100. Գարեգին Լևոնյանին 1913, մայիսի 30 129
101. Գարեգին Լևոնյանին <1913>, հունիսի 23 130
102. Հարազատներին 1913, հունիսի 25 131
103. Կովկասյան հայոց հրատարակչական ընկերությանը 1913, հուլիսի 11 132
104. Գարեգին Լևոնյանին <1913>, հուլիսի 15 133
105. Իսահակ Իսահակյանին 1913, հուլիսի 29 134
106. Գինովաբե Զարիֆյանին <1913>, հուլիսի 29 . . . 135
107. Հարազատներին <1913>, օգոստոսի 12 136
108. Գարեգին Լևոնյանին <1913> օգոստոսի 12 . . . 137
109. Գարեգին Լևոնյանին <1913>, օգոստոսի 30 . . . 139
110. Հարազատներին <1913> 140
111. Հարազատներին 1913, սեպտեմբերի 15 141
112. Գարեգին Լևոնյանին <1913>, հոկտեմբերի 5 . . . 141
113. Գարեգին Լևոնյանին <1913>, նոյեմբերի 30 . . . 142
114. Վիկտորիա Աբովյանին 1913, դեկտեմբերի 23 . . . 143
115. Վիկտորիա Աբովյանին 1913, դեկտեմբերի 31 . . . 143
116. Հարազատներին 1913, դեկտեմբեր 145
117. Հ. Սիմոն Երեմյանին <1913> 146
118. Մարգարիտ Բաբայանին 1914, հունվարի 14 . . . 146
119. Սիամանթոյին <1914>, ապրիլի 21 147
120. Հարազատներին <1914>, ապրիլի 26 149
121. Գարեգին Լևոնյանին 1914, մայիսի 3 149
122. Ալեքսանդր Ծատուրյանին 1914, մայիսի 31 151
123. Գինովաբե Զարիֆյանին <1914>, հունիսի 4 . . . 152
124. Գինովաբե Զարիֆյանին 1914, հուլիսի 15 153

125. Հարազատներին 1915, մարտի 28 154
126. Հարազատներին 1915, սեպտեմբերի 1 155
127. Գարեգին Լևոնյանին <1916>, ապրիլի 2 156
128. Հարազատներին 1916, ապրիլի 6 158
129. Հարազատներին <1916>, Հունիսի 29 160
130. Տիգրան Հովհաննիսյանին 1916, հուլիսի 19 162
131. Գարեգին Լևոնյանին 1916, հուլիսի 20 163
132. Գարեգին Լևոնյանին <1916>, սեպտեմբ<երի> 21 . . . 164
133. Գարեգին Լևոնյանին <1916>, դեկտեմբերի 8 165
134. Ցոլակ Խանզադյանին <1917>, հունվարի 28 167
135. Ցոլակ Խանզադյանին <1917>, մարտի 24 167
136. Գարեգին Լևոնյանին 1917, մարտի 28 169
137. Գարեգին Լևոնյանին 1917, հունիսի 25 170
138. Արշակ Չոպանյանին 1918, դեկտեմբերի 5 171
139. Արշակ Չոպանյանին 1918, դեկտեմբերի 13 172
140. Հովհաննես Թումանյանին և Դերենիկ Դեմիրճյանին 1919, հուլիսի 3 173
141. Վահան Զաքարյանին 19<19>, նոյեմբերի 26 174
142. Վահան Զաքարյանին 19<19>, դեկտեմբերի 30 . . . 176
143. Նվարդ Թումանյանին <1919> 177
144. Կոստան Զարյանին <1921>, մայիսի 31 178
145. Հովհաննես Թումանյանին 1921, հուլիսի 1 180
146. Վահան Զաքարյանին <1921>, նոյեմբերի 3 181
147. Հովհաննես Թումանյանին 1921, նոյեմբերի 8 . . . 183
148. Արշակ Չոպանյանին 1921, դեկտեմբերի 26 184
149. Վահան Զաքարյանին <1922>, ապրիլի 6 186
150. Վիգեն Խաչակյանին <1922>, սեպտեմբերի 27 . . . 187
151. Հովհաննես Ավագյանին 1923, փետրվարի 25 187
152. Հովհաննես Ավագյանին 1923, ապրիլի 26 188
153. Հովհաննես Ավագյանին 1923, հուլիսի 3 189
154. Հովհաննես Ավագյանին 1923, հոկտեմբերի 27 189
155. Արշակ Չոպանյանին 1923, դեկտեմբ <երի> 29 . . . 190
156. Հովհաննես Ավագյանին 1924, հունվարի 5 192
157. Հովհաննես Ավագյանին 1924, մարտի 9 193
158. Գեորգ Կառավարեցին 1924, մարտի 22 193
159. Հովհաննես Ավագյանին 1924, օգոստոսի 30 194
160. Մարտիրոս Սարյանին 1924, սեպտեմբերի 28 195
161. Մարտիրոս Սարյանին 1924, հոկտեմբերի 8 197
162. Մարտիրոս Սարյանին 1924, նոյեմբերի 12 198
163. Արշակ Չոպանյանին 1924, դեկտեմբերի 24 200
164. Արշակ Չոպանյանին 1925, հունվարի 29 201
165. Համաստեղին 1925, փետրվարի 2 203
166. Վահե Գոյումճյանին 1925, ապրիլի 1 205
167. Մարտիրոս Սարյանին, ապրիլի 22 206

168. Մարտիրոս Սարյանին 19∠25>, մայիսի 26 . . . 207
169. Մարտիրոս Սարյանին 1925, հունիսի 10 208
170. Մարտիրոս Սարյանին 1925, հուլիսի 28 209
171. Հակոբին 1925, նոյեմբերի 19 210
172. Պողոս Մակինցյանին 1925, նոյեմբերի 23 211
173. Պողոս Մակինցյանին 1926, հունվարի 4 212
174. Հովհաննես Ավագյանին 1926, հունվարի 31 . . . 213
175. Սոֆյա Իսահակյանին 1926, փետրվարի 9 218
176. Սոֆյա Իսահակյանին 1926, փետրվարի 15 . . . 219
177. Զապել Եսայանին ∠1926>, փետրվարի 18 . . . 222
178. Արշակ Չոպանյանին 1926, փետրվարի 19 222
179. Սոֆյա Իսահակյանին 1926, փետրվարի 25 223
180. Սոֆյա Իսահակյանին 1926, մարտի 1 225
181. Պողոս Մակինցյանին 1926, ապրիլի 18 226
182. Գ. Ամատյանին∠1926, մայիսի 12> 228
183. Պողոս Մակինցյանին 1926, մայիսի 29 228
184. Պողոս Մակինցյանին <1926, օգոստոսի 2> . . . 229
185. Մարտիրոս Սարյանին 1926, օգոստոսի 3 230
186. Հովհաննես Ավագյանին 1926, օգոստոսի 15 231
187. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1926, սեպտեմբերի 26 . 232
188. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1926, հոկտեմբերի 12 233
189. Սոֆյա Իսահակյանին 1926, դեկտեմբերի 7 . . . 236
190. Վիգեն Իսահակյանին 1926, դեկտեմբերի 7 238
191. Սոֆյա Իսահակյանին 1927, հունվարի 23 240
192. Սոֆյա Իսահակյանին 1927, հունվարի 31 241
193. Ռոմանոս Մելիքյանին 1927, փետրվարի 5 242
194. Սոֆյա Իսահակյանին 1927, փետրվարի 27 242
195. Վիգեն Իսահակյանին 1927, մարտի 1 243
196. Վիգեն Իսահակյանին ∠1927, մարտի 1> 244
197. Սոֆյա Իսահակյանին 1927, մայիսի 8 245
198. Վիգեն Իսահակյանին 1927, մայիսի 12 247
199. Սոֆյա Իսահակյանին <1927>, հունիսի 8 248
200. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1927, սեպտեմբերի 3 . 248
201. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին <1927> հոկտեմբերի 29 252
202. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1927, դեկտեմբերի 6 . 253
203. Մաքսիմ Գորկուն 1928, ապրիլի 2 255
204. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, հունվարի 15 . . 255
205. Գարեգին Լևոնյանին 1928, հունիսի 24 257
206. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, օգոստոսի 2 . 257
207. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, օգոստոսի 29 . 258
208. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, սեպտեմբերի 13 . 259
209. Գարեգին Լևոնյանին <1928>, սեպտեմբերի 25 . . . 260
210. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, սեպտեմբերի 26 . 261
211. Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին 1928, հոկտեմբերի 22 . 262

212. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1928, նոյեմբերի 17 . 263
213. Սոֆյա Իսաճանկյանին 1928, դեկտեմբերի 8 264
214. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1928, դեկտեմբերի 12 . 266
215. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1928, դեկտեմբերի 29 . 267
216. Վիգեն Իսաճանկյանին <1928, դեկտեմբեր> . . . 268
217. Սոֆյա Իսաճանկյանին 1929, հունվարի 25 270
218. Վիգեն Իսաճանկյանին 1929, հունվարի 25 271
219. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, մարտի 5 . . 272
220. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, ապրիլի 13 . . 273
221. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, հունիսի 10 . . 275
222. Միսակ Էփրիկյանին 1929, հունիսի 17 276
223. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, հուլիսի 2 . . 276
224. Միսակ Էփրիկյանին 1929, հուլիսի 3 278
225. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, հուլիսի 23 . . 278
226. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929 սեպտեմբերի 6 . 279
227. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին 1929, հոկտեմբերի 29 . 280
228. Խորհրդային Հայաստանի գրողների Ֆեդերացիային 1929, նոյեմբերի 13 281
229. Սոֆյա և Վիգեն Իսաճանկյաններին <1930, մարտի 7> . 281
230. Գարեգին Լևոնյանին 1930, ապրիլի 1 282
231. Գարեգին Լևոնյանին 1930, մայիսի 21 282
232. Ստեփան Զորյանին 1930, հունիսի 14 283
233. Գարեգին Լևոնյանին 1930, հունիսի 14 283
234. Ս. Պողոսյանին 1930, հունիսի 24 283
235. Արշակ Չոպանյանին 1930, հուլիսի 15 284
236. Գարեգին Լևոնյանին 1930, դեկտեմբերի 23 284
237. Վաճառ Զաքարյանին 1931, հոկտեմբերի 7 . . . 286
238. Արշակ Չոպանյանին 1931, հոկտեմբերի 25 . . . 288
239. Նիկողայոս Իսաճանկյանին 1932, հունիսի 6 . . . 289
240. Վաճառ Մալեզյանին 1932, հուլիսի 5 290
241. Վաճրամ Ալազանին <1932, օգոստոսի 5> 291
242. Գարեգին Լևոնյանին 1932, օգոստոսի 7 293
243. Փարիզի հայ ուսանողական միությանը 1933, ապրիլի 1 . 295
244. Սաճակ Տեր-Գաբրիելյանին 1933, օգոստոսի 5 . . . 299
245. Գարեգին Լևոնյանին 1933, օգոստոսի 18 300
246. Զապել Եսայանին 1933, օգոստոսի 22 301
247. Զարեհ Որբունուն 1933, հոկտեմբերի 5 303
248. Գարեգին Լևոնյանին 1933, հոկտեմբերի 26 304
249. Գարեգին Լևոնյանին 1934, մարտի 29 305
250. Վաճառ Զաքարյանին <1934>, ապրիլի 25 . . . 307
251. Արմենուհի և Աբաս Իսաճանկյաններին 1934, ապրիլի 25 . 309
252. Գարեգին Լևոնյանին <1934>, ապրիլի 30 311
253. Վաճառ Զաքարյանին 1934, հունիսի 6 312
254. Սաքո Սուքիասյանին 1934, <հուլիսի 9—10> . . . 315

255. Սաքո Սուքիասյանին 1934, հուլիսի 27 315
256. Սաքո Սուքիասյանին 1934, օգոստոսի 30 316
257. Գարեգին Լևոնյանին 1934, սեպտեմբերի 13 . . . 319
258. Խորեն Սարգսյանին 1934, դեկտեմբերի 7 320
259. Սաֆակ Տեր-Գաբրիելյանին 1934, դեկտեմբերի 11 . . 322
260. Պետրոս Տոնապետյանին 1935 հուլիսի 6 325
261. Գեղամ Աֆրիկյանին 1935, նոյեմբերի 1 326
262. Գարեգին Լևոնյանին 1935, նոյեմբերի 3 327
263. Ռաֆայել Շիշմանյանին 1936, սեպտեմբերի 15 . . . 328
264. Վիգեն Իսահակյանին 1936, հոկտեմբերի 13 328
265. Սոֆյա Իսահակյանին 1937, մայիսի 10 329
266. Հովհաննես Շիրազին 1937, օգոստոսի 30 . . . 330
267. Աճարոն Զոբանյանին 1937, օգոստոսի 30 . . . 331
268. Արամ Ինճիկյանին 1938, օգոստոսի 25 332
269. Հակոբ Խաչատրյանին 1939, փետրվարի 3 334
270. Հովհաննես Շիրազին 1939, ապրիլի 19 335
271. Օլգա Թումանյանին 1939, մայիսի 28 335
272. Գարեգին Լևոնյանին <1939>, հուլիսի 29 337
273. Սասունցի Դավթի հոբելյանական հանձնաժողովի նախագահին <1939>, օգոստոսի 4 337
274. Հովհաննես Ղանալանյանին 1939, հոկտեմբերի 27 . . 338
275. Սաքո Սուքիասյանին 1940, հունվարի 25 338
276. Հակոբ Խաչատրյանին 1940, մարտի 7 340
277. Աշոտ Գրաշուն 1940, մարտի 24 341
278. Սոֆյա Իսահակյանին 1940, հունիսի 7 342
279. Սոֆյա Իսահակյանին 1940, հունիսի 18 343
280. Վրաստանի սովետական գրողների միությանը 1940, հունիսի 22 343
281. Արամ Ինճիկյանին 1940, հունիսի 24 344
282. Սոֆյա Իսահակյանին 1940, հուլիսի 2 346
283. Սոֆյա Իսահակյանին 1940, հուլիսի 13 347
284. Աշոտ Գրաշուն 1940, սեպտեմբերի 12 348
285. Սաքո Սուքիասյանին 1940, սեպտեմբերի 12 . . . 348
286. Հայկ Իսահակյանին 1940, սեպտեմբերի 18 349
287. Աշոտ Գրաշուն 1940, հոկտեմբերի 15 350
288. Անդրանիկ Հովսեփյանին 1940, դեկտեմբերի 8 . . . 351
289. Սարիկ Սարյանին 1940, դեկտեմբերի 9 352
290. Աշոտ Գրաշուն 1941, հունվարի 4 354
291. Անդրանիկ Հովսեփյանին 1941, հունվարի 27 . . . 355
292. Գարեգին Լևոնյանին 1941, հունիսի 9 355
293. Սոֆյա Իսահակյանին 1941, հունիսի 26 357
294. Սոֆյա Իսահակյանին 1941, հուլիսի 10 358
295. Հայկ Իսահակյանին 1942, հուլիսի 8 359
296. Հակոբ Խաչատրյանին 1942, դեկտեմբերի 10 . . . 360

297. Հակոբ Խաչատրյանին 1943, հուլիսի 12 361
298. Սոֆյա Իսահակյանին 1943, հուլիսի 28 362
299. Հակոբ Խաչատրյանին 1943, օգոստոսի 16 363
300. Սոֆյա Իսահակյանին 1943, օգոստոսի 22 . . . 364
301. Մաթևոս Հովսեփյանին 1943, դեկտեմբերի 29 . . 365
302. Սեդա Թումանյանին 1944, հունիսի 30 365
303. Սեդա Թումանյանին 1944, օգոստոսի 15 366
304. Աշոտ Գրաշուն 1944, օգոստոսի 22 367
305. Անդրանիկ Հովսեփյանին 1944, հոկտեմբերի 28 . . . 368
306. Թիֆլիսի հայոց թիվ 5-րդ արական դպրոցի հարգելի ուսուցիչներին և աշակերտներին 1946, հունվարի 8 . . 369
307. Մաշա Միրզայանին 1946, հոկտեմբերի 10 369
308. Վ. Փափազյանին 1947, հունվարի 9 370
309. Տ. Ալեքսանյանին 1947, օգոստոսի 29 371
310. Հակոբ Խաչատրյանին 1948, դեկտեմբերի 4 . . . 374
311. Մաքսիմ Ռիլսկուն 1951, մայիսի 18 375
312. Մարգար Դավթյանին 1951, օգոստոսի 2 376
313. Խաչերես Փորբշեյանին 1951, նոյեմբերի 27 . . . 377
314. Գուրգեն Հովհաննին 1952, հունվարի 14 378
315. Գուրգեն Հովհաննին 1952, հունվարի 14 379
316. Սաթո Սուքիասյանին 1952, մայիսի 22 380
317. Խաչերես Փորբշեյանին 1952, մայիսի 26 381
318. Համազասպ Համբարձումյանին 1952, հուլիսի 6 . . . 383
319. Խաչերես Փորբշեյանին 1952, օգոստոսի 5 384
320. Գաբրիել Մեհրաբյանին 1952, սեպտեմբերի 12 . . . 385
321. Արշակ Չոպանյանին 1952, դեկտեմբերի 30 . . . 386
322. Պավլո Տիչինային 1954, հուլիսի 13 387
323. Հարություն Թուրշյանին 1954, սեպտեմբեր 387
324. Համազասպ Դաբաղյանին 1954, հոկտեմբերի 20 . . 388
325. Դարուհի Հակոբյան վարժարանի շրջանավարտներին 1955, ապրիլի 12. 388
326. Աղասի Վարդանյանին 1955, հունիսի 1 389
327. Գե Բառ-Յուանին <1955, հոկտեմբեր> 390
328. Հովհաննես Բաղրամյանին <1955, դեկտեմբերի վերջ> . 390
329. Ամերիկահայ հայրենակիցներին 1956, հունվարի 12 . . 391
330. Հայպետհրատի դիրեկտորին 1957, հունիսի 26 . . . 392
331. Հակոբ Նազարյանին 1957 393
332. «Երևան» թերթի խմբագրությանը 1957 394
333. Սերգեյ Գորոդեցկուն 1957, ... 27 . . 395

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Երկերի ժողովածու վեց հատորով հատոր 6-րդ

АВЕТИК ИСААКЯН

Собрание сочинений в шести томах

том VI

(На армянском языке)

Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.

Ереван, 1979

Հրատ. խմբագիր՝ Լ. Ն. Արազյան

Նկարիչ՝ Կ. Թ. Տիրատուրյան

Գեղ. խմբագիր՝ Ե. Գ. Սաֆյան

Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան

Վերահսկող սրբագրիչ՝ Ա. Հ. Այվազյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ИБ № 2308

Հանձնված է շարվածքի 11. 09. 78: Ստորագրված է տպագրության 13. 03. 79: ՎՖ 03614

Ֆորմատ 84×108 1/32: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակ՝ «Նորք»: Տպագրություն՝ բարձր: 22,68 պայմ. տպ. մամ., հրատ. 18,2 մամ. + 1 ներդիր: Տպաքանակ 60000: Պատվեր 2138: Գինը 1 ռ. 90 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Армянской ССР, Ереван-9, ул. Теряна, 91.



ЦЕНА
А II
62005
ГАЛУШКА
ГАЛУШКА
ГАЛУШКА